

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**Ս. Ա. ԳԻԼԲԱՆԳՅԱՆ**

**ԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ  
ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՆՉԴԱՏԱԿԱՆ  
ՎԱՐՈՒՅԹՈՒՄ**

**ԵՐԵՎԱՆ**

**ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ**

**2011**

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

С. А. Дилбандян

**ОБЕСПЕЧЕНИЕ ПРАВ И ЗАКОННЫХ  
ИНТЕРЕСОВ ЛИЧНОСТИ  
В ДОСУДЕБНОМ ПРОИЗВОДСТВЕ  
УГОЛОВНОГО ПРОЦЕССА РЕСПУБЛИКИ  
АРМЕНИЯ**

ЕРЕВАН

Издательство ЕГУ

2011

2

YEREVAN STATE UNIVERSITY

S.A. DILBANDYAN

Protection of the Rights and Legal  
Interests of Person in Pretrial Stage of  
the Criminal Procedure of the  
Republic of Armenia

Yerevan  
YSU Press  
2011

**ՀՏԳ 343(479.25): 341.231.14**

**ԳՄՊ 67.99(2Հ)93+67.91**

**Գ 477**

*Տպագրության է երաշխավորել ԵՊՀ  
իրավագիտության ֆակուլտետի խորհուրդը*

Գիտական խմբագիր՝ ԳԱԱ թղթակից անդամ,  
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր **Գ.Ս. Ղազինյան**

**Գիլբանդյան Ս. Ա.**

Գ477 Անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության  
ապահովումը Հայաստանի Հանրապետության քրեական  
դատավարության մինչդատական վարույթում: Մենագր./Ս.Ա.  
Գիլբանդյան: Գիտ. խմբ.՝ Գ.Ս. Ղազինյան; ԵՊՀ.– Եր., ԵՊՀ  
հրատ., 2011, 480 էջ:

Մենագրությունում ուսումնասիրվել են մինչդատական վարույթում անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության արդիական հիմնախնդիրները: Հեղինակի կողմից քննարկվել են այնպիսի հիմնարար գաղափարներ, որոնք կրում են ընդհանրական բնույթ և բնորոշում են մինչդատական վարույթի էությունը:

Մենագրությունում մանրամասն քննության են առնվել անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հիմնախնդիրները քրեական գործ հարուցելու և նախնական քննության փուլերում: Ուսումնասիրվել են անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովման երաշխիքների՝ մասնավորապես դատական վերահսկողության, դատախազական հսկողության և դատավարության մասնակիցների անվտանգության պաշտպանության ապահովման հիմնահարցերը: Հեղինակը հատուկ ուշադրություն է դարձրել նաև մինչդատական վարույթում անչափահասների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը: Մանրամասն վեր են հանվել մինչդատական վարույթին վերաբերող օրենսդրության առկա բացերը:

Մենագրությունում հաշվի են առնվել ՀՀ Սահմանադրական դատարանի, ՀՀ Վճռաբեկ դատարանի, ինչպես նաև Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի որոշումները:

Մենագրությունը կարող է օգտակար լինել դասախոսների, ասպիրանտների, իրավագիտության ֆակուլտետի ուսանողների, պրակտիկ իրավաբանների, ինչպես նաև քրեական դատավարության իրավունքի հիմնահարցերով զբաղվող անձանց համար:

**ՀՏԳ 343(479.25): 341.231.14**

**ԳՄՊ 67.99(2Հ)93+67.91**

**ISBN 978-5-8084-1412-9**

**© Գիլբանդյան Ս.Ա., 2011**

**© ԵՊՀ հրատ., 2011**

## **ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

### **ԳԼՈՒԽ 1.**

#### **ԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԱՊԱՀՈՎՄԱՆ**

#### **ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԶՐԵԱԿԱՆ**

**ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ** ..... 7

§ 1. Իրավունքներն ու օրինական շահերը որպես ապահովման առարկա քրեական դատավարությունում ..... 7

§ 2. Հանրային և մասնավոր հիմքերի հարաբերակցությունը քրեական դատավարությունում ..... 43

§ 3. Քրեական դատավարության ձևը որպես անձի իրավունքների ապահովման երաշխիք ..... 78

### **ԳԼՈՒԽ 2.**

#### **ԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՔՆԵՐԻ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ**

**ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՄԻՆՉԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ** ..... 127

§ 1. Անձի իրավունքների իրավական կարգավորումը քրեական գործ հարուցելու փուլում ..... 127

§ 2. Քրեական գործ հարուցելու փուլում իրականացվող դատավարական և քննչական գործողությունների արդի հիմնախնդիրները ..... 142

§ 3. Նախնական քննության փուլում անձի իրավունքների և օրինական շահերի ապահովման տեսական հիմքերը ..... 169

§ 4 Նախնական քննության փուլում անձի իրավունքների պաշտպանության իրավական կարգավորման ժամանակակից վիճակը և զարգացման միտումները ..... 193

### **ԳԼՈՒԽ 3.**

**ՄԻՆՉԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ ԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ** ..... 220

§ 1. Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության դերը անձի իրավունքների և ազատությունների ապահովման գործում ..... 220

§ 2. Նախնական դատական վերահսկողությունը որպես անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովման երաշխիք ..... 232

§ 3. Հետագա դատական վերահսկողությունը որպես մինչդատական վարույթի նկատմամբ անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովման երաշխիք ..... 253

§ 4. Գատախազական հսկողությունը մինչդատական վարույթում անձի իրավունքների և օրինական շահերի ապահովման նկատմամբ.....	263
§ 5. Մինչդատական վարույթում կիրառվող պաշտպանության միջոցները որպես արդարադատության իրականացման օժանդակող անձանց իրավունքների ապահովման երաշխիք	294
<b>ԳԼՈՒԽ 4.</b>	
<b>ԱՆՉԱՓԱՀԱՍ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՄԻՆՉԳԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ ..</b>	
§ 1. Անչափահասների իրավունքների և օրինական շահերի ապահովման հիմնախնդիրները քրեական դատավարության մինչդատական փուլերում .....	337
§ 2. Անչափահասների գործերով պաշտպանի և օրինական ներկայացուցչի մասնակցությունը քրեական դատավարությունում .....	353
§ 3. Անչափահասների գործերով մանկավարժի իրավական վիճակի հիմնահարցերը քրեական դատավարությունում .....	370
<b>ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ .....</b>	<b>394</b>
<b>ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....</b>	<b>420</b>

## ԳԼՈՒԽ 1.

### ԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԳՐԱՆՑ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՆ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

#### § 1. Իրավունքներն ու օրինական շահերը որպես ապահովման առարկա քրեական դատավարությունում

Մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, լինելով ժողովրդավարական պետության հիմքերը, նաև քրեական դատավարության հիմքերն են: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի՝ 1966 թվականի դեկտեմբերի 16-ին ընդունած Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի բանաձևին համապատասխան. «Համաձայնագրին մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է հարգել և ապահովել իր տարածքում և իր իրավասության ներքո գտնվող անձանց իրավունքները, որոնք ճանաչվում են սույն համաձայնագրում առանց որևէ խտրականության՝ ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, քաղաքական և այլ համոզմունքների, ազգային և սոցիալական ծագման, անկախ գույքային վիճակից, ծննդյան կամ այլ հանգամանքներից» (հոդված 2): Այսինքն՝ անձի իրավունքներն ու ազատություններն ընկած են պետությունների՝ համաշխարհային հանրություն կառուցելու հիմքում և բնութագրում են նրա ձգտումը՝ ցանկացած իրավաստեղծ և իրավակիրառ գործունեության հիմքում դնել անձի առաջնայնությունը: Իրավաբանական գրականության մեջ դրանց զգալի ուշադրություն է հատկացվել<sup>1</sup>: Միջազգային այդ պահանջներ-

---

<sup>1</sup> Տե՛ս **Левченко А.И.** Права и свободы в государствах переходного типа: приоритеты и перспективы // Философия права. Ростов-на-Дону: Изд-во Рост. юрид. ин-та МВД России, 2009, № 1, էջ 73-76; **Богданова Н.А.** Основные права и свободы человека и гражданина в связи с инновационной политикой РФ // Государственная власть и местное самоуправление. М.: Юрист, 2009, № 2, էջ 3-6; **Абдрашитов В.М.** Актуальные проблемы международной безопасности и за-

րը լիովին արտացոլված են Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում: Քրեական դատավարության խնդիրների շարքում առաջին հերթին նշվում է հանցագործությունից անձի պաշտպանության մասին (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 2, մաս 1, կետ 2)<sup>1</sup>, և երկրորդը՝ անձի պաշտպանությունը «պետական իշխանության ինքնիրավ գործողություններից և չարաշահումներից՝ կապված իրական կամ ենթադրվող հանցավոր արարքի հետ» (ՀՀ քր. դատ. օր. հոդված 2, մաս 1, կետ 2): Դրանում դրսևորվում է քրեական դատավարության ժողովրդավարական բնույթը Հայաստանի Հանրապետությունում, որն աչքի է ընկնում քրեադատավարական օրենսդրության նորմերի ամբողջական կիրառմամբ:

Թեև անձի ազատություններն ու իրավունքները տեղ էին գտել նաև խորհրդային շրջանի քրեադատավարական օրենսդրության մեջ, սակայն դրանք չէին դիտվում որպես դատավարության որոշիչ տարրեր: Դրա վառ արտահայտությունը քրեական դատավարության սահմանումների զարգացումն է: Այսպես՝ 1976 թ. Մ. Ս. Ստրոգովիչի կարծիքով. «Խորհրդային քրեական դատավարությունը նախնական քննության մարմինների, դատախազության և դատարանի համար Խորհրդային պետության օրենքով սահմանված գործողությունների համակարգ է, որում ներառված են նաև այդ մարմինների իրավահարաբերություններն այն քաղաքացիների ու կազմակերպությունների հետ, որոնց վրա տարածվում են նրանց գործո-

---

щита прав и свобод человека в современном мире // "Черные дыры" в Российском Законодательстве. Юридический журнал . М.: ООО "К-Пресс", 2009, № 1, էջ 15-16; **Невирко Д.Д.** Права и свободы человека и гражданина: проблемы соотношения, взаимодействия и иерархии. Автореф. дис. ... канд. юрид. наук - Екатеринбург, 2004, 27 էջ; **Экштайн К.** Основные права и свободы по российской Конституции и Европейской Конвенции. Учебное пособие для вузов - М.: Nota Bene, 2004, 496 էջ; **Рыбаков О.Ю.** Личность. Права и свободы. Правовая политика. Монография - М.: РПА МЮ РФ, 2004, 260 էջ; **Мутагиров Д.З.** Права и свободы человека: теория и практика. Учебное пособие - М.: Логос, 2006, 544 էջ; **Назарян Н.Ж.** Конституционные права и свободы человека и гражданина в России и Армении. Автореф. дис. ... канд. юрид. наук - Коломна, 2006, 31 էջ:

<sup>1</sup> Այսուհետ՝ ՀՀ քր. դատ. օր.:



դությունները, և որոնք մասնակցում են այդ գործողութայիններին, այսինքն՝ միմյանց հետ այդ մարմինների հարաբերութայիններին՝ քրեական գործերի քննութայան և լուծման ընթացքում»<sup>1</sup>: 1951 թ. Մ. Ա. Չելցովը գտնում է, որ «Խորհրդային քրեական դատավարութայունը դատարանի, դատախազութայան և քննութայան մարմինների՝ օրենքով ուղղորդվող գործունեութայուն է, որն ուղղված է հանցագործութայունների բացահայտմանը, հանցագործի մերկացմանը, գործի դատական քննութայանը՝ մեղադրյալի բոլոր իրավունքների պաշտպանութայան երաշխավորմանը, նրա մեղավորութայան հարցի որոշմանը, և դրա ճանաչման դեպքում նրա նկատմանը դատարանի դատավճռով օրինական և արդարացի պատժի սահմանմանը՝ խորհրդային կարգերի ու խորհրդային իրավակարգի հիմքերի պաշտպանութայան և հայրենիքին ու սոցիալիզմին նվիրվածութայան ոգով քաղաքացիների դատախարակութայան նպատակով սոցիալիստական արդարատայության խնդիրների իրագործման համար»<sup>2</sup>:

Ինչպես տեսնում ենք, քրեական դատավարութայան երկու սահմանումներից ոչ մեկում ուշադրութայուն չի դարձվում դրանց մասնակիցների իրավունքներին ու ազատութայուններին: Դրանում, թերևս, դրսևորվում է այդ ժամանակաշրջանի ոգին, երբ պետութայունն ընդհանուր առմանը պատշաճ ուշադրութայուն չէր դարձնում մարդու իրավունքներին ու ազատութայուններին: Ներկայումս իրավիճակն արմատապես փոխվել է: Այսպես՝ Ա. Պ. Կրուզիկովը 2009թ. հրատարակած դասագրքում ընդգծում է. «Քրեական դատավարութայունը դատարանի, դատախազի, քննիչի, հետաքննութայան մարմնի ու հետաքննիչի գործունեութայունն է, որն իրականացվում է նրանց իրավատայան շրջանակներում ու քրեադատավարական օրենսդրութայանը սահմանված կարգով՝ քաղաքացիների ու իրավաբանական անձանց ներգրավմանը, ովքեր քրեական դատավարութայան ընթաց-

---

<sup>1</sup> **Строгович М.С.** Курс Советского уголовного процесса. Том I: Основные положения науки Советского уголовного процесса. М.: Издательство «Наука», 1968, էջ 36:

<sup>2</sup> **Чельцов М.А.** Советский уголовный процесс. М.: Государственное издательство юридической литературы, 1951, էջ 13:

քում իրացնում են իրենց իրավունքները և կատարում իրենց վրա դրված պարտականությունները՝ ուղղված քրեական դատավարության խնդիրների լուծմանը, ինչպես նաև այդ գործունեության հետևանքով ծագող իրավահարաբերությունները»<sup>1</sup>:

Համանման բնորոշման հանդիպում ենք նաև այլ հեղինակների մոտ, մասնավորապես. «Քրեական դատավարությունը հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի, դատարանի (դատավորի), ինչպես նաև դատավարության այլ սուբյեկտների (մեղադրյալ, պաշտպան, տուժող և այլոց) քրեադատավարական իրավունքի կողմից կարգավորվող և քրեական գործի քննության ու լուծման կապակցությամբ իրականացվող գործողությունների ու այդ ընթացքում ծագող իրավահարաբերությունների համակարգ է, որը, որպես ուսումնասիրության առարկա (օբյեկտ) ունենալով գործի փաստական հանգամանքները, թույլ է տալիս պատասխանելու մեղադրվող անձի մեղավոր կամ անմեղ լինելու մասին հարցին և լուծելու քրեական դատավարության առջև դրված այլ խնդիրներ»<sup>2</sup>:

Ինչպես տեսնում ենք, քրեական դատավարությանը մասնակից անձանց իրավունքները քրեական դատավարությունը սահմանելիս դառնում են առանցքային: Շեշտադրության այդպիսի փոփոխությունը պատահական չէ, այն արտահայտում է քաղաքացիների (այդ թվում՝ քրեական դատավարությանը մասնակիցների) իրավունքների ու ազատությունների նկատմամբ և՛ օրենսդրի, և՛ իրավակիրառողի վերաբերմունքի մեջ տեղի ունեցած փոփոխությունները: Դատարկ հռչակագրից իրավունքներն ու ազատությունները վերածվում են արժեքի, որի վրա է ամբողջովին կառուցվում ժամանակակից ժողովրդավարական պետության քրեական դատավարությունը:

Անշուշտ չի կարելի ժխտել, որ քրեական դատավարությանը մասնակից անձանց իրավունքների ու ազատությունների մասին

---

<sup>1</sup> Уголовный процесс Российской Федерации. / отв. ред. проф. А.П. Кругликов. М.: Проспект, 2009, էջ 9:

<sup>2</sup> Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Ընդհանուր մաս. (3-րդ հրատարակություն, լրացումներով և փոփոխություններով) – Երևանի պետ. համալս. Եր.: Երևանի համալս. հրատ., 2004, էջ 13:

խոսում և գրում էին մաս խորհրդային շրջանում<sup>1</sup>: Սակայն խնդիրը ոչ թե դրանց մերկապարանոց արձանագրումն էր, այլ այդ իրավունքների ու օրինական շահերի փաստական իրացումը: Դրանք հիմնականում անհրաժեշտ էին, որ ցույց տրվեր, թե Խորհրդային պետությանը ոչ միայն խորթ չեն այդ ժողովրդավարական արժեքները, այլև մա կապիտալիստական պետություններից առաջ է անցել դրանց իրացման հարցում: Ա. Յա. Վիշինսկին նշում է. «...Ստալինյան Սահմանադրության հռչակած իրավունքներից յուրաքանչյուրն օժտված է այդ իրավունքի կիրառման իրական, փաստացի հնարավորությամբ»<sup>2</sup>: Այսինքն՝ իրավունքների ու օրինական շահերի մասին ցանկացած հիշատակում գաղափարախոսական դեր ունեւ, որ նպատակ էր հետապնդում, նախ՝ համոզելու սեփական քաղաքացիներին սոցիալիստական համակարգի առավելությունների մեջ և երկրորդ՝ օտար պետություններին ու նրանց քաղաքացիներին ցույց տալու իր առաջադիմական էությունը: Նույնիսկ այժմ էլ այդ ժամանակաշրջանի իրավունքներին ու ազատություններին վերաբերող առանձին դրույթներ բավականին գրավիչ են: Սակայն այդ նորմերը հիմնականում մնացին լոկ թղթի վրա, քանի որ դրանց իրացման մե-

---

<sup>1</sup> Տե՛ս **Явич Л.С. Фарбер И.Е.** Свобода и права человека в Советском государстве. Саратов: Изд-во Саратов. ун-та, 1974, 180 էջ // Правоведение. Л.: Изд-во Ленингр. ун-та, 1975, № 3, էջ 133-134; **Фарбер И.Е.** Свобода и права человека в советском государстве - Саратов: Изд-во Саратов. ун-та, 1974, 190 էջ; **Витрук Н.В. Фарбер И.Е.** Свобода и права человека в Советском государстве. Саратов: Изд-во Саратов. ун-та, 1974, 190 էջ // Советское государство и право. М.: Наука, 1976, № 3, էջ 145-147; **Витрук Н.В.** Акты применения права в механизме реализации прав и свобод личности // Правоведение. Л.: Изд-во Ленингр. ун-та, 1983, № 2, էջ 3-10; **Матгузов Н.И.** Конституционные права и обязанности граждан - юридическое выражение социальной свободы, ответственности и активности личности // Конституционный статус личности в СССР. М.: Юрид. лит., 1980, էջ 59-68; **Патюлин В.А.** Личность: ее права и свободы в Советском социалистическом государстве // Советское государство и право. М.: Наука, 1966, № 2, էջ 99-107; **Витрук Н.В.** Народовластие и политические права и свободы граждан СССР // Советское государство и право. М.: Наука, 1979, № 1, էջ 104-112; **Рудинский Ф.М.** Права, свободы и ответственность граждан в условиях развитого социализма // Советское государство и право. М.: Наука, 1977, № 5, էջ 21-29 և նրիշներ:

<sup>2</sup> **Вышинский А.Я.** Вопросы теории государства и права. М.: Государственное издательство юридической литературы, 1949, էջ 134:

խանդաները չմշակվեցին: Չկային նաև քրեական դատավարությանը մասնակից անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության իրական երաշխիքներ: Իրավունքների ու ազատությունների նկատմամբ այդ մոտեցումը պայմանավորված էր մարքսիստական այն ուսմունքով, ըստ որի «մարդը դառնում է պետության առջև դրված նպատակներին հասնելու միջոց. նա պետք է ամբողջովին ենթարկվի քաղաքական իշխանությանը, որը բարձր է ամեն ինչից»<sup>1</sup>:

Նշենք, որ քաղաքացիների իրավունքների ու ազատությունների մասին խոսում էին նույնիսկ պետության զարգացման խորհրդային շրջանում, սակայն դրանց ըմբռնումն այլ էր, քան ժամանակակից ժողովրդավարական պետությունում: Այն տարբերվում էր նաև մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների մասին «արևմտյան ժողովրդավարության» պետություններում եղած ըմբռնումից: Դա բացատրվում է այն բանով, որ «մարդու իրավունքների մասին այս կամ այն հանրությամբ գործառնող ըմբռնումներով են պայմանավորվում նրա իրավաբանականը (նրան բնորոշ իրավական մշակույթի տեսակը) և այն միջնորդավորող տեսական հայեցակարգերը»<sup>2</sup>: Այսինքն՝ չնայած այն բանին, որ իրավունքներն ու ազատությունները հռչակվում են քաղաքական տարբեր ռեժիմներով պետություններում, բայց դրանցից յուրաքանչյուրում իրավունքներն ու ազատությունները ընկալվում են տարբեր կերպ:

Ժամանակակից աշխարհում իրավունքներն ու ազատությունները նաև կոնկրետ պետությունների գաղափարախոսության հիմնական թեմաներից են: Ընդ որում՝ դա կախված չէ կոնկրետ պետության քաղաքական ռեժիմի առանձնահատկություններից: Ե՛վ ժողովրդավարական, և՛ ավտորիտար պետություններն իրենց գաղափարախոսության մեջ միևնույն չափով գործածում են իրավունքների ու ազատությունների հասկացությունը: Այսինքն՝ ներկայումս «ընդունված է խոսել մարդու իրավունքների ժամանակակից գաղա-

---

<sup>1</sup> Права человека / отв. ред. чл.-корр. РАН, д.ю.н. **Е.А. Лукашева**. М.: Издательство НОРМА (Издательская группа НОРМА – ИНФРА-М), 2002, էջ 225:

<sup>2</sup> **Варламова Н.В.** Права человека: попытки интегративной интерпретации // Сравнительное конституционное обозрение, 2008. № 6, էջ 99:

փարախոսության մասին որպես մի աշխարհայացքի, որը հիմնված է մարդու իրավունքներն անվերապահ ու հիմնարար սոցիալական արժեք ճանաչելու վրա, որի իրացման աստիճանը այս կամ այն սոցիալական կազմակերպության շրջանակներում այն պատշաճ, ճիշտ, արդար գնահատելու չափանիշն է»<sup>1</sup>:

Ժողովրդավարական պետությունում մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատություններն ինքնուրույն արժեք են: Ամբողջ ուշադրությունը սևեռված է դրանց վրա: Պետությունը մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների ապահովման պայմաններ ու մեխանիզմներ է ստեղծում: Արդարացի է այն մոտեցումը, որ սահմանադրաիրավական գործընթացները չեն կարող թուլացնել մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքները, սահմանափակել նրանց ազատությունները, արգելք հանդիսանալ ինքնավարության զարգացմանը: «Մարդու իրավունքներ», «ժողովրդավարություն» և «իրավական պետություն» հասկացությունները հանդես են գալիս որպես օրգանական միասնություն, և դրա երաշխավորություն, որի նպատակն է ժողովրդավարական սահմանադրական դոկտրինայի ընդունմամբ երկրում հաստատել սահմանադրականություն<sup>2</sup>: Երկրում իրականացվող իրավաստեղծ գործունեությունն ուղղված է նրան, որ պետության և հասարակության հիմնական խնդիրներից մեկը հանդիսանա մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը: Ժողովրդավարական պետությունում «մարդու և քաղաքացու իրավունքներն օրենքների իմաստն ու բովանդակությունը սահմանում են այնպես, որ *սուաջին*՝ օրենքներում հնարավորինս բարենպաստ պայմաններ ստեղծվեն անձի իրավունքների ապահովման համար, *երկրորդ*՝ չընդունվեն անձի իրավունքները սահմանափակող օրենքներ..., *երրորդ*՝ օրենքների պահանջների կատարումը ոչ մի դեպքում չհանգեցնի անձի իրավունքների խախտելուն»<sup>3</sup>:

<sup>1</sup> **Варламова Н.В.** Права человека как предмет юридической интерпретации. // Государство и право, 2009, № 2, էջ 24:

<sup>2</sup> Տե՛ս **Аругюнян Г.Г.** Деформации конституционализма в евразийском пространстве. // Евразийский юридический журнал, М., 2010, № 7 (26), էջ 6:

<sup>3</sup> **Шадрин В.С.** Обеспечение прав личности при расследовании преступлений. М.: ООО Издательство «Юрлитинформ», 2000, էջ 26:

Անհրաժեշտ է նշել, որ իրավունքները սահմանում են մարդու ազատությունը, նրա իրավական պաշտպանվածությունը ցանկացած սպորիհի միջամտությունից: Իրավունքները անհատի և պետության միջև հատուկ կերպով ձևակերպված հարաբերություններ են, որոնցում սահմանվում են երկու սուբյեկտների իրավագործությունները: Ընդ որում՝ պետությունը, սահմանելով իրավունքի նորմերը, դիմում է ինքնասահմանափակման՝ հոգուտ անձի: Պատահական չէ, որ ԱՄՆ-ում «սահմանադրությունը ապահովում է քաղաքացիների պաշտպանությունը միայն պետության գործողություններից, որին ներկայացնում են ինչպես նահանգային, այնպես էլ դաշնային իշխանությունները»<sup>1</sup>: Թեև անհրաժեշտ է նշել, որ ինքնասահմանափակումները որոշակի սահման ունեն, որն անհրաժեշտ է անիշխանություն ու քառս թույլ չտալու համար, քանի որ կարող է խարխլվել և՛ հասարակության, և՛ պետության հիմքերը՝ սպառնալիք ստեղծելով մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների համար: Այսինքն՝ ընդունելով մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների՝ արժեք լինելու մասին դրույթը, պետք է հիշել նաև, որ «ծայրահեղ անհատապաշտություն դավանելը նպաստավոր չէ մարդու իրավունքների համար, այն կողմնորոշում է դեպի եսասիրական անարխիկ կամայականությունը և ի չիք է դարձնում այնպիսի մեծ սոցիալական հիմնախնդրի կարևորությունը, ինչպիսիք անձի պարտավորությունն ու պատասխանատվությունն են հասարակության առջև»<sup>2</sup>:

Ժամանակակից ժողովրդավարական պետությունների քրեական դատավարությունում իրավունքներն ու ազատությունները կենտրոնական տեղ են գրավում: Դրանք են որոշում քրեական դատավարության առանձնահատկությունները, սկզբունքներն ու առանձին ընթացակարգերի իրականացման վարույթի կարգը: Դա բնորոշ է նաև Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրությանը: Այսպես՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Անձի իրավունքները, ազատությունները և ար-

---

<sup>1</sup> **Бернам Уильям** Правовая система США. 3-й выпуск. М.: «Новая юстиция», 2006, էջ 567:

<sup>2</sup> *Общая теория прав человека*. М.: Издательство НОРМА, 1996, էջ 40:

ժանապատվությունը հարգելը պարտադիր է քրեական դատավարությանը մասնակցող բոլոր մարմինների և անձանց համար»։ Գանշանակում է, որ անձի իրավունքներն ու ազատությունները դրված են Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության հիմքում:

Քրեական դատավարությունը դառնում է ոչ թե բռնություններ կիրառելու, այլ մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների ապահովման միջոց, ընդ որում՝ ինչպես հանցագործությունից տուժածի, այնպես էլ այն կատարելու մեջ մեղադրվողի: Գաապահովվում է դատական պաշտպանության արդյունավետ մեխանիզմ սահմանելով<sup>1</sup>: Ընդ որում՝ դատական պաշտպանություն ասելով հասկացվում է «այն գործունեությունը, որն ուղղված է մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանությանը՝ անկախ քրեական դատավարության մեջ նրա դերից»<sup>2</sup>: Այսինքն՝ դատական պաշտպանություն իրականացվում է բոլոր քաղաքացիների, ինչպես նաև օտարերկրացիների ու քաղաքացիություն չունեցող անձանց նկատմամբ: Այդ պաշտպանությունն իրականացվում է համաձայն այն բանի, որ վերոնշյալ անձինք օժտված են իրավունք-

---

<sup>1</sup> Տե՛ս **Григорова А.Ф.** Судебная защита прав участников уголовного судопроизводства и судебный контроль в уголовном процессе иностранных государств // Lex Russica. Научные труды МГЮА. М.: Изд-во МГЮА, 2004, № 2, էջ 574-592; **Лазарева В.А.** Судебная защита в уголовном процессе РФ: проблемы теории и практики. Дис. ... докт. юрид. наук: 12.00.09 - Самара, 2000, 419 էջ; **Макаров Ю.Я.** Судебная защита прав личности в уголовном процессе // Российский судья. М.: Юрист, 2008, № 3, էջ 28-33; **Альперт С.А.** Судебная защита прав и интересов граждан и ее выражение в советском уголовном процессе // Проблемы социалистической законности на современном этапе коммунистического строительства. Краткие тезисы докладов и научных сообщений республиканской научной конференции 21 - 23 ноября 1978 г.. Харьков: Изд-во Харьк. юрид. ин-та, 1978, էջ 230-233; **Аширбекова М.Т.** Реализация судебной защиты в состязательном уголовном процессе // Защита субъективных прав: история и современные проблемы. Материалы II Межвузовской научно-практической конференции, г. Волжский, 11 апреля 2000 года. Волгоград: Изд-во Волгогр. ун-та, 2000, էջ 8-14; **Ледяев А.П., Терехин В.А.** Развитие института судебной защиты и проблемы обеспечения прав потерпевших в уголовном процессе // Юридический вестник. Межвузовский сборник научных трудов. Пенза, 2004, Вып. 16, էջ 142-150 և ուրիշներ:

<sup>2</sup> Общая теория прав человека. М.: Издательство НОРМА, 1996, էջ 171.

ներով ու ազատություններով, որոնք կարող են խախտվել ինչ-որ մարդկանց կողմից՝ ներառյալ պետական մարմինների, պաշտոնատար անձանց: Դատական պաշտպանությունը նաև ուղղված է արդարադատություն իրականացնող մարմիններին անօրինական գործողություններից զերծ պահելուն: Այդ առումով դատական պաշտպանությունը նաև «դատական իշխանության մարմինների գործունեությունն է՝ ուղղված խախտումների նախագոյշացմանը, խախտումներից զերծ պահելուն և արդարադատություն իրականացնելու ընթացքում խախտված իրավունքների ու ազատությունների վերականգնմանը»<sup>1</sup>: Դատական պաշտպանության մասնավոր դեպք է ՀՀ քր. դատ. օր.-ի 22-րդ հոդվածում հռչակված սկզբունքը՝ դատական սխալներից տուժածների իրավունքների վերականգնումը: Այդ հոդվածի 1-ին մասում նախատեսված է. «Արդարացվածն իր իրավունքների վերականգնման, այդ թվում՝ քրեական վարույթն իրականացնող մարմինների կողմից իրեն պատճառված նյութական վնասի հատուցման իրավունք ունի»:

ՀՀ քր. դատ. օր.-ում հռչակված սկզբունքների հիմնական նպատակներից է մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների հաստատումը: Դրանք ուղղված են նրան, որ պայմաններ ստեղծվեն ոչ միայն վերականգնելու մասնավորապես հանցագործությունների կատարմամբ արդեն խախտված իրավունքներն ու ազատությունները, այլև նախագոյշացվի դրանք խախտելու հնարավորությունը իրավապահական մարմինների, այդ թվում և հենց դատարանի կողմից: Այս կապակցությամբ քրեական դատավարության մի ամբողջ շարք ընթացակարգեր ուղղորդված են մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների ապահովմանը և դրանք խախտելու կանխարգելմանը: Այսպես՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 12-րդ գլխում նախատեսված են քրեական դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանության համալիր միջոցառումներ: Սակայն դա քրեական դատավարությունում մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների ապահովմանն ուղղված բազմաթիվ մասնակի դեպքերից միայն մեկն է՝ նախատեսված Հայաստանի Հան-

---

<sup>1</sup> **Лазарева В.А.** Судебная власть и её реализация в уголовном процессе. Самара: Изд-во «Самарский университет», 1999, էջ 60.



րապետության գործող քրեադատավարական օրենսդրությամբ:

Դատավարական ցանկացած գործողություն, դատավարական ցանկացած ընթացակարգ քրեական դատավարության մասնակիցների իրավունքների իրացման արդյունք են: Օրինակ՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 206-րդ հոդվածի 4-րդ մասում սահմանված է. «Վկային հաղորդվում է, որ նա պարտավոր չէ տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ ցուցմունքներ»: Այսինքն՝ ամրագրված է վկայի՝ իրեն, ամուսնուն կամ իր մերձավոր ազգականներին մերկացնող ցուցմունքներ չտալու իրավունքը: ՀՀ քր. դատ. օր.-ի 316-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է. «Դատավարության մասնակիցներն իրավունք ունեն ծանոթանալու պարզ թղթային եղանակով կազմված դատական նիստի արձանագրությանը և մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը դիտողություններ ներկայացնելու այն կազմելու լրիվության և ճշտության վերաբերյալ»: Կարելի է բազմաթիվ օրինակներ բերել, որոնք ցույց են տալիս, որ գործնականում դատավարական յուրաքանչյուր գործողություն հիմնված է դրան մասնակից անձանց իրավունքների կարգավորման վրա:

Օրենքը ոչ միայն առանձին դատավարական գործողություններ կարգավորելիս է հիշատակում քրեական դատավարությանը մասնակցող անձանց իրավունքները, այլև որոշ իրավունքներ դասվում են սկզբունքների շարքին: Այսպես՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 10-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված է. «Յուրաքանչյուր ոք սույն օրենսգրքով նախատեսված կարգով իրավունք ունի ստանալու իրավաբանական օգնություն»: ՀՀ քր. դատ. օր.-ի 11-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է. «Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձեռնմխելիության իրավունք»: ՀՀ քր. դատ. օր.-ի 14-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է. «Յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունք»: Վերոնշյալ իրավունքները որպես սկզբունքներ հռչակելը նշանակում է, որ դրանք հատկապես կարևոր են քրեական դատավարության համար և նրա հիմքն են: Ընդ որում՝ 2-րդ՝ «Քրեական դատավարության սկզբունքները» գլխում ներառված 19 հոդվածներից 12-ն ամրագրում են իրավունքները, իսկ մեկը՝ ազատությունը (ցուցմունքներ տալու պար-

տավորությունից ազատ լինելը): Այս ամենը վկայում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում անձի իրավունքների ու ազատությունների կարևոր նշանակության մասին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի տարբեր գլուխներում ու բաժիններում իրավունքների ամրագրումը, դրանց ոչ միանման բովանդակությունը հնարավորություն են ընձեռում եզրակացնելու, որ դրանցից ոչ բոլորն ունեն միևնույն նշանակությունը քրեական դատավարության համար: Որոշ մասը մասնակի բնույթ ունի, քանի որ հիմք է ծառայում առանձին դատավարական գործողությունների համար, իսկ մյուսներն առավել ընդհանրական են, քանի որ ամբողջ քրեական դատավարության հիմքն են: Բացի այդ, մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, որոնք ամրագրված են միջազգային նորմերում, քրեական դատավարության ոլորտում հարկավոր է ամփոփել առանձին խմբում: Այսպես՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային համաձայնագրի 14-րդ հոդվածի 3-րդ մասում նշվում է. «առանց չարդարացված հասպտման դատվելու» յուրաքանչյուրի իրավունքի մասին: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում նման իրավունք բացակայում է: Այդուհանդերձ, միջազգային նորմի հիշյալ պահանջը հաշվի է առնվում, քանի որ 24-րդ գլխում սահմանված են դատավարական ժամկետներ: Բացի այդ, դատավարական ժամկետներ են սահմանված նաև մի շարք հոդվածներում, որոնք կարգավորում են քրեական դատավարության որոշակի փուլը: Օրինակ՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 180-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է. «Հանցագործությունների մասին հաղորդումները պետք է քննարկվեն և լուծվեն անհապաղ, իսկ գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելն ստուգելու անհրաժեշտության դեպքում՝ դրանց ստացման պահից 10 օրվա ընթացքում»: ՀՀ քր. դատ. օր.-ի 197-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված է. «Քրեական գործով նախաքննությունը պետք է ավարտվի ոչ ուշ, քան երկամսյա ժամկետում»: Այսինքն՝ ՀՀ քր. դատ. օր.-ի հիշատակված հոդվածներում իրացվում է միջազգային իրավունքի վերոնշյալ նորմը:

Իրավունքների ու ազատությունների միջև գոյություն ունեցող տարբերությունները հիմք են դառնում դրանց դասակարգման հա-

մար, ինչը վաղուց արդեն ուսումնասիրման առարկա է իրավունքի տեսության մեջ<sup>1</sup>: Ավանդաբար ընդունված է առանձնացնել մարդու և քաղաքացու հիմնական և այլ իրավունքներն ու ազատությունները: Հիմնական են համարվում նրանք, որոնք ընկած են պետական և հասարակական կառուցվածքի հիմքում՝ և առանց որոնց աշխարհը այն տեսքով, որ գոյություն ունի (քաղաքակիրթ, ժողովրդավարական, մարդասիրական), կղադարի գոյություն ունենալուց: Դրանք այն իրավունքներն են, որոնք չափանիշ են ցանկացած պետության համար, որը ձգտում է լինել ժողովրդավարական: Ընդ որում՝ «մարդու հիմնական իրավունքների կատեգորիայի առանձնացումը բնավ չի նշանակում, որ մյուս իրավունքները դասվում են «երկրորդական», պակաս նշանակալի իրավունքների շարքին, որոնց ապահովման

---

<sup>1</sup> Տե՛ս **Витрук Н.В.** Классификация и основные виды политических прав и свобод советских граждан // Конституционный статус личности в СССР. М.: Юрид. лит., 1980, էջ 151-165; **Прохоров В.Т.** Понятие и классификация основных прав и свобод граждан СССР // Материалы конференции по итогам научно-исследовательской работы за 1969 год. Свердловск, 1970, էջ 50-56; **Шадукаев Д.А.** Классификация основных прав и свобод человека // Право. Сборник научных работ. М.: Изд-во Моск. ун-та, 1999, էջ 27-30; **Омельченко А.Г.** Классификация конституционных прав и свобод личности в ФРГ // Сборник научных трудов ВЮЗИ. Новые аспекты в регулировании важнейших государственно-правовых институтов капиталистических стран. М.: РИО ВЮЗИ, 1986, էջ 34-50; **Кузнецов А.А.** Классификация прав и свобод человека и гражданина в современной юридической литературе // Защита прав человека: теория и практика, проблемы совершенствования правозащитной системы в регионах. Материалы Всероссийской научно-практической конференции, г. Пермь 10 декабря 2004 г.. Пермь: ИВЭСЭП, 2005, էջ 45-49; **Чепурнов А.А.** Понятие, юридическая природа и классификация конституционных прав и свобод личности // Ученые записки ДЮИ. Ростов-на-Дону: Изд-во ДЮИ, 2005, Т. 28, էջ 127-145; **Улыбина Т.** Понятие и классификация субъективных прав и свобод и способы их ограничения // Право и жизнь. Независимый правовой журнал. М., 2006, № 99, էջ 48-69; **Луковская Д.И.** Классификация прав и свобод человека и гражданина // История государства и права. М.: Юрист, 2007, № 15, էջ 2-4; **Бороздина Я.А.** Классификация прав и свобод человека // Международное публичное и частное право. М.: Юрист, 2007, № 6 (39), էջ 10-12; **Киричек Е.В.** Особенности классификации конституционных прав и свобод человека и гражданина в субъектах Российской Федерации // Интеллект - 2005. Сборник научных трудов. Тюмень: ТГИМЭУП, 2005, էջ 211-215, **Ս. Ղանբարյան** Արդարադատության սահմանադրաիրավական հիմունքները Հայաստանի Հանրապետությունում, Եր.: 2006, 214 էջ և ուրիշներ:

ուղղությամբ պետությունից ավելի փոքր ջանքեր են պահանջվում»<sup>1</sup>:

Քրեական դատավարությունում ևս կարելի է առանձնացնել այն հիմնական իրավունքները, որոնք քրեական դատավարության հիմքն են և բնորոշում են նրա էությունը: Դրանց առանձնահատկությունն այն է, որ քրեական դատավարության ընթացքում ծագող դատավարական բոլոր գործողություններն ու իրավահարաբերությունները կատարվում են դրանք հաշվի առնելով: Այդ իրավունքները կարելի անվանել իրավունք-սկզբունքներ, քանի որ դրանք ձևակերպված են ՀՀ քր. դատ. օր.-ի 2-րդ գլխում («Քրեական դատավարության սկզբունքները»): Համանման մոտեցում նկատվում է նաև այլ պետությունների քրեադատավարական օրենսդրության մեջ: Այսպես՝ ՌԴ քր. դատ. օր.-ի նույն 2-րդ գլխում՝ «Քրեական դատավարության սկզբունքները», ներառված են մի շարք առավել հիմնարար իրավունքներ, որոնց թվում են՝ բնակարանի անձեռնմխելիության իրավունքը (ՌԴ քր. դատ. օր., հոդված 12), անձի անձեռնմխելիության իրավունքը (ՌԴ քր. դատ. օր., հոդված 10) և այլն: Այդ իրավունքների առանձնահատկություններից մեկն այն է, որ դրանք, բացի ՀՀ քր. դատ. օր.-ից, ամրագրված են նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունում, որից ելնելով դրանք կարելի է անվանել նաև սահմանադրական սկզբունքներ: Այն, որ օրենսդիրն այդ իրավունքներն ամրագրում է երկու անգամ (նախ՝ ՀՀ Սահմանադրությունում, ապա՝ ՀՀ քր. դատ. օր.-ում), ընդգծում է դրանց նշանակությունը: Առանց դրանց չի կարող լինել ժողովրդավարական քրեական դատավարություն, իսկ առանց ժողովրդավարական քրեական դատավարության՝ ժողովրդավարական պետություն: Դատավարական գործողությունները, ընթացակարգերն ու հարաբերությունները, որոնք կարգավորված են գործող քրեադատավարական օրենսդրությամբ, այն մեխանիզմն են, որի միջոցով իրացվում են նշյալ իրավունքները:

Թեև իրավունքների բաժանումը հիմնականների և այլ իրավունքների արդեն բավականին ավանդական է դարձել իրավագիտության մեջ, սակայն բավարար չէ քրեական դատավարության համար: Դա պայմանավորված է երկու հանգամանքով: Առաջինն այն է, որ Հայաստանի Հանրապետությունը համաշխարհային հան-

---

<sup>1</sup> Общая теория прав человека. М.: Издательство НОРМА, 1996, էջ 20:

րության մի մասն է և, որպես ժողովրդավարական արժեքներ որդեգրած պետություն, ընդունում է միջազգային նորմերը, որոնցով սահմանվում են արդարադատության որոշակի ստանդարտներ: Ըստ այդմ՝ հարկ է ընդգծել նաև միջազգային նորմերով նախատեսված իրավունքները: Այդպիսի իրավունքներից է, մասնավորապես, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային համաձայնագրի 14-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված իրավունքը. «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր նկատմամբ առաջադրված ցանկացած քրեական մեղադրանքի քննության ժամանակ կամ քաղաքացիական դատավարության ընթացքում իր իրավունքներն ու պարտականությունները որոշվելիս ակնկալել գործի արդարացի և հրապարակային քննություն իրավասու, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից, որն ստեղծված է օրենքին համապատասխան»: Վ. Վ. Կուկելը արդարացիորեն նշում է, որ «ներկայումս միջազգային-իրավական ակտերը մարդու իրավունքների բնագավառում (օրինակ՝ ինչպիսին Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրն է), ինչպես նաև միջազգային-իրավական պայմանագրերը ժամանակակից պետությունների մեծ մասի իրավական համակարգերի մասն են»<sup>1</sup>:

Երկրորդ հանգամանքն այն է, որ քրեական դատավարությունը բաղկացած է փուլերից, որոնց շրջանակներում իրականացվում են զանազան դատավարական գործողություններ ու ընթացակարգեր և ծագում են իրավահարաբերություններ: Այսինքն՝ բացի իրավունքներից, որոնք բնորոշում են ամբողջ քրեական դատավարությունը, կան իրավունքներ, որոնք սահմանում են որոշակի փուլերը, և իրավունքներ, որոնք ծագում են լոկ որոշակի դատավարական գործողությունների, իրավահարաբերությունների իրականացման ժամանակ:

Յուրաքանչյուր փուլին բնորոշ են ոչ միայն իրեն հատուկ խնդիրներն ու վերջնական դատավարական որոշումները, այլև քրեական դատավարության մասնակիցների իրավունքների ծավալը, որ առկա է տվյալ փուլում: Անհրաժեշտ է նշել, որ քրեական դատավարության առանձին սուբյեկտները կարող են բնութագրել միայն ո-

---

<sup>1</sup> **Кукель В.В.** Реализация конституционных гарантий права потерпевшего на судебную защиту. Дисс. канд. юрид. наук. М., 2007, էջ 13:

րոշակի փուլը: Օրինակ՝ կասկածյալը քրեական դատավարության մասնակից է, որը ներկա է լինում միայն նախնական քննության փուլում, ուստի նրա կարգավիճակը բնորոշող իրավունքների հանրագումարը բնութագրում է նախաքննությունը: Բացի այդ, իրավունքների ծավալը տարբեր փուլերում նույնպես տարբեր է: Դրանք դատական քննության փուլում անհամեմատ շատ են, քան նախնական քննության փուլում:

Որոշ դատավարական գործողությունների ևս բնորոշ են այն անձանց իրավունքները, ովքեր կատարում են այդ գործողությունները, կամ որոնք ներքաշվում են այդ գործողությունների մեջ: Այսպես՝ ՀՀ քր.դատ. օր.-ի 209-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Հարցաքննվող անձն իրավունք ունի իր ցուցմունքները գրելու իր ձեռքով, ինչի մասին քննիչն արձանագրությունում նշում է կատարում»: Այսինքն՝ նշյալ հոդվածում ամրագրված է հարցաքննվողի (կասկածյալի, մեղադրյալի, տուժողի) իրավունքը, որը պահպանելը պարտադիր է հարցաքննության օրինականության համար: Նույնը բնորոշ է նաև քննչական այլ գործողությունների: Օրինակ՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 224-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված է. «Ճանաչման ներկայացնելուն մասնակցած անձինք իրավունք ունեն պահանջել արձանագրության մեջ մտցնել իրենց դիտողությունները»: Այդ իրավունքի պահպանումը ևս պարտադիր է, որպեսզի ճանաչումը համապատասխանի օրինականության պահանջին:

Անհրաժեշտ է նշել, որ բոլոր իրավունքները, անկախ այն բանից, թե ինչ տեղ են գրավում դասակարգման մեջ, փոխկապակցված են: Հաճախ դրանցից մի քանիսը մյուսների իրացման հետևանքն են: Այսինքն՝ իրավունք-սկզբունքները իրացվում են մյուս իրավունքների ամբողջության մեջ, որոնք բնութագրում են փուլերը կամ առանձին դատավարական գործողությունները: Իսկ միջազգային նորմերում ամրագրված իրավունքները իրացվում են Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության իրավունքում, նրա ինստիտուտներում: Օրինակ՝ «սեփական պաշտպանությունը նախապատրաստելու համար բավականաչափ հնարավորություն և ժամանակ ունենալու և իր ընտրած պաշտպանի հետ հարաբերվելու իրավունքը», որ ամրագրված է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային համաձայնագրի 14-րդ հոդվածի

2-րդ մասում, իրացվում է քրեական գործի նյութերի հետ ծանոթանալու մեղադրյալի իրավունքի մեջ (ՀՀ քր. դատ. օր.-ի հոդվածներ 265 և 266), ինչպես նաև քրեադատավարական օրենքով նախատեսված մի շարք այլ դեպքերում: Ընդ որում՝ նշյալ իրավունքների իրացման մեխանիզմն ինքնին ենթադրում է ավելի մասնակի իրավունքների իրականացում, ինչպիսիք, օրինակ, նախատեսված են ՀՀ քր. դատ. օր.-ի 266-րդ հոդվածի 4-րդ մասում. «Գործին ծանոթացող անձինք իրավունք ունեն գործում առկա փաստաթղթերից անել դուրսգրումներ և պատճենահանել դրանք, լուսանկարել իրեղեն ապացույցները»:

Այսպիսով՝ քրեական դատավարությանը մասնակից անձանց իրավունքների ու ազատությունների դասակարգումը պետք է կատարել երկու հիմքերով՝ 1) ըստ նորմատիվ ակտերի, որոնցում հռչակվում են համապատասխան իրավունքներն ու ազատությունները, 2) ըստ դրանց շրջանակի: Ընդ որում՝ իրավունքների ու ազատությունների շրջանակ ասելով պետք է հասկանալ դատավարական գործողությունների ու իրավահարաբերությունների ընդգրկման շրջանակը, որոնց վրա դրանք տարածվում են: Այսպես՝ բնակարանի անձեռնմխելիության իրավունքը, որ ամրագրված է ՀՀ քր. դատ. օր.-ի 12-րդ հոդվածի 1-ին մասում, տարածվում է քրեական դատավարության բոլոր փուլերի վրա: Մինչդեռ կասկածյալի իրավունքները, որոնք սահմանված են օրենքով, գործում են միայն նախնական քննության ժամանակ, քանի որ այդ սուբյեկտը գոյություն ունի միայն այդ փուլում: Կան նաև իրավունքներ, որոնք դրսևորվում ու գործում են միայն առանձին դատավարական կամ քննչական գործողությունների ընթացքում: Օրինակ՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 247-րդ հոդվածում նախատեսված են կասկածյալի, մեղադրյալի և տուժողի իրավունքները փորձաքննություն նշանակելու և կատարելու ընթացքում:

Կարող է ստեղծվել վերոնշյալ երկու հիմքերի միաժամանակյա կիրառության անհնարինության, անհամատեղելիության տպավորություն: Չէ՞ որ տարբեր նորմատիվ ակտեր կարող են պարունակել ինչպես ընդհանուր ամբողջ քրեական դատավարությանը վերաբերող իրավունքներ, այնպես էլ դրա առանձին փուլերին ու դատավարական գործողություններին վերաբերող իրավունքներ: Սակայն հարկ է հաշվի առնել այն, որ միջազգային նորմերում սահմանված են միայն հիմնարար իրավունքներն ու ազատությունները, դրանցում

չեն նշվում այն իրավունքներն ու ազատությունները, որոնք տարածվում են միայն առանձին փուլերի կամ էլ առանձին դատավարական գործողությունների վրա: Հետևաբար, վերոնշյալ իրավունքները դասվում են այն իրավունքների խմբին, որոնք վերևում բնութագրեցինք որպես այնպիսի իրավունքներ, որոնց գործողությունը տարածվում է ամբողջ քրեական դատավարության վրա:

Վերոշարադրյալը թույլ է տալիս եզրահանգում անելու քրեական դատավարությանը մասնակցող անձանց իրավունքների ու ազատությունների դասակարգման հետևյալ օրինաչափության մասին.

1) ամբողջ քրեական դատավարության վրա տարածվող իրավունքներ ու ազատություններ,

2) միայն քրեական դատավարության առանձին փուլերի վրա տարածվող իրավունքներ ու ազատություններ,

3) միայն առանձին դատավարական գործողությունների և իրավահարաբերությունների վրա տարածվող իրավունքներ ու ազատություններ:

Սույն դասակարգումը կիրառելի է քրեական դատավարությանը մասնակցող բոլոր անձանց իրավունքների ու ազատությունների նկատմամբ: Այսինքն՝ դա մեղադրյալի, կասկածյալի, նրանց պաշտպանի, տուժողի և այլոց իրավունքների ու ազատությունների դասակարգումն է: Քրեական դատավարությանը մասնակցող պաշտոնատար անձանց իրավունքներն ընդունված է անվանել լիազորություններ: Դրանք ևս ընդգրկված են հիշյալ դասակարգման մեջ:

Իրավունքների ու ազատությունների վերոնշյալ դասակարգման արժեքը, ըստ էության, այն է, որ դա թույլ է տալիս ոչ միայն հասկանալու դրանց տարբերությունները, այլև պատկերացնելու դրանց կարևորությունը ամբողջ քրեական դատավարության համար: Իսկ դա կարևոր է հասկանալու, թե որքանով այս կամ այն իրավունքի խախտումը կարող է խաթարել քրեական դատավարության հիմքերը:

Վերոնշյալ դասակարգումից բացի՝ կա ևս մեկը, որը լայնորեն տարածված է քրեադատավարական գրականության մեջ: Դա ըստ քրեական դատավարության սուբյեկտների դասակարգումն է, որոնք օժտված են իրավունքներով և ազատություններով: Այսպես՝ ա-



ռանճնացվում են կասկածյալի<sup>1</sup>, մեղադրյալի<sup>2</sup>, նրանց պաշտպանի, սուժողի<sup>3</sup>, նրա ներկայացուցչի իրավունքներն ու ազատությունները,

---

<sup>1</sup> Տե՛ս **Գասանով Ս.Մ.** Права подозреваемого // Актуальные проблемы юридической науки нового века. Материалы конференции молодых ученых и аспирантов. М.: Изд-во РУДН, 2001, էջ 143-145; **Валькова Т.В.** Процессуальные права подозреваемого: их классификация и виды // Совершенствование деятельности правоохранительных органов по борьбе с преступностью в современных условиях. Материалы Всероссийской научно-практической конференции (27-28 октября 2005 г.). Тюмень: Изд-во ТГИМЭУП, 2006, Вып. 2, էջ 131-133; **Напреенко А.А.** Гарантии прав подозреваемого в советском уголовном процессе. Автореф. дис. ... канд. юрид. наук - М., 1982, 24 էջ; **Якубович Н.А.** Укрепление процессуального статуса подозреваемого - важная гарантия реализации конституционных принципов права на защиту и неприкосновенности личности // Охрана прав граждан в уголовном судопроизводстве. Сборник научных трудов. М.: Изд-во ВНИИ пробл. укрепления законности и правопорядка, 1989, էջ 32-40; **Кулешов А.В.** Права подозреваемого при проведении экспертизы на предварительном следствии // Правовые проблемы укрепления российской государственности. Сборник статей. Томск: Изд-во Том. ун-та, 2001, Вып. 7, էջ 48-50, **Бишарян К.А.** Подозреваемый и защита его прав в уголовном процессе Республики Армения. Монография /Под ред. В.П. Божьева, Ереван: Изд. „Воскан Ереванци„, 2007. 152 էջ և ուրիշներ:

<sup>2</sup> Տե՛ս **Статкус В.** Права обвиняемого и сроки расследования // Социалистическая законность. М., 1971, № 10, էջ 60-62; **Резепов В.П.** Полнее обеспечить права обвиняемого при окончании расследования // Вопросы кодификации советского права. Л.: Изд-во Ленингр. ун-та, 1957, Вып. 1, էջ 112-116; **Морщакова Т.Г.** Права обвиняемого в уголовном процессе Германской Демократической Республики // Советское государство и право. М.: Наука, 1966, № 3, էջ 109-114; **Тейман С.С.** Суд присяжных и конституционные права обвиняемого в России // Конституционное право: восточноевропейское обозрение. М.: Изд-во Центра Конституц. исслед. МОНФ, 1995, № 1 (10), էջ 38-41; **Мартынчик Е.Г.** Субъективные права обвиняемого и их процессуальные гарантии // Советское государство и право. М.: Наука, 1976, № 7, էջ 87-93, **Ղուկասյան Հ.Հ.** Պաշտպանի դատավարական վիճակը նախնական քննության փուլում, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2001թ. 198 էջ և ուրիշներ:

<sup>3</sup> Տե՛ս **Кадьшева Т., Ширинский С.** Расширить права потерпевшего // Российская юстиция. М.: Юрид. лит., 1998, № 1, էջ 14; **Аббков А.** Защитить права потерпевшего // Российская юстиция. М.: Юрид. лит., 1997, № 3, էջ 16-17; **Купко П.** Права потерпевшего в уголовном процессе // Советская юстиция. М.: Юрид. изд-во НКЮ СССР, 1939, № 15 - 16, էջ 24-25; **Арсеньев Б.** Надо ли расширять права потерпевшего в уголовном процессе // Советская юстиция. М.: Юрид. изд-во НКЮ СССР, 1939, № 23 - 24, էջ 17-19; **Ковалевская Л.** Процессуальные права потерпевшего должны быть расширены // Советская юстиция. М.: Юрид. лит., 1968, № 14, էջ 19, **Գիրսանյան Ս.Ա.** Տուժողի իրավունքների և օրինական շահերի ապահովումը քրեական դատավարությունում, Երևան, Տիգրան Մեծ, 1998, 148 էջ և ուրիշներ:

քննիչի, պետական մեղադրողի, դատավորի լիազորությունները և այլն: Այս դասակարգումն արժեքավոր է քրեական դատավարության համար, քանի որ դրա շնորհիվ խմբավորվում են այն իրավունքներն ու ազատությունները, որոնք բնութագրում են քրեական դատավարության որոշակի մասնակիցների կարգավիճակը:

Բացի անձի իրավունքներից ու ազատություններից՝ քրեադատավարական օրենսդրությունը նշում է նաև օրինական շահի մասին: Դա նշանակում է, որ օրինական շահը ոչ միայն տեսական, այլև օրենսդրության մեջ կիրառություն ստացած կատեգորիա է: Օրենսդիրը անձի դատավարական վիճակը սահմանելիս ամենից առաջ հաշվի են առնում քրեական գործով տվյալ անձի ձգտումները: Ելնելով այս կատեգորիայի կարևորությունից՝ իրավագետները այն դիտարկում են որպես անձի իրավական վիճակը բնութագրող պարտադիր տարր: Օրինական շահերի պարզաբանումն ունի կարևոր նշանակություն, քանի որ այն դատավարության մասնակիցների իրավական վիճակի հետագա բարելավման, նրա իրավունքների ընդլայնման նախադրյալներից մեկն է: Միայլ կլինեք քրեական դատավարությունում անձի օրինական շահերի հիմնախնդիրը համարել միայն կասկածյալի կամ մեղադրյալի շահերը: Այն հավասարապես պետք է կիրառել բոլոր այն անձանց նկատմամբ, ովքեր քրեական դատավարությունում հետապնդում են որոշակի շահ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում բազմիցս հիշատակվում է անձանց շահերի մասին, սակայն ոչ մի տեղ չի բացատրվում, թե ինչ է «շահը»: Այսպես՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 6-րդ հոդվածի 28-րդ կետում նախատեսված է. «Պաշտպանությունը դատավարական գործունեություն է, որն իրականացնում է պաշտպանության կողմը՝ նպատակ ունենալով հերքել մեղադրանքը կամ մեղմացնել պատասխանատվությունը, պաշտպանել այն անձանց իրավունքները և շահերը, որոնց վերագրվում է քրեական օրենսգրքով արգելված արարքի կատարումը, ինչպես նաև նպաստել ապօրինաբար քրեական հետապնդման ենթարկված անձանց իրավունքների վերականգնմանը»: Այսինքն՝ պաշտպանությունը գործունեություն է, որն ուղղված է պաշտպանելու ոչ միայն այն անձանց իրավունքները, այլև շահերը, որոնց վերագրվում է քրեական օրենսգրքով արգելված արարքի կատարումը, ինչպես նաև նպաստելու ապօրինաբար քրեական հետապնդման ենթարկված անձանց իրավունքների վե-

րականգնմանը: ՀՀ քր. դատ. օր.-ի 17-րդ հոդվածում սահմանվում է. «Յուրաքանչյուր ոք ունի արդարության բոլոր պահանջների պահպանմամբ անկախ և անկողմնակալ դատարանի կողմից իր շահերին առնչվող քրեական գործի քննության իրավունք»: Այստեղ ևս կիրառվում է «շահ» հասկացությունը: ՀՀ քր. դատ. օր.-ում բավականին հաճախ է կիրառվում «շահ» հասկացությունը, սակայն այդքանով հանդերձ՝ օրենքում ոչ մի տեղ չի տրվում դրա սահմանումը:

Ի՞նչ է «շահը»: Ն. Ի. Մատուզովի կարծիքով. «Մեր առջև ծառայած է չափազանց յուրօրինակ իրավական մի երևույթ, որն ըստ էության «հանելուկ» է. ո՛չ նորմ է, ո՛չ սկզբունք, ո՛չ իրավասություն, ո՛չ սուբյեկտի հատկություն (իրավունակություն)»<sup>1</sup>: Այս կարծիքը պայմանավորված է այդ հասկացության վերաբերյալ տարբեր իրավագետների<sup>2</sup> հայտնած բազմաթիվ և, ընդ որում, հակասական բնորոշումներով: Այսպես՝ Կ. Ա. Բիշարյանը գտնում է, որ «... «իրա-

---

<sup>1</sup> **Матузов Н.И.** Правовая система и личность. Саратов, 1987, էջ 115:

<sup>2</sup> Տե՛ս **Баранов В.М., Першин М.В.** Законный интерес как средство выражения и реализации правового интереса // Научные труды РАЮН. В 2-х томах. М.: Юрист, 2002, Вып. 2: Т. 1, էջ 181-190; **Малько А.В.** Субъективное право и законный интерес // Правоведение, էջ-Պб.: Изд-во С.-Петербург. ун-та, 1998, № 4, էջ 58-70; **Богословская Л.А.** Законный интерес участников кассационного производства // Актуальные проблемы юридической науки на этапе развитого социализма. Краткие тезисы докладов и научных сообщений республиканской научной конференции, 16 - 18 октября 1985 г.. Харьков: Изд-во Харьк. юрид. ин-та, 1985, էջ 244-245; **Карасев В.А.** Публичный интерес и законный личный интерес обвиняемого в уголовном процессе // Проблемы борьбы с преступностью. Материалы четвертой научной конференции аспирантов и соискателей. М., 1971, էջ 124-128; **Малько А.В.** Субъективное право и законный интерес // Правоведение, էջ-Պб.: Изд-во С.-Петербург. ун-та, 2000, № 3, էջ 30-48; **Субочев В.В.** Законный интерес как особый юридический стимул // Право и государство: теория и практика. М.: Право и государство, 2006, № 9, էջ 16-25; **Малько А.В., Субочев В.В.** Категория "законный интерес" и анализ ее исследования в юриспруденции // Право и образование. М., 2006, № 4, էջ 69-82; **Краснов А.В.** Законный интерес: вопросы содержания //Международные юридические чтения. Материалы научно-практической конференции (12 апреля 2006 г.). Омск: Изд-во Омск. юрид. ин-та, 2006, Ч. 1, էջ 16-19; **Горшунов Д.Н.** Некоторые частноправовые аспекты соотношения категорий "субъективное право" и "законный интерес" // Актуальные проблемы гражданского права и процесса. Сборник материалов Международной научно-практической конференции. М.: Статут, 2006, Вып. 1, էջ 17-25; **Дзгоева Б.О.** К вопросу о соотношении понятий право и законный интерес // Право и государство: теория и практика. М.: Право и государство, 2008, № 7, էջ 54-57, **Գիրսանյան Ս.Ա.** նշված աշխ. էջ 147, **Ղուկասյան Հ.Հ.** նշված աշխ. էջ 39-48 և նրիշներ:

վունք» և «օրինական շահեր» հասկացությունները նույնակարգ են և հաճախ են համընկնում իրենց բովանդակությամբ»<sup>1</sup>: Ա. Վ. Մալկոն կարծում է, որ «օրինական շահը սովորական իրավական թույլատրելիություն է, որը ձգտման բնույթ ունի, որտեղ օրենքում ամրագրվածին խստորեն համահունչ գործելու և ուրիշներից համապատասխան վարքագիծ պահանջելու ցուցում չկա, որտեղ չկա կոնկրետ իրավական պարտավորվածության երաշխավորվածություն»<sup>2</sup>: Այսինքն՝ «... շահը բարդ իրավական կատեգորիա է, օրենքով պաշտպանվող նպատակային մղում, որը պետք է հասկանալ որպես սուբյեկտի ձգտում՝ օգտվելու որոշակի սոցիալական բարիքից և որոշ ղեաքերում պաշտպանություն խնդրելու իրավասու մարմիններից՝ իրավունքի նորմերին չհակասող պահանջմունքների բավարարման նպատակով, որը որոշակիորեն երաշխավորվում է պետության կողմից որպես իրավական թույլատրելիություն և արտացոլված է օբյեկտիվ իրավունքում կամ բխում է դրա ընդհանուր իմաստից»<sup>3</sup>:

Անշուշտ, չի կարելի նույնացնել «իրավունք» և «օրինական շահեր» հասկացությունները: Եթե այդպիսի նույնացումը հնարավոր լիներ, ապա օրենսդիրը կգործածեր նշյալ հասկացություններից որևէ մեկը, քանզի մյուսի գործածության անհրաժեշտությունը կվերանար:

«Իրավունք» և «օրինական շահ» հասկացությունները, լինելով ինքնուրույն իրավաբանական կատեգորիաներ, միմյանցից տարբերվում են իրենց էությամբ ու նշանակությամբ: Օրինական շահերը դատավարության մասնակցի սուբյեկտիվ իրավունքների նախադրյալն են, նրա նպատակը, իսկ սուբյեկտիվ իրավունքները այդ շահերը բավարարելու միջոցներ են: Իրավունքները և օրինական շահերը, որպես ինքնուրույն իրավաբանական կատեգորիաներ կապված լինելով միմյանց հետ, մտնում են անձի իրավական վիճակը բնութագրող տարրերի համակարգի մեջ: Որքան լայն են անձի իրավունքները, նույնքան լրիվին են նրա շահերը ճանաչվում և պաշտպանվում

---

<sup>1</sup> Бишарян К.А. Подозреваемый и защита его прав в уголовном процессе Республики Армения. Автореф. дисс. ... к.ю.н. М., 2007, էջ 24:

<sup>2</sup> Малько А.В. Законный интерес и субъективное право // Вопросы теории охраняемых законом интересов, Ярославль, 1990, էջ 6:

<sup>3</sup> Малько А.В., Сувочев В.В. Законный интерес и юридическая обязанность, // Государство и право, 2007, № 2, էջ 30:

պետության կողմից<sup>1</sup>: Այսպես՝ բարոյական վնասի դրամական հատուցումը պետք է համարել տուժողի էական շահերից մեկը, բայց այն ինչպես նախկին, այնպես էլ քրեական դատավարության գործող օրենսդրության մեջ նրա սուբյեկտիվ իրավունքներում չի արտացոլվել:

Ճիշտ է, սուբյեկտիվ իրավունքներում օրինական շահերի արտացոլումը կարևոր երաշխիք է դրանց իրականացման համար, բայց քրեական դատավարության խնդիրն է պաշտպանել նաև այն շահերը, որոնք չեն արտացոլված նրա սուբյեկտիվ իրավունքներում: Կարծում ենք, որ ինչպես տեսական, այնպես էլ գործնական առումով վնասակար է «օրինական շահ» հասկացությունը հանգեցնել միայն անձի իրավունքներին<sup>2</sup>:

Հոգեբանության մեջ շահ ասելով հասկացվում է «ճանաչողական պահանջմունքի դրսևորման ձևը, որն ապահովում է անձի ուղղվածությունը գործունեության նպատակների գիտակցմանը և դրանով իսկ նպաստում նրա կողմնորոշմանը, նոր փաստերի հետ ծանոթությանը, իրականության ավելի լիարժեք ու խոր արտացոլմանը»<sup>3</sup>: Շահը սահմանվում է նաև իբրև «անձի վերաբերմունք առարկայի նկատմամբ՝ որպես իր համար ինչ-որ արժեքավոր, գրավիչ բանի»<sup>4</sup>: Ելնելով իրավունքի վերաբերյալ այս սահմանումներից՝ շահը հարկավոր է սահմանել որպես որոշակի սուբյեկտիվ իրավունքի տիրապետելու կամ իրավական առումով նշանակալից արդյունքի հասնելու որոշակի ձգտում:

Սակայն օրենքում նշվում է ոչ թե պարզապես շահի, այլ օրինական շահի մասին: Եվ այստեղ պետք է նկատի ունենալ, որ «որպես անձի իրավական փճակի ինքնուրույն բաղադրատարր՝ օրինական շահերի հասկացության վրա հայտնի չափով լույս են սփռում այն դատողությունները, որ դրանք իրավական այլ ձևի թույլատրե-

---

<sup>1</sup> Տե՛ս **Кущова Э.Ф.** Гарантии прав личности в советском уголовном процессе, М.: Юрид. лит., 1973, էջ 56:

<sup>2</sup> Տե՛ս **Գիրբանյան Ս.Ա.** նշված աշխատ. էջ 41:

<sup>3</sup> Психология. Словарь / Под общ. ред. **А.В. Петровского, М.Г. Ярошевского**, М., Политиздат, 1990, էջ 146:

<sup>4</sup> Советский энциклопедический словарь / Гл. ред. **А.М. Прохоров**, М., Сов. Энциклопедия, 1986, էջ 496:

լիություններ են, քան սուբյեկտիվ իրավունքներ, որոնք առհասարակ չեն արտացոլվել օրենքում, սակայն չեն հակասում քրեադատավարական իրավունքի նորմերին և քրեական դատավարության մասնակիցների՝ սոցիալապես նշանակալից և իրենց համար օգտավետ արդյունքների հասնելու համընդհանուր իրավական սկզբունքներին»<sup>1</sup>: Այսինքն՝ օրինական շահն օրենքին չհակասող ձգտումն է՝ հասնելու անձի համար որոշակիորեն նշանակալից արդյունքի: Քրեական դատավարության առումով օրինական շահը քրեական դատավարության մասնակցի՝ քրեադատավարական օրենքով նախատեսված արդյունքին հասնելու ձգտումն է, որը չի հակասում իրավունքին: Օրինական շահերի թվին կարող են դասվել կասկածյալի, մեղադրյալի այնպիսի ձգտումներ, ցանկություններ, որոնք քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված իրավունքները չեն ընդգրկում<sup>2</sup>:

Օրինական շահի այդօրինակ ըմբռնումը թույլ է տալիս հասկանալու, որ անձի վիճակը քրեական դատավարությունում որոշում են ոչ միայն իրավունքները, այլև օրինական շահերը: Օրինական շահերը կարգավիճակի այնպիսի բաղադրատարրեր են, որոնք օգնում են հասկանալու քրեական դատավարությունում անձի ակտիվության բնույթը և ծագող հարաբերությունների ու դատավարական գործողությունների դինամիկան: Օրինական շահերի առկայությունը շարժման յուրօրինակ աղբյուր է քրեական դատավարությունում: Առանձին դեպքերում արդյունքը, որին նպատակաուղղված են օրինական շահերը, սուբյեկտիվ իրավունքներն են: Այդպիսով, քրեական դատավարության կոնկրետ մասնակիցների իրավունքները հարաբերակցվում են նրանց օրինական շահերի հետ:

Որո՞նք են կոնկրետ օրինական շահերը՝ օրենքում ոչ մի տեղ չի ասվում: Դրանով են դրանք տարբերվում իրավունքներից ու ազատություններից: Օրենքում միայն ենթադրվում է դրանց առկայությունը: Չէ՞ որ «օրինական շահերը հասարակության իրավական կյանքի չափազանց բազմազան երևույթ են և դրսևորվում են իրա-

---

<sup>1</sup> Шадрин В.С. Обеспечение прав личности при расследовании преступлений, М., ООО Издательство «Юрлитинформ», 2000, էջ 30:

<sup>2</sup> Տե՛ս Գուկասյան Հ.Հ. նշված աշխ. էջ 46:

վունքի տարբեր ոլորտներում ու ճյուղերում, մեզնից յուրաքանչյուրի առօրյա կյանքում»<sup>1</sup>: Այսպես՝ պաշտպանի ու պաշտպանյալի օրինական շահը կարող է լինել միանգամայն հստակ պաշտպանական ռազմավարության որդեգրումը, որն ուղղված է կա՛մ մեղադրյալի լիակատար արդարացմանը, կա՛մ կատարած հանցանքի համար պատասխանատվության չափի էականորեն մեղմացմանը: Հ. Ղուկասյանի մոտեցման համաձայն՝ «Պաշտպանի կողմից պաշտպանվող կասկածյալի, մեղադրյալի օրինական շահերը օբյեկտիվ անհրաժեշտություն են հանդիսանում, անկախ իրենց բնույթից պետք է պաշտպանվեն միայն օրենքով նախատեսված միջոցներով ու եղանակներով և վերջնական գնահատականի կարող են արժանանալ միայն օրինական ուժի մեջ մտած դատավճռով»<sup>2</sup>: Հիշյալ օրինական շահը ՀՀ քր. դատ. օր.-ի 73-րդ հոդվածում ամրագրված իրավունքների հետևանքն է: Ընդ որում՝ օրինական շահի միջոցով են իրացվում այդ իրավունքները: Այսպես՝ միանգամայն ակնհայտ է, որ լիովին հստակ պաշտպանական ռազմավարություն որդեգրելու օրինական շահը կարող է ենթադրել պաշտպանին ընձեռված իրավունքի իրացումը, որը նախատեսված է ՀՀ քր. դատ. օր.-ի 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում. ...հարցման ենթարկել մասնավոր անձանց, ինչպես նաև տարբեր կազմակերպություններից պահանջել տեղեկանքներ, բնութագրեր և այլ փաստաթղթեր, եթե դրանք չեն պարունակում պետական կամ ծառայողական գաղտնիք: Վերջիններս պարտավոր են սահմանված կարգով տրամադրել այդ փաստաթղթերը կամ դրանց պատճենները:

Քրեական դատավարության մասնակիցն օրինական շահի միջոցով իրացնում է իրեն տրված իրավունքներն ու ազատությունները: Այսինքն՝ միանգամայն օրինաչափորեն կարող ենք պնդել, որ օրինական շահն այն իրավունքների ու ազատությունների իրացման մեխանիզմի բաղադրիչն է, որոնք քրեադատավարական օրենքով վերապահվում են քրեական դատավարության մասնակիցներին: Իրավունքների իրացման օրենքով թույլատրվող մեխանիզմների բազ-

---

<sup>1</sup> Малько А.В., Сугочев В.В. Законный интерес и юридическая обязанность. // Государство и право, 2007, № 2, էջ 30:

<sup>2</sup> Ղուկասյան Հ.Հ. նշված աշխատ.էջ 48:

մագանությունը ենթադրում է նաև օրինական շահերի այդպիսի բազմագանություն: Նշյալ բազմագանությունը նույնիսկ անհնար է դարձնում թվարկել բոլոր օրինական շահերը, որոնք կարող են ծագել քրեական դատավարության ընթացքում: Դ-ա, ըստ էության, չունի գործնական նշանակություն: Քրեադատավարական օրենքը քրեական դատավարության մասնակիցներին թույլ է տալիս գործողությունների ընտրության որոշակի ազատություն, որը հարաբերական է, քանի որ հենց ինքն էլ սահմանափակում է դրանք: Հարաբերական է, քանի որ ենթադրում է ընտրություն օրենքով սահմանափակված գործողությունների ցանկից: Սակայն նույնիսկ այդ հարաբերական ազատության շրջանակներում քրեական դատավարության մասնակիցները կարող են ունենալ բազմաթիվ օրինական շահեր:

Քրեական դատավարությունում դրա տարբեր մասնակիցների օրինական շահերը կարող են ունենալ հակադիր ուղղվածություն, ինչը նրանց միջև ծնում է մրցակցություն: Այդ առումով ակներև է, որ ժողովրդավարական պետության քրեական դատավարության համար օրինական շահերի պաշտպանությունը ոչ պակաս հրատապ է, քան իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը: Դ-ա պայմանավորված է այն բանով, որ օրինական շահերը հնարավոր են դարձնում մրցակցությունը քրեական դատավարությունում: Քրեական դատավարության տարբեր մասնակիցների օրինական շահերի բախումը արդարադատության հիմքն է: Դ-րա շնորհիվ վերոնշյալ մասնակիցները հիմնավորում են իրենց դիրքորոշումն առկա ապացույցների օգնությամբ կամ դրանք հերքելու միջոցով:

Օրինական շահերի բազմագանությունը ենթադրում է դրանց դասակարգման հնարավորություն, որը կարող է իրականացվել ամենատարբեր հիմքերով: Նախ՝ կախված այն բանից, թե դրանց օգնությամբ ինչ իրավունք է իրացվում: Այսպես՝ օրինական շահերի օգնությամբ կարող են իրացվել հիմնական իրավունքները, որոնք տարածվում են ամբողջ քրեական դատավարության վրա և իրավունքները, որոնք տարածվում են առանձին փուլի կամ առանձին դատավարական գործողության վրա: Երկրորդ՝ կախված քրեական դատավարության մասնակիցներից, որոնք ունենում են օրինական



շահեր: Այս առումով օրինական շահեր կարող են ունենալ մեղադրյալը, կասկածյալը, տուժողը, պաշտպանը և այլ անձինք, որոնք մասնակցում են քրեական դատավարությանը: ՀՀ քր. դատ. օր.-ի 68-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է. «Պաշտպան է այն փաստաբանը, որը քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացնում է կասկածյալի կամ մեղադրյալի օրինական շահերը և նրանց ցույց է տալիս իրավաբանական օգնություն՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով»: Այսինքն՝ օրենքում ուղղակիորեն նշվում է քրեական դատավարության ընթացքում մեղադրյալի, կասկածյալի՝ օրինական շահեր ունենալու մասին:

Անհրաժեշտ է նշել, որ քրեադատավարական օրենսդրության մեջ գործածվում են «շահ» և «օրինական շահ» հասկացությունները: Այսպես՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 77-րդ հոդվածի 6-րդ մասում նախատեսված է. «Տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցիչը պարտավոր է... իր կողմից ներկայացվող անձի շահերը պաշտպանելու համար ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով»: Իսկ ՀՀ քր. դատ. օր.-ի 76-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված է. «Տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցիչներ են համարվում նրանց ծնողները, որդեգրողները, խնամակալները կամ հոգաբարձուները, որոնք քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացնում են դատավարության համապատասխան անչափահաս կամ անգործունակ մասնակցի օրինական շահերը»: Այսինքն՝ օրենսդիրն օգտագործում է «օրինական շահեր» հասկացությունը:

Անհրաժեշտ է նշել, որ Ռուսաստանի քրեադատավարական օրենսդրության մեջ ևս գործածվում են վերոնշյալ երկու տերմինները: Այսպես՝ ՌԴ քր. դատ. օր.-ի 6-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է. «Քրեական դատավարությունը նախատեսված է՝ 1) պաշտպանելու այն անձանց ու կազմակերպությունների իրավունքներն ու օրինական շահերը, որոնք տուժել են հանցագործություններից»: Իսկ ՌԴ քր. դատ. օր.-ի 49-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված է. «Պաշտպանը սույն օրենսգրքով սահմանված կարգով կասկածյալների ու մեղադրյալների իրավունքների ու շահերի պաշտպանությ-

յունն իրականացնող և նրանց իրավական օգնություն ցույց տվող անձն է քրեական գործի վարույթի ընթացքում»:

Երկու երկրների քրեադատավարական օրենսդրության այսպիսի նմանությունները հիմք են տալիս կարծելու, որ «շահը» և «օրինական շահը» տարբեր հասկացություններ են: Եվ դա, թերևս, միանգամայն ակնհայտ է, քանի որ «օրինական շահ» հասկացությունն ինքնին ենթադրում է, որ դա այնպիսի շահ է, որը համապատասխանում է օրենքի պահանջներին: Միևնույն ժամանակ ակներև է նաև, որ «շահը» ավելի լայն հասկացություն է, քանի որ ընդգրկում է ինչպես օրինական, այնպես էլ անօրինական շահերը: Սակայն առաջին հայացքից այդքան ակնհայտ եզրահանգումը համապատասխան քրեադատավարական նորմերի ուշադիր վերլուծության դեպքում թույլ է տալիս հանգելու միանգամայն հակառակ եզրակացության:

Այսպես՝ ՀՀ քրեադատավարական օրենսդրության վերոնշյալ նորմում (ՀՀ քր. դատ. օր.-ի հոդված 77, մաս 6) բնավ չի ենթադրվում, թե տուժողի ներկայացուցիչը կարող է իրականացնել իր ներկայացրած անձի անօրինական շահերի պաշտպանությունը: Նույնը վերաբերում է նաև պաշտպանության սահմանմանը, որը տրվեց վերևում (ՀՀ քր. դատ. օր.-ի հոդված 6, կետ 28): Այստեղ բնավ էլ նկատի չի առնվում, թե պաշտպանությունը գործունեություն է, որն ուղղված է պաշտպանելու այն անձանց անօրինական շահերը, որոնց վերագրվում է քրեական օրենսգրքով արգելված արարքի կատարումը, ինչպես նաև նպաստելու ապօրինաբար քրեական հետապնդման ենթարկված անձանց իրավունքների վերականգնմանը: Նույնը վերաբերում է նաև ՌԳ քրեադատավարական օրենսդրությանը: Այնտեղ ևս չի ենթադրվում մեղադրյալների, կասկածյալների և այլ անձանց անօրինական շահերը պաշտպանելու հնարավորությունը: Այսինքն՝ «շահ» տերմինը գործածվում է այն նույն իմաստով, ինչ «օրինական շահը»:

Անհրաժեշտ է նշել, որ առանձին նորմերում «օրինական շահի» փոխարեն «շահ» տերմինի օգտագործումը կարող է հանգեցնել իրավունքի համապատասխան նորմի երկիմաստ մեկնաբանության: Չէ՞ որ պաշտպանությունը որպես շահերը պաշտպանելու գործու-

նեություն բնորոշելը թույլ է տալիս եզրակացնելու, որ պաշտպանության պարտականությունը ցանկացած շահ պաշտպանելն է: Այսպիսի մտահանգումը որոշակի վտանգ է պարունակում քրեական դատավարության համար, քանի որ հիմնավորում է այն, որ պաշտպանության նկատմամբ չպետք է կիրառվի նրա գործունեությունը սահմանափակող որևէ պահանջ, որովհետև շահերը, որոնք նա պաշտպանում է, կարող են լինել նաև հակաիրավական: Որպեսզի մնան մոլորություններ չծագեն, կարծում ենք, անհրաժեշտ է ՀՀ քրեադատավարական օրենսդրությունը միանման դարձնել, ինչը ենթադրում է «օրինական շահ» տերմինի գործածում:

Թեպետ պետք է նշել, որ իրավակիրառ փորձը ցույց է տալիս, որ քրեադատավարական օրենսդրության մեջ օգտագործվող «շահ» տերմինը, որպես կանոն, մեկնաբանվում է «օրինական շահ» իմաստով: Եվ դա հնարավորություն է ընձեռում եզրակացնելու, որ օրենքը քրեական դատավարության մեջ թույլատրելի է համարում միայն շահի մի տեսակ, որն էլ հենց օրինական շահն է:

Ժողովրդավարական պետությունում միայն իրավունքների ու ազատությունների հռչակումը քիչ է: Իրավունքներն ու ազատությունները հռչակվում են նաև ավտորիտար պետություններում: Այսպես՝ խորհրդային սահմանադրություններում հռչակվում էին զգալի թվով իրավունքներ ու ազատություններ: Սակայն ավտորիտար պետությունների առանձնահատկությունն այն է, որ բացակայում են այդ իրավունքների ու ազատությունների իրացման մեխանիզմները: Ի տարբերություն ավտորիտար պետությունների՝ ժողովրդավարական պետություններում իրավունքներն ու ազատությունները երաշխավորվում են: Բացի այդ, գործող օրենսդրությունում նախատեսված են իրավունքների ու ազատությունների իրացման մեխանիզմներ: Այսպես՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածում ճանաչվում է այնտեղ ամրագրված իրավունքների ու ազատությունների ուղիղ գործողությունը: Հենց միայն դրա հիման վրա հարկ է ընդունել, որ Հայաստանի Հանրապետությունում մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պետական պաշտպանությունը երաշխավորվում է: Սակայն միայն դա չէ, որ հաստատում է այն դրույթի ճշմարտացիությունը, որ Հայաստանի Հանրապետությունը ոչ միայն հռչակում է, այլև երաշխավորում է

քաղաքացիների իրավունքների ու ազատությունների գործողությունը: Քրեական դատավարության առնչությամբ հարկ է նշել, որ «քրեական դատավարությունը միանգամայն արդարացիորեն դիտվում է որպես անձի իրավունքների ու ազատությունների նկատմամբ տարբեր տեսակի ոտնձգություններից, ոչ միայն հանցագործություններից, այլ նաև պետական մարմինների ու պաշտոնատար անձանց ապօրինի գործողություններից ու անօրինական և չհիմնավորված որոշումներից պաշտպանության միջոց քրեական գործերի վարույթի ընթացքում»<sup>1</sup>: Եվ դա լիովին համապատասխանում է ՀՀ քր. դատ. օր.-ի 2-րդ հոդվածի 1-ին մասին, որում սահմանված է. «Քրեական դատավարությունն իրականացվում է՝ ապահովելու համար՝

1) անձի, հասարակության և պետության պաշտպանությունը հանցագործությունից.

2) անձի և հասարակության պաշտպանությունը պետական իշխանության ինքնիրավ գործողություններից և չարաշահումներից՝ կապված իրական կամ ենթադրվող հանցավոր արարքի հետ»:

Սա նշանակում է, որ քրեական դատավարությունն ինքնին անձի իրավունքների ու ազատությունների երաշխիք է միայն ժողովրդավարական պետության և ժողովրդավարական քրեական դատավարության դեպքում, որին բնորոշ չէ օրենքի և գործնականում դրա կիրառման միջև անհամապատասխանությունը:

Ժողովրդավարական պետության և դրան համահունչ ժողովրդավարական քրեական դատավարության համար իրավունքներին ու ազատություններին առնչվող ամենահրատապ խնդիրներից մեկը դրանց երաշխավորման հիմնախնդիրն է: Ընդ որում՝ հարկ է քրեական դատավարության մեջ զանազանել արդարադատության դատավարական երաշխիքներն ու անձի իրավունքների ու ազատությունների դատավարական երաշխիքները: Երբեմն այդ երաշխիքները նույնացվել են: Այսպես՝ Մ. Ա. Չեյցովի կարծիքով արդարադատության երաշխիքները ներառում են անձի իրավունքների երաշ-

---

<sup>1</sup> **Евлюев Р.М.** Процессуальные гарантии защиты прав и законных интересов лиц, потерпевших от преступлений (стадия предварительного расследования). Дисс. канд. юрид. наук. СПб., 2005, էջ 19:

խիքները<sup>1</sup> : Կարծում ենք, որ, այնուամենայնիվ, այսպիսի նույնացում չի կարող լինել, քանի որ քրեական դատավարության մեջ առկա են ոչ միայն անձի իրավունքների ու ազատությունների իրացման մեխանիզմներ, այլև դրանք սահմանափակող միջոցներ, որոնք նույնպես արդարադատության դատավարական երաշխիքներ են: Մասնավորապես խափանման բոլոր միջոցներն ուղղված են անձի իրավունքների ու ազատությունների զգալի սահմանափակմանը: Այդուհանդերձ, այդ միջոցները կոչված են երաշխավորելու արդարադատության իրականացումը: Այսպես՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 134-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված է. «Խափանման միջոցները հարկադրանքի միջոցներ են, որոնք կիրառվում են կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ՝ քրեական գործով վարույթի ընթացքում նրանց ոչ պատշաճ վարքագիծը կանխելու և դատավճռի կատարումն ապահովելու նպատակով»: Այս նորմը ցույց է տալիս, որ մեղադրյալի իրավունքների սահմանափակումը կոչված է ապահովելու անհրաժեշտ պայմաններ՝ արդարադատություն իրականացնելու համար: Այս առումով արդարացի է այն դիտարկումը, թե «քրեադատավարական ձևի և արդարադատության ժողովրդավարական սկզբունքների հետ մեկտեղ որպես դատավարական երաշխիքներ են հանդես գալիս և՛ դատավարական հարկադրանքի համակարգը, և՛ դատավարական սանկցիաները, և՛ դատավարական գործողությունների օրինականության նկատմամբ վերահսկողության կարգը»<sup>2</sup>: Հետևաբար բավականին դժվար է համաձայնվել իրավաբանական գրականության մեջ հնչած այն կարծիքին, թե «... քրեական դատավարությունում այն ամենը, ինչ ծառայում է դատավարության խնդիրների ապահովմանը, նաև ծառայում է անձի իրավունքների ապահովմանը»<sup>3</sup>: Այս կարծիքին համամիտ լինել կարելի է միայն մեծ վերապահումներով: Այսինքն, եթե նկատի ունենանք, որ իրավունքների նորմատիվային սահմանափակումը, օրինակ, խափանման միջոց ընտրելիս երաշխավորում է մեղադրյալի պաշտպա-

<sup>1</sup> Ст'ю Советский уголовный процесс / Под ред. **Чельцова М.А.** М., 1969, էջ 19:

<sup>2</sup> Курс советского уголовного процесса: Общая часть. М.: Юрид. лит., 1989, էջ 215:

<sup>3</sup> **Алексеев Н.С., Даев В.Г., Кокарев Л.Д.** Очерк развития науки советского уголовного процесса. Воронеж, 1980, էջ 58:

նությունը իրավապահական մարմինների կամայականություններից, ապա այդ դեպքում, իրոք, իրավունքի նորմը, որը կարգավորում է այդ սահմանափակումը կարգ սահմանելով և միջոցը որոշելով, խոչընդոտում է խախտմանը, որը կարող է լինել ինչպես իրավունքների ավելի մեծ չափով սահմանափակումը, այնպես էլ իրավապահական մարմինների պաշտոնատար անձանց կողմից կամայականությունների դրսևորումը: Սակայն այսօրինակ դատողությունները կարող են արդարացնել նույնիսկ ամենառեպրեսիվ բնույթի քրեադատավարական օրենսդրությունը՝ ընդ որում չարտացոլելով դրա էությունն ու գործող քրեական դատավարության իրական վիճակը:

Արդարադատության դատավարական երաշխիքների հասկացությունն ավելի լայն է, քան անձի դատավարական իրավունքների ու ազատությունների հասկացությունը: Մ. Ս. Ստրոգովիչը դատավարական երաշխիքներ ասելով մասնավորապես նկատի էր ունենում. «դատավարական օրենքով սահմանված միջոցները, որոնք ապահովում են յուրաքանչյուր քրեական գործով սոցիալիստական արդարադատության խնդիրների ճիշտ իրագործումը»<sup>1</sup>: Ներկայումս դատավարական երաշխիքները դիտվում են որպես «քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված իրավական միջոցների ամբողջություն, որը կիրառվում է քրեական դատավարությունում՝ դրա նպատակներին հասնելու համար»<sup>2</sup>:

Անձի իրավունքների քրեադատավարական երաշխիքները առանձնահատուկ նշանակություն ունեն քրեական դատավարության համար: Մ. Ս. Ստրոգովիչը գրել է. «... Դատավարական երաշխիքները օրենքով սահմանված այն միջոցներն են, որոնցով պաշտպանվում և ապահովվում են քրեական դատավարությանը մասնակցող անձանց իրավունքներն ու օրինական շահերը»<sup>3</sup>: Այսինքն՝ «անձի իրավունքների դատավարական երաշխիքներն այն միջոցներն են,

---

<sup>1</sup> **Строгович М.С.** Курс Советского уголовного процесса. Том I: Основные положения науки Советского уголовного процесса. М.: Издательство «Наука», 1968, էջ 56:

<sup>2</sup> Уголовный процесс Российской Федерации / отв. ред. проф. **А.П. Кругликов**. М.: Проспект, 2009, էջ 21:

<sup>3</sup> **Строгович М.С.** նշված տեղում:

որոնք ապահովում են այդ իրավունքների փաստացի իրացումը»<sup>1</sup>: Երաշխիքների այս տեսակը դիտվում է որպես քրեադատավարական երաշխիքների մի մասը, ընդ որում՝ նշանակալից մասը: Անձի իրավունքների քրեաիրավական երաշխիքների արդյունավետության մը է որոշվում կոնկրետ պետության քրեական դատավարության ժողովրդավարության աստիճանը: Որքան ավելի արդյունավետորեն են ապահովվում անձի իրավունքներն ու ազատությունները կոնկրետ պետության քրեական դատավարությունում, այնքան այն ավելի ժողովրդավարական կարելի է համարել: Երաշխիքների նշանակությունը այն է, որ դրանք որոշում են անձի՝ օրենքով ամրագրված իրավունքների ու ազատությունների իրական լինելը:

Անձի իրավունքների ու ազատությունների քրեադատավարական երաշխիքներին իրավաբանական գրականության մեջ զգալի տեղ է հատկացվել<sup>2</sup>: Դա վկայում է քրեական դատավարության տեսության ու պրակտիկայի համար հիմնախնդրի լրջության մասին:

---

<sup>1</sup> Уголовно-процессуальное право Российской Федерации / Отв. ред. П.А. Лупинская. М.: Юристъ, 2004, էջ 53:

<sup>2</sup> Տե՛ս **Կուցովա Յ.Փ.** Гарантии прав личности в советском уголовном процессе (предмет, цель, содержание). Предмет, цель, содержание / - М.: Юрид. лит., 1973, 200 էջ; **Կուցովա Յ.Փ.** Гарантии прав личности в советском уголовном процессе - М.: Изд-во Моск. ун-та, 1972, 114 էջ; **Арсеньев Б.Я.** Гарантии прав личности в советском уголовном процессе. Автореф. дис. ... д-ра юрид. наук - М., 1947, 15 էջ; **Капинус Н.И.** Процессуальные гарантии прав личности при применении мер пресечения в уголовном процессе. Автореф. дис. ... д-ра юрид. наук - М., 2001, 55 էջ; **Ильина Л.В., Похмелкин В.А., Симонов В.И.** Гарантии прав личности в уголовном процессе Польской Народной Республики. Ярославль, 1976, 91 էջ // Правоведение. Л.: Изд-во Ленингр. ун-та, 1979, № 6, էջ 91-92; **Добровольская Т.Н.** Гарантии прав личности в советском уголовном процессе // Советское государство и право. М.: Наука, 1958, № 9, էջ 92-96; **Чеканов В.Я.** Гарантии прав и интересов личности в уголовном процессе // Развитие прав граждан СССР и усиление их охраны на современном этапе коммунистического строительства. Саратов, 1962, էջ 320-324; **Корсукова К.Н.** Гарантии прав личности в уголовном процессе // Сборник научных работ студентов. М.: Изд-во ИНЭП, 2001, Вып. 5, էջ 118-125; **Карякин Е.А.** К вопросу о гарантиях, обеспечивающих защиту прав личности в состязательном уголовном процессе // Уголовное судопроизводство. М.: Юрист, 2005, № 1, էջ 33-36, **Գիրանդյան Ս.Ա.** Տուժողի իրավունքների և օրինական շահերի ապահովումը քրեական դատավարությունում, Երևան, Տիգրան Մեծ, 1998, 148 էջ, **Ղազիճյան Գ.Ս.** Քրեական դատավարության պատմական և արդի հիմնախնդիրները Հայաստանում, Եր., Երևանի համալս. հրատ., 2001, 432 էջ և ուրիշներ:

Ընդ որում՝ այդպիսիք համարվել են և՛ իրավական նորմերը<sup>1</sup>, և՛ քրեական դատավարության սկզբունքները<sup>2</sup>, և՛ դատավարական ձևը<sup>3</sup>, և՛ նույնիսկ քրեական դատավարության բովանդակությունը<sup>4</sup>: Կարծում ենք՝ թվարկված բոլոր տեսակետները որոշ չափով ճշմարիտ են: Իրոք, անձին որոշակի իրավունքով օժտելու համար այդ իրավունքը պետք է ամրագրել օրենքում: Իրավունքները ապահովելու համար անհրաժեշտ է, որ դրանք ապահովելու պահանջները դառնան սկզբունք: Դատավարության ձևը, այսինքն՝ կարգը, երաշխավորում է պետության ու նրա պաշտոնատար անձանց կամայականություններից պաշտպանությունը և դրանով իսկ ապահովում անձի իրավունքներն ու ազատությունները քրեական դատավարությունում: Պատահական չէ, որ 1793 թ. Մարդու և քաղաքացու ֆրանսիական հռչակագրի 11-րդ հոդվածում սահմանված է. «Որևէ անձի դեմ ուղղված ցանկացած գործողություն օրենքով չսահմանված դեպքերում և դրա կողմից չնախատեսված ձևերով, կամայականության և բռնության դրսևորում է»: Եվ, անշուշտ, քրեական դատավարության բովանդակությունը ևս երաշխավորում է քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները: Անձի իրավունքների ու ազատությունների դատավարական ձևերի այդ բազմազանությունը քրեական դատավարությունում սպառիչ չէ: Այդ ձևերի բազմազանության մեջ է կոնկրետ պետության քրեադատավարական օրենսդրության հռչակված անձի իրավունքների ու ազատությունների իրական լինելը:

Ընդ որում՝ կոնկրետ պետության քրեական դատավարության մեջ անձի իրավունքների ու ազատությունների ապահովման արդյունավետությունը կախված է իր կողմից ձևավորված վերոնշյալ երաշխիքների տեսակների համակարգից: Այսինքն՝ չի կարելի ակն-

---

<sup>1</sup> Տե՛ս **Цыпкии А.Л.** Право на защиту в советском уголовном процессе. Саратов, 1959, էջ 21-22:

<sup>2</sup> Տե՛ս **Полянский Н.Н.** Вопросы теории советского уголовного процесса. М., 1956, էջ 203:

<sup>3</sup> Տե՛ս **Рахунов Р.Д.** Участники уголовно-процессуальной деятельности. М., 1961, էջ 3:

<sup>4</sup> Տե՛ս **Кондратов П.Е.** Гарантии интересов обвиняемого, как фактор, определяющий формирование и осуществление советской уголовной политики // Гарантии прав личности в социалистическом уголовном процессе. Ярославль, 1981, էջ 65:



կալել անձի իրավունքների ու ազատությունների ապահովման արդյունավետություն, եթե դատավարական երաշխիքների վերոնշյալ ձևերը դրանց պարզ հանրագումարն են՝ առանց ներքին կապերի: Միայն այն դեպքում, երբ դրանք համակարգ են ստեղծում, կարելի է դրանցից ակնկալել բարձր արդյունավետություն: Ուստի վերը թվարկված բոլոր երաշխիքները նշանակություն ունեն անձի իրավունքների ու ազատությունների ապահովման համար, եթե դրանք փոխադարձաբար համաձայնեցվում ու ամրապնդվում են:

Քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները քրեական դատավարությունում ապահովվում են քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված մի շարք մեխանիզմներով: Այսպես՝ քննիչի կամ այլ պաշտոնատար անձանց ապօրինի որոշման կամ գործողության դեպքում նախատեսված է միջնորդությունների ու պահանջների ընթացակարգ: Մասնավորապես, ՀՀ քր. դատ. օր.-ի 98-րդ հոդվածի 4-րդ մասում նախատեսված է. «Պաշտպանության միջոցներ ձեռնարկելու մասին պաշտպանվող անձի դիմումը քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից քննարկվում է անհապաղ, բայց ոչ ուշ, քան դա ստանալու պահից 24 ժամվա ընթացքում: Կայացված որոշման մասին անմիջապես հայտնվում է դիմողին և նրան է ուղարկվում համապատասխան որոշման պատճենը»: Քրեական դատավարությանը մասնակցող անձինք հնարավորություն ունեն միջնորդությունների ու պահանջների միջոցով իրացնել իրենց իրավունքները: Վերոնշյալ նորմից երևում է, որ պահանջի միջոցով ապահովվում է պաշտպանվելու իրավունքը:

Քրեական դատավարությանը մասնակցող անձանց իրավունքների ու ազատությունների ապահովման մեկ այլ արդյունավետ մեխանիզմ է դատական վերահսկողությունը: Դրա վերաբերյալ նորմերն ամրագրված են ՀՀ քր. դատ. օր.-ի 39-րդ գլուխում: Ըստ ՀՀ քր. դատ. օր.-ի 278-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Դատարանը, սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով, քննում է հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքները»: Այդ մեխանիզմի գործողության շնորհիվ հնարավոր է դառնում

բացահայտել, ապա նաև վերացնել իրավունքների ու ազատությունների մեջ տեղ գտած խախտումները: Բացի այդ, նշյալ մեխանիզմը իրավապահպան մարմինների որոշ պաշտոնատար անձանց հնարավոր կամայականությունները կանխելու լավ միջոց է:

Քրեական դատավարությունում փուլերի առկայությունը ևս քրեական դատավարությանը մասնակցող անձանց իրավունքների ու ազատությունների ապահովման բազմաթիվ երաշխիքներից մեկն է: Չէ՞ որ յուրաքանչյուր հաջորդ փուլը նպաստում է նախորդի ընթացքում թույլ տրված սխալների ու չարաշահումների բացահայտմանը: Ընդ որում՝ փուլերից յուրաքանչյուրում թույլ տրված սխալների ու չարաշահումների բացահայտման գործին ակտիվորեն մասնակցելու հնարավորություն ունի այն անձը, որի իրավունքներն ու ազատությունները խախտվել են:

Բոլոր երաշխիքները կարելի է դասակարգել կախված այն բանից, թե ինչ քանակի իրավունքներ և ազատություններ են դրանք ապահովում: Այդ առումով որոշ երաշխիքներ անհրաժեշտ են քրեական դատավարությունում անձի բոլոր իրավունքների ու ազատությունների ապահովման համար, մյուսները՝ միայն մի քանիսի: Այսպես՝ քրեական դատավարությունը, որպես օրենքով սահմանված որոշակի ընթացակարգ, փուլերի իր համակարգով, քրեական դատավարությունում անձի բոլոր իրավունքների ու ազատությունների ապահովման երաշխիքն է: Նույնը վերաբերում է նաև վերը դիտարկված դատական վերահսկողությանը, ինչպես նաև մի ամբողջ շարք այլ մեխանիզմների: Միևնույն ժամանակ գոյություն ունեն միայն առանձին, որոշակի իրավունքների ու ազատությունների ապահովման երաշխիքներ: Մասնավորապես, առանձնացվում են քրեական դատավարությանը մասնակցող տարբեր անձանց իրավունքների ու ազատությունների ապահովման երաշխիքները: Ընդ որում՝ բոլոր այդ երաշխիքները էականորեն տարբերվում են իրարից, որը պայմանավորված է նշյալ անձանց իրավական վիճակի առանձնահատկություններով:

Երաշխիքների նշանակությունն այն է, որ դրանք իրողություն են դարձնում քրեական դատավարության ընթացքում անձի իրավունքներն ու ազատությունները, որոնք ամրագրված են օրենքում, ինչպես

ման պայմաններ են ստեղծում քրեական դատավարությանը մասնակցողների համար՝ իրացնելու իրենց օրինական շահերը:

Հայաստանի Հանրապետությունում իրականացվող սահմանադրական բարեփոխումներից հետո օբյեկտիվ անհրաժեշտություն առաջացավ փոփոխության ենթարկել նաև քրեական դատավարության գործող օրենսգիրքը: Ծիշտ է, այդպիսի լուրջ փոփոխություններ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում տեղ գտան 2006, 2007 և 2008 թվականներին, բայց այդ փոփոխությունները խախտեցին քրեական դատավարության ինստիտուտների գործողության մեխանիզմը:

ՀՀ քրեական դատավարության նոր օրենսդրության մշակման անհրաժեշտությունը պայմանավորված է քրեական դատավարության օրենսգրքում տեղ գտած հակասություններով, ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով, ՀՀ Սահմանադրության հետ ունեցած հակասություններով, դատավարության մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար իրական մեխանիզմների և երաշխիքների նախատեսումով: Իրականում քրեական դատավարության բոլոր ինստիտուտներում տեղ գտած փոփոխությունները պետք է կրեն այնպիսի բնույթ, որ ապահովվի հանրային և մասնավոր շահերի հավասարակշռությունը:

## **§ 2. Հանրային և մասնավոր հիմքերի հարաբերակցությունը քրեական դատավարությունում**

Հայաստանի Հանրապետությունում իրականացվող դատաիրավական բարեփոխումները նպատակամղված են ինչպես անձնական, այնպես էլ հանրային շահերի պաշտպանության ապահովմանը: Նշված շահերի պաշտպանության օրենսդրական կարգավորումը բավականին բարդ խնդիր է, իսկ առավել բարդ է քրեական դատավարությունում, որովհետև այստեղ ավելի հաճախ և անմիջականորեն շոշափվում են ինչպես անձնական, այնպես էլ հանրային շահերը:

Անձնական և հանրային շահերի միջև եղած օրգանական կապը օրենսդրին պարտավորեցնում է սահմանել քրեական գործերի

քննության այնպիսի կարգ, որ չտուժեն նշված շահերը: Մինևույն ժամանակ պետք է նշել, որ այսօր քրեական դատավարության ոլորտում այդ խնդիրների իրականացումն ավելի դյուրին է, որովհետև միջազգային հանրությունը մշակել և միջազգային իրավական փաստաթղթերում ամրագրել է հարցի լուծմանը նպաստող որոշակի չափանիշներ:

Հանցավորության դեմ պայքարի և մարդու իրավունքների պաշտպանության հիմնախնդիրը կարևոր է քրեադատավարական օրենսդրության զարգացման, դատավարության սկզբունքների և դատավարական ձևի, նրա խնդիրների լուծման համար, որովհետև դրանց գիտական մշակումը և օրենսդրական ճիշտ կարգավորումը նպաստում են հանրային և անձնական շահերի պաշտպանությանը<sup>1</sup>: Քրեական դատավարության իրավունքի տեսության մեջ լուրջ տարածայնություններ առաջացրած այս հարցը գործող քրեական դատավարության օրենսգրքում հիմնականում կարգավորվել է՝ հիմք ունենալով ՀՀ Սահմանադրությունը և ՀՀ միջազգային պայմանագրերը: ՀՀ Սահմանադրության 4-րդ հոդվածը հռչակում է, որ պետությունն ապահովում է մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը Սահմանադրության և օրենքների հիման վրա՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան: ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդվածը միաժամանակ թույլ է տալիս սահմանափակել մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները միայն օրենքի հիման վրա, եթե դա անհրաժեշտ է պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, այլոց իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար: Բացի վերը նշվածից՝ ՀՀ Սահմանադրության երկրորդ գլխում նախատեսված մարդու ու քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները քրեական դատավարության գործող օրենսգրքում ամրագրվեցին որպես արդարադատության իրականացման սկզբունքներ:

Հանցավորությունը՝ որպես սոցիալական երևույթ, միշտ ուղեկ-

---

<sup>1</sup>St'u Общественные и личные интересы в уголовном судопроизводстве, Воронеж, 1984, էջ 6:

ցել է մարդկությանը: Չկա մի հասարակություն, որտեղ հանցագործություն չի ընդհատվում: Այն միշտ եղել է, կա և կլինի: Քանի որ հանցավորությունը զգալի վնաս է հասցնում անձին, հասարակությանը և պետությանը, հետևաբար դրա դեմ պայքարը ոչ թե հանցագործությունից տուժած անձի, այլ պետության խնդիրն է: Քրեական դատավարությունը հիմնականում կրում է հանրային բնույթ, այսինքն՝ քրեադատավարական իրավահարաբերությունները ծագում, զարգանում և դադարեցվում են իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի կամահայտությամբ: Քրեական գործերով վարույթն իրականացնող մարմինները, հանդես գալով պետության անունից և ներկայացնելով հանրային շահերը, իրավունք ունեն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառել դատավարությանը մասնակցող անձանց նկատմամբ<sup>1</sup>:

Քրեական դատավարությունում դիսպոզիտիվության սկզբունքի կիրառման շրջանակը շատ սահմանափակ է: Այն անձին հնարավորություն է տալիս սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական իրավունքները: Չնայած քրեադատավարական օրենսդրությունը հիմնված է ժողովրդավարական սկզբունքների վրա, բայց դիսպոզիտիվության հիմքերի կիրառման առումով այն էական փոփոխություն չկրեց:

Հանրային և մասնավոր հիմքերի հարաբերակցությունը քրեական դատավարության սկզբունքների ըմբռնման բանալին է: Խորհրդային շրջանում քրեական դատավարությանը բնորոշ էր հանրային հիմքի գերակայությունը: Թեև հանրայնության սկզբունքը ամրագրված չէր օրենսդրության մեջ, սակայն իրավունքի տեսաբաններից շատերն այն ընդունում էին որպես հիմնականներից մեկը: Այսպես՝ Ս. Ն. Գոբբովոլսկայան գրում է. «Խորհրդային պետության բոլոր մարմինների գործունեությունը հենվում է հանրային հիմքի վրա, այսինքն՝ ծառայում է պետության շահերին, սոցիալիստական հասարակության շահերին»<sup>2</sup>: Լրացնելով նրա միտքը՝ Մ. Ս. Ստրո-

---

<sup>1</sup> Տե՛ս Հանցավորության դեմ պայքարը և մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության հիմնախնդիրները: Երևանի համալս. հրատ.: Եր., 2004, էջ 123:

<sup>2</sup> **Добровольская Т.М.** Принципы советского уголовного процесса (вопросы теории и практики). М.: «Юридическая литература», 1971, էջ 67:

գովիչը նկատում է. «Հետագայում, սոցիալիստական հասարակական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց, հանրայնության սկզբունքը անշեղորեն ամրապնդվում և ընդլայնվում է մարդկային գործունեության բոլոր ոլորտներում: Դրա դերն անվիճելիորեն մեծ է նաև քրեական դատավարության բնագավառում, որտեղ քննչական մարմինների, դատախազության ու դատարանի գործունեությունը նպատակաուղղված է Խորհրդային պետության ու Խորհրդային իրավակարգի պաշտպանությանը հանցավոր ոտնձգություններից, հանցանք գործած անձանց հայտնաբերելուն, մերկացնելուն ու պատժելուն»<sup>1</sup>: Հանրայնության սկզբունքի նշանակությունը պարզելու այս մոտեցումը մեծապես պայմանավորված է Վ. Ի. Լենինի դիրքորոշմամբ, որը ՌԽՖՍՀ արդարադատության ժողովրդական կոմիսար Վ. Ի. Կուրսկիին գտնում էր. «Մենք մասնավոր ոչինչ չենք ընդունում, մեզ համար տնտեսության ոլորտում ամեն ինչ հանրային-իրավական է, այլ ոչ թե մասնավոր»<sup>2</sup>:

Հանրայնության սկզբունքը ըստ էության բնորոշում էր քրեական դատավարության սկզբունքների ամբողջ համակարգը: Ընդ որում՝ հանրայնությունը արտահայտվում էր սկզբունքներից յուրաքանչյուրում: Դա պայմանավորված էր հենց պետության յուրահատկություններով, որտեղ իրականացվում էր քրեական դատավարությունը:

Խորհրդային պետությունը ձգտում էր առավելագույնս վերահսկել հասարակության կյանքի բոլոր կողմերը՝ ներխուժելով անգամ քաղաքացիների մասնավոր կյանք: Պատմական այդ ժամանակաշրջանում մասնավոր հիմքերի մասին խոսելն անգամ անիմաստ էր: Ահա թե ինչ է գրում Մ. Ս. Ստրոգովիչը՝ բացահայտելով կողմերի միջև մրցակցության սկզբունքի էությունը. «Դատավարությունը, լինելով հանցագործությունների դեմ պայքարի մեթոդ, իրականացվում է պետական իշխանության մարմինների, քննիչների, դատախազների և դատարանի կողմից՝ հանրային-իրավական, պետական շահերին համահունչ, իսկ դա վերացնում է կողմերի ազատությունը՝ տնօ-

---

<sup>1</sup> **Строгович М.С.** Курс Советского уголовного процесса в 2-т. Т.1: Основные положения науки Советского уголовного процесса. М.: Издательство «Наука», 1968, էջ 136:

<sup>2</sup> **Ленин В.И.** Полное собрание сочинений, т. 44, էջ 398:

րինելու դատավարության առարկան (այսինքն՝ մեղադրանքը)»<sup>1</sup>: Ա. Յա. Վիշինսկին ավելի կտրուկ է արտահայտվում՝ նշելով. «Խորհրդային դատավարության մեջ «մաքուր» մրցակցային հիմքի սկզբունքը կիրառելի չէ»<sup>2</sup>: Ակներև է, որ անգամ մրցակցային սկզբունքի մեջ դրսևորվում է հանրային հիմքը: Այլ սկզբունքներում ևս արտացոլվում էր հանրային հիմքը:

Հանրայնության սկզբունքի մեջ արտացոլվում էր պետության շահը, որը հակադրվում էր մասնավոր հիմքին: Թեպետ խորհրդային շրջանում տիրապետող գաղափարախոսությունը դիալեկտիկական մատերիալիզմն էր, որը հռչակում էր հակադրությունների միասնության ու պայքարի օրենքը, քրեական դատավարության մեջ, ըստ էության, չէր ընդունվում այնպիսի հակադրությունների միասնությունը, ինչպիսիք են հանրային և մասնավոր հիմքերը նշվում է միայն դրանց միջև առկա մշտական պայքարի մասին: Ընդ որում՝ ամեն ինչ արվում էր, որպեսզի հանրային հիմքը գերակայեց մասնավորի նկատմամբ: Դա մասնավորապես ձեռք էր բերվում այն բանի շնորհիվ, որ էապես սահմանափակվում էին քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները: Մասնավորապես, միանգամայն ժողովրդավարական սկզբունքներից բխում էր դրանց բուն էությունը, որի հետևանքով դրանք դառնում էին դեկլարատիվ: Արդյունքում, օրինակ, թեև անմեղության կանխավարկածն ամրագրված էր խորհրդային քրեադատավարական օրենսդրության մեջ, սակայն իրավակիրառ պրակտիկայում այն զգալիորեն անտեսվում էր: Ասվածի հավաստումը արդարացման դատավճիռների գրեթե խապառ բացակայությունն էր, ինչը վկայում է մեղադրական ուղղվածության գերակայության մասին:

Պետության խորհրդային փուլում անմեղության կանխավարկածը գոտ դեկլարատիվ հասկացություն էր, որը կոչված էր քողարկելու քրեական դատավարության ամենօրյա պրակտիկայի անհաճո բնույթը, որին բնորոշ էր դատավարության ինկվիզիցիոն տեսակը:

---

<sup>1</sup> **Строгович М.С.** Курс Советского уголовного процесса в 2-т. Т.1: Основные положения науки Советского уголовного процесса. М.: Издательство «Наука», 1968, էջ 156:

<sup>2</sup> **Вышинский А.Я.** Теория судебных доказательств в советском праве. М.: Государственное издательство юридической литературы, 1950, էջ 249:

Կասկածվող անձը դեռ քննության առաջին փուլերում ենթադրվում էր որպես մեղավոր: Եթե նա չէր ընդունում հանցանքը կամ ժխտում էր հանցագործությանն իր մասնակցության փաստը, միևնույնն է, ենթադրվում էր որպես մեղավոր, իսկ նախնական քննության մարմիններն իրենց խնդիրը համարում էին այն, որ հարկադրեին այդ անձին խոստովանական ցուցմունքներ տալ: Ինչպես նշում է Ի. Լ. Պետրուխինը, «1960 թ. քրեադատավարական օրենսգիրքը, նախքան ՌԴ՝ Սահմանադրական դատարանի կողմից այնտեղ որոշ «շտկումներ» կատարելը, զգալիորեն հենվում էր միջնադարյան ինկվիզիցիայի դրույթների վրա, ինչը համապատասխանում էր տվյալ ժամանակաշրջանի քրեական քաղաքականությանը»<sup>1</sup>: Այդ ժամանակահատվածում շատ տարածված էր հետևյալ արտահայտությունը. «Չկա կրակ՝ առանց ծխի»: Այն ենթադրում էր, թե չի կարող անմեղ լինել այն մարդը, որը կասկածվում է հանցանք գործելու մեջ. եթե կան ինչ-որ կասկածներ, ուրեմն կան նաև դրա հիմքերը, իսկ դա իր հերթին նշանակում է մարդուն մեղավոր ճանաչել տվյալ հանցագործության քննության դեռ սկզբնական փուլում:

Արտադատարանային մարմինների («եռյակներ», «երկյակներ», ամեն տեսակ արտակարգ հանձնաժողովներ) առկայությունը, որոնց վրա էր դրվում քրեական գործերի լուծման խնդիրը, վկայում էր հանրային հիմքի գերիշխանության մասին: Ընդ որում՝ այդ գերիշխանությունը գերած էր գրանցել: Հասարակության երևակայական շահերը քաղաքացիների շահերից կտրելը հանգեցնում էր նրանց իրավունքների սահմանափակմանը, նրանց կարգավիճակի ոտնահարմանը:

Այնպես է ստացվել, որ հանրային ու մասնավոր հիմքերի միջև համագործակցության զարգացումը ի ցույց է դնում քրեական դատավարության բարոյական հիմքերը: Ցավոք, հանրային հիմքի տիրապետության ժամանակահատվածը ուղեկցվում էր բարոյականության հանդեպ ժխտողական վերաբերմունքով: Այդ շրջանում քրեական դատավարության մեջ գերիշխող գաղափարախոսությունը կոնկրետ քրեական գործերի քննության արդյունքների նկատ-

---

<sup>1</sup> **Петрухин И.Л.** От инквизиции – к состязательности. // Государство и право. 2003. № 7, էջ 29:



մամբ «արդարություն» կատեգորիայի կիրառման հնարավորության վերաբերյալ թերահավատությունն էր: Ա. Յա. Վիշինսկիու մոտեցումն արդարադատության մասին հետևյալն է. «Բուրժուական արդարության արժեքը ավելին չէ, քան այն ծնած կապիտալիստական քաղաքակրթության արժեքը...»<sup>1</sup>: Նա կասկածի էր ենթարկում նույնիսկ արդարություն կատեգորիայի կիրառման հնարավորությունը արդարադատություն իրականացնելիս:

Այդ ժամանակաշրջանում արդարության տեղը գրավել էին դասակարգային շահերը, պրոլետարական պետության շահերը, պրոլետարիատի դիկտատուրան: Այդ եղանակով հաստատվել էր հանրային հիմքի գերակայությունը մասնավորի նկատմամբ: Նշյալ գաղափարախոսության քողի տակ բազմաթիվ չարաշահումներ էին կատարում իրավապահական զանազան մարմիններն ու դրանց պաշտոնյաները: Չանգվածային բռնություններ, անմեղ անձանց ապօրինի դատապարտում, խոստովանական ցուցմունքների կորզում ահա չարաշահումների ոչ լրիվ ցանկը, որոնք թույլ էին տրվում հանուն խորհրդային ժողովրդի, խորհրդային պետության, պրոլետարիատի դասակարգային շահերի: Այդ ամենի մեջ նկատվում է հանրային հիմքի գերակայությունը մասնավորի նկատմամբ:

Նման իրավիճակում քաղաքացու և մարդու իրավունքներն ու շահերը դիտվում էին որպես ինչ-որ աննշան, ուշադրության ոչ արժանի բան: Ուստի քրեական դատավարության մեջ մասնավոր հիմքին ոչ բավարար չափով էր ուշադրություն հատկացվում: Իսկ արդարությունը, որպես կատեգորիա, որն անմիջականորեն առնչվում է մասնավոր հիմքին, ընկալվում էր որպես ժամանակի ոգուն և Խորհրդային պետության զարգացման խնդիրներին չհամապատասխանող մի հասկացություն: Ավելին քաղաքացիների իրավունքները գերազանցապես դեկլարատիվ բնույթի էին, քանի որ գոյություն չունեին դրանց իրացման արդյունավետ մեխանիզմներ, փոխարենը կային հանրային հիմքի իրացման մեխանիզմներ:

Հանրայնության սկզբունքը մասնավորապես արտացոլվում էր քրեական դատավարության խնդիրները հստակեցնելիս: Այսպես՝

---

<sup>1</sup> **Вышинский А.Я.** Теория судебных доказательств в советском праве. М.: Государственное издательство юридической литературы, 1950, էջ 156:

ՀՍՍՀ 1961 թ. քրեադատավարական օրենսգրքի 2-րդ հոդվածու սահմանված էր. «Սովետական քրեական դատավարության խնդիրներն են՝ հանցագործությունների արագ և լրիվ բացումը, հանցավորների մերկացումը և օրենքի ճիշտ կիրառման ապահովումը այն հաշվով, որպեսզի հանցագործություն կատարած յուրաքանչյուր ոք ենթարկվի արդարացի պատժի և ոչ մի անմեղ մարդ քրեական պատասխանատվության չենթարկվի ու չդատապարտվի»: Արդարադատության առջև նման ձևով խնդիրների առաջադրումը չարաշահումների հիմք է դառնում ինչպես իրավապահական մարմինների, այնպես դրանց պաշտոնատար անձանց համար: Չէ՞ որ հարցադրման ձևն ինքնըստինքյան «ենթադրում է հիմնախնդրային իրավիճակից նախատեսվող ելքը, դրա լուծումն այն եղանակով, ինչպես դա հարկավոր է կա՛մ կոնկրետ անձանց, կա՛մ անձանց խմբին, սոցիալական խավին, կա՛մ նույնիսկ ամբողջ հասարակությանը»<sup>1</sup>: Այսինքն՝ քրեական դատավարությանն առաջադրվող խնդիրների ձևակերպմամբ իսկ հիմք է դրվում իրավապահական մարմինների պաշտոնատար անձանց կողմից ոչ բարոյական, անարդարացի գործողությունների իրականացման համար: Չէ՞ որ խնդիրը միշտ լուծում է պահանջում, այդ թվում և՛ ոչ ստանդարտ: Խնդրի ոչ ստանդարտ լուծումը քրեական դատավարության մեջ կարող է իրականացվել նաև անբարոյական, երբեմն նույնիսկ անօրինական գործողություններով:

Սակայն այն, որ հանրայնությունը կարող է հիմք դառնալ իրավապահական մարմինների պաշտոնատար անձանց անբարոյական կամ նույնիսկ անօրինական գործելակերպի համար, ընդունված չէր քննարկել: Ընդհակառակը, հանրայնությունը հիմնավորվում էր հանցավորության դեմ պայքարի անհրաժեշտությամբ: Ինչպես նկատում է Ա. Ֆեդուլովը՝ բնութագրելով քրեական դատավարության զարգացման խորհրդային շրջանը. «Ըստ էության, պետական իշխանությունը կատարել էր շատ ճիշտ գաղափարախոսական քայլ,

---

<sup>1</sup> Подольный Н.А. От принципа публичности к защите публичного интереса – концепция современного уголовного процесса //Проблемы отправления правосудия по уголовным делам в современной России: теория и практика: сборник научных статей: в 2 ч. Ч. 1 – Курск, 2007, էջ 156:

ինչպես միշտ՝ նրբորեն կշռադատված ու շահեկան. քաղաքացին ամենատարրական քրեական հանցանքը գործելիս վնաս է պատճառում պետական շահին (անվտանգությանը) և, հետևաբար, դիտավորություն ունի խաթարելու պետության տնտեսական հզորությունն ու պաշտպանունակությունը և կարող է դիտվել որպես լրտես, դիվերսանտ կամ ժողովրդի թշնամի, նրա մերկացման, դատապարտման ու պատժի նշանակման՝ դրանից բխող դատավարական բոլոր հատուկ ընթացակարգերով»<sup>1</sup>: Այս դիտարկման արդարացիության հավաստումը Մ. Ս. Ստրոգովիչի խոսքերն են. «...դատական պատժամեքենայի սուր ծայրը, պատժի գլխավոր ծանրությունը ուղղվում է ընդդեմ մատնիչների, դավաճանների, վնասարարների, դիվերսանտների ու լրտեսների, որոնց ուղարկում են օտարերկրյա հետախուզություններ... Բռնաճնշումները շարունակվում են նաև գողերի, սոցիալիստական սեփականության հափշտակիչների, կողոպտիչների, խուլիգանների և այլ հանցագործների նկատմամբ»<sup>2</sup>:

Դեռ նախախորհրդային շրջանում, կանխատեսելով զանգվածային հանցավորության դեմ պայքարի բովում քաղաքացիների իրավունքների համատարած խախտումների հնարավորությունը, Ի. Վ. Միխայլովսկին գրում է, որ քաղաքացուն պիտի տրվեն հստակ երաշխիքներ, որ նա գոհ չի լինի այն սկզբունքին, թե «ավելի լավ է գոհվի մեկ մարդ, քան ամբողջ հասարակությունը», երաշխավորվի, որ «նրա սուբյեկտիվ իրավունքին պետք է հարգանքով վերաբերվի ամբողջ պետությունը»<sup>3</sup>: Իսկ ավելի վաղ՝ 1841 թ., ռուս հայտնի իրավագետ Յա. Ի. Բարշևը նշում է, որ «...ճշմարտության օրենքը, որը պահանջում է անպայման արժանի պատիժ հանցանքի դիմաց, բնականաբար բացառում է մասնավոր կամայականության ամեն տեսակ ներագդեցություն դատավարության վրա: Վերջինս անհրաժեշտաբար պետք է իրականացվի կատարված հանցագործության

---

<sup>1</sup> **Федулов А.В.** Реализация принципа публичности (официальности) в современном уголовном судопроизводстве России – Диссертация на соискание учёной степени кандидата юридических наук. Нижний Новгород, 2002, էջ 27:

<sup>2</sup> **Строгович М.С.** Природа советского уголовного процесса и принцип состязательности. М., 1939, էջ 60:

<sup>3</sup> **Михайловский И.В.** Основные принципы организации уголовного суда. Томск, 1905, էջ 94:

նկատմամբ, թեկուզ և նա, ում իրավունքները խախտվել են, հրաժարվի դրանց վերականգնումից, կամ թեկուզ մեղադրյալը պատրաստ լինի առանց դատի պատիժ կրելու...»<sup>1</sup>: Այսինքն՝ դեռևս նախահեղափոխական շրջանում կապ է հաստատվել հանրային հիմքի ամրապնդման և քաղաքացիների իրավունքների ոտնահարման հնարավորության միջև:

Խորհրդային պետությունում դատարանի առանձնահատկությունն այն էր, որ նրա գործունեությունը խիստ գաղափարականացված էր: Գատարանը դիտվում էր որպես դասակարգային պայքարի գործիք, իսկ քրեական դատավարությունը՝ որպես մեխանիզմ, որի օգնությամբ կարելի էր ճնշումներ գործադրել նոր տեսակի պետությանը խորթ անձանց նկատմամբ: Այսպես՝ Մ. Վ. Կոժևնիկովը, առաջնորդվելով այդ գաղափարախոսությամբ, դատարանի գործունեությունը գնահատելիս նշում է. «Երկրի արդյունաբերականացման շրջանում, որը հայտնի է դասակարգային պայքարի սուր դրսևորումներով (բուրժուական մտավորականության վերնախավի չարամիտ վնասագործությունը արդյունաբերության բոլոր բնագավառներում, գյուղերում կուլակների կատաղի պայքարը տնտեսության կոլեկտիվ ձևերի դեմ և պետությանը սահմանված գներով հացահատիկ հանձնելուն դիմադրելը, վարչական ապարատում բյուրոկրատական տարրերի, որոնք դասակարգային թշնամու գործակալներ էին, սաբոտաժը), խորհրդային դատարանի առջև ծառայան մի շարք կարևորագույն խնդիրներ»<sup>2</sup>: Այդօրինակ գաղափարականացումը սաստկացնում էր քրեական դատավարության հանրային հիմքը, ինչպես նաև նպաստում էր, որ այն հիմք դառնա քաղաքացիների ազատությունների ու իրավունքների խախտման համար: Հանրային հիմքի նման ձևախեղումը՝ դասակարգային գաղափարախոսության ներգործությամբ, հանգեցրեց նաև այն բանին, որ այն դարձավ իրավապահական մարմինների պաշտոնատար անձանց անբարոյական, ուստի և անարդար գործունեության հիմքը: Գատարանը, ըստ

---

<sup>1</sup> **Баршев Я.И.** Основания уголовного судопроизводства с применением к российской уголовному судопроизводству. М., 2001, էջ 44:

<sup>2</sup> **Кожевников М.В.** История Советского суда. М.: Юридическое издательство Министерства Юстиции СССР, 1948, էջ 231:

եության, դարձել էր ոչ արդարադատ, քանի որ մերժում էր արդարությունը, իսկ դրա փոխարեն առաջ էր քաշում դասակարգային գաղափարախոսությունն իր դրույթներով ու պահանջներով:

Հանրային հիմքը չէր կարող գերծ մնալ տիրապետող գաղափարախոսությունից, քանի որ դրա դրսևորման ձևերից մեկը քրեական հետապնդումն էր: Այդ հանգամանքին, մասնավորապես, ուշադրություն է դարձրել Ա. Յա. Վիշինսկին՝ նշելով, թե «...հանրային հիմքը խորհրդային դատավարության մեջ արտահայտվում է այն *կանոնում*, որ, մի կողմից, քրեական հետապնդում կարող են հարուցել միայն պետական մարմինները՝ դատախազությունը, Միության և միութենական հանրապետությունների դատական մարմինները, մյուս կողմից՝ բոլոր դատավարական գործողություններն իրականացվում են *ex officio*՝ մասնավոր անձանց կամքից ու շահերից անկախ»<sup>1</sup>: Խորհրդային պետությունում քրեական հետապնդումը դիտվում էր որպես «դասակարգային թշնամիների», «այլախոհների» և այլոց նկատմամբ ճնշումներ կիրառելու հնարավորություն: Այսինքն՝ միանգամայն իրավաչափ է այն պնդումը, թե «հանրայնության սկզբունքի մեջ արտացոլվում է արդարադատության պատժիչ տարրը»<sup>2</sup>: Վերոնշյալ տարրի առանձնահատկությունները մեծապես պայմանավորված են պետությունում գերիշխող գաղափարախոսության յուրահատկություններով:

Անհրաժեշտ է նշել, որ երբեմն քրեական դատավարության մեջ հանրային հիմքը հենարան է դառնում մեղադրական ուղղության համար: Դա տեղի է ունենում այն ժամանակ, երբ պետությունում գերիշխող գաղափարախոսությունը քաջալերում է քաղաքացիների որոշակի խմբի դեմ ճնշումների կիրառումը: Դա, մասնավորապես, բնութագրական էր խորհրդային պետությանը, որում տիրապետող դասակարգային գաղափարախոսությունն էր, ըստ որի անհրաժեշտ էր անհաշտ պայքար մղել «դասակարգային օտար տարրերի» դեմ, այսինքն՝ բնակչության այնպիսի շերտերի դեմ, որոնք կարող էին նպաստել կապիտալիստական հարաբերությունների վե-

---

<sup>1</sup> Вышинский А.Я. Курс уголовного процесса. М., 1927, էջ 140:

<sup>2</sup> Подольный Н.А. От принципа публичности к защите публичного интереса – концепция современного уголовного процесса //Проблемы отправления правосудия по уголовным делам в современной России: теория и практика: сборник научных статей: в 2 ч. Ч. 1 – Курск, 2007, էջ 157:

րածննդին: Սակայն միայն այդ գաղափարախոսությունը չէր, որ ի գորու էր աջակցելու մեղադրական ուղղվածությանը: Հասարակության մեջ տիրապետող այն պատկերացումները, որոնց համաձայն ուժեղ պետությունը նույնացվում է հասարակության և նրա առանձին անդամների կյանքի համընդհանուր վերահսկողության հետ, նույնպես մեղադրական ուղղվածության դրսևորումներ են: Հարկ է նշել, որ ներկայումս ևս իրավապահական մարմինների առանձին պաշտոնատար անձանց գործունեության մեջ մեղադրական ուղղվածության դրսևորման համար որոշ պայմաններ կան: Դա առաջին հերթին վերաբերում է պաշտոնատար այն անձանց, որոնք նախկինի պես անհրաժեշտ են համարում ամբողջատիրական քաղաքականության իրականացումը:

Կոնկրետ քրեական գործեր քննելիս մեղադրական ուղղվածությունը միշտ հիմնված է պետության ու հասարակության շահերի արդյունավետ պաշտպանության անհրաժեշտության վրա: Այդ պաշտպանության արդյունավետությունը ենթադրում է կոնկրետ հանցագործության մեջ անձի մեղավորության որոշում, որի համար նա պիտի պատժվի: Դրանով իսկ հաստատվում է հանրային հիմքի գերակայությունը քրեական դատավարության մեջ: Քանի որ այդ հանրային հիմքը խիստ ձևափոխված է դրա վրա հստակ ամբողջատիրական գաղափարախոսության ազդեցության հետևանքով, հետևաբար պետք է արձանագրել, որ այն հիմք է դառնում իրավապահական մարմինների պաշտոնատար անձանց անբարոյական գործելակերպի համար, որոնք հանուն պետության որոշակի շահերի պատրաստ են գոհել անգամ օրենքի պահանջները, քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները:

Հատկանշական է այն, որ մեղադրական ուղղվածության տիրապետության ժամանակահատվածում դատարանի գործառույթները վերապահվում էին պետական մարմիններին, որոնք դատական անվանել չի կարելի: Այսպես՝ քրեական գործերի քննությունը, դատարանից բացի, հանձնարարվում էր նաև արտակարգ հանձնաժողովներին, «եռյակներին», «երկյակներին» և համանման մարմիններին, որոնք, լինելով պետական, չէին կարող դիտվել որպես դատական, քանի որ ստեղծվել էին ոչ թե որպես արդարադատության մարմիններ, այլ որպես ճնշումներ իրականացնող մարմիններ և ի-

րենց գործունեության ընթացքում ենթարկվում էին գործադիր իշխանության մարմիններին, այսինքն՝ կոնկրետ քրեական գործով որոշում կայացնելիս անկախ չէին:

Քրեական գործեր քննելիս մեղադրական ուղղվածության սաստկացումը նպաստեց, որ Խորհրդային պետության լենինյան ու ստալինյան ժամանակաշրջաններում դատարանները սկսեցին ենթարկվել գործադիր իշխանությանը: Հենց այդ փաստն էլ հիմք դարձավ Մ. Վ. Կոժևնիկովի համար պետության մեջ առկա այդ երևույթը բնորոշել որպես «դատական կառավարում», որի մասին նա մասնավորապես գրում է. «Անմիջական դատական կառավարման գործառույթների հետ մեկտեղ Արդարադատության ժողովրդական կոմիսարիատը դեռ այդ շրջանում իրականացնում էր մի շարք այլ գործառույթներ, օրինակ՝ օրենքների կատարման նկատմամբ վերահսկողությունը՝ անօրինական կարգադրությունների ու որոշումների բողոքարկման և օրինախախտներին քրեական պատասխանատվության ենթարկելու իրավունքով, գործերի հսկողությունն ու քննության ղեկավարումը, դատավճիռների ու որոշումների բողոքարկումը, կալանքի տակ գտնվողների օրինական ու ճիշտ պահպանության նկատմամբ հսկողությունը»<sup>1</sup>: Ակներև է, որ Արդարադատության ժողովրդական կոմիսարիատին տրված էին դատարանների նկատմամբ հսկողության գործառույթներ, ինչը նշանակում էր, որ դատարանն իր գործունեության մեջ անկախ չէր:

Այս ամենը նպաստեց մեղադրական ուղղվածությանը, որը հանրային հիմքի ձևափոխված արտահայտությունն է: Հետագայում, հսկողության գործառույթները դատախազությանը հանձնելով, ըստ էության շատ քիչ բան փոխվեց, քանի որ դատարանն իր գործողություններում ու որոշումներ ընդունելիս շարունակեց մնալ կախյալ պետական այլ մարմիններից: Դատախազության վրա դրվեց դատարանների կողմից օրենքների ճիշտ և միատեսակ կիրառման նկատմամբ հսկողությունը, որի հետևանքով նրանք հայտնվեցին կախյալ վիճակում իրենց գործունեության մեջ ու որոշումներ ընդունելիս: Այդ ժամանակահատվածում հանրայնությունն արդեն չէր

---

<sup>1</sup> **Кожевников М.В.** История Советского суда 1917 – 1956 годы. М.: Государственное издательство юридической литературы, 1957, էջ 54-55:

նշանակում պայքար «ժողովրդի թշնամիների» դեմ: Այն ենթադրում էր պայքար հանցավորության դեմ, որի համակարգումը հանձնարարվեց դատասխազությանը: Ինչպես նշում է Լ. Ն. Մասլեննիկովան. «Հանցավորության դեմ պայքարը բոլոր միջոցներով հիմնական արժեքային կողմնորոշիչն էր, որը ձևավորում էր քրեադատավարական քաղաքականությունը, որոշում քրեական դատավարության հանրային հիմքի բովանդակությունը»<sup>1</sup>:

Մ. Ա. Չելցովը, նշելով, որ հանրային հիմքը ենթադրում է պայքար հանցավորության դեմ, գտնում է. «Այդ գործողություններն իրականացվում են արդարադատության իրացման ու դրա նպատակներին հասնելու համար՝ պետության շահերին համապատասխան՝ հանցագործությունների բացահայտում, մեղավոր անձանց մերկացում ու դատապարտում և անմեղին արդարացում, այլ ոչ թե առանձին քաղաքացիների շահերին ու կամքին համապատասխան»<sup>2</sup>: Ինչպես երևում է, նույնիսկ այն դեպքում, երբ մասնավոր շահը համապատասխանում է հանրային շահին, դատավարական գործողությունների համակարգը ծառայեցվում է հանրային շահին:

Այդ ժամանակաշրջանում հանրային հիմքը լիովին նույնացվում էր պետության կողմից բնակչության որոշակի շերտերի (օրինակ՝ «կուլակների») ու քաղաքացիների խմբերի նկատմամբ կիրառվող ճնշումների քաղաքականության հետ, մարդկանց, որոնք ենթադրաբար համարվում էին պետության մեջ հաստատված վարչակարգի թշնամիներ: Զրեական դատավարության մեջ հանրային հիմքի դրսևորման բարոյական գնահատականը ածանցյալ է պետական ամբողջ քաղաքականության գնահատականից: Այդօրինակ փոխկապվածությունը ակներև է դարձնում այն, որ հանրային հիմքի դրսևորման ձևերը այդ ժամանակահատվածում չէին համապատասխանում բարոյական պահանջներին: Դրանք չեն համապատասխանում նաև բարոյականության վերաբերյալ ժամանակակից պատկերացումներին:

---

<sup>1</sup> Масленникова Л.Н. Методология познания публичного и частного (диспозитивного) начал в уголовном судопроизводстве. М., 2000, էջ 167:

<sup>2</sup> Чельцов М.А. Советский уголовный процесс. М.: Государственное издательство юридической литературы, 1951, էջ 80:



Ըստ այդմ՝ միանգամայն արդարացի է այն պնդումը, որ հանրային հիմքը արտահայտում է պետական շահը պետության զարգացման որոշակի պատմական ժամանակահատվածում: Ուստի, քաղաքականության ու գաղափարախոսության մեջ պետական շահի փոփոխություններով պայմանավորված, քրեական դատավարության մեջ հանրային շահի դրսևորման ձևերը փոփոխվում են: Այսպես՝ անձնիշխանական (ավտորիտար) պետությունում հանրային հիմքը դրսևորվում է մեղադրական ուղղվածությամբ և ինկվիզիցիոն քրեական դատավարության վերածննդով: Վ. Լիվշիցը նախքան դատական բարեփոխումները գոյություն ունեցած ռուսական քրեադատավարական համակարգը բնորոշել է որպես «պետական-քաղաքական շահերի բավարարմանը» միտված: «Դրա հիմքում ընկած է հանրային հիմքի գերակայությունը, ինկվիզիցիոնությունը»<sup>1</sup>: Ժողովրդավարական պետությունում փոփոխվում է նաև հանրային հիմքի դրսևորման ձևը, որը այլևս չի դիտարկվում որպես սկզբունք, սակայն պաշտպանվում է դատարանում, ճիշտ է, կողմերի միջև մրցակցության հիման վրա, որի շնորհիվ հանրային և մասնավոր հիմքերը հավասարակշռվում են: Այդ պատճառով էլ հենց ժողովրդավարական պետության քրեական դատավարության մեջ հանրային հիմքի մերժումը անհիմաստ է: Սակայն նշյալ հիմքն արդեն արտահայտվում է հանրային շահի մեջ, որը պաշտպանվում է մասնավոր շահին համահավասար:

Հանրային հիմքի նշանակության ժխտումը քրեական դատավարության մեջ անհիմաստ է: Այն միշտ էլ առկա է եղել, և կամայական որոշմամբ այն փոխել հնարավոր չէ: Սակայն առանձին պատմական ժամանակահատվածներում անհարկիորեն բացարձակացվել է դրա նշանակությունը քրեական դատավարության համար՝ դարձնելով այն համակարգաստեղծ սկզբունք: Դա հանգեցրել է քրեական դատավարության ինկվիզիցիոն հիմքերի վերածննդին և քաղաքացիների իրավունքների ու ազատությունների ոտնահարմանը:

Սակայն չնայած հանրային հիմքի բոլոր աղավաղումներին, ո-

---

<sup>1</sup> **Лившиц В.** Процессуальный гуманизм и инквизиция / В. Лившиц, А. Прошкин // Социалистическая законность, 1990, № 1, էջ 38:

րոնք առկա էին անցյալում, հարկ է նշել նաև դրա դրական նշանակությունը, որը դրսևորվում է ժամանակակից դատավարության մեջ: Կողմերի մրցակցության սկզբունքը, որը բնորոշ է ժամանակակից քրեական դատավարությանը, ոչ միայն ենթադրում է հանրային շահի առկայություն, այլև այն, որ մասնավոր շահի հետ մրցակցությամբ այն դառնում է քրեական դատավարության շարժիչ հիմքերից մեկը:

Քրեական դատավարությունում հանրային հիմքը միանշանակ սահմանում չունի: Այն երբեմն բնութագրվում է որպես քրեական դատավարության հիմք<sup>1</sup>, երբեմն՝ սկզբունք<sup>2</sup>, երբեմն էլ՝ ուղղակի հանրային շահ<sup>3</sup>: Ընդ որում՝ հեղինակներն իրենց ուշադրությունը կենտրոնացնում են հանրայնության տարբեր կողմերի վրա՝ համարելով, որ հենց իրենց ուշադրության ոլորտում հայտնված առանձնահատկությունն է արտացոլում դրա էությունը: Ի մի բերելով բոլոր այդ կարծիքները՝ կարելի է թվարկել այն բոլոր բաղադրիչները, որոնք դիտվել են որպես առավել էականներ հանրայնությունը սահմանելու համար: Դրանք են՝ 1) քրեական հետապնդում և նույնիսկ բռնություններ, 2) դատական մարմինների, դատախազության, նախնական քննության մարմինների ակտիվությունը, 3) պատժի անխուսափելիությունը, 4) մասնավոր շահերի պաշտպանությունը հասարակության ու պետության անունից:

---

<sup>1</sup>Տե՛ս **Викторский С.И.** Уголовный процесс: Учебное пособие. М., 1997, էջ 14, **Александров А.С.** Диспозитивность в уголовном процессе. Н. Новгород, 1997, էջ 186–187, **Чельцов-Бебутов М.А.** Советский уголовный процесс. М., 1951, էջ 80–81, **Якуб М.Л.** Демократические основы советского уголовно-процессуального права. М., 1960, էջ 41–42, **Якуб М.Л.** Процессуальная форма в советском уголовном судопроизводстве. М., 1981, էջ 51–54:

<sup>2</sup>Տե՛ս **Полянский Н.Н.** Вопросы теории советского уголовного процесса. М., 1956, էջ 84, 112, **Полянский Н.Н.** Проблемы судебного права / Под ред. доктора юридических наук, профессора В.М. Савицкого. М., 1983, էջ 170, **Добровольская Т.Н.** Принципы советского уголовного процесса (вопросы теории и практики). М., 1971, էջ 79, **Ларин А.М.** Правосудие и закон / А.М. Ларин, А.А. Мельников // Конституционные основы правосудия в СССР / Под ред В.М. Савицкого. М., 1981, էջ 41, 249, **Тыричев И.В.** Принципы советского уголовного процесса: Учебное пособие. М., 1983, էջ 23:

<sup>3</sup>Տե՛ս **Громов Н.А.** Уголовный процесс России: Учебник / Н.А. Громов, В.А. Пономаренков, Ю.В. Франциферов. М., 2001, էջ 64:

Քրեական հետապնդումն ու ճնշումները դիտելով որպես հանրայնության էություն քրեական դատավարության մեջ՝ Գ. Կարնիցկին, Գ. Ռոգինսկին, Մ. Ստրոգովիչը գտնում են. «Դատական մարմինների հիմնական խնդիրը սոցիալիստական-հանրային սեփականության պաշտպանության համար պայքարում դասակարգային թշնամական տարրերի, գողերի և հափշտակիչների նկատմամբ խստագույն ճնշումների կիրառումն է...»<sup>1</sup>: Նրանցից պելի վաղ Վ. Կ. Սլուչևսկին նշում է. «Այդ սկզբունքի էությունն այն է, որ պետության կողմից պաշտպանվող իրավական նորմի նկատմամբ կիրառվող հանցավոր ոտնձգությունը պետությանը իրավունք է տալիս քրեական պատիժ կիրառելու օրենքներով սահմանված դատական կարգով, դրա համար լիազորված անձանց միջոցով՝ անկախ տուժած անձի կամքից: Այդ սկզբունքի էությունը քրեական դատավարության հանրային բնույթն է, ըստ որի քրեական դատարանն իր մասնագիտական գործունեությունը ծավալում է ոչ թե մասնավոր շահերին, այլ հանրային շահերին համապատասխան, որոնք պահանջում են քրեական պատժի *անշեղորհ* կիրառում հանցանք գործելու մեջ մեղավորի նկատմամբ, եթե միայն չկան օրինական հիմքեր նրա պատասխանատու չլինելու վերաբերյալ»<sup>2</sup>:

Հանրային շահը պահանջում է ակտիվ պաշտպանություն դատավարության ընթացքում: Այս դրույթը ելակետ են ընդունում բազմաթիվ իրավաբաններ՝ դատարանից պահանջելով ակտիվ դիրքորոշում քրեական դատավարության ժամանակ, մասնավորապես ապացույցների հավաքման ընթացքում: Այսպես՝ Մ. Ա. Չելցովը հանրայնության սկզբունք ասելով՝ նկատի ունի դատական մարմինների, դատախազության և քննության ակտիվությունը<sup>3</sup>: Համանման կարծիք է հայտնում նաև Մ. Ս. Ստրոգովիչը. «Քրեական դատավարության հանրայնության սկզբունքն այն է, որ նախաքննության ու հետաքննության մարմինները, դատախազությունն ու դատարանն ի-

---

<sup>1</sup> Карницкий Д. Уголовный кодекс РСФСР. Практическое пособие для работников юстиции и юридических курсов / Д. Карницкий, Г. Рогинский, М. Строгович. М., 1934, էջ 10:

<sup>2</sup> Случевский В.К. Учебник русского уголовного процесса. СПб., 1913, էջ 49:

<sup>3</sup> Чельцов М.А. Советский уголовный процесс. М.: Государственное издательство юридической литературы, 1951, էջ 81:

րենց իրավասությանը վերապահված քրեական գործերի հարուցման, քննության ու լուծման ժամանակ, գործելով ի շահ Խորհրդային պետության ու սոցիալիստական հասարակության, պարտավոր են գործի դեմ բոլոր օրինական միջոցները և իրականացնել բոլոր օրինական գործողությունները՝ հանցագործությունները բացահայտելու, հանցագործներին հայտնաբերելու ու պատժելու, գործի բոլոր հանգամանքները պարզելու, գործին մասնակցող բոլոր անձանց օրինական շահերը պաշտպանելու համար՝ կախման մեջ չդնելով այդ գործողությունների իրականացումը շահագրգիռ անձանց ու կազմակերպությունների հայեցողությունից»<sup>1</sup>: Ահա, ինչպես է Մ. Ս. Ստրոգովիչը պարզաբանում հանրայնության սկզբունքի իր սահմանումը. «Հանրայնության սկզբունքի դատավարական արտահայտությունն այն է, որ նախնական քննության մարմինները, դատախազությունն ու դատարանը ինքնին, իրենց պետական, ծառայողական պարտքից ելնելով, պարտավոր են ամեն ինչ անել, որպեսզի ճիշտ քննեն ու լուծեն քրեական գործը»<sup>2</sup>: Համանման կարծիք է հայտնում նաև Տ. Ն. Գորբովյուսկայան. «Հիմունքների հոդված 3-ում գրված է, որ հետաքննության, նախաքննության մարմինները, դատախազությունը և դատարանը պարտավոր են ձեռնարկել օրենքով նախատեսված բոլոր միջոցները՝ պարզելու հանցագործության դեպքը, հանցագործության մեջ մեղավոր անձանց, պատժելու նրանց, որից հետևում է, որ հանրայնության սկզբունքը բովանդակում է այդ մարմինների ակտիվ գործունեության պարտադիր լինելը և նրանց կողմից նախաձեռնողականության դրսևորումը՝ անհրաժեշտ քննչական ու դատական գործողությունների իրականացմամբ, գործի վարույթի ամբողջ ընթացքում, այլ ոչ թե միայն գործ հարուցելիս կամ այն կարճելու որոշում կայացնելիս»<sup>3</sup>:

---

<sup>1</sup> **Строгович М.С.** Курс Советского уголовного процесса в 2-т. Т.1: Основные положения науки Советского уголовного процесса. М.: Издательство «Наука», 1968, էջ 136:

<sup>2</sup> **Строгович М.С.** Курс Советского уголовного процесса в 2-т. Т.1: Основные положения науки Советского уголовного процесса. М.: Издательство «Наука», 1968, էջ 136:

<sup>3</sup> **Добровольская Т.Н.** Принципы советского уголовного процесса.. М., «Юридическая литература», 1971, էջ 74:

Ներկայումս ևս որոշ հեղինակներ իրավապահայան մարմինների ակտիվության մեջ նկատում են հանրայնության դրսևորումներ: Այսպես՝ Ս. Գ. Բանդուրինի կարծիքով. «Քրեական գործի հարուցման փուլում հարաբերությունների հանրային-իրավական էությունը պետության իրավասու մարմնի պաշտոնատար անձանց պարտադիր ակտիվ որոնողական գործունեությունն է, որը նպատակատուղված է կատարված կամ նախատեսվող հանցագործության վերաբերյալ տեղեկատվության հայտնաբերմանն ու գրանցմանը, ինչպես նաև հանցագործության հատկանիշների հայտնաբերմանն ու քրեադատավարական միջոցներով հիմնավոր ու արագ արձագանքմանը՝ քրեական գործ հարուցելու կամ այն մերժելու մասին որոշում կայացնելու համար նյութական հիմքեր հայտնաբերելու նպատակով»<sup>1</sup>:

Հանրայնությունը դիտվել է նաև որպես հանցանք գործելու մեջ մեղավոր անձի նկատմամբ պատժի անխուսափելիության ապահովման մեխանիզմ: Այդ իմաստով ամբողջ քրեական դատավարությունը ներկայացվել է որպես որոշակի ընթացակարգ, որն ապահովել է հանցանք գործելու մեջ մեղավոր անձի նկատմամբ պատժի անխուսափելիությունը: Պատահական չէ, որ բազմաթիվ անվանի գիտնականներ պատժի անխուսափելիությունը համարում էին հանրայնության սկզբունքի դրսևորում: Այսպես՝ ըստ Յա. Ի. Բարշևի. «...ճշմարտության օրենքը, որը պահանջում է անպայմանորեն արժանի պատիժ հանցագործության համար, բնականաբար բացառում է մասնավոր կամայականության ցանկացած ներգործություն դատավարության վրա»<sup>2</sup>: Այս տեսակետը համընկնում էր Չ. Բեքքարիայի կարծիքին, որը նշում էր, որ պատժելու իրավունքով օժտված պետք է լինի պետությունը, և հանցագործություններին դիմագրավելու ամենագործուն միջոցը ոչ թե պատիժների խստությունն է, այլ

---

<sup>1</sup> **Бандурин С.Г.** Некоторые проблемы реализации принципа публичности в стадии возбуждения уголовного дела // Следователь. Федеральное издание. М., 2003, № 11, էջ 27-34:

<sup>2</sup> Տե՛ս **Баршев Я.И.** Основания уголовного судопроизводства с применением к российскому уголовному судопроизводству. М., 2001, էջ 44:

դրանց անխուսափելիությունը<sup>1</sup>: Հանրայնության սկզբունքը պատժի անխուսափելիության հետ կապում էին մաս ալ իրավաբաններ<sup>2</sup>: Հանրայնության սկզբունքի և պատժի անխուսափելիության միջև այդպիսի փոխկապվածությունը, ըստ Լ. Վ. Գոլովկոյի, դարձել է «ռուսական գաղափար» քրեական իրավունքում<sup>3</sup>: Ն. Ա. Պոդոլնին, բնութագրելով պետության զարգացման խորհրդային շրջանի քրեական դատավարությունը, գտնում է. «Ինչպես հայտնի է, հանրայնության սկզբունքի առանցքը քրեական պատասխանատվության անխուսափելիության պահանջն էր: Այդ պահանջից էին բխում ինչպես նախկինում գործող ՌԽՖՍՀ քրեադատավարական ամբողջ օրենսգրքի, այնպես էլ առանձին նորմերի կառուցվածքն ու բովանդակությունը»<sup>4</sup>: Այսինքն հանցավորության դեմ պայքարի դոկտրինան իր առավել ցայտուն արտահայտությունն էր ստացել խորհրդային քրեական դատավարությունում, որտեղ բացակայում էին անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության հիմնական երաշխիքները: Խոսքը մասնավորապես վերաբերում է անմեղության կանխավարկածին, մրցակցությանը, ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելուն, դատական սխալներից տուժածների իրավունքների վերականգնմանը, դատական պաշտպանության իրավունքին և այլն:

Հանրայնության սկզբունքի և դրա էության վերաբերյալ դատողություններից ելնելով՝ որոշ դատավարագետներ եզրակացրել են, որ այդ սկզբունքի լիակատար իրացումը հանգեցնում է մասնավոր շահի և առանձին քաղաքացիների իրավունքների պաշտպանությանը: Այսպես՝ Մ. Ս. Ստրոգովիչը ուշադրություն է դարձրել այն բանին, որ

---

<sup>1</sup>Տե՛ս **Беккариа Ч.** О преступлениях и наказаниях. М., 1995, էջ 70–71:

<sup>2</sup>Տե՛ս **Полянский Н.Н.** Очерки общей теории уголовного процесса. М., 1927, էջ 38; **Строгович М.С.** Уголовный процесс. М., 1946, էջ 72:

<sup>3</sup>Տե՛ս **Головко Л.В.** Принципы неотвратимости ответственности и публичности в современном российском уголовном праве и процессе // Государство и право, 1999, № 3, էջ 61:

<sup>4</sup> **Подольный Н.А.** От принципа публичности к защите публичного интереса – концепция современного уголовного процесса // Проблемы отправления правосудия по уголовным делам в современной России: теория и практика: сборник научных статей: в 2 ч. Ч. 1 – Курск, 2007, էջ 156:

հանրայնության սկզբունքը ենթադրում է քաղաքացիների իրավունքների ու շահերի պաշտպանությունը<sup>1</sup>, այսինքն՝ պաշտպանում է մասնավոր հիմքը: Ընդ որում՝ հաճախ անձնական և հանրային շահերը հարաբերակցվել են որպես առանձին և ընդհանուր շահեր<sup>2</sup>: Քրեական դատավարության մեջ հանրայնության սկզբունքի բազմաթիվ սահմանումներից կասկած չի հարուցում միայն այն, որ հանրայնության սկզբունքը հանրային հիմքի, հանրային շահի արտացոլումն է քրեական դատավարության մեջ: Այսպես՝ Մ. Վ. Գուխովսկու կարծիքով՝ քրեական դատավարությունը «... ծառայում է պետական շահերին: Գատախազությունը (երբեմն՝ ոստիկանությունը) հետապնդում հարուցելիս և մեղադրանք պաշտպանելիս ... գործում է ոչ թե իր անձնական, այլ հանրային շահերին համապատասխան, ուստի այն չի կարող կամայականորեն հրաժարվել մեղադրանքից»<sup>3</sup>: Նույն կաժիքին է նաև Ն. Ն. Ռոզինը. «... ժամանակակից դատավարությունը հաստատապես յուրացրել է լոկ մեկ համընդհանուր սկզբունք, որով քրեական հետապնդումը միշտ պահպանում է հանրային-իրավական, պաշտոնական բնույթը: Այդ հետապնդումը իրականացնում է պետությունը մեղադրյալի նկատմամբ»<sup>4</sup>: Նա շեշտում է այն, որ անձը մեղադրվում է պետության կողմից, այսինքն՝ ուղղակիորեն մատնանշում է պետական շահը կոնկրետ քրեական գործերի վարույթում: Հանրայնության սկզբունքի վերաբերյալ այս տեսակետը ներկայումս ևս չի վիճարկվում: Իրոք, հանրայնությունը պետական շահի արտացոլումն է յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործի նախաքննության ու դատական քննության ժամանակ: Այն արտահայտվում է քրեադատավարական իրավունքի ամենատարբեր նորմերում: Ընդ որում՝ ամենավառ կերպով արտահայտվում է այն նորմում, որի համաձայն՝ դատավճիռը կայացվում է

<sup>1</sup>Stu Строгович М.С. Курс советского уголовного процесса. М., 1958, էջ 78; Строгович М.С. Курс советского уголовного процесса: В 2 т. М., 1968. Т. 1, էջ 136:

<sup>2</sup>Stu Гальперин И.М. О принципе публичности (официальности) в советском уголовном процессе // Правоведение. Л.: Изд-во Ленингр. ун-та, 1960, № 2, էջ 106-119:

<sup>3</sup>Духовский М.В. Русский уголовный процесс. М., 1902, էջ 153:

<sup>4</sup>Розин Н.Н. Уголовное судопроизводство. Томск, 1913, էջ 295:

պետության անունից: Այսպես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 357-րդ հոդվածում սահմանված է. «Գատարանները դատավճիռներ են կայացնում հանուն Հայաստանի Հանրապետության»: Պետությունը հենց միայն այդ պահանջով դրսևորում է իր շահը քրեական գործերի քննության մեջ: Այդ պահանջով շեշտվում է այն, որ դատավճիռը կայացվում է ոչ միայն կոնկրետ անձանց շահերից ելնելով, որոնք տուժել են կոնկրետ հանցագործության հետևանքով, այլև հենց ի շահ պետության: Ուստի միանգամայն արդարացի է այն պնդումը, որ քրեական դատավարության մեջ անպայման պաշտպանվում է հանրային շահը, այսինքն՝ պետության ու հասարակության շահը:

Վերլուծելով հանրայնության սկզբունքի պատմական զարգացումը, հարկ է նշել նաև այն, որ այդ հասկացության հետ մեկտեղ գործածվել է պաշտոնականության սկզբունքը: Ռոշ դատավարագետներ այդ հասկացությունները տարբերակել են, մյուսները՝ նույնացրել: Այսպես՝ Ն. Ն. Պոլյանսկին կարծում էր, որ դրանք թեև իրար մոտ, սակայն ոչ նույնական հասկացություններ են: Նա գրում է. «Պաշտոնականության սկզբունքը, կամ, ինչպես մենք կնախընտրեինք ասել՝ պաշտոնական նախաձեռնության սկզբունքը, վերաբերում է դատախազի, քննիչի, դատարանի գործունեությանը, հանրայնության սկզբունքին ենթարկվում է նաև խորհրդային փաստաբանի գործունեությունը...»<sup>1</sup>: Նա հանրայնության սկզբունքը համարում էր միայն պետության շահերի արտացոլումը քրեական դատավարության մեջ: Մասնավորապես, նշում է. «Ամբողջ քրեական դատավարությունը, ինչպես և խորհրդային իրավունքի բոլոր բնագավառները, ենթարկվում են հանրայնության սկզբունքին, այսինքն՝ Խորհրդային պետության ու սոցիալիստական հասարակության շահերին ծառայելու խնդրին»<sup>2</sup>: Ասել է թե՛ հանրայնության սկզբունքը, ըստ նրա, միայն պետության շահերի արտացոլումն է քրեական դատավարության մեջ:

Խորհրդային քրեական դատավարության մեջ պաշտոնակա-

---

<sup>1</sup> Полянский Н.Н. Вопросы теории советского уголовного процесса. М., 1956, էջ 85:

<sup>2</sup> Полянский Н.Н. նույն տեղը էջ 84, 112:



նության (հանրայնության) սկզբունքին անդրադարձել է Մ. Ա. Չելցովը<sup>1</sup>, որի դիրքորոշումն այլ էր: Նա պաշտոնականությունն ու հանրայնությունը դիտում էր որպես նույնական հասկացություններ: Համանման տեսակետներ ունեին նաև այլ գիտնականներ<sup>2</sup>: Այս դիրքորոշումը հետագայում դարձավ տիրապետող: Այսպես՝ Ա. Վ. Ֆեդուլովն իր ատենախոսական աշխատանքն անվանել է «Հանրայնության (պաշտոնականության) սկզբունքի իրացումը Ռուսաստանի ժամանակակից քրեական դատավարության մեջ»<sup>3</sup>: Նա գտնում է. «Ստուգաբանորեն հանրայնությունն ու պաշտոնականությունը երկու միանման հասկացություններ են: Ընդ որում՝ մեկը զարգացնում է մյուսին: Այսպես՝ հանրայնությունը նշանակում է (լատ. *Publicus* – հասարակական) հանրային շահերի առկայություն, իսկ պաշտոնականությունը (լատ. *Officialis* – պաշտոնական) պետական մարմինների պարտականությունն է՝ կատարելու դրանք պաշտպանելու իրենց գործառույթները»<sup>4</sup>: Ներկայումս այս ըմբռնումը համընդհանուր է:

Բնավ էլ անվիճելի չէ քրեական դատավարության սկզբունքների համակարգում բուն հանրայնության սկզբունքի գոյությունը: Այսպես՝ Մ. Լ. Յակոբը կասկածում է դրա գոյությանը՝ ընդգծելով, որ միայն «բուրժուական դատավարագետներն ունեն բոլոր հիմքերը խոսելու հանրայնության մասին»<sup>5</sup>: Նրա կարծիքով, խորհրդային գիտնականները հիմքեր չունեն խոսելու այդ սկզբունքի առկա-

---

<sup>1</sup>St'u **Чельцов М.А.** Советский уголовный процесс. М.: Государственное издательство юридической литературы, 1951, էջ 80-81:

<sup>2</sup>St'u **Альперт С.А.** Принцип публичности (официальности) и его значение в деятельности советских органов предварительного расследования // Ученые записки. Ученые записки Харьковского Юридического Института. Харьков, 1957, Вып. 9, էջ 49-60, **Альперт С.А.** Принцип публичности (официальности) и его значение в деятельности советских органов предварительного расследования // Научная конференция по работам, выполненным в 1955 году. Тезисы докладов. Харьков, 1956, էջ 51-54, **Гальперин И.М.** О принципе публичности (официальности) в советском уголовном процессе // Правоведение. Л.: Изд-во Ленингр. ун-та, 1960, № 2, էջ 106-119 և ուրիշներ:

<sup>3</sup>St'u **Федулов А.В.** Реализация принципа публичности (официальности) в современном уголовном судопроизводстве России – Диссертация на соискание учёной степени кандидата юридических наук. Нижний Новгород, 2002, էջ 19:

<sup>4</sup>Федулов А.В. նույն տեղում էջ 16-17:

<sup>5</sup> **Якуб М.Л.** Демократические основы советского уголовно-процессуального права. М.: Изд-во МГУ, 1960, էջ 42:

յության մասին: Իր տեսակետը նա հիմնավորում է օրենքում այդ սկզբունքն ուղղակիորեն նշված չլինելու հանգամանքով, ուստի, ըստ նրա, այդ սկզբունքը գոյություն չունի: Ներկայումս ևս այս մտեցումը համարվում է բավականին փաստարկված: Այսպես՝ քրեադատավարական իրավունքի դասագրքում ուղղակիորեն ասված է. «Քրեական դատավարության բոլոր սկզբունքներն ունեն նորմատիվ արտահայտություն, այսինքն՝ ամրագրված են օրենքում»<sup>1</sup>: Հանրայնության սկզբունքը որպես սկզբունք օրենքում երբեք ամրագրված չի եղել, ուստի և այդպիսին դիտվել չի կարող: Դրանով էլ բացատրվում է այն, որ նշյալ սկզբունքը նույնիսկ հիշատակված չէ այդ դասագրքում: Համանման դիրքորոշում ունեն նաև Վ. Մ. Սավիցկին, ըստ նրա. «Սկզբունքը... նշանակում է գլխավոր գաղափար, առանցքային միտք, առաջնորդող դրույթ, որոնք պետք է կիրառվեն, գործածվեն կամ պահպանվեն մարդկային գործունեության ուրուշակի ոլորտում: Քանի որ խոսքը քրեական դատավարության մասին է, այսինքն՝ հետաքննության, նախաքննության մարմինների, դատախազի ու դատարանի գործունեության, ինչպես նաև այդ գործողությունների մասնակից քաղաքացիների և նրանց միջև ծագող հարաբերությունների, որոնք կարգավորվում են քրեադատավարական իրավունքի նորմերով, ապա այդ գաղափարը (միտքը, դրույթը) անպայման պետք է արտահայտվի, ձևակերպվի օրենքում»<sup>2</sup>: Այս սահմանումը նրան թույլ չի տվել սկզբունքների համակարգում ներառել հանրայնության սկզբունքը:

Հանրայնության սկզբունքի վերաբերյալ քրեական դատավարության մեջ եղած տեսակետների վերլուծությունը հնարավորություն է ընձեռում եզրակացնելու, որ այդ հասկացությունը մինչ այսօր մեկնաբանվել և մեկնաբանվում է ոչ միարժեքորեն: Այսպես՝ որոշ հեղինակներ այն համարում են սկզբունք, ուստի կարծում են, որ հանրային, այսինքն՝ պետական, հասարակական շահը պետք է գերակա լինի անձնականի, այսինքն՝ անհատի շահի նկատմամբ, մյուսները

---

<sup>1</sup> Уголовно-процессуальное право Российской Федерации / Отв. Ред. П.А. Лупинская. М.: Юристъ, 2004, էջ 175:

<sup>2</sup> Ларин А.М., Мельникова Э.Б., Савицкий В.М. Уголовный процесс России. Лекции-очерки / Под ред. проф. В.М. Савицкого. М.: Издательство БЕК, 1997, էջ 1:

կարծում են, որ իրավաչափ չէ հանրային և մասնավոր շահերի հակադրումը քրեական դատավարության մեջ: Մասնավորապես, առաջին տեսակետի կողմնակիցները, պարզաբանելով հանրայնության սկզբունքը, գտնում են. «Հանրային» եզրույթը գործածվում է «հասարակական», ոչ «մասնավոր» իմաստով<sup>1</sup>: Ասել է թե՛ հանրայինն ու մասնավորը նրանք դիտում են որպես հակադիր հասկացություններ: Ընդ որում՝ համարում են, որ առաջնայնությունը պետք է տրվի հանրայինին, ուստի քրեական դատավարության մեջ հանրայինը պետք է դիտվի որպես սկզբունք: Այսինքն քրեական դատավարությունում առաջնայնությունը պետք է տալ հանցավորության դեմ պայքարին, որը հանգեցնում է հանրային, այդ թվում նաև յուրաքանչյուր անձի շահերի պաշտպանության<sup>2</sup>:

Մյուս տեսակետի կողմնակիցները որևէ հակասություն չեն տեսնում հանրայինի ու մասնավորի միջև, նույնիսկ հակառակը, կարծում են, որ հանրայնության սկզբունքը նպաստում է նաև մասնավոր շահի իրացմանը: Այսպես՝ Տ. Ն. Գորբովոլսկայան գրում է. «Սակայն եթե քրեական դատավարության մասնակիցների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը օրենքի պահանջների համաձայն դառնում է դատարանի, նախնական քննության մարմինների ու դատախազության պաշտոնական լիազորությունների մաս, ապա միանգամայն բնական է, որ այդ պայմաններում այն դառնում է հանրայնության անվիճելի դրսևորում սոցիալիստական պետության քրեական դատավարության մեջ»<sup>3</sup>: Այսինքն՝ մասնավոր շահի պաշտպանության մեջ դրսևորվում է հանրայնության սկզբունքը: Հանրայնության հասկացության այդպիսի ընդլայնումը հիմնավորվում է նրանով, որ «անհնար է հոգ տանել պետության ու հասարակության բարօրության մասին՝ միաժամանակ անտեսելով

---

<sup>1</sup>Уголовный процесс Российской Федерации / Отв. ред. проф. А.П. Кругликов. М.: Проспект, 2009, էջ 52:

<sup>2</sup> Михайлов В.А. Меры пресечения в российском уголовном процессе. М., 1996, էջ 29, Бойков А.Д. Проблемы развития рооссийской прокуратуры (в условиях переходного периода) //Законность. 1998. № 7, էջ 7:

<sup>3</sup> Добровольская Т.Н. Принципы советского уголовного процесса. М., «Юридическая литература», 1971, էջ 69:

անհատի շահերը»<sup>1</sup>:

Կարծում ենք, մարդկության պատմական զարգացումը վկայում է, որ այն երկրներում, որտեղ առաջնայնությունը տրվել է հանցավորության դեմ պայքարին, այն միշտ էլ հանգեցրել է տոտալիտարիզմի: Ժողովրդավարական երկրներում մեծագույն արժեքը մարդն է, անկախ նրա կարգավիճակից՝ մեղադրյալ է, տուժող, թե վկա, բայց միաժամանակ չպետք է անտեսել հանցավորության դեմ պայքարի խնդիրը:

Հարկ է նշել, որ քրեական դատավարության մեջ հանրայնության բնորոշման կամ նշանակության վերաբերյալ վեճերի ժամանակ թե՛ մեկ, թե՛ մյուս կողմը, բերում են բավականին ծանրակշիռ հիմնավորումներ ու փաստարկներ, որոնց պատճառով չափազանց դժվարանում է որոշել դրանցից որևէ մեկի ճշմարտացիությունը: Նշյալ հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է դառնում փոխել *հանրայնության դիրարկման մեթոդաբանական մոտեցումը* քրեական դատավարության մեջ: Ըստ այդմ՝ հարկավոր է ձգտել բացահայտելու քրեական դատավարության համար հանրային ու մասնավոր հիմքերի նշանակության վերաբերյալ առկա վեճերի էությունը: Ինչպես պարզվում է, *դա գաղափարախոսությունն է*: Ներկայումս հանրայնության նշանակության վերաբերյալ վեճերի թեժացումը պայմանավորված է, ինչպես առհասարակ պետության, այնպես էլ՝ քրեական դատավարության գաղափարախոսության փոփոխությանը մասնավորապես: Բնավ էլ անհիմն չէ այն պնդումը, թե ներկայումս տեղի է ունենում գաղափարախոսությունների փոփոխություն քրեական դատավարության մեջ<sup>2</sup>: Դա արտահայտվում է խորհրդային քրեական դատավարությանը բնորոշ ինկվիզիցիոն հիմքը հետզհետե մրցակցային եղանակով դուրս մղումով, հարզվում է մասնավոր հիմքը, և մեխանիզմներ են ստեղծվում քրեական դատավարությանը մասնակից բոլոր անձանց շահերի պաշտպանությունն ապահովելու համար: Քրեական դատավարության մեջ մրցակցությունը այն

---

<sup>1</sup> Алиев Т.Т., Громов Н.А. Основные начала уголовного судопроизводства. М., 2003, էջ 41:

<sup>2</sup> Ст'ю Подольный Н. Новый УПК – новая идеология уголовного процесса // Российская юстиция. 2002, № 11, – էջ 2-3:

սկզբունքն է, որով իրացվում են ժողովրդավարական հիմքերը ժամանակակից քրեական դատավարության մեջ: Այսինքն՝ կարելի է միանգամայն վստահ պնդել, որ նշյալ սկզբունքը ժողովրդավարական գաղափարների ուղեկիցն է քրեական դատավարության մեջ: Այդ պատճառով էլ ժամանակակից քրեական դատավարությանը բնորոշ է ոչ միայն քաղաքացիների իրավունքների ու ազատությունների, այլև նրանց անձնական շահը հարգելու գաղափարախոսությունը: Դրա վառ արտահայտությունն է անձի իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը հարգելու սկզբունքի ամրագրումը քրեադատավարական գործող օրենսդրության մեջ: Մասնավորապես սահմանված է, որ անձի իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը հարգելը պարտադիր է քրեական դատավարությանը մասնակցող բոլոր մարմինների և անձանց համար (ՀՀ քր. դատ. օր-ի հոդված 9, մաս 1):

Այդ զարգացումներն ակնհայտ են ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքում: Այսպես՝ ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելու սկզբունքի ամրագրմամբ առաջնայնությունը տրվեց անձի իրավունքների պաշտպանությանը: Նշված սկզբունքի համաձայն՝ ոչ ոք պարտավոր չէ վկայել իր, ամուսնու և մերձավոր ազգականների վերաբերյալ (ՀՀ քր. դատ. օր-ի հոդված 20, մաս 1): Նախկին քրեադատավարական օրենսդրության մեջ, ելնելով հանցագործությունների բացահայտման և հանրության շահերի պաշտպանության խնդիրներից, գործում էր հակառակ սկզբունքը, այսինքն վկան պարտավոր էր ցուցմունք տալ նաև իր, ամուսնու և մերձավոր ազգականների վերաբերյալ: Անվիճելի է, որ անկախ վերը նշված խնդիրների կարևորությունից, բարոյական չէ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու սպառնալիքով հարկադրել վկայել իր, ամուսնու կամ մերձավոր ազգականի վերաբերյալ:

Մեկ այլ դեպքում օրենսդիրը, հանրային շահերի պաշտպանության խնդիրներից ելնելով, կասկածյալին, մեղադրյալին, տուժողին և վկային պարտավորեցնում է վարույթն իրականացնող մարմնի պահանջով ենթարկվել քննման, փորձաքննության, հնարավորություն ընձեռել վերցնելու արյան, մարմնի արտաթորությունների նմուշներ: Չնայած այն բանին, որ այդպիսի պարտականության

սահմանումը էապես սահմանափակում է նշված սուբյեկտների ազատությունը, նսեմացնում է նրանց պատիվը և արժանապատվությունը, սակայն հանրային շահերի պաշտպանության կարևորությունից ելնելով մնան պարտավորությունների սահմանումն արդարացված է: Նույն նպատակով օրենսդիրը նախատեսում է նաև անձի իրավունքների այլ սահմանափակումներ, որոնք էապես սահմանափակում են անձի սահմանադրական իրավունքները, և որոնց վերաբերյալ քրեադատավարական գործող օրենսդրությունը չի նախատեսում դատական վերահսկողության մեխանիզմներ: Հանրապետությունում շարունակվող դատաիրավական բարեփոխումների երկրորդ փուլի կարևոր խնդիրն է քրեական գործերի քննության արդյունավետ դատավարական ձևի սահմանումը, որում հավասարապես իրենց պաշտպանությունը պետք է գտնեն ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր շահերը:

Հանրային հիմքը հաճախ նույնացվում կամ, ծայրահեղ դեպքում, կապվում է ինկվիզիցիոնության հետ: Դա, մասնավորապես, ակնառու է քրեական դատավարության մեջ՝ հանրային ու մասնավոր հիմքերի վերաբերյալ վերոնշյալ վեճում: Այդ մոտեցումն ինքնին աղավաղում է քրեական դատավարության ըմբռնումը: Հանրայնությունն ու ինկվիզիցիոն ձևը տարբեր հասկացություններ են, թեև ինկվիզիցիոն դատավարությունը միշտ ենթադրում էր հանրային հիմքի ուժեղացում քրեական դատավարության մեջ: Ըստ այդմ, կարելի պնդել, որ հանրային հիմքի ու քրեական դատավարության ինկվիզիցիոն ձևի համադրությունն իրոք առկա է, սակայն դա բնորոշ է ոչ ժողովրդավարական պետություններին: Ինչ վերաբերում է իրավական պետությանը, ապա այդօրինակ համադրությունն ի գորու է խարխլելու նրա հիմքերը:

Հանրային հիմքի յուրահատկությունները քրեական դատավարության մեջ մեծապես պայմանավորված են այն բանով, թե որքան ժողովրդավարական է տվյալ երկիրը: Ժողովրդավարական պետությունը ձգտում է պաշտպանել իր քաղաքացիների շահերը, ուստի հանրային հիմքի միջոցով այն ձգտելու է պաշտպանելու մասնավոր շահերը: Այդ դեպքում հանրայնությունը կարելի է դիտարկել որպես երաշխիք դատական, քննչական և այլ բնույթի կամայականություն-

ներից, որոնք կարող են թույլ տալ իրավապահական մարմինների պաշտոնատար անձինք: Ժողովրդավարական պետության գաղափարախոսությունը հռչակում է, որ թե՛ պետությունը, թե՛ հասարակությունը գոյավարում են հանուն իրենց քաղաքացիների և այլ անձանց շահերի, որոնք ապրում են իր տարածքում: Այսինքն՝ տվյալ դեպքում հանրային հիմքը հռչակվում է որպես մասնավորին ածանցյալ: Բացի այդ, մասնավոր հիմքը դիտվում է որպես հենարան հանրային համար, որովհետև բազմաթիվ մասնավոր շահերից է ձևավորվում հանրայինը, որն էլ, ըստ այդմ, չի կարող հակադրվել մասնավոր հիմքին: Հետևաբար, ժողովրդավարական պետությունում մասնավոր ու հանրային հիմքերը չեն հակադրվում, այլ, կարելի է ասել, դրանք իրար հետ անխզելիորեն կապված են:

Դա համապատասխանաբար արտահայտվում է նաև քրեական դատավարության մեջ: *Մեր կարծիքով, այն առավել ակնհայտորեն իր արտացոլումն է գրել ՌԴ ԲԴՕ-ի 4-րդ հոդվածում, որտեղ նախատեսված է. «Զննիչը, ինչպես նաև դատախազի համաձայնությամբ՝ հետաքննիչը, քրեական գործ են հարուցում ցանկացած հանցագործության առնչությամբ, որ նշված է սույն հոդվածի երկրորդ և երրորդ մասերում, նաև տուժողի կամ նրա օրինական ներկայացուցչի կողմից բողոքի բացակայության դեպքում, եթե տվյալ հանցագործությունը կատարված է այնպիսի անձի նկատմամբ, որը կախյալ կամ անօգնական վիճակում գտնվելու կամ այլ պատճառներով չի կարող պաշտպանել իր իրավունքներն ու օրինական շահերը»:* Մեջբերված նորմում խոսքը վերաբերում է մասնավոր և մասնավոր-հանրային մեղադրանքի գործերին: Այսինքն՝ քրեական դատավարության մեջ ուղղակիորեն հայտարարվում է, որ հանրային շահը նաև մասնավոր շահը պաշտպանելու մեջ է, հատկապես այն դեպքերում, երբ այդ մասնավոր շահը չի կարող իրացվել անօգնական վիճակի կամ այլ պատճառներով: Այդ դեպքում հանրային շահը կոչված է լրացնելու մասնավոր հիմքի պակասը, որն է՝ կամարտահայտության դժվարությունը: Այս գաղափարախոսությունն իր արտահայտությունն է գտել ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգում:

Ելնելով հանրային սկզբունքի այս առանձնահատկությունից,

որը բնորոշ է ժողովրդավարական պետության քրեական դատավարությանը, ըստ երևույթին, չի կարելի հանրայինը առանց բացառության բոլոր դեպքերում հակադրել մասնավոր հիմքին: Այս տեսանկյունից դժվար է համաձայնվել Վ.Վ. Լունենի արտահայտած այն կարծիքին, որ եթե առաջնայնությունը պետք է տալ անձի իրավունքների պաշտպանությանը, ապա ստացվում է, որ քրեական արդարադատության համակարգը գոյություն ունի միայն կասկածյալի, մեղադրյալի և ամբաստանյալի իրավունքների պաշտպանության համար<sup>1</sup>:

Իրավական պետության քրեական դատավարության գաղափարախոսությունը պետք է մի կողմ նետի հանրային հիմքի վերաբերյալ հնացած այն պատկերացումը, թե հանրայինը հավերժական հակադրության մեջ է մասնավորի հետ: Քրեական դատավարության տարբեր փուլերում հանրային հիմքը տարբեր կերպ է համագործակցում մասնավորի հետ, սակայն հարկ է այն միշտ դիտել որպես մասնավոր հիմքի ավելի լիարժեք իրացմանը նպաստող գործոններից մեկը: Այս կապակցությամբ պետք է համաձայնել պրոֆեսոր Գ. Ս. Ղազինյանի այն մոտեցմանը, որ հանրային և անձնական շահերի հարաբերակցության հիմնախնդիրը լուծելիս ինչպես նախկինում հանրային շահերի առաջնայնության մասին հաստատված պատկերացումը, այնպես էլ վերջերս ճանաչում գտած անձնական շահերի առաջնայնությունը ընդունող տեսակետը, կարող են դժվարացնել հարցի օբյեկտիվ լուծումը, որի ընթացքում նպատակահարմար է ելնել ոչ թե այդ շահերի հակադրումից կամ դրանց մրցակցությունից, այլ դրանց համագործակցության և փոխկապակցվածության անհրաժեշտության ճանաչումից՝ հաշվի առնելով քրեադատավարական իրողությունները: Միայն նման մոտեցումը հնարավորություն կտա գտնել նշված երկու գործոնների՝ քրեական դատավարության խնդիրների նվաճմանը նպաստող լավագույն հարաբերակցությունը<sup>2</sup>:

---

<sup>1</sup>Տե՛ս **Лунеев В.В.** Преступность XX века. Мировой криминологический кризисі М., 1998, էջ 34:

<sup>2</sup> Տե՛ս **Ղազինյան Գ.Ս.** Քրեական դատավարության պատմական և արդի հիմնահարցերը Հայաստանում: Եր., Երևանի համալս. հրատ. 2001 թ., էջ 190:



Հանրային ու մասնավոր հիմքերի հարաբերակցության վերաբերյալ նմանօրինակ մոտեցումը բնութագրական է իրավական, ժողովրդավարական պետությանը: Այն ընդունելի չէ ավտորիտար երկրներին, քանի որ այնտեղ մասնավոր հիմքը միշտ դիտվում է որպես յուրատեսակ խոչընդոտ հանրային հիմքի իրացման գործում, իսկ անհատի շահերը միշտ պետք է համապատասխանեցվեն ինչ-որ հասարակական գաղափարների, որոնք կտրված են հասարակ քաղաքացիների իրական կյանքից: Այս է ավտորիտար պետության գաղափարախոսությունը, որն արտացոլվում է քրեական դատավարության մեջ: Հենց այս պատճառով էլ այն վեճի շարունակությունը, թե որին տալ նախապատվությունը՝ հանրայինի<sup>օ</sup>, թե<sup>օ</sup> մասնավորին, հետևանք է ամբողջատիրական պետության վերոնշյալ գաղափարախոսության:

Քանի որ անկախ այն բանից, թե որին կտրվի նախապատվությունը, յուրաքանչյուր ոք, ով կրնում է նշյալ բանավեճի հնարավորությունն իսկ, անխուսափելիորեն կրնում է նաև ամբողջատիրական գաղափարախոսությունը, որը հակադրում է հանրային ու մասնավոր հիմքերը: Իրավական պետության գաղափարախոսությունը, ինչպես տեսնում ենք, չի ընդունում բուն հարցադրման ձևը, որտեղ հակադրվում են հանրային ու մասնավոր հիմքերը քրեական դատավարության մեջ: *Սա նաև հանրային հիմքի դիտարկման այլ մեթոդաբանություն է քրեական դատավարության մեջ:* Այն հնարավորություն է տալիս հանրային հիմքը դիտարկելու ոչ թե մասնավորին հակադրելու միջոցով, այլ օգտագործելով ճանաչողության այլ մեխանիզմներ: Մասնավորապես, հանրայինի մեջ հնարավոր է տեսնել մասնավոր հիմքի իրացման մեխանիզմի ուժեղացում:

Հանրային և մասնավոր շահերի պաշտպանությունն իր ուղղակի արտահայտությունն է գտել քրեական դատավարության խնդիրներում: Ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի՝ քրեական դատավարությունն իրականացվում է՝ ապահովելու համար անձի, հասարակության և պետության պաշտպանությունը հանցագործությունից, անձի և հասարակության պաշտպանությունը պետական իշխանության ինքնիրավ գործողություններից և չարաշահումներից՝ կապված իրական կամ ենթադրվող հանցավոր ա-

րարքի հետ:

Քրեական դատավարության տեսության մեջ նշված խնդիրները ներկայացվում են որպես համասոցիալական: Դրանք այն արդյունքներն են, որոնք պետք է ապահովեն ողջ քրեադատավական գործունեության իրացման, բոլոր քրեական գործերի քննության և լուծման հետևանքով<sup>1</sup>: Քրեական դատավարության խնդիրն է ոչ միայն պայքարել հանցավոր արարքների և դրանք կատարած մեղավոր անձանց դեմ, այլև երաշխիք հանդիսանալ անձի և հասարակության համար, պաշտպանել նրանց քրեական դատավարության ոլորտում պետական մարմինների և պաշտոնատար անձանց հնարավոր ինքնիրավ գործողությունների և չարաշահումների դեպքում:

Ընդ որում՝ պետք չէ հանրայնությունը համարել մի մեխանիզմ, որը կրկնօրինակում է մասնավոր հիմքի իրացման մեխանիզմը: Դա պայմանավորված է նրանով, որ ժամանակակից քրեական դատավարության մեջ հանրայնությունը դիտվում է որպես քրեական հետապնդում իրականացնող մարմինների և դրանց պաշտոնատար անձանց պարտականություն՝ իրականացնելու քրեադատավարական գործունեություն՝ անկախ դատավարության մասնակիցների, որոնք օրինական շահեր ունեն գործում, այդ թվում և տուժողի կամարտահայտությունից (բացառությամբ մասնավոր և մասնավոր-հանրային մեղադրանքի գործերի)<sup>2</sup>: Հանրայնության այդ հատկությունը հետևանք է այն բանի, որ պետությունն ու հասարակությունն ունեն նաև իրենց շահերը կոնկրետ քրեական գործերի քննության և դատավարության ընթացքում: Այդ շահերից են՝ իրավակարգի պաշտպանությունը, հնարավոր հանցավոր ոտնձգությունների ժամանակին կանխումը և խափանումը: Սակայն հասարակության ու պետության այդ շահերը այնուամենայնիվ բխում են այն քաղաքացիների շահերից, ովքեր թեև կոնկրետ քրեական դատավարության մասնակիցներ չեն, սակայն շահագրգռված են, որ հանուն օրինա-

---

<sup>1</sup>Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Ընդհանուր մաս. Երևան, 2004., էջ 15:

<sup>2</sup>Տե՛ս **Смирнов А.В.** Комментарий к Уголовно-процессуальному кодексу Российской Федерации. Постатейный /А.В. Смирнов, К.Б. Калиновский; под общ. ред проф. А.В. Смирнова. 3-е изд., перераб. И доп. М.: КНОРУС, 2007, էջ 101:

կանության ու իրավակարգի, հետևաբար և՛ սեփական բարեկեցության, կոնկրետ քրեական գործերը քննվեն արդարացի, իսկ մեղավոր անձինք կրեն արժանի պատիժ:

Նշված մոտեցումը ենթադրում է հանրային ու մասնավոր հիմքերի հարաբերակցության ու փոխգործակցության հիմնախնդրի ապագադափարականացումը քրեական դատավարության մեջ: Դա թույլ է տալիս նաև փոքր-ինչ այլ տեսանկյունից քննելու քրեական դատավարությանը մասնակից անձանց իրավունքների հարաբերակցությունը մի կողմից, և քրեական դատավարությանը մասնակից պաշտոնատար անձանց լիազորությունները մյուս կողմից: Մյուս մոտեցումը այս դեպքում այն է, որ նշյալ անձանց իրավունքներն ու լիազորությունները այլևս պետք չէ դիտել լոկ որպես հակադիր հասկացություններ, որոնց հակասություններն անլուծելի են: Եվ իրոք, դրանց շահերը տարբեր են, դրանք տարբեր նպատակներ են հետապնդում քրեական դատավարության մեջ, սակայն, չնայած դրան, դրանց միջև անհաղթահարելի հակասություններ չկան, քանի որ դրանց համագործակցության արդյունքը միտված է կոնկրետ քրեական գործի արդարացի լուծմանը: Հենց այդ պատճառով էլ անհարկի է դառնում այն հարցը, թե ում իրավունքներին ու լիազորություններին պետք է նախապատվություն տալ: Առավել տեղին է դառնում այդ իրավունքների ու լիազորությունների բովանդակության մասին հարցը: Չէ՞ որ իրավապահական մարմինների պաշտոնատար անձանց լիազորությունները կարելի է օգտագործել ոչ միայն քրեական դատավարությանը մասնակից անձանց իրավունքների սահմանափակման, այլև այդ իրավունքները ավելի արդյունավետորեն իրացնելու նպատակով: Մասնավորապես, դատարանի լիազորությունները ապահովում են ոչ միայն կոնկրետ քրեական գործի լուծումը, այլև դատական քննությանը մասնակից անձանց իրավունքները: Քրեական գործը քննող դատարանը, պահպանելով օբյեկտիվությունը և անկողմնակալությունը, մեղադրանքի և պաշտպանության կողմերի համար ստեղծում է գործի հանգամանքների բազմակողմանի և լրիվ հետազոտման անհրաժեշտ պայմաններ: Դատարանը կաշկանդված չէ կողմերի կարծիքներով և իրավունք ունի սեփական նախաձեռնությամբ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել քրեական գործով

ճշմարտությունը բացահայտելու համար (ՀՀ քր. դատ. օր-ի հոդված 23, մաս 4): Ինչպես արդարացիորեն նկատում է Վ. Ա. Լազարևան. «Մնալով անաչառ ու օբյեկտիվ դատավոր՝ դատարանը ապահովում է բոլոր քաղաքացիների դատական պաշտպանության՝ պետության կողմից երաշխավորված իրավունքները, անկախ այն բանից, թե ինչ դեր են խաղում նրանք իրավական վեճում»<sup>1</sup>: Դատարանը թույլատրում է անձանց իրավունքների և ազատությունների ժամանակավոր սահմանափակում: Նրանց նկատմամբ դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառվում են միայն այն դեպքում, երբ այդպիսի որոշման անհրաժեշտությունը հիմնավորված է պատշաճ իրավական ընթացակարգով:

Քրեական դատավարությանը մասնակից մյուս պաշտոնատար անձինք թեև ներկայացնում են դատավարության կողմերից մեկին (առավել հաճախ՝ մեղադրանքի կողմին), իրենց լիազորություններն իրացնելիս նույնպես պարտավոր են ապահովել քրեական դատավարությանը մասնակից բոլոր անձանց իրավունքներն ու օրինական շահերը: Ըստ օրենքի՝ նրանք իրենց լիազորությունները պետք է իրացնեն ոչ միայն նրա համար, որ ապահովեն դատական քննության ընթացքը, այլև բարենպաստ պայմաններ ստեղծեն, որպեսզի քրեական դատավարության մյուս մասնակիցները ևս իրացնեն իրենց իրավունքները: Քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է դատավարությանը մասնակցող յուրաքանչյուր անձի պարզաբանել նրա իրավունքները և պարտականությունները, ապահովել սույն օրենսգրքով սահմանված կարգով դրանց իրականացման հնարավորությունը (ՀՀ քր. դատ. օր-ի հոդված 101, մաս 2):

Այն պետական մարմինները, որոնք քրեական դատավարությունում ներկայացնում են մեղադրանքի կողմը, չնայած իրականացնում են քրեական հետապնդման գործառույթ, սակայն քրեական գործի նախնական քննության և դատական քննության ընթացքում չեն ազատվում մարդու և քաղաքացու իրավունքները պաշտպանելու սահմանադրական պարտականությունները կատարելուց: Պատահական չէ, որ օրենքը դատախազին պարտավորեցնում է

---

<sup>1</sup> **Лазарева В.А.** Судебная власть и её реализация в уголовном процессе. Самара: Изд-во «Самарский университет», 1999, էջ 59:

հրաժարվել մեղադրանքից, եթե իր համոզմամբ այն չի հաստատվել դատական քննության ընթացքում (ՀՀ քր. դատ. օր-ի հոդված 306, մաս 3):

Քրեական դատավարությունում անձնական և հանրային շահերի պաշտպանության հարցը ենթադրում է հանցավորության նկատմամբ վերահսկողություն և մարդու իրավունքների պաշտպանություն: Քրեադատավարական օրենսդրությունը մշակելիս օրենսդրի առջև ծառայած ամենակարևոր խնդիրը քրեական գործը քննելու դատավարական այնպիսի ձևի և անձի իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը իրականացնելու այնպիսի երաշխիքների համակցության ապահովումն է, որը հնարավորություն կտա հավասարապես պաշտպանելու ինչպես հանրային, այնպես էլ անձնական շահերը:

Քրեական քաղաքականության իրականացման ոլորտում հանրային և մասնավոր շահերի փոխհարաբերակցության հարցը լուծվելու համար կարևոր է նաև հանրապետությունում հանցավորության վիճակը: Պետությունը հանցավորության դեմ պայքարում ցանկալի արդյունքի հասնելու համար ձեռնարկում է տնտեսական, սոցիալական, կազմակերպական և իրավական միջոցներ: Հանցավորության դեմ պայքարն ուժեղացնելու համար քրեական և քրեադատավարական օրենսդրության մեջ կիրառվող իրավական միջոցները հիմնականում հանգեցնում են անձի իրավունքների որոշակի սահմանափակման: Այսօր Հայաստանի Հանրապետությունում այդ նպատակների իրականացման համար ստեղծվում են նոր կառույցներ՝ մարմիններ, հանձնաժողովներ, որոնց գործունեությունը նպատակամղված է հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանը: Բոլոր դեպքերում հանցագործությունների քննության ընթացքում դատավարական հարկադրանք կիրառելիս պետք է պահպանվեն անձի իրավունքների երաշխիքները, իսկ հարկադրանքի միջոցները և սահմանափակումները հասցվեն նվազագույնի:

### § 3. Քրեական դատավարության ձևը որպես անձի իրավունքների ապահովման երաշխիք

Քրեական դատավարությունը ավանդաբար դիտվում է որպես քրեական գործի վարույթի՝ օրենքով սահմանված որոշակի կարգ: Ըստ Ի. Յա. Ֆոյնիցկու. «Պատժի իրավունքը պետությանն իրավունք է տալիս այնպիսի գործունեություն ծավալելու, որի խնդիրը պատժիչ իշխանության իրականացումն է յուրաքանչյուր մասնակի դեպքում: Յուրաքանչյուր նման մասնակի դեպք, որ դիտարկվում է պատժի իրավունքի իրականացման դիրքերից, ձևավորում է քրեական գործը, իսկ նման գործերի քննության համար սահմանված կարգը կոչվում է քրեական դատավարություն»<sup>1</sup>: Այսինքն՝ քրեական դատավարությունը հարկ է դիտել որպես օրենքով սահմանված ընթացակարգ կամ քրեական գործերի քննության կարգ: Հենց «կարգ», «ընթացակարգ» տերմինների հիման վրա են դատավարագետներից շատերը դիտարկում քրեական դատավարությունը: Կ.Ֆ Գուցենկոն այսպես է բնորոշում քրեական դատավարությունը. «Քրեական դատավարությունը հետաքննության, նախաքննության մարմինների, դատախազության ու դատարանի՝ օրենքով սահմանված կարգով գործունեությունն է՝ ուղղված հանցագործությունների ի հայտ բերմանը, նախազգուշացմանն ու բացահայտմանը, դրանց իրականացման մեջ մեղավոր անձանց հայտնաբերմանը և նրանց նկատմամբ քրեական պատժի կամ ներգործության այլ ձևերի կիրառմանը, ինչպես նաև այդ գործունեության հետևանքով առաջացող իրավական հարաբերությունները իրավապահպան մարմինների ու դրանց մասնակից անձանց միջև»<sup>2</sup>: Մ. Ս. Ստրոգովիչը գտնում է. «Դատարանի գործունեության կարգը, որ սահմանված է օրենքով, դատավարական կարգ է, որը քրեական գործեր քննելիս դառնում է քրեադատավարական կարգ»<sup>3</sup>: Ըստ Պ. Ա. Լուպինսկայայի՝ «...Քրեական

<sup>1</sup> Фойницкий И.Я. Курс уголовного судопроизводства. Том. 1. СПб.: Издательство «АЛЬФА», 1996, էջ 3:

<sup>2</sup> Уголовный процесс. М.: Зерцало, 1997, էջ 12:

<sup>3</sup> Строгович М.С. Курс Советского уголовного процесса. Том I: Основные положения науки Советского уголовного процесса. М.: Издательство «Наука», 1968, էջ 29:

դատավարությունը օրենքով սահմանված կարգով քրեական գործերի հարուցման, նախաքննության և լուծման ուղղությամբ իրականացվող գործունեությունն է»<sup>1</sup>: Իսկ Մ. Ա. Չելցովը նշում է. «Հաջորդական, նպատակաուղղված գործողությունների շղթա, որ երբեմն ընդգրկում է մեծ թվով մարդկանց. ահա թե ինչ է քրեական դատավարությունը իր կենսական դրսևորմամբ»<sup>2</sup>:

Քրեական դատավարության նախորդ սահմանումները ցույց են տալիս, որ այդ հասկացության բովանդակությունը գործողությունների օրենքով սահմանված հաջորդականությունն է՝ ուղղված հասնելու որոշակի արդյունքի (այսինքն՝ արդարացի, օրինական և հիմնավորված դատավճռի կայացմանը): Սակայն ինչպես գրում է Մ. Ա. Չելցովը. «Մենք դատավարական ձև ենք անվանում առանձին դատավարական գործողությունների (կամ նրանց ամբողջության) վարույթի՝ օրենքով սահմանված կարգը»<sup>3</sup>: Դա թույլ է տալիս արձանագրել, որ ձևը առանցքային հասկացություններից մեկն է քրեական դատավարությունը բնորոշելիս: Ավելին, հնարավոր է դառնում պնդել, թե քրեական դատավարության էությունը մեծապես պայմանավորված է նրա ձևով: Այսինքն՝ քրեական դատավարության մեջ բավականին մեծ է ձևի նշանակությունը: Այսօրինակ ըմբռնումը այն հարցի պատասխանը գտնելու բանալին է, թե ինչ է քրեական դատավարությունը և ինչպիսին այն պետք է լինի: Ինչպես նշել է Ֆրենսիս Բեկոնը. «Մարդկային գիտելիքի խնդիրն ու նպատակը բնության տվյալ ձևը բացահայտելն է»<sup>4</sup>: Այս կարծիքը լիովին կիրառելի է քրեադատավարական ձևի նկատմամբ:

Քրեական դատավարության ձևի վերաբերյալ ցանկացած դատողություն չի կարող չշոշափել համափիլիսոփայական այն հարցը, թե ինչ է ձևը և ինչպիսի հարաբերության մեջ է այն բովանդակության հետ, ինչպես են նրանք փոխազդում և փոխազդում են արդյոք:

---

<sup>1</sup> Уголовно-процессуальное право Российской Федерации. / Отв. ред. П.А. Лупинская. М.: Юрист, 2004, էջ 19:

<sup>2</sup> **Чельцов М.А.** Советский уголовный процесс. М.: Государственное издательство юридической литературы, 1951, էջ 32:

<sup>3</sup> **Чельцов М.А.** Советский уголовный процесс. М.: Государственное издательство юридической литературы, 1951, էջ 33:

<sup>4</sup> **Бэкон Ф.** Сочинения в двух томах. Т. 2. М.: «Мысль», 1978, էջ 80:

Քրեական դատավարության առնչությամբ հնչող այս բոլոր հարցերն ու դրանց պատասխանները հնարավորություն են ընձեռում դիտարկելու այն փոքր-ինչ այլ տեսանկյունից, որը, թերևս, կարող է ունենալ ոչ միայն տեսական, այլև գործնական նշանակություն, որովհետև կարող է օգնել իրավակիրառ առանձին խնդիրների լուծման ուղիներ գտնելուն:

Փիլիսոփայության մեջ ձևը առավել հաճախ որոշում են բովանդակության հետ նրա հարաբերությամբ: Կարծիք կա, որ «... ձև ստեղծվում է հասկացվում է բովանդակության արտաքին դրսևորման կերպը»<sup>1</sup>: Ըստ Ի. Կանտի. «Մատերիան ու ձևը: Այս երկու հասկացություններն ընկած են ցանկացած այլ ռեֆլեքսիայի հիմքում, նրանք այդ աստիճան անխզելիորեն կապված են բանականության ցանկացած դրսևորման հետ: Դրանցից առաջինով նշանակվում է առհասարակ սահմանվողը, իսկ երկրորդով՝ սահմանումը»<sup>2</sup>: Այս առումով հասկանալի է ձևի նշանակությունը. դրա միջոցով հնարավոր է հասնել բովանդակությանը: Սրանից բխում է նաև այն, որ ձևն ու բովանդակությունն անխզելի են: Ընդ որում՝ ոչ միայն բովանդակությունն է ներգործում ձևի վրա՝ փոփոխելով այն, այլև ձևն է ունակ փոփոխելու բովանդակությունը: Սրանից երևում է, որ քրեադատավարական ձևը կարևոր է քրեական դատավարության համար, քանի որ ունակ է ազդելու նրա վրա՝ տարրորշելով, իսկ առանձին դեպքերում նաև փոփոխելով նրա բովանդակությունը:

Քրեական դատավարության մեջ բովանդակություն ասելով հաճախ հասկանում են ճշմարտությունը, որը ձգտում են պարզել դատարանը, քննիչը կամ դատախազը: Ընդ որում՝ ժամանակակից քրեական դատավարությունը դիտվում է որպես ձևի հաղթանակ բովանդակության նկատմամբ: Ինչպես նշում են այս տեսակետի կողմնակիցներ Գ. Ա. Պեչնիկովը և Ա. Պ. Բլինկովը. «Ճշմարտության» նկատմամբ «ձևի» առաջնայնության տեսությունը, որն արտացոլված է ՌԴ գործող քրեական դատավարության օրենսգրքում, միանշանակորեն հանգեցնում է հանցավորության դեմ պայքարի

---

<sup>1</sup> **Алексеев П.В., Панин А.В.** Философия. М.: ТК Велби, изд-во Проспект, 2003, էջ 472:

<sup>2</sup> Տե՛ս **Кант И.** Критика чистого разума. М.: Наука, 1999, էջ 267:



թուլացմանը»<sup>1</sup>: Վերոնշյալ հեղինակները, քննադատելով Ռուսաստանի ներկայիս քրեական դատավարությունը, գրում են, որ հանցավորության դեմ պայքարի հարցը «...լուծվում է «ճշմարտության» նկատմամբ «ձևի» առաջնայնության ոգով. ավելի քիչ վտանգավոր է դատապարտել անմեղին, քան քրեական պատասխանատվության չենթարկել հանցագործին»<sup>2</sup>: Այսինքն՝ այդ հեղինակների համար լիովին ընդունելի է այն իրավիճակը, երբ դատապարտվում են անմեղները: Նշյալ տեսակետը հազիվ թե նորություն լինի իրավագիտության մեջ, քանի որ այն արտացոլում է ամբողջատիրական (տոտալիտար) վարչակարգերում վաղուց արդեն ձևավորված անտարբերությունը մարդկանց կյանքի ու ճակատագրի նկատմամբ: Խորհրդային Միության պատմության մեջ կար մի շրջան, երբ իրավապահայան մարմինները գործում էին՝ ղեկավարվելով «թացը չորի հետ այրելու» սկզբունքով: Նրանց համար լիովին ընդունելի էր դրա իմաստը. այսինքն՝ սարափելի ոչինչ չկա անմեղների դատապարտման մեջ. չէ՞ որ կարևորն այն է, որ մեղավորները ևս պատժվում են:

Ճշմարտությունը հազիվ թե դիտվի որպես քրեական դատավարության բովանդակություն: Այդպիսին չի կարող լինել նաև ճշմարտությանը հասնելը: Ճշմարտությունը լոկ փաստարկ է կողմերի վեճի ընթացքում: Կողմերից յուրաքանչյուրի դիրքորոշման ամբողջությունը որոշվում է նրանով, թե որքանով է նրա փաստարկունը հիմնված ճշմարտության վրա: Այդ է մրցակցային գործընթացի էությունը, երբ ճշմարտությունն ինքնանպատակ չէ, այն լոկ միջոց է արդարացի որոշում կայացնելու համար: Իսկ արադարացի որոշումը կարող է և հիմնված չլինել ճշմարտության վրա: Այսպիսի իրավիճակի օրինակ կարող է լինել կատարված հանցագործությանը կասկածյալի կամ մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելու արդյունքում քրեական հետապնդումը դադարեցնելը կամ գործի վարույթը կարճելը, եթե սպառվել են նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնա-

---

<sup>1</sup> Печников Г.А., Блинков А.П. О гарантиях прав личности в свете приоритета «формы» над «истиной» в состязательном УПК РФ. //Бизнес в законе. 2009, № 6, էջ 131:

<sup>2</sup> Նույն տեղում:

րավորությունները (ՀՀ քր. դատ. օր., հոդված 35, մաս 2): Այդ դեպքում միանգամայն հնարավոր է, որ կոնկրետ անձն էլ հենց կատարել է հանցանքը, սակայն նրա մեղավորության վերաբերյալ բավարար ապացույցներ ձեռք չեն բերվել: Ընդ որում՝ քրեադատավարական օրենքի ոչ խիստ պահանջներից դուրս այդ անձի մեղավորությունը ևս բացառված չէ: Հասկանալի է, որ կոնկրետ անձի նկատմամբ քրեական հետապնդման դադարեցման կամ քրեական գործը կարճելու մասին որոշումը կայացվում է ոչ թե ճշմարտության բացահայտման հիման վրա, այլ հակառակը, հաշվի առնելով դրա բացակայությունը: Այդպիսի որոշում կայացվում է այն պատճառով, որ հասարակությունն ու պետությունը անթույլատրելի են համարում, որ ճշմարտությունը չբացահայտելու հետևանքով կարող է դատապարտվել անմեղ անձը: Այդպիսի որոշումը դիտվում է արդարացի, քանզի դա հնարավորություն է տալիս խուսափելու անմեղ անձին հանցագործության համար դատապարտելուց: Ինչ վերաբերում է ճշմարտությանը, ապա նշյալ որոշումն այն բանի խոստովանությունն է, որ ճշմարտությունը չի պարզվել:

Անհասկանալի է օրենսդրի դիրքորոշումը՝ մի կողմից՝ հռչակելով մրցակցության սկզբունքը, մյուս կողմից՝ դատարանի խնդիրը համարելով *ճշմարտության* բացահայտումը: Ճշմարտությունն այնպիսի հասկացություն է, որը, չգիտես ինչու, ձգտում են հագեցնել ամբողջատիրական գաղափարախոսությամբ: Ա. Յա. Վիշինսկու կարծիքով. «Խորհրդային դատարանը, խորհրդային դատավորները, որոնք տիրապետում են մատերիալիզմի հզոր զենքին, կարող են կատարել իրենց պատասխանատու պարտքը՝ մանրակրկիտ ու բարեխղճորեն թափանցելով այն փաստերի էության, բնույթի, որակի մեջ, որոնց հետ նրանք ստիպված են գործ ունենալ, վերլուծելով դրանք ժողովրդի ու պետության առջև իրենց վրա ընկած ամբողջ պատասխանատվության գիտակցությամբ, համոզված լինելով, որ իրենց կողմից արտասանված դատապարտման կամ արդարացման խոսքերը ծնվել են ճշմարտության որոնումից, ճշմարտացի են և լի են իրենց հայրենիքին ազնվաբար ծառայելու ձգտումով»<sup>1</sup>: Ինչպես

---

<sup>1</sup> **Вышинский А.Я.** Теория судебных доказательств в советском праве. М.: Государственное издательство юридической литературы, 1950, էջ 202:

նկատում ենք, ամբողջատիրական գաղափարախոսության մեջ ճշմարտությանը կենտրոնական տեղ էր հատկացվում: Միանգամայն արդարացի է Պ. Ա. Լուպինսկայան, երբ նշում է. «Յուրաքանչյուր գործի առնչությամբ Ճշմարտությունը բացահայտելու պահանջը հատուկ է ինկվիզիցիոն դատավարությանը, որը հնարավորություն էր տալիս գործադրելու դրա համար անհրաժեշտ ցանկացած միջոց, այդ թվում՝ այնպիսիք, որոնք անհամատեղելի են կյանքի, առողջության, պատվի ու արժանապատվության պաշտպանության հետ»<sup>1</sup>: Հենց այդ պատճառով էլ Ի. Լ. Պետրովսիինը ընդգծում է. «1960 թ. քր. դատ. օր.-ը, նախքան Ռ-Ռ սահմանադրական դատարանի կողմից «շտկումները», զգալի չափով հենվում էր միջնադարյան ինկվիզիցիայի դրույթների վրա, ինչը համապատասխանում էր այդ ժամանակաշրջանի քրեական քաղաքականությանը»<sup>2</sup>: Այսինքն՝ «...որքան էլ հրապուրիչ հնչի քրեական դատավարության մեջ ճշմարտությանը հասնելու գաղափարը, դրա իրականացումը իրավապահական մարմինների առօրյա գործունեության մեջ հանգեցնում է բացասական հետևանքների, որոնցից մեկն այն է, որ ճշմարտությունը փոխարինվում է շինծու նյութով, որը կազմված է «կորզված» խոստովանական ցուցմունքներից և այլ կեղծված ապացույցներից»<sup>3</sup>:

Վերոշարադրյալը հնարավորություն է ընձեռում եզրակացնելու, որ ճշմարտությունը չի կարող լինել ժամանակակից քրեական դատավարության բովանդակությունը, որը հիմնված է կողմերի մրցակցության սկզբունքի վրա: Ճշմարտությունը ինկվիզիցիոն դատավարության բովանդակություն է, քանի որ լիովին արտացոլվում է նրան բնորոշ ընթացակարգերում, երբ անձի մեղավորությունն արդեն

---

<sup>1</sup> **Лупинская П.А.** Доказательственное право в Уголовно-процессуальном кодексе Российской Федерации. // Материалы международной научно-практической конференции, посвящённой принятию нового Уголовно-процессуального кодекса Российской Федерации. М., 2002, էջ 80:

<sup>2</sup> **St'u Петрухин И.Л.** От инквизиции – к состязательности. // Государство и право. 2003. № 7, էջ 29:

<sup>3</sup> **Подольный Н.А.** Категория справедливости в УПК РФ – изменение системы ценностей в уголовном процессе России. // Материалы международной научно-практической конференции «Уголовно-процессуальный кодекс Российской Федерации: год правоприменения и преподавания». М., 2004, էջ 52:

կանխորոշված է այնքանով, որ նա ներգրավված է որպես մեղադրյալ: Ճշմարտության մեջ քրեական դատավարության բովանդակությունը տեսնելու ամեն մի ցանկություն հիմնված է կամ առանձին իրավակիրառմաների ու տեսաբանների կարոտախտային ապրումների վրա, որոնք ուզում են Խորհրդային Միության ամբողջատիրական անցյալի մեջ տեսնել միայն լավը, կամ ամբողջատիրական գիտակցության վերապրումների վրա: Հասկանալի է, որ քրեական դատավարության բովանդակությունը բնութագրելու նմանօրինակ մոտեցումը հեռու է գիտականությունից, քանի որ այն առավելապես արտացոլում է կոնկրետ մարդկանց հուզական վերաբերմունքը ժամանակակից իրականության և անցյալի հանդեպ:

Եթե որպես քրեական դատավարության բովանդակություն ընդունենք ճշմարտությունը կամ դրան հասնելու գործընթացը, ապա այդ դեպքում քրեական դատավարության ձևը կդառնա ինկվիզիցիոն քրեական դատավարությունը: Սակայն ներկայումս ԱՊՀ բոլոր պետությունները ընդունել են դատական բարեփոխումներ իրականացնելու անհրաժեշտությունը, որի նպատակը մրցակցային քրեական դատավարության ներդրումն է: ՀՀ քրեական դատավարության նոր օրենսդրության մշակման նպատակներից մեկը մինչդատական վարույթում և դատարանում մրցակցային ձևի խորացումն է:

Մրցակցային դատավարությունն ավելի շատ է համապատասխանում ժողովրդավարական պետության հիմունքներին, ինչն ընդունում են բոլորը: Միանգամայն ակնհայտ է, որ այս դատավարության առաջնայնություններն ու հիմնավորումները արմատապես տարբերվում են ինկվիզիցիոնից: Այդ տարբերություններն առաջին հերթին քրեական դատավարության ձևի մեջ են, որն արտահայտվում է դատավարությանը մասնակից բոլոր անձանց (ներառյալ մեղադրյալների և տուժողների) իրավունքների երաշխավորման համակարգի ներդրմամբ: Չնի վերոնշյալ տարբերությունները պայմանավորված են բովանդակության տարբերություններով, քանի որ ձևի մեջ արտացոլվում է բովանդակությունը, որը հետևյալ դրույթի արտահայտությունն է. «Չնը բովանդակալից է, իսկ բովանդակությունը՝ ձևի մեջ է. մեկը մյուսից առանձին գոյություն չունի»<sup>1</sup>: Ըստ այդմ՝

---

<sup>1</sup> Алексеев П.В., Панин А.В. Философия. М.: ТК Велби, изд-во Проспект, 2003, էջ 472:

ճիշտ չի լինի ասել, թե քրեական դատավարության բովանդակությունը անփոփոխ է մնում պետության զարգացման պատմական տարբեր փուլերում և կախված չէ այդ պետություններում գոյություն ունեցող քաղաքական վարչակարգերից: Քրեական դատավարության ձևի փոփոխությունները նրա բովանդակության փոփոխությունների ցուցանիշն են:

Ճշմարտությունը որպես քրեական դատավարության բովանդակություն տեսնելու ցանկությունը ոչ այլ ինչ է, քան նախկինում գոյություն ունեցող ինկվիզիցիոն քրեական դատավարության հիմքերը վերանորոգելու ձգտում: Սակայն, ինչպես հայտնի է, նույն գետը երկու անգամ մտնել հնարավոր չէ. վերադառնալ քրեական դատավարության նախկին ձևերին, որոնք չեն համապատասխանում ժողովրդավարության պահանջներին, հասարակության համար անընդունելի է: Ուստի չի կարելի ժամանակակից մրցակցային քրեական դատավարությունը բնութագրելիս պնդել, թե նրա բովանդակությունը նախկինի պես ճշմարտությունն է: Բովանդակությունը, անկասկած, այժմ այլ է: Սակայն մինչ պատասխանելը, թե ինչպիսին է այն, նշենք, որ ժխտելով, թե ճշմարտությունը չի կարող լինել մրցակցային քրեական դատավարության բովանդակությունը, բնավ չի նշանակում, թե ժխտում ենք դրա գոյությունն առհասարակ քրեական դատավարության մեջ: Այն գոյություն ունի, սակայն գոյություն ունի լոկ որպես փաստարկ վեճի ժամանակ: Պետք է համաձայնվել Ն. Ա. Պողոնու և Գ.Ա. Ուրյավիչի միասնական կարծիքին, որոնք գրում են. «Ոչ ոք չի վիճարկում այն, որ ճշմարտությունը պետք է տեղ ունենա ժամանակակից քրեական դատավարության մեջ: Սակայն այդ տեղը պետք է լինի համեստ: Ճշմարտությունը պետք է դիտարկվի նախ և առաջ որպես փաստարկ կողմերի միջև վեճի ընթացքում: Ընդ որում՝ բավականին ծանրակշիռ փաստարկ, քանի որ դրան տիրապետող կողմը կարող է դրա օգնությամբ լրջորեն ամրապնդել իր դիրքերը»<sup>1</sup>:

Ոչ ոք չի վիճարկում քրեական դատավարության մեջ ճշմարտության գոյության փաստը: Վեճը այլ բանի շուրջ է. արդյոք մի՞շտ է

---

<sup>1</sup> Подольный Н.А., Урявин Д.А. Справедливость и нравственность в уголовном судопроизводстве. // Следователь, 2009, № 3, էջ 44-49:

քրեադատավարական որոշման կայացումը հիմնվում ճշմարտության վրա, և հարկ կա՞ այդ հասկացությունը ներառելու քրեադատավարական օրենսգրքում: Պ. Ա. Լուպինսկայան բավականին ծանրակշիռ մի փաստարկ է բերում այն առնչությամբ, որ ճշմարտությունը բնավ էլ միշտ չէ, որ հիմք է ծառայում դատական որոշման ընդունման համար: Այսպես՝ նրա կարծիքով. «Արդարացման դատավճիռ կայացնելու կանոններն այլ են, քանի որ օրենքը չի պահանջում արժանահավատ կերպով անձի անմեղության հաստատում (չապացուցված մեղքը ապացուցված անմեղությունն է), իսկ անմեղության կանխավարկածի սկզբունքը պահանջում է անձի մեղավորության վերաբերյալ եղած չփարատված կասկածները մեկնաբանել հօգուտ նրա»<sup>1</sup>: Կան նաև այլ դեպքեր, երբ որոշումը կայացվում է ոչ ճշմարտության հիման վրա: Այսպես՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 36-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 33-րդ հոդվածի երկրորդ մասում նշված հանցագործությունների վերաբերյալ գործերով վարույթը կարճվում է և փաստվում է քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարում, երբ տուժողը հաշտվում է մեղադրյալի հետ: Հասկանալի է, որ տվյալ դեպքում ընդունված որոշման համար հիմք է ծառայում ոչ թե պարզված ճշմարտությունը, այլ տուժողի և մեղադրյալի հաշտությունը: Ճշմարտությունը կարող է այդպես էլ չբացահայտված մնալ իրավապահայան մարմինների կողմից: Ընդ որում՝ այդպիսի որոշումը կլինի միանգամայն արդարացի, քանի որ բխում է և՛ տուժողի, և՛ մեղադրյալի շահերից: Ժամանակակից քրեական դատավարության ձևի մեծ փոփոխությունների կապակցությամբ Ի. Բ. Միխայլովսկայան նշում է. «Հարկ է ընդունել, որ վերանայման կարիք ունի դատարանի՝ որպես «ճշմարտություն որոնողի» դերը<sup>2</sup>: Այսինքն՝ ոչ ոք չի պնդում, թե ճշմարտության որոնումները քրեական դատավարության մեջ ավարտվել են: Պնդումը վերաբերում է միայն այն բանին, որ ճշմարտությունը դադարում է բացարձակացվել և չի դիտարկվում որպես ինքնաբավ արժեք: Բացի այդ, քրեադատավա-

<sup>1</sup> **Лупинская П.А.** Решения в уголовном судопроизводстве: теория, законодательство и практика. М.: Юристъ, 2006, էջ 101:

<sup>2</sup> **Михайловская И.Б.** Настольная книга судьи по доказыванию в уголовном процессе. М.: ТК Велби, Изд-во Проспект, 2006, էջ 173:

րական օրենսդրությունը որպես առաջնային արժեք է դիտում մարդու իրավունքներն ու ազատությունները և դրան է ստորադասում մնացյալ ամեն ինչ: Ուստի և ճշմարտությունը հարկ է դիտարկել լոկ որպես այն միջոցներից մեկը, որի օգնությամբ կարելի է ապահովել նշված ազատություններն ու իրավունքները: Ճշմարտությունը ժամանակակից մրցակցային քրեական դատավարության բովանդակությունը լինել այլևս չի կարող:

Պետության զարգացման խորհրդային շրջանի և ներկայումս ձևավորված քրեական դատավարության բովանդակությունների միջև առկա տարբերությունները օրինաչափորեն հանգեցնում են նաև դրանց քրեադատավարական ձևերի տարբերությանը: Այսպես՝ ինկվիզիցիոն քրեական դատավարության մեջ, ինչպես և նեոինկվիզիցիոն քրեական դատավարությունում (ինչպիսին, ըստ էության, խորհրդային քրեական դատավարությունն էր), ձևն անհրաժեշտ է ճշմարտության բացահայտման, այլ ոչ թե դատավարությանը մասնակից անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար: Այսինքն՝ այն լիովին արտացոլում է ինկվիզիցիոն դատավարության բովանդակությունը: Դրա ապացույցը 1924թ. Խորհրդային Միության արդարադատության գործիչների համառուսաստանյան V համագումարի հաստատած «Քրեական դատավարության հարցեր» զեկույցի թեզիսներն են: Այնտեղ ասվում էր. «2. Դատավարական ձևերը, սակայն, ոչ միայն ճշմարտության որոնման արտաքին պայման են, այլև միակ պայմանը, որը վճռականորեն ազդում է ինքնին այդ որոնումների հնարավորության վրա»<sup>1</sup>: Այստեղ ոչ մի խոսք չկա այն մասին, որ կարելի է օգտագործել քրեական-դատավարական ձևը քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու կամ դատավարության ընթացքում մրցակցայնության սկզբունքը ապահովելու համար:

Արդի քրեական դատավարության ձևը վկայում է այն մասին, որ դրա բովանդակությունը ճշմարտությունը չէ, այլ ուրիշ մի բան: Բայց ի՞նչ: Կարծում ենք՝ բովանդակությունը քրեական դատավարության ընթացքում կողմերի միջև մրցակցությունն է, այսինքն՝ այլ կերպ ասած՝ վեճը: Դրա վկայությունն ինքնին ժամանակակից քրեական

---

<sup>1</sup> V Всероссийский съезд деятелей советской юстиции. М., 1924, էջ 19:

դատավարության մրցակցային բնույթն է, այսինքն՝ կողմերի վեճի վրա հիմնված լինելը: Հենց ժամանակակից քրեական դատավարության այդ յուրահատկության կապակցությամբ էլ Ա. Գ. Սմոլինը առաջարկում է մեղադրանքը դիտարկել որպես հանրային հայց: Նա գրում է. «Վարույթի հայցի ձևն ունիվերսալ է արդարադատության մրցակցային ձևի համար»<sup>1</sup>: Այսինքն՝ կասկած չի հարուցում այն, որ ժամանակակից քրեական դատավարության հիմքում ընկած է կողմերի միջև ծագած վեճը լուծելու ձգտումը: Ընդ որում՝ այդ եղանակով լուծումը ենթադրում է քրեական դատավարությանը մասնակից անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանություն՝ միաժամանակ նրանց շահերը հաշվի առնելով:

Քրեական դատավարության բնույթի վերաբերյալ Ա. Գ. Սմոլինի այս մտեցումը բավականին համարձակ է ու ոչ ստանդարտ: Սակայն այս դիրքորոշման ավելի խորագնին վերլուծության դեպքում երևում է, որ դրանում ռացիոնալ հատիկ կա, որի շնորհիվ հնարավոր է քրեական դատավարության այնպիսի միասնականացումը, որը թույլ կտա խոսել առհասարակ դատական իրավունքի ու դատավարության, այլ ոչ թե միայն քրեադատավարական կամ քաղաքացիադատավարական իրավունքի մասին: Թեպետև արդեն հնչել են կարծիքներ մեղադրանքը որպես հայցատեսակներից մեկը դիտարկելու անթույլատրելիության մասին<sup>2</sup>:

Անվիճելի է այն, որ քրեական դատավարությունը տարբերվում է քաղաքացիականից: Դրանց տարբերությունը առաջին հերթին քրեական դատավարության հանրային բնույթն է և, որպես դրա հետևանք, այն, որ հանցագործությունների մեծ մասի դեպքում մեղադրանքը պաշտպանում են պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք, որոնք օժտված են իշխանական լիազորություններով: Սակայն դա կարելի է դիտել միայն որպես քրեական դատավարու-

---

<sup>1</sup> **Смолин А.Г.** Сделка о признании уголовного иска. Саранск: Изд-во Мордов. ун-та, 2005, էջ 21:

<sup>2</sup> Տե՛ս **Чельцов-Бebutov М.А.** Советский уголовный процесс. Харьков, 1929, Вып. 2, էջ 46; **Фаткулин Ф.Н.** Обвинение и его изменение в суде. Казань, 1963, էջ 11; **Якуб М.Л.** Демократические основы советского уголовно-процессуального права. М., 1960, էջ 153-154 և ուրիշներ:



յան մեջ հայցի առանձնահատկություն: Վերոնշյալ առանձնահատկությունը չի կարող կասկածի տակ դնել փաստը, որ մրցակցությունը ոչ միայն քաղաքացիական, այլև քրեական դատավարության հիմքն է:

Ենթադրվում է, որ հենց կողմերի մրցակցությունն է ժամանակակից քրեական դատավարության շարժիչ ուժը: Դա պայմանավորված է դատարանի հատուկ կարգավիճակով, որը սահմանված է ՀՀ քր. դատ. օր.-ի 23-րդ հոդվածի 3-րդ մասում. «Դատարանը հանդես չի գալիս մեղադրանքի կամ պաշտպանության կողմում և արտահայտում է միայն իրավունքի շահերը»: Այսինքն՝ դատարանը լսում է կողմերին և, չանցնելով որևէ մեկի կողմը, գնահատում է նրանց հիմնավորումները, որոնց գնահատականների հիման վրա որոշակի եզրահանգում է անում, որն արտահայտվում է կայացված դատավճռի մեջ: Ինչպես նշում է Լ. Ա. Վոսկոբիտովան. «Դատական իշխանության բնույթն ու էությունը կանխորոշում են երեք բաղադրիչներ՝ ա) իշխանության բնույթը, բ) պետական իշխանությանը նրա հատկորոշիչ պատկանելությունը և գ) նրա իրավարար, այսինքն՝ բուն դատական նշանակությունը»<sup>1</sup>: Սույն երրորդ բաղադրիչը, որը կանխորոշում է դատական իշխանության բնույթը, ցույց է տալիս, որ դատարանը չի մասնակցում մրցակցությանը, որը ծավալել են մեղադրող և պաշտպանվող կողմերը, այլ պահպանում է միջնորդ դատավորի անկողմնակալություն, որին վիճակված է որոշելու, թե կողմերից որի փաստարկներն են ավելի համոզիչ, և դրա հիման վրա որոշում կայացնելու:

Վերը նշված հիմնադրույթներին չի համապատասխանում ՀՀ քր. դատ. օր.-ի 23-րդ հոդվածի 4-րդ մասում տեղ գտած այն դրույթը, որ «Դատարանը կաշկանդված չէ կողմերի կարծիքներով և իրավունքունի սեփական նախաձեռնությամբ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել քրեական գործով **նշարկությունը** բացահատելու համար»: Ամրագրելով մրցակցության սկզբունքը՝ օրենսդիրը վերջնականա-

---

<sup>1</sup> **Воскобитова Л.А.** Механизм реализации судебной власти посредством уголовного судопроизводства – Автореферат диссертация на соискание учёной степени доктора юридических наук. М., 2004, էջ 11:

պես չի ազատվել ինկվիզիցիոն դատավարության տարրերից, որն արտահայտվում է դատարանի խնդիրը ճշմարտության բացահայտումը համարելով: Իրականում քրեական դատավարության գործող օրենսդրությամբ չփոփոխվեց դատարանի դերը ճշմարտության բացահայտման հարցում: Դատարանի համար ճշմարտության բացահայտումը մնաց որպես բացարձակ նպատակ: Այդպիսի մոտեցումը չի բխում մրցակցության սկզբունքից, որի բովանդակությունը վեճի լուծումն է:

Մեղադրանքի ճշմարտացիության ապացուցումը պետք է հանդիսանա ոչ թե դատարանի, այլ դատախազի խնդիրը: Սա նշանակում է, որ քրեական դատավարության օրենսգրքի նշված հողվածում տեղ գտած այդ դրույթը պետք է վերացվի:

Այն, որ վեճը ժամանակակից քրեական դատավարության բովանդակությունն է, բացատրում է մրցակցային դատավարական ձևի առանձնահատկությունները, ինչը ենթադրում է այն բանի երաշխիքների առկայությունը, որ կողմերից յուրաքանչյուրը հնարավորություն ունենա ներկայացնելու իր դիրքորոշումը հիմնավորող փաստարկները: Հենց այդ պատճառով էլ, համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի 23-րդ հոդվածի 5-րդ մասի. «Քրեական դատավարությանը մասնակցող կողմերը քրեական դատավարական օրենսդրությամբ օժտված են իրենց դիրքորոշումը պաշտպանելու հավասար հնարավորություններով»: Առանց վեճի և պայմանների, որոնք երաշխավորում են կողմերի իրավահավասարությունը, անհնար է որևէ առաջխաղացում քրեական դատավարության մեջ: Ուստի վեճը անհրաժեշտ է դիտել որպես քրեական դատավարության շարժիչ ուժ, հետևաբար հենց դա էլ մրցակցային քրեական դատավարության բովանդակությունն է:

Վեճը՝ որպես քրեական դատավարության բովանդակություն, դրսևորվում է նրա ձևի մեջ: Այսպես՝ առանձին դատավարական գործողությունների վարույթի և որոշումներ կայացնելու կարգը կոչված են հնարավորություն ստեղծելու, որ վեճը ծավալվի հավասար պայմաններում, ուստի և կանխորոշում է դատարանի կողմից արդարացի որոշման կայացումը՝ հենվելով կողմերի ներկայացրած փաստարկների գնահատականի վրա: Քրեական դատավարության մասնակիցների կողմից իրենց իրավունքներն իրացնելու կարգը ևս

անհրաժեշտ է դիտարկել որպես ժամանակակից քրեական դատավարության բովանդակության արտահայտություն, այսինքն՝ որպես վեճ կողմերի միջև:

Քրեական դատավարությունում դատավարական ձևի իրավական և սոցիալական նշանակության հարցը միշտ էլ եղել է դատավարագետների ուշադրության կենտրոնում: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ դատավարական ձևը քրեական դատավարության բովանդակությունը բնութագրող հիմնական կատեգորիաներից է: Չնայած այն բանին, որ ներկայումս քրեադատավարական ձևի վերաբերյալ առկա են զգալի թվով գիտական հետազոտություններ, սակայն դրա ըմբռնման հարցում առայժմ չկա միասնական կարծիք<sup>1</sup>: Քրեական դատավարության ձևի վերաբերյալ տեսակետ-

---

<sup>1</sup> Տե՛ս **Рахунов Р.Д.** Уголовно-процессуальная форма и социалистическая законность // Советское государство и право, 1955, № 4, էջ 63-69; **Строгович М.С.** Уголовно-процессуальная форма и обеспечение прав обвиняемого // Развитие и совершенствование уголовно-процессуальной формы. Воронеж: Изд-во Воронеж. ун-та, 1979, էջ 83-92; **Петрухин И.Л.** Оптимальная уголовно-процессуальная форма // XXV съезд КПСС и дальнейшее укрепление социалистической законности. М., 1977, էջ 104-113; **Михайловская И.Б.** Цели, функции и принципы российского уголовного судопроизводства (уголовно-процессуальная форма) - М.: Проспект, ТК Велби, 2003, 144 էջ; **Бобров В.К.** Уголовно-процессуальная форма и ее роль в обеспечении задач советского судопроизводства // Сборник статей адъюнктов и соискателей. М.: Изд-во ВШ МВД СССР, 1971, Вып. 3, էջ 126-134; **Элькинд П.С.** Категории "содержание" и "форма" в сфере уголовно-процессуального регулирования // Развитие и совершенствование уголовно-процессуальной формы. Воронеж: Изд-во Воронеж. ун-та, 1979, էջ 34-45; **Котов Д.П.** Роль нравственных начал в развитии и совершенствовании уголовно-процессуальной формы // Развитие и совершенствование уголовно-процессуальной формы. Воронеж: Изд-во Воронеж. ун-та, 1979, էջ 52-58; **Ижнина Л.П., Кандалина А.Н.** Производство по уголовным делам у мирового судьи как самостоятельная уголовно-процессуальная форма упрощенного типа: Власть и право // Вестник Нижегородского университета им. Н.И. Лобачевского: Власть и право. Серия право. Нижний Новгород: Изд-во ННГУ, 2005, Вып. 1 (8), էջ 141-151; **Володина Л.М.** Уголовное судопроизводство и проблемы развития уголовно-процессуальной формы // Ученые записки. Сборник научных трудов Института государства и права. Тюмень: Изд-во ТюмГУ, 2007, Вып. 8, էջ 22-31, **Գ.Ս. Ղազինյան** Քրեական դատավարության պատմական և արդի հիմնահարցերը Հայաստանում: Եր., Երևանի համալս. հրատ., 2001թ., էջ 298-319, **Հ. Ղուկասյան, Գ. Մելքոնյան** Տարբերակված ձևերը և դրա առանձնահատկությունները, /Պետություն և իրավունք/, Երևան, 2007, N 1 (35), էջ 32-41 և ուրիշներ:

ների վերլուծությունից հանգում ենք այն եզրակացության, որ առավել տարածված է երկու տեսակետ: Առաջինի համաձայն՝ քրեադատավարական ձևն իրենից ներկայացնում է «... դատավարական առանձին գործողությունների և ամբողջության մեջ դրանց իրականացման կարգն ու պայմանները, օրենքով սահմանված կարգով դրանց ընթացքի ու արդյունքների պաշտոնական ամրագրումը»<sup>1</sup>: Երկրորդի համաձայն՝ քրեադատավարական ձևն ասելով հասկացվում է «...հարաբերությունների համակարգը, որ ձևավորվում է դատավարության սուբյեկտների գործունեության ընթացքում որոշակի հաջորդականությամբ և կարգավորվում է քրեադատավարական օրենքով նյութական իրավունքի նորմերը իրացնելիս»<sup>2</sup>: Ինչպես տեսնում ենք, երկրորդ տեսակետը փաստորեն չի ժխտում առաջինը, այլ, ինչպես կարծում են դրա կողմնակիցները, լոկ լրացնում է այն՝ շնորհիվ հարաբերությունների հասկացության ներմուծման: Դա հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ քրեադատավարական ձևի բնորոշումը՝ որպես դատավարական գործողությունների վարույթի կարգ (ինչպես առանձին, այնպես էլ ամբողջության մեջ), ոչ ոք չի առարկում: Իսկ ահա «իրավահարաբերություններ», «հարաբերություններ» հասկացությունները ոչ բոլորն են գործածում քրեադատավարական ձևը բնորոշելու համար: Ուստի միանգամայն իրավացիորեն որոշակի կասկածներ են ծագում իրավահարաբերությունների միջոցով դատավարական ձևը բնորոշելու առնչությամբ:

Պետության և իրավունքի տեսության մեջ իրավահարաբերություն ասելով հասկացվում է. «իրավունքի նորմերով հասարակական հարաբերությունների կարգավորումը, որոնց մասնակիցները պետության կողմից պաշտպանվող և երաշխավորվող սուբյեկտիվ իրավունքների և իրավական պարտավորությունների կրողներ են»<sup>3</sup>: Քրեական դատավարության կողմերի մրցակցությունը (վեճը), որը ժամանակակից քրեական դատավարության բովանդակությունն է, իրավահարաբերությունների բազմաթիվ տեսակներից մեկն է: Այդ

---

<sup>1</sup> **Громов Н.А.** Уголовный процесс России. М.: Юристь, 1998, էջ 20-21:

<sup>2</sup> **Рустамов Х.И.** Уголовный процесс. Формы. М.: Закон и право, ЮНИТИ, 1998, էջ 13:

<sup>3</sup> **Марченко М.Н.** Теория государства и права, М., ТК Велби, Изд-во Проспект, 2008, էջ 585:

հարաբերությունները հիմնված են կողմերի՝ իրենց իրավունքների պաշտպանության վրա, այդ նպատակով ապացույցներ ներկայացնելու կամ այդ ապացույցները հերքելու միջոցով: Ընդ որում՝ նշված իրավահարաբերությունները ուսնձգություններից պաշտպանում է պետությունը: Օրինակ՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 105-րդ հոդվածում հստակ սահմանվում են այն նյութերը, որոնց կիրառումը որպես ապացույցներ անթույլատրելի է: Այդ թվում են այն նյութերը, որոնք ձեռք են բերվել՝

«1) բռնությամբ, սպառնալիքով, խաբեությամբ, անձին ծաղրի ենթարկելով, ինչպես նաև այլ անօրինական գործողություններով.

2) կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքի, դատավարության լեզվին չտիրապետող անձանց իրավունքների՝ սույն օրենսգրքով նախատեսված լրացուցիչ երաշխիքների էական խախտմամբ.

2.1) վկայի՝ սույն օրենսգրքի 86-րդ հոդվածի հինգերորդ մասով նախատեսված իրավունքների խախտմամբ.

3) տվյալ քրեական գործով քրեական դատավարություն իրականացնելու, համապատասխան քննչական կամ այլ դատավարական գործողություն կատարելու իրավունք չունեցող անձի կողմից.

4) բացարկման ենթակա անձի մասնակցությամբ, եթե նա իմացել է կամ պետք է իմանար քրեական գործով վարույթին իր մասնակցությունը բացառող հանգամանքների առկայության մասին.

5) քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի էական խախտմամբ.

6) այն անձից, որն ունակ չէ ճանաչել փաստաթուղթը կամ այլ առարկան, հաստատել դրա իսկությունը, հայտնել դրա առաջացման և ստացման հանգամանքների մասին.

7) անհայտ կամ դատական նիստում չբացահայտվող աղբյուրից.

8) ժամանակակից գիտական պատկերացումներին հակասող մեթոդների կիրառման արդյունքում»:

Այսինքն՝ պետությունը կանխում է մրցակցության (վեճի) ընթացքում կողմերի՝ այնպիսի նյութերի (փաստարկների) ներկայացման հնարավորությունը, որոնք ձեռք են բերվել քաղաքացիների ի-

րավունքների խախտմամբ կամ միտում ունեն աղյուսի խախտումներ կատարելու: Պետության կողմից վեճի բնականոն ընթացքի ապահովման աղյուսի պաշտպանվածությունը հաստատում է, որ մրցակցությունը (վեճը) իրավահարաբերությունների տեսակներից է: Դա պայմանավորված է այն բանով, որ «ցանկացած իրավահարաբերություն, որը ծագում է իրավունքի նորմերին համապատասխան և դրանց հիման վրա, պետության կողմից պաշտպանվում է խախտումներից»<sup>1</sup>:

Ավելի վաղ նշեցինք, որ մրցակցությունը (վեճը) ժամանակակից քրեական դատավարության բովանդակությունն է: Հաշվի առնելով այն, որ վեճը իրավահարաբերությունների տեսակներից մեկն է, կարծում ենք, որ սխալ կլիներ քրեադատավարական ձևը բնորոշել որպես իրավահարաբերություն: Թեև կասկած չկա, որ հենց ձևի մեջ է արտահայտվում իրավահարաբերությունը, իսկ ավելի ստույգ՝ մրցակցությունը (վեճը): Հետևաբար քրեադատավարական ձևը հարկ է դիտել որպես առանձին դատավարական գործողությունների (կամ դրանց ամբողջության) իրականացման որոշակի կարգ, հաջորդականություն: Սակայն ինչպես պնդում են որոշ գիտնականներ, քրեադատավարական ձևը բնորոշելիս միայն հաջորդականությամբ սահմանափակվել չի կարելի: Դա պայմանավորված է այն բանով, որ կողմերի միջև մրցակցությունը (վեճը) ապահովվում է ոչ միայն դատավարական գործողությունների իրականացման կարգով, այլև թե ինչ պայմաններում են իրականացվում այդ գործողությունները: Բացի այդ, հարկ է նշել, որ քրեական դատավարությունում մրցակցությունը պարզապես վեճ չէ, քանի որ այն բնութագրվում է նաև այլ հատկանիշներով, որոնք պայմանավորված են քրեական դատավարության առանձնահատկությամբ: Աղյուսի յուրատեսակ առանձնահատկություններից են մասնավորապես ապացույցների նկատմամբ ներկայացվող պահանջները, որոնք նախատեսված են ՀՀ քր. դատ. օր.-ի 104-րդ հոդվածի 1-ին մասում: Այնտեղ ի մասնավորի նշված է. «Քրեական գործով ապացույցներ են ցանկացած փաս-

---

<sup>1</sup> **Сырых В.М.** Теория государства и права. М.: ЗАО «Юридический дом «Юстицинформ», 2002, էջ 294:

տական տվյալները, որոնց հիման վրա օրենքով որոշված կարգով հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը պարզում են քրեական օրենսգրքով նախատեսված արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կատարելը կամ չկատարելը և մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ»: Այսինքն՝ մատնացույց է արվում «ապացուցման բովանդակության կապը ապացուցման առարկայի կամ օժանդակ փաստերի հետ, որոնք նպաստում են այն պարզելուն»<sup>1</sup> (վերաբերելիության պահանջ): ՀՀ քր. դատ. օր.-ի այլ նորմերում սահմանված են ապացույցների թույլատրելիության պահանջները: Բացի այդ, քրեադատավարական ձևը պետք է ներառի նաև քրեական դատավարության կոնկրետ սուբյեկտների լիազորությունները:

**Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ քրեադատավարական ձևը հարկ է բնորոշել որպես առանձնահատուկ իրավական կառուցվածք, որում որոշվում է դատավարական գործողությունների իրականացման կարգը (առանձին-առանձին և ամբողջության մեջ), դրանց կատարման պայմանները, քրեական դատավարության մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները որոշող լիազորությունները, ապացույցների նկատմամբ ներկայացվող պահանջները, ինչպես նաև խախտված իրավունքների վերականգնման մեխանիզմները (մասնավորապես՝ արդարացումը):** Կարծում ենք՝ վերը բնորոշված քրեադատավարական ձևը ավելի ճիշտ է բնութագրում ժամանակակից քրեական դատավարության բովանդակությունը, այսինքն՝ մրցակցությունը (վեճը), քան առկա մյուս սահմանումները:

Քրեադատավարական ձևի իրավական և սոցիալական նշանակությունը որոշվում է այն բանով, որ դրա շնորհիվ հնարավոր է երաշխավորել անձի իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը քրեական դատավարության ընթացքում: Ինչպես արդարացիորեն նշում է Մ. Ս. Ստրոգովիչը. «Դատավարության մասնա-

---

<sup>1</sup> «Теория доказательств в советском уголовном процессе». М., «Юрид. лит.», 1973, էջ 229:

կիցների իրավունքների ու շահերի ապահովումը պահանջում է խստիվ պահպանել դատավարական բոլոր ձևերը»<sup>1</sup>: Գա պայմանավորված է այն բանով, որ քրեադատավարական ձևը պահպանելիս ապահովվում է այն մեխանիզմների գործառնությունը, որոնք կոչված են ապահովելու քրեական դատավարության մասնակիցների իրավունքներն ու ազատությունները: Ընդ որում՝ ձևը ենթադրում է, որ քրեական դատավարության մասնակիցների մի մասի իրավունքները չեն ապահովվում ի վնաս մյուս մասնակիցների իրավունքների ու ազատությունների: Նշյալ առանձնահատկությունը բնորոշ է ժամանակակից մրցակցային դատավարությանը:

Քրեադատավարական ձևի նշանակությունը պայմանավորված է քրեական դատավարության տեսակով: Այսպես՝ խորհրդային քրեական դատավարությունը շեշտը դնում էր այն բանի վրա, որ դատավարական ձևը ստեղծում է օրինականության այնպիսի ռեժիմ, որը դառնում է հանցագործությունների դեմ պայքարի առաջնահերթ պայման<sup>2</sup>: Թեև հանուն արդարության պետք է ասել, որ քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները ևս նշվում էին, սակայն ոչ որպես դատաիրավական ձևի առաջնային խնդիրներ: Քրեական դատավարության տարբեր տեսակներում քրեադատավարական ձևի նշանակության փոփոխություններին ուշադրություն է դարձրել Մ. Ա. Չելցովը, նշելով. «Խորհրդային դատավարական ձևերը, որոնք լի էին կոմունիզմի կառուցման համար պայքարի խնդիրներով, նոր էին և բուրժուական դատավարության համանուն ձևերից սկզբունքորեն տարբեր»<sup>3</sup>:

Անհրաժեշտ է նշել, որ Հայաստանի Հանրապետության արդի քրեական դատավարությունում դատավարական ձևն ունի ծառայողական նշանակություն, այսինքն՝ կոչված է ապահովելու դատավարության մասնակիցների իրավունքներն ու օրինական շահերը,

---

<sup>1</sup> **Строгович М.С.** Курс Советского уголовного процесса. Том I, Основные положения науки Советского уголовного процесса, М., Издательство «Наука», 1968, էջ 55:

<sup>2</sup> **Stu** Судебная практика в советской правовой системе / Под ред. Братуся С.Н. М., Юрид. лит., 1975, էջ 255:

<sup>3</sup> **Чельцов М.А.** Советский уголовный процесс, М., Государственное издательство юридической литературы, 1951, էջ 32-33:



նույնն է թե՛ ծառայել այդ իրավունքների ու շահերի ապահովմանը: Այսինքն՝ դատավարական այն կարգը, որը ձևի առավել էական տարրերից է, ինքնին անհրաժեշտ է այն բանի համար, որ, շնորհիվ գործողությունների որոշակի հաջորդականության, ապահովվեն քրեական դատավարության մասնակիցների իրավունքները: Այսպես՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 212-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն. «Հարցաքննությունն սկսելուց առաջ քննիչը մեղադրյալին բացատրում է ցուցմունքներ տալուց, հարցաքննությունը պաշտպանի մասնակցությամբ անցկացնելու կամ պաշտպանի մասնակցությունից հրաժարվելու (բացառությամբ պաշտպանի մասնակցության պարտադիր լինելու դեպքերի) նրա իրավունքը»: Դա պարտադիր պայման է, որ ստացված ցուցմունքները հնարավոր լինի դիտել որպես գործով ապացույցներ:

Նշելով, որ դատավարական ձևի ծառայողական նշանակությունը քրեական դատավարության մասնակիցների իրավունքներն ու օրինական շահերը ապահովելն է, հարկ է նկատել, որ դրանով այդ նշանակությունը չի սահմանափակվում: Չնը նաև ապահովում է կոնկրետ հանցագործությունների հայտնաբերման, բացահայտման և քննության հաջողությունը: Ըստ Մ. Ս. Ստրոգովիչի. «Օրենքով սահմանված դատավարական ձևերին խստիվ և անշեղորեն հետևելը անհրաժեշտ պայման է գործն ըստ էության ու ճիշտ քննելու և լուծելու համար»<sup>1</sup>: Սակայն հարկ է ընդգծել, որ այդ դեպքում ևս քրեական գործի բարեհաջող քննության և լուծման միջոցով ապահովվում է իրավական կարգուկանոնը, որը բխում է հասարակությունը կազմող ոչ որոշակի շրջանակի անձանց շահերից: Բացի այդ, քրեական գործի ճիշտ լուծումն ու քննությունը ապահովում է ոչ միայն դրա բոլոր հանգամանքների պարզումը, այլև քաղաքացու՝ դատարանի արդարացի որոշումն ակնկալելու իրավունքը:

Դատավարական գործողությունների (առանձին-առանձին և ամբողջության մեջ) իրականացման կարգը քննության ու դատարանի համար ապահովում է կոնկրետ գործի բոլոր հանգամանքների

---

<sup>1</sup> **Строгович М.С.** Курс Советского уголовного процесса. Том I, Основные положения науки Советского уголовного процесса, М., Издательство «Наука», 1968, էջ 54:

բացահայտում: Գրանում նկատվում է որոշակի տրամաբանություն, նույնքան խիստ, որքան և ձևի դեպքում, քանի որ առանձին դատավարական գործողությունների իրականացումն աչքի է ընկնում խստությամբ: Գ-ն նպաստում է արդարացի որոշումների կայացմանը, որոնք հիմնված են ճիշտ հետևությունների վրա, որոնք ստացվում են, մասնավորապես, քննչական գործողությունների իրականացման արդյունքում: Այսինքն՝ դատավարական (այդ թվում և քննչական) գործողությունների իրականացման ընթացակարգին ու կարգին վերաբերող պահանջներին ճշտորեն հետևելը ապահովում է հիմնավորված որոշման կայացումը՝ հիմնված քրեական գործի հանգամանքների ճիշտ պարզաբանման վրա: Ա. Ա. Էյսմանը նշում է. «Ապացուցման փուլում մտքի ընթացքը պետք է աչքի ընկնի խստությամբ ու որոշակիությամբ»<sup>1</sup>: Այդ խստությունը պետք է առկա լինի նաև դատավարական ձևում, որն ապահովում է ապացուցման գործընթացը:

Գատավարական ձևն անխզելիորեն կապված է քրեական դատավարության մասնակիցների իրավունքների, ազատությունների և օրինական շահերի իրացման հետ: Ձևի պահպանումը որպես վերոնշյալ իրավունքների, ազատությունների և օրինական շահերի ապահովման երաշխիք, երբեմն հակադրվել է կոնկրետ քրեական գործը բացահայտելու, քննելու և որոշում կայացնելու պետության շահին: Ընդ որում՝ բացահայտման ու քննության անհրաժեշտությունն ավելի է կարևորվել, քան քրեական դատավարության մասնակիցների իրավունքների ու ազատությունների ապահովման անհրաժեշտությունը: Այսպես՝ անգամ այնպիսի ակնավոր դատավարագետ, ինչպիսին է Մ. Ս. Ստրոգովիչը, գտնում է. «Գատավարական երաշխիքները հետազոտելիս մենք իրավաբանական գրականության մեջ հանդիպում ենք մի հայեցակարգի, որի էությունն այն է, որ քրեական դատավարությունն ամբողջությամբ ոչ այլ ինչ է, քան պետության կամայականություններից անձի պաշտպանության երաշխիքների համակարգ: Ըստ այդ հայեցակարգի՝ հենց դա է քրեական դատավարության ամբողջ էությունը. չօժանդակել պետությանը հանցավորության դեմ պայքարում, այլ հակառակը, պաշտպանել մեղադրյալներին պետության կողմից նրանց

<sup>1</sup> Эйсмэн А.А. Логика доказывания, М., «Юридическая литература», 1971, էջ 5:

նկատմամբ հաշվեհարդարից: Այս տեսության կողմնակիցները քրեական դատավարությունը գատում են հանցագործությունների դեմ պայքարի խնդիրներից՝ դատարանը վերածելով մի հարթակի, որտեղ «հակամարտում են պետությունն ու քաղաքացին»<sup>1</sup>: Անվանի գիտնականի այս տեսակետի արդարացումը ժամանակն է, այսինքն՝ խորհրդային պետության գաղափարախոսությունը, որը ձգտում էր քողարկել իր ռեժիմի հակամարդկային ուղղվածությունը, ուստի չէր կարող հրաժարվել մարդու անձնական իրավունքներն ու ազատությունները ճնշելու ցանկությունից: Առավել ևս տարօրինակ է ժամանակակից ռուս որոշ իրավաբան գիտնականների դիրքորոշումը, համաձայն որի՝ կարելի է խախտել դատավարական ձևը, եթե այն չի նպաստում քրեական գործերի քննությանն ու լուծմանը: Օրինակ, Վ. Վ. Լուսենը գտնում է. «Մենք ինչպես էլ վերաբերվենք դատավարական հիմնախնդիրներին, գործի ընթացակարգը չի կարող լինել ավելի բարձր որոնվող ճշմարտությունից»<sup>2</sup>: Այդպիսի կարծիքները համահունչ չեն ժողովրդավարական սկզբունքներին, որոնք որդեգրվել են և՛ Ռուսաստանում, և՛ Հայաստանում՝ առաջնային հռչակելով մարդու պատիվն ու արժանապատվությունը, նրա իրավունքներն ու ազատությունները: Առավել ևս, խորհրդային վարչակարգի տասնամյակների փորձը ցույց տվեց, որ գործնականում ճշմարտության ձգտումը հանգում է այն բանին, որ այն այդպես էլ մնում է չպարզված, իսկ ահա մարդու իրավունքները խախտվում են: Դա հիմք է տալիս պնդելու, որ ճշմարտությունը պարզելը ձևից դուրս ավելի դժվար է, քան դրա սահմաններում գործելիս: Բացի այդ, չպետք է մոռանալ, որ բուն ճշմարտությունը քննության ընթացքում է պարզվում հանուն այն բանի, որ կա՛մ պաշտպանվեն քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները անօրինական ոտնձգություններից, կա՛մ միջոցներ ձեռնարկվեն այդ իրավունքները վերականգնելու համար: Այսինքն՝ պետք չէ առաջնորդվել այն բանաձևով, որի համաձայն՝ «դատավարական ձևը... հարկ է դիտարկել որպես սոցիալապես նշանակալից որոշակի նպատակի հասնելու անհրա-

---

<sup>1</sup> **Строгович М.С.** Природа советского уголовного процесса и принцип составительности, М., Юрид. изд-во НКЮ СССР, 1939, էջ 45:

<sup>2</sup> Научно-практическая конференция «Правовая и криминологическая оценка нового УПК РФ» // Государство и право, 2002, № 9, էջ 90:

ժեշտ միջոց»<sup>1</sup>: Ընդհակառակը, ժամանակակից ժողովրդավարական քրեական դատավարության համար ընդունելի կարող է լինել միայն այն բանաձևը, ըստ որի ճշմարտությունը մարդու իրավունքների ու ազատությունների ապահովման և խախտված իրավունքների ու ազատությունների վերականգնման միջոց է:

Ձևին խստորեն հետևելու պահանջը երբեմն դիտվում է որպես ֆորմալիզմի (ձևապաշտության) դրսևորում քրեական դատավարության մեջ: Ընդ որում՝ «ֆորմալիզմ» հասկացությանը վերագրվում է ժխտական բովանդակություն, այսինքն՝ այն դիտվում է որպես գործի վերաբերյալ ճշմարտության բացահայտմանը կամ, որ նույնն է, քննությանը խոչընդոտող գործողությունների ամբողջություն: Ֆորմալիզմի մեջ մեղադրվում են այն դիրքորոշման կողմնակիցները, որոնց համոզմամբ քրեական դատավարության բոլոր մասնակիցները պետք է հետևեն դրանում սահմանված ձևին և անշեղորեն առաջնորդվեն դրանով: Ընդամիս, ձևին անշեղորեն հետևելը ստեղծում է մարդու իրավունքների ու ազատությունների ապահովման երաշխիքներ: Ուստի դրան հետևելը ընդհանուր ոչինչ չունի անգթության ու անմարդկայնության հետ, որոնք սովորաբար նույնացվում են ֆորմալիզմի հետ: Ճիշտ հակառակը, ձևի անտեսումը հանգեցնում է հապճեպ և ոչ ճիշտ դատավարության: Խորհրդային պետության մեջ առկա էր այդ երևույթը, երբ բոլոր ձևերի անտեսումով կայացվում էին մարդկանց մեղավորության վերաբերյալ հապշտապ որոշումներ՝ երբեմն նույնիսկ մեղադրվողներին չհայտնելով, թե ինչում են նրանք մեղադրվում: Այն ենթադրում է կամայականություն, որի հիմքում ընկած էր կոնկրետ իրավակիրառողի սուբյեկտիվ ընկալումը, այսինքն՝ նա էր որոշում, թե երբ է անհրաժեշտ հետևել դատավարական ձևին, իսկ երբ է կարելի մի կողմ նետել այն որպես ավելորդ ձևականություն: Իրականում պարզվում է, որ ձևից հրաժարումը լոկ պատրվակ է արդարացնելու իրավունքների ու ազատությունների ոտնահարումը: Հետևաբար, տեղին չէ քրեական դատավարության մեջ «ֆորմալիզմ» հասկացության գործածությունը, քանի որ դատավարական ձևը մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության ամենաէական երաշխիքներից մեկն է:

---

<sup>1</sup> Печников Г.А., Блинков А.П. О гарантиях прав личности в свете приоритета «формы» над «истиной» в состязательном УПК РФ. //Бизнес в законе, 2009, № 6, էջ 131:

Դրա օգնությամբ մասնավորապես պաշտպանվում է մարդու անմեղությունը: Դեռևս 18-րդ դարի ֆրանսիացի ականավոր փիլիսոփա Շառլ Մոնտեսքյուն գրել է. «Եթե պաշտպանված չէ քաղաքացիների անմեղությունը, ապա պաշտպանված չէ նաև ազատությունը»<sup>1</sup>: Այսինքն՝ ազատ հասարակությունն ու պետությունը, որոնք ճանաչում և պաշտպանում են մարդու իրավունքներն ու ազատությունները, պետք է երաշխիքներ ստեղծեն ընդդեմ անհիմն մեղադրանքների, հետևաբար և պաշտպանեն դատավարական ձևը:

Քրեադատավարական ձևի պահպանումը գործող օրենսդրության պահանջն է: Ուստի այն անտեսելը քրեադատավարական օրենքի խախտում է: ՀՀ քր դատ. օր.-ի 421-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է. «Դատավճիռը ենթակա է բեկանման՝ գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելով, եթե թույլ է տրվել քրեադատավարական օրենքի կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի էական խախտում, որը չի կարող վերացվել դատական քննության ժամանակ»: Ընդ որում՝ միանգամայն ակնհայտ է, որ «էական դատական խախտումներ, որոնք կարող են ազդել օրինական, հիմնավորված ու արդար դատավճռի կայացման վրա, հարկ է համարել միայն նրանք, որոնք այսպես թե այնպես խաթարում են մրցակցային դատավարության ելակետային, հիմնարար հիմքերը»<sup>2</sup>: Սակայն օրինաչափորեն հարց է ծագում, թե որոնք են մրցակցային դատավարության ելակետային, հիմնարար հիմքերը: Ա. Վ. Սմիռնովի և Կ. Բ. Կալինովսկու կարծիքով, դրանք են կողմերի հավասարության և դատարանի անկախության սկզբունքները: Քրեական դատավարության հիմնարար հիմքերի սակավաթվությունը նրանք բացատրում են այն բանով, որ «հանրագումարում այդ սկզբունքները ձևավորում են մրցակցային դատավարության գլխավոր կառուցվածքը»<sup>3</sup>: Մ. Ս. Ստրոգովիչը փոքր-ինչ այլ կերպ է բնորոշում քրեադատավարական օրենքի էական խախտումները: Նրա կարծիքով. «Դատավարական էական խախտումներ են համարվում դատավարական նորմերի այնպիսի խախտումները, որոնք, զրկելով կամ սահմանափակելով կողմերի՝ օրենքով երաշխավորված իրավունքները, կամ այլ եղանակով խոչընդոտել են դատարա-

<sup>1</sup> **Монтескье Ш.** Избр. Произв, М., Госполитиздат, 1955, էջ 318:

<sup>2</sup> **Смирнов А.В., Калиновский К.Б.** Комментарий к Уголовно-процессуальному кодексу Российской Федерации. Постатейный. М.: КНОРУС, 2007, էջ 846:

<sup>3</sup> Նույն տեղում:

նին բազմակողմանիորեն քննելու գործը և ազդել են կամ կարող էին ազդել օրինական և հիմնավորված դատավճռի կայացման վրա»<sup>1</sup>: Իրավագետները բավականին մանրամասն ուսումնասիրել են քրեադատավարական օրենքի էական խախտումները<sup>2</sup>:

---

<sup>1</sup> **Строгович М.С.** Курс советского уголовного процесса. Т. II: Порядок производства по уголовным делам по советскому уголовно-процессуальному праву. М.: Издательство «Наука», 1970, էջ 382:

<sup>2</sup> Տե՛ս **Адрианов А., Борисова И., Мельцов П.** Существенные нарушения уголовно-процессуального закона // Советская юстиция. М.: Юрид. лит., 1969, № 20, էջ 14-15; **Макухин К.** Существенные нарушения уголовно-процессуального закона // Советская юстиция. М.: Юрид. лит., 1972, № 9, էջ 9-10; **Ерофеев Г.А.** Существенные нарушения уголовно-процессуального закона как основания пересмотра приговоров // Применение норм процессуального права (процессуальные средства реализации уголовной ответственности). Межвузовский сборник научных трудов: Научные труды Свердловского юридического института. Свердловск: Изд-во Свердл. юрид. ин-та, 1977, Вып. 57, էջ 135-142; **Воскобитова Л.А.** Существенные нарушения уголовно-процессуального закона как основание к отмене приговоров // Труды ВЮЗИ. М.: РИО ВЮЗИ, 1974, Т. 37: ч. 2, էջ 144-174; **Скорик Н.В.** Существенное нарушение уголовно-процессуального закона как основание принесения кассационного протеста // Научная конференция профессорско-преподавательского состава Харьковского юридического института (февраль 1968 года). Тезисы докладов. Харьков: Изд-во Харьк. ун-та, 1968, էջ 161-163; **Данилов А.В.** Существенное нарушение уголовно-процессуального закона как основание направления дела на следствие // Проблемы борьбы с преступностью. Сборник научных трудов. Омск: Изд-во Ом. ВШМ МВД России, 1977, էջ 131-137; **Пашкевич П.Ф.** О существенных процессуальных нарушениях, влекущих отмену приговора // Проблемы совершенствования советского законодательства. Труды. М.: Изд-во ВНИИСЗ, 1981, Вып. 20, էջ 166-178; **Московитина Т.А.** Существенное нарушение уголовно-процессуального закона как основание отмены приговора // Уголовная ответственность и ее реализация. Межвузовский сборник. Куйбышев: Изд-во Куйбышев. ун-та, 1985, էջ 142-148; **Темущкин О.** Существенное нарушение уголовно-процессуального закона - основание отмены приговора // Социалистическая законность. М., 1973, № 5, էջ 23-26; **Костенко Л.В.** О понятии существенных нарушений уголовно-процессуального закона // Эффективность борьбы с преступностью и совершенствование законодательства в свете Конституции СССР. Межвузовский научный сборник. Уфа: Изд-во Башк. ун-та, 1980, էջ 89-99; **Воскобитова Л.А.** К вопросу о понятии существенных нарушений уголовно-процессуального закона // Актуальные вопросы развития и совершенствования законодательства о судостроительстве, судопроизводстве и прокурорском надзоре. Сборник научных трудов. М., 1981, էջ 133-141, **Մելիքյան Ռ.** Վերաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում: - Եր.: Երևանի համալս. հրատ., 2007թ., էջ 164-169, Գատավորի ձեռնարկ: Գլխավորըմական վերլուծություն. Երևան.: Ստորիկ, 2010, էջ 357-360 և ուրիշներ:

Անհրաժեշտ է նշել, որ Ռ-Գ քր. դատ. օր.-ում ներկայումս դատավճռի բեկանման կամ փոփոխման համար որպես որոշումը բեկանելու հիմնավորում նշվում են ոչ թե քրեադատավարական օրենքի էական խախտումները, այլ պարզապես քրեադատավարական օրենքի խախտումը (Ռ-Գ քր. դատ. օր.-ի հոդված 381): Ընդ որում՝ պետք է նշել, որ Ռ-Գ քր. դատ. օր.-ը նախատեսում է, որ քրեադատավարական օրենքի ոչ բոլոր խախտումները կարող են հանգեցնել դատական որոշման բեկանման կամ փոփոխության: Այսպես՝ Ռ-Գ քր. դատ. օր.-ի 381-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված է. «Վճռաբեկ ստյանի կողմից դատական որոշման բեկանման կամ փոփոխման համար հիմք են ծառայում քրեադատավարական օրենքի այնպիսի խախտումները, որոնք քրեական դատավարության մասնակիցներին սույն օրենսգրքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանք սահմանափակելու ճանապարհով, դատավարության ընթացակարգը չպահպանելու կամ այլ եղանակով ազդել են կամ կարող էին ազդել օրինական, հիմնավորված և արդարացի դատավճռի կայացման վրա»: Քրեադատավարական օրենքի էական խախտումների հասկացությունից հրաժարումը հիմնավորվում է այն բանով, որ նշյալ հոդվածը «շեշտը դնում է քրեադատավարական օրենքի խախտման հետևանքների վրա: Վճռաբեկության կարգով դատական որոշման բեկանման կամ փոփոխման համար հիմք կարող է դառնալ քրեական դատավարության օրենսգրքի նորմերի ցանկացած խախտում, որը քրեական դատավարության մասնակիցներին իրավունքներից զրկելու կամ դրանք սահմանափակելու միջոցով, դրա ընթացակարգը չպահպանելու կամ այլ եղանակով ազդել է կամ կարող էր ազդել օրինական, հիմնավոր և արդարացի դատավճռի կայացման վրա»<sup>1</sup>:

Ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի. «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով

---

<sup>1</sup> Комментарий к Уголовно-процессуальному кодексу Российской Федерации / Отв. ред. Д.Н. Козак, Е.Б. Мизулина. М.: Юристъ, 2003, էջ 620-621:

խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող են ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա»: Ինչպես տեսնում ենք, այս հարցի օրենսդրական կարգավորման հետ կապված՝ որոշակի տարբերություն կա:

Ռուսաստանյան օրենսդրի նման մոտեցումը որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև Հայաստանի համար: Չէ՞ որ քրեադատավարական օրենքի էական խախտումների հասկացությունը գոյություն ուներ պետության զարգացման խորհրդային շրջանում: Սինչև 2002 թվականը Ռուսաստանում գործող ՌԽՍՖՀ քրդատ. օր.-ը նույնպես պարունակում էր քրեադատավարական օրենքի էական խախտումների հասկացությունը: Ռուսաստանյան իրավագետներն արդեն այդ շրջանում նշում էին, որ «որոշել, թե այս կամ այն խախտումը դասվո՞ւմ է էականների շարքին, թե՞ ոչ, հնարավոր է միայն կոնկրետ քրեական գործի հանգամանքներից ելնելով»<sup>1</sup>: Կարծում ենք՝ քրեադատավարական օրենքի խախտումների առնչությամբ «էական» հասկացության կիրառումը անխուսափելիորեն կհանգեցնի այդ խախտումների ֆորմալացմանը, այսինքն՝ օրենսդրորեն կամ այլ կերպ կսահմանվի խախտումների ցանկը, որոնք կարող են դիտվել որպես էական: Անկասկած, դա շատ հարմար կլիներ դատավորների համար, որոնք առանց կոնկրետ քրեական գործի մանրամասն վերլուծության, առանց դրա առանձնահատկությունները հաշվի առնելու կլուծեին քրեադատավարական օրենքի էական խախտումների մասին հարցը, որը հնարավորություն կտար փոփոխելու կամ բեկանելու դատարանների որոշումները: Սակայն այսօրինակ մոտեցումը հազիվ թե ընդունելի լինի, քանի որ «միևնույն խախտումը կարող է էական համարվել մի դեպքում և ոչ էական՝ մյուս դեպքերում»<sup>2</sup>: Պայմանավորված այն բանով, թե որքանով է ազդել քրեադատավարական օրենքի խախտումը հիմնավոր դատավճիռ կայացնելու վրա, պետք է լուծվի այն հարցը, թե արժե արդյոք այն հիմք ընդունել դատարանի կայացրած որոշումը փոփոխելու

<sup>1</sup> Уголовно-процессуальное право / Под общей редакцией П.А. Лупинской. М.: Юристъ, 1997, էջ 456:

<sup>2</sup> Նույն տեղում:



կամ բեկանելու համար: Ուստի, կարծում ենք, որ տվյալ համատեքստում քրեադատավարական օրենքի խախտումները դիտարկելիս անհիմաստ է դառնում այնպիսիների առանձնացումը, որոնք հարկ լինի բնորոշել որպես էական:

Կարծում ենք, որ այս հարցում պետք է վստահել դատավորին, վերջինս պետք է որոշի, թե քրեադատավարական օրենքի որ խախտումները կարող էին ազդել դատավճռի օրինականության վրա: Դա հնարավորություն է ընձեռում դատավորին դատավճռի բեկանման կամ փոփոխման հնարավորության հարցը լուծել կոնկրետ քրեական գործի առանձնահատկություններից ելնելով, այսինքն՝ ցուցաբերել անհատական մոտեցում: Ուստի միանգամայն տրամաբանական է հետևյալ քայլը. *քրեադատավարական օրենքի խախտում* տերմինը գործածել առանց «էական» բառի: Առավել ևս, որ ՀՀ քր. դատ. օր.-ի հիշատակված նորմում կոնկրետացված չեն այն խախտումները, որոնք անառարկելիորեն պետք է համարվեն էական՝ հանգեցնելով դատավճռի բեկանմանը կամ փոփոխմանը:

Ուշագրավ է նաև այն, որ ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ դատավարական օրենքի էական խախտումներ են համարվում միայն այն խախտումները, որոնք թույլ են տրվել դատական քննության ժամանակ, մինչդեռ ՌԴ քր. դատ. օր.-ի 381-րդ հոդվածը նման սահմանափակում չի նախատեսում: Կարծում ենք, որ ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքում նշված սահմանափակումը պետք է վերացնել:

Ուշագրավ է ՌԴ քր. դատ. օր.-ի 381-րդ հոդվածի կիրառման փորձը: Չնայած այն բանին, որ քրեադատավարական օրենքի այն խախտումները մատնանաշելիս, որոնք կարող են հանգեցնել դատավճռի փոփոխման կամ բեկանման, այնտեղ չի գործածվում «էական» բառը, իրավակիրառները նախկինի պես գործածում են «օրենքի էական խախտումներ»<sup>1</sup> հասկացությունը: Վ. Բոժևը գրում է. «Չնայած տերմինաբանության վերոնշյալ փոփոխություններին՝ ՌԴ վերադաս դատարանները չեն հրաժարվել քր. դատ. օր.-ի նոր-

---

<sup>1</sup> Տե՛ս, օր., Кассационное определение Верховного Суда РФ от 7 июня 2007 года, Дело № 91-007-9СП; Кассационное определение Верховного Суда РФ от 8 февраля 2008 г. № 4-008-5// "Бюллетень Верховного Суда РФ", 2008, № 8:

մերի էական խախտումները դատավարական որոշումների ընդհանուր շարքից առանձնացնելուց»<sup>1</sup>: Դա հանգեցնում է այն բանին, որ «ծագող դժվարությունների հաղթահարմանը հաճախ օգնում է Ռուսաստանի վերադաս դատարանների անցյալի քննադատությունը, ինչպես նաև ռուսաստանյան քրեադատավարական օրենսդրության վերջին նորացումից առաջ և հետո լույս տեսած գրականության իմացությունը»<sup>2</sup>: Արդյունքում Ռուսաստանի դատական համակարգը հայտնվել է ոչ այնքան հաճելի մի իրավիճակում, երբ նա փաստորեն անտեսում է քրեադատավարական օրենսդրության մեջ կատարված փոփոխությունները: Ռ-Դ քր. դատ. օր.-ի 381-րդ հոդվածում տեղ գտած այն գաղափարը, որ դատարանն ինքը որոշի, թե քրեադատավարական օրենքի ո՞ր խախտումը կարող է հանգեցնել դատավճռի փոփոխմանը կամ բեկանմանը, դատարանների առօրյա գործունեության մեջ կյանքի չի կոչվում:

Կարծում ենք, որ ՀՀ քր. դատ. օր.-ը քրեադատավարական օրենքում խախտումների հարցի լուծումը առավել մեծ չափով է համապատասխանում ժողովրդավարության պահանջներին: Այնտեղ տրված չէ քրեադատավարական օրենքի էական խախտումների ցանկը, որոնք կարող են դիտվել դատարանի որոշումը վերանայելու անառարկելի հիմնավորում: Օրենքը դատարանին իրավունք է վերապահում, կոնկրետ քրեական գործի առանձնահատկություններից կախված, որոշել այն հարցը, թե արդյոք էական են քրեադատավարական օրենքի կոնկրետ խախտումները և դրա հիման վրա հանգեցնում են դատական որոշումը վերանայելու: Սա ճիշտ մոտեցում է, քանզի միևնույն խախտումը, կոնկրետ քրեական գործի առանձնահատկություններով պայմանավորված, կարող է տարբեր կերպ անդրադառնալ որոշման վրա: Օրենսդրորեն հնարավոր չէ հաշվի առնել նշված առանձնահատկությունների ամբողջ բազմազանությունը: Հետևաբար, էակա՞ն է արդյոք քրեադատավարական օրենքի խախտման հարցի լուծումը դատարանին վստահելը այդ հիմնախնդրի միանգամայն ողջամիտ լուծում է: Ճիշտ է, միանգամայն տեղին կլիներ կիրառել ոչ թե ՀՀ քր. դատ. օր.-ի 398-րդ հոդվածում

<sup>1</sup> **Божьев В.** Существенные нарушения норм УПК. Законность, 2009, № 1, էջ 4:

<sup>2</sup> Նույն տեղում:

տեղ գտած «քրեադատավարական օրենքի էական խախտումներ» քառակապակցությունը, այլ պարզապես «քրեադատավարական օրենքի խախտումներ» ձևակերպումը: Դա ավելի շատ կարտացոլեր օրենսդրի նոր մոտեցումը քրեադատավարական օրենքի խախտումների նկատմամբ՝ որպես դատական որոշումը փոխելու հիմքի:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում տեղ գտած փոփոխությունների (21.02.2007) արդյունքում «քրեադատավարական օրենքի էական խախտում» հասկացության հետ միաժամանակ օգտագործվում է «դատավարական իրավունքի հիմնարար խախտում» հասկացությունը (ՀՀ քր. դատ. օր-ի հոդվածներ 21, մաս 6, 376.1, մաս 1, 408.1, մաս 1, կետ 2): Ի տարբերություն քրեադատավարական օրենքի էական հասկացության օրենսդրական կարգավորմանը քրեական դատավարության գործող օրենսգրքում չի տրված «հիմնարար խախտում» հասկացության օրենսդրական բնորոշումը: Օրենսդիրը որպես հիմնարար խախտման հետևանք առանձնացնում է երկու հետևանք. ա) արդարադատության բուն էության խաթարումը, բ) սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը խախտելը: «Հիմնարար խախտում» հասկացության վերաբերյալ պետք է համաձայնել իրավաբանական գրականության մեջ տեղ գտած այն մոտեցմանը, որ հիմնարար խախտումները ենթադրում են խախտման առավել ծանր բնույթ, քան քրեական օրենքի սխալ կիրառումը (ՀՀ քր. դատ. օր-ի հոդված 397) և քրեադատավարական օրենքի էական խախտումը (ՀՀ քր. դատ. օր-ի հոդված 398)<sup>1</sup>: Կարծում ենք, որ հիմնարար խախտում պետք է համարել ՀՀ քր. դատ. օր-ի 398-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված դատավճռի բեկանման անվերապահ հիմքերը, քանի որ դրանք ի տարբերություն մյուս խախտումների անվերապահորեն հանգեցնում են դատավճռի բեկանման:

ՀՀ քր. դատ. օր-ի 398-րդ և 421-րդ հոդվածներում առկա «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ» հասկացության վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ քրեադատավարական ձևի ցանկացած խախտում անթույլատրելի է: Դա

---

<sup>1</sup> Տե՛ս Դատավորի ձեռնարկ: Գիտագործնական վերլուծություն. Երևան.: Աստղիկ, 2010, էջ 357:

պայմանավորված է այն բանով, որ երբեք հնարավոր չէ կանխատեսել, թե խախտումներից որը և ինչպես կազդի դատարանի որոշման վրա: Ուստի միանգամայն արդարացի է Մ. Ս. Ստրոգովիչի այն պնդումը, որ «քրեական գործերի քննության և լուծման ընթացքում դատավարական նորմերի խստագույնս պահպանումը օրինակա-նության անվերապահ պահանջն է, քրեական գործը ճիշտ լուծելու անհրաժեշտ պայմանը»<sup>1</sup>: Թեպետ, իհարկե, միանգամայն հասկա-նալի է, որ հնարավոր են քրեադատավարական օրենքի այնպիսի խախտումներ, որոնք հետևանք են քննչական կամ դատավարական այլ գործողության վերաբերյալ այս կամ այն արձանագրությունը ճիշտ ձևակերպելու հարցում անուշադրության: Մեծ ծանրաբեռն-վածությունը և հոգեբանական լարվածությունը կարող են որոշ ան-փութությունների պատճառ դառնալ դատավորի և քննիչի գործո-ղություններում, որոնք, սակայն, ամնշան լինելով, գործի ելքի վրա ոչ մի ազդեցություն չեն ունենա: Կատարյալն այն կլիներ, իհարկե, որ այդ սխալները չլինեին, սակայն քանի որ դրանք պատահում են, ա-պա դրանց շտկումը դատական որոշման փոփոխմամբ կամ վերա-նայմամբ կարող է հանգեցնել միայն ավելորդ քաշքշուկի, նյութա-կան և բարոյական կորուստների: Ընդ որում՝ նյութական կորուստ-ները պետության կողմից քրեական գործի քննությունը և ընթացքը կազմակերպելու վրա կատարվող ծախսեր են, ինչպես նաև գործին մասնակից անձանց որոշ ծախսերը, բարոյականը՝ քրեական դա-տավարությանը մասնակից մեղադրյալի, տուժողի և ոչ պաշտոնա-տար այլ անձանց ապրումները:

Քրեադատավարական օրենքի խախտումները, որոնք չեն ազ-դել և չէին կարող ազդել դատարանի կայացրած որոշման վրա, ըն-դունված է համարել ոչ էական: Այդ խնդրի տարբեր հետազոտողներ իրենց պատկերացումն են ներդրել «քրեադատավարական օրենքի ոչ էական խախտումներ» տերմինի մեջ: Այսպես՝ Գ. Ա. Երոֆենը, քրեադատավարական օրենքի ոչ էական խախտումներ ասելով, հասկանում է «դատարանի ու դատավորների, դատախազի, քննիչի,

---

<sup>1</sup> **Строгович М.С.** Курс советского уголовного процесса. Т. II: Порядок произ-водства по уголовным делам по советскому уголовно-процессуальному праву. М.: Издательство «Наука», 1970, էջ 382:

հետաքննության մարմնի և անձի կողմից քրեադատավարական նորմերի պահանջների ցանկացած եղանակով թույլ տրված խախտումները, որոնք չեն խանգարել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու քրեական գործերի հանգամանքները, չեն ազդել և չէին կարող ազդել օրինական և հիմնավորված դատավճիռ կայացնելու վրա»<sup>1</sup>: Ա. Ա. Շիրվանովը գրում է, որ քրեադատավարական օրենքի ոչ էական խախտումները «հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատավորի ու դատարանի շեղումներն են քրեադատավարական օրենքով նախատեսված դատավարական գործողությունների վարույթի կարգից, քրեադատավարական ակտերի ռեկվիզիտներից, հանցագործությունների կատարմանը նպաստող պատճառներից ու պայմաններից, դատավարության ժամկետներից, եթե դրանք չեն ազդել և չէին կարող ազդել գործը օրինական լուծելու, ինչպես նաև քրեական դատավարությանը մասնակից սուբյեկտների և անձանց վրա՝ խուսափելու դատավարական պարտականությունների կատարումից»<sup>2</sup>: Բոլոր այս բնորոշումների համար ընդհանուր է այն, որ քրեադատավարական օրենքի ոչ էական խախտումները այնպիսի խախտումներ են, որոնք չեն ազդել և չէին կարող ազդել դատարանի կողմից որոշման կայացման վրա: Այսինքն՝ այդ դեպքերում քրեադատավարական օրենքի ձևը չպահպանելը ոչ մի կերպ չի ազդել ո՛չ քրեական դատավարության մասնակիցների իրավունքների ու ազատությունների երաշխիքների ապահովման վրա, ո՛չ դատական որոշման հիմքում ընկած հանգամանքները պարզելու վրա:

Անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունից ելնելով ուշագրավ է *Ս. Սարգսյանի* գործով ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային նշանակությամբ այն դիրքորոշումը, որ որպես քրեական օրենսգրքով նախատեսված արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը կասկածյալի կամ մեղադրյալի կոմից կատարելը կամ չկատարելը և մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն

---

<sup>1</sup> **Ерофеев Г.А.** Нарушения уголовно-процессуального закона как основания пересмотра приговоров. Автореф. дисс.... к.ю.н.. Свердловск, 1977, էջ 11:

<sup>2</sup> **Ширванов А.А.** Существенные нарушения уголовно-процессуального закона как основание возвращения дел для дополнительного расследования. Дисс. канд. юрид. наук. М., 1999, էջ 124:

ունեցող այլ հանգամանքները պարզելու միջոց կարող են օգտագործվել միայն այնպիսի ապացույցներ, որոնք ձեռք են բերվել, ամրագրվել և գործին կցվել են քրեադատավարական օրենքով սահմանված և թույլատրելի համարվող կարգով: Ապացույցների ձեռքբերման և ամրագրման թույլատրելիությունը կարգավորող նորմերից հետևում է, որ որպես ապացույց չեն կարող օգտագործվել քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի էական խախտմամբ ձեռք բերված փաստական տվյալները, հատկապես եթե դրանք իրենց հերթին հանգեցրել են դատավարության մասնակիցների իրավունքների էական խախտման, ազդել են կամ կարող էին ազդել ստացված փաստական տվյալների հավաստիության վրա:

Այսպիսով՝ ապացույցների հավաքմանը և ստուգմանն ուղղված դատավարական գործողությունների կատարման ընթացքում պետք է ապահովվի անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Հակառակ դեպքում կատարված դատավարական գործողության արդյունքում ստացված փաստական տվյալը, անկախ գործի համար ունեցած նշանակությունից, կորցնում է իր իրավական ուժը, ապացուցողական նշանակությունը և չի կարող ընդգրկվել կոնկրետ քրեական գործով ապացույցների համակցության մեջ և դրվել մեղադրանքի հիմքում»<sup>1</sup>: Նշված գործով վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննվող բողոքի կապակցությամբ առկա է անթույլատրելի ճանաչված ապացույցներից անմիջականորեն բխող այլ ապացույցների անթույլատրելիության հարցի վերաբերյալ օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Այս դիրքորոշումն ունի գործնական կարևոր նշանակություն անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար<sup>2</sup>: Վերլուծելով քրեադատավարական օրենքի էական խախտումները, որոնք կարող են հանգեցնել դատական որոշման բեկանմանը, հարկ է նկատել, որ դրանցից ոչ բոլորն են ոտնահարում քրեական դատավարությանը մասնակից անձանց իրավունքներն ու ազատությունները: Մրանից հետևում է, որ քրեադատավարական ձևը ևս ոչ միշտ է պետք դիտարկել որպես քրեական դատավարության մասնակիցների իրավունքների ու ազատությունների երաշխիք:

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ ԵԶԲԳ/0295/01/08 որոշման 15-րդ կետը:

<sup>2</sup> Տե՛ս նշված որոշման 15-րդ կետը:

Ասել է թե՛ քրեադատավարական ձևը չի կարելի համարել լոկ որպես քրեական դատավարության մասնակիցների իրավունքների ու ազատությունների երաշխիք, քանի որ այն ունի նաև մի շարք այլ նշանակություններ:

Բացի այն բանից, որ քրեադատավարական ձևը երաշխավորում է քննության և դատական քննության մասնակից անձանց իրավունքներն ու ազատությունները, այն նաև քրեական դատավարությունում բարոյականության վրա ազդող գործոններից մեկն է: Դա պայմանավորված է այն բանով, որ ժամանակակից քրեական դատավարությունը, մասնավորապես Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունը, հիմնված է նաև հասարակության բարոյական պատկերացումների վրա և համապատասխանում է պետության ժողովրդավարական սկզբունքներին: Տ. Ռ-յաբինինան արդարացիորեն նկատում է, որ «Իրավական ձևակերպումներից շատերը առաջացել են համապատասխան բարոյական պատկերացումների, դատողությունների ու կանոնների հիման վրա»<sup>1</sup>: Ըստ այդմ՝ դատավարական որոշակի գործողություններ վարելու կարգի մասին քրեադատավարական օրենքի դրույթներում արտացոլում են գտել նաև բարոյականության նորմերը: Այսպես՝ ՀՀ քր. դատ. օր-ի 229-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված է. «Անձնական խուզարկությունը կարող է կատարվել քննիչի կողմից՝ խուզարկվողի հետ նույն սեռի ընթերականների և մասնագետի մասնակցությամբ», կամ ՀՀ քր. դատ. օր-ի 220-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Անհրաժեշտության դեպքում քննումը կատարվում է դատաբժշկության բնագավառի մասնագետի կամ բժշկի մասնակցությամբ: Քննումը, որը զուգորդվում է քննվող անձին մերկացնելու հետ, կատարվում է մինևնույն սեռին պատկանող ընթերականների ներկայությամբ»: Միանգամայն ակնհայտ է, որ նշյալ նորմերում արտացոլված են բարոյական պահանջները: Բարոյականության նորմերը արտացոլված են նաև դատավարական գործողությունների նկատմամբ ավելի ընդհանուր պահանջում: Այսպես՝ ՀՀ քր. դատ. օր-ի 9-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Քրեական դատավարության ընթացքում ոչ ոք չպետք է ենթարկվի իր արժանապատվությունը նվաստացնող

---

<sup>1</sup> **Рябинина Т.К.** Нравственные начала уголовного процесса, Курск, 2007, էջ 37:

վերաբերմունքի, պահվի ստորացուցիչ պայմաններում»:

Անկասկած, քրեական դատավարությունում ոչ բոլոր ընթացակարգերն են ուղղված բարոյականության ապահովմանը: Դրանց զգալի մասն ունի գործնական բնույթ՝ ի նպաստ այն բանի, որ ստացվի ակնկալված որոշակի արդյունք: Այսպես՝ Ս. Շեյֆերի կարծիքով. «որոշ դրույթներ անմիջականորեն ուղորդում են քննիչի և այլ մասնակիցների գործունեությունը դեպի ցանկալի արդյունքը՝ տեղեկությունների ստացումը»<sup>1</sup>: Այսինքն՝ քննչական որոշակի գործողությունների կատարման արդյունքը քննության կամ դատական քննության համար անհրաժեշտ տեղեկատվություն ստանալն է: Դատավարական գործողությունները կարող են իրականացվել նաև այլ արդյունքներ ստանալու համար, որոնք որևէ չափով կապված չեն ոչ բարոյական հիմքերի ապահովման, ոչ առանձին քաղաքացիների իրավունքների ու ազատությունների պահպանման հետ: ՀՀ քր. դատ. օր-ի 134-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Խափանման միջոցները հարկադրանքի միջոցներ են, որոնք կիրառվում են կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ քրեական գործով վարույթի ընթացքում նրանց ոչ պատշաճ վարքագիծը կանխելու և դատավճռի կատարումն ապահովելու նպատակով»: Վ. Միխայլովի համոզմամբ՝ նման գործողությունների «կիրառումն ուղղված է մեղադրյալների կողմից քրեական դատավարության համար անցանկալի գործողությունների կամ արարքների նախագուշացմանը, դադարեցմանը, ինչպես նաև քրեական դատավարության համար ցանկալի, անհրաժեշտ գործողություններ ու արարքներ կատարելուն հարկադրելուն»<sup>2</sup>: Ինչպես երևում է, խափանման միջոցները հետապնդում են միանգամայն այլ նպատակ, քան բարոյական հիմքերի իրացումը: Դրանք ուղղված են կոնկրետ քաղաքացիների իրավունքների ու ազատությունների սահմանափակմանը, որոնք քրեադատավարական օրենքով սահմանված կարգով ճանաչվել են մեղադրյալներ: Այսինքն՝ չի կարելի խոսել այն մասին, որ այդ միջոցները երաշխավորում են նշյալ անձանց իրավունքների ու ազատություններ

<sup>1</sup> **Шейфер С.А.** Следственные действия. Система и процессуальная форма, М., Юрид. лит., 1981, էջ 94:

<sup>2</sup> **Михайлов В.А.** Уголовно-процессуальные меры пресечения в судопроизводстве Российской Федерации, М., 1997, էջ 13-14:



րի պահպանումը: Այդուհանդերձ, դրանք անհրաժեշտ են քրեական դատավարությանը, քանի որ դրանցով ապահովվում է նախաքննության և դատական քննության առարկա դարձած արարքի կատարման հանգամանքների պարզումը: Հաշվի առնելով այդ՝ նույնիսկ կարծիք է հնչել, թե հիշյալ միջոցներն անվանելու համար ավելի ճիշտ կլինի օգտագործել ոչ թե «խափանման միջոցներ», այլ «ապահովման միջոցներ» տերմինը<sup>1</sup>: Խափանման միջոցների կիրառումը բնավ էլ եզակի օրինակ չէ, որը մատնացույց է անում այն մասին, որ դատավարական գործողություններն ու դրանց կատարման կարգը նպատակ ունեն ոչ միայն ապահովել բարոյական հիմքերը, այլև մարդու իրավունքներն ու ազատությունները քրեական դատավարության ընթացքում: ՀՀ քր. դատ. օր-ի 212-րդ հոդվածի 4-րդ մասում սահմանված է. «Մեղադրյալը հարցաքննվում է գործով անցնող այլ անձանցից անջատ: Քննիչը միջոցներ է ձեռնարկում, որպեսզի մեղադրյալը չհաղորդակցվի գործով անցնող այլ անձանց հետ»: Այստեղ խոսքը ոչ թե մեղադրյալի իրավունքների ապահովման, այլ նախնական քննության համար բարենպաստ պայմաններ ստեղծելու մասին է: Այսինքն, միանգամայն արդարացի է Ս. Բորոդինի այն նկատառումը, թե «դատավարական ձևը պետք է լինի օպտիմալ և օրենսդրի կողմից այնպես կառուցված, որ սեղմ ժամկետներում ապահովի ապացույցների հավաքման և հանցանք գործած անձանց մերկացման առավելագույնս արդյունավետ ուղիներ ու միջոցներ՝ երաշխիքներ ստեղծելով, որ քրեական պատասխանատվության չենթարկվեն այն քաղաքացիները, ովքեր մասնակից չեն հանցագործությանը»<sup>2</sup>: Սակայն կոնկրետ դատավարական գործողությունների կատարման կարգի օրենսդրորեն ամրագրումն արդեն ինքնին երաշխավորում է նշյալ գործողությունների կատարմանը մասնակից անձանց, կամ որոնց նկատմամբ այդ գործողությունները կատարվում են, իրավունքներն ու ազատությունները: Քանի որ որոշակի կարգի նորմատիվ ամրագրումը հակաօրինական է դարձնում մարդու պատիվն ու արժանապատվությունը նսեմացնող միջոցների կիրառումը:

<sup>1</sup> Чельцов М.А. Советский уголовный процесс, М., Госюриздат, 1962, էջ 221.

<sup>2</sup> Бородин С.В. Уголовно-процессуальное право. Процессуальные формы и гарантии /Курс уголовного судопроизводства // Под ред. В.А. Михайлова, М., 2006, էջ 43:

րառումը, ինչպես նաև սահմանափակում մարդու՝ օրենքով սահմանված իրավունքներն ու ազատությունները, ուստի նույնիսկ դատավարական այն գործողությունները, որոնք նպատակ չունեն պաշտպանելու կոնկրետ անձանց իրավունքներն ու ազատությունները, երաշխավորում են դրանք իրավապահպան մարմինների պաշտոնատար անձանց կամայականություններից նախնական քննության և դատական քննության փուլերում: Դա ապահովվում է որոշակի պայմանների հաստատումով, որոնք պիտի պահպանվեն հիշյալ դատավարական գործողությունների կատարման ժամանակ: Օրինակ՝ ՀՀ քր. դատ. օր-ի 212-րդ հոդվածի 8-րդ մասում նախատեսվում է. «Հարցաքննությունն սկսելուց առաջ քննիչը մեղադրյալին բացատրում է ցուցմունքներ տալուց, հարցաքննությունը պաշտպանի մասնակցությամբ անցկացնելու կամ պաշտպանի մասնակցությունից հրաժարվելու (բացառությամբ պաշտպանի մասնակցության պարտադիր լինելու դեպքերի) նրա իրավունքը»:

ՀՀ քր. դատ. օր-ի 1-ին հոդվածի 1-ին մասում սահմանված է. «Հայաստանի Հանրապետության տարածքում քրեական գործերով վարույթի կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, սույն օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով և դրանց համապատասխան ընդունված այլ օրենքներով»: Դա նշանակում է, որ քրեադատավարական օրենքով սահմանված կարգը միասնական է Հայաստանի Հանրապետության տարածքում: Այսինքն՝ քրեադատավարական ձևը միասնական է ու պարտադիր Հայաստանի Հանրապետության բոլոր հետաքննության, նախաքննության մարմինների, դատախազության և դատարանների համար: Այս դրույթը հաստատվում է ՀՀ քր. դատ. օր-ի 1-ին հոդվածի 2-րդ մասում, որում սահմանված է. «Քրեական դատավարության օրենսդրությամբ սահմանված վարույթի կարգը պարտադիր է դատարանների, հետաքննության, նախաքննության և դատախազության մարմինների, ինչպես նաև դատավարության մասնակիցների համար»: Ընդ որում՝ հարկ է նշել, որ այդպիսի միասնականությունը հիմնված է ձևի զանազանության վրա, որը պայմանավորված է դատավարության առանձնահատկություններով՝ ըստ քրեական գործերի առանձին կատեգորիաների:

Կարծում ենք՝ քրեադատավարական ձևի միասնականությունը չի բացառում նրա տարբերակումը: Դա պայմանավորված է այն բանով, որ քրեական դատավարության սկզբունքները, քրեական դատավարության մասնակիցների իրավունքները, ինչպես նաև քրեադատավարական օրենքով սահմանված մի ամբողջ շարք պայմաններ միասնական են ամբողջ քրեական դատավարության համար: Սակայն դա չի բացառում, որ առանձին կատեգորիայի քրեական գործեր, պայմանավորված դրանց առանձնահատուկ բնույթով, պահանջեն դատավարական ընթացակարգի բարդացում կամ հակառակը՝ պարզեցում<sup>1</sup>: Դա կարող է անհրաժեշտ լինել ինչպես մինչդատական վարույթի կամ դատական քննության օպտիմալացման, այնպես էլ այն բանի համար, որ ավելի արդյունավետ երաշխավոր-

---

<sup>1</sup> Տե՛ս Օ дифференциации уголовно-процессуальных форм см.: **Рахунов Р.Д.** Дифференциация уголовно-процессуальной формы по делам о малозначительных преступлениях // Советское государство и право. М.: Наука, 1975, № 12, էջ 60-68; **Кузнецов П.** Дифференциация процессуальной формы по групповым и многоэпизодным делам // Российская юстиция. М.: Юрид. лит., 1999, № 5, էջ 44-45; **Дроздов Г.** Дифференциация формы досудебного производства // Социалистическая законность. М.: Известия, 1990, № 4, էջ 51-52; **Шмелев В.В.** Дифференциация уголовно-процессуальной формы на примере производства в мировой юстиции // Место и роль органов внутренних дел в системе уголовной юстиции. Материалы научной конференции курсантов, слушателей и студентов (Май 2003 г.). Омск: Изд-во Омск. акад. МВД России, 2004, Вып. 8, էջ 41-43; **Соловьев А.Б., Токарева М.Е.** Дифференциация форм досудебного производства по уголовным делам // Прокурорская и следственная практика. М., 1998, № 3, էջ 144-151; **Рахунов Р.Д.** Проблема единства и дифференциации уголовно-процессуальной формы // Вопросы борьбы с преступностью. М.: Юрид. лит., 1978, № 29, էջ 83-91; **Рахунов Р.Д.** Проблемы дифференциации уголовно-процессуальной формы по делам о преступлениях, не представляющих большой общественной опасности // Проблемы совершенствования уголовного судопроизводства. Сборник научных трудов. М., 1976, Ч. 2, էջ 3-51; **Филин Д.В.** Критерии дифференциации уголовно-процессуальной формы // Проблемы социалистической законности. Республиканский межведомственный тематический научный сборник. Харьков: Вища шк. Изд-во при Харьк. ун-те, 1988, Вып. 21, էջ 123-126; **Дьяченко В.И.** О дальнейшей дифференциации формы досудебного производства // Формы досудебного производства и их совершенствование. Сборник научных трудов. Волгоград: Изд-во ВСШ МВД СССР, 1989, էջ 16-21; **Лубенский А.** Дифференциация форм предварительного расследования // Социалистическая законность. М.: Известия, 1977, № 8, էջ 77-78, **Ղուկասյան Հ., Մեյրոնյան Գ.** Տարբերակված ձևերը և դրա առանձնահատկությունները, //Պետություն և իրավունք, Երևան, 2007, N 1, (35), էջ 32-41 և ուրիշներ:

վեն դատավարության մասնակիցների իրավունքները:

Քրեական դատավարությունում ձևի տարբերակումը դիտարկվում է երկու ուղղությամբ՝ բարդացում և պարզեցում: Դատավարության ձևի բարդացումը որպես կանոն պայմանավորված է, քրեական դատավարությանը մասնակից անձանց առանձին կատեգորիաների իրավունքներն ու ազատությունները հնարավորինս լավ երաշխավորելու անհրաժեշտությամբ: Պարզեցումը ուղղված է միայն քրեական դատավարության օպտիմալացմանը՝ նպատակ ունենալով տնտեսելու ժամանակն ու միջոցները, թույլ չտալու ավելորդ քաշքշուկ: Ընդ որում՝ հարկ է նշել, որ դատավարության պարզեցումը բնավ էլ չի ենթադրում քրեական դատավարությանը մասնակից անձանց երաշխիքներ տրամադրելուց հրաժարում: Դրանց որոշակի ծավալը պահպանվում է, և ենթադրվում է, որ այն լիովին բավարար է իրավունքներն ու ազատությունները պահպանվելու համար: Պետք է նշել, որ քրեական դատավարության ձևի պարզեցումը մշտապես խստորեն քննադատվել է: Դա լիովին հասկանալի է: Չնի ցանկացած պարզեցում պետք է մանրակրկիտ ու համակողմանիորեն վերլուծվի, որպեսզի հաշվի առնվեն նրա բոլոր առավելություններն ու թերությունները, և այն, թե որքանով այն կարող է ոտնահարել կոնկրետ քրեական գործի քննությանն ու դատական քննությանը մասնակից անձանց իրավունքներն ու ազատությունները: Քրեական դատավարության այս կամ այն պարզեցված ձևն ընդունելու պատրաստակամությամբ է առավելապես որոշվում ամբողջ հասարակության պատրաստակամությունը դրա հանդեպ, նրա բարոյական ըմբռնումները:

Քրեական դատավարության տարբերակված ձևերից են անչափահասների գործերով վարույթի առանձնահատկությունները (ՀՀ քր. դատ. օր., գլուխ 50), միջազգային պայմանագրերով սահմանված առավելություններից և անձեռնմխելիությունից օգտվող անձանց գործերով վարույթի առանձնահատկությունները (ՀՀ քր. դատ. օր., գլուխ 51), անմեղաունակ անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթը (ՀՀ քր. դատ. օր., գլուխ 52): Շատ երկրների օրենսդրություններում կան քրեական դատավարության տարբերակված այլ ձևեր: Այսպես՝ օրինակ, Ռու-

սաստանի Գաշնության քրեական դատավարությունում նախատեսված է դատավարության մի այնպիսի ձև, որտեղ դատական նիստին ներկա պիտի լինեն երդվյալ ատենակալները (բաժին XII ): Ընդ որում՝ անհրաժեշտ է նշել, որ ներկայումս հիշյալ բարդացված կարգը չի կիրառվում եվրոպական պետությունների մեծ մասում: Ուիլյամ Բերնամը գրում է. «Մի ժամանակ Եվրոպայում, ոգեշնչված Ֆրանսիական մեծ հեղափոխությամբ, երդվյալների դատարաններ ստեղծվեցին բազմաթիվ երկրներում, որոնք եվրոպական մայրցամաքային իրավունքի ընտանիքի անդամ էին: Այսօրվա դրությամբ երկրների մեծ մասում երդվյալների դատարանը ընդմիջտ դադարեցրել է գոյությունը, բացառությամբ Ռուսաստանի և Իսպանիայի, որտեղ վերջերս վերածնվեց այդ ինստիտուտը»<sup>1</sup>:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությունում քրեական դատավարության պարզեցված ձևեր նախատեսված են: Այսպես՝ Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրությունը նախատեսում է դատական քննության արագացված կարգի կիրառումը առաջադրված մեղադրանքի հետ ամբաստանյալի կամ մեղադրյալի համաձայնության դեպքում (ՀՀ քր. դատ. օր., գլուխ 45.1):

Անհրաժեշտ է նշել, որ քրեական դատավարության պարզեցված ձևերի ներմուծումը սովորաբար քննադատության է արժանանում ինչպես իրավապաշտպանների, այնպես էլ իրավաբանների կողմից: Պատճառն այն է, որ ոչ միշտ է պարզեցված այդ կարգը երաշխավորում դատավարության մասնակիցների պաշտպանությունը իրավապահպան մարմինների պաշտոնատար անձանց (քննիչների, հետաքննության մարմինների, դատավորների) չարաշահումներից: Այսպես՝ 2007թ. ՀՀ քր. դատ. օր.-ում ներառվեց դատական քննության արագացված կարգ, երբ ամբաստանյալը կամ մեղադրյալը համաձայն է իրեն առաջադրված մեղադրանքին: Սակայն այս ինստիտուտի կիրառումը ոչ միայն մեզ մոտ, այլև ուրիշ երկրներում և

---

<sup>1</sup> **Бернам Уильям** Правовая система США. 3-й выпуск. М.: «Новая юстиция», 2006, էջ 173:

հատկապես ՌԴ-ում ծնեց բազմաթիվ բանավեճեր<sup>1</sup>: Դրանք արժանի են ուշադրության, քանի որ դրանց վերլուծությունը կարող է օգտակար լինել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրությունում այդ ինստիտուտի հետագա զարգացման հարցում:

Գատական որոշում կայացնելու հատուկ կարգի բնույթի վերաբերյալ, երբ մեղադրյալը համաձայն էր իրեն առաջադրված մեղադրանքին, միասնական կարծիք չկա: Բազմաթիվ իրավագետներ համարում են, որ այն ներմուծված է ԱՄՆ օրենսդրությունում գոյություն ունեցող «մեղքն ընդունելու գործարքից»: Այսպես՝ Ե. Վ. Օսիպո-

---

<sup>1</sup> Տե՛ս **Татьянина Л.** Особый порядок принятия судебного решения // Законность. М., 2003, № 12, էջ 30-33; **Чижова М.А.** Особый порядок судебного разбирательства // Возможности защиты в рамках нового УПК России. Материалы научно-практической конференции адвокатов, проведенной Адвокатской палатой города Москвы при содействии Коллегии адвокатов "Львова и партнеры" 17 апреля 2003 г.. М.: ЛексЭст, 2003, էջ 115-117; **Конин В.В., Осипова Е.В.** Особый порядок судебного разбирательства - "сделка" о признании вины? // Новое уголовно-процессуальное законодательство РФ: проблемы теории и практики. Материалы научно-практической конференции. Калининград: Изд-во Калинингр. ун-та, 2003, էջ 100-104; **Пузиков А.И.** Особый порядок судебного разбирательства в уголовном судопроизводстве: "за" и "против": Новое процессуальное законодательство Российской Федерации: Новеллы, достоинства и противоречия // Трибуна молодых ученых: Новое процессуальное законодательство Российской Федерации: Новеллы, достоинства и противоречия. Сборник научных трудов. Воронеж: Изд-во Воронеж. ун-та, 2003, Вып. 4: Ч. 1, էջ 134-143; **Смолин А.Г.** Особый порядок судебного разбирательства, предусмотренный главой 40 УПК РФ: проблемы нормативного регулирования и дальнейшего развития. Автореф. дис. ... канд. юрид. наук - Нижний Новгород, 2005, 28 էջ; **Блиновская Е.** Спорные вопросы применения особого порядка судебного разбирательства. (Особый порядок и несовершеннолетние) // Судья. М.: Юрид. мир, 2006, № 6, էջ 44-45; **Медвецкий А.** Особый порядок судебного разбирательства требует особого внимания. (О применении главы 40 УПК РФ судами Курской области) // Власть судебная. Курск, 2006, № 1 (13), էջ 37-41; **Редькин Н.В.** Особый порядок судебного разбирательства в системе уголовного процесса РФ. Автореф. дис. ... канд. юрид. наук - Краснодар, 2007, 34 էջ; **Любишкин Д.Е.** Особый порядок принятия судебного решения при согласии обвиняемого с предъявленным обвинением. Автореф. дис. ... канд. юрид. наук - Владимир, 2006, 21 էջ; **Монид М.В.** Особый порядок принятия судебного решения при согласии обвиняемого с предъявленным ему обвинением. Автореф. дис. ... канд. юрид. наук - Иркутск, 2007, 22 էջ, **Ղուկասյան Հ., Մելքոնյան Գ.** Տարբերակված ձևերը և դրա առանձնահատկությունները, //Գետություն և իրավունք, Երևան, 2007, N 1, (35), էջ 32-41 և ուրիշներ:

վան և Վ. Վ. Կոնինը գրում են. «... Կարճեցված վարույթի այս կան տեսակները հատուկ են բազմաթիվ երկրների քրեական դատավարություններին՝ Լեհաստան, Գերմանիա, Ֆրանսիա, Ավստրիա, Նորվեգիա, Մեծ Բրիտանիա, Իտալիա, Իսպանիա, Շվեդիա, Իսրայել, Թայլանդ: Սակայն նրանց համար հիմք ծառայեց մեղքի ընդունման մասին ամերիկյան «դասական» գործարքը»<sup>1</sup>: Այս տեսակետին համամիտ չեն իրավաբաններից շատերը: Մասնավորապես, Գ. Վ. Գլուխովը կարծում է, որ «հատուկ կարգի նման դատական վարույթները ռուսական քրեական դատավարության մեջ հայտնի էին նաև ավելի վաղ: 1864 թ. քրեական դատավարության Կանոնադրությամբ նախատեսված էր կարճեցված ընթացակարգ հաշտատար դատավորների կողմից ոչ ծանր հանցանքներ քննելիս»<sup>2</sup>: Այս բազմազան տեսակետների հեղինակները նաև ընդունում են ԱՄՆ-ի և Ռուսաստանի Գաշնության քրեական դատավարության ինստիտուտների միջև եղած տարբերությունները: Եվ դա միանգամայն հասկանալի է, քանի որ այն պայմանավորված է այդ պետությունների պատմական զարգացման առանձնահատկություններով:

Չնայած ԱՄՆ քրեական դատավարությունում գոյություն ունեցող «մեղքի ընդունման» գործարքի և Ռուսաստանի Գաշնության քրեական դատավարությունում առկա, իրեն առաջադրված մեղադրանքի հետ մեղադրյալի համաձայնության դեպքում գործող դատական որոշման կայացման հատուկ կարգի միջև եղած տարբերություններին՝ կարծիք կա, որ ռուսական ինստիտուտի էությունը, այնուամենայնիվ, «գործարքն» է: Այսպես՝ Ա. Գ. Սմոլինը նշում է. «Մենք կարծում ենք, որ մեր իրավունքում լիովին հասունացել են ՌԳՔ. դատ. օր.-ի 40-րդ գլխով նախատեսված ինստիտուտի մեկնաբանման պայմանները՝ «մեղքի ընդունման գործարքի» առումով»<sup>3</sup>:

---

<sup>1</sup> **Осипова Е.В., Конин В.В.** Особый порядок судебного разбирательства – «сделка» о признании вины? // Новое уголовно-процессуальное законодательство РФ: проблемы теории и практики. Калининград: Изд-во КГУ, 2003, էջ 101:

<sup>2</sup> **Глухов Д.В.** Особый порядок судебного разбирательства – дифференцированная форма общего порядка. // Правоведение. 2009, № 1, էջ 159:

<sup>3</sup> **Смолин А.Г.** Сделка о признании уголовного иска. Саранск: Изд-во Мордов. ун-та, 2005, էջ 106:

Չնայած նշյալ ինստիտուտների միջև եղած անառարկելի տարբերություններին՝ այնուամենայնիվ, նրանց միջև կան որոշ նմանություններ: Այսպես՝ Ուիլյամ Բերնամի կարծիքով. «Մեղքի ընդունման գործարքների առավելությունը դատախազի և դատավորի տեսանկյունից այն է, որ այդպիսի գործարքի վերաբերյալ համաձայնությունը տնտեսում է պետության ժամանակն ու ռեսուրսները, քանի որ եթե մեղադրյալն իրեն մեղավոր է ճանաչում, ապա վերանում է լրիվ ծավալով դատական քննություն անցկացնելու անհրաժեշտությունը»<sup>1</sup>: Տ. Ս. Գվորյակիման նշում է, որ Ռուսաստանի քրեական դատավարությունում դատական քննության հատուկ կարգի ընդունումը «դատարաններին հնարավորություն կընձեռի խուսափելու այն հանցագործությունների դատական քննությունից, որոնց համար կարող է նշանակվել 5 տարուց ոչ ավելի ազատագրկման պատիժ և վերանայել գործերը վճռաբեկ ու հսկողական վարույթի կարգով այն հիմնավորմամբ, որ դատարանի դատավճռում շարադրված եզրակացությունները չեն համապատասխանում քրեական գործի փաստացի հանգամանքներին, որոնք պարզվել էին առաջին ատյանի դատարանի կամ վերաքննիչ ատյանի կողմից (ՌԳ քր դատ. օր.-ի հոդված 317, մաս 1, հոդված 379), ինչը կհանգեցնի դատարանների ծանրաբեռնվածության բեռնաթափմանը, հատկապես՝ առաջին ատյանի: Բացի այդ, դա կօգնի տնտեսելու դատարանների պահպանության և նրանց գործունեության համար հատկացված միջոցները»<sup>2</sup>: Ինչպես երևում է, երկու տարբեր իրավաբանների տեսակետները երկու տարբեր երկրների ինստիտուտների վերաբերյալ բավականաչափ նման են: Երկու դեպքում էլ խոսքն այն մասին է, որ հիշյալ ինստիտուտները կոչված են տնտեսելու և զգալի չափով տնտեսում են պետական միջոցները, ինչպես նաև ժամանակը՝ կանխելով քաշքշուկը: Այդ նպատակն է հետապնդում նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում արագացված վարույթի կի-

---

<sup>1</sup> **Бернам Уильям** Правовая система США. 3-й выпуск. М.: «Новая юстиция», 2006, էջ 467:

<sup>2</sup> **Дворянкина Т.С.** Об особом порядке судебного разбирательства. // Материалы международной научно-практической конференции, посвящённой принятию нового уголовно-процессуального кодекса Российской Федерации. М., 2002, էջ 193:



րառումը, իհարկե, այն թերությունների վերացմամբ, որոնք առկա են նշված ինստիտուտի կիրառման հետ: Այս կապակցությամբ ուշագրավ է ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային պրակտիկան S. Քամայանի գործով արագացված վարույթ կիրառելու վերաբերյալ: ՀՀ քրեադատավարական գործող օրենսդրությամբ արագացված վարույթի կիրառման ընթացքում տուժողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության երաշխիքներ չեն սահմանվում: Այս հանգամանքը վկայում է նշված ինստիտուտի օրենսդրական ոչ պատշաճ կարգավորման մասին, քանի որ էապես սահմանափակվում է տուժողի արդարադատության մատչելիության իրավունքը:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը հռչակում և ամրագրում է արդարացի դատական քննության իրավունքը: Համաձայն այդ հոդվածի 1-ին մասի՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու (...) համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ (...) իր գործի հրապարակային քննության իրավունք»:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «իր խախտված իրավունքները վերականգնելու (...) համար» սահմանադրական ձևակերպումը որոշակիորեն վերաբերելի է նաև քրեական գործով տուժողին (նաև տուժողի իրավահաջորդին), քանի որ տուժողն այն անձն է, որի իրավունքները հանցագործությամբ խախտվում են: Ընդ որում՝ տուժողի իրավաչափ շահերի շրջանակում է իրեն հասցված վնասի վերականգնումը, իրեն վնաս պատճառած արարքի հանգամանքների լրիվ բացահայտումը ու դրա ճիշտ քրեաիրավական որակումը, իր նկատմամբ հանցանք կատարած անձի դատապարտումը և արդարացի պատժի նշանակումը: Այդ շահերի ապահովման երաշխիքներից է տուժողի իրավունքը, որպեսզի իր գործով դատական քննությունն ընթանա «արդարության բոլոր պահանջների պահպանմամբ»:

Տուժողի իրավահաջորդ Ա.Արշակյանը չի մասնակցել առաջին ատյանի դատարանում գործի քննությանը, և առաջին ատյանի դատարանն արագացված կարգի կիրառմամբ դատավճիռ է կայացրել նրա բացակայության պայմաններում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքից հետևում է, որ որևէ կանոն կամ ընթացակարգ չի սահմանում, որն ամրագրեր տուժող

կողմի (այդ թվում՝ տուժողի, տուժողի ներկայացուցչի և օրինական ներկայացուցչի, տուժողի իրավահաջորդի) ներգրավվածությունը արագացված կարգի կիրառման հարցում: Այլ կերպ՝ տուժող կողմի դիրքորոշումը հաշվի առնելու պահանջ ամրագրված չէ ո՛չ մեղադրողի համար՝ արագացված դատական քննության դեմ առարկելու կամ չառարկելու հարցը լուծելիս, և ո՛չ էլ դատարանի համար՝ արագացված դատական քննության անցնելու մասին որոշում կայացնելիս:

Վերադառնալով քննության առարկա գործի փաստերին՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ առաջին ատյանի դատարանը, տուժողի իրավահաջորդ Ա.Արշակյանի բացակայությամբ դատական քննության արագացված կարգ կիրառելով և դատավճիռ կայացնելով, սահմանափակել է հետագայում տուժողի իրավահաջորդ ճանաչված Է.Բաղդասարյանի՝ իր խախտված իրավունքները վերականգնելու սահմանադրորեն ամրագրված հնարավորությունը: Այլ կերպ՝ սույն գործով տեղի է ունեցել ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով նախատեսված՝ գործի արդարացի քննության սկզբունքի խախտում:

Այդ խախտումներն իրենց բնույթով էական են, սահմանափակվել է տուժողի իրավահաջորդի դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը, խախտվել են գործի արդարացի քննության և արդարադատության մատչելիության իրավունքները, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների համաձայն՝ դրանք հիմք են կայացված դատական ակտերն ամբողջությամբ բեկանելու և գործը քննած ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան նոր քննության ուղարկելու համար<sup>1</sup>: Տ. Քամալյանի գործով վճռաբեկ դատարանի կայացրած նշված նախադեպային որոշումն էապես նպաստեց դատական պրակտիկայում արագացված վարույթի գործերով տուժողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը:

Դրա հետ մեկտեղ պետք է նշել նաև մեկ այլ նմանության մասին՝ պատժի ժամկետի կրճատման: Ա. Ի. Շմարյովը գրում է. «Հարկ է նշել, որ մեղադրյալի կողմից հատուկ կարգով դատական քննութ-

---

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թվականի մարտի 16-ի թիվ ԵՇԳ/0097/01/09 գործով որոշումը:

յուն իրականացնելու մասին միջնորդություն ներկայացնելու համար խթան կարող է դառնալ պատժի ժամկետի անվերապահորեն կրճատումը մեկ երրորդով մեղադրական դատավճռի կայացման դեպքում»<sup>1</sup>: Ուիլյամ Բերնամը մեղքի ընդունման գործարքի մասին գրում է հետևյալը. «Մեղադրյալի շահերի տեսանկյունից միշտ ակնհայտ է՝ գործի քննության արդյունքների հեռանկարը դառնում է ավելի պարզորոշ, իսկ պատիժը՝ ավելի մեղմ, համեմատած այն պատժի հետ, որ կարող էր նշանակվել նրա նկատմամբ լրիվ ծավալով դատական քննության դեպքում»<sup>2</sup>: Ինչպես տեսնում ենք, այստեղ ևս առկա է ակնհայտ նմանություն ԱՄՆ-ի, Ռուսաստանի Գաշնության և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության ինստիտուտների միջև:

Այսպիսով՝ կասկած չի հարուցում այն, որ մեղադրյալի համաձայնության դեպքում դատական քննության արագացված կարգի կիրառումը առավելություն ունի դատավարության սովորական կարգի նկատմամբ այն առումով, որ կրճատվում է քրեական գործի քննության ժամանակը, տնտեսվում են պետական միջոցները, մեղադրյալը որոշակի վստահություն է ձեռք բերում դատական քննության՝ իր համար որոշակի ելքի նկատմամբ: Սակայն այդ առավելությունների հետ մեկտեղ, կան նաև լուրջ թերություններ, որոնք բազմիցս մատնացույց են արել քրեական դատավարության հիշյալ ինստիտուտի հետազոտողները: Թերություններից է, մասնավորապես, այն, որ հնարավոր են չարաշահումներ իրավապահպան մարմինների պաշտոնատար անձանց կողմից, որի հետևանքով կարող են տուժել քրեական դատավարությանը մասնակից անձանց և առաջին հերթին, մեղադրյալների իրավունքներն ու օրինական շահերը: Այսպես՝ Տ. Ս. Գվորյակինան նշում է, որ «քրեական դատավարության նման կարգ կիրառելիս կարող են առաջանալ բացասական հետևանքներ, որոնք կհանգեցնեն այն բանին, որ քննչական մար-

---

<sup>1</sup> **Шмарёв А.И.** Особый порядок судебного разбирательства – сделка о признании вины. // Проблемы совершенствования и применения законодательства о борьбе с преступностью: Материалы Всероссийской научно-практической конференции, посвящённой 95-летию Башкирского государственного университета. Часть I. Уфа: РИО БашГУ, 2004, էջ 223:

<sup>2</sup> **Бернам Уильям** Правовая система США. 3-й выпуск. М.: «Новая юстиция», 2006, էջ 467:

մինները մեղադրական ապացույցներ հայտնաբերելու և հավաքելու փոխարեն կփորձեն իրենց աշխատանքի «արդյունքները» ցուցադրել՝ մեղադրյալներից անօրինական միջոցներով «խոստովանական» ցուցմունքներ կորզելով»<sup>1</sup>: Քրեական դատավարության այդ ինստիտուտը քննադատվել է նաև այլ իրավաբանների կողմից<sup>2</sup>: Անհրաժեշտ է նշել, որ քննարկվող արագացված կարգի դեպքում՝ քրեական դատավարության մասնակիցների իրավունքների պաշտպանության արդյունավետ երաշխիքներ չկան: Քրեական դատավարության այդ համառոտված ձևը հետազոտողները ուղղակիորեն նշում են, որ դատավարության մասնակիցների իրավունքները զգալիորեն ոտնահարվում են: Այսպես՝ Գ. Վ. Գլուխովը գտնում է. «... դատավարական գործողությունների ու որոշումների բողոքարկման իրավունքը, որ երաշխավորված է քր դատ. օր.-ի 19-րդ հոդվածով, ուղղակիորեն սահմանափակված է քր դատ. օր.-ի 317-րդ հոդվածի այն հիմնավորմամբ, որ քր դատ. օր.-ի 316-րդ հոդվածի համաձայն կայացված դատավճիռը չի կարող բողոքարկվել վերաքննության ու վճռաբեկության կարգով այն հիմնավորմամբ, թե դատարանի դատավճռում շարադրված եզրակացությունները չեն համապատասխանում քրեական գործի փաստացի հանգամանքներին, որոնք պարզվել էին առաջին ատյանի դատարանի կամ վերաքննիչ ատյանի կողմից»<sup>3</sup>: Քրեական դատավարության վերոնշյալ հատուկ կարգը վերլուծելիս առանձին հետազոտողներ հանգում են ոչ միաթարական հետևությունների: Լ. Ի. Սամիտովան կարծում է, որ «դատական քննության ընթացքում առանց ապացույցների հետազոտության կայացված դատավճռից մնում է միայն անվանումը

---

<sup>1</sup> **Дворянкина Т.С.** Об особом порядке судебного разбирательства. // Материалы международной научно-практической конференции, посвящённой принятию нового уголовно-процессуального кодекса Российской Федерации. М., 2002, էջ 193:

<sup>2</sup> Տե՛ս **Кудрявцев В.Н.** Стратегия борьбы с преступностью. М.: Юристъ, 2003, էջ 91; **Петрухин И.Л.** Теоретические основы реформы уголовного процесса в России. Часть II. М., 2005, էջ 105; **Номаконов В.А.** Новый УПК для вчерашней преступности. // Реагирование на преступность: концепция, закон, практика. М., 2002, էջ 11, **Ղուկասյան Հ., Մելքոնյան Գ.** Տարբերակված ձևերը և դրա առանձնահատկությունները, // Պետություն և իրավունք, Երևան, 2007, N 1, (35), էջ 32-41:

<sup>3</sup> **Глухов Д.В.** Особый порядок судебного разбирательства – дифференцированная форма общего порядка. // Правоведение, 2009, № 1, էջ 161:

(ձևը)»<sup>1</sup>:

Սուր քննադատություն հնչել և հնչում է ոչ միայն մեղադրյալի համաձայնությամբ դատական քննության արագացված կարգի հասցեին, այլև ԱՄՆ-ի քրեական դատավարությունում մեղքի ընդունման «գործարքի»: Այսպես՝ Ն. Քրիստին լուրջ կասկածներ է հայտնում դատական քննության տվյալ ինստիտուտի արդար լինելու վերաբերյալ՝ անվանելով այն «գործարք արդարադատության հետ»<sup>2</sup>:

Չի կարելի թույլ տալ այնպիսի իրավիճակ, երբ օրենսդրորեն թույլ տրվի քրեական դատավարության մասնակիցների իրավունքների ու ազատությունների լուրջ սահմանափակումներ, ինչպես նաև պայմաններ ստեղծվեն իրավապահական մարմինների պաշտոնատար անձանց կողմից չարաշահումներ կատարելու, անկախ այն բանից, թե ինչ ազնիվ նպատակներ են դրանք հետապնդում: Հասկանալի է, որ, ինչպես երևում է վերոնշյալից, քրեական դատավարության կրճատված ձևերը արագացնում են դատավարությունը, մեծ չափով նվազեցնում ծախսերը, ինչը կարելի է դիտարկել որպես ճշմարտության հայտնաբերման ուղղությամբ դատավարության արդյունավետության բարձրացում: Սակայն քրեական դատավարության այդպիսի կրճատված ձևը կիրառելու դեպքում բացասակալնր անհամեմատ շատ է առավելություններից: Չէ՞ որ, պետք է հիշել, որ Հայաստանի Հանրապետությունը, գտնվելով Խորհրդային Միության կազմում, չխուսափեց անցյալում քրեական դատավարության մեջ տեղ գտած այնպիսի կրճատված ձևերից, ինչպիսիք են քրեական գործերի քննությունը հատուկ ժողովի, «եռյակների», «երկյակների» կողմից, երբ ոչ միայն իրավունքներն էին անտեսվում, այլև մարդկային կյանքը ոչինչ չարժեր: Այդ ժամանակաշրջանում քրեական դատավարության մեջ շատ բաներ կային, որոնք այսօր ընկալվում են որպես ծաղր, քանի որ դատավարության այդ կրճատված ձևերը, որ գոյություն ունեին այդ շրջանում, լիովին ստորադաս էին այդ ժամանակվա պետության բռնակալական էությանը: Հենց

---

<sup>1</sup> Самитова Л.И. Проблема единства и дифференциации уголовно-процессуальной формы в законодательстве, теории и практике Российского уголовного судопроизводства. //»Чёрные дыры» в Российском законодательстве. 2008, № 6, էջ 140:

<sup>2</sup> Кристи Н. Борьба с преступностью как индустрия. М.: Центр содействия реформе уголовного правосудия, 2001, էջ 157:

այդ ժամանակաշրջանում էր, որ բացարձակացվում էր մեղադրյալի կողմից իր մեղքի ընդունումը և հռչակվում «ապացույցների թագուհի»: Ցավոք, այսօր դժվար է հերքել այն, որ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում առանձին իրավակիրառողների (քննիչների, հետաքննության մարմինների և նույնիսկ դատավորների) մոտ չի առաջանում գայթակհություն մեղադրյալին հարկադրելու խոստովանել իր մեղքը, ինչը հղի է հանցանք չգործած անձանց դատապարտելու վտանգով:

Ինչ վերաբերում է քրեական դատավարության այլ պարզեցված ձևերին, որոնք գոյություն ունեն այլ երկրներում, ապա դրանց փոխառման հարցը հնարավոր է բարձրացնել միայն այդ երկրների փորձը մանրակրկիտ հետազոտությունից և ուսումնասիրությունից հետո, որոնցում այդ նորմերը գոյություն ունեն: Սակայն հարկ է նշել, որ պետք է մեծ զգուշությամբ վերաբերվել քրեական դատավարության պարզեցված ձևեր ներմուծելու հնարավորությանը, քանի որ դրանք, որպես կանոն, իրենց հետ բերում են գործի մեջ ընդգրկված անձանց իրավունքների որոշակի սահմանափակումներ, ինչպես նաև բարենպաստ պայմաններ են ստեղծում իրավապահական մարմինների պաշտոնատար անձանց համար՝ չարաշահումներ կատարելու:

Քրեական դատավարության ձևի վերլուծությունը հնարավորություն է ընձեռում եզրակացնելու, որ նրա յուրահատկություններից է մեծապես կախված մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների իրացումը: Ընդ որում՝ ձևը արտացոլում է տվյալ պետության գաղափարախոսությունը, այն նպատակները, որոնք հետապնդում է նա արդարադատություն իրականացնելիս: Ժողովրդավարական պետությունում դատավարության ձևի մեջ արտացոլվում է դատավարությանը մասնակից անձանց իրավունքների ու ազատությունների իրացման մեխանիզմը: Գատավարության ձևը հանդես է գալիս որպես դատավարությանը մասնակից անձանց իրավունքների ու ազատությունների պահպանման երաշխիք: Ուստի ձևի խախտումը կարող է հանգեցնել դատավարության մասնակիցների իրավունքների ու ազատությունների խախտման:

## ԳԼՈՒԽ 2.

# ԱՆՉԻ ԻՐԱՎՈՒՔՆԵՐԻ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՄԻՆՉԳԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ

### § 1. Անճի իրավունքների իրավական կարգավորումը քրեական գործ հարուցելու փուլում

Քրեադատավարական գործող օրենսդրությունում բավական հստակ ամրագրված է, թե ինչ է քրեական գործ հարուցելը: Դրան մկիրված է ՀՀ քր. դատ. օր.-ի 25-րդ գլուխը, որում հստակ սահմանված են քրեական գործ հարուցելու առիթները, հիմքերն ու դատավարական կարգը: Քրեական դատավարության իրավունքի տեսությունում ևս քրեական գործ հարուցելու փուլին զգալի տեղ է հատկացվել<sup>1</sup>: Ընդ որում՝ նշյալ փուլի բնորոշումն անմիճելի է. «Քրեա-

---

<sup>1</sup> Տե՛ս **Рахунов Р.Д.** Возбуждение уголовного дела в советском уголовном процессе - М.: Госюриздат, 1954, 88 էջ, **Рооп Х.А.** Возбуждение уголовного дела в советском уголовном процессе. Автореф. дис. ... канд. юрид. наук - Тарту, 1967, 21 էջ, **Фаткуллин Ф.Н.** Возбуждение уголовного дела в советском уголовном процессе. Автореф. дис. ... канд. юрид. наук - М., 1959, 16 էջ, **Даньшина Л.И.** Возбуждение уголовного дела и предварительное расследование в уголовном процессе России. Учебное пособие - М.: Экзамен, 2003, 192 էջ, **Усачев А.А.** Возбуждение уголовного дела в российском уголовном судопроизводстве. Автореф. дис. ... канд. юрид. наук - Иркутск, 2003, 22 էջ, **Мартинович И.И., Рахунов Р.Д.** Возбуждение уголовного дела в советском уголовном процессе. М.: Госюриздат, 1954, 88 էջ, // Советское государство и право. М.: Наука, 1956, № 4, էջ 148-151; **Бажанов М., Крупаткин Л., Резник А.** Возбуждение уголовного дела в советском уголовном процессе // Социалистическая законность. М., 1951, № 2, էջ 32-36, **Булахтин Н., Захаров К.** Возбуждение уголовного дела в советском уголовном процессе // Социалистическая законность. М., 1951, № 3, էջ 50-53, **Терентьев Д.** Возбуждение уголовного дела в советском уголовном процессе // Социалистическая законность. М., 1951, № 6, էջ 29-31, **Рыжаков А.П.** Возбуждение и отказ в возбуждении уголовного дела - М.: ИИД "Филинь", 1997, 248 էջ, **Михайленко А.Р.** Вопросы теории и практики возбуждения уголовного дела в советском уголовном процессе. Автореф. дис. ... канд. юрид. наук - Саратов, 1971, 17 էջ, **Крючатов И.А.** Правовая природа возбуждения уголовного дела в советском уголовном процессе. Автореф. дис. ... канд. юрид. наук - Одесса, 1969, 20 էջ, **Бажанов М.И.** Законность и обоснованность акта возбуждения уголовного дела в советском уголовном процессе // Советское государство и право в период развернутого строительства коммунизма. Тезисы докладов

կան գործ հարուցելը քրեական դատավարության սկզբնական փուլն է, որը բնութագրվում է խնդիրների, իրավահարաբերությունների մասնակիցների շրջանակի ինքնուրույնությամբ կամ իրավահարաբերությունների առարկայի, դատավարական միջոցների, ժամկետների, որոշումների բովանդակությամբ»<sup>1</sup>:

Քրեական գործ հարուցել ասելով ընդունված է հասկանալ՝ 1) քրեական դատավարության ինքնուրույն փուլ, 2) քրեադատավարական ակտ՝ որոշում, 3) քրեական դատավարության ինստիտուտ: Սրանցից յուրաքանչյուրն ունի իր ինքնուրույն իմաստը: Այսպես՝ Ս. Ա. Չելցովը քրեական գործի հարուցումն անվանում է ոչ թե փուլ, այլ քրեական դատավարության սկզբնական մաս: Քրեական դատավարության այդ սկզբնական պահի նշանակությունը շատ մեծ է: Իշխանության մարմինը միայն քրեական գործ հարուցելու մասին որոշում կայացնելուց հետո իրավունք է ստանում կատարելու բոլոր այն դատավարական գործողությունները, որոնց համար նրան լիազորում է քրեական դատավարության օրենսգիրքը<sup>2</sup>: Ներկայումս ոչ ոք չի կասկածում այդ երկու հասկացությունների տարբերությանը: Այսպես՝ Ն. Ա. Գրոմովը գտնում է, որ «Քրեական գործ հարուցելու

---

научной конференции. Воронеж: Изд-во Воронеж. ун-та, 1962, էջ 65-67, **Дмитриев И.Р., Федулов А.В.** Система поводов для возбуждения уголовного дела в современном уголовном судопроизводстве России // Современные проблемы государства и права. Сборник научных трудов. Нижний Новгород: Изд-во Нижегород. акад. МВД РФ, 2003, Вып. 1, էջ 173-183, **Ковалева М.Г.** Поводы и основание для возбуждения уголовного дела в российском уголовном процессе // Труды Санкт-Петербургского юридического института Генеральной прокуратуры Российской Федерации, էջ-Пб.: Изд-во С.-Петербург. юрид. ин-та Генеральной прокуратуры РФ, 2004, № 6, էջ 46-51, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Հատուկ մաս - Երևանի պետ. համալս. Եր.: ԵՊՀ հրատ., 2010, էջ 9-34, **Գիլբանդյան Ս.Ա.** Տուժողի իրավունքների և օրինական շահերի ապահովումը քրեական դատավարությունում. Եր. «Տիգրան Մեծ», 1998, էջ 74-11, **Հովսեփյան Ա, Շահինյան Վ. Վամբարյան Ա.** Սինչդատական վարույթի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում: Գիտագործնական ձեռնարկ, Եր.: ԵՊՀ հրատ., 2009, էջ 7-72 և ուրիշներ:

<sup>1</sup> Уголовно-процессуальное право Российской Федерации. / Отв. ред. П.А. Лупинская. М.: Юристъ, 2004, էջ 350:

<sup>2</sup> Տե՛ս **Чельцов М.А.** Советский уголовный процесс. М.: Государственное издательство юридической литературы, 1951, էջ 214:



փուլը քրեական դատավարության առաջին ինքնուրույն փուլն է, որի էությունը պետության իրավասու մարմնի (հետաքննության, նախաքննության, դատախազության, դատարանի) կողմից քրեական գործով վարույթի համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելն է և քրեական գործ հարուցելու կամ այն մերժելու մասին որոշում կայացնելը»<sup>1</sup>: Ինչպես երևում է այս սահմանումից, հեղինակը բավականին հստակորեն տարբերակում է վերոնշյալ հասկացությունները:

Առանձնահատուկ նշանակություն ունի քրեական գործ հարուցելու մասին որոշումը, քանի որ այն իրավաբանական փաստ է, որը նշանավորում է կոնկրետ քրեական գործի քննության սկիզբը և գործի ըստ էության լուծումը: Այդ ակտը հիմք է մի շարք իշխանական իրավահարաբերությունների առաջացման համար, որոնցում կողմերից մեկը հետաքննության մարմինը, քննիչը կամ դատախազն է:

Քրեական գործ հարուցելը քրեադատավարական օրենսդրությունում նախատեսվեց միայն խորհրդային շրջանում: Ընդ որում՝ դեռ այդ ժամանակշրջանում այն աչքի էր ընկնում այն նույն հատկանիշներով, ինչ այժմ: Դրան բնորոշ էին իր առջև դրված խնդիրների հատուկ շրջանակը, կայացված որոշումները, ժամկետները և այլն: Չնայած այն բանին, որ նշյալ փուլը հայտնի է դառնում, այսպես կոչված, պրոլետարիատի դիկտատուրայի շրջանում, այսինքն՝ ավտորիտար վարչակարգի ձևավորման ժամանակ, այն հարկ է դիտել որպես որոշակի երաշխիք իրավապահական մարմինների ու նրա պաշտոնատար անձանց կամայականություններից: Եթե գործնականում այն չէր երաշխավորում անձի իրավունքներն ու ազատությունները, ապա դրա պատճառը ոչ ինքն էր, ոչ էլ դրա ստեղծման գաղափարը, այլ այն, որ այդ ժամանակաշրջանի օրենսդրությունը կամ անտեսվում էր պետական մարմինների կողմից, կամ այլատեսակից էր հոգուտ տիրապետող գաղափարախոսության ու հայացքների:

Գատախրավական բարեփոխումներից հետո էլ նշյալ փուլը պահպանվել է, ինչը վկայում է, որ այն լիովին համապատասխանում է ժողովրդավարական պետության քրեական դատավարության

---

<sup>1</sup> Громов Н.А. Уголовный процесс России. М.: Юристъ, 1998, էջ 218:

խնդիրներին: Հաշվի առնելով, որ իրավունքներն ու ազատությունները կենտրոնական տեղ են զբաղեցնում քրեական դատավարության մեջ, և դրանց պաշտպանությունը հռչակվում է որպես նրա խնդիրներից մեկը, ակնհայտ է դառնում, որ, ըստ օրենսդրի մտահղացման, քրեական գործ հարուցելու փուլը նպաստավոր պայմաններ է ստեղծում դրան հասնելու համար: Ուստի անառարկելի է, որ «այդ փուլի նշանակությունն այն է, որ այն ապահովում է քրեական գործ հարուցելու օրինականությունն ու հիմնավորվածությունը, քաղաքացիների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը, որոնք չհիմնավորված քրեական գործ հարուցելու դեպքում կարող էին խախտվել, քանի որ քաղաքացիները անհիմն կներքաշվեին հանցագործության քննության ընթացակարգերի, հնարավոր է նաև՝ դատական վարույթների մեջ»<sup>1</sup>: Տվյալ փուլը կոչված է երաշխավորելու անձի իրավունքներն ու ազատությունները:

Քրեական գործ հարուցելն այլ փուլերի համեմատ աչքի է ընկնում գործողությունների ավելի փոքր ծավալով, որոնք կատարվում են դրա շրջանակներում: Սակայն այդ գործողություններն առանձնահատուկ են, որով տարբերվում են այլ փուլերում տեղի ունեցող գործողություններից, որոնց իրականացումը նախատեսված է քրեադատավարական օրենսդրությամբ: Նշյալ գործողությունների առանձնահատկություններից մեկն այն է, որ դրանցից ոչ բոլորն են բավականաչափ հստակորեն կարգավորված գործող օրենսդրության մեջ: Այսպես՝ ՀՀ քր. դատ. օր.-ի հոդված 180-ի մաս 2-ում ասվում է. «Նշված ժամկետում կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր, բացատրություններ, այլ նյութեր, ինչպես նաև կարող է կատարվել դեպքի վայրի զննություն, հանցագործություն կատարելու կասկածանքի բավարար հիմքերի առկայության դեպքում կարող են բերման և անձնական խուզարկության ենթարկվել անձինք, հետազոտման համար վերցվել նմուշներ, նշանակվել փորձաքննություն»: Խոսքը վերաբերում է հանցագործությունների մասին հաղորդումների ստուգմանը: Ինչպես տեսնում ենք, օրենսդիրը, թվարկելով հաղորդումը ստուգելու գործողությունները, չի հստակեցնում, թե

---

<sup>1</sup> Уголовный процесс Российской Федерации, / отв. ред. проф. А.П. Кругликов, М.: Проспект, 2009, էջ 335:

հատկապես որոնք են դրանց խնդիրները: Այդ մասին ՀՀ քր. դատ. օր.-ում ոչ մի տեղ չի խոսվում: Այսինքն՝ ակներև է քրեական գործ հարուցելու փուլում իրականացվող գործողությունների օրենսդրական կարգավորման առանձնահատկությունը:

Տվյալ փուլի մյուս ուշագրավ առանձնահատկությունը դրա կարճատևությունն է: Համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի 180-րդ հոդվածի 1-ին մասի. «Հանցագործությունների մասին հաղորդումները պետք է քննարկվեն և լուծվեն անհապաղ, իսկ գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելն ստուգելու անհրաժեշտության դեպքում՝ դրանց ստացման պահից 10 օրվա ընթացքում»: Այդ փուլի նշված առանձնահատկությունը լիովին համապատասխանում է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի՝ 1966 թվականի դեկտեմբերի 16-ին ընդունած Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի բանաձևում ամրագրված անձի իրավունքին, ըստ որի՝ «յուրաքանչյուր ոք իր նկատմամբ առաջադրված ցանկացած քրեական մեղադրանքի քննության ժամանակ, լիակատար հավասարության հիման վրա, նվազագույնը հետևյալ երաշխիքների իրավունք ունի... 3) առանց չարդարացված հապաղման դատվելու» (հոդ. 2): Քրեական գործ հարուցելու փուլի կարճատևությունը վերոնշյալ իրավունքի իրացման դեպքերից մեկն է:

Որքան էլ տարօրինակ է, բայց հենց անձի իրավունքների ու ազատությունների ապահովման անհրաժեշտությամբ են ներկայումս համառորեն հիմնավորում հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման ժամկետը երկարաձգելու առաջարկը: Ն. Ի. Գազետդինովը դա հիմնավորում է հետևյալ կերպ. «...Քրեական գործ հարուցելու մասին հարցը քննելիս, առաջին պլան անհրաժեշտ է մղել հենց անձի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը և քրեական դատավարության սկզբունքների համակարգի առավել լիարժեք իրացումը, որով, կարծում ենք, հնարավոր կլինի քրեական գործ հարուցելու մասին որոշում կայացնել միայն բավականաչափ հիմքերի առկայությունը ստուգելուց և պարզելուց հետո: Քրեական գործի հարուցման մասին հիմնավորված ու օրինական որոշում կայացնելու համար քրեադատավարական օ-

րենքով (Ռ-Գ քր. դատ. օր., հոդված 144) սահմանված եռօրյա ժամկետը բավարար չէ, և դա անհիմն կերպով հանգեցնում է քրեական գործի հարուցմանը և հետագայում մեղադրական ուղղվածությամբ ու քրեական դատավարության սկզբունքների խախտմանը»<sup>1</sup>: Յավոք, նշյալ մեջբերման հեղինակը հոդվածում ոչ մի տեղ չի հստակեցնում, թե անձի հատկապես որ իրավունքները կարող են խախտվել հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման կարճաժամկետության պատճառով: Նա նաև չի պարզաբանում, թե քրեական դատավարության որ սկզբունքները կարող են խախտվել հիշյալ հաղորդումների քննարկման կարճաժամկետության պատճառով: Միանգամայն ակնհայտ է, որ հեղինակի այս դիրքորոշումն արտացոլում է դատախազների, քննիչների, հետաքննության մարմինների ցանկությունը՝ ավելի տևական ժամանակ ունենալ հանցագործությունների մասին հաղորդումները քննարկելիս: Այդ ցանկությունը հասկանալի է: Հանցագործությունների մասին հաղորդումների մեծ քանակությունը դժվարացնում է դրանց քննարկումը կարճ ժամկետներում: Սակայն հազիվ թե հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման ժամկետների երկարաձգումով լուծվի այդ խնդիրը: Ուստի լիովին հնարավոր է, որ այդ ժամկետների երկարաձգումը ևս բավարար չլինի, և դրանք երկարաձգելու նոր առաջարկ հնչի հանում, ասենք, անձի իրավունքների ու ազատությունների պաշտպանության: Այսինքն՝ միանգամայն ակնհայտ է պարահոբքսը. որքան էլ տևական լինի հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման ժամկետը, միևնույնն է, այն չի բավականացնի քրեական գործ հարուցելու կամ մերժելու մասին որոշում կայացնելու համար:

Համեմատության մեջ ընդգծենք, որ Ռուսաստանի Դաշնությունում հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման ժամկետների մասին հարցը փոքր-ինչ այլ կերպ է լուծվում, քան Հայաստանի Հանրապետությունում: Այսպես՝ համաձայն Ռ-Գ քր. դատ. օր.-ի հոդված 144-ի մաս 1-ի. «Հետաքննիչը, հետաքննության մարմինը, քննիչը պարտավոր են ընդունել, ստուգել կատարված կամ

---

<sup>1</sup> Газетдинов Н.И. Некоторые вопросы, связанные с принятием решения о возбуждении уголовного дела, // Российский следователь, 2009, № 7, էջ 8:

նախատեսվող ցանկացած հանցագործության մասին հաղորդումը և սույն օրենսգրքով սահմանված իրենց իրավասության շրջանակներում դրա մասին որոշում կայացնել հիշյալ հաղորդումն ստանալուց ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում»: Ինչպես տեսնում ենք, Ռուսաստանի Դաշնության քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված է հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման ավելի կարճ ժամկետ, քան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ: Ուստի կարելի է պնդել, որ դրանով Ռուսաստանի Դաշնության քրեադատավարական օրենսդրությունը ավելի է համապատասխանում միջազգային պահանջներին, քանի որ սահմանում է քրեական գործ հարուցելու կամ մերժելու համար անհրաժեշտ որոշում կայացնելու ավելի սեղմ ժամկետներ:

Ի տարբերություն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ Ռուսաստանի Դաշնության քրեադատավարական օրենսդրությունում նախատեսված է նշյալ ժամկետի երկարաձգման հնարավորություն: Այսպես՝ ՌԴ քր. դատ. օր.-ի 144-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված է. «Քննչական մարմնի ղեկավարը, հետաքննության մարմնի պետն իրավունք ունի համապատասխանաբար՝ քննիչի, հետաքննիչի միջնորդությամբ մինչև 10 օր երկարաձգելու սույն հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետը, իսկ փաստաթղթային ստուգումների և վերստուգումների անհրաժեշտության դեպքում քննչական մարմնի ղեկավարը քննիչի միջնորդությամբ, իսկ դատախազը՝ հետաքննիչի միջնորդությամբ իրավունք ունեն երկարաձգելու այդ ժամկետը մինչև 30 օր»: Այսինքն՝ ստացված հաղորդումը ստուգելու եռօրյա ժամկետը, որ սահմանված է ՌԴ քր. դատ. օր.-ում, կարող է երկարաձգվել մինչև 10 օր, երբեմն էլ՝ մինչև 30 օր: Ընդ որում՝ ինչպես տեսնում ենք, այդ ժամկետի երկարաձգման ընթացակարգը բավականին պարզ է: Հանցագործության մասին հաղորդման քննարկման ժամկետը մինչև 10 օր երկարաձգվում է իրավապահական մարմինների կոնկրետ ստորաբաժանման ներսում, ավելի ստույգ՝ հետաքննության մարմնի պետի կամ քննչական մարմնի ղեկավարի կողմից: Հիշյալ հաղորդումների քննարկման ժամկետի երկարաձգման տվյալ կարգը թույլ է տալիս քննադատաբար վերաբերվելու այն պատճառների բացահայտմանը, որոնցով

քննիչը, հետաքննություն իրականացնողը դիմել են ժամկետը երկարաձգելու միջնորդությամբ: Այդ միջնորդությունները քննարկելիս քննչական մարմնի ղեկավարը, հետաքննության մարմնի պետը, բնականաբար, պիտի առաջնորդվեն նեղ գերատեսչական շահերով, այլ ոչ թե քաղաքացիների շահերով: Առավել ևս, որ հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման պրակտիկան ցույց է տալիս, որ նշված ժամկետները հաճախ չեն պահպանվում այն դեպքերում, երբ ենթադրվում է քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման կայացումը: Վերոնշյալ հաղորդումների քննարկումը տեղի է ունենում ավելի երկար ժամկետներում, սակայն որոշում կայացնելու տարեթիվը նշելիս այնպես է արվում, որ պահպանվի ժամկետները չխախտելու պայմանականությունը:

Հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման արդյունքների հիման վրա որոշում կայացնելու ժամկետների երկարաձգման հնարավորությունը պայմաններ է ստեղծում ավելորդ քաշքշուկների ու քրեական գործ հարուցելու կամ այն մերժելու մասին որոշման կայացումը անհիմն կերպով ձգձգելու համար: Դա ստեղծում է անորոշ վիճակ և դժվարություններ հարուցում այն անձանց համար, ովքեր փորձում են իրացնել իրենց իրավունքներն ու ազատությունները: Մասնավորապես, կատարված հանցագործություններից տուժած անձանց առնչությամբ ձգձգվում է նրանց որպես տուժող ճանաչելու ժամկետը, հետևաբար և՛ քրեական դատավարության մասնակցի՝ նրանց իրավունքի ճանաչումը: Նույնը արդարացիորեն վերաբերում է նաև իրավաբանական անձանց, ովքեր գույքային վնաս են կրել կատարված հանցագործությունների հետևանքով, որոնց առնչությամբ ձգձգվում է քրեական դատավարության մեջ նրանց տուժող և քաղաքացիական հայցվոր ճանաչելու պահը:

Հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման ժամկետների երկարաձգման հնարավորություն ընձեռելու հիմնական պատճառը այն մտավախությունն է, որ հնարավոր է քրեական գործեր հարուցվեն հանցագործության հատկանիշների առկայության մասին ոչ ստույգ մտահանգման հիման վրա: Նման սխալը հնարավոր է և պայմանավորված է այն բանով, որ սեղմ ժամկետներ

րում բավականին բարդ է մանրամասնորեն քննարկել հանցագործության մասին կոնկրետ դիմումը: Այդուհանդերձ, հազիվ թե արժե վախենալ այդ սխալը գործելուց: Չէ՞ որ քրեական գործ հարուցելը չպետք է կանխորոշի քրեական դատավարության հաջորդ փուլերի որոշումները, իսկ դրանք կարող են լինել և՛ քրեական գործի կարճումը, և՛ արդարացման դատավճիռը: Իսկ քրեական գործի քննության հետագա ընթացքի կանխորոշումը անիմաստ է դարձնում քրեական դատավարության բուն մրցակցային հիմքը: Այսինքն՝ ինչպե՞ս մրցակցել, եթե առանց այդ էլ արդեն ամեն ինչ պարզ է դառնում քրեական գործ հարուցելիս:

Հանցագործության մասին հաղորդումների քննարկման ժամկետը երկարաձգելու հնարավորության ընձեռումը անխուսափելիորեն կհանգեցնի, որ երկարաձգումը կդառնա ոչ թե բացառություն կանոնից, այլ իրավապահական մարմինների սովորական, ամենօրյա գործելաճ: ՀՀ քր. դատ. օր.-ի 180-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հաղորդումների քննարկման 10-օրյա ժամկետը, կարծում ենք, ամենաօպտիմալն է, քանի որ այդ ժամանակամիջոցում լիովին հնարավոր է հասցնել ընդունել դիմումը, մանրագնին ուսումնասիրել այն, պահանջել լրացուցիչ փաստաթղթեր, բացատրություններ, այլ նյութեր և որոշում կայացնել քրեական գործ հարուցելու կամ մերժելու մասին: Ավելի կարճ ժամկետում այդ անել հնարավոր չէ:

Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրության համար անընդունելի է նաև հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման ժամկետը երկարաձգելու կարգը: Այս կարգը չի նպաստում հաղորդումների քննարկման որակին, այլ միայն պատճառ է դառնում դրա անհարկի ձգձգման: Սիանգամայն ակնհայտ է, որ նշյալ ժամկետի երկարաձգումը նույնիսկ որոշ խնդիրներ է ծնում քրեական գործի հետագա քննության ընթացքում: Այսպես՝ եթե տևական ժամանակ քրեական գործ չի հարուցվում, ապա դա կարող է պատճառ դառնալ, որ չգրանցվեն ու գործին չկցվեն կարևոր իրեղեն ապացույցները, չհայտնաբերվեն ու չհարցաքննվեն տվյալ հանցագործության ականատեսները: Բացի այդ, երկար ժամանակ քրեական գործ չհարուցելուց կարող է օգտվել հանցագործը՝ թաքցնելու իր կատարած հանցագործությունը: Ընդ ո-

րում՝ հանցագործը կարող է դիմել գործողությունների, որոնց նպատակը կլինի շահագրգռել իրավապահական մարմինների պաշտոնատար անձանց, որոնցից կախված է կա՛ն գործի ճակատագիրը, կա՛ն այն անձը, որը քննարկում է հանցագործության մասին հաղորդումը, որպեսզի չարաշահեն իրենց պաշտոնական լիազորությունները՝ քրեական գործ հարուցելը անհիմն կերպով մերժելով: Այդ հանգամանքին, մասնավորապես, ուշադրություն են դարձրել Ա. Ս. Կարետնիկովը և Դ. Ա. Ջիպուննիկովը, որոնք ուղղակիորեն նշում են, որ հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման ժամկետների երկարատևությունը հաճախ վերածվում է հանցագործությունները թաքցնելու գործունեության՝ մտացածին հիմնավորումներ գտնելու ճանապարհով քրեական գործ հարուցելը մերժելու համար<sup>1</sup>:

Հետևաբար հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման երկար ժամկետները բարենպաստ պայմաններ են ստեղծում ամեն տեսակ չարաշահումների համար՝ ներառյալ նոր հանցագործությունների կատարումը, բայց արդեն իրավապահական մարմինների պաշտոնատար անձանց կողմից, որոնք օգտագործում են իրենց պաշտոնական դիրքը՝ ի վնաս հասարակության ու պետության շահերի: Դա նաև խոչընդոտում է քաղաքացիների կողմից արդարադատության մատչելիության իրենց իրավունքի իրականացմանը՝ հանցագործությամբ խախտված իրավունքները պաշտպանելու առումով: Ուստի հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման ցանկացած ձգձգում անընդունելի է ՀՀ քրեադատավարական օրենսդրության համար:

ՀՀ քրեադատավարական գործող օրենսդրության՝ քրեական գործ հարուցելու ընթացակարգի կարգավորման առանձնահատկություններից մեկը քրեական գործ հարուցելու առիթների սպառիչ թվարկումն է: Ըստ ՀՀ քր. դատ. օր.-ի 176-րդ հոդվածի՝ «Քրեական գործ հարուցելու առիթներն են՝

1) հանցագործությունների մասին ֆիզիկական և իրավաբանական անձանց հաղորդումները՝ ուղղված հետաքննության մարմնին, քննիչին, դատախազին.

---

<sup>1</sup> Տե՛ս **Зипунников О.А., Каретников А.С.** Сообщения о преступлениях – проблемы теории и практики, // Российская юстиция, 2006, № 12, էջ 53-54:



2) հանցագործությունների մասին լրատվության միջոցների հաղորդումները.

3) հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի, դատավորի կողմից հանցագործության մասին տվյալների, հանցագործության նյութական հետքերի և հետևանքների հայտնաբերումը՝ իրենց լիազորություններն իրականացնելիս»։ Դրանով Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրությունը տարբերվում է Ռուսաստանի Դաշնության քրեադատավարական օրենսդրությունից: Համաձայն ՌԴ քր. դատ. օր.-ի հոդված 140-ի մաս 1-ի՝ «Քրեական գործ հարուցելու առիթներն են.

1) հանցագործության մասին հայտարարությունը,

2) մեղայականով ներկայանալը,

3) կատարված կամ կատարվելիք հանցագործության մասին այլ աղբյուրներից ստացված հաղորդումը»:

Ինչպես տեսնում ենք, Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրությունում քրեական գործ հարուցելու առիթների ցանկը վերջնական է, քանի որ պարունակում է առիթների սպառիչ ցանկ: Մինչդեռ Ռուսաստանի Դաշնության քրեադատավարական օրենսդրությունում նշյալ ցանկը բաց է, քանի որ ՌԴ քր. դատ. օր.-ի 140-րդ հոդվածի 1-ին մասի երրորդ կետի ձևակերպման մեջ հղում է արվում այն հաղորդումների վրա, որոնք կարող են ստացվել անորոշ աղբյուրներից, որոնց մասին օրենքում անգամ ընդհանուր գծերով չի հիշատակվում, քանի որ հղում է կատարվում «այլ աղբյուրների»: Այսինքն՝ «ՌԴ քր. դատ. օր.-ը փաստորեն առիթ է ճանաչում հանցագործության մասին ցանկացած տեղեկատվություն, որը նույնականանում է դրա հեղինակի հետ (ֆիզիկական կամ իրավաբանական անձի)»<sup>1</sup>:

Քրեական գործ հարուցելու համար հստակորեն սահմանված առիթների բացակայությունը ՌԴ քրեադատավարական օրենսդրությունում կամայականությունների լայն հնարավորություններ է տալիս այն անձանց, ովքեր լիազորված են քրեական գործ հարու-

---

<sup>1</sup> Научно-практический комментарий к Уголовно-процессуальному кодексу Российской Федерации, / Под общ. ред. В.М. Лебедева; Науч. ред. В.П. Божьев, М.: Спарк, 2002, էջ 300:

ցելու: Դա ակնհայտ սպառնալիք է մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների նկատմամբ: Ինչպես իրավագիտրեն նկատում է Վ. Ի. Չաժիցկին. «Վերջին առիթը ամենախճճվածն է, որովհետև արտահայտված է գնահատանքային «այլ» տերմինով, որի բովանդակությունը պետք է պարզեն իրավակիրառ մարմինների պաշտոնատար անձինք»<sup>1</sup>: Դա պաշտոնական կամայականությունների մեծ դաշտ է ստեղծում այն անձանց համար, ովքեր լիազորված են որոշելու քրեական գործ հարուցելու հարցը, քանի որ նրանք կարող են մեկնաբանել «այլ» բառի բովանդակությունն ըստ իրենց հայեցողության՝ առաջնորդվելով պատեհ առիթի շահերով: Այդ շահերը կարող են լինել անձնական կամ ծառայության շահերից բխող թյուրըմբռնում, երբ, օրինակ, պետք է ցույց տալ հանցագործությունների բացահայտման այս կամ այն «չափաձողը» կամ ստանալ հանցավորության որոշակի տեսակի դեմ պայքարի արդյունավետության ցուցանիշը:

Որոշ հեղինակներ, մեկնաբանելով նշված նորմը, փորձում են շտկել վիճակը՝ յուրովի բացատրելով դա: Այսպես, Ա. Վ. Սմիռնովը և Կ. Բ. Կալինովսկին գրում են. «Հանցագործությունների մասին այլ աղբյուրներից ստացված հաղորդումը՝ որպես քրեական գործ հարուցելու առիթ, իրականում հանցագործության հատկանիշների հայտնաբերման վերաբերյալ զեկույցի (ռապորտի) տեսք ունի»<sup>2</sup>: Իսկայես, համաձայն ՌԴ քր. դատ. օր.-ի.՝ «Կատարված կամ նախապատրաստվող հանցագործության մասին հաղորդումը, որն ստացվել է այլ աղբյուրներից, քան նշված է սույն օրենսգրքի 141-րդ և 142-րդ հոդվածներում, ընդունում է այն անձը, որը ստանում է նշյալ հաղորդումը, որի առնչությամբ կազմվում է զեկույց հանցագործության հատկանիշների հայտնաբերման մասին»: Սակայն դրանից ամենևին էլ չի բխում, ինչպես ենթադրում են վերոնշյալ հեղինակները, թե «դատավարական օրենքը նախատեսում է հանցա-

---

<sup>1</sup> **Зажницкий В.И.** Какие изменения и дополнения целесообразно внести в правовой институт возбуждения уголовного дела. Материалы международной научно-практической конференции «Уголовно-процессуальный кодекс Российской Федерации: год правоприменения и преподавания», М., 2004, էջ 220:

<sup>2</sup> **Смирнов А.В., Калиновский К.Б.** Комментарий к Уголовно-процессуальному кодексу Российской Федерации. Постатейный, М.: КНОРУС, 2007, էջ 405:

գործության մասին սկզբնական տեղեկատվության աղբյուրների սպառիչ ցանկ, որոնք կարող են դառնալ քրեական գործ հարուցելու առիթ»<sup>1</sup>:

Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրությունը քրեական գործ հարուցելու համար անհրաժեշտ առիթները թվարկելիս չի գործածում այնպիսի անորոշ արտահայտություն, ինչպիսին ռուսաստանյան օրենսդրության մեջ կիրառվող «այլ» բառն է: Դրա շնորհիվ ՀՀ քր. դատ. օր.-ում ամրագրված քրեական գործ հարուցելու համար անհրաժեշտ առիթների ցանկը սպառիչ է:

ՀՀ քր. դատ. օր.-ի 176-րդ հոդվածում թվարկված՝ քրեական գործ հարուցելու համար անհրաժեշտ առիթներն ավելի հստակ են ձևակերպված, քան ՌԴ քրեադատավարական օրենսդրությունում: Այսպես՝ ռուսաստանյան օրենսդրությունում չի նշվում այնպիսի չափազանց կարևոր առիթ, ինչպիսին զանգվածային լրատվամիջոցների հաղորդումն է: Մինչդեռ ցանկացած ժողովրդավարական պետությունում զանգվածային լրատվամիջոցները ոչ միայն օժանդակում են այնպիսի կարևոր ազատության իրացմանը, ինչպիսին խոսքի ազատությունն է, այլև գործում միջոց են, որի օգնությամբ յուրաքանչյուր քաղաքացի, մարդն ու հասարակությունը ընդհանրապես կարող են ներգործել պետության և նրա առանձին պաշտոնատար անձանց գործունեության վրա: Ներգործության նման մեխանիզմներից մեկը, որի օգնությամբ կարող են վերանալ ամեն տեսակ խոչընդոտները պետական մարմինների գործունեության մեջ, լրատվության միջոցներով արտահայտվելու հնարավորությունն է, որը միաժամանակ կարող է հասցեագրվել և՛ պետությանը, որին ցույց են տրվում իր գործունեության մեջ առկա մասնակի շեղումները, և՛ հասարակությանը, որն իրազեկվում է այդօրինակ շեղումների մասին, որոնք տեղի են ունենում պետության որոշ պաշտոնատար անձանց մեղքով: Քրեական գործ հարուցելու առիթների մեջ զանգվածային լրատվամիջոցների հաղորդման բացակայությունը ստեղծում է բավականին տարօրինակ մի վիճակ, երբ զանգվածային լրատվամիջոցներում քննարկվում է կոնկրետ հանցագործություն

---

<sup>1</sup> Նույն տեղում:

կատարելու փաստ, օրինակ, պաշտոնեական հանցագործության, իսկ իրավապահական մարմինները չեն ձեռնարկում ոչ մի միջոց՝ այդ հանցագործությունը խափանելու կամ այն բացահայտելու և քննելու: Ուստի Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրությունում քրեական գործ հարուցելու հիշյալ առիթի ամրագրումը համապատասխանում է պետության ժողովրդավարական էությանը և նպաստում լրատվության միջոցների հեղինակության բարձրացմանը, որոնց միջոցով իրացվում է խոսքի ազատությունը:

Համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի 179-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Լրատվության միջոցների հաղորդումներ են հանդիսանում կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների մասին հաղորդումները մամուլում, ռադիոյով, հեռուստատեսությամբ, ինչպես նաև լրատվության միջոցներին հասցեագրված և չիրապարակված հաղորդակցությունները»: Հիշյալ նորմից երևում է, որ օրենսդիրն անհրաժեշտ է համարում ուշադրություն դարձնել գործնականում ժամանակակից բոլոր լրատվամիջոցներին: Դա, մի կողմից՝ կոչված է նպաստելու հանցագործությունների բացահայտման արդյունավետությանը, մյուս կողմից՝ մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների հնարավոր խախտումներին իրավապահական մարմինների ժամանակին արձագանքմանը և այդ խախտումների կանխմանը: Սակայն անհրաժեշտ է ուշադրություն դարձնել, որ նշյալ նորմում հիշատակվում են ոչ բոլոր լրատվամիջոցները: Այսպես՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 179-րդ հոդվածի 1-ին մասում «լրատվության միջոցներ» հասկացության սահմաններից դուրս է մնում ինտերնետը: Միանգամայն ակնհայտ է, որ այն նույնպես լրատվության միջոց է, թեկուզ և տարբերվում է բազմաթիվ առանձնահատկություններով: Այդպիսի առանձնահատկություններից մեկն այն է, որ ինտերնետում զետեղված որոշ հաղորդումներ կարող են լինել անանուն: Այդ պատճառով անհրաժեշտ է, որ որպես առիթ դիտվեն միայն ինտերնետային այն հաղորդումները, որոնք տեղ են գտել պաշտոնապես գրանցված ինտերնետ-պարբերականների էջերում: Դա անհրաժեշտ է տվյալ տեղեկատվության աղբյուրը պարզելու համար, որպեսզի ստուգվի դրա հավաստիությունը: Բացի այդ, անհրաժեշտ է հաշվի առնել, որ լրատվության միջոցները զար-

զանում են, իսկ դա ենթադրում է, որ դրանց նոր ձևեր են ի հայտ գալիս: Թե ինչպիսին կլինեն այդ ձևերը, կարելի է միայն ենթադրել: Սակայն քանի որ օրենքը ենթադրությունների ու կռահումների ոլորտ չէ, թեկուզ և դրանք լինեն միանգամայն հիմնավորված, ապա, կարծում ենք, որ օրենսդիրը լրատվության միջոցներ տերմինը մեկնաբանելիս չպիտի սահմանափակվի միայն այդ միջոցների մի շարք տեսակների թվարկումով: Ավելի ճիշտ կլիներ խոսել ոչ թե լրատվության միջոցների, այլ զանգվածային լրատվության միջոցների մասին, քանի որ լրատվության միջոցը լրատվության ցանկացած աղբյուր է՝ ներառյալ կոնկրետ անձանց հասցեագրված նամակը, գրությունը: Ուստի նշյալ նորմը հարկավոր է ձևակերպել հետևյալ կերպ. «Լրատվության միջոցների հաղորդումներ են կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների մասին հաղորդումները մամուլում, ռադիոյով, հեռուստատեսությամբ, օրենքով սահմանված կարգով գրանցված լրատվության այլ աղբյուրներում, ինչպես նաև լրատվության միջոցներին հասցեագրված և չիրապարակված հաղորդակցություններում»:

Օրենքը միանշանակ լուծում է տալիս անանուն հայտարարությունների հարցին: ՀՀ քր. դատ. օր.-ի 177-րդ հոդվածի 7-րդ մասում սահմանված է. «Չստորագրված կամ կեղծ ստորագրությամբ կամ մտացածին անձի անունից գրված նամակը, հայտարարությունը կամ հանցագործության մասին այլ անանուն հաղորդումը քրեական գործ հարուցելու առիթ չէ»:

Ինչպես տեսնում ենք, օրենսդրությունը մերժում է անանուն հայտարարությունները որպես քրեական գործ հարուցելու առիթ կիրառելու ցանկացած հնարավորություն: Այդ եղանակով լուծելով հիշյալ հարցը՝ օրենսդիրն ըստ էության հռչակել է անցյալ հարյուրամյակի 20-60-ական թվականներին Խորհրդային Միությունում տարածված բռնությունների արատավոր գործելաճիմ չվերադառնալու իր վճռականությունը: Չէ՞ որ այդ շրջանում անանուն հայտարարությունների նկատմամբ վերաբերմունքը միանգամայն այլ էր: 1923 թ. քր. դատ. օր.-ում գրված էր. «Անանուն հայտարարությունները քրեական հետապնդում հարուցելու առիթ կարող են դառնալ միայն հետաքննության մարմինների կողմից դրանց նախնական ոչ

հրապարակային ստուգումից հետո»: Այս դրույթի գործողության պատճառով այդ ժամանակաշրջանում ոչ մի մարդ չէր կարող իրեն պաշտպանված զգալ, քանի որ նրա իրավունքները ցանկացած պահի կարող էին խախտվել ամեն տեսակ սուտ մատնություններով, որոնք շարադրված էին անանուն հայտարարություններում: Քրեական գործ հարուցելը կրկին տարբեր անձանց միջև հաշիվներ մաքրելու գործիք չդարձնելու ձգտմամբ է թելադրված օրենսդրի կողմից քրեական գործ հարուցելու համար անանուն հայտարարությունը որպես առիթ չճանաչելը:

Ընդհանուր առմամբ հարկ է ընդունել, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունում բավականին հստակ ու պարզ են քվարկված քրեական գործ հարուցելու բոլոր հնարավոր առիթները: Դրանք այնպես են ձևակերպված, որ մեկնաբանության բազմանշանակություն չեն ենթադրում, որի շնորհիվ իրավապահպան մարմինների պաշտոնատար անձինք այս նորմը կիրառելիս դժվարությունների չեն հանդիպում: Դա նաև երաշխավորում է իրավունքների ու ազատությունների պաշտպանվածությունը քրեական գործ հարուցելու փուլում:

## **§ 2. Քրեական գործ հարուցելու փուլում իրականացվող դատավարական և քննչական գործողությունների արդի հիմնախնդիրները**

Քրեական գործ հարուցելու փուլում առկա հիմնախնդիրները մեծապես պայմանավորված են դատավարական այս փուլում իրականացվող գործողություններով: Քրեական գործ հարուցելու փուլը բնութագրվում է քննչական և դատավարական գործողությունների սահմանափակ քանակությամբ: Այդպիսի սահմանափակությունը երաշխիք է անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար: Չնայած քրեական գործի հարուցման փուլի ինստիտուտը բազմից ուսումնասիրվել է քրեական դատավարության իրավունքի տեսության մեջ, բայց շատ հիմնախնդիրներ, որոնք առկա էին նաև նախկին օրենսդրության մեջ, իրենց լուծումը չստացան գործող քրեական դատավարության օրենսգրքում: Այս հանգամանքը հիմք է տալիս քրեական դատավարության գործող օրենսդրության

շրջանակներում ներկայացնելու այդ հիմնախնդիրները և փորձել առաջարկել դրանք լուծելու հնարավոր տարբերակներ: Իհարկե, այլ երկրների, մասնավորապես Ռ-Գ օրենսդրության վերլուծությունը նույնպես ցույց է տալիս, որ այդ հիմնախնդիրներն առկա են նաև այլ երկրների օրենսդրությունների մեջ:

ՀՀ քր. դատ. օր.-ի 180-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված է. «Հանցագործությունների մասին հաղորդումները պետք է քննարկվեն և լուծվեն անհապաղ, իսկ գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելն ստուգելու անհրաժեշտության դեպքում՝ դրանց ստացման պահից 10 օրվա ընթացքում»: Նույն հոդվածի 2-րդ մասում սահմանված է. «Նշված ժամկետում կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր, բացատրություններ, այլ նյութեր, ինչպես նաև կարող է կատարվել դեպքի վայրի զննություն, հանցագործություն կատարելու կասկածանքի բավարար հիմքերի առկայության դեպքում կարող են բերման և անձնական խուզարկության ենթարկվել անձինք, հետազոտման համար վերցվել նմուշներ, նշանակվել փորձաքննություն»: Ինչպես երևում է հիշյալ նորմի բովանդակությունից, հաղորդումների քննարկումը դրա համար լիազորված մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից կարող է ներառել քննչական շորս գործողություններ իրականացնելը, ինչպես նաև փաստաթղթեր, բացատրություններ, այլ նյութեր պահանջելը, հանցագործություն կատարելու կասկածանքի բավարար հիմքերի առկայության դեպքում անձին բերման ենթարկելը:

Համեմատության համար ընդգծենք, որ Ռ-Գ քր. դատ. օր.-ի 144-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է. «Հետաքննիչը, հետաքննության մարմինը, քննիչը պարտավոր են ընդունել, ստուգել կատարված կամ նախատեսվող հանցագործության մասին ցանկացած հաղորդում և սույն օրենսգրքով սահմանված իրավասության շրջանակներում դրա վերաբերյալ կայացնել որոշում նշյալ հաղորդումը ստանալուց ոչ ուշ քան 3 օրվա ընթացքում: Հանցագործության մասին հաղորդումը ստուգելիս հետաքննության մարմինը, հետաքննիչը, քննիչը իրավունք ունեն պահանջել փաստաթղթային ստուգումների, վերստուգումների վարույթ իրականացնել՝ դրանցում ներգրավելով մասնագետների»: Հայաստանի և Ռուսաստանի օրենսդրություններում այս երկու նորմի համադրումը հնարավորութ-

յուն է ընձեռում նկատելու, որ ըստ ՀՀ քր. դատ. օր.-ի 180-րդ հոդվածի՝ հանցագործության մասին հաղորդումը պետք է *քննարկվի ու լուծվի*, իսկ համաձայն ՌԳ քր. դատ. օր.-ի 144-րդ հոդվածի, 1-ին մասի. հաղորդումը պետք է *ընդունվի ու ստուգվի*: Տերմինաբանական այս անհամապատասխանությունը երկու երկրների օրենսդրություններում չի հանգեցնում որևէ տարբերության համապատասխան մարմինների ու պաշտոնատար անձանց իրականացրած գործողությունների էությունը բնորոշելիս: Մակայն այսպիսի համադրումը թույլ է տալիս տեսնել այն գործողությունների էությունը, որոնք իրականացվում են ստացված հաղորդման հիման վրա: Գրա էությունն այն է, որ օրենքով լիազորված համապատասխան մարմիններն ու պաշտոնատար անձինք ստուգում են հաղորդումներում առկա տեղեկությունների հավաստիությունը: Ինչպես իրավացիորեն նկատում է Մ. Ե. Սմորգունովան. «Նյութերի նախապատրաստման նպատակը որպես առիթ ծառայող տեղեկատվության հավաստիությունը պարզելն է, ինչպես նաև ապացուցողական տեղեկատվության «հայթայթումը», որը հաստատում է հանցագործության հատկանիշների մասին վկայող տվյալների բավարար լինելը»<sup>1</sup>:

Այս առումով կարող ենք պնդել, որ Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրությամբ ևս իրականացվում է հանցագործության մասին հաղորդման ստուգում: Առավել ևս, որ դա պարզ երևում է վերը նշված ՀՀ քր. դատ. օր.-ի 180-րդ հոդվածի բովանդակությունից: Ընդ որում՝ անշուշտ ավելի ցանկալի կլիներ, որ օրենսդիրը ուղղակիորեն նշեր, որ հանցագործության մասին հաղորդումը պետք է ստուգել:

Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրության մեջ թեև նշված են հանցագործության մասին հաղորդումը ստուգելու միջոցները, սակայն, դրանով հանդերձ, չի հստակեցվում, թե որն է դրանց էությունը: Այսինքն՝ օրենքում նշված չէ լրացուցիչ փաստաթղթեր, բացատրություններ և այլ նյութեր պահանջելու կարգը: Ավելին, չի նշվում, թե այդ ամենը ինչպես պիտի արձանագրվի: Դա, թերևս, մասամբ պայմանավորված է այն բանով, որ

---

<sup>1</sup> **Сморгунова М.Е.** Теоретические основы и практика проверки досудебных доказательств в уголовном процессе. Дисс. канд. юрид. наук. Нижний Новгород, 2004, էջ 102:



հիշյալ գործողությունները կարծես գտնվում են քրեական դատավարության սահմաններից դուրս, քանի որ այն սկսվում է քրեական գործ հարուցելու պահից: Այդ պատճառով լրացուցիչ փաստաթղթեր, բացատրություններ և այլ նյութեր պահանջելը չի կարելի դիտել որպես դատավարական գործողություն, քանի որ բուն գործընթացը, այսինքն՝ քրեական գործի վարույթը դեռ չի սկսվել: Ընդ որում՝ կասկած չկա, որ արդեն քրեական գործ հարուցելու փուլում պետք է կիրառվեն կատարված կամ նախատեսվող հանցագործության մասին հաղորդումը ստուգելու բոլոր միջոցները: Դա անհրաժեշտ է, որ անհիմն կերպով քրեական գործ չհարուցվի, որը կարող է հանգեցնել դատավարական գործողությունների, որոնք սահմանափակում են առանձին քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները:

Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրության մեջ ոչինչ ասված չէ այն մասին, թե ինչ է լրացուցիչ փաստաթղթեր և այլ նյութեր պահանջելը: Այնքան էլ հասկանալի չէ, թե ինչ փաստաթղթեր ու նյութեր են դրանք: Օրենքը չի սահմանում դրանց ցանկը կամ գոնե ինչ-որ չափով ուրվագծում դրանք: Դա բարենպաստ պայմաններ է ստեղծում քրեական գործ հարուցելու հարցում լիազորված մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից կամայական որոշումների կայացման համար: Չէ՞ որ, ըստ էության, ինչ էլ պահանջի նշյալ պաշտոնատար անձը կամ պետական մարմինը, պարտավոր կլինեն ներկայացնել նրանց: Ընդ որում՝ հասկանալի չէ՝ հետագայում որպես ապացույց կարելի՞ է օգտագործել այդ եղանակով պահանջված փաստաթղթերն ու նյութերը, թե՞ ոչ: Իրավապահպան մարմինների գործունեության մեջ դրանք առավել հաճախ դիտվում են որպես այլ փաստաթղթեր՝ համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի:

Սահմանված չեն նաև բացատրություններ պահանջելու կարգը և ձևը, ինչը գործնականում հաճախ է հանգեցնում քաղաքացիների սահմանադրական իրավունքների և ազատությունների բազմաթիվ խախտումների: Այսպես՝ բավականին տարածված են այն դեպքերը, երբ անձանցից բացատրություններ են ստանում առանց պարզաբանելու նրանց այն կանոնները, որոնց համաձայն նրանք իրավունք ունեն իրենց, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ վկայություններ չտալ: Ընդ որում՝ հիշյալ անձանց եթե

նույնիսկ ներկայացվում են այդ կանոնները, տրվում է կեղծ պարզաբանում, իբր այդ կանոնը տարածվում է միայն քննչական գործողությունների վրա, իսկ բացատրությունն այդպիսին չի համարվում: Դրանով իսկ վերոնշյալ անձանց, ըստ էության, հարկադրում են իրենք իրենց, ամուսինների, մերձավոր ազգականների վերաբերյալ ցուցմունքներ տալու: Դա արվում է կոնկրետ հանցագործությունների հայտնաբերման ու բացահայտման շահերով քողարկվելով, բայց հակառակ մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների մասին սահմանադրական նորմերի: Հետագայում նման բացատրություններ հաճախ են օգտագործվում նախաքննության ընթացքում, որպեսզի ձեռք բերվեն քննչական մարմիններին «ձեռնտու» համապատասխան ցուցմունքներ: Բնության ընթացքում այդպիսի բացատրություններ հաճախ կիրառվում են որպես հոգեբանական ներգործության միջոց համապատասխան անձի նկատմամբ: Ընդ որում՝ նրանք, ովքեր դա կիրառում են, հրաշալի գիտեն, որ իրենց այդ բացատրությունները չեն համապատասխանում օրենքի պահանջներին, սակայն օգտվում են այն բանից, որ սահմանված չէ, թե ինչ ասել է՝ «բացատրություններ ստանալ»: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ հարցաքննվողը դեռ քրեական դատավարության մասնակից չէ, նա պատասխանատվություն չի կրում ցուցմունքներ չտալուց հրաժարվելու և կեղծ ցուցմունքներ տալու համար, նա նաև չի կարող հարկադրական եղանակով բերման ենթարկվել:

Այսինքն՝ պետք է ընդունել, որ հանցագործության մասին հարողումը ստուգելիս քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները որևէ կերպ երաշխավորված չեն: Դրա պատճառը հստակ սահմանված դատավարական ձևի բացակայությունն է, որը կարող էր ապահովել այդպիսի երաշխիք: Սակայն դրա բացակայության պատճառով բարենպաստ պայմաններ են ստեղծվում քրեական գործ հարուցելու և համապատասխանաբար վերոնշյալ ստուգումն անցկացնելու իրավունքով օժտված անձանց կողմից կամայականություններ թույլ տալու համար:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում վերստուգումներ, գույքագրումներ, այլ ստուգողական գործողություններ կատարելու դատավարական կարգի բացակայությունը որոշակի խնդիրներ առաջացրեց դատական պրակտիկայում: Մասնավորապես, ՀՀ սահմանադրական դատարանը 2009 թվականի հոկտեմբերի 27-ին

քննեց ՀՀ վարչական դատարանի դիմումը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55 հոդվածի, 4-րդ մասի 5-րդ կետի, «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 6-րդ մասի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործը: ՀՀ սահմանադրական դատարանը, ելնելով ՀՀ օրենսդրության վերլուծությունից, արդարացիորեն արձանագրում է հետևյալը, որ «դիմողը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետին անդրադառնում է ոչ թե վիճարկվող նորմի բովանդակության սահմանադրականության տեսանկյունից, այլ բարձրացնում է օրենսդրական բացի խնդիր: ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողի փաստարկները չեն վկայում վիճարկվող դրույթի անորոշության կամ ոչ իրավաչափ լինելու մասին: Տվյալ դրույթը կոչված է կարգավորելու քննիչի՝ որպես քրեական դատավարության մասնակցի և քրեական գործի նախաքննության շրջանակներում դրա բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության համար լիազորված և պատասխանատու պաշտոնատար անձի լիազորությունը՝ վերստուգումներ, գույքագրումներ և այլ ստուգողական գործողությունների կատարում պահանջելու վերաբերյալ, որպիսիք քննիչի գնահատմամբ կոնկրետ գործով օբյեկտիվ ճշմարտության բացահայտմամբ պայմանավորված խնդիրներ լուծելու համար (ապացուցման ենթակա հանգամանքների պարզում, ապացույցների ձեռքբերում, դրանց գնահատում և այլն):

Սահմանադրական դատարանը գտնում է, որ քննիչին օրենքով և վիճարկվող վերոհիշյալ նորմով այդպիսի լիազորություն վերապահելն իրավաչափ է, համապատասխանում է նրա գործառույթներին և ինքնին սահմանդրականության խնդիր չի հարուցում<sup>1</sup>:

---

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 27-ի որոշումը ՀՀ վարչական դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55 հոդվածի, 4-րդ մասի 5-րդ կետի, «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 6-րդ մասի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով, ՄԳ-Ո-836:

ՀՀ սահմանադրական դատարանի նշված որոշումը մեկ անգամ ևս հիմք է տալիս նշելու, որ վերոնշյալ ստուգումներն անցկացնելիս քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները երաշխավորելու համար անհրաժեշտ է, որ օրենսդիրը նախ՝ հստակ սահմանի այն գործողությունների ցանկը, որոնք կարող են կատարել դրա համար լիազորված անձինք, երկրորդ՝ սահմանի այդ գործողությունների իրականացման կարգը, երրորդ՝ նախատեսի այն անձանց իրավունքների ու ազատությունների երաշխավորումը, որոնք ներգրավվում են հիշյալ գործողությունների իրականացմանը: Ըստ այդմ՝ այն գործողությունների ցանկը, որոնք կարող են իրականացվել հանցագործությունների մասին հաղորդումները քննարկելիս, ինչը տրված է ՀՀ քր. դատ. օր.-ի 180-րդ հոդվածի 2-րդ մասում, անհրաժեշտ է համարել վերստուգումների, գույքագրումների և փաստաթղթային ստուգումների մասին դրույթներով: Այս նորմը պետք է շարադրել հետևյալ կերպ. «Նշված ժամկետում կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր, բացատրություններ, այլ նյութեր, անհարաժեշտության դեպքում կատարել վերստուգումներ, գույքագրումներ և փաստաթղթային ստուգումներ, ինչպես նաև կարող է կատարվել դեպքի վայրի զննություն, իսկ անհետաձգելի դեպքերում կատարվել հետազոտման համար նմուշներ վերցնել և նշանակվել փորձաքննություն»:

Վերստուգումների, փաստաթղթային ստուգումների և գույքագրումների անցկացումն անհրաժեշտ է լինում հիմնականում տնտեսական ոլորտում կատարված հանցագործության առնչությամբ քրեական գործ հարուցելու որոշում կայացնելիս: Այդ ոլորտում ծագող հարաբերությունների բարդությունը ծնում է հատուկ գիտելիքների անհրաժեշտություն, որպեսզի դրանցում ներգրավված անձը, որը լիազորված է վճռելու քրեական գործ հարուցելու հարցը, ավելի դյուրին կարողանա կողմնորոշվել հանցագործության հատկանիշների առկայության կամ բացակայության հարցում: Նշյալ գործողությունները կոչված են չեզոքացնելու անհիմն կերպով քրեական գործ հարուցելու և հետագայում անձին քրեական պատասխանատվության կանչելու հնարավորությունը: Չէ՞ որ միանգամայն ակնհայտ է, որ տնտեսական ոլորտում ծավալվող որոշ գործողութ-

յուններ շիսկ են պարունակում, ինչը պահանջում է ոչ սովորական, ոչ ստանդարտ որոշումներ կայացնել: Որպեսզի պարզ լինի, թե որքանով են այդ գործողությունները համապատասխանել օրենքին, անհրաժեշտ է հաշվի առնել ստեղծված կոնկրետ տնտեսական իրադրությունը, որում դրանք կատարվել են: Դրա համար անհրաժեշտ է ներգրավել մասնագետների, որոնք տիրապետում են տնտեսական ռլորտի հատուկ գիտելիքների. նրանք վերստուգումների ու գույքագրումների շնորհիվ կկարողանան օգնել կատարված կոնկրետ գործողություններում հանցագործության հատկանիշների առկայության կամ բացակայության մասին հարցի լուծմանը: Տնտեսականից զատ՝ գոյություն ունեն նաև մարդու գործունեության այլ բնագավառներ, որոնցում կողմնորոշվելը դեռ քրեական գործի հարուցման փուլում բավականին բարդ է առանց հատուկ գիտելիքների ներգրավման: Հատուկ գիտելիքների ներգրավման ձև պետք է դառնան վերստուգումները, գույքագրումները և փաստաթղթային ստուգումները:

Իրավաբանները բազմիցս անդրադարձել են վերստուգումների ու գույքագրումների նշանակությանը<sup>1</sup>: Նշելով հանցագործություն-

---

<sup>1</sup> Տե՛ս **Сергеев Л.А.** Ревизия при расследовании преступлений - М.: Юрид. лит., 1969, 104 էջ; **Танасевич В.Г.** Ревизия и бухгалтерская экспертиза. Методическое пособие / Отв. ред.: **Яцковский Н.С.** М.: Госюриздат, 1958, 152 էջ, **Мысловский Е.Н.** Ревизия как источник доказательства в уголовном процессе Российской Федерации. Некоторые особенности расследования дел о хозяйственных и имущественных преступлениях в условиях рыночной экономики: Учебно-методическое пособие для следователей - Чебоксары, 1999, 76 էջ, **Мусин Э.Ф., Шадрин В.В., Шадрин К.В.** Ревизия по требованию правоохранительных органов при расследовании уголовных дел - М.: Юрлитинформ, 2004, 136 էջ, **Лапин Е.** Ревизия аудитора по уголовным делам // Законность. М., 1998, № 9, էջ 8-12; **Козицин Я.М.** Бухгалтерская ревизия при расследовании хищений, совершаемых с использованием служебного положения // Вопросы теории советского права. Сборник докладов к конференции по итогам научно-исследовательской работы. Новосибирск, 1966, էջ 154-163; **Остроумов С.С., Форгинский С.П.** Ревизия и бухгалтерская экспертиза // Вопросы криминалистики. М.: Юрид. лит., 1963, № 8-9 (23-24), էջ 342-345; **Атанесян Г.А., Ромашов А.М.** Об организации ревизий, назначаемых по требованиям следственных органов // Материалы научно-практических семинаров по судебно-бухгалтерской экспертизе (1970 - 1972 гг.). М., 1973, էջ 32-36; **Ромашов А.** Документальная ревизия по заданию следственных органов и судов // Социалистическая законность. М.: Известия, 1976, № 4, էջ 59-60 և նրիշներ:

ների մասին հաղորդումները ստուգելիս վերստուգումների կարևորության մասին՝ անհրաժեշտ է առանձնահատուկ շեշտել, որ Ռ-Գ քրեադատավարական օրենսդրությունում առկա են նշյալ ինստիտուտի կանոնակարգման բազմաթիվ խնդիրներ: Ինչպես իրավագիտորեն նշում է Ե. Վ. Լազարևը. «Դա ծնում է բազմաթիվ խնդիրներ իրավակիրառող սուբյեկտների համար: Դրանցից մեկն այն է, որ պրակտիկ աշխատողները զանազան պատճառներով բավարար պատկերացում չունեն ստուգումների գոյություն ունեցող համակարգի մասին, որն իր հերթին թույլ չի տալիս օգտագործել դրա հնարավորությունները հանցագործությունները քննելիս»<sup>1</sup>: Վերստուգումների առնչությամբ ճիշտ նկատառում է նաև այն, որ «քրեական դատավարության օրենսգրքում չի կարգավորվում դրանց նշանակման կարգը և չի նախատեսվում, թե ինչ փաստաթղթում պետք է արձանագրվի քննիչի հանձնարարությունը դրանք անցկացնելու վերաբերյալ»<sup>2</sup>: Կարծում ենք՝ Հայաստանի Հանրապետության օրենսդիրը պետք է հաշվի առնի հիշյալ խնդիրները, որոնք ներկայումս ծառայած են ՀՀ քրեական դատավարության առջև: Վերստուգումների ներառումը այն գործողությունների շարքում, որոնք կարող են իրականացվել հանցագործությունների մասին հաղորդումները ստուգելիս, պետք է ուղեկցվի այդ գործողությունների հստակ կարգավորմամբ:

Հանցագործությունների մասին հաղորդումները ստուգելիս իրականացվող գործողությունների ցանկի համալրումը ևս պայմանավորված է անհիմն քրեական գործ հարուցելուց խուսափելու ձգտումով և որպես դրա հետևանք՝ այդ հանցագործությունների իրականացման մեջ կասկածվող որոշ քաղաքացիների իրավունքները անհիմն սահմանափակելուց խուսափելու մղումով: Գույքագրման նշանակությունը բավականին մանրամասն հետազոտվել է իրավա-

---

<sup>1</sup> **Лазарев Е.В.** Особенности правовой регламентации назначения и производства документальных ревизий в процессе предварительной проверки и расследования преступлений. // Следователь. Федеральное издание, 2009, № 4, էջ 31-35:

<sup>2</sup> **Галушкин В.И.** Порядок назначения ревизии в уголовном судопроизводстве // Вестник криминалистики. Вып. 3 (27), էջ 103:

քանական գրականության մեջ<sup>1</sup>: Դա անհրաժեշտ է այն դեպքերում, երբ իրավապահական մարմինները ստանում են հաղորդում տնտեսական հանցագործության մասին, և այդ հաղորդումը ստուգելիս անհրաժեշտություն է ծագում պարզելու, թե որոշակի արարքի մեջ կա՞ն հանցագործության հատկանիշներ: Այսինքն՝ գույքագրումը որպես գործողություն, որն իրականացվում է հանցագործությունների մասին հաղորդումները ստուգելիս, կոչված է կանխելու առանց հիմնավորման քրեական գործ հարուցելու հնարավորությունը: ՀՀ քրեադատավարական օրենսդրությունում այն նախատեսված չէ, սակայն դա պակաս կարևոր չէ, քան վերստուգումներ անցկացնելը: Դրանշանակությունը մեծ է տնտեսական հանցագործության առնչությամբ քրեական գործ հարուցելու որոշում կայացնելու հարցում, քանի որ հնարավորություն է տալիս որոշելու հանցագործության հատկանիշների առկայությունը կամ բացակայությունը այն արարքներում, որոնք առանց հատուկ գիտելիքների գնահատել հնարավոր չէ:

Սակայն օրենքում ներառելով վերոնշյալ գործողությունները, անհրաժեշտ է սահմանել՝ 1) դրանց իրականացման կարգը, 2) խնդիրները, որոնք առաջադրվում են նախքան դրանց իրականացումը, 3) անձանց, ովքեր պիտի ներգրավվեն դրանց կատարմանը, 4) ձևը, որը պիտի ստանան դրանք իրականացնելու ընթացքում կատարված հետևությունները, 5) այն անձանց իրավունքների ու ազա-

---

<sup>1</sup> Տե՛ս **Пацевич В.В.** Инвентаризация товаро-материальных ценностей по требованию следственных органов // 50 лет Советской власти и актуальные проблемы правовой науки. Материалы к конференции по итогам научно-исследовательской работы за 1966 г.. Саратов, 1967, էջ 196-197, **Козырский В.П., Корноухов В.Е.** Предварительная проверка материалов ревизий и инвентаризаций о хищениях, совершенных должностными лицами // Труды Высшей следственной школы МВД СССР. Волгоград: НИИРИО ВСШ МВД СССР, 1973, Вып. 7, էջ 88-98, **Клоц О.** Назначение ревизий и инвентаризаций при расследовании преступлений, связанных с гибелью скота в колхозах и совхозах // Социалистическая законность. М.: Известия, 1983, № 12, էջ 35-36, **Пушкин А., Тушев А.** Производство ревизий и инвентаризаций при расследовании преступлений в сельском хозяйстве // Социалистическая законность. М.: Известия, 1989, № 1, էջ 53-54; **Рушкин А.Н., Эмирсултанов А.А.** Что нужно знать следователю об инвентаризации // Военно-юридический вестник Приволжского региона. Сборник научных трудов. Самара: Изд-во Самар. гуманитар. акад., 2004, № 2, էջ 289-299 և որիշներ:

տությունների երաշխիքները, որոնց նկատմամբ իրականացվում են նշյալ գործողությունները (անձանց, ովքեր քրեական գործ հարուցելուց հետո կարող են ընդգրկվել որպես կասկածյալներ, մեղադրյալներ): Այսպես՝ միանգամայն ակնհայտ է, որ դրանք չպետք է փոխարինեն փորձագիտական հետազոտություններին, որոնք կարող են անցկացվել մինչև քրեական գործ հարուցելը: Նշյալ գործողությունների իրականացմանը ներգրավվող մասնագետները պետք է համապատասխանեն կոմպետենտության միանգամայն հստակ չափանիշների, այսինքն՝ ունենան համապատասխան կրթական մակարդակ համապատասխան գործունեության ասպարեզում, աշխատանքի համապատասխան փորձ, համապատասխանեն մի շարք այլ պահանջների: Անհրաժեշտ է օրենսդրորեն սահմանել, թե ինչ նպատակներով կարող են իրականացվել նշյալ գործողությունները: Նշյալ գործողությունների խնդիրների օրենսդրորեն ճշգրիտ ձևակերպումը կարող է երաշխիք դառնալ առանց հիմնավորման դրանք իրականացնելու դեպքերից: Առավել ևս լավ հայտնի է, որ առանձին դեպքերում անհիմն վերստուգումների, փաստաթղթային ստուգումների ու գույքագրումների անցկացումը կարող է դառնալ ձեռներեցներին և այլ անձանց վախեցնելու գործիք իրավապահպան մարմինների այն անբարեխիղճ աշխատակիցների կողմից, որոնք օժտված են քրեական գործ հարուցելու իրավունքով:

Հանցագործության մասին դիմումը ստուգելիս վերստուգումների, փաստաթղթային ստուգումների ու գույքագրումների անցկացումը անհրաժեշտաբար ենթադրում է սահմանել այդ գործողություններն իրականացնող անձանց կարգավիճակը: Ինչպես արդեն նշել ենք, վերոնշյալ գործողությունների իրականացումը քրեական գործ հարուցելու փուլում հատուկ գիտելիքների ներգրավման ձևերից մեկն է: Եվ այստեղ, կարծում ենք, միանգամայն տեղին է փորձաքննության հետ զուգադրությունը: Անշուշտ, արժե միանգամից վերապահում անել, թե այս զուգադրությունը անվիճելի չէ, քանի որ վերստուգումները, փաստաթղթային ստուգումները և գույքագրումները օժտված չեն փորձաքննության բոլոր հատկանիշներով: Սակայն այդուհանդերձ, որոշ նմանությունը թույլ է տալիս զուգահեռ անցկացնելու, որից օրինաչափորեն հետևում է, որ վերոնշյալ գործողություններն իրականացնող մասնագետների կարգավիճակը ևս



պետք է համընկնի փորձագետի կարգավիճակի հետ՝ ի հարկե որոշ բացառություններով: Այսպես՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 85-րդ հոդվածի 1-ի մասի համաձայն. «Փորձագետը քրեական գործով չշահագրգռված այն անձն է, որին քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ կամ փորձաքննությունն նշանակելու մասին որոշման համապատասխան՝ նշանակում է փորձագիտական հաստատության ղեկավարը՝ գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի որևէ բնագավառում իր հատուկ գիտելիքներն օգտագործելով գործի նյութերը հետազոտելու և դրա հիման վրա եզրակացություն տալու համար: Փորձագետը կարող է նշանակվել դատավարության մասնակցի առաջարկած անձանցից»: Ելնելով դրանից՝ մասնագետը, որին հանձնարարված է վերստուգումների, փաստաթղթային ստուգումների ու գույքագրումների անցկացումը քրեական գործ հարուցելու փուլում, այն անձն է, ով հանցագործության մասին հաղորդումը քննարկելիս շահագրգռություն չունի, որին իր համաձայնությամբ, քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ վերստուգումներ, փաստաթղթային ստուգումներ կամ գույքագրումներ անցկացնելու մասին որոշման համապատասխան՝ նշանակում է քրեական գործ հարուցելու լիազորություն ունեցող մարմինը՝ գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի որևէ բնագավառում իր հատուկ գիտելիքներն օգտագործելով գործի նյութերը հետազոտելու և դրա հիման վրա եզրակացություն տալու համար:

Համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի 180-րդ հոդվածի 2-րդ մասի՝ նախքան քրեական գործ հարուցելը կարող է իրականացվել դեպքի վայրի զննություն, հետազոտման համար նմուշներ վերցվել և նշանակվել փորձաքննություն:

Նախքան քրեական գործ հարուցելը դեպքի վայրի զննություն անցկացնելու նպատակն այն է, որ ժամանակին նշմարվեն հետքերը, հայտնաբերվեն ապացույցները: Չէ՞ որ եթե ճիշտ ժամանակին չկատարվի դեպքի վայրի զննություն, շատ ապացույցներ անվերադարձ կկորչեն: Բացի այդ, անժխտելի է, որ դեպքի վայրի զննության ընթացքում կարելի է ձեռք բերել ապացույցների բավականաչափ ծավալ քրեական գործ հարուցելու հարցը լուծելու համար: Այսպես՝ սպանության դեպքում ավելի հաճախ բավարար է լինում միայն

դեպքի վայրի զննությունը քրեական գործ հարուցելու հարցը լուծելու համար: Ընդ որում՝ նշված հոդվածում չի նշվում, թե կոնկրետ որ դեպքերում կարող է անցկացվել դեպքի վայրի զննություն՝ հնարավորություն ընձեռելով այդ հարցը լուծելու քրեական գործ հարուցելու որոշում կայացնելու համար լիազորված մարմնին կամ պաշտոնատար անձին: Նշված չէ նաև հիշյալ քննչական գործողության վարույթի կարգը քրեական գործ հարուցելու փուլում: Դա նշանակում է, որ տվյալ փուլում նշյալ քննչական գործողությունը որևէ առանձնահատկություն չունի: Դա պայմանավորված է այն բանով, որ դրա իրականացմամբ լուծվում է երկու խնդիր. 1) քննչական գործողության իրականացման փուլում հավաքված ապացույցների հիման վրա արվում է եզրակացություն քրեական գործ հարուցելու կամ դրա հարուցումը մերժելու մասին, 2) ստեղծվում է տեղեկատվական և ապացուցողական բազա, որն օգտագործվում է հետագայում կոնկրետ քրեական գործը քննելիս: Ընդ որում՝ առաջին խնդիրը բնավ էլ հիմնականը չէ: Դեպքի վայրի զննությունը, այնուամենայնիվ, ավելի մեծ չափով կողմնորոշված է դեպի հետագա քննությունը, քանի որ այդ ընթացքում հավաքվում են ապացույցներ, որոնք օգտագործվում են վարկածներ առաջ քաշելու, հանցագործության քննության ուղղությունը որոշելու, ապացույցների բազայի ստեղծման նպատակով նախնական հիմք ստեղծելու համար:

Սակայն քրեական գործ հարուցելու փուլի համար ևս դեպքի վայրի զննությունը մեծ նշանակություն ունի, քանի որ դրա իրականացման ժամանակ հայտնաբերված ապացույցները միշտ բավարար են լինում, որպեսզի լուծվի քրեական գործ հարուցելու հարցը: Որպես կանոն՝ դրա իրականացման ընթացքում հաջողվում է ձեռք բերել բավարար չափով ապացույցներ, որոնք հիման վրա կարելի է հետևություն անել որոշակի գործողություններում հանցագործության հատկանիշների առկայության մասին: Այդ քննչական գործողության ընթացքում ձեռք բերված զգալի թվով ապացույցների շնորհիվ քրեական գործ հարուցելու մասին հարցը հաջողվում է լուծել բավականին կարճ ժամանակամիջոցում: Այդ դեպքում շատ հաճախ բավական է լինում մեկ օրը: Ընդ որում՝ ապահովվում է կայացված որոշման բազամղղմանիությունը, լրիվությունը և օբյեկտիվությունը:

Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ գործող քր. դատ. օր.-ը, թույլատրելով դեպքի վայրի զննություն նախքան քրեական գործի հարուցումը, ըստ էության կրկնել է նախկինում գործող քր. դատ. օր.-ի դրույթը, որում նույնպես առկա էր համանման նորմ: Այն առկա էր Խորհրդային Միության հանրապետություններից շատերի քրեադատավարական օրենսգրքերում: Այսպես՝ այն ամրագրված էր ՌԽՖՍՀ քր. դատ. օր.-ի 178-րդ հոդվածում, Վազախական ԽՍՀ քր. դատ. օր.-ի 85-րդ հոդվածում: Ընդ որում՝ ՌԽՖՍՀ քր. դատ. օր.-ում ուղղակիորեն գրված էր, որ նշյալ քննչական գործողությունը քրեական գործ հարուցելու փուլում իրականացվում է անհետաձգելի դեպքերում: ՌԳ- գործող քր. դատ. օր.-ում ևս ցուցում կա առ այն, որ դեպքի վայրի զննությունն անցկացվում է անհետաձգելի դեպքերում (ՌԳ- քր. դատ. օր.-ի 176-րդ հոդված, մաս 2): Ընդ որում՝ ««անհետաձգելի դեպքերին» կարելի է դասել այն դեպքերը, երբ զննության անցկացման հապաղումը կարող է հանգեցնել հետքերի ու իրեղեն ապացույցների անդառնալի կորստի, կատարվածի օբյեկտիվ պատկերն ստանալու, հանցանք գործած անձին ժամանակին հայտնաբերելու և ձերբակալելու անհնարինության և այլն»<sup>1</sup>: Քրեադատավարական օրենսդրությունում ասված չէ, թե ինչպիսի հատկանիշներով են բնութագրվում նշյալ դեպքերը, և ով է որոշում այն հարցը, թե հենց այդպիսի դեպքի ականատեսն ենք: Միանգամայն ակնհայտ է, որ այդպիսի դեպքի ականատես լինելու մասին հետևությունը կատարում է այն անձը, ով իրավասու է քրեական գործ հարուցելու՝ հիմնվելով իր ներքին համոզման վրա:

ՀՀ քր. դատ. օր.-ում ոչինչ ասված չէ այն մասին, որ դեպքի վայրի զննությունը կարող է կատարվել միայն անհետաձգելի դեպքերում: Գրանից հետևում է, որ դեպքի վայրի զննությունը, համաձայն Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրության, ի տարբերություն Ռուսաստանի Դաշնության քրեադատավարական օրենսդրության, կարող է անցկացվել ոչ միայն անհետաձգելի դեպքերում: Այսինքն՝ հիշյալ քննչական գործողությունը կարող է անցկացվել հանցագործությունների մասին հաղորդումների

---

<sup>1</sup> Комментарий к Уголовно-процессуальному кодексу Российской Федерации. / Отв. ред. Д.Н. Козак, Е.Б. Мизулина. М.: Юристъ, 2003, էջ 365:

ստուգման բոլոր դեպքերում, երբ առկա է դեպքը: Հիշյալ քննչական գործողության անցկացումը կարգավորող այդ առանձնահատկությունը ՀՀ քր. դատ. օր.-ում հանցագործությունների մասին հաղորդումները ստուգող անձանց համար դառնում է գործուն, արդյունավետ միջոց, որի օգնությամբ բավականին կարճ ժամկետներում կարելի է լուծել քրեական գործ հարուցելու կամ այն մերժելու մասին հարցը: Դա թույլ է տալիս եզրակացնելու, որ Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրության նշյալ նորմը լիովին հիմնավորված է, քանի որ դրա շնորհիվ էականորեն կրճատվում են կատարված կամ նախատեսվող հանցագործությունների մասին հաղորդումները ստուգելու համար անհրաժեշտ ժամկետները: Դրա շնորհիվ երաշխավորվում են հաղորդում տվող անձանց իրավունքներն ու ազատությունները, ովքեր հայտնել էին հանցագործության մասին, ինչպես նաև այլ անձանց, ովքեր, այսպես թե այնպես, հայտնվել են անցկացվող ստուգման ոլորտում: Բացի այդ, դեպքի վայրի զննության ընթացքում ձեռք բերված ապացույցները զերծ են պահում անհիմն կերպով քրեական գործի հարուցումից:

Հետազոտության համար նմուշները վերցնելը կապված է փորձաքննություն նշանակելու և կատարելու հետ, քանի որ շատ հաճախ փորձաքննություն կատարելու համար փորձագետն իր տրամադրության տակ պետք է ունենա համեմատական հետազոտության համար անհրաժեշտ նմուշներ: Նշված քննչական գործողության կատարումը պայմանավորված է փորձաքննության նշանակմամբ: Շատ հաճախ փորձաքննություն նշանակելու համար անհրաժեշտություն է առաջանում հետազոտման համար վերցնել նմուշներ: Իհարկե, քրեական գործ հարուցելու փուլում տվյալ քննչական գործողության կատարման դատավարական կարգի առանձնահատկություններ չեն սահմանված, իսկ դա նշանակում է, որ այն իրականացվում է նախնական քննության ընթացքում դրա կատարման համար սահմանված կարգով: Տվյալ դեպքում մույնպես ակնհայտ են անձի իրավունքների կամայական սահմանափակման հնարավորությունները: Հետազոտման համար նմուշներ են վերցվում այն անձանցից, որոնք քրեական դատավարությունում չունեն համապատասխան կարգավիճակ: Կարծում ենք, որ վերը նշվածը մեզ հիմք է

տալիս պնդելու, որ հետազոտման համար նմուշներ վերցվեն միայն անհետաձգելի դեպքերում:

Բացի դեպքի վայրի զննությունից, համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի 180-րդ հոդվածի 2-րդ մասի, նախքան քրեական գործ հարուցելը կարող է նշանակվել փորձաքննություն: Փորձաքննություն նշանակելու անհրաժեշտությունը տվյալ փուլում թելադրված է նպատակահարմարության պատկերացումներով: Չէ՞ որ, օրինակ, դեպքի վայրի զննության ժամանակ կարող են հայտնաբերվել հետքեր, որոնք անհրաժեշտ է հետազոտել հատուկ գիտելիքների ներգրավմամբ փորձաքննության ձևով: Ընդ որում՝ հնարավոր է, որ հարկ լինի շուտափույթ հետազոտել այդ հետքերը, հաշվի առնելով, որ դրանք կարող են վերանալ շրջակա միջավայրի գործոնների ազդեցությամբ: Ուստի փորձաքննության նշանակումը հետաձգելը կարող է բացասաբար անդրադառնալ հանցագործության հետագա քննության արդյունավետության վրա: Կարծում ենք՝ հենց այդ գործնական պատկերացումներն են ընկած այն նորմի հիմքում, որի համաձայն փորձաքննությունը կարող է նշանակվել մինչև քրեական գործի հարուցումը: Առավել ևս, որ փորձաքննության նշանակման փորձը քրեական դատավարության այդ փուլում հայտնի էր նաև ավելի վաղ, երբ օրենքով նախատեսված չէր փորձաքննության անցկացում նախքան քրեական գործի հարուցումը: Պարզապես փորձաքննություն նշանակելու որոշման մեջ նախկինում չէր նշվում դրա նշանակման ժամկետը: Այն նշվում էր միայն այն ժամանակ, երբ գործը հարուցված էր լինում, և արտացոլում էր ոչ թե այն օրը, երբ փաստացի նշանակվում էր փորձաքննությունը, այլ քրեական գործ հարուցելու օրը: Կային նաև այլ տարբերակներ, որոնց օգնությամբ գործնականում լուծվում էին փորձաքննություն նշանակելու հարցերը: Նախքան քրեական գործ հարուցելը փորձաքննություն նշանակելու թույլատրումը, ըստ էության, օրենքի միջոցով արդեն գոյություն ունեցող պրակտիկայի ճանաչումն էր:

Նախքան քրեական գործ հարուցելը փորձաքննություն նշանակելու հնարավորության մասին հարցը վիճելի է, ուստի դրա վե-

րաբերյալ առկա են բազմաթիվ հրապարակումներ<sup>1</sup>: Մասնավորապես, հիմնախնդիրներից մեկը նախքան քրեական գործ հարուցելը միայն մեկ գործողություն կատարելն է, որը վերաբերում է փորձաքննություն կատարելուն, այսինքն՝ փորձաքննություն նշանակելը: Չէ՞ որ միանգամայն ակնհայտ է, որ իրավակիրառման պրակտիկայում պրորբեր ոչ այնքան փորձաքննությունը ժամանակին նշանակելն է, որքան այն ժամանակին կատարելը: Դրա պատճառն այն է, որ եթե տևական ժամանակ փորձաքննություն չկատարվի, ապա առանձին հետքեր, որոնք ենթակա են փորձագիտական հետազոտության, կարող են չպահպանվել, կամ դրանց որակը էականորեն կլիխվի:

Նախքան քրեական գործ հարուցելը փորձաքննությունների նշանակման փորձը վկայում է այն մասին, որ եթե փորձաքննություն-

---

<sup>1</sup> Տե՛ս **Александрова А.С.** Назначение и производство судебных экспертиз до возбуждения уголовных дел: миф или реальность? // Вестник Самарской гуманитарной академии. Право. Самара: Изд-во Самар. гуманитар. акад., 2007, № 1, էջ 152-158; **Зайцев Р.В.** К вопросу о назначении криминалистических экспертиз до возбуждения уголовного дела // Актуальные проблемы российского права. Сборник статей. М.: Изд-во МГЮА, 2007, № 1 (4), էջ 629-636; **Авращенко Н.Ю.** Проблемы назначения и производства экспертизы в ходе следственной проверки до возбуждения уголовного дела // Ученые записки Санкт-Петербургского им. В.Б. Бобкова филиала Российской таможенной академии. 2005, էջ-ՍԵ.: РИО СПб филиала РТА, 2006, № 2 (24), էջ 210-215; **Муравьев К.В., Супрун С.В.** Возможно ли назначение и производство экспертизы до возбуждения уголовного дела? // Законодательство и практика. Омск: Изд-во Ом. акад. МВД России, 2006, № 2, էջ 72-75; **Зайцев Р.В.** К вопросу о назначении криминалистических экспертиз до возбуждения уголовного дела // Актуальные проблемы российского права. Сборник статей. М.: Изд-во МГЮА, 2006, № 1 (3), էջ 374-380; **Саламов А.Н.** Некоторые вопросы обеспечения гарантий прав личности при назначении и производстве судебной экспертизы до возбуждения уголовного дела // Актуальные проблемы российского права. Сборник научных трудов. М.: Полиграф ОПТ, 2005, Вып. 1, էջ 284-288; **Тихонов Е.Н.** Проблемы назначения судебных экспертиз до возбуждения уголовного дела // Актуальные вопросы государства и права на современном этапе. Сборник статей. Томск: Изд-во Том. ун-та, 1984, էջ 227-228; **Нагнойный Я.П.** О возможности назначения судебной экспертизы до возбуждения уголовного дела // Криминалистика и судебная экспертиза. Республиканский межведомственный сборник научных и научно-методических работ. Киев: РИО МООН УССР, 1967, Вып. 4, էջ 174-178 և արիշներ:

նը նշանակվում է մինչև քրեական գործ հարուցելը, ապա որոշ դեպքերում նաև կատարվում է մինչև քրեական գործ հարուցելը: Որպեսզի օրենքը չխախտվի, դրա կատարման ամսաթիվը դրվում է քրեական գործ հարուցելուն հաջորդող օրով: Այսինքն՝ թույլատրելով փորձաքննությունը նշանակել նախքան քրեական գործ հարուցելը, օրենսդիրը պայմաններ է ստեղծում տվյալ փուլում դրա փաստացի կատարման համար: Ասել է թե՛ պայմաններ են ստեղծվում օրենքը խախտելու: Տարօրինակ է այն, որ հենց օրենքն է մղում այդ խախտումներին:

Անհրաժեշտ է նշել, որ նախքան քրեական գործ հարուցելը փորձաքննություն կատարելը վտանգում է այն անձանց իրավունքներն ու ազատությունները, որոնք հետագայում կարող են ճանաչվել կոնկրետ քրեական գործով կասկածյալներ, մեղադրյալներ: Բացի այդ, փորձաքննությունը գործողությունների այնքան մեծ համալիր է, որ դրա անցկացումը քրեական գործ հարուցելու փուլում կարող է հանգեցնել այդ փուլի վերացմանը: Վ. Մ. Սավիցկին այդ կապակցությամբ իրավացիորեն գրել է. «Եթե փորձաքննության կատարումը թույլատրվի մինչև քրեական գործի հարուցումը, ապա ոչ ոք իրավունք չի ունենա արգելել քննիչին օգտագործելու ստացված հաղորդումը ստուգելու համար անհրաժեշտ դատավարական միջոցների ողջ զինանոցը, որն առնչություն ունի փորձաքննություն անցկացնելու ու դրա արդյունքները գնահատելու հետ: Բոլոր գործողությունները նախքան քրեական գործի հարուցումը կատարելը փաստորեն նշանակում է կատարել քննություն, թեև ձևական առումով գործը գոյություն չունի: Սակայն դա կնշանակի քրեական գործի հարուցման փուլի չեզոքացում, քննչական աշխատանքի ծանրության կենտրոնի տեղափոխում մեկ այլ փուլ, որի սկիզբը ոչ մի փուլանիշով հստակորեն նշված չէ»<sup>1</sup>:

Կասկած չկա, որ քրեական գործ հարուցելու փուլում փորձաքննություն նշանակելով խախտվում են այն անձանց իրավունքները, ովքեր հետագայում կարող են ճանաչվել կասկածյալներ, մեղադրյալներ: Դա պայմանավորված է այն բանով, որ «նախքան քրեական գործ հարուցելու մասին որոշում կայացնելը պոտենցիալ

---

<sup>1</sup> Савицкий В.М. Надо ли реформировать стадию возбуждения уголовного дела? Советское государство и право. 1974, № 8.- էջ 86:

կասկածյալները, տուժողները և վկաները չեն համարվում այդպիսին և, ըստ այդմ, օժտված չեն իրավունքների ու պարտականությունների շրջանակով, որոնք նախատեսված են քր. դատ. օր.-ով»<sup>1</sup>: Առավել ևս, որ քրեական գործ հարուցելու փուլում փորձաքննության նշանակումը հետագայում անհնար է դարձնում կասկածյալի, մեղադրյալի մի շարք իրավունքների իրացումը: Այսպես՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 247-րդ հոդվածի 1-ին մասում նշվում է մեղադրյալի, կասկածյալի՝ փորձագետին բացարկ հայտնելու իրավունքի մասին: Հասկանալի է, որ փորձագիտական հետազոտությունից և փորձագետի կողմից եզրակացություն տալուց հետո արդեն նշյալ իրավունքի իրացումը դառնում է անհնար: Հաշվի առնելով, որ, ինչպես վերը նշվեց, փորձաքննության նշանակումը մինչև քրեական գործ հարուցելը գործնականում նշանակում է դրա կատարում տվյալ փուլում, խախտվում են կասկածյալի, մեղադրյալի այլ իրավունքներ ևս: Մասնավորապես, այնպիսիք, ինչպիսին են քննիչի թույլտվությամբ փորձաքննության կատարմանը ներկա լինելը, փորձագետին պարզաբանումներ տալը: Ընդ որում՝ այսպիսի բացթողումը շտկելը հետագայում դառնում է անհնար, իսկ այն դեպքերում, երբ այդպիսի փորձ է նախաձեռնվում, դա դառնում է պարզ ձևականություն, որը ոչ մի կապ չունի խախտված իրավունքների էության հետ: Ուստի, կասկածից դուրս է, որ փորձաքննության նշանակումը քրեական գործ հարուցելու փուլում էականորեն խախտում է կասկածյալի, մեղադրյալի իրավունքները, ովքեր որպես քրեական դատավարության մասնակիցներ ներգրավվում են ավելի ուշ՝ նախնական քննության փուլում:

Սակայն կասկածից դուրս է մասն այն, որ եթե որոշ դեպքերում ժամանակին չնշանակվի փորձաքննություն, ապա դա կարող է վտանգել այն անձանց իրավունքներն ու ազատությունները, որոնց նկատմամբ կատարվել է հանցագործությունը: Չէ՞ որ, ինչպես արդեն ասվեց, պրակտիկայում կան դեպքեր, երբ անթույլատրելի է փորձաքննության նշանակումը ձգձգելը, քանի որ հետքերը կարող են վերանալ կամ ձևափոխվել, հետքերը թաքցնելու նպատակով

---

<sup>1</sup> **Сморгунова М.Е.** Теоретические основы и практика проверки досудебных доказательств в уголовном процессе. Дисс. канд. юрид. наук. Нижний Новгород, 2004, էջ 108:



կարող են ձեռնարկվել դրանց վրա ներագդելու փորձեր, ինչի հետևանքով անհնար կդառնա ստանալ փորձագետի անաչառ ու համակողմանի եզրակացությունը: Այդ դեպքում կխախտվի դատական պաշտպանության իրավունքը, որը բխում է ՀՀ քր. դատ. օր.-ի 9-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված իրավունքից, որի համաձայն. «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իր իրավունքները և ազատությունները»: Հաշվի առնելով այդ՝ օրենսդիրը քրեական դատավարության բոլոր մասնակիցների իրավունքներն ու ազատությունները ապահովելու հարցում հետևողական լինելու համար պետք է գրավի այնպիսի դիրք, որը հավասարապես կերաշխավորի քրեական դատավարության բոլոր կողմերի իրավունքներն ու ազատությունները: Անթույլատրելի է անհիմն կերպով ուժեղացնել կողմերից մեկին՝ թուլացնելով մյուսին՝ թույլ չտալով նրան իրացնելու մի շարք իրավունքներ: Իսկ տվյալ դեպքում կարող են վտանգվել ոչ միայն այն անձանց իրավունքները, որոնք հետագայում կարող են դառնալ կասկածյալներ, մեղադրյալներ, այլև այն անձանց, ովքեր տուժել են հանցագործությունից:

Հետևաբար, քրեական գործ հարուցելու փուլում փորձաքննության նշանակման հարցը լուծելիս պետք է առաջնորդվել այն բանով, որ պետք է հավասարապես պաշտպանվեն ինչպես այն անձանց իրավունքները, որոնք հետագայում կարող են ճանաչվել կասկածյալներ, մեղադրյալներ, այնպես էլ հանցագործությունից տուժած անձանց, որոնք կարիք ունեն իրենց իրավունքների ու ազատությունների պաշտպանության, քանի որ, համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի 8-րդ հոդվածի. «Բոլորը հավասար են օրենքի և դատարանի առջև»: Ուստի ճիշտ կլիներ որոշ փոփոխություններ կատարել ՀՀ քր. դատ. օր.-ի 180-րդ հոդվածի, 2-րդ մասում՝ այն շարադրելով հետևյալ կերպ. «Նշված ժամկետում կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր, բացատրություններ, այլ նյութեր, ինչպես նաև կարող է կատարվել դեպքի վայրի զննություն և անհետաձգելի դեպքերում նշանակվել փորձաքննություն»:

Անհապաղ միջամտություն պահանջող դեպքեր ասելով նկատի է առնվում այնպիսի հանգամանքների առկայությունը, որոնք մատնանշում են, որ դեպքի վայրում հայտնաբերված հետքերը կարող են

կորչել կամ լրջորեն ձևափոխվել կամ, երբ առկա է հետքերը թաքցնելու նպատակով հետքերի և իրեղեն այլ ապացույցների վրա ներագրելու վտանգ:

ՀՀ քր. դատ. օր.-ի 180 հոդվածի, 2-րդ մասի խմբագրված տարբերակը հնարավորություն կընձեռի մի կողմից խոչընդոտել, որ փորձաքննության նշանակումը քրեական գործ հարուցելու փուլում դառնա իրավապահական մարմինների համընդհանուր գործելակերպը, մյուս կողմից՝ չտոնահարվեն հանցագործությունից տուժած անձանց իրավունքները՝ զրկելով նրանց փորձագետի անաչառ, համակողմանի և լիարժեք եզրակացության հիման վրա նախնական քննության ժամանակ և դատարանում իրենց շահերը պաշտպանելու իրավունքից: Այսինքն՝ խմբագրված այս տարբերակի դեպքում հնարավոր է դառնում հասնել մի որոշակի «ոսկե միջինի» քրեական դատավարության պոտենցիալ մասնակիցներ համարվող բոլոր անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության հարցում:

Ընդ որում՝ անհրաժեշտ է նշել, որ որպես քննչական գործողություն փորձաքննության նշանակման դերն ավելի մեծ է ոչ թե քրեական գործ հարուցելու կամ դրա հարուցումը մերժելու հարցի լուծման համար, այլ այն ամբողջովին ուղղված է դեպի հաջորդ՝ նախնական քննությունը, որի ընթացքում ենթադրվում է անցկացնել փորձագիտական հետազոտություն և ձեռք բերել ապացույցման գործընթացի համար անհրաժեշտ ապացույցներ: Այս առումով օրենսդրի առջև ծառայած խնդիրներից մեկը այն անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունն է, ովքեր հետագայում դառնալու են քրեական դատավարության մասնակիցներ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարված փոփոխությունների արդյունքում մինչև քրեական գործի հարուցումը կատարվող քննչական և դատավարական գործողությունների շարքում ավելացվեց հանցագործություն կատարելու կասկածանքով անձին բերման և անձնական խուզարկության ենթարկելը:

Օրենսդրական այս նորույթը որոշակի խնդիրներ առաջացրեց կապված բերման ենթարկելու որպես դատավարական հարկադրանքի միջոցի էության հետ: Հանցագործություն կատարելու կասկածանքով բերման ենթարկելը չի հետապնդում այն նպատակը, որը

դրված է բերման ենթարկելու դատավարական հարկադրանքի միջոցի հիմքում: Ըստ ՀՀ քր. դատ. օր-ի 153-րդ հոդվածի 1-ին մասի. բերման ենթարկելը առանց հարգելի պատճառների քննության չներկայացող կասկածյալին, մեղադրյալին, ամբաստանյալին, ինչպես նաև վկային և տուժողին հարկադրաբար քրեական վարույթն իրականացնող մարմին ներկայացնելն է՝ նրա նկատմամբ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված համապատասխան դատավարական գործողություններ կատարելու համար, որը կարող է զուգորդվել բերման ենթարկվող անձի իրավունքների և ազատությունների ժամանակավոր սահմանափակմամբ:

Վերը նշված բնորոշումից հետևում է, որ բերման կարելի է ենթարկել միայն դատավարության սուբյեկտի կարգավիճակ ունեցող անձին, իսկ տվյալ դեպքում խոսքը վերաբերում է հանցագործության մեջ կասկածվող անձին: Քրեական դատավարության օրենսգիրքը չի կարգավորում այդ գործողության իրականացման դատավարական կարգը, իսկ դա նշանակում է, որ իրավակիրառ պրակտիկայում այն կարող է հանգեցնել անձի իրավունքների խախտման: Իհարկե, յուրաքանչյուր դեպքում հանցագործություն կատարելու կասկածանքով անձին բերման և անձնական խուզարկության ենթարկելը պետք է դիտարկել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի և ՀՀ Սահմանադրության 16-րդ և 19-րդ հոդվածների շրջանակներում, որոնցում սահմանված են մարդուն ազատությունից զրկելու հիմքերը և իրավունքների ապահովման երաշխիքները:

Նշված հարցի իրավական կարգավորմանը պետք է մոտենալ մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի տեսանկյունից, որի համաձայն «քրեական մեղադրանք» հասկացությունը պետք է հասկանալ ոչ թե ձևական, այլ բովանդակային առումով (*Դեվեերն ընդդեմ Բելգիայի գործով վճիռ, 1980թ. փետրվարի 27, գանձար թիվ 6903/75, կետ 44*)<sup>1</sup>: Մրանից հետևում է, որ անձի նկատմամբ «մեղադրանքի» առկայության մասին կարող է վկայել նաև այնպիսի միջոցներ ձեռնարկելը, որոնք ենթադրում են հանցագործության մեջ կասկածանքի առկայություն, ինչպես նաև

---

<sup>1</sup> St'u Deveer v. Belgium, 1980թ.:

էականորեն ներգործում են կասկածվող անձի դրուքյան վրա (*Էկլեկ ընդդէմ Գերմանիայի գործով վճիռ, 1982թ. հուլիսի 15, զանգար թիվ 8130/78, կէտր 73*)<sup>1</sup>:

Օրենքի միատեսակ կիրառության ապահովման իր սահմանադրաիրավական գործառնության շրջանակներում քննարկվող խնդրին փորձել է լուծում տալ ՀՀ վճռաբեկ դատարանը *Գագիկ Միքայելյանի* վերաբերյալ գործով որոշմամբ<sup>2</sup>: Նշված որոշմամբ վճռաբեկ դատարանը, ի թիվս այլոց, անդրադարձել է մեզ հետաքրքրող երկու կարևոր խնդրի. առաջին, հանցագործության համար կասկածանքով ոստիկանություն բերված անձին առանց ձերբակալման արձանագրությունը հայտարարելու պահելու իրավաչափ ժամկետի խնդրին՝ սահմանելով, որ բերվելուց չորս ժամ հետո այդ արձանագրությունը չհայտարարելու պարագայում «բերվածը» «օրենքի ուժով պետք է համարվի ձերբակալված է իրավունք ունենա օգտվել ձերբակալվածի համար օրենքով սահմանված երաշխիքներից»<sup>3</sup>:

Երկրորդ, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության, Եվրոպական Կոնվենցիայի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը՝ վճռաբեկ դատարանը ամրագրել է «բերվածի» նվազագույն իրավունքների շրջանակը, որը ներառում է՝ 1) իրեն արգելանքի վերցնելու պատճառն իմանալու, 2) իրեն բերման ենթարկելու մասին տեղեկացնելու, 3) իր փաստաբանին հրավիրելու, 4) լռելու իրավունքը<sup>4</sup>: Միաժամանակ, որպես նշված իրավունքների երաշխիք, ամրագրված է վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը ապահովելու «բերվածի» իրավունքների իրականացումը՝ «բերվածի իրավունքները գրավոր պարզաբանելու, նրան առնվազն մեկ զանգի հնարավորություն ընձեռելու, բերվածի փաստաբանի մուտքը չխոչընդոտելու եղանակներով»<sup>5</sup>: Ինչպես տեսնում ենք, ՀՀ վճռաբեկ դատարանը

<sup>1</sup> Տե՛ս *Eckle v. Germany*, 1982թ.:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2009թ. դեկտեմբերի 18-ի որոշումը ԵԱԴԴ/0085/06/09:

<sup>3</sup> Տե՛ս նշված որոշման 28-րդ կետը:

<sup>4</sup> Տե՛ս նշված որոշման 22-րդ կետը:

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղում:

րանն իր նախադեպային որոշմամբ փորձել է վերացնել օրենքում տեղ գտած թերությունը և դանով ապահովել փաստացի քրեական հետապնդման ենթարկված անձի մինիմալ իրավունքների պաշտպանությունը: Ճիշտ է, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում տեղ գտած նշված փոփոխությունը նպատակ էր հետապնդում վերացնել դատավարության օրենսգրքում տեղ գտած բացը, բայց այն առաջացրեց լրացուցիչ խնդիրներ, որոնք վճռաբեկ դատարանը փորձում է վերացնել իր նախադեպային որոշմամբ:

Համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի 182-րդ հոդվածի 1-ին մասի. «Քրեական գործ հարուցելու առիթի և հիմքերի առկայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը որոշում են կայացնում քրեական գործ հարուցելու մասին»: Ընդ որում՝ քրեական գործ հարուցելու համար առիթները թվարկված են, ինչպես վերն ասվեց, ՀՀ քր. դատ. օր.-ի 176-րդ հոդվածում: Քրեական գործ հարուցելու համար հիմքեր ունենալու մասին օրենքում ուղղակիորեն չի նշվում: Սակայն ՀՀ քր. դատ. օր.-ի 182-րդ հոդվածի 2-րդ մասում ասվում է. «Որոշման մեջ պետք է նշվեն գործ հարուցելու առիթն ու հիմքը, քրեական օրենքի այն հոդվածը, որի հատկանիշներով հարուցվում է գործը, հարուցելուց հետո գործի հետագա ընթացքը»: Դրանից հետևում է, որ քրեական գործ հարուցելու հիմքը հանցագործության հատկանիշները պարզելն է, որը սահմանված է քրեական օրենքով:

Քրեական գործի հարուցումը մերժելու հիմք է առիթի անօրինական լինելը կամ քրեական գործ հարուցելու համար հիմքերի բացակայությունը: Դա բխում է ՀՀ քր. դատ. օր.-ի 185 հոդվածի 1-ին մասից, որի համաձայն. «Քրեական գործ հարուցելու առիթն անօրինական լինելու կամ հիմքերի բացակայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը որոշում են կայացնում քրեական գործ հարուցելը մերժելու մասին»:

Թե՛ մեկ, թե՛ մյուս որոշումն ընդունելիս նախատեսված է դրանց պատճեններն ուղարկել հանցագործության մասին հայտնած անձին: Համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի 182-րդ հոդվածի 4-րդ մասի՝ «Քրեական գործ հարուցելու մասին որոշման պատճենն ուղարկվում է հանցագործության մասին հաղորդած ֆիզիկական կամ իրավաբանական անձին»: ՀՀ քր. դատ. օր.-ի 185-րդ հոդվածի 2-րդ մասում

սահմանված է. «Ռոշման պատճենն ուղարկվում է հանցագործության մասին հաղորդած ֆիզիկական կամ իրավաբանական անձին»: Դրանով իսկ ապահովվում են հանցագործության մասին հայտնած անձանց իրավունքները, այսինքն՝ նրանք իրազեկվում են իրենց հաղորդումների քննարկման արդյունքների մասին: Դա հնարավորություն է ընձեռում նրանց իրացնելու քրեական գործի հարուցումը մերժելու որոշումը բողոքարկելու իրենց իրավունքը: Այսպես՝ համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի 185-րդ հոդվածի 3-րդ մասի. «Քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով սահմանված կարգով որոշման պատճենն ստանալու պահից 7 օրվա ընթացքում»:

Բացի վերոնշյալ երկու որոշումից, որոնք կայացվում են քրեական գործ հարուցելու փուլն ավարտվելուց հետո, Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենքով նախատեսված է նաև հանցագործության մասին հաղորդումը հանձնել ըստ ենթակայության: Համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի 186-րդ հոդվածի. «Քրեական գործ հարուցելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձն իրավունք ունի հանցագործության մասին հաղորդումն առանց գործ հարուցելու հանձնել ըստ ենթակայության, երբ քրեական գործի հարուցման հարցի լուծման համար հանցանքի կատարման վայրում անհրաժեշտ է կատարել դեպքին առնչվող նախնական գործողություններ»: Այս նորմը լիովին համապատասխանում է ժողովրդավարական չափանիշների բոլոր պահանջներին: Այդուհանդերձ, ճիշտ կլիներ, որ օրենսդիրը հետևողական լիներ քրեական դատավարությանը ներգրավված անձանց իրավունքների ապահովման հարցում: Դրա համար անհրաժեշտ է համապատասխան մարմինների ու պաշտոնատար անձանց պարտականությունը համարել հաղորդում տված անձանց կայացված որոշման մասին իրազեկելը:

Այսպիսով՝ ընդհանուր գծերով բնութագրելով քրեական գործ հարուցելու փուլը՝ հարկ է նշել, որ այդ փուլում նախատեսված ընթացակարգերը բավականաչափ հստակ սահմանված չեն օրենքում, որը բարենապաստ պայմաններ է ստեղծում այն անձանց կամայականությունների համար, ովքեր օժտված են այդ փուլում որոշումներ կայացնելու իրավունքով: Քրեադատավարական օրենքը հստակ-

րեն չի սահմանում տվյալ փուլում գործի վարույթին մասնակցող անձանց իրավունքները: Այսպես՝ սահմանված չէ հանցագործության մասին հաղորդում տվող անձի կարգավիճակը: Նրա իրավունքների մասին առանձին ակնարկները, որոնք կան օրենքում, ակնհայտորեն բավարար չեն որոշելու համար տվյալ անձի տեղը քրեական դատավարության տվյալ փուլում:

Քրեադատավարական օրենսդրության ամենախոցելի տեղը քննարկվող փուլում գործողությունների իրականացման ոչ հստակ կարգն է: Այդ անորոշությունը հանգեցնում է նշյալ գործողությունների փակ լինելուն, ինչի հետևանքով սպառնալիքի տակ են հայտնվում այն անձանց իրավունքները, որոնք տվյալ փուլում արդեն մասնակցում են գործի վարույթին, և որոնք կարող են ներգրավվել մասնակցելու հետագա փուլերին: Դա թույլ է տալիս պնդել, որ նշյալ գործողությունները այնքան էլ չեն համապատասխանում ժողովրդավարական չափանիշներին: Հանցագործության բացահայտման համար քրեական գործի հարուցման փուլում իրականացվող գործողությունների շրջանակի ընդարձակումը վերացնում է քրեական գործի հարուցման և նախնական քննության փուլերի միջև եղած սահմանագիծը: Քրեական դատավարության օրենսդրության մեջ տեղ գտած փոփոխությունները խոսում են այն մասին, որ դատավարական այս փուլը կորցրել է իր նշանակությունը: Այս մոտեցումն իր արտացոլումն է ստացել նաև ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգում, որում քրեական գործի հարուցման փուլը վերացված է: Դրանից հետևում է, որ առանց նյութերի նախապատրաստման անմիջապես քննության իրականացումը նոր գաղափարախոսություն է մտցնում ՀՀ քրեական դատավարությունում: Իրականում նյութերի նախապատրաստումն ոչ այլ ինչ է, քան քննություն, որն իրականացվում է քրեական դատավարության օրենսդրության և անձի սահմանադրական իրավունքների խախտմամբ: Կարծում ենք, որ նշված մոտեցումն արդարացված է, քանի որ նյութերի նախապատրաստումը գործող օրենսդրությամբ իրականացվում է ոչ դատավարական միջոցներով:

Քրեական գործի հարուցման ինստիտուտի վերացումը հանցագործությունից տուժած անձին հնարավորություն է տալիս իրակա-

նացնել արդարադատության մատչելիության իր սահմանադրական իրավունքը: Վերը նշվածը մեզ հիմք է տալիս նշելու, որ քրեական դատավարության օրենսդրությունը պետք է համապատասխանեցնել քրեական քաղաքականության ժամանակակից զարգացումներին, իսկ քրեական գործերով դատավարական ձևը մոտեցնել քրեական դատավարության մրցակցային մոդելին, մասնավորապես մինչդատական վարույթի հետ կապված, քանի որ քրեական դատավարության գործող օրենսդրությունում գործում է մինչդատական վարույթի խորհրդային մոդելը:

Քրեական գործ հարուցելու կարգը կարգավորելիս օրենսդրի կողմից ավելորդ կադասյարվածությունը հանգեցրել է այն բանին, որ քրեական գործ հարուցելու փուլը չունի հստակ ձևակերպված դատավարական ձև: Դա սպառնալիքի տակ է դնում ոչ միայն տվյալ փուլի վարույթում ներգրավված անձանց իրավունքներն ու օրինական շահերը, այլև այն անձանց, ովքեր որպես մասնակիցներ կարող են ներգրավվել հետագայում, քրեական դատավարության մյուս փուլերում: Այդ պատճառով ներկայումս նշյալ փուլում մյուս փուլերի համեմատ ամենից քիչ են իրացվում մրցակցային քրեական դատավարության սկզբունքները: Նշյալ փուլը տարբերվում է այն բանով, որ այստեղ բարենպաստ պայմաններ են ստեղծվում իրավապահպան մարմինների պաշտոնատար անձանց կամայականություններին համար, հետևաբար ոչ միայն անձի իրավունքների ու օրինական շահերի անտեսման, այլև պաշտոնական հանցագործություններ գործելու համար: Ցավոք, նշյալ փուլում ըստ պաշտոնատար անձանց հայեցողության որոշումներ կայացնելը միշտ էլ կարող է վերածվել կամայականության: Դրա համար պայմաններ են ստեղծվում, որովհետև բացակայում է անհրաժեշտ հստակությամբ մշակված քրեադատավարական ձևը: Հետևաբար կայացված որոշման արդարացիությունը դեռևս մեծապես կախված է կոնկրետ պաշտոնատար անձի հայեցողությունից, նրա բարի կամքից, ինչպես նաև նրա՝ դրական հատկություններով օժտված լինելուց: Այդպիսի հատկությունների բացակայության դեպքում իրավունքները չխախտելու երաշխիքները շատ քիչ են: Դատաիրավական բարեփոխումների նախաշեմին արդիական է նաև քրեական գործի հարուցման փուլը



լինելու և չլինելու հարցի լուծումը: Վերը շարադրվածը հիմք է տալիս մեզ գալ հետևության, որ ժամանակն է հրաժարվել դատավարական այս փուլից, այսինքն հանցագործության մասին հաղորդման գրանցումը լինի բավարար առիթ՝ առանց նյութերի նախապատարաստման քննություն իրականացնելու:

### **§ 3. Նախնական քննության փուլում անձի իրավունքների և օրինական շահերի ապահովման տեսական հիմքերը**

Նախնական քննության բնորոշումը հենց իր անվանումն է: Այդ քննությունը համարվում է նախնական, այսինքն՝ ոչ վերջնական. այն կոնկրետ քրեական գործի դատական քննության նախապատրաստությունն է: Ռուսաստանի կայսրության քրեադատավարական օրենսդրությունում «նախնական քննության» փոխարեն գործածվում էր «նախնական հետազոտություն» տերմինը: Ի. Յա. Ֆոյնիցկին այդ մասին գրել է. «Նախնական հետազոտությունը բաղկացած է մասնավոր ու պաշտոնատար անձանց մի շարք գործողություններից, որոնք ուղղված են դատական քննության համար նյութեր հավաքելուն»<sup>1</sup>: Մ. Ս. Ստրոգովիչը գրել է. «Լինելով գործի դատական քննության նախնական կամ, այլ կերպ ասած, նախապատրաստական մաս՝ նախնական քննությունը դրանից ոչ միայն չի կորցնում իր նշանակությունը քրեական դատավարությունում, այլև, հակառակը, հենց նա է ստեղծում անհրաժեշտ պայմաններ դատարանի համար՝ բարեհաջող արդարադատություն իրականացնելու»<sup>2</sup>:

Նախնական քննության ընթացքում կայացվող որոշումներն ու եզրակացությունները միայն նախապատրաստում են քրեական գործի հետագա քննությունը դատարանում: Տվյալ փուլում նախապատրաստական աշխատանք է իրականացվում հետագայում դատարանում կոնկրետ անձանց մեղավորության կամ անմեղության հարցերը որոշելու, հանցագործության հատկանիշների առկայութ-

<sup>1</sup> Фойницкий И.Я. Курс уголовного судопроизводства. Т. II. СПб.: Издательство «АЛЬФА», 1996, էջ 353:

<sup>2</sup> Строгович М.С. Курс Советского уголовного процесса. Том II: Порядок производства по уголовным делам по Советскому уголовно-процессуальному праву. М.: Издательство «Наука», 1970, էջ 40:

յունը պարզելու և մի շարք այլ հարցերի համար: Թեպետ դա չի բացառում, որ թվարկված հարցերը կարող են լուծվել հենց նախնական քննության փուլում: Դա հնարավոր է այն դեպքերում, երբ որոշում է կայացվում գործը կարճելու մասին: Սակայն ընդհանուր առմամբ դա չի փոխում նշված փուլի բնութագիրը:

Ի. Յա. Ֆոյնիցկին այսպես է մեկնաբանում այս փուլը. «Քրեական գործերում, պարզվում է, անհրաժեշտ է հասարակական իշխանության մասնակցությունը, որովհետև մասնավոր անձանց ուժերը կարող են չհերիքել գործը պատշաճ ձևով նախապատրաստելու համար, ինչպես նաև այն պատճառով, որ քրեական գործերի հիմքում ընկած է հանրային շահը, որին մասնավոր շահերը ոչ միշտ են համահունչ»<sup>1</sup>: Այսինքն՝ այս փուլում առաջնայինը հանրային շահի դրսևորումն է: Իրոք, նախնական քննության ընթացքում հավաքվում են ապացույցներ, դրանցից ձևավորվում է համակարգ, որի օգնությամբ պետական մեղադրողը հիմնավորում է իր պահանջները հետագա դատական քննության ժամանակ: Հետևաբար, նախնական քննությունը ապացուցողական հիմք է ձևավորում դատական քննության ընթացքում պետական մեղադրանքի իրականացման համար: Ընդ որում՝ անհրաժեշտ է հաշվի առնել, որ պետական մեղադրանքի գործառույթում առավելագույնս է դրսևորվում հանրային հիմքը:

Մ. Ա. Չելցովը գրում է. «Քրեական դատավարության կառուցման ընդհանուր խնդիրներին համահունչ՝ խորհրդային օրենսդիրը պետք է գտներ նախնական քննության այնպիսի ձևեր, որոնք մի կողմից պիտի ապահովեին բոլոր հանցագործությունների արագ ու լրիվ բացահայտումը, իսկ մյուս կողմից առավելագույնս երաշխավորեին դատավարության բոլոր մասնակիցների, այդ թվում և մեղադրյալների և հանցագործությունից տուժողների իրավունքներն ու օրինական շահերը»<sup>2</sup>: Օրենսդիրը, անշուշտ, նախատեսել է նախնական քննության ընթացքում ինչպես մեղադրյալների, կասկած-

---

<sup>1</sup> **Фойницкий И.Я.** Курс уголовного судопроизводства. Т. II. СПб.: Издательство «АЛЬФА», 1996, էջ 353:

<sup>2</sup> **Чельцов М.А.** Советский уголовный процесс. М.: Государственное издательство юридической литературы, 1951, էջ 227:

յալների, այնպես էլ հանցագործությունից տուժողների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության մեխանիզմներ: Սակայն այնուամենայնիվ, պետք է նկատել, որ դա չէ նախնական քննության հիմքը: Իսկ Մ. Ա. Չելցովի՝ իրավունքների ու օրինական շահերի մասին հիշատակումը ավելի շուտ խորհրդային քրեական դատավարությունը ևս մեկ անգամ գունագարդելու ցանկություն է: Եթե հիշենք դրա ռեպրեսիվ բնույթի մասին, ապա պարզ է դառնում, որ նախնական քննության ընթացքում իրավունքների ու օրինական շահերի մասին հիշատակումը դատարկ խոսքեր են, որ խեղաթյուրում են իրավապահական մարմինների գործելակերպի իրական պատկերը:

Հետխորհրդային տարածքի պետություններում նախնական քննությունը անշուշտ տարբերվում է Խորհրդային Միությունում իրականացվող նախնական քննությունից: Անառարկելի է, որ ներկայումս «մինչդատավարական վարույթը կառուցված է այնպես, որ հուսալիորեն ապահովի հանցագործություններից տուժած անձանց (ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական) իրավունքներն ու օրինական շահերը, ինչպես նաև անձին պաշտպանի անօրինական ու անհիմն մեղադրանքից, դատապարտումից, նրա իրավունքներն ու ազատությունները սահմանափակելուց»<sup>1</sup>: Այսինքն՝ այո, ներկայումս Հայաստանի Հանրապետությունում ստեղծված են մեխանիզմներ, որոնք ունակ են երաշխավորելու անձի իրավունքներն ու օրինական շահերը նախնական քննության ընթացքում: Սակայն այնուամենայնիվ, չի կարելի մոռանալ նախնական քննության բնույթի մասին, որը փոքր-ինչ այլ նպատակներ է հետապնդում, քան անձի իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելը:

Ամենահամոզիչ փաստարկներից մեկն այն է, որ տվյալ փուլում որոշում կայացնելու իրավագործությամբ օժտված պաշտոնատար անձինք են քննիչը, հետաքննության մարմինը: Վերջիններս, ՀՀ քր. դատ. օր.-ի 7-րդ գլխի համաձայն, մեղադրանքի կողմի մեջ մտնող սուբյեկտներ են: Դրանից օրինաչափորեն հետևում է, որ նախնա-

---

<sup>1</sup> **Масленникова Л.Н.** Досудебное производство по УПК РФ. // Материалы международной научно-практической конференции, посвящённой принятию нового Уголовно-процессуального кодекса Российской Федерации. М., 2002, էջ 139:

կան քննության ժամանակ ամեն ինչ կառուցվում է մեղադրանքի շուրջ, իսկ մեղադրանքի ու քրեական հետապնդման գործառույթներն իրականացվում են առավելագույնս:

Սակայն և՛ նախնական քննության, և՛ դրա կենտրոնական գործող անձի՝ քննիչի հանդեպ նման մոտեցումը տեղ գտավ ԱՊՀ պետություններից շատերի նոր՝ հետխորհրդային օրենսդրությունում: Գատավարական երեք հիմնական գործառույթների (մեղադրանքի, պաշտպանության և քրեական գործի լուծման) հայեցակարգը երկար ժամանակ անվիճարկելի չէր համարվում: Այդ առումով փորձ արվեց պաշտպանելու այն դիրքորոշումը, ըստ որի քննչական գործունեությունը հատուկ տեսակ է, որը պայմանավորված է քննության նախնական բնույթով և միտված է քրեական գործի դատական լուծման համար պայմաններ ստեղծելուն: Պաշտպանելով այս տեսակետը՝ Ա. Պ. Գուլյանը գրում է. «Մեղադրանքի, պաշտպանության և քրեական գործի լուծման գործառույթների իրականացումը կանխորոշվում է գործի հանգամանքների հետազոտման արդյունքներով, ընդ որում, հանրահայտ է, որ քննիչի ամբողջ գործունեության մեջ ամենամեծ տեսակարար կշիռը բաժին է ընկնում հենց գործի հանգամանքների հետազոտմանը, ճշմարտության բացահայտմանը»<sup>1</sup>: Այնուհետև նա եզրակացնում է. «Նկատի ունենալով ասվածը՝ պետք է ընդունել, որ գործի հանգամանքների հետազոտումը քննիչի դատավարական գործառույթներից մեկն է»<sup>2</sup>:

Ա. Պ. Գուլյանի ասածի մեջ տրամաբանություն կա: Իրոք, նախքան կոնկրետ քրեական գործի վերաբերյալ եզրակացություն կատարելը և այն համապատասխան դատավարական որոշմամբ իրացնելը քննիչը հետազոտում է գործի հանգամանքները, այսինքն՝ իրականացնում է լիարժեք հետազոտական աշխատանք: Այս հարցում նա նման է գիտական հետազոտողի, որը բարեխղճորեն հավաքում է տվյալներ՝ նախապես չիմանալով, թե ինչ եզրահանգումների կարող են ծառայել դրանք հետագայում: Միայն բավարար չափով տվյալներ հավաքելուց հետո են նրանք եզրահանգումներ անում: Նույնը և քննիչն է, որը ապացույցներ հավաքելիս պարտավոր է լինել

<sup>1</sup> Гуляев А.П. Следователь в уголовном процессе. М.: Юрид. лит., 1981, էջ 12:

<sup>2</sup> Նույն տեղում:

անաչառ, և դրանց հիման վրա, երբ դրանք հավաքվել են բավարար չափով, նա կարող է համապատասխան եզրակացություն անել հանցագործության առկայության կամ բացակայության, կոնկրետ անձի մեղավորության կամ անմեղության մասին: Ըստ այդմ, կասկած չկա, որ քննիչը, իրոք, հետազոտական գործունեություն է կատարում, որի նպատակը քրեական գործով ապացուցման ենթակա հանգամանքները պարզելն է: Սակայն այս փաստարկը բնավ չի ժխտում վերը նշված դատավարական երեք հիմնական գործառույթների հայեցակարգը: Չէ՞ որ և՛ մեղադրանքը, և՛ պաշտպանությունը, և՛ քրեական գործի լուծումը մտածական գործունեություն են: Մեղադրանքը կառուցելու համար այն կազմող անձը պիտի համոզված լինի իր ճշմարտացիությանը, իսկ դրա համար անհրաժեշտ է, որ նա բազմակողմանիորեն հետազոտի քրեական գործի հանգամանքները: Նույնը անհրաժեշտ է և՛ պաշտպանություն իրականացնելու, և՛ քրեական գործը լուծելու համար: Ուստի գործի հանգամանքների հետազոտումը, որը պետք է իրականացնի քննիչը, մեղադրանքի գործառույթի մի մասն է: Առավել ևս, որ Ա. Պ. Գուլյանն ինքը գրում է. «Լինելով իշխանության ներկայացուցիչ՝ քննիչը ոչ միայն հետազոտում է գործի հանգամանքները և պարզում ճշմարտությունը, այլև միջոցներ է ձեռնարկում մեղավորներին քրեական պատասխանատվության ենթարկելու, ապօրինաբար մեղադրվող անձանց արդարացնելու, հանցագործությունների նախագողշացման ու կանխման, հանցագործության հետևանքով պատճառված նյութական վնասի փոխհատուցման համար, այսինքն՝ այնպիսի միջոցներ է ձեռնարկում, որոնք ոչ մի կերպ չեն տեղավորվում «հետազոտում» և «ճշմարտության պարզում» հասկացությունների մեջ»<sup>1</sup>: Ինչպես երևում է այս մեջբերումից, Ա. Պ. Գուլյանն ինքը ոչ միայն հակված չէ քննիչի գործունեությունը հանգեցնելու ճշմարտության հետազոտմանը, այլև խոստովանում է, որ նա նաև իրականացնում է գործունեության այնպիսի ձևեր, ինչպիսիք են մեղավորներին քրեական պատասխանատվության ենթարկելը, հանցագործությունների կանխումը և այլն, այսինքն՝ գործունեություն, որում ակներևաբար իրացվում է մեղադրանքի գործառույթը: Ուստի այն, որ

<sup>1</sup> Гуляев А.П. Следователь в уголовном процессе. М.: Юрид. лит., 1981, էջ 9:

օրենսդիրը քրեական դատավարության ժամանակ քննիչին դասել է մեղադրանքի կողմի մեջ մտնող մասնակիցների շարքը, միանգամայն հիմնավորված է:

Հայրենական դատավարական գրականության մեջ քրեադատավարական գործառույթների հիմնախնդիրն առավել մանրամասն ուսումնասիրել է պրոֆեսոր Գ. Գևորգյանը: Նրա առաջ քաշած նոր գաղափարների որդեգրումը քրեական դատավարության իրավունքի տեսության մեջ հիմք դրեց գործառույթների վերաբերյալ նոր մոտեցումների: Ելնելով քրեական դատավարությունում մրցակցության գործառույթի հետևողական կիրառումից, պրոֆեսոր Գ. Գևորգյանը առաջարկվեց քրեադատավարական գործառույթների համակարգը ներկայացնել հետևյալ կերպ՝ հիմնարար, հիմնական և լրացուցիչ գործառույթներ: Հեղինակը մեղադրանքը, պաշտպանությունը և գործի լուծումը ներկայացնում է որպես հիմնարար գործառույթներ: Մինչդատական վարությամբ քննության գործառույթը ներկայացվում է որպես հիմնական, որն իրականացնում են նախաքննության մարմինները՝ հետաքննության մարմինների մասնակցությամբ<sup>1</sup>:

Քննիչի կողմից իրականացվող գործառույթների հիմնախնդիրն առավել մանրամասն ուսումնասիրել է Ա. Թաթոյանն իր՝ «Գործի քննությունը քրեադատավարական գործառույթների համակարգում (համեմատախրավական վերլուծություն)» թեկնածուականատենախոսությունում: Նա նույնպես պաշտպանում է վերը նշված այն գաղափարը, որը քննիչի հիմնական գործառույթը քրեական գործի քննությունն է<sup>2</sup>: Ինչպես տեսնում ենք, մինչդատական վարությամբ քրեական դատավարության գործառույթների դասակարգման հարցը մնում է վիճելի:

Որ քննիչը նախնական քննության առանցքային դեմքն է, որը նաև քրեական դատավարության ժամանակ մեղադրանքի կողմի շահերից հանդես եկող մասնակիցներից, կարող ենք հետևություն կատարել, որ մեղադրանքի գործառույթն ընկած է նախնական

---

<sup>1</sup> Տե՛ս **Գևորգյան Գ.Ս.** Քրեական դատավարության պատմական և արդի հիմնահարցերը Հայաստանում: Եր., Երևանի համալս. հրատ., 2001 թ., էջ 234:

<sup>2</sup> Տե՛ս **Татоян А.А.** Расследование дела в системе уголовно-процессуальных функций (сравнительно-правовой анализ).—Ер.: Изд. Ереванского ун-та, 2007, էջ 88:

քննության հիմքում: Նման եզրակացության ենք հանգում նաև Հայաստանի Հանրապետության և հետխորհրդային տարածքում ձևավորված մի շարք այլ երկրների քրեական դատավարության ընդհանուր բնութագրից: Դրանցում, «դատական քննությունը լիովին համապատասխանում է մրցակցային քրեական դատավարության պահանջներին, իսկ մինչդատական փուլերում առկա են ինկվիզիցիոն դատավարության գծեր» ոչ լրիվ հրապարակայնություն, կողմերի լիակատար հավասարության բացակայություն, հետևաբար և՛ իրական մրցակցության բացակայություն, գրավոր ձևի առկայություն և այլն»<sup>1</sup>: Քրեական դատավարության այսօրինակ բնորոշումը հաստատում է այն պնդումը, որ նախնական քննությունը օժտված է ինկվիզիցիոն դատավարության գծերով և հետևաբար հիմնված է մեղադրանքի գործառույթի իրականացման վրա:

Քրեական դատավարության նշված բնութագիրը ևս մեկ փաստարկ է հօգուտ այն բանի, որ նախնական քննության ընթացքում առավել լիարժեքորեն իրացվում է մեղադրանքի գործառույթը, իսկ հիշյալ փուլի կենտրոնական դեմքը քննիչն է: Ընդ որում՝ իհարկե անհրաժեշտ է վերապահում անել առ այն, որ ժամանակակից նախնական քննության ինկվիզիցիոն բնույթը միջնադարյան ինկվիզիցիայի կրկնությունը չէ, որը ինկվիզիցիոն դատավարության յուրատեսակ չափանմուշ է: Միանգամայն արդարացի է Կ. Բ. Կալինովսկու դիտարկումը, որն ուշադրություն է դարձնում այն փաստին, որ ցանկացած դասակարգում պայմանական է, հետևաբար և չի կարելի ժամանակակից նախնական քննությունը բնութագրել որպես ինկվիզիցիոն քրեական դատավարության հատկանիշներ պարունակող՝ դրանով իսկ պիտակավորելով ու «սևացնելով» քրեական դատավարության նշյալ փուլը<sup>2</sup>: Իհարկե ժողովրդավարական պետությանը բնորոշ գծերից է այն, որ նա անձի իրավունքների ու օրինական շահերի առավելագույն պաշտպանության համար ձեռնարկում է հնարավոր բոլոր միջոցները նաև քրեական դատավարության այս փուլում:

Նշելով, որ նախնական քննության ընթացքում առավելագույն չափով է իրականացվում մեղադրանքի գործառույթը, չի կարելի

<sup>1</sup> Уголовный процесс Российской Федерации. / отв. ред. проф. А.П. Круткихов. М.: Проспект, 2009, էջ 15:

<sup>2</sup> Տե՛ս **Калиновский К.Б.** Основные виды уголовного судопроизводства. СПб., 2002, էջ 57:

ժխտել, որ դա չի հակասում քրեական վարույթի հիմնական պահանջներից մեկին՝ անձի իրավունքների ու ազատությունների երաշխավորմանը: Ընդ որում՝ հարկավոր է հաշվի առնել, որ քրեական դատավարության ընթացքում անհրաժեշտ է պաշտպանել դատավարության բոլոր մասնակիցների իրավունքներն ու ազատությունները, ոչ թե միայն մեղադրյալին ու կասկածյալին: Նախնական քննությունը, թերևս, նպաստում է անձի իրավունքների ու ազատությունների պաշտպանության գործում հնարավոր շեղումների չեզոքացմանը՝ հոգուտ մեղադրյալի, կասկածյալի: Շեղումներ առաջանում են միանգամայն հասկանալի բնական պատճառներով, որոնց էությունն այն է, որ հանրային իշխանությունը մինչև նախնական քննություն կատարելը չի տիրապետում կատարված հանցագործության մասին բավարար չափով տեղեկատվության: Այդ պատճառով նա չի կարող կայացնել որևէ որոշում՝ գործն ըստ էության լուծելու համար: Հաշվի առնելով, որ նախնական քննության ընթացքում հանրային իշխանությունը իրականացվում է մեղադրանքի գործառույթի մեջ, ակնհայտ է դառնում, որ մեղադրանքն առանց նախնական քննության գուրկ է իրեն անհրաժեշտ հիմնավորումներից: Դրա հետևանքով կարող են վնասվել հանցագործությունից տուժած անձի իրավունքներն ու ազատությունները, քանի որ նա արդյունավետորեն չի պաշտպանվի պետական մարմինների, այսինքն՝ հանրային իշխանության կողմից: Նախնական քննությունը վերացնում է այդ շեղումը, քանի որ դրա ընթացքում հավաքվում են ապացույցներ, որոնք հետագայում դառնում են մեղադրող կողմի փաստարկներ դատարանում ծավալվող մրցակցության ժամանակ:

Ընդ որում՝ չի կարելի նախնական քննությունը դիտել որպես մի փուլ, որի ընթացքում փաստարկներով զինվում է քրեական դատավարության կողմերից միայն մեկը՝ մեղադրանքի կողմը: Մյուս կողմն իրավունքներից զրկված չէ և նույնպես կարող է մասնակցել, միայն թե իր ապացուցողական բազայի ձևավորմանը, նա հնարավորություն ունի ծանոթանալու հավաքված ապացույցների հետ և քննադատելու դրանք ինչպես նախնական քննության ընթացքում, այնպես էլ հետագայում՝ դատական քննության ընթացքում: Բացի այդ, նա օժտված է իրավունքներով, որոնց օգնությամբ հնարավորություն է



ստանում պաշտպանելու իր շահերը քրեական դատավարության տվյալ փուլում: Ընդ որում՝ նախնական քննության անցկացման ձևն ինքնին ենթադրում է ոչ միայն տուժողների, այլև պաշտպանության կողմի իրավունքներն ու օրինական շահերը: Ժողովրդավարական երկրում անհնար է և անթույլատրելի, երբ մեղադրյալը, կասկածյալը ձայնագուրկ օբյեկտ են, որից ստանում են լոկ արդարադատության համար անհրաժեշտ տեղեկություններ: Սեղադրյալը, կասկածյալը դեռ հիշյալ փուլում քրեական դատավարության պակաս կարևոր մասնակիցներ չեն, քան դատական քննության փուլում: Նրանք կարող են ակտիվորեն մասնակցել ապացույցների հավաքմանն ու գնահատմանը: Թեև ՀՀ քր. դատ. օր.-ի 16-րդ գլխում այն չի համարվում ապացուցման սուբյեկտ, սակայն օժտված է դրա համար անհրաժեշտ բոլոր իրավունքներով: Այսպես՝ համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի 65-րդ հոդվածի, մեղադրյալն իրավունք ունի ցուցմունքներ տալ կամ հրաժարվել ցուցմունքներ տալուց, բացատրություններ տալ կամ հրաժարվել բացատրություններ տալուց, իր միջնորդությամբ՝ հետաքննության մարմնի, քննիչի կամ դատախազի թույլտվությամբ, անձամբ կամ պաշտպանի միջոցով մասնակցել քննչական կամ այլ դատավարական գործողությունների, ներկայացնել նյութեր քրեական գործին կցելու և հետագոտելու համար և այլն:

Այդուհանդերձ, չնայած մեղադրյալի, կասկածյալի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության բազմաթիվ երաշխիքներին՝ նախնական քննության ընդհանուր ուղղվածությունը որոշվում է մեղադրանքի գործառույթով: Ժամանակակից ժողովրդավարական պետության խնդիրն այն է, որ նշյալ գործառույթը նախնական քննության ընթացքում ունենա քաղաքակիրթ ձևեր, ինչը ենթադրում է անձի նկատմամբ հարգանք՝ անկախ քրեական դատավարության ընթացքում նրա վիճակից: Այսինքն՝ նախնական քննությունը պետք է ընդունի այնպիսի ձևեր, որոնք անհնար կդարձնեն կամայականությունները պաշտոնատար անձանց ու պետական մարմինների կողմից: Նախնական քննության կազմակերպման ու նորմատիվ կարգավորման այսպիսի մոտեցումը երաշխիքներ է ստեղծում, որպեսզի ինկվիզիցիոն դատավարության տարրեր չդրսևորվեն: Այս փուլում հետաքննության մարմինն ու

քննիչը պարտավոր են պահպանել դատավարության մասնակիցների, ինչպես նաև քրեական գործով վարույթին մասնակցող այլ անձանց՝ Սահմանադրությամբ և օրենքներով երաշխավորված իրավունքներն ու ազատությունները (անձի անձեռնմխելիության, բնակարանի անձեռնմխելիության, անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիության, պաշտպանության իրավունքը և այլն)<sup>1</sup>:

Նշված երաշխիքները հատկապես կարևոր են, եթե նկատի առնենք այն, որ մեղադրյալը, կասկածյալը քրեական դատավարության այն մասնակիցներն են, որոնց իրավունքներն ու ազատությունները մյուս սուբյեկտների համեմատ ամենաշատը կարող են սահմանափակվել, որն անխուսափելիորեն խոչընդոտներ կհարուցի նրանց կողմից իրենց օրինական շահերն իրացնելու հարցում: Այսպիսի կարգավիճակը դժվարացնում է նրանց կողմից իրենց իրավունքներն ու օրինական շահերը իրացնելը, ինչպես նաև դիրքորոշումը պաշտպանելը, որի էությունը կարող է լինել մեղադրանքը ժխտելը: Ուստի մեղադրյալի, կասկածյալի ոչ շահավետ վիճակը գոնե որևէ կերպ փոխհատուցելու համար անհրաժեշտ է քրեադատավարական օրենսդրությունում նախատեսել այդ անձանց իրավունքներն ու ազատությունները երաշխավորող մեխանիզմներ: Ժողովրդավարական պետությունների օրենսդրությունները նախատեսում են նման մեխանիզմներ: Ընդ որում՝ պետք է նշել, որ երբեմն դրանց օրենսդրական ամրագրումն ու իրավապահական մարմինների կողմից գործնականում կիրառելը որոշ տարակուսանք են հարուցում: Դա պայմանավորված է այն բանով, որ դատավարության կողմերից մեկը, իբր, չհիմնավորված կերպով ուժեղացվում է, ընդ որում՝ ի հաշիվ մյուս կողմի: Հենց դրանով են բացատրվում այն դժգոհությունները, թե քրեադատավարական օրենսդրությունը պաշտպանում է մեղադրյալին, կասկածյալին և բոլորովին մոռացել է այն մասին, որ տուժածի իրավունքները ևս պաշտպանության կարիք ունեն: Իրականում դա բնավ էլ այդպես չէ: Քրեադատավարական օրենսդրությունը ձգտում է հավասարապես պաշտպանել քրեական դատավարության բոլոր մասնակիցների իրավունքներն ու ազատությունները: Ընդ որում՝ նրա ելա-

---

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Հատուկ մաս, Երևանի պետ. համալս.- Եր.: Երևանի համալս. հրատ., 2005թ, էջ 43:

կետն այն է, որ մեղադրյալի սահմանադրական իրավունքներն ու ազատությունները կարող են լրջորեն սահմանափակվել, ուստի նրանց տրվում են դատավարական մի շարք իրավունքներ, որոնց իրացումը կոչված է պաշտպանելու նրանց իրավապահպան մարմինների պաշտոնատար անձանց կամայականություններից:

Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրությունում չկա «նախնական քննություն» հասկացության սահմանումը, չնայած այն բանին, որ ՀՀ քր. դատ. օր.-ի 26-րդ գլուխը վերանվանվեց նախնական քննություն, որում հիմնականում ներկայացվում են նախնական քննություն կատարելու ընդհանուր պայմանները: Ինչ վերաբերում է նախնական քննության ընդհանուր պայմաններին, ապա ՀՀ քր. դատ. օր.-ի 188.1-րդ հոդվածը նվիրվեց դրան: Օրենսդրական նշված փոփոխությունն անտրամաբանական ու անհասկանալի է, որովհետև վերը նշված հոդվածում տեղ են գտել ոչ թե նախնական քննության ընդհանուր պայմանները, այլ քննչական գործողություններին ներկայացվող ընդհանուր կանոնները: Այդպիսի սահմանում չկա նաև Ռուսաստանի Դաշնության քրեադատավարական օրենսդրությունում, թեև ՌԴ քր. դատ. օր.-ի 21-րդ գլխում քննարկվում են նախնական քննության վարույթի ընդհանուր պայմանները:

Սակայն չնայած «նախնական քննություն» հասկացության օրենսդրորեն ամրագրված սահմանման բացակայությանը, քրեական դատավարության տեսության մեջ կան այդ հասկացության բազմաթիվ սահմանումներ<sup>1</sup>: Այսպես՝ Մ. Ա. Չելցովը գրում է. «Քրեական

---

<sup>1</sup> Ст'я Стремовский В.А. Предварительное расследование в советском уголовном процессе / Под ред.: Гродзинский М.М. М.: Госюриздат, 1958, 136 էջ, **Ефимичев С.П.** Предварительное расследование и его роль в реализации уголовной ответственности. Автореф. дис. ... д-ра юрид. наук - Л., 1987, 31 էջ, **Рахунов Р.Д.** Предварительное расследование в советском уголовном процессе. Автореф. дис. ... д-ра юрид. наук - М., 1953, 23 էջ, **Мингалин Н.Н.** Предварительное расследование: понятие, задачи, формы (виды), общие условия. Учебное пособие - Екатеринбург: Изд-во УрАГС, 2005, 100 էջ, **Чистякова В.С.** Предварительное расследование нуждается в совершенствовании // Советское государство и право. М.: Наука, 1969, № 5, էջ 68-74, **Божьев В.П.** Предварительное расследование: традиции, новации, псевдоновации // Актуальные проблемы совершенствования организационных и правовых основ деятельности органов

դատավարությունում նախնական քննություն է կոչվում արդարադատության բոլոր օժանդակ մարմինների՝ դատախազության, քննության, հետաքննության լայն ու բազմակողմանի գործունեությունը՝ ուղղված հանցագործության նյութական հետքերի հայտնաբերմանն ու պահպանմանը, վկաներից ու փորձագետներից ապացույցների հավաքմանը, մեղավորի անձի հաստատմանն ու մերկացմանը, ինչպես նաև միջոցներ ձեռնարկելուն, որպեսզի նա չխուսափի դատից»<sup>1</sup>: Բ. Ս. Տետերինը և Ե. Չ. Տրոչկինը գրում են. «... Նախնական քննությունը քննիչի կամ հետաքննության մարմնի կողմից քննչական գործողությունների կատարումն է, որն ուղղված է հանցագործության բացահայտմանը, մեղադրյալին մերկացնող ապացույցների հավաքմանն ու հաստատմանը, դատարանի համար գործով դատավճիռ կայացնելու և այն ի կատար ածելու հնարավորությ

---

внутренних дел. Труды Академии управления (юбилейный выпуск). М.: Изд-во Акад. управления МВД России, 1999, էջ 149-158, **Петрухин И.Л.** Предварительное расследование: каким ему быть? // Законодательство. М., 2000, № 10, էջ 71-76, **Назаренко В.** Предварительное расследование в современном уголовном процессе // Законность. М., 2002, № 8, էջ 41-42, **Петрухин И.Л.** Предварительное расследование // Судебная реформа: проблемы и перспективы. М.: Ин-т гос. и права РАН, 2001, էջ 131-141, **Ляхов Ю.А.** Предварительное расследование в свете правовой реформы // Правовая реформа и проблемы ее реализации. Тезисы докладов и сообщений региональной научно-практической конференции, 14 - 15 сентября 1989 г.. Краснодар: Изд-во Кубан. ун-та, 1989, էջ 215, **Глотов С.Н.** Проблемы стадии предварительного расследования // Всероссийская научно-практическая конференция курсантов, слушателей, студентов и адъюнктов "Преступность в России: состояние и проблемы борьбы с ней". Сборник материалов. Воронеж: Изд-во Воронеж. ин-та МВД России, 2008, էջ 55-57, **Ղազինյան Գ.Ս.** Քրեական դատավարության պատմական և արդի հիմնահարցերը Հայաստանում: Եր., Երևանի համալս. հրատ., 2001 թ., էջ 234, **Татоян А.А.** Расследование дела в системе уголовно-процессуальных функций (сравнительно-правовой анализ).—Ер.: Изд. Ереванского ун-та, 2007, էջ 88, **Հովսեփյան Ա, Շահինյան Վ. Ղամբարյան Ա.** Մինչդատական վարույթի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում: Գիտագործնական ձեռնարկ, Եր.: ԵՊՀ հրատ., 2009, էջ 7-72, **Ալեքսանյան Մ.** Նախնական քննություն, Եր., 2002, 770 էջ, **Պետրոսյան Կ.Խ.** Նախաքննության գիտական կազմակերպման հիմնահարցերը, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2004, 392 էջ և ուրիշներ:

<sup>1</sup> **Чельцов М.А.** Советский уголовный процесс. М.: Государственное издательство юридической литературы, 1951, էջ 227:

յան ստեղծմանը»<sup>1</sup>: Ա. Վ. Սմիռնովն ու Կ. Բ. Կալինովսկին գրում են. «Նախնական քննությունը քրեական գործով մինչդատական վարույթի երկրորդ փուլն է, որի բովանդակությունը հարկադրական դատավարական գործողությունների կատարումն է, որոնք անհրաժեշտ են դատական քննությունը նախապատրաստելու համար»<sup>2</sup>: Հիշյալ հեղինակները այս փուլը բնորոշում են հետևյալ կերպ. «Նախնական քննության փուլի առջև ծառայում են խնդիրներն են. ա) հավաքել բավարար ապացույցներ դատարանում գործի քննության համար, բ) հիմնավորված կերպով կիրառել դատավարական հարկադրանքի միջոցներ, գ) ապահովել քրեական դատավարության մասնակիցների իրավունքները»<sup>3</sup>:

Նախնական քննության նշված բնորոշումներից երևում է, որ այն՝

- 1) ուղղված է ապացույցների հավաքմանը,
- 2) այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք ապահովում են հետագա դատական քննությունը,
- 3) դատավարական հարկադրանքի միջոցների կիրառումը մեղադրյալների, կասկածյալների նկատմամբ,
- 4) տվյալ փուլում քրեական դատավարության մասնակիցների իրավունքների և օրինական շահերի ապահովումը:

Ընդ որում՝ 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում նշված գործողությունները կարելի է ընդհանրացնել՝ անվանելով դրանք հետազայում կոնկրետ քրեական գործով դատական քննությանը նախապատրաստելու գործողություններ: Նախնական քննության փուլում իրավունքների և օրինական շահերի ապահովումը այդ փուլի խնդիրն է և ոչ նպատակը:

Համաձայն գործող քրեադատավարական օրենսդրության՝ նախնական քննությունն ունի երկու ձև՝ հետաքննություն և նախաքննություն: Ընդ որում՝ Ա. Մ. Լարինը կարծում է, որ «քննության

---

<sup>1</sup> **Тетерин Б.С., Трошкин Е.З.** Возбуждение и расследование уголовных дел. М.: Новый юрист, 1997, էջ 22:

<sup>2</sup> **Смирнов А.В., Калиновский К.Б.** Комментарий к Уголовно-процессуальному кодексу Российской Федерации. / под. Общ. ред. проф. А.В. Смирнова. М.: КНОРУС, 2007, էջ 237:

<sup>3</sup>Տես Նույն տեղում:

հիմնական ձևը նախաքննությունն է»<sup>1</sup>: Այդ պնդումը համապատասխանում է նաև ՀՀ քր. դատ. օր.-ի 188-րդ հոդվածի 1-ին մասի, որի համաձայն՝ «Նախաքննությունը պարտադիր է բոլոր քրեական գործերով»: Իրավաբանական գրականության մեջ բազմիցս տրվել են նախաքննության սահմանումները<sup>2</sup>:

Ըստ Մ. Ս. Ստրոգովիչի՝ «Նախաքննությունը համարվում է այդպիսին, քանի որ իրականացվում է մինչև դատարանը և դատարանի համար՝ նախապատրաստելով նյութերը, հավաքելով ու ստուգելով ապացույցները, որոնք անհրաժեշտ են դատարանին՝ լուծելու քրեական պատասխանատվության ենթարկված անձանց դատի տալու

---

<sup>1</sup> **Ларин А.М., Мельникова Э.Б., Савицкий В.М.** Уголовный процесс России. Лекции-очерки / Под ред. проф. В.М. Савицкого. М.: Издательство БЕК, 1997, էջ 151:

<sup>2</sup> Տե՛ս **Анненков С.И., Громов Н.А., Кузнецова Ю.В.** Дознание и предварительное следствие: сущность, задачи и значение стадии предварительного расследования // Следователь. М.: Юрист, 2000, № 4, էջ 12-18, **Жогин Н.В., Фаткуллин Ф.Н.** Предварительное следствие в советском уголовном процессе - М.: Юрид. лит., 1965, 367 էջ, **Тарасов-Родионов П.И.** Предварительное следствие. Пособие для следователей / Под ред.: Чельцов-Бебутов М.А. М.: Юрид. изд-во МЮ СССР, 1946, 196 էջ, **Фойницкий И.** Предварительное следствие и его реформа: Январь // Журнал гражданского и уголовного права: Январь. Издание С.-Петербургского Юридического Общества. -Пб.: Тип. Правительствующего Сената, 1882, Кн. 1, էջ 123-200, **Манова Н.С.** Предварительное следствие: идеи и новые законодательные реалии // Государство и право. М.: Наука, 2003, № 2, էջ 61-66, **Ефремова Н.П.** Предварительное следствие в системе уголовного судопроизводства по УПК РФ // Проблемы применения нового уголовно-процессуального законодательства в досудебном производстве. Материалы научно-практической конференции. Барнаул: Изд-во БЮИ МВД России, 2002, Ч. 1, էջ 90-93, **Горохова С.Н.** Предварительное следствие: плюсы и минусы нового Уголовно-процессуального кодекса Российской Федерации: Новое процессуальное законодательство Российской Федерации: Новеллы, достоинства и противоречия // Трибуна молодых ученых: Новое процессуальное законодательство Российской Федерации: Новеллы, достоинства и противоречия. Сборник научных трудов. Воронеж: Изд-во Воронеж. ун-та, 2003, Вып. 4: Ч. 1, էջ 40-47, **Рагинский М.** Советское предварительное следствие // Социалистическая законность. М.: Госюриздат, 1957, № 10, էջ 26-33, **Березина Л.В.** Предварительное следствие: от теории к практике (актуальные проблемы преподавания дисциплины специализации "Предварительное следствие в органах внутренних дел") // Военно-юридический вестник Приволжского региона. Сборник научных трудов. Самара: ООО "ИПК "Содружество", 2005, Вып. 3: Ч. 1, էջ 37-42 և արհշնիր:

հարցը, և դատական քննություն կատարելու համար»<sup>1</sup>: Այս սահմանումը ըստ էության նույնացնում է նախնական քննությունը և նախաքննությունը: Դա զարմանալի չէ, քանի որ նախաքննությունը ոչ միայն նախնական քննության ձևերից մեկն է, այլև հիմնական ձևն է: Հենց այդ պատճառով էլ երբեմն նախնական քննությունը և նախաքննությունը նույնացվում են: Առավել ևս, լինելով նախնական քննության ձևերից մեկը, նախաքննությանը հատուկ են նույն խնդիրները, այն հետապնդում է նույն նպատակները: Վերը մեջբերված ՀՀ քր. դատ. օր.-ի 188-րդ հոդվածի 1-ին մասի երևում է, որ նախաքննությունը պարտադիր է բոլոր գործերով: Հետևաբար, նախաքննության պարտադիր լինելը դրա հիմնական բնութագիրն է ըստ ՀՀ քր. դատ. օր.-ի:

Բ. Ս. Տետերինը և Ե. Չ. Տրոշկինը գրում են. «Նախաքննությունը նախնական քննության հիմնական ձևն է: Այն իրականացնում է քննիչը և ընդգրկում է քննչական գործողությունների ողջ ամբողջությունը, որն անհրաժեշտ է դատարանում գործը քննելու համար»<sup>2</sup>: Նշյալ սահմանումից երևում է, որ նախաքննությանը բնորոշ է այն, որ դրա ընթացքում քննիչը կարող է իրականացնել քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված բոլոր քննչական գործողությունները:

Հիմնվելով նախնական քննության վարույթի կարգը կարգավորող նորմերի վերլուծության վրա՝ հիշյալ փուլը կարելի է բնորոշել հետևյալ կերպ. *նախաքննությունը նախնական քննության հիմնական ձևն է, որը պարտադիր է քրեական դատավարության ընթացքում և ընդգրկում է քննչական և այլ դատավարական գործողությունների ամբողջությունը, որոնց իրականացումը անհրաժեշտ է հետազայում դատական քննության ընթացքն ապահովելու համար*: Նախնական քննության այս ձևը ամենաօպտիմալ գործիքն է դատարանում քրեական գործերի լուծման համար:

Համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի 188-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Հետաքննությունը կարող է լինել քննության սկզբնական փուլ՝ քրեա-

<sup>1</sup> Строгович М.С. Курс Советского уголовного процесса. Том II: Порядок производства по уголовным делам по Советскому уголовно-процессуальному праву. М.: Издательство «Наука», 1970, էջ 40:

<sup>2</sup> Тетерин Б.С., Трошкин Е.З. Возбуждение и расследование уголовных дел. М.: Новый юрист, 1997, էջ 22:

կան գործ հարուցելու պահից 10 օրվա ընթացքում»: Այս նորմից հետևում է, որ «հետաքննությունը նախնական քննության օժանդակ ձևն է»<sup>1</sup>: Հետաքննության առանձնահատկությունը դրա սեղմ լինելն է, ըստ որի հնարավոր է իրականացնել միայն անհետաձգելի քննչական ու այլ դատավարական գործողություններ: Ընդ որում միանշանակորեն կարելի է եզրակացնել, որ օրենքով սահմանված այդ սեղմ ժամկետներում հնարավոր է իրականացնել միայն այն գործողությունները, որոնք կարող են դիտվել որպես անհետաձգելի:

Ինչպես նախաքննության դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրությունում չի տրվում նաև հետաքննության մանրամասն սահմանումը: Թե ինչ է իրենից ներկայացնում այն, կարելի է եզրակացնել միայն քրեադատավարական իրավունքի գործող նորմերի վերլուծության հիման վրա: Իրավաբանական գրականության մեջ տրված բազմաթիվ բնորոշումները չեն լրացնում այդ բացը<sup>2</sup>:

---

<sup>1</sup> Տե՛ս Նույն տեղում:

<sup>2</sup> Տե՛ս **Коврига З.Ф.** Дознание, проводимое органами милиции, в советском уголовном процессе. Автореф. дис. ... канд. юрид. наук - Воронеж, 1964, 18 էջ, **Иванов В.А.** Дознание в советском уголовном процессе. Учебное пособие - Л.: Изд-во Ленингр. ун-та, 1966, 37 էջ, **Похмелкин В.А.** Дознание в советском уголовном процессе. Автореф. дис. ... канд. юрид. наук - М., 1959, 16 էջ, **Павлухин Л.В.** Дознание в советском уголовном процессе. Автореф. дис. ... канд. юрид. наук - Саратов, 1966, 16 էջ, **Масленков С.Л.** Дознание в современном уголовном процессе России: проблемы совершенствования. Автореф. дис. ... канд. юрид. наук - Нижний Новгород, 2004, 33 էջ, **Есина А.С.** Дознание - М.: Экзамен, 2005. 224 էջ, **Ковтун А.В.** Дознание в российском уголовном процессе и особенности его производства по отдельным категориям уголовных дел. Автореф. дис. ... канд. юрид. наук - Омск, 2006. 22 էջ, **Васильев А.Н.** Дознание в советском уголовном процессе // Советское государство и право. М.: Наука, 1959, № 6, էջ 97-105, **Белозеров Ю., Чувилев А., Чугунов В.** Дознание и его проблемы // Социалистическая законность. М., 1970, № 6, էջ 36-39, **Абдуллаев Ф., Зайцев О.** Дознание по УПК РФ // Уголовное право. М.: Интел-Синтез, 2002, № 3, էջ 77-79, **Масленков С.Л.** Дознание как проблема науки уголовного процесса // "Черные дыры" в Российском Законодательстве. Юридический журнал. М.: "1с: Компьютерный Аудит", 2004, № 4, էջ 316-327, **Масленков С.Л.** Современное дознание // "Черные дыры" в Российском Законодательстве. Юридический журнал. М.: "1с: Компьютерный Аудит", 2005, № 1, էջ 209-214, **Масленков С.Л.** Дознание в современном уголовном процессе России: проблемы совершенствования. Дис. ... канд. юрид. наук: 12.00.09 - Нижний Новгород, 2004. 206 էջ, **Лодкина А.Е.** Дознание: история развития, проблемы, перспективы // Закон и право. М.: ЮНИТИ-ДАНА, 2007, № 6, էջ 73-76 և նրիշնիւր:



Պետք է նշել, որ նույնպիսի իրավիճակ է Ռուսաստանի Դաշնության քրեադատավարական օրենսդրությունում: Թեպետ Ռ-Դ քր. դատ. օր.-ի 32-րդ գլուխը հատուկ նվիրված է հետաքննությանը, դրա սահմանումն այնտեղ տրված չէ:

Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության քրեադատավարական օրենսդրությունների համադրումը հնարավորություն է ընձեռում եզրակացնելու, որ երկու պետությունների քրեական դատավարությունում հետաքննության տարբերություններն այնքան էական են, որ կարելի է ասել, թե դրանք երկու տարբեր ինստիտուտներ են: Այսպես՝ համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի 197-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Հետաքննությունն ավարտվում է քրեական գործ հարուցելու պահից 10 օրվա ընթացքում»: Դրանից երևում է, որ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում հետաքննությունը նախաքննությանն օժանդակող բնույթ ունի: Մինչդեռ, ըստ Ռ-Դ քր. դատ. օր.-ի 150-րդ հոդվածի 3-րդ մասի. «Հետաքննություն իրականացվում է սույն նորմով սահմանված հանցագործություններով»: Իսկ Ռ-Դ քր. դատ. օր.-ի 223 հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Հետաքննությունն իրականացվում է քրեական գործ հարուցելու օրվանից սկսած 30 օրվա ընթացքում»: Այսինքն՝ դրանից հետևում է, որ հետաքննությունը Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարությունում նախնական քննության ինքնուրույն ձև է, որն իրականացվում է օրենքով սահմանված քրեական գործերով:

Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրությունում «հետաքննություն» հասկացության սահմանման և վարույթի կարգի բացակայությունը նախնական քննության այս ձևը մասամբ դուրս է թողնում քրեական դատավարության սահմաններից: Դրա հետևանքը նախաքննությունն իրականացնող պաշտոնատար անձանց և հետաքննության մարմինների միջև փոխհարաբերությունների ոչ այնքան հստակ կարգավորվածությունն է, ինչպես նաև նշված անձանց իրավասությունների ոչ այնքան հստակ սահմանումը: Դա գործնականում դժվարություններ է առաջացնում հետաքննության մարմինների և նախաքննության մարմինների գործունեության մեջ, բարդություններ ստեղծում նախնական քննության խնդիրների իրականացման գործում:

Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օ-

րենսդրությունում հետաքննությունը կարգավորող նորմերը շատ չեն: Կարծում ենք՝ դա կարող է վտանգել քրեական դատավարությանը մասնակցող անձանց իրավունքները և օրինական շահերը: Դա բարեբեր հող կարող է դառնալ հետաքննության մարմինների ու առանձին պաշտոնատար անձանց ամեն տեսակ չարաշահումների ու կամայականությունների համար: Առավել ևս, որ չի կարելի թույլ տալ՝ հետաքննություն կատարող անձին հանձնարարվի առանց բացառության բոլոր քննչական գործողությունների իրականացումը: Դա կարող է հանգեցնել այն բանին, որ մասնագիտական ոչ այնքան որակյալ գործողությունների հետևանքով համընդհանուր գործելակերպ կդառնան քրեական դատավարությանը մասնակցող անձանց իրավունքների և օրինական շահերի խախտումները: Բացի այդ, ոչ հմտորեն իրականացված քննչական գործողությունը կարող է անհնար դարձնել քննության համար անհրաժեշտ ապացույցների ձեռք բերումը:

Ուստի, կարծում ենք, անհրաժեշտ է առավել մանրակրկիտ կարգավորել հետաքննությունը, սահմանել հետաքննության իրականացման ձևը, ինչը կերաշխավորի նախնական քննության փուլին մասնակցող անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը:

Ընդհանուր առմամբ բնութագրելով նախնական քննությունը՝ հարկ է նկատել, որ այն, ինչպես և քրեական դատավարության ցանկացած այլ փուլ, օժտված է որոշակի առանձնահատկություններով, որոնք դրսևորվում են քրեական դատավարության սկզբունքների իրականացման մեջ: Այսպես՝ որոշ չափով սահմանափակված է հրապարակայնության սկզբունքը: Համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի 201-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Նախնական քննության տվյալները ենթակա են հրապարակման միայն գործի վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ»: Նշված սկզբունքի այս սահմանափակումը պայմանավորված է կոնկրետ քրեական գործերի արդյունավետ քննության և ճշմարտության բացահայտման հարցում չշահագրգռված անձանց կողմից ակտիվ հակազդեցություն թույլ չտալու անհրաժեշտությամբ: Ընդ որում՝ ինչպես իրավագիտորեն նկատում է Յու. Վ. Ֆրանցիֆերովը. «Նախաքննության տվյալների հրապարակման

անթույլատրելիությունը չի նշանակում, թե նախաքննությունը գաղտնի է, ինչպես, օրինակ, օպերատիվ-հետախուզական գործունեությունը, քանի որ գործի քննության մասին տեղեկությունները կարող են գրավել հասարակայնության, զանգվածային լրատվամիջոցների ուշադրությունը: Եթե այդ տվյալների հրապարակումը չխանգարի քննությանը և չհանգեցնի դատավարության մասնակիցների իրավունքների խախտմանը, իրավասու պաշտոնատար անձինք կարող են թույլատրել դրանց հրապարակումը որոշակի սահմաններում»<sup>1</sup>:

Բացի այդ, կարելի է նշել, որ նախնական քննությանը բնորոշ է քննության ակտիվության ու արագության սկզբունքը: Այսպես՝ նախնական քննության արագությունը պայմանավորված է նախնական քննության համար սահմանված բավականին կարճ ժամկետներով: ՀՀ քր. դատ. օր.-ի 197-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է. «Հետաքննությունն ավարտվում է քրեական գործ հարուցելու պահից 10 օրվա ընթացքում»: ՀՀ քր. դատ. օր.-ի 197-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված են նաև նախնական քննության ժամկետները: Այս կապակցությամբ նշված նորմում նախատեսված է. «Քրեական գործով նախաքննությունը պետք է ավարտվի ոչ ուշ, քան երկամսյա ժամկետում: Այդ ժամկետը հաշվվում է քրեական գործ հարուցելու մասին որոշում կայացնելու օրվանից և ավարտվում է գործը դատարան ուղարկելու մասին կամ գործով վարույթի կարճման մասին որոշման կայացման օրը»: Քննության ընթացքում ակտիվությունը սահմանվում է ՀՀ քր. դատ. օր.-ի 26-րդ գլխի նորմերով, ինչպես նաև ՀՀ քր. դատ. օր.-ի այն գլուխներով, որոնցում կանոնակարգվում է քննչական և այլ դատավարական գործողությունների կատարումը, որոնք կարող են իրականացվել քրեական դատավարության տվյալ փուլում:

Քննության ակտիվության ու արագության սկզբունքը հարկ է դիտարկել որպես «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային համաձայնագրի» 14-րդ հոդվածի 3-րդ կետում

---

<sup>1</sup> **Франциферов Ю.В.** Сочетание гласности и тайности при производстве предварительного расследования и судебного разбирательства. // Адвокатская практика. 2007. № 4, էջ 9:

ամրագրված սկզբունքի իրականացում, որի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք իր նկատմամբ առաջադրված ցանկացած քրեական մեղադրանքի քննության ժամանակ, լիակատար հավասարության հիման վրա, նվազագույնը հետևյալ երաշխիքների իրավունք ունի... 3) առանց չարդարացված հապաղման դատվելու» (հոդված 2)»։ Նշյալ սկզբունքի իրացումը ենթադրում է նաև կոնկրետ քրեական գործի բոլոր հանգամանքների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննություն։

Նախնական քննությանը հատուկ մյուս սկզբունքը քննիչի դատավարական ինքնուրույնության սկզբունքն է։ Խորհրդային նախնական քննության առնչությամբ բնութագրելով նշյալ սկզբունքը՝ Ա. Պ. Գուլյանը գրում է. «Զննիչը քննության ուղղվածության, քննչական գործողությունների կատարման մասին բոլոր որոշումները կայացնում է ինքնուրույն, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով նախատեսված է դատախազի թույլտվությունը ստանալը, և ամբողջովին պատասխանատու է դրանք օրինական կարգով ու ժամանակին իրականացնելու համար»<sup>1</sup>։ Այս սկզբունքի գործողությունն այսօր էլ նախնական քննության խնդիրների արդյունավետ լուծման գրավական է։ Ուստի օրենսդիրը դրան առանձնահատուկ ուշադրություն է դարձնում։ Այսպես՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 55 հոդվածի 3-րդ մասում սահմանված է. «Քրեական գործն իր վարույթն ընդունելուց հետո քննիչը գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության համար լիազորված է ինքնուրույն ուղղություն տալ քննությանը, ընդունել անհրաժեշտ որոշումներ, սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան իրականացնել քննչական և այլ դատավարական գործողություններ, բացառությամբ այն դեպքերի, երբ քրեական դատավարական օրենքով նախատեսվում է դատարանից ստանալ թույլտվություն»։ Մ. Ս. Ստրոգովիչը գրում է. «Զննիչը օժտված է որոշակի դատավարական անկախությամբ, նա գործի վերաբերյալ կայացնում է այն որոշումները, որոնց իրավացիությանը ինքը համոզված է, և չի կարող հարկադրաբար կատարել գործողություններ և կայացնել որոշումներ, որոնք նա համարում է սխալ, որոնց անհրաժեշտությունը, նրա համոզմամբ, չի բխում գործի հանգամանքներ

---

<sup>1</sup> Гуляев А.П. Следователь в уголовном процессе. М.: Юрид. лит., 1981, էջ 98:

րից»<sup>1</sup>:

Դատաիրավական բարեփոխումները ենթադրում են լիազորությունների վերաբաշխում և իրավապահական մարմինների համակարգի վերակառուցում: Գ. Ղազինյանը արդարացիորեն նշում է, որ նախաքննության կազմակերպական հիմնախնդիրները քննարկելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել երեք փոխկապված խնդիրների վրա՝ նախ՝ արդյունավետ կազմակերպական կառույցի ստեղծում, երկրորդ՝ քննիչի դատավարական անկախության ապահովում, երրորդ՝ դատախազի և քննչական բաժնի պետի քննության դատավարական ղեկավարման լիազորությունների ճիշտ հարաբերակցության որոշում<sup>2</sup>:

Սակայն քննիչի դատավարական ինքնուրույնությունը չի կարող լինել անսահմանափակ, քանի որ այդ դեպքում այն կվերածվի կամայականություն հրահրող գործոնի: Հենց այդ պատճառով օրենսդրությամբ մի շարք միջոցներ են նախատեսված հնարավոր շեղումները կանխելու համար, որոնք կարող են արտահայտվել քննիչի մեղադրական ուղղվածության և կամայականության այլ բացասական դրսևորումներում: Այս կապակցությամբ ՀՀ քր. դատ. օր.-ի 55-րդ հոդվածի 3-րդ մասում նախատեսված է. «Քննիչը պատասխանատվություն է կրում քննչական և այլ դատավարական գործողություններն օրինական ու ժամանակին կատարելու համար»: Բացի այդ, ՀՀ քր. դատ. օր.-ի 55-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված է. «Քննիչը պարտավոր է կատարել դատախազի օրինական ցուցումները»: Սրանից երևում է, որ քննիչի դատավարական ինքնուրույնությունը և սահմանափակվում է դատախազի կողմից, որը կարող է քննիչին պարտադիր կատարման ենթակա ցուցումներ տալ: Քննիչի համար պարտադիր են նաև քննչական բաժանմունքի պետի ցուցումները: ՀՀ քր. դատ. օր.-ի 193-րդ հոդվածի 3-րդ մասում ասվում է. «Քննչական բաժնի պետի ցուցումները քննիչին տրվում են գրավոր և պարտադիր են կատարման համար»: Նշենք, որ այս դեպքում քննի-

---

<sup>1</sup> Строгович М.С. Курс Советского уголовного процесса. Том II: Порядок производства по уголовным делам по Советскому уголовно-процессуальному праву. М.: Издательство «Наука», 1970, էջ 45:

<sup>2</sup> Տե՛ս **Ղազինյան Գ.Ս.** Քրեական դատավարության պատմական և արդի հիմնահարցերը Հայաստանում: Եր., Երևանի համալս. հրատ., 2001 թ., էջ 324:

չը իրավունք ունի դատախազին բողոքարկելու քննչական բաժանմունքի պետի ցուցումները:

Քրեական դատավարության՝ նախնական քննությանն առնչվող կենտրոնական հիմնախնդիրներից մեկը քննիչի դատավարական ինքնուրույնության շրջանակը սահմանելու խնդիրն է: Պե՞տք է սահմանափակել այն՝ դրանով իսկ անվստահություն դրսևորելով քննիչի նկատմամբ, և սահմանափակելու դեպքում՝ ի՞նչ չափով: Ինչպես երևում է ՀՀ քր. դատ. օր.-ի մեջբերված նորմերից, Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը գերադասել է նշյալ հիմնախնդրի լուծման առաջին տարբերակը, այսինքն՝ անհրաժեշտ է համարել սահմանափակել քննիչի դատավարական ինքնուրույնությունը: Դ-ա, թերևս, ողջամիտ ու հիմնավորված քայլ է: Չէ՞ որ եթե ցանկացած իշխանական լիազորություն չսահմանափակվի, ապա կարող է վերածվել կամայականության, որը սպառնալիքի տակ կդնի անձի իրավունքներն ու ազատությունները, որոնք երաշխավորված են ՀՀ Սահմանադրությամբ և այլ օրենքներով: Դ-ա լիովին վերաբերում է նաև քննիչին, որը նախնական քննության փուլում տիրապետում է դատավարական զգալի իշխանությամբ քրեական դատավարության մի շարք մասնակիցների, հատկապես կասկածյալի և մեղադրյալի նկատմամբ:

Սակայն ընդունելով քննիչի դատավարական ինքնուրույնության շրջանակի սահմանման խնդրի լուծման նշյալ տարբերակը, հարց է ծագում, թե ի՞նչ չափով կարելի է և պետք է սահմանափակել քննիչի դատավարական ինքնուրույնությունը: Նրա ինքնուրույնությունը պե՞տք է արդյոք համապատասխանի դատավորի դատավարական ինքնուրույնությանը, թե՞ այն պիտի ավելին կամ պակաս լինի: Չէ՞ որ նա, ինչպես նշվեց, նախաքննության կենտրոնական դեմքն է, իսկ «նախաքննությունը մինչդատական և «դատական քննությանը նպաստելու» բնույթ ունի»<sup>1</sup>: Եթե այդպես է, ապա քննիչին կարելի է համարել դատավորին հավասարագոր անձ, այսինքն՝ համարել յուրատեսակ «փոքր» դատավոր: «Փոքր» այն պատճառով,

---

<sup>1</sup> **Ларин А.М., Мельникова Э.Б., Савицкий В.М.** Уголовный процесс России. Лекции-очерки. / под ред. проф. В.М. Савицкого. М.: Издательство БЕК, 1997, էջ 151:

որ նրա կայացրած որոշումները վերջնական բնույթ չունեն այլ միայն նախնական են: Մ. Ս. Ստրոգովիչի դիտարկմամբ. «Հարկ է նշել, որ քննիչի անկախությունը տարբերվում է դատավորների անկախությունից: Դատավորներին ոչ ոք, պետության ոչ մի մարմին, նույնիսկ վերադաս դատարանն իրավունք չունի ցուցումներ տալու, թե նրանք ինչպես պետք է լուծեն դատարանի քննության ներքո գտնվող գործը: Իսկ քննիչին ցուցումներ կարող է տալ դատախազը գործի քննությանն առնչվող բոլոր հարցերի վերաբերյալ, և դրանք քննիչի համար պարտադիր են»<sup>1</sup>: Հայաստանի Հանրապետության արդի քրեադատավարական օրենսդրությունը լիովին համապատասխանում է այդ դիտարկմանը: Իրոք, համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի 40-րդ հոդվածի 1-ին մասի՝ « Արդարադատություն իրականացնելիս դատավորներն անկախ են և ենթարկվում են միայն օրենքին»: Իսկ նույն հոդվածի 3-րդ մասում ասվում է. «Արդարադատությունն իրականացվում է դատավորների նկատմամբ կողմնակի ներգործությունը բացառող պայմաններում»: Այսինքն՝ դատավորի լիազորությունները ավելի շատ են, քան քննիչի լիազորությունները և ավելի քիչ սահմանափակումներ ունեն:

Սակայն արդյոք հիմնավորվա՞ծ են դատավորի և քննիչի լիազորությունների այսպիսի տարբերությունները: Եվ հարկավո՞ր է արդյոք պահպանել դրանք Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրությունում: Այս հարցի պատասխանը պիտի լինի հաստատական: Այո, այդպիսի տարբերակում պետք է լինի, և դա պայմանավորված է այն բանով, որ, ի տարբերություն դատավորի, քննիչը քրեական դատավարության մասնակից է մեղադրանքի կողմի, ուստի նրան դատավորի ունեցած լիազորություններով օժտելը կհանգեցնի մեղադրանքի կողմի չիմնավորված ուժեղացման: Դա իր հերթին սպառնալիքի տակ է դնում մեղադրյալի ու կասկածյալի, ինչպես նաև քրեական դատավարության պաշտպանության կողմի բոլոր մասնակիցների իրավունքներն ու օրինական շահերը:

Դատավորի և քննիչի լիազորությունների տարբերության

---

<sup>1</sup> **Строгович М.С.** Курс Советского уголовного процесса. Том II: Порядок производства по уголовным делам по Советскому уголовно-процессуальному праву. М.: Издательство «Наука», 1970, էջ 45:

պահպանման օգտին խոսող մյուս հիմնավորումն այն է, որ նախնական քննության և դատական քննության փուլերում գործում են տարբեր մեխանիզմներ, որոնք երաշխավորում են մարդու իրավունքներն ու ազատությունները: Շնորհիվ այդ մեխանիզմների՝ տարբեր ձևերով իրացվում են նաև քրեական դատավարության առանձին սկզբունքներ: Այսպես՝ մրցակցության սկզբունքը նախնական քննության փուլում փոքր-ինչ այլ կերպ է դրսևորվում, քան դատական քննության փուլում: Ավելին՝ նախնական քննության փուլում այն որոշ չափով սահմանափակվում է: Պատահական չէ, որ որոշ հետազոտողներ ենթադրում էին և ենթադրում են, որ նշյալ սկզբունքը նախնական քննության փուլում առհասարակ չի գործում: Մասնավորապես, Գ. Ն. Կոլբայան գրում է. «Մրցակցության սկզբունքը չի գործում ոչ միայն մեղադրանք առաջադրելու պահին, այլև նախաքննության ողջ ընթացքում, որովհետև քննիչը այդ ժամանակ իրականացնում է ինչպես մեղադրանքի գործառույթը, այնպես էլ գործի լուծման գործառույթը»<sup>1</sup>: Այս դատողությունը ճշմարտացի համարել, անշուշտ, չի կարելի, քանի որ նախաքննությանը խորթ չէ մրցակցությունը, որովհետև ոչ միայն մեղադրանքի կողմն է օժտված իր շահերը պաշտպանելու լիազորություններով, այլև պաշտպանության կողմն ունի իր օրինական շահերը պաշտպանելու դատավարական իրավունքներ: Ընդ որում՝ թե՛ մեկ, թե՛ մյուս կողմերը հնարավորություն ունեն ամբողջ ծավալով օգտվելու այդ իրավունքներից: Գ. Ն. Կոլբայայի տեսակետում արժեքավոր է այն միտքը, որն առաջանում է դատական քննության և նախաքննության ընթացքում մրցակցության սկզբունքի գործողությունը համադրելիս: Մրցակցության սկզբունքի սահմանափակվածությունը նախնական քննության փուլում էականորեն նվազեցնում է անձի իրավունքների ու ազատությունների երաշխիքները: Այն ծնում է իրավունքների ու ազատությունների պաշտպանության կախվածություն քննիչից: Ուստի քննիչի կամայականությունը գոնե փոքր-ինչ զսպելու համար նրա լիազորությունները սահմանափակվում են այլ անձանց լիազորություններով, որոնք քրեական դատավարության մասնակիցներ են:

---

<sup>1</sup> **Колбая Г.Н.** Соотношение предварительного следствия и судебного разбирательства. М.: Юрид. лит., 1975, էջ 24:



#### **§ 4 Նախնական քննության փուլում անձի իրավունքների պաշտպանության իրավական կարգավորման ժամանակակից վիճակը և զարգացման միտումները**

Ժամանակակից քրեադատավարական օրենսդրությանը բնորոշ է ձգտումը, որ մրցակցության սկզբունքն ավելի ամբողջական իրացվի դեռ նախնական քննության փուլում: Ըստ այդմ, համաձայն ՀՀ գործող քր. դատ. օր.-ի, պաշտպանին տրված են ավելի մեծ իրավունքներ, քան նախկին ՀԽՍՀ քր. դատ. օր.-ով էր տրված: Այսպես՝ ըստ ՀՀ քր. դատ. օր.-ի 73-րդ հոդվածի 1-ին մասի, պաշտպանն իրավունք ունի «քրեական գործով ձեռք բերել նյութեր, դրանք ներկայացնել քրեական գործին կցելու և հետազոտելու համար», ինչպես նաև «հարցման ենթարկել մասնավոր անձանց, ինչպես նաև տարբեր կազմակերպություններից պահանջել տեղեկանքներ, բնութագրեր և այլ փաստաթղթեր, եթե դրանք չեն պարունակում պետական կամ ծառայողական գաղտնիք»: Բացի այդ, համաձայն նույն նորմի, պաշտպանն իրավունք ունի «պաշտպանյալի համաձայնությամբ հարցնել մասնագետների կարծիքը՝ պարզաբանելու համար իրավաբանական օգնություն ցույց տալու հետ կապված այն հարցերը, որոնք պահանջում են հատուկ գիտելիքներ»: Նշյալ իրավունքները հնարավորություն են ընձեռում փաստաբանին ակտիվ դիրքորոշում որդեգրելու դեռ նախնական քննության փուլում: Այս առումով անվիճելի է, որ քրեադատավարական օրենսդրությունը, փաստաբան-պաշտպանին օժտելով նշված իրավունքներով, լուրջ առաջընթաց քայլ է կատարել քրեական դատավարությունում մարդասիրական գաղափարների հաստատման ուղղությամբ:

Խորհրդային քրեադատավարական օրենսդրությանը բնորոշ էին այն նորմերը, որոնք ամրագրում էին փաստաբան-պաշտպանի պասիվ դերակատարումը: Ինչպես իրավագիտորեն նկատում է Ա. Ն. Սկլիզկովը. «Պաշտպանի դերը հանգեցվում էր, կամ քննչական գործողություններ կատարելու կամ գործին փաստաթղթեր և իրեր կցելու վերաբերյալ միջնորդություն հարուցելուն»<sup>1</sup>: Ա. Դավլե-

---

<sup>1</sup> Склизов А.Н. Взаимодействие сторон уголовного судопроизводства на стадии предварительного расследования. // Адвокатская практика. 2007. № 3, էջ 22:

տովը, բնութագրելով պաշտպանի իրական վիճակը քրեական դատավարությունում, գրում է. «Պաշտպանը խնդրում էր, իսկ քննիչը որոշում, ապացույցը լինի, թե ոչ: Ավելի պարզ ասած՝ քննիչը գործի «տեքն էր», իսկ պաշտպանը՝ միջնորդը, խնդրատուն... քրեական դատավարության մարմինները ապացույցներ էին հավաքում, իսկ մյուս մասնակիցները, մասնավորապես՝ պաշտպանը, նրան աջակցում էին»<sup>1</sup>: Ուստի զարմանալի չէ, որ որոշ իրավաբանների կարծիքով մրցակցության սկզբունքը բացակայում էր խորհրդային շրջանի քրեական դատավարությունում: Խորհրդային քրեական դատավարության նախնական քննության փուլում այդ սկզբունքի գործողության մասին կարող էին խոսել միայն այն հեղինակները, ովքեր ձգտում էին համաձայնեցնել իրենց տեսակետները այդ ժամանակաշրջանում տիրապետող գաղափարախոսության հետ: Այսպես՝ Մ. Ս. Ստրոգովիչը, զարգացնելով նախնական քննության փուլում մրցակցության սկզբունքի գոյության մասին միտքը, համարում էր, որ քննիչը նշյալ փուլում, բացի մեղադրանքի գործառույթից, իրականացնում է նաև պաշտպանության գործառույթ: Այդ կապակցությամբ նա գրում է. «Եթե քննիչը պաշտպանության գործառույթ չիրականացներ, կստացվեր, որ բոլոր քրեական գործերով... քննության ամբողջ ընթացքում մինչև դրա ավարտը մեղադրյալն ինքն է միայն պաշտպանում իրեն, ուրիշ ոչ ոք նրան չի պաշտպանում, իսկ քննիչը, որ քննում է գործը և լայն լիազորություններ ունի՝ ներառյալ մեղադրյալի նկատմամբ հարկադրանքի միջոցների կիրառումը, մերկացնում է մեղադրյալին: Այդպիսի կառուցվածքը քննիչի գործունեությանը կհաղորդեր միակողմանի մեղադրական բնույթ, մինչդեռ օրենքով (Քրեական դատավարության հիմունքներ, հոդված 14) քննիչը պարտավոր է պարզել ոչ միայն մեղադրյալին մերկացնող, այլև նրան արդարացնող հանգամանքները»<sup>2</sup>: Համանման տեսակետներ ունեին նաև այդ շրջանի այլ իրավագետներ: Այսպես՝ Վ. Պ. Նաժիմովը ենթադրում էր, որ քննիչն իր գործողություններով իրականացնում է և՛ մեղադրանքի, և՛ պաշտպանության գործառույթներ:

<sup>1</sup> Давлетов А. Право защитника собирать доказательства. // Российская юстиция. 2003. № 7, էջ 50:

<sup>2</sup> Строгович М.С. Курс Советского уголовного процесса. Том I: Основные положения науки Советского уголовного процесса. М.: Издательство «Наука», 1968, էջ 227:

Սակայն գործառույթների այսպիսի համատեղումը առկա է միայն մինչև քննիչի կողմից որպես մեղադրյալ ներգրավելու որոշում կայացնելը<sup>1</sup>: Նշված տեսակետները քննադատվել են դեռ խորհրդային քրեադատավարական օրենսդրության գործողության շրջանում: Այսպես՝ Ա. Պ. Գուլյանը գրում է. «Անհասկանալի է, թե ում և ինչպես է միաժամանակ մեղադրում և պաշտպանում քննիչը նախքան անձին որպես մեղադրյալ ներգրավելը կամ մինչև գործը կարճելը, որով ոչ ոք ներգրավված չէ որպես մեղադրյալ, ինչի հիման վրա քննիչը կարող է անել այդ, եթե ո՛չ մեկը, ո՛չ մյուսը գերադասելի, ճիշտ և հիմնավորված չէ նրա համար, պարզ չէ թե ինչ գործառույթ է ընտրում և իրացնում քննիչը, երբ ոչ արդարացնող հիմքով կարճում է գործը, որով անձը չէր ներգրավվել որպես մեղադրյալ»<sup>2</sup>:

Ժողովրդավարական պետության քրեադատավարական օրենսդրությունում նախնական քննության փուլի համար կատարյալ մոդել է փաստաբան-պաշտպանի ակտիվ դերակատարումը նշյալ փուլում: Դրա շնորհիվ հնարավոր է դառնում մրցակցության սկզբունքի ավելի լիակատար իրացումը: Պետք է ասել, որ իրավացի է այն պնդումը, թե «...ժամանակակից ռուսաստանյան քրեական դատավարությունում նախնական քննության փուլում մեղադրանքի և պաշտպանության կողմերի համագործակցությունը չի կարող կառուցվել «հիմնական մասնակից և օժանդակող» սկզբունքով»<sup>3</sup>: Այս դիտարկումը միանգամայն արդարացի է ոչ միայն Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության առնչությամբ, այն կիրառելի է նաև Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրության նկատմամբ: Հենց այդ պատճառով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում պաշտպանին տրվել են վերը նշված իրավունքները, որոնք հնարավորություն են ընձեռում փաստաբան-պաշտպանին ակտիվ դիրք գրավելու իր պաշտպանյալի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության հարցում դեռ նախնական քննության փուլում:

<sup>1</sup> Տե՛ս **Нажимов В.П.** Об уголовно-процессуальных функциях. // Правоведение. 1973. № 5, էջ 75, 78:

<sup>2</sup> **Гуляев А.П.** Следователь в уголовном процессе. М.: Юрид. лит., 1981, էջ 27:

<sup>3</sup> **Склизков А.Н.** Взаимодействие сторон уголовного судопроизводства на стадии предварительного расследования. // Адвокатская практика. 2007. № 3, էջ 22:

Նախնական քննության փուլում պաշտպանի իրավունքների ընդլայնումը քննիչի կամայականություններից պաշտպանվելու երաշխիք է: Դա բարենպաստ պայմաններ է ստեղծում՝ խուսափելու մեղադրական ուղղվածությունից: Պաշտպանի ակտիվությունը օրենքով իրեն տրված իրավունքները կիրառելիս թույլ է տալիս ավելի արդյունավետորեն պաշտպանել կասկածյալների, մեղադրյալների իրավունքներն ու օրինական շահերը: Ընդ որում՝ օրենքով պաշտպանին վերապահվում է պաշտպանություն իրականացնելու ռազմավարության ընտրության իրավունք: Այսպես՝ նրանք կարող են ընտրել ակտիվ պաշտպանության ռազմավարություն, նաև հակառակը՝ պասիվ պաշտպանության: Զննության տարբեր պայմաններում և իրադրություններում թե՛ մեկը, թե՛ մյուսը կարող են լինել բավականին արդյունավետ պաշտպանյալի իրավունքները պաշտպանելու համար: Սակայն գործնականում մինչ այժմ փաստաբանները նախընտրում են կիրառել պասիվ պաշտպանություն, ինչպես Խորհրդային Միության ժամանակներում: Դա առավելապես պայմանավորված է այն բանով, որ նման ռազմավարությունը ավելի քիչ խնդրահարույց է. պաշտպանը խնայում է իր նյարդերը, ժամանակը, մտավոր ուժերը: Իսկ ակտիվ ռազմավարությունը ավելի շատ զոհողություն է ենթադրում, քանի որ փաստաբանից պահանջում է ոչ միայն գիտելիքներ ու հմտություններ, այլև կամք որոշակի հարցեր լուծելիս, որոնք կապված են մասնավոր անձանց հարցման և այդ կարգի հարցերի հետ: Նա պետք է կարողանա մարտավարական խնդիրներ լուծել: Պարզ է, որ այդպիսի ռազմավարությունը չափազանց աշխատատար է, ուստի և շատ քիչ է գրավում փաստաբաններին:

Սակայն բնավ էլ միայն փաստաբանների քմահաճույքը չէ պատճառը, որ նրանք չեն ընտրում իրենց կողմից ակտիվ գործողություններ պահանջող ռազմավարություն: Դրան նպաստում է նաև այն, որ քրեադատավարական օրենքը բավարար հստակությամբ չի կանոնակարգում մասնավոր անձանց հարցումն անցկացնելու, տարբեր կազմակերպություններից տեղեկանքներ, բնութագրեր և այլ փաստաթղթեր պահանջելու իրավունքները: Այսպես՝ ՀՀ քր. դատ. օր.-ը չի բացատրում, թե ինչ ձևով կարող է պաշտպանն իրա-

կանացնել մասնավոր անձանց հարցումը: Դա իրականացվում է բացատրությամբ, թե՞ որևէ այլ ձևով: Մասնավոր անձինք պարտավոր են պաշտպանին նման բացատրություններ տալու, թե՞ դա միայն իրենց իրավունքն է: Նմանապես պարզ չէ, թե ինչ նշանակություն է ունենալու հիշյալ հարցումը անցկացվող քննության համար, ապացույցների համակարգի համար, որը հավաքում է քննիչը, և որը հետագայում ներկայացվելու է դատարան: Օրինակ՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասում մասնավոր անձանց հարցումը չի համարվում որպես ապացույցների աղբյուրներից մեկը: Այդ առումով անհասկանալի է դառնում, թե ինչի համար է պետք մասնավոր անձանց հարցումը, եթե այն չի կարող դիտվել որպես ապացույց: Մանավանդ ՀՀ քր. դատ. օր.-ի 16-րդ գլխում, որտեղ խոսվում է ապացուցման գործընթացի մասին, ոչինչ չի ասվում պաշտպանի՝ որպես այդ գործընթացի սուբյեկտի մասին: Թեև, օրինակ, ՀՀ քր. դատ. օր.-ի 124-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված է. «Մեղադրյալի մեղքը և պատասխանատվությունը խստացնող հանգամանքների առկայության ապացուցման պարտականությունը կրում են քրեական հետապնդման մարմինները»: Այսինքն՝ քրեական հետապնդում իրականացնող մարմինները ճանաչվում են որպես ապացուցման գործընթացի սուբյեկտներ: Մեղադրանքի կողմի և պաշտպանության կողմի միջև դատավարական իրավունքները քիչ թե շատ հավասարեցնելու համար թերևս ճիշտ կլինի լրացնել ՀՀ քր. դատ. օր.-ի 124-րդ հոդվածի 3-րդ մասը, որը հարկ է շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Պաշտպանության կողմը մասնակցում է կոնկրետ քրեական գործերով ապացուցման գործընթացին և իրավունք ունի ներկայացնել ապացույցներ, որոնք հիմնավորում են սեփական դիրքորոշումը և հերքում մեղադրանքի կողմի հավաքած ապացույցները»: Այս նորմի ներմուծումը թույլ կտա փաստաբանին դառնալ քրեական դատավարության լիիրավ մասնակից դեռ նախնական քննության փուլում:

Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրությունը պատասխան չունի նաև այն հարցին, թե ինչպես պետք է կիրառի պաշտպանը մասնավոր անձանց հետ անցկացրած իր հարցումը: Պե՞տք է արդյոք նա դիմի իր ձեռք բերած բացատ-

րությունները քրեական գործի նյութերին կցելու միջնորդությամբ, թե՞ կարող է միջնորդել միայն նշված անձանց հարցաքննությունն իր ներկայությամբ անցկացնելու համար, ընդ որում՝ օգտագործելով իր ստացած բացատրությունները հարցեր առաջադրելու նպատակով: Համապատասխանաբար նաև հարց է ծագում, թե ինչպես պետք է արձագանքի քննիչը պաշտպանի տվյալ միջնորդությանը: Պարտավոր է նա բավարարել նշված միջնորդությունները հենց միայն այն պատճառով, որ դրանք արդեն հնչել են, թե՞ որոշել այդ հարցը՝ կախված այն բանից, թե ինչով է հիմնավորվում այդ միջնորդությունը: Ցավոք, Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրությունը այս հարցերին պատասխաններ չի տալիս: Ուստի անհրաժեշտ է ՀՀ քր. դատ. օր.-ում համապատասխան նորմեր ավելացնել, որոնք կպատասխանեն վերոնշյալ հարցերին: Ընդ որում՝ թերևս, ճիշտ կլիներ, որ պաշտպանի ձեռք բերած բացատրությունները դիտարկվեն ոչ թե որպես ապացույցների աղբյուրներ, այլ որպես համապատասխան քննչական գործողություն կատարելու առիթ: Օրինակ՝ պաշտպանը կոնկրետ անձից բացատրություն է ստացել, որում շարադրվում են կոնկրետ քննվող գործի համար նշանակություն ունեցող հանգամանքներ, ընդ որում՝ տվյալ անձը բացատրության մեջ շարադրված մի շարք հարցերի առնչությամբ չի հարցաքննվել: Այդ դեպքում ճիշտ կլիներ այդպիսի դիմումը դիտել որպես անվիճելի առիթ՝ հիշյալ անձին հարցաքննելու համար: Ըստ այդմ, ճիշտ կլիներ, լրացնել ՀՀ քր. դատ. օր.-ի 199-րդ հոդվածի 3-րդ մասը՝ այն շարադրելով հետևյալ կերպ. «Պաշտպանի միջնորդությունները ենթակա են պարտադիր բավարարման այն դեպքում, եթե դրանք հիմնավորված են քննվող դեպքին առնչվող հանգամանքների մասին այն անձի՝ կից ներկայացվող բացատրությամբ, որը նախկինում կամ չի հարցաքննվել, կամ նախկինում նրա տված ցուցմունքներում չեն եղել տեղեկություններ գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների մասին»: Կարծում ենք, որ այս նորմի ամրագրմամբ պաշտպանը հնարավորություն կստանա ավելի ակտիվորեն պաշտպանելու իր պաշտպանյալի իրավունքներն ու օրինական շահերը: Ընդ որում՝ կատեղծվեն բարենպաստ պայմաններ մրցակցության սկզբունքի իրացման համար դեռ նախնական քննության փու-

լում: Բացի այդ, հասկանալի կդառնա, թե ինչու է անհրաժեշտ, որ պաշտպանը մասնավոր անձանց հարցում անցկացնի: Իսկ մինչ այդ, ՀՀ քր. դատ. օր.-ում այդ նորմի ներառումը փաստաբանի կողմից մասնավոր անձանց հարցումը դատավարական որևէ նշանակություն չունի:

Համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի 73-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի՝ պաշտպանը, ըստ էության, ապացուցման սուբյեկտներից մեկն է, քանի որ նրան իրավունք է տրված «քրեական գործով ձեռք բերել նյութեր, դրանք ներկայացնել քրեական գործին կցելու և հետազոտելու համար»: Դա էական առաջընթաց է, որի շնորհիվ դեռ նախնական քննության փուլում պաշտպանը հնարավորություն է ստանում մասնակցելու ապացույցների համակարգի ձևավորմանը: ՀՀ քր. դատ. օր.-ի 6-րդ հոդվածի 3-րդ կետում տրվում է «նյութեր» հասկացության բնորոշումը, որի տակ հասկացվում է. «փաստաթղթեր և այլ առարկաներ, որոնք գործի բաղկացուցիչ մասն են կամ ներկայացված են գործին կցելու համար, հաղորդումներ, ինչպես նաև փաստաթղթեր և այլ առարկաներ, որոնք կարող են նպաստել գործով վարույթի ընթացքում նշանակություն ունեցող հանգամանքներ բացահայտելուն»: Կարծում ենք, որ նյութեր հասկացությանը օրենքով տրված բնորոշումը հավասարապես վերաբերում է «քրեական գործին վերաբերող նյութեր» հասկացությանը: Ավելի շուտ խոսքը վերաբերում է ոչ միայն ապացույցներին, այլև բոլոր մյուս տեղեկանքներին, փաստաթղթերին, որոնք թեև ապացույցներ չեն, սակայն նշանակություն ունեն քրեական գործը արդարացի լուծելու համար:

Պաշտպանին թույլատրելով քրեական գործին վերաբերող նյութեր հավաքել, օրենսդիրը չի հստակեցնում բուն կարգը, որի համապատասխան դա պետք է կատարվի: Չի հստակեցվում նաև այն, թե ինչպես պետք է նշյալ նյութերը կցվեն քրեական գործին: Իսկ դա անհրաժեշտ է, քանի որ առանց նշյալ կարգի սահմանման առաջանում է վտանգ, որ պաշտպանի ակտիվությունը նյութեր հավաքելիս, որոնց շարքում կարող են լինել նաև ապացույցներ, կհանգեցնի որոշ ապացույցների ոչնչացմանը (կորստին): Դա կարող է տեղի ունենալ այն պատճառով, որ պաշտպանի կողմից ապացույցների հավաք-

ման ընթացակարգի օրենսդրորեն կարգավորված շինելը կհանգեցնի նրա ձեռք բերած ապացույցները անթույլատրելի ճանաչելուն: Չէ՞ որ ՀՀ քր. դատ. օր.-ի 105-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ անթույլատրելի են ճանաչվում այն ապացույցները, որոնք ստացվել են «այն անձի կողմից, որն իրավունք չունի իրականացնել տվյալ քրեական գործով քրեական դատավարություն, կատարել համապատասխան քննչական կամ այլ դատավարական գործողություններ»: Պաշտպանն իր դատավարական վիճակի պատճառով չի համարվում քրեական դատավարություն իրականացնելու իրավունք ունեցող անձ: Նա նաև իրավունք չունի իրականացնելու քննչական կամ այլ դատավարական գործողություններ: Քանի որ պաշտպանի կողմից ապացույցների հավաքման նշյալ կարգը բացակայում է, ապա նրան նշյալ իրավունքով օժտելը լոկ դեկլարատիվ բնույթ ունի, որը ոչնչով չի ամրապնդվում:

Չի կարելի թույլ տալ, որ պաշտպանն իրավունք ունենա ինքնուրույնաբար հավաքելու ապացույցներ՝ հաշվի առնելով նրա շահագրգռությունը քրեական գործի ելքի նկատմամբ: Այստեղ միանգամայն ակնհայտ է այն վտանգը, որ ապացույցները կարող են կեղծվել անբարեխիղճ պաշտպանների կողմից: Միանգամայն հնարավոր են իրավիճակներ, երբ պաշտպանները նշյալ իրավունքը կօգտագործեն իրականացվող քննությանը ակտիվորեն հակադդելու նպատակով: Այդ ամենը կարող է անհնար դարձնել յուրաքանչյուր կոնկրետ գործով ճշմարտության բացահայտումը: Որպեսզի նախնական քննությունը կարողանա հասնել իր առջև դրված նպատակին, ասել է թե՛ կոնկրետ դեպքի հանգամանքները պարզելուն, չի կարելի թույլ տալ, որ պաշտպանը զբաղվի ապացույցներ հավաքելով:

Արդյունավետ պաշտպանության համար կարևոր է այն իրավունքը, որը ձևակերպված է ՀՀ քր. դատ. օր.-ի 73-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում, որի համաձայն՝ պաշտպանն իրավունք ունի «առանձին, կոնֆիդենցիալ, անարգել տեսակցել իր պաշտպանյալի հետ՝ առանց տեսակցությունների թվի և տևողության սահմանափակման»: Դա հնարավորություն է ընձեռում պաշտպանին ստանալու պաշտպանություն իրականացնելու համար անհրաժեշտ տեղեկատվություն և իր պաշտպանյալի հետ մշակելու միասնական



վարքագիծ: Տեսակցությունը հնարավորություն է տալիս կոնկրետ գործով մեղադրյալին, կասկածյալին լրացնելու անհրաժեշտ իրավական գիտելիքների բացը պաշտպանի հետ զրույցի շնորհիվ: Չէ՞ որ այդպիսի տեսակցության բացակայությունը կասկածյալին, մեղադրյալին նախօրոք դնում է ոչ շահավետ վիճակում, երբ նրանք հնարավորություն չեն ունենում մեղադրող կողմին համահավասար պաշտպանելու իրենց իրավունքներն ու օրինական շահերը, քանի որ նրանք չեն տիրապետում իրավական գիտելիքների, որոնց տիրապետում են քննիչը, դատախազը, որոնք հանդես են գալիս մեղադրանքի կողմում: Նշյալ իրավունքը, ըստ էության, մրցակցության սկզբունքի իրացման մեխանիզմի մասնակի դեպք է: Ուստի նշյալ իրավունքի քննադատությունը պատճառաբանված ու հիմնավորված չէ, քանի որ հաշվի չի առնում մրցակցային քրեական դատավարության էությունը: Ընդ որում՝ անհրաժեշտ է նշել, որ պաշտպանության համար կարևոր է տեսակցությունը նախքան որպես կասկածյալ ներգրավվելը կամ մինչև մեղադրանք առաջադրելը, քանի որ այդ դեպքում պաշտպանության կողմը հնարավորություն է ստանում մշակելու միասնական վարքագիծ կոնկրետ քրեական գործով քննության ողջ ընթացքում:

ՀՀ քր. դատ. օր.-ում ամրագրված նշյալ իրավունքները պայմաններ կստեղծեն՝ կոնկրետ գործերով արդյունավետ պաշտպանություն իրականացնելու: Փաստաբանն արդեն իրավունք կունենա չլինել իրականացվող քննչական գործողությունների պասիվ մասնակիցը, ինչպես նախկինում էր, այլ հնարավորություն կստանա ակտիվորեն մասնակցելու ապացույցների համակարգի ձևավորմանը յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործով: Սակայն ինչպես վերը նշվեց, օրենսդիրը չի սահմանել նշյալ իրավունքների իրացման մեխանիզմները, քրեադատավարական օրենսդրությունում բացակայում են հիշյալ իրավունքների իրացման կարգը սահմանող նորմերը: Դա լուրջ դժվարություններ է ստեղծում իրավակիրառողների և առաջին հերթին, պաշտպանի համար: Չէ՞ որ այդ կարգի նորմատիվ ամրագրումը կարող է դառնալ նշյալ իրավունքների պաշտպանության լրացուցիչ երաշխիք: Ուստի պետք է խստովանել, որ ներկայումս կատարվել է միայն առաջին քայլը նախնական քննության

փուլում մրցակցության սկզբունքի ավելի ամբողջական իրացման ուղղությամբ: Գեռես հարկավոր է կատարել ոչ պակաս հեղափոխական մի շարք քայլեր ևս, որպեսզի այդ սկզբունքը լիովին իրացվի քրեական դատավարության այս փուլում: Այդ քայլերը ենթադրում են պաշտպանի՝ ապացույցներ հավաքելու, մասնավոր անձանց հարցման, փաստաթղթեր և բնութագրեր ստանալու վերը նշված իրավունքների իրացման կարգի նորմատիվ ամրագրումը:

Քրեական արդարադատության հիմնական խնդիրը պետության և իրավախախտի միջև ավանդաբար առաջացող հարաբերությունների կարգավորումն է: Նշված մոտեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ քրեական դատավարությունում էապես սահմանափակվում են կասկածյալի և մեղադրյալի իրավունքներն ու ազատությունները: Այսօր այդ հիմնախնդրի հետ մեկտեղ կարևորվում է նաև հանցագործության զոհ դարձած անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:

Նշելով նախնական քննության փուլում մեղադրյալի, կասկածյալի իրավունքների ու օրինական շահերի գործուն պաշտպանության մասին՝ չի կարելի ուշադրություն չդարձնել տուժողին, նրա դատավարական վիճակին, ինչպես նաև նշյալ փուլում նրա իրավունքներին: Չի կարելի խոսել միայն նախնական քննության փուլում կասկածյալների ու մեղադրյալների իրավունքների ու ազատությունների մասին և մոռանալ, որ ոչ պակաս չափով պաշտպանության կարիք ունեն տուժողների իրավունքներն ու ազատությունները: Ռ. Մ. Եվլոևը իրավագիտորեն նշում է. «...Չի կարելի տարվել հանցանք գործելու մեջ կասկածվող և մեղադրվող անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանությամբ, ինչպես ներկայումս, ի վնաս հանցագործություններից տուժած անձանց իրավունքների ու օրինական շահերի»<sup>1</sup>:

Հայաստանում քրեական արդարադատության ոլորտում տուժողի իրավական վիճակը ունեցել է համապատասխան օրենսդրական զարգացում: Սինչև 1961թ. ՀԽՍՀ քրեական դատավարության

---

<sup>1</sup> **Евлюев Р.М.** Процессуальные гарантии защиты прав и законных интересов лиц, потерпевших от преступлений (стадия предварительного расследования). Дисс. канд. юрид. наук. СПб., 2005, էջ 17:

օրենսգրքի ընդունումը հանցագործությունից տուժած անձանց իրավունքներն էապես սահմանափակված էին: Հանցագործությունից տուժած անձը, որպես տուժող, կարող էր հանդես գալ երկու դեպքերում՝ ա) մասնավոր մեղադրանքի գործերով, բ) երբ նրա կողմից քաղաքացիական հայց էր հարուցվում: Վերջին դեպքում նա հանդես էր գալիս որպես քաղաքացիական հայցվոր, և նրա գործունեությունը սահմանափակված էր նյութական վնասի հատուցման մասին պահանջով: Այն դեպքում, երբ նշված անձը չէր իրականացնում այդ գործառույթներից որևէ մեկը, նա հանդես էր գալիս որպես վկա:

Տուժողի դատավարական վիճակի օրենսդրական փոփոխությունը մի կողմից հիմքեր ստեղծեց ապահովելու հանցագործությունից տուժած անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, իսկ մյուս կողմից՝ շահագրգռված անձանց ներգրավմամբ նպաստելու քրեական գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ բացահայտմանը:

ՀՀ քրեադատավարական գործող օրենսդրությամբ տուժողը հանդես է գալիս որպես մեղադրանքի կողմ և իր գործունեությամբ ոչ միայն իրականացնում է իր շահերի պաշտպանությունը, այլև նպաստում է հանցագործության բացահայտմանը:

Մեղադրանքի գործառույթի իրականացումը պետությանը պարտավորեցնում է օրենսդրությամբ նախատեսել այնպիսի դատավարական երաշխիքներ, որոնք կապահովեն հանցագործությունից տուժած անձանց արդարադատության մատչելիության իրավունքի իրականացումը: Այսինքն քրեադատավարական օրենսդրությամբ այնպիսի ընթացակարգերի նախատեսում, որոնք ոչ թե կխտչընդոտեն, այլ կնպաստեն տուժողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը: Հանցագործությունից տուժած անձինք չպետք է դառնան կրկնակի տուժածներ, երկրորդ անգամ՝ արդեն պետության և հասարակության անտարբերությունից<sup>1</sup>:

---

<sup>1</sup> Տուժողի իրավական վիճակի կարգավորման հետ կապված՝ ազգային օրենսդրության մեջ պետք է հաշվի առնվեն այն պահանջները, որոնք ամրագրված են միջազգային փաստաթղթերում՝ *Европейская конвенция по возмещению ущерба жертвам насильственных преступлений*, 1983,

Իհարկե, հազիվ թե արժե նախաքննությունը դիտարկել այն անձի դիրքերից, որը ավելի շատ իրավունքներ ունի նախնական քննության փուլում, այլ պետք է դիտարկել այն անձի դիրքերից, ում իրավունքները պետք է ավելացվեն կամ լրացուցիչ երաշխավորվեն: Քրեական դատավարության բոլոր մասնակիցները պետք է օժտված լինեն և՛ բավարար իրավունքներով, և՛ դրանք իրացնելու երաշխիքներով, որպեսզի և՛ նախաքննությունը, և՛ ամբողջ քրեական դատավարությունը հնարավոր լինի համարել մարդասիրության ու ժողովրդավարության պահանջներին համապատասխանող: Ընդ որում՝ իհարկե, ոչ մի դեպքում չի կարելի մոռանալ հանցագործություններից տուժածների իրավունքների ու օրինական շահերի մասին: Գրան, մասնավորապես, ուշադրություն է դարձվում քրեական իրավունքի և դատավարության շրջանակներում տուժողի վիճակի մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ 1985 թ. հունիսի 28-ին ընդունված Հանձնարարականում (№ R (85) 11), որում անդամ պետությունների կառավարությունների ուշադրությունն է հրավիրվում այն բանին, որ քրեական արդարադատության հիմնական գործառույթը պետք է լինի հարցումների բավարարումն ու տուժողների շահերի պաշտպանությունը<sup>1</sup>:

Միջազգային իրավունքում մարդու իրավունքներին վերաբերող փաստաթղթերի մեջ հիմնականը ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի՝ 1948 թվականին ընդունած Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրն է: Միջազգային այս փաստաթուղթը չնայած կրում է համընդհանուր բնույթ, բայց նրանում հանցագործությունից տուժած անձանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ առանձին դրույթ նախատեսված չէ: Հռչակագրում հիմնականում խոսվում է քրեական հետապնդման ենթարկված անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության մասին:

---

Հանցագործությունների և իշխանության չարաշահման գոհերի հանդեպ արդարադատության հիմնարար սկզբունքների հռչակագիրը (1985), Բանաձև (78) անվճար իրավաբանական օգնության և խորհրդատվության վերաբերյալ, Հանձնարարական R (85) 11 Քրեական իրավունքի և դատավարության շրջանակներում տուժողի կարգավիճակի մասին:

<sup>1</sup> Ст'а Сборник документов Совета Европы в области защиты прав человека и борьбы с преступностью. М.: Спарк, 1998, էջ 114-116:

Հոչակագրի 8-րդ հոդվածում սահմանված է ընդհանուր սկզբունք՝ համաձայն որի. «Յուրաքանչյուր ոք սահմանադրությամբ և օրենքով իրեն տրված հիմնական իրավունքների խախտման դեպքում ունի ազգային իրավասու դատական ատյանների միջոցով արդյունավետ պաշտպանության իրավունք»: Այս իրավունքը վերաբերում է նաև հանցագործությունից տուժած անձանց, որովհետև նրանք նույնպես ազգային օրենսդրության շրջանակներում պաշտպանության իրավունք ունեն, այդ թվում նաև՝ պատճառված վնասի հատուցման:

Հանրաձանաչ է այն գաղափարը, որ քրեական գործերով արդարադատություն իրականացնելու սկզբունքները պետք է կիրառվեն ինչպես մեղադրյալների և իրավախախտների, այնպես էլ հանցագործության զոհերի համար: Դրանով պայմանավորված՝ ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան 1985 թվականի նոյեմբերի 29-ին 40/34 բանաձևով ընդունեց «Հանցագործությունների և իշխանության չարաշահման զոհերի համար արդարադատության հիմնական սկզբունքների հռչակագիրը»: Այս փաստաթղթում առաջին անգամ ՄԱԿ-ի կողմից սահմանվեցին հանցագործությունից տուժած անձանց բնորոշումը, նրանց շրջանակը և իրավունքները: Հոչակագիրը ՄԱԿ-ի անդամ երկրներին կոչ է անում հանցագործությունից տուժած անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն ապահովելու համար ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ:

Քանի որ շատ երկրների օրենսդրության մեջ «տուժող» հասկացությունը ստացել է օրենսդրական տարբեր ձևակերպում, հետևաբար առավել նպատակահարմար է եղել Հոչակագրում օգտագործել «զոհ» տերմինը: Հոչակագրում տրված է զոհի հասկացությունը, ինչը միջազգային իրավական առումով հեշտացնում է ներպետական օրենսդրության մեջ այդ հասկացության բնորոշումը: Համաձայն հռչակագրի «Ա» բաժնի 2-րդ կետի՝ հանցագործության զոհ են համարվում այն անձը կամ անձինք, որին հանցագործությամբ կամ իշխանության չարաշահմամբ պատճառվել է վնաս, ներառյալ մարմնական կամ բարոյական վնասը, հուզական ապրումները, նյութական վնասը կամ նրանց հիմնական իրավունքների էական խախտումները և իշխանության չարաշահումները: Հոչակագրի համաձայն՝ «զոհ» հասկացության մեջ մտնում են՝

1. հանցագործությունից անմիջական վնաս կրած անձը,
2. տուժողի մերձավոր ազգականը և խնամարկյալը,
3. անձինք, որոնց վնաս է հասցվել աղետի վիճակում գտնվող տուժողին օգնություն ցույց տալու ընթացքում կամ վիկտիմիզացիան կանխելիս<sup>1</sup>:

Ձոռի հասկացության մեկնաբանությունը ցույց է տալիս, որ այն համարժեք է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում օգտագործվող տուժող հասկացությանը, բայց առավել ընդարձակ բովանդակությամբ: Եթե Հոչակագրում գոհ հասկացությունն առավելապես օգտագործվում է նյութաիրավական իմաստով, ապա քրեական դատավարությունում տուժողը կիրառվում է որպես դատավարության սուբյեկտ:

Հոչակագրից հետևում է, որ գոհ տերմինը պետք է հասկանալ լայն իմաստով, որովհետև խոսքը վերաբերում է ոչ միայն հանցագործությունից, այլև իշխանության չարաշահումներից տուժած անձանց պաշտպանությանը: Հոչակագրում տեղ գտած կարգավորումն արդարացված է, որովհետև անձը կարող է տարբեր իրավախախտումների գոհ դառնալ:

Հոչակագրի այս տրամաբանությունն իր ամրագրումն է ստացել նաև ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 5-րդ մասում, որում նշված է. «Տուժողին պատճառված վնասը հատուցվում է օրենքով սահմանված կարգով»: Ինչպես տեսնում ենք, ՀՀ Սահմանադրությունում «տուժող» հասկացությունը օգտագործվում է լայն իմաստով, այսինքն՝ դրա տակ պետք է հասկանալ քրեական, քրեադատավարական, վարչական, քաղաքացիաիրավական և այլ հարաբերություններից տուժած անձանց:

Հոչակագրում հանցագործության գոհ դարձած անձանց շահերի պաշտպանության համար ամրագրված են այն նվազագույն չափանիշները, որոնք իրենց ամրագրումը պետք է ստանան ազգային օրենսդրության մեջ: Մասնավորապես, հանցագործությունից և իշխանության չարաշահումներից տուժած անձանց համար պետք է

---

<sup>1</sup> Տե՛ս **Գիլբանդյան Ս.Ա.** ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 5-րդ մաս, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ/ընդհանուր խմբագրությամբ՝ **Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի.** Եր.: «Իրավունք», 2010, էջ 250:

ապահովել՝

1. Արդարադատության մատչելիություն և արդարացի վերաբերմունք, որը ենթադրում է՝

ա) գոհերին տեղեկությունների տրամադրում դատական քննության ժամկետների և ընթացքի, նրանց գործերի քննության արդյունքների մասին, հատկապես այն դեպքերում, երբ նրանց կողմից պահպանջվել են այդպիսի տեղեկություններ,

բ) դատական քննության փուլերում գոհերի կարծիքների ու ցանկությունների ներկայացման և քննարկման հնարավորության ապահովում ազգային քրեական արդարադատության համակարգին համապատասխան այն դեպքում, երբ շոշափվում են նրանց անձնական շահերը, իհարկե առանց մեղադրյալի շահերը վնասելու,

գ) դատական քննության ողջ ընթացքում գոհերին ցույց տալ պատշաճ օգնություն,

դ) գոհերի համար անհարմարությունները նվազագույնի հասցնելուն ուղղված միջոցների ձեռնարկում, ինչպես տուժողների, այնպես էլ նրանց ընտանիքների և նրանց կողմի վկաների անվտանգության պահպանում, սպառնալիքներից և վրեժխնդրությունից նրանց պաշտպանում,

ե) գործի քննության ժամկետների չարդարացված ձգձգումների կանխում և գոհերին հասցված վնասի հատուցման վերաբերյալ որոշման կայացում:

2. Ինչպես հանցագործություն կատարած անձի, այնպես էլ պետության կողմից վնասի փոխհատուցում, երբ կատարվել է արարք, որը հանգեցրել է վիկտիմիզացման:

3. Փոխհատուցում:

4. Սոցիալական օգնություն<sup>1</sup>:

Հանցագործության գոհ դարձած անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար կարևոր է նաև Եվրոպական խորհրդի մոտեցումը: Պետք է նշել, որ Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական Կոնվենցիայում տուժողների իրավունքների և օրինական

---

<sup>1</sup> Տե՛ս *Международные акты о правах человека: Собрание документов* М., Изд. НОРМА, էջ 165-167:

շահերի պաշտպանության վերաբերյալ առանձին դրույթ նախատեսված չէ: Սակայն Եվրոպական Կոնվենցիան բովանդակում է դրույթներ հանցագործությանը և իշխանության չարաշահմամբ պատճառված վնասի հատուցման վերաբերյալ: Մասնավորապես, Եվրոպական Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանքի տակ գտնվելու զոհ է դարձել ի խախտումն սույն հոդվածի դրույթների, վնասի հատուցման իրավունք ունի, կամ Կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ում կոնվենցիայով նախատեսված իրավունքները և ազատությունները խախտված են, պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք ունի, նույնիսկ եթե նման խախտումը կատարվել է ի պաշտոնե գործող անձանց կողմից:

Ըիշտ է, Եվրոպական Կոնվենցիան տուժողի իրավունքների պաշտպանության մասին առանձին դրույթ չի բովանդակում, բայց Եվրոպական դատարանն ունի համապատասխան նախադեպային որոշումներ, որոնք հիմնականում վերաբերում են արդարադատության մատչելիության իրավունքին: Տուժողի իրավունքների պաշտպանության համար առավել բնորոշ է՝ „Էիրին ընդդեմ Իռլանդիայի գործով (09.10.1979թ.) Եվրոպական դատարանի որոշումը: Նշված գործով Եվրոպական դատարան էր դիմել տուժող տիկին Էիրին, որը դատավարության բարդության պատճառով ազգային օրենսդրությամբ զրկված էր դատական քննությանը մասնակցելու հնարավորությունից, մինևույն ժամանակ նա նաև չի ունեցել բավարար միջոցներ՝ ներակայացուցիչ - փաստաբանին վճարելու համար:

Եվրոպական դատարանը քննելով դիմողի պահանջները նշում է, որ ազգային օրենսդրությունը հակասում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին, որը կարող է հարկադրել պետությանը փաստաբանական օգնություն տալ, երբ այն անհարաժեշտ է արդարադատության մատչելիության իրավունքի իրական ապահովման համար կամ այն պատճառով, որ մասնակից երկրների ազգային օրենսդրությամբ որոշակի գործերով իրավաբանական ներկայացուցչությունը պարտադիր է կամ դատավարության բարդությ-



յան պատճառով<sup>1</sup>: Իհարկե, նշված գործով Եվրոպական դատարանի որոշման վերլուծությունից պարզ չէ, թե հանցագործությունից տուժած անձանց արդարադատության մատչելիության իրավունքի տակ ինչ պետք է հասկանալ: Այսինքն այն ենթադրում է միայն դատարան դիմելու իրավունք, թե՞ դրա իրականացումն ապահովող նաև այլ իրավունքներ:

Կարծում ենք, որ տուժողի արդարադատության մատչելիության իրավունքն ավելի լայն հասկացություն է, որը ենթադրում է հանցագործությունից տուժած անձի դատարան դիմելու իրավունք, դատարանի կողմից տուժողի պահանջի անարգելք և անհապաղ քննություն, քրեական դատավարության բոլոր փուլերում որակյալ իրավաբանական օգնություն ստանալու համար ներկայացուցիչ ունենալու իրավունք, քրեադատավարական օրենքով նախատեսված դատավարական իրավունքներն իրականացնելու համար տուժող ճանաչվելու իրավունք:

Հանցագործությունից տուժած անձանց իրավունքների և օրինական շահերի անմիջական պաշտպանությանն է ուղղված 1983 թվականի նոյեմբերի 24-ին Եվրոպական Խորհրդի ընդունած «Բռնությամբ հանցագործությունների զոհերին վնասի հատուցման մասին կոնվենցիան»<sup>2</sup>: Նշված Կոնվենցիան նպատակ է հետապնդում անդամ երկրներին պարտավորեցնել մշակելու և ներդնելու պետության կողմից հանցագործությունից տուժած անձանց վնասի հատուցման համակարգ հատկապես այն դեպքում, երբ հանցագործություն կատարած անձը հայտնի չէ կամ չունի միջոցներ: Այս կոնվենցիան 2001 թվականի նոյեմբերի 8-ին ստորագրել է Հայաստանի Հանրապետությունը, բայց այն չի վավերացվել: Իհարկե, Հայաստանի Հանրապետությունը մինչև կոնվենցիան վավերացնելը պետք է քննարկի և հստակ հաշվարկ կատարի հանցագործությամբ պատճառված վնասն իր կողմից հատուցելու հնարավորության մասին: Հանցագործությամբ տուժողին հասցված վնասի հատուցման պա-

---

<sup>1</sup> Տե՛ս Էիրին ընդդեմ Իռլանդիայի գործով (09.10.1979): Տե՛ս Европейский Суд по правам человека. Избранные решения в 2 т. М., Норма, 2000, Т. 1, էջ 273:

<sup>2</sup> Տե՛ս Сборник документов Совета Европы в области защиты прав человека и борьбы с преступностью. М., СПАРК, 1998, էջ 81-85:

րակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ միշտ չէ, որ հանցագործությունից տուժած անձինք կարողանում են վերականգնել իրենց հասցված վնասը: Հաճախ այդ պրոցեսն այնքան է ձգձգվում, որ տարիների ընթացքում տուժողները չեն կարողանում վերականգնել իրենց հասցված վնասը: Սովորաբար այդպիսի իրավիճակ առաջանում է այն դեպքերում, երբ մեղավոր անձը տարբեր պատճառներով չի կարող հատուցել հասցված վնասը, կամ չի բացահայտվում հանցագործություն կատարած անձը:

Չնայած վերը նշված միջազգային պայմանագրերում կարևորություն է տրվում տուժողին պատճառված նյութական վնասի հատուցմանը պետության կողմից, բայց պետությունը մինչ այժմ չի նախատեսել նման իրավիճակներում հայտնված տուժողներին փոխհատուցում տալու մեխանիզմներ:

Կարծում ենք, որ ՀՀ քրեադատավարական օրենսդրության մեջ այս խնդրի լուծումը կդառնա տուժողի գույքային շահերի պաշտպանության ապահովման միջոցներից մեկը: Պետության կողմից փոխհատուցում տալու կարգ սահմանելու հարցում, կարծում ենք, պետք է հաշվի առնել այն երկրների փորձը, որտեղ նախատեսված են այդպիսի մեխանիզմներ:

Ծիշտ է, այսօր պետությունը դժվար թե կարողանա ամբողջությամբ հատուցել հանցագործությամբ պատճառված վնասը, բայց որոշ հանցագործությունների վերաբերյալ, կարծում ենք, համապատասխան վերապահումներով այն պետք է կիրառել (օրինակ՝ քաղաքական բռնություններից, ահաբեկչությունից կամ բնական աղետներից տուժած անձանց համար):

ՀՀ քրեական դատավարության օրենսդրության մեջ տեղ գտած հիմնախնդիրներից է հանցագործությամբ տուժողին հասցված բարոյական վնասի վերականգնման հարցերը: Չնայած իր կարևորությանը, մինչ այժմ այս հարցը չի ստացել օրենսդրական պատշաճ կարգավորում: Կարծում ենք, որ գործող օրենսդրությամբ պետք է նախատեսել բարոյական վնասի հատուցման այնպիսի եղանակներ, որոնք կնպաստեն տուժողի իրավունքների իրական պաշտպանությանը: Բարոյական վնասի հարթման օրենքով նախատեսված եղանակների շարքում, ճիշտ կլիներ, նախատեսել նաև դրամական հա-

տուցում:

Այն հիմնական միջազգային իրավական ակտը, որը անմիջականորեն կարգավորում է տուժողի իրավական վիճակը քրեական իրավունքում և քրեական դատավարությունում, 1985 թվականի հունիսի 28-ի Եվրոպական խորհրդի նախարարների կոմիտեի N R (85) 11 Հանձնարարականն է՝ «Քրեական իրավունքի և քրեական դատավարության շրջանակներում տուժողի կարգավիճակի մասին»: Նշված Հանձնարարականի ներածական մասում ուղղակի սահմանված է, որ այս փաստաթուղթը մշակվել է այն տրամաբանությամբ, որ ավանդաբար քրեական արդարադատության համակարգն ուղղված է եղել պետության և իրավախախտի միջև հարաբերությունների կարգավորմանը, իսկ այդպիսի մոտեցումը հաճախ հանգեցրել է ոչ թե հանցագործությունից տուժած անձանց մոտ առաջացած խնդիրների լուծման, այլ դրանց ավելացման: Հանձնարարականում նշվում է, որ արդարադատության հիմնական գործառույթը պետք է հանդիսանա տուժողների շահերի պաշտպանությունը, անհրաժեշտ է տուժողի միջնորդությունները հաշվի առնել քրեական դատավարության բոլոր փուլերում, պետք է բարձրացնել տուժողների վստահությունը քրեական արդարադատության նկատմամբ և խրախուսել նրա համագործակցությունը հատկապես որպես վկա, արդարադատության համակարգում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել տուժողին հասցված ֆիզիկական, հոգեկան, նյութական և սոցիալական վնասին և քննարկել՝ ինչպիսի քայլեր պետք է ձեռնարկել այդ կապակցությամբ նրա պահանջների բավարարման համար:

ՀՀ Սահմանադրության մեջ տուժողին պատճառված վնասի հատուցման իրավունքի ամրագրումը կարևոր առաջընթաց քայլ է, որովհետև առաջին անգամ տուժած անձանց իրավունքների պաշտպանությունը բարձրացվեց սահմանադրական մակարդակի և ճանաչվեց սահմանադրաիրավական ինստիտուտ:

ՀՀ Սահմանադրությունը բավականին ընդհանուր գծերով է ներկայացնում տուժողի իրավունքների պաշտպանությունը: Պետք է նշել, որ տուժողների իրավունքների պաշտպանության ապահովման հետ կապված՝ ՀՀ Սահմանադրության մեջ տուժողի արդարադա-

տության մատչելիության իրավունքը սահմանադրական մակարդակով պատշաճ չկարգավորվեց: Սահմանադրության մեջ շեշտադրումը կատարվում է սահմանադրաիրավական այս ինստիտուտի միայն մի սկզբունքի, այն է՝ օրենքով սահմանված կարգով տուժողին հասցված վնասի հատուցման վրա: Նրանում իրենց ամրագրումը չստացան միջազգային իրավական այն զարգացումները, որոնք վերաբերում են ա) արդարադատության մատչելիությանը, բ) վնասի հատուցմանը, գ) փոխհատուցմանը, դ) սոցիալական օգնությանը: Դա հիմք է տալիս նշելու, որ տուժողների սահմանադրական իրավունքների պաշտպանությունը, նրանց դատավարության մեջ ներգրավելու հետևողական մեխանիզմների նախատեսումը պետք է դառնան Սահմանադրական դատարանի գործունեության առաջնային ուղղություններից մեկը: ՀՀ Սահմանադրական դատարանը սահմանադրական արդարադատության միջոցով պետք է ապահովի տուժողների միջազգային իրավական փաստաթղթերում ամրագրված այն հիմնական իրավունքների պաշտպանությունը, որոնք ՀՀ օրենսդրության մեջ իրենց ամրագրումը չեն ստացել: Քրեական դատավարությունում տուժողի իրավունքների պաշտպանության վերաբերյալ ՀՀ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ եթե տուժողի համար արդարադատությունը մատչելի չէ, հետևաբար, այն խախտում է դատարանի առջև հավասարության սկզբունքը, դրանով իսկ իմաստագրվում արդարադատության գաղափարը: ՀՀ Սահմանադրական դատարանը նաև ընդգծում է, որ քրեական արդարադատության կարևորագույն գործառույթներից է տուժածի պահանջների բավարարումը և շահերի պաշտպանությունը, քրեական արդարադատության նկատմամբ<sup>1</sup>:

Ծիշտ է, ՀՀ օրենսդրության մեջ «տուժող» հասկացությունը տրված է միայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում (հոդված 58), բայց ՀՀ Սահմանադրության մեջ այն չի օգտագործվում միայն քրեադատավարական իմաստով: Սահմանադրական բնորո-

---

<sup>1</sup> ՀՀ Սահմանադրական դատարանի 2011թ. փետրվարի 4-ի որոշումը՝ ՀՀ գլխավոր դատախազի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 426.1-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով, ՍԴ-Ո-935:

շումից հետևում է, որ տուժող հասկացությունը պետք է հասկանալ ինչպես նյութաիրավական, այնպես էլ դատավարական առումով: ՀՀ Սահմանադրությամբ տուժողը հանցագործությունից, իրավախախտումներից կամ իշխանության չարաշահումներից վնաս կրած անձն է: Տվյալ դեպքում տուժողի իրավական վիճակը որոշվում է նրա փաստական դրությամբ՝ անկախ այն բանից՝ դատավարության սուբյեկտ ճանաչվե՞լ է, թե՞ ոչ: Դա նշանակում է, որ տուժողն իրավունք ունի իր շահերի արդյունավետ պաշտպանության կամ իրեն պատճառված վնասի հատուցման համար դիմելու դատարան կամ ներպետական իրավասու մարմիններին:

Տուժողը դատավարության մեջ ներգրավվելուց հետո ձեռք է բերում դատավարության մասնակցի կարգավիճակ, այսինքն՝ կարող է հանդես գալ որպես տուժող, քաղաքացիական հայցվոր և այլն: Դատավարությունում անձին տուժող ճանաչելու նպատակը ոչ թե նրան վնաս հասցնելու փաստի ամրագրումն է, այլ դատավարության մեջ ներգրավելը, դատավարական իրավունքներով ու պարտականություններով օժտելը և դրանց իրականացումն ապահովելը, ինչը հանգեցնում է նրա խախտված իրավունքների պաշտպանության և հասցված վնասի հատուցման:

Քրեական դատավարությունում տուժող է ճանաչվում այն անձը, ում քրեական օրենսգրքով չթույլատրվող արարքով անմիջականորեն պատճառվել է բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս: Տուժող է ճանաչվում նաև այն անձը, ում կարող էր անմիջականորեն պատճառվել բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս, եթե ավարտվեր քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարելը (ՀՀ քր. դատ.օր-ի հոդված 58): Քրեադատավարական օրենսդրությունը տուժողին համարում է դատավարության ինքնուրույն սուբյեկտ և վերապահում է դատավարական լայն իրավունքներ: Քրեական դատավարության բոլոր փուլերում տուժողի մասնակցության ապահովման հետ կապված խնդիրներ հիմնականում չկան:

Քրեաիրավական հարաբերությունների հանրային բնույթից ելնելով՝ քրեական հետապնդում իրականացնելու իրավունքը վերապահված է պետությանը՝ հանձինս նրա քրեական հետապնդման մարմինների, այսինքն՝ տուժողը հանրային մեղադրանքի գործերով

չի կարող կանխորոշել գործի քննության ընթացքը կամ անձին պատասխանատվության ենթարկելու սահմանները: Սակայն տուժողն իրավունք ունի իր մոտեցումն արտահայտելու այդ հարցերի վերաբերյալ, մասնավորապես դատական կարգով բողոքարկելու քրեական գործի հարուցումը մերժելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական գործը կարճելու մասին որոշումները: Բոլոր դեպքերում քրեական դատավարությունում տուժողի շահերը չեն կարող հանգեցվել միայն հանցագործությամբ իրեն հասցված նյութական վնասի հատուցման, դրանք մեծապես կապված են նաև մեղադրանքի ապացուցվածության, դրա ծավալի, քրեական օրենքի կիրառման և պատժի նշանակման հարցերի քննարկման հետ, որովհետև շատ դեպքերում վնասի հատուցման հնարավորությունը և դրա չափերի որոշումը կախված են այդ հարցերի ճիշտ լուծումից:

Որպեսզի քրեական դատավարությունը լինի արդար, պետք պահպանել, մի կողմից, մեղադրյալի և կասկածյալի, մյուս կողմից՝ հանցագործությունից տուժողի իրավունքների ու ազատությունների հաշվեկշիռը: Չի կարելի քրեական դատավարությունը գնահատել՝ կիրառելով թվաբանական հաշվարկ, թե քրեական դատավարության մասնակիցներից ով ավելի շատ իրավունքներ ու ազատություններ ունի: Ուշադրություն պետք է դարձնել այդ իրավունքների ու ազատությունների որակին, ինչպես նաև դրանց իրացման իրապես գործուն մեխանիզմների առկայությանը:

Պետք է ընդունել այն փաստը, որ ըստ նախկին Հայկական ԽՍՀ-ում գործող քր. դատ. օր.-ի, տուժողը շատ ավելի քիչ իրավունքներ և ազատություններ ուներ, քան ունի ներկայումս գործող ՀՀ քր. դատ. օր.-ի համաձայն: Այսպես՝ նախնական քննության փուլում նա ուներ հետևյալ իրավունքները՝ գործով ցուցմունքներ տալ, ներկայացնել ապացույցներ, դիմել միջնորդությամբ, ծանոթանալ գործի նյութերին նախաքննության ավարտից սկսած (Հայկական ԽՍՀ քր. դատ. օր.-ի հոդված 48): Համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի 59-րդ հոդվածի 1-ին մասի՝ նա ունի նաև հետևյալ իրավունքները՝ ծանոթանալ առաջադրված մեղադրանքին, առարկել քրեական վարույթն իրականացնող մարմինների գործողությունների դեմ և պահանջել իր առարկությունները մտցնել քննչական կամ այլ դատավարական գործողության արձանագրության մեջ, ծանոթանալ քննչական և այլ

դատավարական գործողությունների արձանագրություններին, որոնց նա մասնակցել է և դատողություններ ներկայացնել արձանագրությունում գրառումների ճշտության և լրիվության կապակցությամբ, քննչական և այլ դատավարական գործողությանը մասնակցելու, դատարանի նիստին ներկա գտնվելու դեպքում պահանջել նշված գործողության կամ դատարանի նիստի արձանագրության մեջ գրառումներ կատարել այն հանգամանքների մասին, որոնք, իր կարծիքով, պետք է նշվեն, ծանոթանալ դատական նիստի արձանագրությանը և ներկայացնել դրա մասին իր դատողությունները:

Վերոնշյալ իրավունքների առկայությունը տուժողին դարձնում է քրեական դատավարության ակտիվ մասնակիցը, որը սեփական գործողությունների շնորհիվ ի վիճակի է ոչ միայն պաշտպանելու իր իրավունքները, այլև իրացնելու սեփական օրինական շահերը: Տուժողի դատավարական դրության համադրումը նախկին խորհրդային քրեական դատավարությունում և Հայաստանի Հանրապետության գործող քրեական դատավարությունում, վկայում է այն մասին, որ տուժողին անհամեմատ ավելի շատ իրավունքներ է տրվել, քան ուներ նախկինում: Ընդ որում՝ նրան տրվել են այնպիսի իրավունքներ, որոնց շնորհիվ հնարավորություն է ստացել ինքնուրույնաբար պաշտպանելու սեփական իրավունքներն ու ազատությունները:

Իրականում, ինչպես երևում է նախկինում գործած և ներկայումս գործող քր. դատ. օր.-երի համադրումից, տուժողի իրավունքները անհամեմատ ավելացել են: Ընդ որում՝ այդ իրավունքների որոշ մասը տուժողին հնարավորություն է տալիս ավելի ակտիվորեն պաշտպանելու իր շահերը քրեական դատավարության ընթացքում, մասնավորապես՝ նախնական քննության ընթացքում: Բացի այդ, նա հնարավորություն է ստացել լիակատար տեղեկատվություն ունենալու այն ապացույցների մասին, որոնք հավաքել է քննիչը: Դա ապահովվում է, մասնավորապես, տուժողի՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 59-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված իրավունքով, որի համաձայն տուժողն իրավունք ունի «նախաքննության ավարտման պահից ծանոթանալ գործի բոլոր նյութերին, դրանցից պատճեններ հանել և գործից դուրս գրել ցանկացած ծավալի ցանկացած տեղեկություններ»: Այս իրավունքը տուժողին հնարավորություն է ընձեռում,

նախ՝ ժամանակին ծանոթանալ քրեական գործի նյութերին և, երկրորդ՝ մշակել սեփական շահերը պաշտպանելու ծրագիր՝ հիմնվելով առկա նյութերի վրա: Չափազանց կարևոր է նաև «առաջադրված մեղադրանքին ծանոթանալու» տուժողի իրավունքը (ՀՀ քր. դատ. օր.-ի 59-րդ հոդված, մաս 1-ին կետ 1): Նշյալ իրավունքը հնարավորություն է տալիս տուժողին իմանալու, թե ինչի մեջ է մեղադրվում մեղադրյալը, ուստի և նա հնարավորություն է ստանում որոշելու, թե ինչ չափով են ապահովվում նախնական քննության ընթացքում իր օրինական շահերը: Քանի որ եթե նա առաջադրված մեղադրանքին ծանոթանալով համարի, որ մեղադրանքը չի արտացոլում իր շահերը, ապա հնարավորություն ունի միջնորդություններ հարուցելու, որոնցում կարող է արտահայտել իր անհամաձայնությունը և առաջարկել կատարելու այս կամ այն գործողությունները: Սակայն այնուամենայնիվ, կարծում ենք, որ տուժողին նշյալ իրավունքները շնորհելը միայն առաջին քայլն է տուժողի իրավունքների ու ազատությունների երաշխիքների ամրապնդման ուղղությամբ: Հաջորդ քայլը պետք է լինի նրա իրավունքների հետագա ընդլայնումը: Մասնավորապես, որպեսզի տուժողը կարողանա ժամանակին արձագանքել քննիչի գործողություններին և իրականացվող քննության ընթացքին, ճիշտ կլիներ մեղադրյալին առաջադրված մեղադրանքի մասին իրազեկելուց բացի, նրան տեղեկություններ տրվեին մեղադրյալի նկատմամբ կիրառված խափանման միջոցի մասին: Ուստի, թերևս, ճիշտ կլիներ ՀՀ քր. դատ. օր.-ի 59-րդ հոդվածի մաս 1-ի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «...ծանոթանալ առաջադրված մեղադրանքին և մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց ընտրելու մասին որոշումներին»: Մեղադրյալի նկատմամբ համապատասխան խափանման միջոցի ընտրությունը երաշխավորում է տուժողին անվտանգության որոշակի աստիճան: Ուստի տուժողի իրազեկված լինելը, թե խափանման ինչ միջոց է ընտրվել մեղադրյալի հանդեպ, նրան վստահություն է ներշնչում իր անվտանգության հարցում: Իսկ այն դեպքում, եթե տուժողը համարի, որ ընտրված խափանման միջոցը բավարար չէ իր անվտանգությունն ապահովելու համար, նա հնարավորություն ունի ժամանակին միջոցներ ձեռնարկելու համապատասխան խափանման միջոցը փոխելու համար՝ համապատասխան միջնորդություն ներկայացնելով:



Թերևս ճիշտ կլինի տուժողին իրավունք տալ քննիչի թույլտվությամբ մասնակցելու քննչական գործողություններին, որոնք անցկացվում են նրա կամ նրա ներկայացուցչի միջնորդությամբ: Նշյալ իրավունքի առկայությունը թույլ կտա տուժողին անձամբ մասնակցելու քննիչի կողմից ապացույցների հավաքմանը և տեսնել, թե որքանով էին իր միջնորդությունները հիմնավորված: Չէ՞ որ մասնակցելով քննչական գործողությանը՝ նա կարող է տեսնել, որ սխալվում էր կամ, հակառակը, չէր սխալվում այս կամ այն անձանց՝ կատարված հանցագործության մասին տեղյակ լինելու հարցում, այս կամ այն վայրում հետքերի առկայության մասին, որոնք կարող էին դառնալ ապացույցներ: Ընդ որում՝ նա կարող է նաև պարզաբանումներ տալ, որոնք առարկաներ, փաստաթղթեր, հետքեր որոնելիս կարող են կոնկրետ քրեական գործերով ապացույցներ դառնալ: Դրանով իսկ տուժողը հնարավորություն կունենար ակտիվորեն պաշտպանելու իր օրինական շահերը անցկացվող նախնական քննության ընթացքում:

Արդարացի կլինե՞ր նաև տուժողին իրավունք տալ դեռ նախնական քննության ընթացքում ծանոթանալու կասկածյալի, մեղադրյալի հայտարարություններին ու միջնորդություններին և ներկայացնել դրանց առնչությամբ իր առարկությունները, որոնք նույնպես պետք է քննարկվեն քննիչի կողմից: Այդ իրավունքը թույլ կտա տուժողին դիմակայել մեղադրյալին, կասկածյալին, որոնք իրացնելով սեփական իրավունքները, կարող են սպառնալիքի տակ դնել տուժողի իրավունքները: Դրանով իսկ տուժողը նախնական քննության փուլում կկարողանա արդյունավետորեն պաշտպանել իր իրավունքներն ու օրինական շահերը<sup>1</sup>:

ՀՀ քր. դատ. օր.-ի 265–րդ հոդվածի մաս 2-ում ասվում է. «Տուժողին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին քննիչը ծանոթանալու համար գործը ներկայացնում է նրանց միջնորդության դեպքում, իսկ մեղադրյալին և պաշտպանին՝ անկախ միջնորդությունից»: Դրանով իսկ իրացվում է նախնական

---

<sup>1</sup> Տե՛ս **Գիլբանդյան Ս.Ա.** Տուժողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովման հիմնահարցերը նախնական քննության փուլում, /Բանբեր, Երևանի համալսարանի, հասարակական գիտություններ, իրավագիտություն, Երևան, 2010, թիվ 131.3, էջ 29:

քննությունն ավարտվելիս քրեական գործի նյութերին ծանոթանալու տուժողի իրավունքը: Սակայն ճիշտ կլիներ, որ նախնական քննությունն ավարտվելիս տուժողի կողմից քրեական գործի նյութերին ծանոթանալու նշյալ կարգը օրենքում ավելի հստակ ու մանրամասն կարգավորվեր: Այսպես՝ ավելի ճիշտ կլիներ, նշվեր, որ քննիչը պարտավոր է տուժողին ժամանակին ծանուցել նախաքննության ավարտի մասին՝ արձանագրելով այդ մասին իր կազմած հատուկ արձանագրության մեջ, որտեղ տուժողը պարտավոր է իր ստորագրությամբ հաստատել նախաքննության ավարտի մասին իրեն հայտնելու փաստը: Ընդ որում՝ չպիտի լինեն ոչ մի տեսակի վերապահումներ, որոնք հնարավորություն տան քննիչին տուժողին չտրամադրել քրեական գործի նյութերը ծանոթանալու համար: Այդօրինակ վերապահումների առկայությունը պայմաններ է ստեղծում քննիչների կողմից չարաշահումների համար, ինչը հիմք է դառնում տուժողի՝ գործին ծանոթանալու իրավունքի անտեսման համար: Ուստի ճիշտ կլիներ ՀՀ քր. դատ. օր.-ի 265-րդ հոդվածի 2-րդ մասը ձևակերպել հետևյալ կերպ. «Տուժողին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին, մեղադրյալին և նրա պաշտպանին քննիչը տրամադրում է գործը ծանոթանալու համար: Քրեական գործի նյութերին ծանոթանալու մասին կազմվում է արձանագրություն, որում կարող են ներառվել վերոնշյալ անձանց միջնորդություններն ու հայտարարությունները, եթե այդպիսիք առկա են»: Հիշյալ հոդվածի մաս 1-ը հարկ է լրացնել. «Վերոնշյալ բոլոր անձանց ծանուցման մասին կազմվում է արձանագրություն, որը նրանք ստորագրում են»: Այդ դեպքում կամրագրվի քննիչի պարտականությունը՝ ծանուցել տուժողին, այլ ոչ թե բավարարվել միայն այդպիսի ծանուցման մասին ձևական նշումով:

Առաջարկված բոլոր իրավունքները կհավասարեցնեն տուժողի դատավարական վիճակը մեղադրյալի, կասկածյալի դատավարական վիճակին, ինչը ներկայումս, ցավոք, դեռ հեռու է իրականությունից: Ապահովելով տուժողի և մեղադրյալի, կասկածյալի իրավունքների հավասարությունը՝ քրեադատավարական օրենսդրությունը կստեղծի պայմաններ մրցակցության սկզբունքի իրացման համար դեռ նախնական քննության փուլում: Դ-ա, իր հերթին, հնարավորություն կտա ձերբազատվելու նախնական քննության ինկվիզիցիոն ո-

րոշ դրսևորումներից:

Հաշվի առնելով ասվածը՝ հարկ է նշել, որ նախնական քննությունը պետք է դառնա քրեական դատավարության այնպիսի փուլ, որում լիովին երաշխավորվում են դրա բոլոր մասնակիցների իրավունքները: Ընդ որում՝ պետք է ապահովվեն բոլոր պայմանները նշյալ փուլում մրցակցության սկզբունքի իրացման համար. այդ նպատակով տուժողն ու նրա ներկայացուցիչը, մի կողմից, և մեղադրյալը, կասկածյալը, մյուս կողմից, պետք է օժտված լինեն հավասար դատավարական իրավունքներով: Դա անհրաժեշտ է դատավարական հավասարություն ապահովելու համար, որը մրցակցության սկզբունքի հիմքն է: Ընդ որում՝ անկասկած, չի կարելի պահանջել հավասարություն մեղադրանքի և պաշտպանության կողմերի միջև, քանի որ մեղադրողի կողմից հանդես են գալիս նաև քննիչն ու դատախազը, որոնք օժտված են իշխանական լիազորություններով և իրացնում են դրանք քննության ընթացքում յուրաքանչյուր կոնկրետ գործով ըստ էության որոշում կայացնելիս: Սակայն դա բնավ չի բացառում դատավարական հավասարության հասնելու հնարավորությունը մեղադրյալի, կասկածյալի և նրանց պաշտպանի, մի կողմից, և տուժողի ու նրա ներկայացուցչի միջև, մյուս կողմից:

### **ԳԼՈՒԽ 3.**

## **ՄԻՆԶՊԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ ԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ**

### **§ 1. Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության դերը անձի իրավունքների և ազատությունների ապահովման գործում**

Հաշվի առնելով, որ նախնական քննության ընթացքում մեղադրանքի կողմն օժտված է ընդարձակ իշխանական լիազորություններով, որոնց անբարեխիղճ իրացումը անխուսափելիորեն կհանգեցնի կամայականության, վաղուց արդեն հրատապ է քրեական դատավարությունում քաղաքացիների իրավունքների ապահովման երաշխիքների ստեղծման խնդիրը՝ որը կբացառի նրանց իրավունքների ու ազատությունների անհիմն սահմանափակումը, ինչպես նաև օրինական շահերի իրացման ժամանակ հնարավոր խոչընդոտները: Հետաքննության մարմինը, քննիչը ստանձնելով գործի քննությունը, օժտվում են դատավարական գործողություններ կատարելու և որոշումներ ընդունելու լայն լիազորություններով, գործողություններ, որոնք հաճախ զուգորդվում են ինչպես քրեական դատավարության մասնակիցների, այնպես էլ դատավարական հարաբերությունների ոլորտում հայտնված այլ անձանց իրավունքների սահմանափակմամբ: Մինչդեռ պաշտպանության կողմն օժտված չէ այդպիսի լիազորություններով, որոնք իրական հակակշիռ կլինեին վարույթն իրականացնող մարմինների պետաիրավական կարգավիճակից բխող իրավունքներին: Այս առումով անհրաժեշտություն է ծագում ստեղծելու քրեական դատավարության բոլոր մասնակիցների իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության արդյունավետ համակարգ, այդ թվում և մինչդատական վարույթում: Այդպիսի համակարգ է դատական վերահսկողությունը մինչդատական վարույթի նկատմամբ, որը կարգավորված է ՀՀ քր. դատ. օր.-ի 39-րդ գլխով: Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առկայությունը բազմաթիվ ժողովրդավարական

երկրների քրեական դատավարության բնութագրիչ հատկանիշն է: Դրա շնորհիվ արդեն իսկ նախնական քննության փուլում պաշտպանության կողմն իրավունք է ստանում բավականին արդյունավետ պաշտպանելու իր իրավունքներն ու ազատությունները, ինչպես նաև իրացնելու իր օրինական շահերը:

Մինչդատական վարույթում դատական վերահսկողության հիմնախնդիրը մշտապես եղել է իրավագետների ուշադրության կենտրոնում<sup>1</sup>: Նրանց քննարկման առարկա եղել է դատական վերահսկողության այնպիսի համակարգի ստեղծումը, որը հուսալի պատնեշ կդառնա դատախազների, քննիչների, հետաքննության մարմինների

---

<sup>1</sup> **Տե՛ս Կոլոկոլով Ն.Ա.** Судебный контроль в стадии предварительного расследования преступлений: важная функция судебной власти (проблемы осуществления в условиях правовой реформы), Автореф. дис. ... канд. юрид. наук - М., 1998, - 23 էջ, **Измайлов И.В.** Судебный контроль при производстве следственных действий без судебного решения: Май // Уголовный процесс: Май, М.: Изд. Дом "Арбитражная практика", 2005, № 5, - էջ 33-36, **Устимов М.А.** Судебный контроль на стадии предварительного расследования как гарантия права граждан на судебную защиту в российском уголовном процессе. Исторический очерк, Саранск: Изд-во ООО "Вектор-Принт", 2008, - 36 էջ, **Быкова Е.В.** Судебный контроль за предварительным расследованием преступлений во Франции. Автореф. дис. ... канд. юрид. наук, М., 1996, - 21 էջ, **Կոլոկոլով Ն.Ա.** Судебный контроль в стадии предварительного расследования. Учебное пособие для студентов вузов, М.: Закон и право, ЮНИТИ-ДАНА, 2004, - 303 էջ, **Магизов Р.Р., Юнусов А.А.** Судебный контроль за законностью и обоснованностью применения мер процессуального принуждения в уголовном судопроизводстве - Казань: Новое знание, 2005, - 168 էջ, **Трошкин Е.З., Шилов А.В.** Судебный контроль на стадии предварительного расследования в уголовном судопроизводстве Российской Федерации, Минск: Тесей, 2004, - 192 էջ, **Костерина Н.В.** Судебный контроль на досудебных стадиях уголовного судопроизводства. Автореф. дис. ... канд. юрид. наук, Волгоград, 2005, - 19 էջ, **Дорошков В.** Судебный контроль за деятельностью органов предварительного расследования // Российская юстиция. М.: Юрид. лит., 1999, № 7, էջ 26-28, **Ղազիկյան Գ.** Քրեական դատավարության պատմական և արդի հիմնահարցերը Հայաստանում: Եր.: Երևանի համալս. հրատ., 2001թ. 432 էջ, **Ավետիսյան Գ.Զ.** Կալանավորման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում, Երևան համալս. հրատ.: -Եր.: 2006, 156 էջ, **Հովսեփյան Ա., Շահինյան Վ., Ղամբարյան Ա.** Մինչդատական վարույթի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում: Գիտազործնական ձեռնարկ., Եր.: ԵՊՀ հրատ., 2009, 286 էջ, **Ավետիսյան Հ.Գ.** Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության հիմնահարցերը.- Եր.: ԵՊՀ հրատ., 2010, 216 էջ և ուրիշներ:

հնարավոր չարաշահումների դեմ՝ դրանով իսկ իրավունքների և ազատությունների իրացման պայմաններ ստեղծելով քրեական դատավարության բոլոր մասնակիցների համար: Ընդ որում՝ հիշյալ քննարկման մասնակիցներից ոչ բոլորն են համամիտ, որ դատական վերահսկողության հիմնական խնդիրը քրեական դատավարության մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն է: Այսպես՝ Ն. Ա. Կոլոկոլովը ենթադրում է, որ դատական վերահսկողությունն ուղղված է երկու նպատակի. 1) աջակցելու նախնական քննության արդյունավետ իրականացմանը, 2) օպտիմալ պայմաններ ստեղծելու արդարադատության իրականացման համար<sup>1</sup>: Չի կարելի ժխտել, որ Ն.Ա. Կոլոկոլովի մատնանշած նպատակները նախնական քննության փուլում առկա են: Սակայն դատական վերահսկողությունը միայն դրանցով սահմանափակելը չի կարող արտահայտել այս ինստիտուտի բուն էությունը: Ընդ որում՝ Ն.Ա. Կոլոկոլովի նշածները հազիվ թե կարելի է համարել դատական վերահսկողության հիմնական նպատակները: Դրանք նախնական քննության նպատակներ կարելի է համարել միայն պայմանով, որ նախնական քննության արդյունավետ իրականացում ասելով նկատի է առնվում քրեական դատավարության բոլոր մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, այլ ոչ թե միայն կոնկրետ քրեական գործով ճշմարտության հասնելը: Բացի այդ, արդարադատության իրականացման համար պայմանների ստեղծում ասելով անհրաժեշտ է հասկանալ նաև քրեական դատավարության մասնակիցների իրավունքների և օրինական շահերի իրացման համար համապատասխան նախադրյալների ստեղծումը: Միայն այդ դեպքում Ն. Ա. Կոլոկոլովի առաջարկածները կարելի է դիտել որպես դատական վերահսկողության նպատակներ: Հենց այդ պատճառով դատական վերահսկողության հիմնական նպատակը քրեական դատավարության բոլոր մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն է: Այդ նպատակի իրագործման առնչությամբ ծագում է քննիչի, հետաքննության մարմնի և պաշտոնատար այլ անձանց կողմից իշխանական լիազորություն-

---

<sup>1</sup> Ст'я **Колоколов Н.А.** Судебный контроль в стадии предварительного расследования: реальность, перспективы // Государство и право, 1998, - ? 11, - էջ 33:

ների կամայական կիրառմանը խոչընդոտելու խնդիրը, ինչը բարենպաստ պայմաններ է ստեղծում նախնական քննության փուլում քրեական դատավարության մասնակիցների կողմից իրենց իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու համար:

Վ. Ա. Լազարևան արդարացիորեն նշում է. «Նախնական քննության նկատմամբ դատական վերահսկողությունը ... մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության ձևերից մեկն է»<sup>1</sup>: Այսինքն՝ հեղինակը դատական վերահսկողությունը հանգեցնում է այն բանին, որ դրա միջոցով քրեական դատավարության մասնակիցները հնարավորություն են ստանում պաշտպանելու իրենց իրավունքներն ու հասնելու իրենց օրինական շահերի իրացմանը: Իսկապես, դատական վերահսկողության էությունը քրեական դատավարության մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության մեխանիզմն է: Սակայն դրա հետ մեկտեղ՝ իրագործվում են նաև այլ նպատակներ: Մասնավորապես, ապահովվում է նախնական քննության փուլի օրինականությունը: Մասնավորապես դատական վերահսկողության օգնությամբ արգելքներ են դրվում դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի կամայականությունների դեմ, պայմաններ են ստեղծվում, որպեսզի նրանք չխախտեն քրեական դատավարության մասնակիցների իրավունքներն ու ազատությունները մինչդատական վարությամբ: Հետևաբար, «ամեն անգամ, երբ պետական որևէ մարմին անօրինական կամ ոչ խելամիտ կամ անարդար արարք է գործում»<sup>2</sup>, դատական վերահսկողությունը կոչված է վերականգնելու յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործով նախնական քննության օրինականությունը:

Համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի 278-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Դատարանը քննում է քննչական, օպերատիվ-հետախուզական գործողություններ կատարելու և անձի սահմանադրական իրավունքները և ազատությունները սահմանափակող դատավարական

---

<sup>1</sup> **Лазарева В.А.** Судебная власть и её реализация в уголовном процессе, Самара: Изд-во «Самарский университет», 1999, – էջ 73:

<sup>2</sup> **Гордон Ричард** Судебный контроль и внутригосударственное право. // Судебный контроль и права человека: Материалы российско-британского семинара 12-13 сентября 1994 года, М., 1996, – էջ 64-65:

հարկադրանքի միջոցներ կիրառելու վերաբերյալ միջնորդությունները»։ Նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված է. «Դատարանը, սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով, քննում է հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքները»։ Այսպիսով ակնհայտ է, որ դատական վերահսկողության ոլորտը բավականին ընդգրկում է։ Ուստի քրեական դատավարության իրավունքի տեսության մեջ ընդունված է մինչդատական վարությամբ առանձնացնել դատական վերահսկողության երեք ձև.

1. վերստուգող (ռեիզիոն) դատական վերահսկողություն,
2. նախնական դատական վերահսկողություն,
3. հետագա դատական վերահսկողություն<sup>1</sup>։

Մինչդատական վարույթի նկատմամբ վերստուգող դատական վերահսկողության էությունն այն է, որ տվյալ փուլի դատավարական գործողություններն ու որոշումները հետագայում ուսումնասիրման առարկա են դառնում դատական քննության ընթացքում՝ օրենքին դրանց համապատասխանությունը պարզելու նպատակով։ Դատական վերահսկողության նշյալ ձևը հայտնի է բավական վաղուց։ Բուն քրեական դատավարության կառուցվածքը, երբ մի փուլին հաջորդում է մյուսը, ենթադրում է նշյալ հսկողության ձևը, որը, ճիշտ է, ոչ բոլոր դեպքերում էլ դատական։ Այսպես՝ նախնական քննության ընթացքում ստուգվում են քրեական գործի հարուցման փուլում ընդունված որոշումները։ Դրանք կարող է ստուգել քննիչը, երբեմն հենց նույն քննիչը, որը կայացրել է քրեական գործ հարուցելու մասին որոշումը։ Հասկանալի է, որ նման վերահսկողությունը չի կարող համարվել դատական, սակայն այն գոյություն ունի և դիտվում է քրեական դատավարության օրինականությունն ապահովող երաշխիք։ Այդպիսի վերահսկողության օրինակ է քրեական գործ հարուցելու մասին որոշման հիմքում դրված հետևությունների ճշտության ստուգումը, կոնկրետ արարքի մեջ հանցակազմի առկայության ստուգում-

---

<sup>1</sup>Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն։ Հատուկ մաս, (3-րդ հրատարակություն, լրացումներով և փոփոխություններով) - Երևանի պետ. համալս. Եր.։ Երևանի համալս. հրատ., 2010թ., էջ 246։



մը: Նշված հետևությունը քննիչը ստուգում է ամբողջ նախաքննության ընթացքում զանազան քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու միջոցով: Սակայն հաշվի առնելով այն, որ դատական վարույթը հաջորդում է քրեական գործ հարուցելու և նախնական քննության փուլերին, դատական վերահսկողության վերոնշյալ ձևը իրականացվում է դատավարության տվյալ փուլում կատարված գործողությունների և ընդունված որոշումների առնչությամբ: Այսպես՝ դատական քննության ընթացքում որոշվում է նախնական քննության ընթացքում հավաքված ապացույցների թույլատրելիության հարցը: Դա հետևանք է այն ընդհանուր կանոնի, որն ամրագրված է ՀՀ քր. դատ. օր.-ի 106-րդ հոդվածի 1-ին մասում, որի համաձայն՝ «Փաստական տվյալների՝ որպես ապացույց օգտագործման անթույլատրելիությունը, ինչպես նաև վարույթում դրանց սահմանափակ օգտագործման հնարավորությունը հաստատում է վարույթն իրականացնող մարմինը՝ սեփական նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ»: Այսինքն՝ բոլոր փուլերում, այդ թվում և դատական քննության փուլում, որոշվում է կոնկրետ ապացույցների թույլատրելիության հարցը: Բացի դրանից՝ դատարանը կարող է անթույլատրելի ճանաչել կոնկրետ ապացույցներ, եթե դրանք ձեռք են բերվել քրեական դատավարության մասնակիցների իրավունքների էական խախտումներով: Այսպես՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 105-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Քրեական գործով վարույթում մեղադրանքի հիմքում չեն կարող դրվել և որպես ապացույց օգտագործվել այն նյութերը, որոնք ձեռք են բերվել՝

1) բռնությամբ, սպառնալիքով, խաբեությամբ, անձին ծաղրի ենթարկելով, ինչպես նաև այլ անօրինական գործողություններով.

2) կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքի, դատավարության լեզվին չտիրապետող անձանց իրավունքների՝ սույն օրենսգրքով նախատեսված լրացուցիչ երաշխիքների էական խախտմամբ»: Այս պահանջը վերաբերում է նաև դատական քննության փուլին, երբ դատարանը հետազոտում է, թե ինչպես են ձեռք բերվել նշյալ ապացույցները, և դրա հիման վրա եզրակացնում կոնկրետ ապացույցների թույլատրելիության կամ անթույլատրելիության մասին: Այդ է վերստուգիչ դատական վերահսկողության

էութիւնը, որն իրականացվում է նախնական քննութեան նկատմամբ:

Գատական վերահսկողութեան վերստուգող բնույթը դրսևորվում է հետևյալ կերպ. դատական փուլերում ստուգվում, վերստուգվում են նախորդ փուլերում հավաքված ապացույցները, կատարված գործողութիւնների, կայացված որոշումների օրինականութիւնն ու հիմնավորվածութիւնը: Ընդ որում՝ վերստուգում իրականացվում է նաև քրեական գործ հարուցելու և նախնական քննութեան փուլերում կատարված դատավարական գործողութիւնների առնչությամբ: Կատարվող ստուգման, վերստուգման արդյունավետութիւնը պայմանավորված է նրանով, որ դա չի կատարվում միանձնյա, երբ հնարավոր է մեկ մարդու կամայականութիւնը, այլ մրցակցութեան սկզբունքի հիման վրա, երբ ստուգումը հիմնվում է քրեական դատավարութեանը մասնակից բոլոր անձանց կարծիքների, տեսակետների և դիրքորոշումների վրա: Չէ՞ որ միանշանակ է, որ այս կամ այն ապացույցի թույլատրելիութեան կամ անթույլատրելիութեան հարցը դատական քննութեան ընթացքում որոշվում է՝ հաշվի առնելով թե՛ մեղադրանքի, թե՛ պաշտպանութեան կողմի կարծիքները:

Մյուս փուլը, որում իրականացվում է վերստուգող դատական վերահսկողութիւնը, վերաքննիչ և վճռաբեկ վարույթներն են: Նշյալ վարույթների ընթացքում իրականացվում է ոչ միայն դատական քննութեան փուլի վերստուգում, այլև մինչդատական փուլերի: Առավել ևս, որ մինչդատական փուլերը ևս կարող էին ազդել կայացված դատավճռի օրինականութեան և հիմնավորվածութեան վրա:

Քանի որ մրցակցութեան սկզբունքն առավելապէս իրացվում է դատական քննութեան ընթացքում, վերստուգիչ դատական վերահսկողութիւնը դառնում է մինչդատական վարույթում նշված սկզբունքի ներդրման ձևերից մեկը: Չէ՞ որ կողմերի դիրքորոշումները քննարկելուց հետո է դատարանը հետևութիւններ անում առանձին դատավարական գործողութիւնների օրինականութեան և հիմնավորվածութեան մասին, որոնք կարող էին հետագայում էականորեն ազդել դատավճռի կայացման վրա: Այսինքն՝ կողմերի մրցակցութիւնը վերստուգիչ դատական վերահսկողութեան հիմքն է, որով պայմանավորվում է նաև դրա արդյունավետութիւնը: Այս կապակցութեամբ Վ. Ա. Լազարևան դիպուկ բնորոշում է տալիս.

«Դատավարության մրցակցային ձևը թույլ է տալիս կողմերին ակտիվորեն մասնակցելու քննչական մարմինների կողմից ներկայացված ապացույցների ստուգմանը, ներկայացնելու փաստարկներ ի հիմնավորումն իրենց հետևությունների և հերքելու հակառակ կողմի փաստարկները, պաշտպանելու սեփական դիրքորոշումը: Նախնական քննության ընթացքում անհավասար պայմաններում գտնվող անձը և պետությունը ներկայացնող մեղադրողը դատական քննության ընթացքում հանդես են գալիս որպես դատավարության իրավահավասար սուբյեկտներ»<sup>1</sup>:

Վերստուգիչ դատական վերահսկողությունը հետապնդում է բազմաթիվ նպատակներ: Դա և՛ գործով ճշմարտության բացահայտումն է, և՛ արարքին նախկինում տրված որակումը ստուգելը և այլն: Սակայն այնուամենայնիվ, դրա հիմնական նպատակը պետք է համարել քրեական դատավարությանը մասնակից անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը: Այսպես՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 331-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ դատական նիստի նախապատրաստական մասում. «Յուրաքանչյուր հարուցված միջնորդություն դատարանը պարտավոր է քննարկել, լսել կողմերի կարծիքը: Եթե հանգամանքները, որոնց բացահայտման համար հարուցված է միջնորդությունը, կարող են նշանակություն ունենալ գործի համար, կամ նյութը, որի ապացուցողական նշանակությունը վիճարկվում է, ստացված է օրենքի էական խախտումով, դատարանը բավարարում է միջնորդությունը: Դատարանը կայացնում է միջնորդությունը մերժելու մասին պատճառաբանված որոշում: Դատարանի կողմից միջնորդության մերժումը չի սահմանափակում միջնորդություն հարուցող անձի իրավունքը՝ նույն միջնորդությունը հարուցել հետագայում»: Դրանով օրենսդրության մեջ ուղղակիորեն մատնանշվում է, որ դատական նիստում չեն կարող քննության թույլատրվել այն ապացույցները, որոնք ձեռք են բերվել օրենքի էական խախտումներով, քրեական դատավարությանը մասնակից անձանց իրավունքների ու օրինական շահերի սահմանափակմամբ:

---

<sup>1</sup> **Лазарева В.А.** Судебная власть и её реализация в уголовном процессе, Самара: Изд-во «Самарский университет», 1999, – էջ 74:

Դատական վերահսկողության վերստուգիչ բնույթը դրսևորվում է նաև դատական քննությունը նախապատրաստելիս դատավորի գործողություններում: Այսպես՝ համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի 294-րդ հոդվածի 1-ին մասի, «սույն օրենսգրքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում, երբ դա հնարավոր է առանց դատաքննության, դատարանը պատճառաբանված որոշում է կայացնում քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին: Եթե քրեական հետապնդումը բացառող հանգամանքները վերաբերում են մեկ մեղադրյալի, քրեական հետապնդումը դադարեցվում է միայն նրա նկատմամբ»: ՀՀ քր. դատ. օր.-ի 296-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Գործը մեղադրողին վերադարձնելու մասին որոշում դատավորը կայացնում է այն դեպքում, երբ մեղադրական եզրակացությունը չի համապատասխանում սույն օրենսգրքի պահանջներին, կամ արարքի իրավաբանական որակումը չի համապատասխանում արարքի նկարագրությանը կամ չի բխում գործում առկա ապացույցներից»: Իհարկե այն ժամանակ, երբ ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքով նախատեսված էր գործը լրացուցիչ քննության վերադարձնելու հնարավորություն, գործը մեղադրողին վերադարձվում էր միայն մեղադրական եզրակացությունը քրեական դատավարության օրենսգրքի պահանջներին անհամապատասխանության դեպքում: ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից քրեական գործը լրացուցիչ քննության վերադարձնելը հակասահմանադրական ճանաչելուց հետո ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչվեց նաև ՀՀ քր. դատ. օր.-ի 292-րդ հոդվածի 5-րդ կետը, որը հնարավորություն էր տալիս դատարանին դատական քննության նախապատրաստման փուլում գործը վերադարձնել լրացուցիչ քննության: Օրենսդիրն առաջացած բացը փորձեց լուծել գործը մեղադրողին վերադարձնելու հնարավորությամբ, հետևյալ հիմքերով՝ արարքի իրավաբանական որակումը չի համապատասխանում արարքի նկարագրությանը կամ չի բխում գործում առկա ապացույցներից: Նշված հիմքերով գործը մեղադրողին վերադարձնելը, կարծում ենք, քողարկված ձևով գործը լրացուցիչ քննության վերադարձնելն է, որովհետև արարքի իրավաբանական որակման փոփոխությունը նշանակում է մեղադրյալին լրացուցիչ մեղադրանքի առաջադրում կամ մեղադրանքի փոփո-

խում և նրա հարցաքննություն: Որոշակի քննադատության է արժանի նաև մյուս հիմքը՝ մեղադրական եզրակացությունը չի բխում գործում առկա ապացույցներից: Այս հիմքը ենթադրում է նաև այն, որ գործի քննությունն իրականացվել է թերի, այն լրացնելու համար անհրաժեշտ է լրացուցիչ քննություն, որը չի կարող իրականացնել մեղադրողը: Արդյունքում դատախազը, ելնելով ՀՀ քր. դատ. օր-ի 274-րդ հոդվածից, որոշում է կայացնում գործը լրացուցիչ քննության վերադարձնելու մասին:

ՀՀ քր. դատ. օր-ի 297-րդ հոդվածում սահմանված է. «Անհրաժեշտ դատավարական գործողություններ կատարելու համար քրեական գործը լրացուցիչ նախաքննության վերադարձնելու մասին որոշում դատավորը կայացնում է այն դեպքում, երբ հետաքննության և նախաքննության մարմինների կողմից թույլ են տրվել քրեադատավարական օրենքի էական խախտումներ, որոնք չեն կարող վերացվել դատական քննության ընթացքում»<sup>1</sup>:

ՀՀ քր. դատ. օր-ի 300-րդ հոդվածում ամրագրված է հետևյալ դրույթը. «Որոշումներ կայացնելու հետ միաժամանակ, բացի գործն ըստ ընդդատության ուղարկելու մասին որոշումից, դատարանը պարտավոր է քննել մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցներ ընտրելու կամ չընտրելու և դրա տեսակի հիմնավոր լինելու կամ չլինելու հարցը՝ խափանման միջոցն ընտրված լինելու դեպքում»: Գատական քննությանը նախապատրաստվելիս դատարանի կայացրած վերոնշյալ բոլոր որոշումները դատավորի կողմից ստուգման (վերստուգման) արդյունք են: Հարկ է նշել, որ վերստուգող դատական վերահսկողությունն ուղղված է քրեական դատավարության մասնակիցների պաշտպանությանը, այդ թվում՝ ինչպես պաշտպանության, այնպես էլ մեղադրանքի կողմի: Գա հաստատվում է այն որոշումներով, որոնք կայացվում են դատական քննության փուլում:

---

<sup>1</sup> Թեև ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքում այս դրույթը պահպանվել է, սակայն ՀՀ սահմանադրական դատարանի կողմից այն ճանչվել է հակասահմանադրական, տե՛ս «Քաղաքացի Գևորգ Գգրարյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 311 հոդվածի 2-րդ կետի, 414.2. հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 3-րդ կետերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ Սահմանադրական դատարանի 2007թ-ի հուլիսի 24-ի ՍԳ-Ո-710 որոշումը:

Այսպես՝ դատարանի վերոնշյալ բոլոր որոշումները, որոնք կայացվել են դատական քննությունը նախապատրաստելիս, կարող են լինել ինչպես ի շահ պաշտպանության կողմի, այնպես էլ ի շահ մեղադրանքի կողմի: Դրանց միավորում է այն, որ բոլորն էլ վերստուգիչ բնույթի են:

Դատական վերահսկողությունը արդարադատության իրականացման նախադրյալ է, քանի որ առանց դրա անհնար է կատարել դատական այնպիսի քննություն, որի արդյունքում կկայացվի արդարացի դատավճիռ: Նախ պետք է համոզվել, որ դատարանին ներկայացվել են քրեական գործին առնչվող այն նյութերը, որոնք ձեռք են բերվել օրենքին համապատասխան՝ առանց քրեական դատավարությանը մասնակից անձանց իրավունքների ու օրինական շահերի խախտման: Այսինքն՝ նախքան արդարադատություն իրականացնելը անհրաժեշտ է վերստուգել քրեական գործով արդեն առկա նյութերը և միայն այդ վերստուգման հիման վրա որոշել, թե նշյալ նյութերից որը կարելի է օգտագործել դատական քննության ընթացքում: Դրա շնորհիվ պայմաններ են ստեղծվում դատական քննության ընթացքում քրեական գործի բոլոր հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար:

Վերստուգիչ դատական վերահսկողության գործառույթներից մեկը քրեական դատավարության դատական փուլերում արդարության վերականգնումն է: Արդարության վերականգնում ասելով հասկանում ենք քրեական դատավարության մասնակիցների իրավունքների ու ազատությունների վերականգնում այն դեպքում, երբ նրանց իրավունքները խախտվել են: Քրեադատավարական օրենսդրությամբ վերապահված զգալի լիազորությունները մի կողմից և, զանազան շարժառիթներով պայմանավորված, դրանք չարաշահելու ցանկությունը մյուս կողմից, հանգեցնում են քննիչների, հետաքննության մարմնի աշխատակիցների կողմից կամայականությունների քրեական դատավարության այն մասնակիցների նկատմամբ, ովքեր իշխանական լիազորություններով օժտված չեն: Վ. Ա. Լազարևան նշում է, որ նախնական քննություն իրականացնող պաշտոնատար անձանց ձեռքում մեծ թվով լիազորությունների կենտրոնացումը, գործունեության ֆիզիկական և հոգեկան բարդ պայմանները հաճախ հանգեցնում են նրանց անձնային հատկանիշների աղա-

վաղմանը, որը հիմք է դառնում կոնկրետ քրեական գործեր քննելիս նրանց կողմից կամայականություններ գործելու համար<sup>1</sup>: Հասկանալի է, որ մեկ անձի (քննիչի, հետաքննության մարմնի) ձեռքում իշխանության կենտրոնացումը ըստ էության անիմաստ է դարձնում քրեական դատավարության մնացած մասնակիցների կողմից իրենց խախտված իրավունքի վերականգնման պահանջով նրան դիմելը: Հենց այդ պատճառով անհրաժեշտություն է ծագում որևէ երրորդ կողմի, որը դեռևս որոշակի ձևավորված դիրքորոշում չունի: Այդ երրորդի հանդեպ հիմնական պահանջը նրա դիրքորոշման անաչառությունն է, ինչը հաճախ նույնացվում է արդարության հետ: Ընդ որում՝ ցանկալի է, որ այդ երրորդն իր գործունեությունը կառուցի ընդունված ժողովրդավարական սկզբունքների վրա, որոնք արդեն իսկ գործի արդարացի քննության հիմքն են: Անկասկած, այդպիսի սկզբունքներից են արդարացի քննությունը և մրցակցությունը: Ուստի առավել ցանկալի է, որ այդ երրորդը լինի դատարանը, որը կգործի այդ սկզբունքների հիման վրա: Նախնական քննության ընթացքում երբեմն հնարավոր չի լինում համարժեքորեն արձագանքել քաղաքացիների իրավունքների ու ազատությունների որոշակի խախտումներին դատարանի տրամադրության տակ եղած նյութերի ոչ բավարար ծավալի պատճառով: Ըստ այդմ՝ իրավունքների վերականգնումը հնարավոր է դառնում վերստուգիչ դատական վերահսկողության շնորհիվ, երբ դատարանի տրամադրության տակ են հայտնվում նախնական քննության ընթացքում հավաքված բոլոր ապացույցները, ինչպես նաև քրեական գործի մյուս նյութերը, որոնք նշանակություն ունեն քննիչի, հետաքննության մարմնի կողմից նախկինում կայացված որոշման օրինականությունը պարզելու համար: Այն դեպքում, երբ անձի իրավունքների և օրինական շահերի խախտումները տեղի են ունեցել սխալի հետևանքով, ոչ միշտ է քննիչի գործողությունների սխալականությունն ակնհայտ է դառնում դեռ նախնական քննության փուլում: Դա հասկանալու համար երբեմն անհրաժեշտ է լինում հավաքել բավարար չափով ապացույցներ և այլ տեղեկություններ, որոնց ոչ միշտ է տիրապետում քննիչը նախնական քննության որոշակի մասերում: Իսկ նախաքննության ա-

---

<sup>1</sup> Ст'ю Лазарева В.А. Психология следственных ошибок. // Проблемы психологии следственной деятельности, Красноярск, 1986, – т.2 33-38:

վարտին քննիչը թեև արդեն տիրապետում է բավականաչափ տվյալների, սակայն նրա մոտ արդեն կարող է ձևավորված լինել սխալ կարծիք՝ հիմնված որոշակի կանխակալ մոտեցումների վրա, որի պատճառով նա կարող է և չհասկանալ, որ սխալ է գործել: Ուստի դա հնարավոր կլինի միայն հաջորդ փուլում՝ դատական քննության փուլում, վերստուգիչ դատական վերահսկողություն իրականացնելիս: Այդ վերահսկողությունն իրականացնելիս կողմերը, հիմնվելով առկա ապացույցների վրա, ինչպես նաև ներկայացնելով նորերը, հնարավորություն ունեն դատարանի ուշադրությունը հրավիրել իրենց իրավունքների և օրինական շահերի անհիմն սահմանափակման, ինչպես նաև դրանց խախտման վրա: Դրա հիման վրա նրանք կարող են պահանջել, որ վերականգնվեն իրենց իրավունքներն ու ազատությունները: Դրանով իսկ կիրականացվի վերստուգիչ դատական վերահսկողություն: Հավաքված ապացույցների բավարար քանակի և նորերը կցելու հնարավորության շնորհիվ դատական վերահսկողության տվյալ տեսակը բավարար է արդարացի դատական որոշումներ կայացնելու համար: Դրանով որոշվում է նաև իրականացված դատական վերահսկողության որակը:

## **§ 2. Նախնական դատական վերահսկողությունը որպես անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովման երաշխիք**

Դատական վերահսկողության մյուս ձևը նախնական դատական վերահսկողությունն է: Այն հիմնված է քրեական դատավարության մասնակիցների իրավունքների և օրինական շահերի խախտումները կանխելու անհրաժեշտության վրա: Դրա էությունն այն է, որ կոչված է կանխելու քրեական դատավարության ընթացքում անձի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի չհիմնավորված սահմանափակումները: Այդ նպատակով վերոնշյալ սահմանափակումների ուղղությամբ դատավարական գործողություններ կատարելու համար անհրաժեշտ է դատարանի որոշումը, որը թույլ է տալիս իրականացնել նշյալ գործողությունները:

Այսպես՝ համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի 279-րդ հոդվածի՝ «Դա-



տարանի որոշմամբ կատարվում են բնակարանի խուզարկությունը, ինչպես նաև նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության սահմանափակման հետ կապված քննչական գործողությունները»: ՀՀ քր. դատ. օր.-ի 280-րդ հոդվածում սահմանված են հետևյալ պահանջները. «Միայն դատարանի որոշման հիման վրա են կիրառվում քրեադատավարական հարկադրանքի հետևյալ միջոցները՝ կալանքը որպես խափանման միջոց կիրառելը, կասկածյալներին, մեղադրյալներին և այն անձանց, որոնց հոգեկան վիճակը թույլ չի տալիս նրանց ներգրավել որպես մեղադրյալ, բժշկական հաստատությունում տեղավորումը՝ դատահոգեբանական, դատահոգեբուժական կամ դատաբժշկական փորձաքննություն կատարելու համար»: Ինչպես երևում է վերոնշյալ քրեադատավարական նորմերի հղումներից, նախնական դատական վերահսկողությունը կոչված է կանխելու քրեական դատավարության մասնակիցների իրավունքների ու օրինական շահերի խախտման հնարավորությունը:

Հարկ է նշել, որ Խորհրդային Միության քրեադատավարական օրենսդրությունում նախնական դատական վերահսկողությունը տեղ չէր գտել: Այսպես՝ համաձայն Հայկական ԽՍՀ քր. դատ. օր.-ի 159-րդ հոդվածի՝ «Խուզարկությունը կատարվում է քննիչի պատճառաբանված որոշմամբ և միայն դատախազի սանկցիայով»: Այսինքն՝ Հայաստանում նախկինում գործած քր. դատ. օր.-ի համաձայն նախնական հսկողության բնույթ ունեւ դատախազական հսկողությունը: Ընդ որում՝ դատախազի սանկցիան (համաձայնությունը) անհրաժեշտ էր այն նույն դեպքերում, երբ ներկայումս ըստ ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի պահանջվում է դատարանի համաձայնությունը:

Միանգամայն ակնհայտ է, որ առանձին քննչական և այլ դատավարական գործողությունների (մասնավորապես որպես խափանման միջոց կալանքը ընտրելու) կատարումը թույլ տալու գործառույթը դատարանին փոխանցելը լուրջ առաջընթաց քայլ է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության ժողովրդավարացման ու մարդասիրության առումով: Չէ՞ որ դատախազը, որին պետք էր դիմել սանկցիայի (համաձայնության) համար, ինչ-

պես և քննիչը, պաշտոնատար անձ է՝ օժտված բավականաչափ իշխանական լիազորություններով: Ավելին՝ դատախազության մարմիններին բնորոշ է կազմակերպական այնպիսի սկզբունքը, ինչպիսին միանձնյա ղեկավարումն է, որը ենթադրում է ստորադաս դատախազի ենթարկումը վերադասին: Այս սկզբունքն իր հիմքում հակադիր է մրցակցության սկզբունքին, որը գործում է դատարանում: Հենց այդ պատճառով դատարանի թույլտվությամբ դատավարական գործողությունների իրականացումը նշանակում է ժողովրդավարական հիմքը ներմուծել քրեական դատավարության մեջ: Չէ՞ որ այդ դեպքում հնարավորություն է ստեղծվում մրցակցության տարրը ներմուծել նախնական քննության փուլ, ընդ որում թույլ չտալով, որ պայմաններ ստեղծվեն որևէ մեկի իրավունքների ու օրինական շահերի խախտման համար: Ընդ որում՝ դատարանը հանդես է գալիս որպես այս կամ այն դատավարական գործողությունների կատարման հարցում չշահագրգռված մարմին, քանի որ նրա նպատակը հանցագործությունների քննությունն ու բացահայտումը չէ: Այն անկախ է քրեական դատավարության կողմերի ազդեցությունից, իսկ դա անվերապահ պայման է, որը երաշխավորում է, որ չխախտվեն քրեական դատավարությանը մասնակցող անձանց հիմնական իրավունքներն ու ազատությունները:

Հարկ է նշել, որ Մ. Ս. Ստրոգովիչը կասկածի տակ է դնում նախնական քննության փուլում մրցակցության սկզբունքի իրացման հնարավորությունը: Նրա կարծիքով, նախնական քննությունը և մրցակցության սկզբունքը անհամատեղելի են, քանի որ մեկը բացառում է մյուսի գոյությունը: Այս կապակցությամբ նա գրում է. «Նախնական քննության վրա չի տարածվում մրցակցության սկզբունքը...»<sup>1</sup>: Ասվածը նա բացատրում է հետևյալ կերպ. «Ըստ օրենքի պահանջի քննիչը գործը քննելիս պարտավոր է պարզել ոչ միայն մեղադրյալին մերկացնող և նրա պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքները, այլև նրանք, որոնք ժխտում են նրա մեղքը և

---

<sup>1</sup> **Строгович М.С.** Курс Советского уголовного процесса, Том I: Основные положения науки Советского уголовного процесса, – М.: Издательство «Наука», 1968, – էջ 197:

մեղմացնում պատասխանատվությունը»<sup>1</sup>: Նշյալ տեսակետը լիովին համապատասխանում է խորհրդային շրջանի քրեական դատավարության մասին պատկերացումներին, որտեղ ընդունված էր նախաքննությունը դիտել որպես մի փուլ, որում անթույլատրելի է կողմերի լիարժեք մրցակցությունը: Այսպիսի պատկերացումն այժմ համարվում է հնացած և չի արտացոլում ժողովրդավարական պետության սպասումները քրեական դատավարությունից և, մասնավորապես, նախնական քննությունից: Քրեական դատավարության արդի հայեցակարգը թույլատրելի է ցանկալի է համարում, որ մրցակցությունը առկա լինի բոլոր փուլերում, քանզի այն քաղաքացիների իրավունքների ու ազատությունների ապահովման երաշխիք է:

Անհրաժեշտ է նշել, որ կալանքը որպես խափանման միջոց ընտրելիս դատարանը հետազոտում է այդ խափանման միջոցի հիմնավորվածության հարցը: Այսպես՝ համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի 137-րդ հոդվածի 4-րդ մասի՝ «Կալանավորման մասին որոշում կայացնելու հետ միաժամանակ դատարանը լուծում է մեղադրյալին գրավով կալանքից ազատելու հնարավորության հարցը և, ճանաչելով նման ազատման հնարավորությունը, նշանակում է գրավի գումարը»: Այսինքն՝ դատարանը կարող է որոշել հարցն այնպես, որ ավելի նպատակահարմար համարի կիրառել խափանման այլ միջոց՝ գրավը: Պարզ է, որ դրանով դատարանը ձգտում է թույլ չտալ մեղադրյալի իրավունքների ու օրինական շահերի չհիմնավորված խախտումներ: Ընդ որում՝ պետք է նաև հաշվի առնել, որ ՀՀ քր. դատ. օր.-ի 137-րդ հոդվածի նույն մասում սահմանված է. «Հետագայում դատարանը կարող է պաշտպանության կողմի միջնորդությամբ վերանայել գրավի անթույլատրելիության կամ գրավի գումարի մասին որոշումը»: Այսինքն՝ դատարանի որոշումն այդ դեպքում ևս վերջնական չէ, քանզի ենթադրում է այն հանգամանքների փոփոխության հնարավորությունը, որոնք հիմք են հանդիսացել խափանման միջոցի ընտրության համար, ուստի և հնարավոր է համարվում ևս մեկ անգամ վերադառնալ խափանման միջոցի ընտրության հարցի քննարկմանը:

Հարկ է նշել, որ քրեադատավարական օրենսդրությունը հնա-

---

<sup>1</sup> Строгович М.С. նույն տեղը:

րավորություն է ընձեռում բողոքարկելու դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին դատարանի որոշումը, որը սահմանափակում է քրեական դատավարությանը մասնակցող անձանց իրավունքներն ու օրինական շահերը: Այսպես՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 137-րդ հոդվածի 5-րդ մասում սահմանված է. «Կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին դատարանի որոշումը կարող է բողոքարկվել վերադաս դատարան»<sup>1</sup>: Դա անհրաժեշտ է խուսափելու համար սխալից կամ դատական կամայականությունից քաղաքացիների իրավունքներն ու ազատություններն էականորեն սահմանափակող միջոցների կիրառման հարցը որոշելիս: Նշյալ դրույթի ամրագրումով օրենսդիրը ձգտում է նվազագույնի հասցնել անօրինական ու չհիմնավորված որոշումների ընդունումը կոնկրետ մեղադրյալների նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելիս: Այսպիսի մոտեցումը համապատասխանում է ժողովրդավարության պահանջներին, որոնք ներկայացնում են ժամանակակից հասարակությունն ու պետությունը արդարադատությանը, որոնք իրենց նպատակներն են համարում մարդասիրական արժեքները:

Ընդ որում՝ կալանավորման վերաբերյալ դատարանների կայացրած որոշումները պետք է հիմնված լինեն ինչպես ՀՀ ներպետական օրենսդրության, այնպես էլ ՀՀ միջազգային իրավական ակտերի պահանջների վրա: Նման դատողությունը նախ և առաջ բխում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի պահանջներից: Մասնավորապես, Դատարանը նշել է, որ դատական վերահսկողության խնդիրն է ստուգել անձի կալանավորման համապատասխանությունը ինչպես ներպետական իրավունքի, այնպես էլ Կոնվենցիայի պահանջներին (Չահալն ընդդեմ Միացյալ Թագավորության, 15 նոյեմբերի 1996 թվական, կետ 128)<sup>1</sup>:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի՝ անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքն ամրագրող 5-րդ հոդվածի 3-րդ կետը, որպես անձին ազատությունից

<sup>1</sup> <http://cmiskp.echr.coe.int/tkp197/view.asp?item=1&portal=hbk&action=html&highlight=Chahal&sessionid=60538944&skin=hudoc-en>

գրկելու գործընթացում օրինականության ապահովման երաշխիք պահանջում է, որ ազատությունից գրկված անձն անհապաղ տարվի դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, ով օրենքով լիազորված է իրականացնել դատական իշխանություն: Այն անձը, որի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց է ընտրվում, հնարավորություն է ստանում հիմնավորել դրա կիրառման անօրինականությունը՝ մատնանշելով համապատասխան հանգամանքները: Մեղադրյալը հնարավորություն ունի ժխտել մեղադրանքի կողմի փաստարկները նշյալ խափանման միջոցի անհրաժեշտության մասին: Այսինքն՝ այն անձը, որի նկատմամբ կիրառվում է նշյալ խափանման միջոցը, հնարավորություն է ստանում պաշտպանելու իր իրավունքներն ու օրինական շահերը: Ընդ որում՝ նա կարող է անել այդ մրցակցության սկզբունքի պայմաններում, երբ մեղադրանքի կողմի հետ վիճում է հավասարը հավասարի պես: Առավել ևս, որ դատարանը, լինելով անկախ և անկողմնակալ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու հարցում, հավասարապես լսում է երկու կողմերի (մեղադրանքի և պաշտպանության) փաստարկները: Գա դառնում է նախնական քննության փուլում մրցակցության սկզբունքի ներդրման միջոցներից մեկը, որի օգնությամբ հնարավորություն է ստեղծվում սահմանափակել քննիչի կամայականությունները՝ հիմնված քրեադատավարական օրենսդրությամբ նրան տրված զգալի իշխանական լիազորությունների վրա:

Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդության քննարկման դատավարական կարգը ենթադրում է կողմերի փաստարկների ներկայացում՝ ի հիմնավորումն ինչպես նշյալ խափանման միջոցի կիրառման անհրաժեշտության, այնպես էլ դրա անթույլատրելիության: Այսպես՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 285-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է. «Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու անհրաժեշտության դեպքում դատախազը կամ քննիչը միջնորդություն է հարուցում դատարան՝ խափանման միջոցի այդ տեսակը ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին: Միջնորդություն հարուցելու որոշման մեջ պետք է շարադրվեն այն շարժառիթները և հիմքերը, որոնց հիման վրա առաջացել է մեղադրյալին

կալանավորելու անհրաժեշտություն: Որոշմանը կցվում են միջնորդության հիմնավորվածությունը հաստատող նյութերը»: Ընդ որում՝ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդություն հարուցելու մասին որոշումը ենթակա է անհապաղ քննման նախաքննության կատարման վայրի կամ ձեռքակալման վայրի դատարանում, դատավորի կողմից միանձնյա՝ միջնորդություն ներկայացրած անձի, պաշտպանի մասնակցությամբ, եթե նա մասնակցում է գործին: Ժամանակին ծանուցված պաշտպանի չներկայանալը չի խոչընդոտում միջնորդության քննմանը դատարանում»: Այսինքն՝ նշյալ միջնորդության քննարկումը ենթադրում է, որ կողմերը հնարավորություն ունեն ներկայացնելու իրենց փաստարկներն ի հիմնավորումն իրենց դիրքորոշումների: Ընդ որում՝ դատարանը չի սահմանափակվում ներկայացված միջնորդություններով ու նյութերով: ՀՀ քր. դատ. օր.-ի 285-րդ հոդվածի 4-րդ մասում նախատեսված է հետևյալ դրույթը. «Միջնորդությունը քննարկելիս դատավորն իրավունք ունի պահանջել միջնորդությունը հիմնավորող լրացուցիչ նյութեր, բացատրություններ»: Պաշտպանից բացի՝ նշյալ միջնորդությունը քննարկելիս ներկա է լինում նաև մեղադրյալը, որի նկատմամբ ընտրվում է կալանքը որպես խափանման միջոց: Ժամանակին ծանուցված ազատության մեջ գտնվող մեղադրյալի կամ պաշտպանի չներկայանալը չի խոչընդոտում միջնորդության քննմանը: ՀՀ քր. դատ. օր.-ի 285-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված է. «Անազատության մեջ գտնվող մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդությունների քննության դատական նիստին նրա մասնակցության հարցը պետք է ապահովի վարույթն իրականացնող մարմինը»:

Պաշտպանից բացի՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությունը քննարկելիս կարող են ներկա լինել նաև տուժողը և նրա օրինական ներկայացուցիչը: Սակայն քրեական դատավարության այդ մասնակիցներին դատարան կանչելը դատարանի իրավունքն է, բայց ոչ նրա պարտականությունը:

Կալանքը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդության քննարկման կարգի կարգավորումն անկասկած Հայաստանի Հան-

րապետության քրեադատավարական գործող օրենսդրության արժանիքներից է: Սակայն անհրաժեշտ է նաև, որ նշյալ ընթացակարգը հետագայում կատարելագործվի, մասնավորապես քրեական դատավարությունում ազատությունից զրկված անձին անհապաղ դատարան ներկայացնելու երաշխիքից ելնելով: Այսպես՝ ավելի արդարացի կլինի, եթե միջնորդությունը քննարկելիս մեղադրյալը ներկա լինի՝ անկախ այն բանից՝ նա անազատության մեջ է, թե ոչ: ՀՀ քր. դատ. օր-ի 285-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունում տեղ գատած կարգավորումը, «Հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությունը դատարանը քննում է միջնորդությունը ներկայացրած անձի և հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի պաշտպանի մասնակցությամբ, եթե նա մասնակցում է գործին» անկասկած չի բխում Կոմվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված՝ դատավորի մոտ անհապաղ տարվելու պահանջից:

Օրենսդրական առկա կարգավորումը վարույթն իրականացնող մարմնին հանարվորություն է տալիս անձին ազատությունից զրկել առանց նրա դատարան ներկայանալու:

Այս հիմնասխնդրի հետ կապված ուշագրավ է ինչպես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, այնպես էլ ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները: Այսպես՝ անդրադառնալով կոմվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի կիրառմանը՝ եվրոպական դատարանը *Լադենյորը ընդդեմ Լեհաստանի* գործով վճռում նշել է, որ Կոմվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետը չի նախատեսում որևէ հնարավոր բացառություն այն պահանջից, որ անձը ձերբակալվելիս կամ կալանավորվելիս պետք է բերվի դատավորի կամ այլ պաշտոնյայի մոտ<sup>1</sup>: Գարաբաևն ընդդեմ Ռուսաստանի գործով վճռում եվրոպական դատարանը դիրքորոշումը հետևյալն է, որ դատարանը հեռակա որոշում է կայացրել անձին կալանավորելու մասին այն պայմաններում, երբ անձը թաքնվում էր արդարադատությունից և գտնվում էր միջազգային հետախուզման մեջ, չի հակասում Կոմվենցիայի դրույթներին: Սակայն Թուրքմենստանից դիմումատուի վերադառնալուց և Ռուսաստանում ձերբակալավելուց հետո, Կոմվենցիայի

<sup>1</sup> St'u Ladent v. Poland, 2008թ., գանգատ թիվ 11036/03, կետ 75:

5-րդ հոդվածի 3-րդ կետի հիման վրա, նա պետք է անհապաղ հասցվեր դատավորի մոտ<sup>1</sup>:

ՀՀ վճռաբեկ դատարանն այս հիմնախնդրին անդրադարձել է *Տիգրան Վահրադյանի* գործով: Նշված գործով ՀՀ վճռաբեկ դատարանը գտնում է, որ «քրեադատավարական օրենսգրքում ամրագրված նման կարգավորումը, կհակասի Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասին և կոպտորեն կխախտի անձի ազատության իրավունքը, եթե հետախուզման մեջ գտնվող անձի ի հայտ գալուց հետո նա անհապաղ դատարանի առջև չներկայացվի:

Հիմք ընդունելով ՀՀ իրավական համակարգում Կոնվենցիայի բարձրագույն ուժը, ինչպես նաև ազատությունից զրկված անձանց անհապաղ դատարանի առջև ներկայացնելու՝ Կոնվենցիայով հստակ ամրագրված և եվրոպական դատարանի նախադեպային պարակտիկայում նբազմիցս վերահաստատված պահանջի ներպատկան երաշխավորման պահանջը՝ վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ ներպետական օրենսդրության մակարդակում ազատության իրավունքի ապահովման անհրաժեշտ երաշխիք պետք է լինի հետախուզման մեջ գտնվող անձին հայտնաբերելուց հետո, արդեն նրա ներկայությամբ, նրա նկատմամբ ընտրված խափանման միջոցի հարցի կրկնակի քննարկումը նախաքննության կատարման վայրի դատարանում: Դ-ա հնարավորություն կտանվազեցնել կամայական կալանավորման դեպքերը, ինչպես նաև կապահովի կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի՝ հայաստանի Հանրապետության համար միջազգային պարտավորություն հանդիսացող պահանջների կատարումը»<sup>2</sup>:

Ուստի ճիշտ կլինի, որ 285-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Դատական նիստին պետք է ներկա լինի մեղադրյալը, որի նկատմամբ հարուցված է կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդությունը»: Օրենսդրական նման կարգավորման նախատեսումը բխում է մեղադրյալի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունից:

<sup>1</sup> Տե՛ս Garabaev v. Russia, 2007թ., բողոք թիվ 38411/02, կետ 101:

<sup>2</sup> Տե՛ս Տիգրան Վահրադյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 26-ին կայացված ԼԳ/0197/06/08 որոշումը:



Կարծում ենք՝ ճիշտ կլինի ավելի մանրամասն, քան ՀՀ քր. դատ. օր.-ի 285-րդ հոդվածում է, կանոնակարգել կալանքը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդության քննարկման կարգը: Մասնավորապես սահմանել, որ նիստի սկզբում դատավորը հայտարարում է, թե որ միջնորդությունն է ենթակա քննարկման, բացատրում է դատական նիստին ներկա անձանց իրենց իրավունքներն ու պարտականությունները: Այնուհետև դատախազը կամ միջնորդությունը հարուցած անձը, հիմնավորում է այն, որից հետո լսում են դատական նիստին ներկայացած այլ անձանց: ՀՀ քր. դատ. օր.-ի 283-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված դրույթը անկասկած բավական չէ: Ըստ այդ դրույթի՝ «Դատավորն իրավունք ունի՝

միջնորդություն ներկայացնող անձից պահանջել՝ միջնորդության հիմնավորվածությունն ստուգելու համար անհրաժեշտ փաստաթղթեր և իրեղեն ապացույցներ.

ներկայացնել բացատրություններ»: Իսկ նշված միջնորդությունների քննարկումն ավելի ամբողջականորեն կանոնակարգելով, հնարավորություն կստեղծվի ամրապնդել մրցակցության սկզբունքը տվյալ միջնորդությունները քննարկելիս, ինչը թույլ կտա խուսափել սխալներից՝ քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները սահմանափակելիս: Բացի այդ, հարկ է նշել, որ դատարանի կողմից կալանքը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդության քննարկմանը մասնակից անձինք ի հիմնավորումն կարող են ներկայացնել իրենց փաստարկները, որոնք հիմնված են ինչպես գործում առկա ապացույցների, այնպես էլ այն ապացույցների վրա, որոնք հարկավոր էր կցել քրեական գործի նյութերին:

Կալանքը որպես խափանման միջոց անհիմն կիրառելուց խուսափելու համար նախատեսված է դատարանի նշված որոշումը բողոքարկելու հնարավորություն: ՀՀ քր. դատ. օր.-ի 287-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու, ինչպես նաև կալանքի տակ գտնվելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու վերաբերյալ դատավորի որոշման դեմ բողոքները դատախազի, մեղադրյալի, նրա պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի կողմից բերվում են վերաքննիչ դատարան՝ անմիջականորեն կամ որոշում կայացրած դատարանի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի

միջոցով»։ Բողոքարկման այդպիսի հնրավորությունը երաշխիքներ է տալիս դատական կամայականությունների ու սխալների դեմ, որոնց իրականացման հետևանքով խախտվում են քրեական դատավարության մասնակիցների իրավունքներն ու ազատությունները։ Ընդ որում՝ միանգամայն ակնհայտ է, որ քրեադատավարական օրենսդրությունում հիմնականում շեշտը դրվում է հենց այն անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության վրա, ում նկատմամբ ընտրված է հիշյալ խափանման միջոցը։ Դա երևում է ՀՀ քր. դատ. օր.-ի 287-րդ հոդվածի 3-րդ մասից, որտեղ սահմանված է. «Վերաքննիչ դատարանը, ստանալով բողոքը, անհապաղ պահանջում է կալանավորելու անհրաժեշտությունը հիմնավորող նյութերը և դատարանի որոշումը»։ Այս նորմն ուղղակիորեն ցույց է տալիս, որ բողոքարկումն ուղղված է հնարավոր սխալի կամ կամայականության վերացմանը, որը սահմանափակում է այն անձանց իրավունքներն ու օրինական շահերը, որոնց նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված է կալանքը։

Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ անձին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ դատարանի որոշման դեմ բերված բողոքների քննության ընթացքում նույնպես կարևոր է մրցակցության սկզբունքի ապահովումը։ Այս կապակցությամբ, որոշակի դիրքորոշում է արտահայտել Մարդու իրավունքների եվրոպական դատարանը։ Մասնավորապես, Նիկոլովան ընդդեմ Բուլղարիայի գործով դատարանը նշել է. «Կալանավորման որոշման դեմ ներկայացված դիմումը քննող դատարանը պետք է ապահովի գործի դատական քննությանը բնորոշ երաշխիքներ։ Դատավարությունը պետք է լինի մրցակցային և բոլոր դեպքերում երաշխավորի կողմերի՝ դատախազի և կալանավորված անձի «իրավահավասարությունը»։ Իրավահավասարությունը չի գործում, եթե փաստաբանին չեն տրամադրվում քննության նյութերը, որոնց ուսումնասիրությունն անհրաժեշտ է իր հաճախորդի կալանավորման օրինականությունն արդյունավետ վիճարկելու համար...» (Նիկոլովան ընդդեմ Բուլղարիայի, 25 մարտի 1999 թվական, կետ 58<sup>1</sup>)։ Եվրոպական դատարանը համանման դիրքորոշում է արտահայտել նաև Վլոչն ընդդեմ Լեհաս-

---

<sup>1</sup> <http://cmiskp.echr.coe.int/tkp197/view.asp?item=1&portal=hbkm&action=html&highlight=Nikolova&sessionid=60538944&skin=hudoc-en>

տանի վճռում. «...կալանավորման բողոքարկմանը վերաբերող դատավարությունը պետք է երաշխավորի կողմերի՝ դատախազի և կալանավորված անձի մրցակցությունը» (Վլոչն ընդդեմ Լեհաստանի, 19 հոկտեմբերի 2000 թվական, կետ 126<sup>1</sup>):

Իրավաբանական գրականության մեջ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կապակցությամբ ծավալվեց բանավեճ խափանման տվյալ միջոցի կիրառման նկատմամբ դատական վերահսկողության շրջանակների վերաբերյալ: Այսպես՝ Ի. Լ. Պետրուխինի կարծիքով, դատարանը ոչ միայն պետք է ստուգի կալանքը որպես խափանման միջոց ընտրելու ձևական (ընթացակարգային) պայմանները, այլ նաև դրա համար փաստական հիմքերի բավարար լիներ<sup>2</sup>: Նման մոտեցում է արտահայտել նաև Գ. Չ. Ավետիսյանը. նրա կարծիքով՝ որպեսզի հիմնավորված կիրառվի կալանքը, քննիչը կամ դատախազը պետք է ունենա և դատարանին ներկայացնի քննությունից, դատից և պատիժը կրելուց մեղադրյալի խուսափելու հավանականությունը հաստատող փաստացի տվյալներ<sup>3</sup>: Նշված մոտեցմանը իրենց անհամաձայնությունը հայտնեցին բազմաթիվ հեղինակներ<sup>4</sup>, որոնք հենվում էին այն տեսակետի վրա, որ դատարանը, քննարկելով փաստացի հիմքերը, կանխորոշում է հետագա դատական քննությունը, որի ընթացքում քրեական գործը քննվում է ըստ էության: Կարծում ենք՝ այդպիսի մտավախություններն անհիմն են, քանի որ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու պահին ապացույցների քանակը բավարար չէ կոնկրետ մեղադրյալի մեղավորության կամ անմեղության մասին վերջնական որոշում կայացնելու

<sup>1</sup> <http://cmiskp.echr.coe.int/tkp197/view.asp?item=1&portal=hbkm&action=html&highlight=Wloch&sessionId=60538944&skin=hudoc-en>:

<sup>2</sup> **Петрухин И.Л.** Судебные гарантии прав личности (в уголовном процессе) /Актуальные вопросы борьбы с преступностью в России и за рубежом, Вып. 8, – М, 1992, – էջ 69:

<sup>3</sup> Տե՛ս **Ավետիսյան Գ.Չ.** Կալանավորման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում, Երևան համալս. հրատ.: -Եր.: 2006, էջ 104:

<sup>4</sup> Տե՛ս **Соловьёв А. Б., Токарева М. Е., Халиулин А.Г., Якубович Н.А.** Законность в досудебных стадиях уголовного процесса России, – Москва-Кемерово: Кузбасвузиздат, 1997, - із 57, **Галузо В.Н.** Судебный контроль за законностью и обоснованностью содержания под стражей подозреваемых и обвиняемых на стадии предварительного расследования. Автореферат дисс. ... канд. юрид. наук. М., 1995, – էջ 23:

համար: Կալանավորման կիրառման հիմնավորվածության վերաբերյալ պահանջն իր արտացոլումն է գտել ՀՀ վճռաբեկ դատարանի 2007 թվականի օգոստոսի 30-ի որոշման մեջ. «135-րդ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ կալանավորման կիրառման հիմքերն ունեն կանխատեսական, մոտավոր բնույթ, քանի որ ենթադրում են ապագային վերաբերող իրադարձություններ: Ընդ որում՝ այդ կանխատեսող գործողություններն անհրաժեշտ է հիմնավորել քրեական գործով ձեռք բերված որոշակի նյութերով, որով էլ, վերջին հաշվով՝ որոշվում է կալանավորման կիրառման հիմնավորվածությունը»<sup>1</sup>: Մյուսից հետևում է, որ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությունը քննարկելիս ՀՀ քրեական դատավարությունում դատարանը պետք է հետազոտի ոչ միայն խափանման միջոցի ընտրության ֆորմալ (ընթացակարգային) պայմանները, այլև փաստացի հիմքերը: Այդ առումով ՀՀ քր. դատ. օր.-ի 285-րդ հոդվածում հարկավոր է ավելացնել մաս, որում սահմանվի. «Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանավորման ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունը քննելիս դատարանը ստուգում է այն ընտրելու կամ ժամկետը երկարացնելու կարգի և հիմքերի օրինականությունը և հիմնավորվածությունը»:

Գատարանի կողմից կալանքի կիրառման հիմնավորվածության ստուգման վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում պահանջի նախատեսումը, բխում է ՀՀ Սահմանադրության 16 հոդվածի այն պահանջից, որ «...Մարդուն կարելի է ազատությունից զրկել կամ նրա ազատությունը սահմանափակել միայն (...) հետևյալ դեպքերում՝ 3) հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում, (...)»:

Այս կապակցությամբ ուշագրավ է Գագիկ Միքայելյանի գործով վճռաբեկ դատարանի որոշման 32-րդ կետում տեղ գտած հետյալ հետևությունը. «... անձին կալանավորելու միջնորդությունը կարող է բավարարվել այն դեպքում, երբ միջնորդությունը ներկայացրած քրեական հետապնդման մարմնին հաջողվի դատարանի համար համոզիչ հիմնավորել.

ա) անձին մեղսագրվող հանցագործությանը նրա առնչությունը

---

<sup>1</sup> Տե՛ս Վճռաբեկ դատարանի 2007թ. օգոստոսի 30-ի Արամ Սեյրանի ճուղուրյանի գործով՝ թիվ ՎԲ 132/07 որոշումը:

(տվյալ հանցագործության կատարման մեջ հիմնավոր կասկածը) և ք) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված հիմքերից որևէ մեկի կամ մի քանիսի առկայությունը»<sup>1</sup>:

Իհարկե, կալանքի կիրառման օրինականության հիմքերի տակ չպետք է հասկանալ այն, որ դատարանը համապատասխան որոշում կայացնելիս կարող է օգտագործել այնպիսի ձևակերպումներ, որոնք կասկածի տակ կղնեն մեղադրյալի անմեղության կանխավարկածը: Այս կասկակցությամբ համամիտ ենք հայրենական դատավարական գրականության մեջ տեղ գտած այն կարծիքների հետ, որ կալանքի թույլտվության որոշման մեջ անձի մեղավորության կանխորոշումը հակասում է անմեղության կանխավարկածին<sup>2</sup>, կամ մինչդասական վարույթում դատական վերահսկողություն իրկանացնելիս, ինչպես նաև այլ բնույթի, օրինակ՝ գործն ըստ ընդդատության կամ լրացուցիչ քննության ուղարկելու, բացարկի և այլ հարցերի հետ կապված որոշում ընդունելիս չպետք է օգտագործել այնպիսի ձևակերպումներ, որոնք կասկածի տակ կղնեն մեղադրյալի անմեղության կանխավարկածը<sup>3</sup>:

Համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի 281-րդ հոդվածի 1-ին մասի՝ «դատարանի որոշմամբ են կատարվում այն օպերատիվ-հետախուզական գործողությունները, որոնք կապված են քաղաքացիների նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակման հետ»: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում տեղ գտած այս դրույթն ուղղակի բխում է ՀՀ Սահամադրության 23 հոդվածի 5-րդ մասից, որի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և յալ հաղորդումների գաղտնիության իրավունք, որը կարող է սահմանափակվել միայն օրենքով սահմանված դեպքե-

<sup>1</sup> Տե՛ս Գագիկ Միքայելյանի գործով՝ ՀՀ վճռաբեկ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 18-ի որոշումը ԵԱԳ-Վ/0085/06/09/:

<sup>2</sup> Տե՛ս **Գամբարյան Ա.** Անմեղության կանխավարկածը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում, «ԿԱԻՍԱ», Եր., 2005, էջ 60:

<sup>3</sup> Տե՛ս **Խաչատրյան Մ.** Արդարացի դատական քննության իրավունք: Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդված, Եր., 2004, էջ 123:

րում և կարգով, դատարանի որոշմամբ»:

Համաձայն ՀՀ քր. դատ. օր-ի 281-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Դատարանի որոշման հիման վրա իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների տեսակները սահմանվում են «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով»: Այսինքն՝ Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրության համաձայն՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացումը, որոնք սահմանափակում են քաղաքացիների իրավունքներն ու օրինական շահերը, կատարվում են միայն դատարանի թույլտվությամբ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Այս օրենքը պաշտպանում է քրեական դատավարության մասնակիցների իրավունքներն ու ազատություններն անհիմն սահմանափակումներից: Օպերատիվ հետախուզական մարմինների նկատմամբ այդպիսի վերահսկողությունն արդյունավետ մեխանիզմ է, որով կանխվում են նրանց կողմից կամայականության դրսևորումները: Քրեական դատավարությանը մասնակցող անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության համար նման երաշխիքների ստեղծումը այսօր ժողովրդավարական լուրջ նվաճում է Հայաստանի Հանրապետությունում:

ՀՀ քրեադատավարական օրենսդրությունը սահմանում է օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների քննարկման կազմը: Ըստ ՀՀ քր. դատ. օր-ի 284-րդ հոդվածի 1-ին մասի. «Անձանց նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակում նախատեսող օպերատիվ-հետախուզական միջոցառումները, բացառությամբ այն դեպքերի, երբ խոսակցության մասնակիցներից կամ հաղորդակցվողներից մեկը նախապես դրանք լսելու կամ վերահսկելու համաձայնություն է տվել, կարող են իրականացվել միայն դատարանի որոշմամբ»: ՀՀ քրեադատավարական օրենսդրությունից հետևում է, որ անձի նշված իրավունքների սահմանափակումները կարող են իրականացվել նաև առանց դատարանի որոշման:

Դատավարության մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովման տեսանկյունից ուշադրութ-

յան են արժանի այն բացառությունները, որոնք նախատեսված են ՀՀ քր. դատ. օր-ի 284-րդ հոդվածի 1-ին և 8-րդ մասերով: Անհրաժեշտ է ընգծել, որ դատավարական գրականության մեջ նշված բացառությունների ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը դատավարական գրականության մեջ արժանացել է արդարացի քննադատության<sup>1</sup>, իսկ հետագայում այն դարձավ ՀՀ Սահմանադրական դատարանի քննության առարկա՝ «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 284-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով»:

ՀՀ քր. դատ. օր-ի 284 հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ առանց դատարանի որոշման անձի նշված իրավունքները կարող են սահմանափակվել, եթե խոսակցության մասնակիցներից կամ հաղորդակցվողներից մեկը նախապես դրանք լսելու կամ վերահսկելու համաձայնություն է տալիս: Ակնհայտ է, որ օրենսդրական նշված կարգավորման հիմքում հիմնականում ընկած է այն մոտեցումը, որ անձը կամովին է հրաժարվում իր՝ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքից:

ՀՀ Սահմանադրական դատարանն իր հետևություններում նշված իրավունքին տալիս է ընդարձակ մեկնաբանություն: Այն է, որ ՀՀ օրենսդրությամբ անձի համաձայնությամբ նրա հեռախոսային և այլ հաղորդակցությունները լսելն իրականացվում է միայն պաշտպանվող անձի պարագայում, չի բացառվում, որ հիշյալ միջոցների արդյունքում ձեռք բերված տեղեկատվությունն օգտագործվելու է համաձայնություն տված անձի ընդդիմախոսների դեմ, որի ՀՀ Սահմանադրությամբ 23-րդ հոդվածով սահմանված իրավունքներն այս պարագայում կարող են խախտվել: Արդյունքում ՀՀ սահմանադրական դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 284-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչեց ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվա-

---

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Հատուկ մաս - Երևանի պետ. համալ. - Եր.: ԵՊՀ հրատ., 2010, էջ 263:

ծի 1-ին և 5-րդ մասերին հակասող և անվավեր<sup>1</sup>:

Իհարկե, ՀՀ սահմանադրական դատարանի նշված որոշման լույսի ներքո պետք է քննարկել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 284-րդ հոդվածի 8-րդ մասում նախատեսված բացառությունը: Նշված հոդվածում սահմանված է հենյալը. «այն դեպքում, երբ նշված հոդվածով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացման հասպաղումը կարող է հանգեցնել տեռորիստական ակտի կատարմանը, կամ հնարավոր են Հայաստանի Հանրապետության պետական, ռազմական կամ բնապահպանական անվտանգությանն սպառնացող իրադարձություններ կամ գործողություններ, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի ղեկավարի որոշման հիման վրա թույլատրվում է նման միջոցառումների իրականացումը՝ 48 ժամվա ընթացքում այդ մասին ծանուցելով դատարանին՝ նրան ներկայացնելով նշված հոդվածի երրորդ մասով նախատեսված փաստաթղթերը»: Ճիշտ է, նշված հոդվածում սահմանում է հետագա դատական վերահսկողություն, բայց ՀՀ սահմանադրական դատարանի նշված որոշումից հետևում է, որ հակասահմանադրական պետք է է ճանաչել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 284-րդ հոդվածի 8-րդ մասը<sup>2</sup>:

Քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները սահմանափակող օպերատիվ-հետախուզական գործողությունների իրականացման համար նախատեսված են օրենքում նշված հիմքերը: Այսպես՝ համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի 284 հոդվածի 3-րդ մասի՝ «Սույն հոդվածով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու թույլտվություն տալու համար հիմք է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի ղեկավարի պատճառաբանված որոշումը, որում պարունակվում է միջնորդություն՝ այդ միջոցառումների իրականացման

---

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 284 հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության վերաբերյալ՝ ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի նոյեմբերի 23-ի ՍԳ-Ո-926 որոշումը:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի նոյեմբերի 23-ի ՍԳ-Ո-926 որոշումը:



թույլտվություն ստանալու վերաբերյալ: Որոշման մեջ նշվում են օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացման հիմքերը, այն տվյալները, որոնք նախատեսվում է ստանալ դրա արդյունքում, միջոցառման իրականացման տեղը և ժամկետը, ինչպես նաև այն բոլոր տվյալները, որոնք անհրաժեշտ են դատարանին՝ որոշում կայացնելու համար: Որոշմանը կցվում են բոլոր այն նյութերը, որոնք հիմնավորում են օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացման անհրաժեշտությունը: Որոշումը և դրան կցվող նյութերը դատարան է ներկայացվում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի ղեկավարի կամ նրա տեղակալի կողմից»: Նշյալ հոդվածում բավականին հստակորեն շարադրված հիմքերը հնարավոր են դարձնում դատարանին դիմելու վերոնշյալ օպերատիվ-հետախուզական միջոցառումները միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում անցկացնելու միջնորդությամբ: Այսինքն՝ ստեղծվում են լուրջ խոչընդոտներ քրեական դատավարության մասնակիցների իրավունքների և օրինական շահերի խախտման հնարավորության դեմ: Դրանով իսկ իրականացվում է նախնական դատական վերահսկողություն, որը խոչընդոտում է քաղաքացիների իրավունքներն ու ազատություններն անհիմն կերպով խախտելու միջոցառումներ իրականացնելուն:

ՀՀ քր. դատ. օր.-ի 284-րդ հոդվածի 4-րդ մասում սահմանված է. «Միջնորդությունը քննարկում է դատավորը միանձնյա, դռնփակ դատական նիստում՝ միջնորդությունը ներկայացնող պաշտոնատար անձի կամ նրա ներկայացուցչի մասնակցությամբ: Միջնորդությունը պետք է քննարկվի և որոշում կայացվի այն ստացվելուց հետո՝ 12 ժամվա ընթացքում»: Ինչպես տեսնում ենք, ի տարբերություն կալանքը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդության քննարկման, իրավունքներն ու ազատությունները սահմանափակող օպերատիվ-հետախուզական գործողությունների իրականացման թույլտվություն տալու հարցը քննելիս դատարանը համապատասխան միջնորդությունը քննարկում է դատավարության այլ մասնակիցների բացակայությամբ: Դա պայմանավորված է հենց օպերատիվ-հետախուզական գործողությունների բնույթով, որը հաջողություն է խոստանում միայն դրանց իրականացման գաղտնիությունն

ապահովելու դեպքում: Սակայն այդ դեպքում ևս դատարանը հնարավորություն ունի կանխելու քաղաքացիների իրավունքների և ազատությունների անհիմն սահմանափակումը:

Քաղաքացիների իրավունքները սահմանափակող օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնելու թույլտվության հարցը որոշելիս դատարանը ստուգում է համապատասխան միջնորդության հիմնավորվածությունը: Համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի 284-րդ հոդվածի 5-րդ մասի՝ «Դատավորի պահանջով նրան են ներկայացվում նաև օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը հիմնավորող այլ նյութեր՝ բացառությամբ այն դեպքերի, երբ կա պետական կամ ծառայողական գաղտնիքի խախտման վտանգ կամ, երբ դրանով կարող են բացահայտվել օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հաստիքային գաղտնի աշխատակիցները և այդ մարմինների հետ գաղտնի հիմունքներով համագործակցող անձինք, համապատասխան տեղեկությունների ստացման աղբյուրները և դրանց ստացման եղանակները: Օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացնելու հիմքերի բավարար լինելն ստուգելու նպատակով դատավորը կարող է համապատասխան պաշտոնատար անձից պահանջել բացատրություններ և լրացուցիչ նյութեր»: Ինչպես տեսնում ենք, իրավունքներն ու ազատությունները սահմանափակող օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնելու թույլտվության հարցը որոշելիս դատարանն իրավունք ունի պահանջելու նյութերը: Այսինքն՝ դրանով իսկ երաշխավորվում է իրավունքների ու ազատությունների սահմանափակման հիմնավորվածությունը, ինչն անխուսափելի է վերոհիշյալ օպերատիվ-հետախուզական գործողությունների իրականացման ժամանակ:

Անհրաժեշտ է նշել, որ վերոնշյալ թույլտվությունը տրվում է որոշակի ժամկետով: Այսպես՝ ըստ ՀՀ քր. դատ. օր.-ի 284-րդ հոդվածի 7-րդ մասի՝ «Դատարանի որոշման գործողության ժամկետը հաշվարկվում է դրա կայացման օրվանից և չի կարող գերազանցել վեց ամիսը, եթե որոշմամբ այլ բան նախատեսված չէ: Օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացնելու ժամկետը կարող է

երկարացվել օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի ղեկավարի՝ մման միջնորդություն պարունակող հիմնավորված որոշման հիման վրա, սույն հոդվածով սահմանված կարգով»։ Օրենքի նմանօրինակ պահանջը լիովին հիմնավորված է, քանի որ անսահմանափակ ժամկետը կամայական գործողությունների հնարավորություն կարող է ընձեռել օպերատիվ-հետախուզական մարմիններին։ Ուստի հստակ ժամկետների սահմանմամբ օրենսդիրը ձգտել է թույլ չտալ քաղաքացիների իրավունքների և ազատությունների անհիմն ժամկետների անորոշությամբ պայմանավորված սահմանափակումներ։

Նախնական դատական վերահսկողությունը դրսևորվում է մաս քաղաքացիների իրավունքներն ու օրինական շահերը սահմանափակող քննչական գործողություններ իրականացնելիս։ Քննչական այդպիսի գործողություններից են բնակարանի խուզարկությունը, ինչպես մաս նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը սահմանափակող գործողությունները (տես ՀՀ քր. դատ. օր.-ի հոդված 279)։ ՀՀ քր. դատ. օր.-ի 283-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Դատարանի որոշմամբ են կատարվում այն օպերատիվ-հետախուզական գործողությունները, որոնք կապված են քաղաքացիների նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակման հետ»։ Ընդ որում՝ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Դատարանի որոշման հիման վրա իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների տեսակները սահմանվում են «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով»։ Նշյալ իրավունքները թույլ են տալիս դատարանին համակողմանիորեն հետազոտել նշյալ քննչական գործողություններն իրականացնելու վերաբերյալ ստացված միջնորդության հիմնավորվածությունը։ Այդպիսով իրականացվում է նախնական դատական վերահսկողություն կատարվող քննչական գործողությունների օրինականության ու հիմնավորվածության նկատմամբ։ Հաշվի առնելով, որ դա իրականացվում է նախքան քննչական գործողությունների կատարումը, այն կարելի է բնութագրել որպես քննիչներին նախագ-

գուշացնելու ձև՝ կամայականություններ չգործելու համար: Այսինքն՝ անկասկած է, որ դատական վերահսկողության նշյալ ձևը քաղաքացիների իրավունքների և ազատությունների անհիմն խախտումները կանխարգելող նախազգուշացում է:

Բնակարանի խուզարկության, ինչպես նաև նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության սահմանափակման հետ կապված քննչական գործողությունների իրականացումը թույլատրելու հարցը որոշելիս դատարանը չպետք է բավարարվի միայն ընթացակարգային հարցերով: Պետք է համաձայնվել Ի. Լ. Պետրուխինի այն կարծիքի հետ, որ դատարանին պետք է իրավունք տրվի հետազոտելու ապացույցները, որոնք հիմնավորում են վերոնշյալ քննչական գործողությունների իրականացման անհրաժեշտությունը<sup>1</sup>: Ուստի, կարծում ենք, ճիշտ կլինի լրացնել ՀՀ քր. դատ. օր.-ի 283-րդ հոդվածի 3-րդ մասը՝ այն շարադրելով հետևյալ խմբագրությամբ. «Դատավորն իրավունք ունի՝

միջնորդություն ներկայացնող անձից պահանջել միջնորդության հիմնավորվածությունն ստուգելու համար անհրաժեշտ փաստաթղթեր և իրեղեն ապացույցներ,

հետազոտել ապացույցները, որոնք հիմնավորում են համապատասխան քննչական գործողություններն իրականացնելու անհրաժեշտությունը, պահանջել ներկայացնել բացատրություններ»: Դրանով կընդլայնվեն դատարանի իրավունքները համապատասխան քննչական գործողությունների նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս: Բացի այդ, կմեծանա նախնական դատական վերահսկողության արդյունավետությունը, որի շնորհիվ քրեական դատավարության մասնակիցների իրավունքների ու օրինական շահերի խախտման հավանականությունը էականորեն կնվազի:

---

<sup>1</sup> **Петрухин И.Л.** Личные тайны (человек и власть), – М.: ИГиПР РАН, 1998, էջ 6:

### **§ 3. Հետագա դատական վերահսկողությունը որպես մինչդատական վարույթի նկատմամբ անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովման երաշխիք**

Դատական վերահսկողության երրորդ ձևը հետագա դատական վերահսկողությունն է: Դրա էությունն այն է, որ դատարանը քննարկում է այն բողոքները, որոնք ստացվել են արդեն խախտված իրավունքների ու օրինական շահերի կապակցությամբ: Հենց այդ պատճառով էլ դատական վերահսկողության նշյալ ձևը կոչվում է հետագա: Այն, ի տարբերություն դիտարկված նախորդ ձևի, ժամանակի առումով հետևում է քաղաքացիների իրավունքների ու ազատությունների արդեն իրականացված չհիմնավորված սահմանափակումներին: Հետագա դատական վերահսկողությունը նախատեսված է ՀՀ քր. դատ. օր.-ի 290-րդ հոդվածի 1-ին մասով. «Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքներն ու օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից»: Դրանից բացի, նույն հոդվածի 2-րդ մասում սահմանված է. «Սույն հոդվածի առաջին մասում նշված անձինք իրավունք ունեն նաև դատարան բողոքարկել հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներն ընդունելուց, քրեական գործ հարուցելուց հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի հրաժարվելը, ինչպես նաև քրեական գործը կասեցնելու, կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում»:

Ինչպես տեսնում ենք, օրենքով սահմանված է քաղաքացիների իրավունքներն ու օրինական շահերը սահմանափակող գործողությունների ու որոշումների բողոքարկման հաջորդականություն: Սկզբում անհրաժեշտ է նշյալ որոշումներն ու գործողությունները բո-

դոքարկել դատախազին և միայն դրանից հետո, երբ նրա որոշումը որևէ պատճառով չբավարարի, բողոքարկել դատարանին: Անհրաժեշտ է նշել, որ օրենսդրական նման կարգավորումը չի բխում ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածների սահմանադրաիրավական բովանդակությունից:

ՀՀ քր. դատ. օր-ի 290-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանությանը հարցը քաղաքացիներ Ա. Չեյնայանի, Ա. Սարգսյանի և Կ. Ռուբինյանի, Մ. Դանիելյանի դիմումների հիման վրա 2009 թվականի դեկտեմբերի 9-ին քննվեց ՀՀ սահմանադրական դատարանի կողմից: Դիմողները գտնում էին, որ ՀՀ քր. դատ. օր-ի 290 հոդվածի 1-ին և 5-րդ մասերը հակասում են ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ, Եվրոպական կոնվենցիայի 6-րդ, 13-րդ հոդվածներին:

Դիմողների կարծիքով՝ հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների դրսևորած անգործության դեմ դատական պաշտպանության իրավունքն իրացնելու համար միջանկյալ օղակ նախատեսելը չի բավարարում իրավունքների արդյունավետ պաշտպանության իրավունքի չափանիշը, ինչը ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածներով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի բաղադրիչն է:

Այս կապակցությամբ ուշագրավ են ՀՀ սահմանադրական դատարանի ուսումնասիրությունները կապված մինչդատական վարույթում հետաքննություն և նախաքննություն, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների, պաշտոնատար անձանց, դատախազի որոշումների և գործողությունների դատական բողոքարկման ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակության, օրենսդրական կարգավորման ու նշանակության հետ: Սահմանադրական դատարանը նշված հարցերի քննարկումն իրականացնելիս արդարացիորեն հաշվի է առել մինչդատական վարույթում դատական վերահսկողության և դատախազական հսկողության գործառույթների փոխհարաբերակցությունը:

*Արդարացի է սահմանադրական դատարանի այն մեկնաբանությունը, որ ՀՀ քրեական դատարանության օրենսգրքի վիճարկվող նորմի դատական պրակտիկայի կողմից տրված մեկնաբան-*

նության շրջանակներում այդպիսի պարտադիր պայմանի առկայությունը, երբ քրեական վարույթ իրականացնող մարմնի, պաշտոնատար անչի անգործությանը խախտվել են քրեական դատավարության մասնակիցների կամ շահագրգիռ այլ անչանց իրավունքներն ու օրինական շահերը, և նա չի կարող առանց նախապայմանների իրացնել դատական պաշտպանության իր իրավունքը, չի բխում ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակությունից:

ՀՀ սահմանադրական դատարանը ելնելով գործի քննության արդյունքներից որոշեց. 1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի «... և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից» դրույթը, դատական պրակտիկայում դրան փոխված՝ **նաև «անգործությանը» վերագրվող բովանդակության մասով**, որով գործնականում նույն հոդվածի 2-րդ մասի վրա փարածելով 1-ին մասում նախատեսված պայմանն ու նման մեկնաբանությանը դիմողների նկատմամբ կիրառելով հոդվածի 1-ին մասը՝ սահմանափակվել են մարդու՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքները, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր:

2. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը»<sup>1</sup>:

Կարծում ենք, այս որոշումը ճիշտ է, քրեադատավարական օրենսդրությունում բողոքները քննարկելիս այսպիսի կախվածություն չպետք է սահմանել: Քննիչի, հետաքննության մարմնի և դատախազի որոշումը դատարանին բողոքարկել կարելի է նույնիսկ այն դեպքում, եթե նախկինում այդ որոշումները չեն բողոքարկվել դատախազին: Այսինքն՝ ՀՀ քրեադատավարական օրենսդրությունում պետք է սահմանել բողոքարկման այլընտրանքային կարգ, երբ անձը,

---

<sup>1</sup> Տե՛ս Քաղաքացիներ Ա. Չեյնալյանի, Ա. Սարգսյանի և Կ. Ռուբինյանի, Մ. Դանիելյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին և 5-րդ մասերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության վերաբերյալ՝ ՀՀ սահմանադրական դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 7-ի ՍԴՌ-844 որոշումը:

որի իրավունքներն ու ազատությունները խախտվել են, ինքն է ընտրում իր համար բողոքարկման առավել օպտիմալ ձևը: Այդպիսի մոտեցումը բխում է սահամանադրական դատարանի այն մեկնաբանությունից, որ «սահմանադրական դատարանը ոչ թե ժխտում է հանրային իշխանության մարմինների, պաշտոնատար անչանց որոշումների ու գործողությունների օրինականությունը վիճարկելու արտահայտարանական (տվյալ դեպքում՝ դատախազին բողոքարկելու) կարգը՝ որպես ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի իրացման միջոց, այլ կարևորում է վերջինիս և վիճարկման դատական միջոցի՝ իրավական բովանդակության, դրանց կիրառման հիմքերի (դեպքերի), օրենքով այնպիսի հարակետումը, որը սույն գործի առարկայի շրջանակներում լինի միակերպ ընկալելի ինչպես դիմող, այնպես էլ իրավակիրառող սուբյեկտների համար, ընդգրկելով նաև սույն որոշմամբ կարևորված այն առանձնահատկությունները, որոնք հարույկ են դատախազական հսկողությանն ու դատական վերահսկողությանը»<sup>1</sup>:

Կարծում ենք, որ այլընտրանքային բողոքարկման հնարավորության նախատեսումը թույլ կտար այն անձանց, որոնց իրավունքները խախտվել են, անձամբ որոշելու բողոքարկման եղանակը, որը նրանք կհամարեին ամենաարդյունավետը կոնկրետ դեպքում, կոնկրետ պայմաններում: Չէ՞ որ միանգամայն ակնհայտ է, որ իրենց բնույթով դատական վերահսկողությունն ու դատախազական հսկողությունը տարբերվում են: Նրանք տարբեր հնարավորություններ և իրականացման տարբեր եղանակներ ունեն: Այդ պատճառով նրանց արդյունավետությունն էլ տարբեր պայմաններում տարբեր կլինի: Ուստի, դրանց միջև ընտրության հնարավորություն տալով նրանց, ում իրավունքները խախտվել են, օրենքը այդ անձանց հնարավորություն է ընձեռում անձամբ, կոնկրետ իրավիճակը վերլուծելով, որոշել, թե որն ավելի արդյունավետ կլինի:

Իրավունքների պաշտպանության միջոցների արդյունավետության ապահովման անհրաժեշտության մասին (ինչպես օրենքով, այնպես էլ գործնականում) նշված է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներում (օրինակ՝ Լատրիդիս ընդդեմ

---

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 7-ի ՍԳ-Ո-844 որոշումը:



Հունաստանի, 25 մարտի 1999 թվական, կետ 66<sup>1</sup>):

Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրությունում բավականին մանրակրկիտ կարգավորված է քրեական դատավարության մասնակիցների բողոքների քննարկման կարգը: Այսպես՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 290-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն. «Բողոքը դատավորի կողմից միանձնյա քննվում է այն ստանալու պահից տասն օրվա ընթացքում՝ այդ մասին տեղյակ պահելով դիմողին և վարույթն իրականացնող մարմնին: Դիմողի կամ վարույթն իրականացնող մարմնի չներկայանալը չի խոչընդոտում բողոքը քննելուն, սակայն դատավորը կարող է պարտադիր համարել նշված անձանց ներկայությունը: Վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է դատարան ներկայացնել բողոքի վերաբերյալ նյութեր: Վարույթն իրականացնող մարմինը և դիմողը բացատրություններ տալու իրավունք ունեն»: Ինչպես տեսնում ենք, դատավորը ստացված բողոքը քննարկելու համար պարտավոր է բավականին հանգամանորեն հետազոտել կոնկրետ անձի իրավունքների ու օրինական շահերի սահմանափակման հանգամանքները, որը կարծում է, որ իր իրավունքները խախտվել են: Նշված կարգով ապահովվում է տվյալ բողոքի քննարկման բազմակողմանիությունը, լրիվությունը և օբյեկտիվությունը:

Համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի 290 հոդվածի 5-րդ մասի՝ «Բողոքը ճանաչելով հիմնավորված՝ դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին: Գտնելով, որ բողոքարկված գործողությունները կատարված են օրենքին համապատասխան, և անձի իրավունքները կամ ազատությունները խախտված չեն, դատարանը որոշում է կայացնում բողոքը մերժելու մասին: Դատավորի որոշման պատճենն ուղարկվում է դիմողին և վարույթն իրականացնող մարմնին»: Այսինքն՝ եթե դատարանը որոշում է, որ թույլ են տրվել անձի իրավունքների և ազատությունների խախտումներ, նա պարտավորեցնում է գործի վարույթն իրականացրած մարմնին վերացնել այդ խախտումները: Դրանով իսկ դատական վերահսկողության միջոցով պաշտպանում է քրեական դա-

---

<sup>1</sup> <http://cmiskp.echr.coe.int/tkp197/view.asp?item=2&portal=hbkm&action=html&highlight=greece&sessionid=60538944&skin=hudoc-en>:

տավարության մասնակիցների իրավունքներն ու օրինական շահերը նախնական քննության փուլում:

Նախնական քննության նկատմամբ արդյունավետ դատական վերահսկողության իրականացումից է մեծապես կախված դատավճռի արդարացիությունը, որը հետագայում կայացվելու է դատական քննության ընթացքում քրեական գործը քննելիս: Չէ՞ որ քրեական դատավարությանը մասնակից անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը դատական քննության արդարացիության անառարկելի պայմանն է: Գործունեության այդ տեսակի նշանակությունն այնքան մեծ է, որ դրա իրականացման ուրակից է մեծապես կախված քրեական գործերն ըստ էության քննելու արդյունավետությունը: Այդ գործունեությունն արդյունավետ և ուրակյալ իրականացնելու համար որոշ հեղինակներ<sup>1</sup> առաջարկում են ներդնել քննիչ դատավորի ինստիտուտը: Դա հնարավորություն կտա դատական վերահսկողությունը դարձնելու ավելի ինքնուրույն և անկախ, քանզի դատավորը, որին հանձնարարված է դատական վերահսկողությունը կիրականացնի միայն այդ գործառույթը: Ներկայումս դատավորները դատական վերահսկողությունը դիտում են որպես շեղում գործունեության հիմնական ձևից՝ քրեական և քաղաքացիական գործերի ըստ էության քննությունից: Այդ պատճառով բողոքները քննարկվում են ոչ պատշաճ մանրամասնությամբ, որը հաճախ վարկաբեկում է հենց դատական վերահսկողության գաղափարը: Բացի այդ, նախնական քննության փուլում քրեական գործով դատավորի կայացրած որոշումը կարող է բացասաբար ազդել դատական քննության ավարտին նույն գործով վերջնական որոշում կայացնելու վրա<sup>2</sup>: Հայրենական դատավարական գրականության մեջ այս հիմնախնդիրը բարձրացվել է և առաջարկվել է դրա լուծման հետևյալ տարբերակը. «Առաջին ատյանի դատարանները բաժանել երկու օղակների: Ստորին՝ տեղական օղակը, ասենք, կքննի ոչ մեծ ծանրության հանցագործությունների վերաբերյալ գործերը և կիրա-

---

<sup>1</sup> Демидов И.Ф. Роль судебной власти в обеспечении законности уголовного преследования // Законность в Российской Федерации, - М.: Спарк, 1998, էջ 166:

<sup>2</sup> Ефимычев С.П. Разделение властей и проблемы борьбы с преступностью // Проблемы совершенствования прокурорского надзора (к 275-летию Российской прокуратуры): Материалы научно-практической конференции, - М., 1997, - էջ 176:

կանացնի մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության լիազարությունները»<sup>1</sup>: Իհարկե, նշված առաջարկությունը մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ինստիտուտի արդյունավետ գործունեության ամենաօպտիմալ ձևն է, բայց ֆինանսական, կազմակերպական և այլ խնդիրներից ելնելով՝ դրա իրականացումն այսօր մեր պետության համար դժվար է: Կարծում ենք, որ նշված հիմնախնդրի լուծումը կարելի է իրականացնել քրեական դատավարության մեջ *դատական վերահսկողություն իրականացնող դատավորի* ինստիտուտի ներմուծմամբ:

Հարկ է նշել, որ չի կարելի նույնացնել մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնող դատավորի ինստիտուտը քննիչ դատավորի հետ, որի գործունեությունը նախատեսված է Ֆրանսիայի քրեադատավարական օրենսդրությամբ<sup>2</sup>: Քննիչ դատավորը իրականացնում է նախաքննություն, հավաքում է ապացույցներ: Նա չի իրականացնում դատական վերահսկողական գործառույթներ: Ուստի ՀՀ քրեական դատավարությունում քննիչ դատավորի ինստիտուտի մման ինստիտուտ հիմնելու անհրաժեշտություն չկա: Սակայն հարկավոր է ավելի ուշադիր քննարկել մինչդատական վարույթի նկատմամբ վերահսկողություն իրականացնող դատավորի ինստիտուտ հիմնելու գաղափարը: Նշյալ ինստիտուտը թույլ կտա նախնական քննության ընթացքում ավելի ուշադիր քննել այն դատավարական գործողությունները կատարելու հիմքերն ու պայմանները, որոնք էականորեն սահմանափակում են անձանց իրավունքներն ու ազատությունները: Այդ դեպքում կարելի է հույս ունենալ, որ կձևավորվի միասնական պրակտիկա ինչպես քրեական դատավարության մասնակիցների իրավունքներն ու օրինական շահերը սահմանափակող դատավարական միջոցների իրացման, այնպես էլ դրանց կիրառման նկատմամբ դատական վերահսկողության իրականացման հարցերում: Գատական վերահսկողության գործառույթի տարանջատումը գործն ըստ էության

---

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Հատուկ մաս (2-րդ հրատարակություն, լրացումներով և փոփոխություններով) - Երևանի պետ. համալս. Եր.: Երևանի համալս. հրատ., 2005, էջ 231:

<sup>2</sup> **Быков Е.В.** Судебный контроль за предварительным расследованием преступлений во Франции. Автореферат дисс. ... канд. юрид. наук. М.: 1996, – էջ 12:

քննող դատավորին թույլ կտա լինել անկախ ու անկողմնակալ, որովհետև նա նախկինում նախնական քննության ընթացքում միևնույն քրեական գործով դատավարական գործողությունների կատարման նկատմամբ վերահսկողություն չի իրականացրել<sup>1</sup>: Այս կապակցությամբ քննադատության է արժանի քրեական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի 2-րդ մասում տեղ գտած հետևյալ դրույթի վերացումը, որ «Մինչդատական վարույթում առաջին ատյանի կամ վերաքննիչ դատարանում գործի քննությանը մասնակցած դատավորը չի կարող մասնակցել տվյալ գործի հետագա քննությանը»:

Այսինքն՝ վերոնշյալ դրույթից հետևում էր, որ նախնական քննության ընթացքում առանձին քննչական գործողությունների կատարման, ինչպես նաև դատավարական հարկադրանքի առանձին միջոցների կիրառման նկատմամբ դատական վերահսկողություն իրականացրած դատավորը իրավունք չունի հետագայում ըստ էության քննել նույն քրեական գործը: Այդպիսի պահանջը քրեական դատավարության մասնակիցների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության իրական երաշխիք էր: Դրա ամրագրումը քրեադատավարական օրենսգրքում քրեական գործերը քննելիս և որոշում կայացնելիս դատարանի անաչառությունն ապահովելու լուրջ քայլ էր:

Նշված փոփոխության համար հիմք հանդիսացավ Եվրոպական դատարանի դիրքորոշումը: Եվրոպական դատարանը Hauschildt-ի գործով (1989թ. մայիսի 24) կայացված վճռում գտավ, որ ներկայացված վիճակում օբյեկտիվ անկողմնակալության չափանիշը խախտված է, քանի որ դատավորի անկողմնակալության վերաբերյալ դիմողի մտահոգությունը կարելի է օբյեկտիվորեն արդարացված համարել:

Քննարկվող հարցին Եվրոպական դատարանի մոտեցումը հստակեցվել է Ilijkov-ի գործով վճռում (2001թ. հուլիսի 26): Նշված գործով կողմերի դիրքորոշումը հետևյալն է<sup>2</sup>:

Գործը վերաբերում է Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածին (անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք): Դիմողը պնդում էր, որ իրեն կալանավորելու որոշում կայաց-

<sup>1</sup> **Кашепов В.П.** Институт судебной защиты прав и свобод граждан и средства её реализации // Государство и право, – 1998, - № 2, – էջ 71:

<sup>2</sup> Տե՛ս Hauschildt-ի գործով վճռի 52-րդ կետը:

նելիս չի հիմնավորվել իր առնչությունը մեղսագրվող հանցագործությանը: Իսկ պատասխանող կառավարությունը փաստարկում էր, որ եթե դիմողի կալանավորման հարցը լուծելիս քննարկման առարկա դառնար հանցագործությանը նրա առնչության հանգամանքը, ապա տեղի կունենա Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում: Հարցի էությունն այն է, որ բուլղարական օրենսդրության համաձայն՝ գործն ըստ էության պետք է քններ տվյալ գործով մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացրած դատավորը, և նրա կողմից նախնական կալանքի միջնորդությունը լուծելիս հանցագործությանը դիմողի առնչության հարցը քննարկելու պարագայում դատարանի մոտ կարող է ձևավորվել կանխակալ վերաբերմունք, ինչը կհանգեցնե՛ր դատարանի անկողմնակալության պահանջի խախտման:

Դատարանը չհամաձայնելով կառավարության դիրքորոշմանը, նշում է, որ «միայն այն փաստը, որ տվյալ գործն ըստ էության քննող դատավորը նույն գործով կալանավորման որոշումներ է կայացրել, ինքնին չի հիմնավորում այն մտահոգությունը, որ այդ դատավորն անկողմնակալ չի լինի: Որպես կանոն կալանավորման հարցը լուծելիս դատարանն այլ հարցերի է պատասխանում, քան գործն ըստ էության լուծելիս: Կալանավորման որոշում կայացնելու դեպքում և մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության այլ դեպքերում դատարանը հավաստիանում է, թե արդյոք դատախազությունն ունի առերևույթ (*prima facie*) հիմք անձին հանցագործության մեջ կասկածելու համար: Իսկ երբ դատական քննության արդյունքում գործը լուծվում է ըստ էության, դատարանը պատասխանում է այն հարցին, թե արդյոք ձեռք բերված և հետագոտված ապացույցները բավարար են անձին մեղավոր ճանաչելու համար: Կասկածը և մեղավորության մասին հետևությունը չեն կարող նույն հարթության վրա դրվել»<sup>1</sup>:

Արդյունքում դատարանը գտել է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի խախտում: Դրանով Եվրոպական դատարանը, թվում է, արդարացնում է նույն դատավորի կողմից մինչդատական վարույթի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու և այնուհետև գործն ըստ էության լուծելու պրակտիկան:

Եվրոպական դատարանի նշված վճռի վերաբերյալ հայրենա-

<sup>1</sup> Տե՛ս ILIJKOV v. BULGARIA գործով վճռի 52-րդ կետը:

կան դատավարագետների վերլուծությունն ուշագրավ է: Այսպես՝ նրանց կարծիքով Գատարանի սահմանած շրջանակներն այնքան նեղ են, որ դժվար է մի կողմից խուսափել դատավորի անկողմնակալության պահանջի խախտումից, իսկ մյուս կողմից՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածով նախատեսված իրավունքի խախտումից: Տեսական հարթության վրա դատարանը հեշտությամբ տարանջատում է կասկածը անձի մեղավորության մասին վերջնական հետևությունից: Սակայն եթե մեղադրանքի կողմը դատարանի պահանջով կամ սեփական նախաձեռնությամբ մի քանի կարևոր ապացույց ներկայացնի դատարան՝ հանցագործությանը մեղադրյալի առնչությունը հիմնավորելու համար, ապա դա ինքնին կարող է վտանգել դատավորի անկողմնակալության չափանիշը: Մյուս կողմից, եթե հանցագործության մեջ անձին կասկածելու բավարար հիմքեր դատարանում չներկայացնեն, ապա դա ինքնին կարող է վտանգել անձի ազատության իրավունքի կոնվենցիոնալ երաշխիքները: Միաժամանակ այս երկու վտանգներից խուսափելու հնարավորությունը խիստ սահմանափակ է<sup>1</sup>:

Իհարկե, կարծում ենք, որ այդ բարդ իրավիճակից դուրս գալու համար անհրաժեշտ է վերականգնել ՀՀ քր. դատ. օր-ի 90-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված արգելքը: Գատավորների անկողմնակալության տեսանկյունից ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքում նշված արգելքի վերականգնումն արդարացված է:

Կարծում ենք, որ այս հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է կատարել արմատական քայլ, որը կլինի մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնող դատավորի ինստիտուտի նախատեսումը: Այդ դեպքում վերոնշյալ դրույթը պարզապես հնարավոր չի լինի խախտել, քանի որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացրած դատավորը քննելու է միայն մասնավոր մեղադրանքի վերաբերյալ գործեր, որոնցով, ըստ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախաքննություն չի իրականացվելու: Դրանով իսկ կերաշխավորվի դատարանի անկողմնակալ վերաբերմունքը դատա-

---

<sup>1</sup> Տե՛ս **Ղազինյան Գ., Մելիքյան Ռ.** Օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անկողմնակալ դատարան. Ստրասբուրգի դատարանի նախադեպային պրակտիկան և Հայաստանի Հանրապետության իրավական համակարգը, //Պետություն և իրավունք, թիվ 1-2 (39-40), Երևան, 2008թ., էջ 14-15:

կան քննության փուլում, որով կապահովվի քրեական դատավարությանը մասնակցող անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը:

Ինչպես տեսնում ենք, վերոնշյալ փաստարկները մատնանշում են այն բանի անհրաժեշտությունը, որ քրեական դատավարությունում լինի դատավոր, որը կիրականացնի դատական վերահսկողություն դատավարական գործողությունների նկատմամբ, որոնք կատարում են դատախազը, քննիչը, քննչական բաժնի պետը, հետաքննության մարմինը մինչդատական վարությամբ: Քրեական դատավարությունում այդ ինստիտուտի առկայությունը լրացուցիչ երաշխիք կդառնա քաղաքացիների իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար: Ընդ որում՝ կատեղծվի երաշխիք պաշտոնատար անձանց կամայականությունների դեմ, որոնք մինչդատական վարությամբ օժտված են իշխանական լիազորություններով:

Վերոշարադրյալը թույլ է տալիս եզրակացնելու, որ դատական վերահսկողության հիմնական խնդիրներից մեկը քրեական դատավարության մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն է մինչդատական վարությամբ: Դրա կազմակերպումը և իրականացումը նշված իրավունքների և օրինական շահերի դատավարական երաշխիքն են, քանի որ դրա շնորհիվ հնարավոր է դառնում յուրաքանչյուր առանձին քրեական գործ քննելիս խոչընդոտել պաշտոնատար անձանց կամայականություններին, որոնք օժտված են իշխանական լիազորություններով նախնական քննության փուլում: Սակայն կարծում ենք, անհրաժեշտ է կատարել ևս մի քանի կարևոր քայլեր նշված մեխանիզմի կատարելագործման ուղղությամբ, ինչը թույլ կտա մրցակցության տարրեր մտցնել նախնական քննության փուլում:

#### **§ 4. Դատախազական հսկողությունը մինչդատական վարությամբ անձի իրավունքների և օրինական շահերի ապահովման նկատմամբ**

Հայաստանի Հանրապետությունում, որը ժամանակին նախկին ԽՍՀՄ-ի կազում էր, դատախազական հսկողությունը բավականին հին պատմություն ունի: Դատախազական հսկողության հիմնախնդիրներին նվիրվել են բազմաթիվ գիտական հետազոտու-

թյուններ<sup>1</sup>: Քանի որ նախկինում առկա շատ երևույթներ ներկայումս քննադատվում են, դատախազական հսկողությունը ևս գերծ չի մնացել դրանից: Սակայն այդուհանդերձ, հարկ է նշել, որ հսկողության նշյալ տեսակը բավականին արդյունավետ էր և շարունակում է մնալ այդպիսին նաև այժմ: Դրա արդյունավետությունը պայմանավորված է առաջին հերթին այն բանով, որ հսկողության շնորհիվ հնարավոր է լինում բավական արագ բացահայտել քրեական գործի քննությունն իրականացնող մարմինների գործունեության մեջ տեղ գտած օրենքի խախտման դեպքերը և ժամանակին միջոցներ ձեռնարկելու այդ խախտումները վերացնելու համար: Դրան զգալիորեն նպաստում է հսկողության նշված տեսակի կազմակերպումը: Այն հիմնված է տարբեր օղակների դատախազների գործունեության վրա, որի հիմքում ընկած է միասնականության և կենտրոնացվածության սկզբունքը: Տվյալ սկզբունքն իրականացվում է համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի 52-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների, որում

---

<sup>1</sup> Տե՛ս **Ясинский Г.М.** Прокурорский надзор за предварительным расследованием уголовных дел. Автореф. дис. ... канд. юрид. наук - Харьков, 1965. 15 էջ; **Жогин Н.В.** Теоретические основы прокурорского надзора за предварительным расследованием. Автореф. дис. ... д-ра юрид. наук - М., 1966. 36 էջ; **Жогин Н.В.** Прокурорский надзор за предварительным расследованием уголовных дел / - М.: Юрид. лит., 1968. 264 էջ; **Рахунов Р.Д.** Эффективность прокурорского надзора за предварительным расследованием уголовных дел // Проблемы прокурорского надзора. Научная конференция, 20-21 апреля 1972 г.: Тезисы сообщений. М., 1972, էջ 187-189; **Гречуха В.** Формы прокурорского надзора за исполнение законов в деятельности органов предварительного расследования // Государство, право и демократия в условиях развитого социалистического общества. Тезисы докладов 2-ой научно-теоретической конференции аспирантов (2-4 февраля 1973 г.). М.: Изд-во ВЮЗИ, Изд-во МГУ, 1973, էջ 225-227; **Рахунов Р.Д.** Прокурорский надзор за предварительным расследованием уголовных дел // Совершенствование прокурорского надзора в СССР. Сборник статей. М., 1973, էջ 244-250, **Ղազինյան Գ.** Քրեական դատավարության պատմական և արդի հիմնահարցերը Հայաստանում: Եր.: Երևանի համալս. հրատ., 2001թ. 432 էջ, Հայաստանի Հանրապետության դատախազությունը.- Երևանի պետ. համալս. Եր.: Երևանի համալս. հրատ., 2004 –352 էջ, **Գիլբանդյան Ս.** Դատախազական հսկողությունը կասկածյալի և մեղադրյալի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նկատմամբ, /Իրավագիտության հարցեր, 2002, թիվ 4, էջ 38-42, **Գիլբանդյան Ս.** Դատախազական հսկողությունը անձին որպես մեղադրյալ ներգրավելու օրինականության նկատմամբ, Իրավագիտության ֆակուլտետի 75-ամյակին նվիրված գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2004, էջ 191-197 և ուրիշներ:



սահմանված է, որ ստորադաս դատախազը պարտավոր է կատարել վերադաս դատախազի բոլոր գրավոր ցուցումները, բացառությամբ սույն հոդվածի հիմնվածի մասով նախատեսված դեպքերի, ինչպես նաև այն դեպքի, երբ դատախազը համարում է, որ ցուցումն անօրինական է: Վերադաս դատախազի տված ցուցումը անօրինական համարելու դեպքում դատախազը պարտավոր է, իսկ ցուցումը անհիմն համարելու դեպքում կարող է այն բողոքարկել ցուցում տված դատախազի վերադասին: Այս սկզբունքը նախադրյալ է օրենքի խախտումները բացահայտելու և դրանց ակտիվորեն արձագանքելու գործում դատախազության բոլոր աշխատակիցների ջանքերը միավորելու համար:

Քրեադատավարական գործող օրենսդրության մեջ տեղ գտած վերջին փոփոխությունների (11.04.07) շնորհիվ կենտրոնացվածության սկզբունքը ենթարկվեց որոշակի փոփոխության, որի արդյունքում ընդարձակվեց հսկողություն իրականացող դատախազի դատավարական ինքնուրույնությունը: ՀՀ քր. դատ. օր-ի 52-րդ հոդվածի 5-րդ մասում սահմանվեց հետևյալը. «Հետաքննության կամ նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելիս դատախազը պարտավոր է կատարել վերադաս դատախազի գրավոր ցուցումը, բացառությամբ այն դեպքերի, երբ համարում է, որ նման ցուցումն անհիմն կամ անօրինական է: Նման դեպքերում հսկողություն իրականացնող դատախազը պարտավոր է հրաժարվել այն կատարելուց՝ անհապաղ գրավոր իրազեկելով ցուցում տված վերադաս դատախազին, որն իրավունք ունի անձամբ ստանձնելու հսկողությունը կամ դրա իրականացումը հանձնարարելու մեկ այլ դատախազի»: Հսկողություն իրականացնող դատախազի դատավարական ինքնուրույնության հարցերն իրենց կարգավորումն են ստացել նաև դատախազության մասին ՀՀ օրենսդրությունում: Այսպես՝ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելիս դատախազն ինքնուրույն է և գործում է առանց վերադաս դատախազի թույլտվության և համաձայնության: Վերադաս դատախազն իրավասու չէ վերացնելու կամ փոփոխելու հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու համար»:

նացնող դատախազի ակտերը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի»։ Ինչպես տեսնում ենք օրենքում տեղ գտած կարգավորումը հսկողություն իրականացնող դատախազի ինքնուրույնության ապահովման նոր առաջընթաց քայլ է։

Հետաքննության ու նախաքննության մարմինների դատավարական գործունեության նկատմամբ դատախազական հսկողության մշտական իրականացումն այսօր էլ նրա բնորոշ գիծն է։ Այսպես՝ «դատախազը պարտավոր է ապահովել մշտական հսկողություն հետաքննության ու նախաքննության բոլոր մարմինների դատավարական գործունեության նկատմամբ՝ անկախ նրանց գերատեսչական ենթակայությունից։ Դրա համար քրեադատավարական օրենքը դատախազին օժտել է վարչահրամայական լիազորություններով, այդ թվում մի շարք լիազորություններով, որոնք ունի միայն դատախազը»<sup>1</sup>։

Հետաքննության ու նախաքննության նկատմամբ մշտական ու անընդհատ դատախազական հսկողության իրականացմամբ այն այսօր էլ տարբերվում է դատական վերահսկողությունից, որն իրականացվում է միայն ստացված բողոքների ու դիմումների կապակցությամբ, ինչպես նաև, երբ նախնական քննության մարմինները օրենքով սահմանված համապատասխան քննչական և այլ գործողություններ իրականացնելու թույլտվություն ստանալու համար դիմում են դատարան<sup>2</sup>։ Դատախազական հսկողության առանձնահատկությունն այն է, որ այն ոչ միայն արձագանքում է ստացվող բողոքներին ու դիմումներին, այլև դատախազների մշտապես իրականացվող գործունեություն է՝ ուղղված նախաքննության ու հետաքննության մարմինների կողմից օրինականության ապահովման

---

<sup>1</sup> Прокурорский надзор / Под ред. А.Я. Сухарева. М.: Норма, 2005, էջ 290:

<sup>2</sup> Տե՛ս **Королев Г.Н.** К вопросу о соотношении прокурорского надзора и судебного контроля за предварительным расследованием: Актуальные проблемы российского права и культуры XXI века // Вестник Волжской государственной академии водного транспорта: Актуальные проблемы российского права и культуры XXI века. Нижний Новгород: Изд-во ВГАВТ, 2002, Вып. 2, էջ 110-115; **Цапева Т. Ю., Яблоков В.А.** Разграничение судебного контроля и прокурорского надзора за предварительным расследованием // Государство и право: вопросы методологии, теории и практики функционирования. Сборник научных статей, посвященных 35-летию юридического факультета. Самара: Самарский университет, 2006, Вып. 2, էջ 488-498:

նր: Ընդ որում՝ նման գործունեության նախաձեռնությունը պատկանում է հենց դատախազին: Բացի այդ՝ «սահմանված խնդիրները կատարելու համար դատախազը պետք է տիրապետի օպերատիվ իրավիճակին համապատասխան տարածքում, իրազեկ լինի մինչ-դատական վարույթի արդյունքներին, տեղեկություններ ունենա որոշակի ժամանակահատվածում քրեական գործերի բնույթի, քննության վիճակի մասին (հանցագործությունը բացահայտված է, թե՞ ոչ, ի՞նչ ժամկետ է սահմանված հետաքննության կամ նախաքննության համար, ձերբակալված է հանցանք գործած անձը, թե՞ ոչ և այլն), աշխնքն՝ ունենա «տվյալների բանկ»»<sup>1</sup>: Դատական վերահսկողությանը դա բնորոշ չէ: Այն իրականացվում է միայն առիթի դեպքում, ինչպիսին է քրեական դատավարության մասնակիցների համապատասխան դիմումը: Այն սեփական նախաձեռնությամբ հանդես գալ չի կարող, քանի որ այդ դեպքում ստիպված կլինի սատարել կա՛ն պաշտպանության կողմին, կա՛մ՝ մեղադրանքի:

Դատախազական հսկողությունը մի գործունեություն է, որը երկար տարիների պատմություն ունի, ինչը վկայում է արդարադատության իրականացման գործում դրա արդյունավետության ու կարևորության մասին: Այդ ժամանակահատվածը նպաստել է, որ ձևավորվեն որոշակի ավանդույթներ, պատկերացումներ և նույնիսկ կարծրատիպեր առ այն, թե ինչպես պիտի իրականացվի դատախազական հսկողությունը: Ընդ որում՝ ընդհանուր առմամբ այդ ամենը դրական է ազդում արդարադատության արդյունավետության բարձրացման վրա: Թեպետ, կասկած չկա, որ այդ գործունեության արդյունավետության բարձրացման խնդիրներ կան:

Ներկայումս հսկողությունը մի գործառույթ է, որը բնութագրում է դատախազի ամբողջ գործունեությունը, ինչպես նաև նրա դատավարական վիճակը: Այսպես՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 52-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված է. «Դատախազն օրենքով սահմանված կարգով նշանակված պետական պաշտոնատար անձ է, որն իր իրավասության սահմաններում իրականացնում է քրեական հետապնդում, հսկողություն է իրականացնում հետաքննության և նա-

---

<sup>1</sup> Прокурорский надзор /Под общ. ред. Ю.Е. Винокурова. М.: Юрайт-Издат, 2008, էջ 234-235:

խաքննության օրինականության նկատմամբ, դատարանում պաշտպանում է մեղադրանքը, մասնակցում է դատարանի կողմից դատական որոշումները ի կատար ածելու հետ կապված հարցերի քննարկմանը, բողոքարկում է դատարանի դատավճիռները և այլ վերջնական որոշումները»: Այսինքն՝ քրեական հետապնդման հետ մեկտեղ դատախազին վերապահվում է նաև հսկողության գործառույթը: Ընդ որում՝ այդ գործառույթը դատավարական է, քանի որ նախատեսված է քրեադատավարական օրենսդրությամբ:

Հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողությունը դատախազության գործունեության հիմնական և ավանդական ձևերից է: ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով «դատախազական հսկողություն» հասկացությունը հիմնականում ամփոփվում է հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության իրականացման մեջ<sup>1</sup>: Հսկողությանը բնորոշ է համակողմանիությունը, ըստ որի, դատախազն արձագանքում է օրենքի ցանկացած խախտման, այլ ոչ թե միայն նրանց, որոնք այս կամ այն կերպ շոշափում են քրեական դատավարությանը մասնակցող անձանց իրավունքներն ու օրինական շահերը: Այդպիսի համակողմանիության շնորհիվ նախնական քննության փուլում դատախազական հսկողությունը դառնում է օրինականության ապահովման երաշխիք: Այն ապահովում է արդարադատության իրականացման՝ օրենքով սահմանված կարգը, ինչը նպաստում է քննվող դեպքի հանգամանքները պարզելուն, որի միջոցով հնարավոր է դառնում պարզել՝ հանցագործություն կատարվե՞լ է, թե՞ ոչ, տվյալ անձը մեղավո՞ր է, թե՞ ոչ: Դրա շնորհիվ հնարավորություն է ընձեռվում ժամանակին կասեցնելու քննիչի, հետաքննության մարմնի կամայական դրսևորումները կոնկրետ քրեական գործեր քննելիս: Այսինքն՝ դատախազական հսկողությունը նախնական քննության մարմինների վերոնշյալ պաշտոնատար անձանց կողմից հնարավոր չարաշահումները կանխելու միջոցներից մեկն է:

Դատախազական հսկողության տեղի ու դերի վերաբերյալ բանավեճերը չեն դադարում: Մասնավորապես, քննարկվող հարցերից է

---

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության դատախազությունը: - Երևանի **պետ. համալս. եր.:** Երևանի համալս. հրատ., 2004 – էջ 126:

դատախազական հսկողության նշանակությունը նախնական քննության համար<sup>1</sup>: Չէ՞ որ հսկողությունն իրականացնում է դատախազը, որը քրեական դատավարության մասնակից է մեղադրանքի կողմից: Իսկ դա կասկածներ է հարուցում այդ գործունեության անկողմնակալության վերաբերյալ: Հնարավո՞ր է, որ մեղադրական դատավարական շահեր ունեցող մասնակիցը մնա անկողմնակալ ու անաչառ նախնական քննության ընթացքում քննիչի ու հետաքննության մարմնի գործունեության նկատմամբ հսկողություն իրականացնելիս: Բացի այդ՝ «դատախազը պաշտոնատար անձ է, որը լիազորված է պետության անունից իրականացնելու քրեական հետապնդում քրեական դատավարության ընթացքում»<sup>2</sup>: Այսպես՝ համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի 6-րդ հոդվածի 22-րդ կետի, դատախազը դասվում է քրեական հետապնդում իրականացնող մարմինների շարքին: Ըստ այդմ՝ օրինաչափ է մեկ անձի գործունեության մեջ քրեական հետապնդման և հսկողության գործառույթներ համատեղելու հնարավորության հարցը, այդ թվում և քննիչի ու հետաքննութ-

---

<sup>1</sup> Տե՛ս **Михайлов А.И.** Исследование проблем предварительного следствия и прокурорского надзора за законностью расследования преступлений // Вопросы борьбы с преступностью. М.: Юрид. лит., 1988, № 46, էջ 79-86; **Филиппов М.Н.** Некоторые проблемы прокурорского надзора за всесторонностью, полнотой и объективностью предварительного расследования в свете правовой реформы // Правовая реформа и проблемы ее реализации. Тезисы докладов и сообщений региональной научно-парктической конференции, 14 - 15 сентября 1989 г.. Краснодар: Изд-во Кубан. ун-та, 1989, էջ 233-235; **Маршунов М.Н.** Прокурорский надзор за законностью установления уголовной ответственности в стадии предварительного расследования // Уголовная ответственность: проблемы содержания, установления, реализации. Межвузовский сборник научных трудов. Воронеж: Изд-во Воронеж. ун-та, 1989, էջ 99-104; **Балашов А.Н.** Проблемы прокурорского надзора за исполнением законов органами дознания и предварительного следствия при расследовании преступлений. Дис. ... докт. юрид. наук: 12.00.11 - М., 1990. 366 էջ; **Зеленецкий В.С.** Прокурорский надзор за исполнением закона о всестороннем, полном и объективном исследовании обстоятельств уголовного дела в стадии предварительного расследования. Учебное пособие / - Харьков, 1990. 92 էջ; **Крылова И.Б.** Прокурорский надзор за соблюдением прав и свобод человека и гражданина при производстве предварительного расследования. Автореф. дис. ... канд. юрид. наук - М., 2003. 22 էջ և ուրիշներ:

<sup>2</sup> Уголовный процесс Российской Федерации / отв. ред. проф. А.П. Кругликов. М.: Проспект, 2009, էջ 497:

յան մարմնի կողմից իրականացվող քրեական հետապնդման դեպքում: Այս թեման հետազոտողներից շատերը այդ խնդրի լուծումը արդարացիորեն կապում են քրեական դատավարությունում դատախազի և դատախազական հսկողության դերի որոշակիացման հետ<sup>1</sup>: Նշյալ խնդրի շուրջ բանավեճերը երբեմն այնքան են թեժանում, որ նույնիսկ հարցադրում է արվում, թե անհրաժեշտ է արդյոք դատախազական հսկողությունը արդարադատությանը:

Խորհրդային տարիներին, երբ դատական վերահսկողությունն այն եղանակով չէր իրականացվում, ինչպես հիմա ամրագրված է օրենսդրությունում, դատախազի կողմից իրականացվող գործառույթների խնդիրը լուծվում էր բավականին հեշտ: Հսկողական գործունեությունը դիտվում էր որպես դատախազության գոյության ու գործունեության հիմք, ուստի և դատախազական հսկողությունը դատախազի կողմից իրականացվող ամենակարևոր գործառույթն էր: Գատախազի գործունեության բոլոր մյուս տեսակները ծառայում են լրկ այդ գործառույթի իրականացմանը: Ա. Լ. Յիպկինը այս խնդրի առնչությամբ գրել է. «Գատավարական գործունեության բոլոր փուլերում դատախազն իրականացնում է դատավարության բոլոր փուլերի համար մեկ ընդհանուր գործառույթ՝ հսկողություն օրենքների ճիշտ և միատեսակ կատարման նկատմամբ»<sup>2</sup>: Ըստ այդմ՝ հետևություն էր արվում դատախազական հսկողության առանցքային նշանակության մասին: Այդ դիրքորոշումը բավականին ընդունված էր պատմական վերոնշյալ ժամանակահատվածում: Համան-

---

<sup>1</sup> Տե՛ս **Кожевников О.А., Кожевников А.В.** Прокурорский надзор в свете концепции судебной реформы России // Актуальные проблемы борьбы с правонарушениями. Материалы научно-практической конференции (Екатеринбург, 1992, 30 - 31 января). Екатеринбург, 1992, էջ 98-102; **Глебов А.П.** Судебная реформа и функции прокурорского надзора // Служенье Истине: Научное наследие Л.Д. Кокорева. Сборник статей. Воронеж: Изд-во Воронеж. ун-та, 1997, էջ 194-231; **Гущин В.З.** Судебная реформа. Вопросы прокурорского надзора // Право и политика. М.: Nota Bene, 2001, № 8, էջ 39-46; **Ивановский А.В.** Правовая реформа и прокурорский надзор в Беларуси // Прокурорская и следственная практика. М., 1998, № 4, էջ 78-81 և ուրիշներ:

<sup>2</sup> **Цыпкин А.Л.** Сущность уголовно-процессуальных функций прокурора // Вопросы теории и практики прокурорского надзора. Саратов: Изд. Сарат. ун-та, 1974, էջ 14-21:

ման դիրքորոշում էին արտահայտում նաև բազմաթիվ այլ հեղինակներ<sup>1</sup>:

Սակայն կարծում ենք, չի կարելի ելակետ ընդունել այն, որ դատախազական հսկողությունը դատախազի և դատախազության միակ գործառույթն է, որը դրսևորվում է նրա գործունեության տարբեր ոլորտներում, որոնց թվում է և քրեական հետապնդումը: Ավելի ժամանակակից է հետևյալ մոտեցումը. դատախազական հսկողությունը թեև ամենակարևոր ու նշանակալից գործառույթն է, սակայն բնավ էլ միակը չէ: Դատախազի գործունեությանը բնորոշ են այլ գործառույթներ ևս, որոնք կարևոր են, այդ թվում և քրեական դատավարության համար: Այսպես՝ քրեական հետապնդման գործառույթին բնորոշ է այն, որ դատախազը քրեական դատավարությունում հանդես է գալիս մեղադրանքի կողմից: Դա հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ քրեական հետապնդման գործառույթը դատախազի գործունեության համար պակաս կարևոր չէ, քան հսկողության գործառույթը: Դրանից հետևում է, որ և՛ հսկողության գործառույթը, և՛ քրեական հետապնդման գործառույթը դատախազի համար հավասարազոր են, և խոսել այն մասին, որ դրանցից մեկն ավելի կարևոր է, քան մյուսը, ճիշտ չէ: Առավել ևս, որ դա չի համապատասխանում նաև ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ քրեադատավարական գործող օրենսդրությանը, որտեղ վերոնշյալ երկու գործառույթներն էլ հիշատակվում են, սակայն դրանցից որևէ մեկի գերակա լինելու մասին չի նշվում:

Մ. Պ. Կանը ենթադրում էր, որ դատախազը մինչդատական փուլերում իրականացնում է դատավարական վեց գործառույթ. 1) գործի հանգամանքների հետազոտում, 2) քրեական հետապնդում, 3) դատավարության մասնակիցների իրավունքների ապահովում ու նրանց օրինական շահերի պաշտպանություն, 4) հանցագործու-

---

<sup>1</sup> Տե՛ս **Басков В.И.** Прокурор в суде первой инстанции. М.: «Юрид. лит.», 1968, էջ 5; **Дасев В.Г.** К понятию обвинения в советском уголовном процессе // Правоведение, 1970. № 1, էջ 81; **Михайлов В.А.** Практическое воплощение ленинских идей о прокурорском надзоре за предварительным расследованием уголовных дел // Труды высшей школы МВД СССР, 1971. Вып. 28, էջ 162-167 և որիշներ:

յունների կանխում և խափանում, 5) քննության դատավարական ղեկավարում, 6) քրեական գործի լուծում<sup>1</sup>:

Հայրենական քրեական դատավարության գրականության մեջ նորովի մոտեցում ցուցաբերվեց քրեական դատավարության գործառնությունների դասակարգման հարցում: Նշված մոտեցման համաձայն քրեադատավարական գործառնությունների համակարգը ընդգրկում է հիմնարար, հիմնական և լրացուցիչ գործառնություններ<sup>2</sup>: Պետք է համաձայնել Պ. Ղազինյանի այն մոտեցման հետ, որ «Հիմնական և լրացուցիչ գործառնությունների առանձնացումը պայմանավորված է ամբողջ քրեադատավարական գործունեության բազմագործառնությաին բնույթով, որի ուժով դրա հիմնական մասնակիցները սովորաբար կատարում են մի քանի քրեադատավարական գործառնություններ: Դրանցից մեկը պայմանավորված է այս կամ այն սուբյեկտի յուրահատկությամբ, արտացոլում է նրա գործունեության էությունը և հիմնական ուղղվածությունը: Հենց այդ գործառնության համար է քրեական դատավարությունում ներմուծվում քրեադատավարական գործունեության համապատասխան սուբյեկտը»<sup>3</sup>:

Դատախազի գործունեության մեջ գործառնությունների նման դասակարգման ենք հանդիպում Ե. Դ. Բոլտոշևի մոտ. վերջինս առաջարկում է քրեադատավարական գործառնությունների համակարգում առանձնացնել երեք մակարդակ՝ ա) հիմնարար (մեղադրանքի, պաշտպանության, գործի լուծման), բ) հիմնական (քրեադատավարական գործունեության յուրաքանչյուր սուբյեկտի համար) և գ) լրացուցիչ: Ընդ որում՝ նա ընդգծում է, որ դատախազի համար հսկողության գործառնությի հիմնական է, իսկ լրացուցիչ են քրեական հետապնդման և դատավարական ղեկավարման գործառնություններ<sup>4</sup>: Բավականին դժվար է համաձայնվել առաջարկվող դատախազա-

---

<sup>1</sup> Տե՛ս **Кан М.П.** Процессуальные функции прокурора в досудебных стадиях уголовного судопроизводства. Автореф. дис. ... канд. юрид. наук - Ташкент, 1988, էջ 6:

<sup>2</sup> Տե՛ս **Ղազինյան Պ.** Քրեական դատավարության պատմական և արդի հիմնահարցերը Հայաստանում: Եր.: Երևանի համալս. հրատ., 2001թ, էջ 234, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Ընդհանուր մաս, Եր.: Երևանի համալս. հրատ., 2006, 25:

<sup>3</sup> Տե՛ս **Ղազինյան Պ.** նույն տեղում 432 էջ:

<sup>4</sup> Տե՛ս **Болтошев Е.Д.** Функции прокурора в досудебных стадиях уголовного процесса. Дис. ... канд. юрид. наук: 12.00.09 - М., 2002. 189 էջ:



կան գործունեության այս գործառույթների հիերարխիային, քանի որ այն ներդաշնակ չէ ո՛չ Հայաստանի Հանրապետության, ո՛չ Ռուսաստանի Դաշնության գործող քրեադատավարական օրենսդրությանը, որոնցում ակնարկ անգամ չկա նշյալ սկզբունքների այդօրինակ հիերարխիկ հարաբերակցության մասին: Այս հիերարխիան հնարավոր էր միայն խորհրդային ժամանակաշրջանում, երբ օրենքում հատուկ շեշտադրվում էր դատախազական հսկողության գործառույթը: Քրեադատավարական նախկին (ՀԽՍՀ) օրենսդրության վերլուծությունը փարատում է բոլոր այն կասկածները, թե օրենսդիրը դատախազի գործունեության մեջ գլխավորը համարում է դատախազական հսկողության գործառույթի իրականացումը: Նման մոտեցումը, որը ենթադրում է դատախազի գործառույթների հիերարխիա, ներկայումս անընդունելի է, քանի որ չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության գործող քրեադատավարական օրենսդրությանը: Այսպես՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 52-րդ հոդվածի 1-ին մասում հսկողությունն ու քրեական հետապնդումը դատախազի գործունեության մեջ նշված են որպես հավասարազոր գործառույթներ, որոնք սահմանում են դատախազի վիճակը քրեական դատավարությունում: Դա հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ, իրոք, պետք է ընդունել գործառույթների համակարգի առկայությունը, որոնք սահմանում են դատախազի դատավարական վիճակն ու գործունեությունը, բայց այդ համակարգը հիերարխիկ չէ, դրանում չկան ավելի կարևոր և պակաս կարևոր գործառույթներ, դրանք բոլորը հավասարազոր են դատախազի դատավարական վիճակը սահմանելիս: Ընդ որում՝ հաշվի առնելով, որ վերոնշյալ բոլոր գործառույթները ձևավորում են համակարգ, դրանք ունեն որոշակի փոխկապվածություն: Այդ փոխկապվածությունը դրսևորվում է, մասնավորապես, իրար վրա փոխներգործությամբ, երբ գործառույթներից մեկի իրականացման համար պահանջվում է իրականացնել նաև մյուսը: Օրինակ՝ հսկողության գործառույթն իրականացնելիս դատախազը հայտնաբերում է հանցագործությունից տուժած անձի իրավունքների խախտում: Նա դրան պետք է արձագանքի այն անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելով, որ մեղավոր է հանցագործության մեջ: Այսինքն՝ տվյալ դեպքում ապահովելով հանցանք գործած անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը՝ դրանով իրականացվում է

հսկողության գործառույթ: Ինչպես տեսնում ենք, մեկ գործողության մեջ, այսինքն՝ ապահովել անձին քրեական պատասխանատվության ենթարկելը, կարող է իրականացվել երկու գործողություն:

ՀՀ քր. դատ. օր.-ի 53-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում սահմանված է, որ դատախազը մինչդատական վարույթի ընթացքում իրավունք ունի «հարուցել և իրականացնել քրեական հետապնդում, վերացնել քննիչի կայացրած որոշումը քրեական գործը կարճելու մասին, դատարանի միջնորդության հիման վրա հարուցել քրեական գործ, վերացնել հետաքննության մարմնի և քննիչի որոշումը քրեական գործի հարուցումը մերժելու մասին և հարուցել քրեական գործ, ինչպես նաև իր նախաձեռնությամբ հարուցել քրեական գործ»: Նշված լիազորությամբ իրականացվում են վերոնշյալ երկու գործառույթները՝ հսկողության և քրեական հետապնդման, որոնք սահմանում են դատախազի տեղը քրեական դատավարությունում: Այդ գործառույթներն իրականացվում են նաև դատախազի այլ լիազորություններով:

Համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի 52-րդ հոդվածի 1-ին մասի՝ դատախազն իր գործունեության մեջ իրականացնում է հետևյալ գործառույթները.

- 1) քրեական հետապնդում,
- 2) հսկողություն հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ,
- 3) դատարանում մեղադրանքի պաշտպանում,
- 4) դատարանի դատավճիռների և այլ վերջնական որոշումների բողոքարկում: Ի տարբերություն նշված հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությամբ առանձնացվում են ևս երկու լիազորություն՝ 1) պետական շահերի պաշտպանության հայցի հարուցումը դատարան, 2) հսկողություն պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ:

Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրության վերլուծությունը թույլ է տալիս թվարկված գործառույթներից առանձնացնել հիմնականները, հենքայինները: Դրանց թվում են քրեական հետապնդումը և հետաքննության ու նախաքն-

նության օրինականության նկատմամբ հսկողությունը: Չժխտելով մյուս գործառույթների ինքնուրույնությունը՝ հարկ է նշել, որ դրանց իրականացումն անհնար է առանց քրեական հետապնդման: Չէ՞ որ ՀՀ քր. դատ. օր.-ի 6-րդ հոդվածի 17-րդ կետում սահմանվում է, թե ինչ է իրենից ներկայացնում այդ գործառույթը. «քրեական հետապնդում» այն բոլոր դատավարական գործողությունները, որոնք իրականացնում են քրեական հետապնդման մարմինները, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում տուժողը՝ նպատակ ունենալով բացահայտել քրեական օրենսգրքով չթույլատրված արարքը կատարած անձին, վերջինիս մեղավորությունը հանցանքի կատարման մեջ, ինչպես նաև ապահովել այդպիսի անձի նկատմամբ պատժի և հարկադրանքի այլ միջոցներ կիրառելը»: Քրեական հետապնդում իրականացնող մարմիններին իրենց կարևորությամբ հավասարեցված պաշտոնատար անձանց թվում է նաև դատախազը: Այսպես՝ համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի 34-րդ հոդվածի 1-ին մասի, «Հետաքննության մարմինը, քննիչը և դատախազը հանցագործության մեջ կասկածվող անձին կարող են ձերբակալել, հարցաքննել, նրա նկատմամբ կիրառել դատավարական հարկադրանքի միջոցներ, ինչպես նաև որպես մեղադրյալ ներգրավել և մեղադրանք առաջադրել՝ սույն օրենսգրքով նախատեսված հիմքերով և կարգով»: Այսինքն՝ նա, ինչպես հետաքննության մարմինն ու քննիչը, իրականացնում է քրեական հետապնդում: Գատախազի գործունեության մեջ և նրա դատավարական վիճակի սահմանման հարցում քրեական հետապնդման գործառույթի նշանակության մասին արդեն շատ է գրվել<sup>1</sup>: Ընդ որում՝

<sup>1</sup> Տե՛ս **Строгович М.С.** Уголовное преследование в советском уголовном процессе. М., 1951, էջ 54, **Соловьев А.Б.** О функциях прокуратуры в досудебных стадиях уголовного судопроизводства. В кн.: Проблемы совершенствования прокурорского надзора (к 275-летию поссийской прокуратуры). М., 1997, էջ 122, **Герасимов С.** Функция уголовного преследования в деятельности проуратуры. В кн: Прокуратура в правовом государстве. М., 1997, էջ 48, **Халиулин А.Г.** Осуществление функции уголовного преследования прокуратурой России, Кемерево, 1997, из 35-40; **Халиулин А.Г.** Уголовное преследование как функция прокуратуры Российской Федерации (проблемы осуществления в условиях правовой реформы). Автореф. дисс. ... док. юп. наук. Москва, 1997, 15 — 16, 1997, էջ 35-40, **Бабин К.А.** Уголовное преследование как функция прокурора в уголовном процессе России. Автореф. дис. ... канд. юрид.

շեշտվել է, որ այդ գործառույթը հիմնականներից մեկն է:

Այն պնդումը, որ դատարանում մեղադրանքի պաշտպանության գործառույթն անհնար է իրականացնել առանց քրեական հետապնդման գործառույթի<sup>1</sup>, հիմնված է ՀՀ քր. դատ. օր.-ի 34-րդ հոդվածի 2-րդ մասի վրա. «Գատախազը պարտավոր է դատարանում պաշտպանել մեղադրանքը, քանի դեռ չեն հայտնաբերվել քրեական հետապնդումը կամ քրեական գործի վարույթը բացառող հանգամանքներ»: Գործառույթների նշյալ փոխկախվածությունը հաստատվում է ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի 4-րդ մասով, որտեղ նշված է. «Մեղադրողը, դատարանում հայտնաբերելով քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ, պարտավոր է հայտարարել ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին: Ամբաստանյալի նկատմամբ

---

наук - Нижний Новгород, 2008. 34 էջ; **Гатауллин З.Ш.** Уголовное преследование как функция прокурора в уголовном судопроизводстве // Бизнес в законе. М.: Изд. Дом "Юр-ВАК", 2009, № 1, էջ 221-225; **Шалунов М.** Надзор за законностью и уголовное преследование - самостоятельные функции прокурора // Законность. М., 1999, № 8, էջ 4-6; **Кан М.П.** Функция уголовного преследования и полномочия прокурора // Тезисы докладов на теоретической конференции аспирантов института государства и права АН СССР и юридического факультета МГУ им. М.В. Ломоносова. М.: Изд-во ИГиП АН СССР, 1986, էջ 144-145; **Шевчук А.Н.** Реализация военным прокурором функций надзора и уголовного преследования на стадии возбуждения уголовного дела: Проблемы юридической ответственности военнослужащих и военных организаций // Российский военно-правовой сборник № 12: Проблемы юридической ответственности военнослужащих и военных организаций. Серия "Право в Вооруженных Силах - консультант". М.: За права военнослужащих, 2009, Вып. 97, էջ 503-506, **Ղազինյան Գ.Ս.** Քրեական դատավարության պատմական և արդի հիմնահարցերը Հայաստանում: Եր., համալս. հրատ., 2001թ., էջ 274-276 և ուրիշներ:

<sup>1</sup> Տե՛ս **Тушев А.А.** Осуществление прокурором функции уголовного преследования в судебном разбирательстве // Российская юстиция. М.: Юрид. мир, 2005, № 12, էջ 21-24; **Тушев А.** Осуществление прокурором функции уголовного преследования в стадии назначения судебного заседания // Уголовное право. М.: АНО "Юридические программы", 2006, № 1, էջ 127-129; **Королев Г.Н.** О реализации прокурором функции уголовного преследования в стадии назначения судебного заседания: Актуальные проблемы российского права, философии, экономики и финансов // Вестник Волжской государственной академии водного транспорта: Актуальные проблемы российского права, философии, экономики и финансов. Нижний Новгород: Изд-во ФГОУ ВПО "ВГАВТ", 2005, Вып. 15, էջ 11-16 և ուրիշներ:

քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին մեղադրողի հայտարարությունը դատարանի համար քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու հիմք է»։ Այս կապակցությամբ ՀՀ քր. դատ. օր-ի 366-րդ հոդվածի 4-րդ մասում սահմանված է, «Գատարանում մեղադրանքը պաշտպանող դատախազը մեղադրանքից հրաժարվելու դեպքում դատարանը մեղադրանքի այդ մասով կայացնում է արդարացնող դատավճիռ»։ Այսինքն՝ այս դրույթից հետևում է, որ եթե բացակայում է քրեական հետապնդումը, ապա դատարանում մեղադրանք չի կարող լինել։ Գատարանում մեղադրանքը պաշտպանելու և քրեական հետապնդման գործառույթների միջև կապը դատախազի գործունեության մեջ ակնհայտ է։ Այդ կապակցությամբ հարկ է հիշել, որ անցյալ դարի 70-ական թվականներին տարածված էր այն դիրքորոշումը, ըստ որի քրեական հետապնդումը դիտվում էր որպես մեղադրանքի կողմի մեջ մտնող քրեական դատավարության մասնակիցների կողմից նշված գործառույթի իրականացում, մինչդեռ մեղադրանքի գործառույթը ըստ էության քրեադատավարական գործունեության հիմնական ուղղությունն է, որը բխում է դատավարության այդ մասնակիցների իրավական վիճակից<sup>1</sup>։ Այսինքն՝ քրեական հետապնդումն ուղղակի կախման մեջ էր դրվում քրեական դատավարության մասնակիցների դատավարական վիճակից։ Դրանից հետևում էր քրեական հետապնդման կախվածությունն այն իրականացնող դատախազից։ Դա թույլ էր տալիս խոսելու քրեական հետապնդման գործառույթի նկատմամբ մեղադրանքի գործառույթի ստորադաս լինելու մասին։

Ժամանակակից քրեադատավարական օրենսդրության վերլուծությունը հիմք է տալիս կասկածելու վերոնշյալ դիրքորոշման ճշմարտացիությունը։ ՀՀ քր. դատ. օր.-ի 34-րդ հոդվածի 1-ին մասում, որը կոչվում է «Քրեական հետապնդում իրականացնելու հիմքերը», ամրագրված է. «Հետաքննության մարմինը, քննիչը և դատախազը հանցագործության մեջ կասկածվող անձին կարող են ձերբակալել, հարցաքննել, նրա նկատմամբ կիրառել դատավարական հարկադ-

---

<sup>1</sup> Տե՛ս **Мотовиловкер О.Я.** Основные уголовно-процессуальные функции. Ярославль, 1976, էջ 5-26:

րանքի միջոցներ, ինչպես նաև որպես մեղադրյալ ներգրավել և մեղադրանք առաջադրել՝ սույն օրենսգրքով նախատեսված հիմքերով և կարգով»։ Գրանից երևում է, որ օրենսդիրը չի դիտում մի գործառույթը որպես գերադաս, իսկ մյուսը՝ դրան ստորադաս։ Այդ գործառույթները փոխադրված են և փոխլրացնող։ Ընդ որում՝ փոքր-ինչ կասկածելի է նաև տեսակետը, որ «քրեական հետապնդումը ոչ միայն մեղադրանքի քրեադատավարական գործառույթի ծնունդն է, այլև ամփոփված է նրա մեջ»<sup>1</sup>։ Այն եթե անգամ կիրառելի է ռուսաստանյան քրեական դատավարության նկատմամբ (ճիշտ է՝ չափից ավելի ազատ մեկնաբանությամբ), ապա իրականությունից հեռու է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության առնչությամբ։ Դա ակներև է, որովհետև համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի 6-րդ հոդվածի 17-րդ կետի, քրեական հետապնդումը սահմանվում է հետևյալ կերպ. «...այն բոլոր դատավարական գործողությունները, որոնք իրականացնում են քրեական հետապնդման մարմինները, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում տուժողը՝ նպատակ ունենալով բացահայտել քրեական օրենսգրքով չթույլատրված արարքը կատարած անձին, վերջինիս մեղավորությունը հանցանքի կատարման մեջ, ինչպես նաև ապահովել այդպիսի անձի նկատմամբ պատժի և հարկադրանքի այլ միջոցներ կիրառելը»։ Ինչպես տեսնում ենք, այստեղ քրեական հետապնդումը որևէ կախվածություն չունի մեղադրանքից։ Ընդ որում՝ այն դիտվում է որպես յուրատեսակ հենք մեղադրանքը սահմանելու համար։ Այսպես՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 6-րդ հոդվածի 21-րդ կետով սահմանված է, որ մեղադրանքի կողմ են «քրեական հետապնդման մարմինները, ինչպես նաև տուժողը, քաղաքացիական հայցվորը և նրանց օրինական ներկայացուցիչներն ու ներկայացուցիչները»։

Քրեական հետապնդման և դատարանի դատավճիռների և այլ վերջնական որոշումների բողոքարկման գործառույթների միջև փոխկապվածությունն այնքան էլ ակնհայտ չէ։ Առաջին հայացքից քրեական հետապնդումը ավելի շուտ կարելի է կապել հսկողութ-

---

<sup>1</sup> **Крюков В.Ф.** Уголовное преследование как одно из проявлений уголовно-процессуальной функции обвинения и роль прокурора в ее осуществлении // Проблемы отправления правосудия по уголовным делам в современной России: теория и практика. Сборник научных статей. Курск: Изд-во Курск. гос. техн. ун-та, 2007, Ч. 1, էջ 101:

յան գործառույթի հետ: Սակայն միայն առաջին հայացքից, որը մակերեսային է: Ավելի խորությամբ ուսումնասիրելիս պարզ է դառնում, որ ՀՀ քրեադատավարական օրենսդրությունում խոսվում է ոչ թե ամբողջ քրեական դատավարությունում դատախազական հսկողության մասին, այլ հետաքննության և նախաքննության օրինականության, ինչպես նաև պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ: Դա նշանակում է, որ դատական փուլերում դատախազի կողմից ոչ մի հսկողություն չի իրականացվում: Ուստի դատարանի դատավճիռների և այլ վերջնական որոշումների բողոքարկման գործառույթը չի կարող կապված լինել հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության գործառույթի հետ: Կարծում ենք՝ նշյալ գործառույթը ևս հիմնված է քրեական հետապնդման գործառույթի վրա և սերտորեն կապված է դրա հետ: Չէ՞ որ դատախազը բողոքարկելիս փաստացի պնդում է շարունակել քրեական հետապնդումը և դրա համար պահանջում է բեկանել դատարանի դատավճիռը, որը, նրա կարծիքով, խոչընդոտում է դրան: Ընդ որում՝ նա հիմնավորում է իր պահանջների օրինականությունն ու հիմնավորվածությունը՝ ի հակաշիռ դատարանի կայացրած դատավճռի:

Քրեական դատավարության և դատախազական հսկողության տեսության մեջ կան բազմաթիվ գիտական ուսումնասիրություններ, որոնք վերաբերում են դատախազի կողմից տարբեր ատյանների դատարանների դատավճիռների բողոքարկման էությանն ու նշանակությանը<sup>1</sup>: Խորհրդային տարիներին դատախազի կողմից դա-

---

<sup>1</sup> Տե՛ս **Пономаренко Л.Г.** Кассационный протест прокурора по уголовным делам. Автореф. дис. ... канд. юрид. наук - Харьков, 1987. 23 էջ; **Грошевой Ю.М., Пономаренко Л.Г., Хотенец В.М.** Кассационный протест прокурора по уголовным делам. Учебное пособие / Отв. за вып.: Сибилева Н.В. Киев: Изд-во УМК ВО при Минвузе УССР, 1989. 88 էջ; **Корневский Ю.В., Темушкин О.П.** Протест прокурора на решение суда по уголовному делу / Под ред.: Кудрявцев П.И. М., 1973. 47 էջ; **Темушкин О.П.** Кассационный протест прокурора как средство укрепления законности // Вопросы борьбы с преступностью. М.: Юрид. лит., 1973, № 18, էջ 114-131; **Ясинский Г.** Кассационный протест прокурора // Социалистическая законность. М., 1969, № 7 - із 24-26; **Замятин В., Яновский Я.** Протест прокурора и обеспечение законности судебных решений // Социалистическая законность. М., 1970, № 10, էջ 22-27; **Басков В.** Кассационный протест прокурора по уголовному делу // Социалистическая законность. М.: Известия, 1976, № 7, էջ 50-52 և սրիշներ:

տարանի դատավճիռների բողոքարկումը դիտվում էր որպես դատարանի կայացրած դատավճռի օրինականության նկատմամբ նրա կողմից իրականացվող հսկողության շրջանակներում արձագանքելու գործողություն: Դատախազի կողմից դատարանի դատավճիռը բողոքարկելը դիտվում էր որպես սոցիալիստական օրինականության նկատմամբ նրա հսկողական գործունեության մի մասը<sup>1</sup>: Սակայն խորհրդային իշխանության վերջին տարիներին արդարադատության ոլորտի բարեփոխման ժամանակ նշյալ կապի իրավաչափությունը կասկածի տակ դրվեց: Դա պայմանավորված էր դատական իշխանության, ասել է թե նաև՝ արդարադատության անկախության հիմնավորվածը: Իշխանությունների տարանջատման հայեցակարգը ենթադրում է, որ դատական իշխանությունը պետք է լինի անկախ, ուստի նրա նկատմամբ չի կարող իրականացվել դատախազական հսկողություն, քանի որ դա կարող է դիտվել արդարադատության վրա ներգործելու միջոց:

Ներկայումս դատախազը կարող է լինել լոկ դատական որոշումները ստուգելու նախաձեռնողը: Նա արդեն չի կարող անձամբ ստուգել դրանք՝ համաձայն գործող օրենսդրության: Այսպես, Վ. Ն. Կրյուկովը գրում է. «Դատախազի և այլ անձանց նախաձեռնությամբ վերաքննության և վճարեկության կարգով վարույթի վերանայման առարկա կարող են լինել դատավճռի և դատական այլ որոշման օրինականությունը, հիմնավորվածությունը և արդարացիությունը, ինչը ամրագրված է օրենքում (ՌԴ քր. դատ. օր.-ի 361-րդ,

---

<sup>1</sup> Տե՛ս **Палатова Т.Е.** Повышение профессионального мастерства прокуроров, осуществляющих надзор за законностью рассмотрения уголовных дел областным судом по первой инстанции // Прокурорский надзор за законностью рассмотрения в судах уголовных дел. Материалы учебно-методических семинаров с начальниками отделов по надзору за рассмотрением в судах уголовных дел прокуратур АССР, краев, областей РФ. М., 1973, էջ 55-56; **Нажимов В.П.** Прокурорский надзор за исполнением законов судом при отправлении правосудия // Проблемы прокурорского надзора. Научная конференция, 20-21 апреля 1972 г.: Тезисы сообщений. М., 1972, էջ 256-257; **Кудрявцев П.И.** Прокурорский надзор за рассмотрением уголовных дел в суде // На страже советских законов. М.: Юрид. лит., 1972, էջ 278-293; **Басков В.И.** Прокурорский надзор за соблюдением законности при рассмотрении судами уголовных дел. Учебно-методическое пособие - М., 1977. 134 էջ և ուրիշներ:



373-րդ հոդվածներ)»<sup>1</sup>: Իրոք, համաձայն Ռ-Գ քր. դատ. օր.-ի 361-րդ հոդվածի, «Վերաքննիչ ատյանի դատարանը, սույն օրենսգրքի 30-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան, ստացված վերաքննիչ բողոքի հիման վրա ստուգում է հաշտարար դատավորի կայացրած դատավճռի և որոշման օրինականությունը, հիմնավորվածությունը և արդարացիությունը»: Իսկ Ռ-Գ քր. դատ. օր.-ի 373-րդ հոդվածն ամրագրում է. «Վճռաբեկ դատարանը ստացված վճռաբեկ բողոքի հիման վրա ստուգում է դատավճռի և դատական այլ որոշման օրինականությունը, հիմնավորվածությունը և արդարացիությունը»: Համանման դրույթներ սահմանված են նաև ՀՀ քր. դատ. օր.-ում: Այսպես՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 376-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված է. «Սեղադրողը կամ վերադաս դատախազն իրավունք չունի բողոքարկելու գործն ըստ էության լուծող դատական ակտը քաղաքացիական հայցի մասով, բացառությամբ այն դեպքի, երբ քաղաքացիական հայցը շոշափում է պետության գույքային շահերը»: Բացի այդ՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 404-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, վճռաբեկ բողոք բերելու իրավունք, ի թիվս դատավարության մասնակիցների, բացառությամբ քրեական հետապնդման մարմինների, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև դիմողների, ունեն Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը և նրա տեղակալները՝ օրենքով նախատեսված դեպքերում: Ասվածից հետևում է, որ ներկայումս դատախազը զրկված է դատարանի նկատմամբ հսկողություն իրականացնելու իրավունքից: Իսկ նրա բողոքարկման իրավունքը հարկ է դիտարկել ոչ թե որպես դատախազի կողմից իրականացվող հսկողական գործառույթների իրականացման արդյունք, այլ որպես նրա նախաձեռնություն՝ վերադաս դատական ատյանում դատավճիռների և դատական այլ որոշումների օրինականությունն ու հիմնավորվածությունը ստուգելու նպատակով: Ըստ այդմ, վերոնշյալ իրավունքը հարկ է դիտել որպես դատախազի կողմից քրեական հետապնդում իրականացնելու ձևերից մեկը:

Այդուհանդերձ, ինչպես նշվեց վերը, թեև դատախազի գործունեությունը հիմնականում նրա վրա դրված քրեական հետապնդման գործառույթի իրականացումն է, սակայն նա իրականացնում է

<sup>1</sup> Տե՛ս **Крюков В.Ф.** Прокурорский надзор. М.: Норма, 2006, էջ 342-343:

հսկողություն նաև մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության ուղղությամբ: Ի տարբերություն քրեական հետապնդման այլ մարմինների՝ դատախազությունը քննության օրինականության, քննությանը մասնակցող անձանց օրինական շահերի և իրավունքների պահպանման գրավականն է<sup>1</sup>: ՀՀ քր. դատ. օր.-ում և «Դատախազության մասին» ՀՀ օրենքում դա ուղղակիորեն չի նշվում, սակայն դրա դրույթների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ քրեական դատավարության շրջանակներում նշյալ գործառույթը դրսևորվում է մի շարք լիազորություններով, որոնցով օժտված է դատախազը:

Այսպես՝ մի շարք իրավասություններ, որոնցով օժտված է դատախազը ՀՀ քր. դատ. օր.-ի շրջանակներում, ոչ մի կերպ չեն կարող դասվել քրեական հետապնդման գործառույթի շարքին: ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված է. «Դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը, հայտնաբերելով քրեական գործի վարույթը բացառող հանգամանքներ, քրեական գործով մինչդատական վարույթի յուրաքանչյուր փուլում որոշում են կայացնում քրեական գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին: Դատախազն իրավասու է քրեական գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնել նաև գործը դատարան ուղարկելուց հետո, բայց մինչև դատական նիստում գործի քննությունն սկսվելը»: Իսկ համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի 37-րդ հոդվածի 1-ին մասի, «դատարանը, դատախազը, ինչպես նաև դատախազի համաձայնությամբ քննիչը կարող են հարուցված քրեական գործի վարույթը կարճել և քրեական հետապնդումը դադարեցնել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 72-րդ, 73-րդ և 74-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում»:

Կան նաև այլ դրույթներ, որոնք չի կարելի վերագրել քրեական հետապնդում իրականացնելու դատախազի գործառույթին: Նշյալ իրավասություններով իրականացվում է այլ գործառույթ, որը հա-

---

<sup>1</sup> Стѣ Соловьев А.Б. Соотношение уголовного преследования и прокурорского надзора в досудебных стадиях по УПК РФ, /Прокурорская и следственная практика, 2005, №3 – 4, էջ 259-267:

տուկ նշված չէ ՀՀ քր. դատ. օր.-ում. դա մարդու ու քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանության նկատմամբ հսկողության գործառույթն է: Չէ՞ որ միանգամայն ակնհայտ է, որ դատախազը, իրականացնելով վերոհիշյալ նորմերում նշված լիազորությունները, դրանով իսկ իրականացնում է հսկողություն մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության նկատմամբ:

Կարծում ենք, որ դատախազի իրականացրած քրեական հետապնդումը նույնպես պետք է դիտել որպես մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության նկատմամբ հսկողության գործառույթի իրականացում: Չէ՞ որ այդ դեպքում նա գործում է ոչ միայն ի շահ պետության, այլև ի շահ այն քաղաքացիների ու անձանց, որոնց իրավունքներն ու ազատությունները խախտվել են կատարված հանցանքով: Դ-ա, մասնավորապես, նախատեսված է ՀՀ քր. դատ. օր.-ի 53-րդ հոդվածի 1-ին մասով. «Դատախազը մինչդատական վարույթի ընթացքում լիազորված է՝

1) հարուցել և իրականացնել քրեական հետապնդում, վերացնել քննիչի կայացրած որոշումը քրեական գործը կարճելու մասին, դատարանի միջնորդության հիման վրա հարուցել քրեական գործ, վերացնել հետաքննության մարմնի և քննիչի որոշումը քրեական գործի հարուցումը մերժելու մասին և հարուցել քրեական գործ, ինչպես նաև իր նախաձեռնությամբ հարուցել քրեական գործ»:

Անհրաժեշտ է նշել, որ համաձայն Հայաստանի Հանրապետության գործող քրեադատավարական օրենսդրության, առանձին քննչական գործողությունների կատարումն արտոնելու դատախազի իրավագործությունները սահմանափակվեցին: Սակավաթիվ են այն դեպքերը, երբ նման թույլտվությունը պարտադիր է. դրանք առնչվում են ոչ թե մարդու և քաղաքացու իրավունքներին ու ազատություններին, այլ պետության շահերը պաշտպանելուն: Այսպես՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 226-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված է. «Այն փաստաթղթերի առգրավումը, որոնք պարունակում են պետական գաղտնիք, կատարվում է միայն դատախազի թույլտվությամբ՝ համապատասխան հիմնարկի ղեկավարի հետ համաձայնեցված կարգով»: Այն դեպքերում, երբ անհրաժեշտ է կատարել մարդու և քաղաքացու իրա-

վունքներն ու ազատությունները սահմանափակող դատավարական գործողություններ, օրենսդրությամբ նախատեսվում է ստանալ դատարանի թույլտվությունը:

Դատախազական հսկողություն է նախատեսված խափանման միջոց ընտրելիս: Այսպես՝ համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի 150-րդ հոդվածի 1-ին մասի, «Խափանման միջոց կիրառելու, փոխելու մասին քննիչի և հետաքննության մարմնի որոշումը կասկածյալը, մեղադրյալը, նրանց պաշտպանները և օրինական ներկայացուցիչները, դատավարության այլ շահագրգիռ մասնակիցները կարող են բողոքարկել համապատասխան դատախազին, իսկ դատախազի որոշումը վերադաս դատախազին»: Դրանով իսկ օրենսդիրը մատնանշում է այն, որ դատախազն իրավասու է հսկողություն իրականացնել խափանման միջոցի ընտրության նկատմամբ: Նշյալ դրույթի վերլուծությունը հստակորեն ցույց է տալիս, որ դատախազական հսկողության իրականացումն ուղղված է քրեական դատավարության մասնակիցների շահերի պաշտպանությանը: Միանգամայն ակնհայտ է, որ խափանման միջոց ընտրելիս դատախազական հսկողության իրականացումը լրացուցիչ երաշխիք է մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները իրավապահական մարմինների պաշտոնատար անձանց ցանկացած ռոնձգությունից պաշտպանելու համար:

Քրեական գործ հարուցելու փուլում ևս իրականացվում է դատախազական հսկողություն մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության նկատմամբ: Այսպես՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 185-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, «քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել վերադաս դատախազին»: Տվյալ դեպքում ենթադրվում է նաև, որ դատախազը հսկողություն է իրականացնում ի շահ մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության: Ընդ որում՝ տվյալ հսկողությունն ունի նույն նշանակությունը, ինչ դատական վերահսկողությունը: Այդ մասին է վկայում այն, որ նախատեսված է որոշման դատական բողոքարկման հնարավորություն:

Համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի 237-րդ հոդվածի՝ «գույքի վրա կալանք դնելու մասին որոշումը կարող է բողոքարկվել դատախազին,

սակայն ներկայացված բողոքը չի կասեցնում համապատասխան որոշման ի կատար ածելը»: Այսինքն՝ օրենսդիրը միանշանակորեն դատախազական հսկողությունը դիտում է որպես մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների երաշխիք, իսկ բողոքարկման հնարավորությունն ինքնին՝ որպես իրավապահական մարմինների պաշտոնատար անձանց կամայականություններից պաշտպանվելու միջոց:

Օրենսդիրը որպես մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների խախտումների դեմ երաշխիք է դիտում ոչ միայն դատախազին, որն անմիջականորեն իրականացնում է նախանախական քննության նկատմամբ հսկողությունը, այլև ամբողջ դատախազական համակարգը (Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին և նրան ենթակա բոլոր դատախազներին): Այդ է վկայում է ՀՀ քր. դատ. օր.-ի 263-րդ հոդվածի 1-ին մասը, որում սահմանված է. «Քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը դրա պատճենն ստանալու պահից 7 օրվա ընթացքում կասկածյալի, մեղադրյալի, ամբաստանյալի, նրանց պաշտպանների, տուժողի, նրա ներկայացուցչի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի կամ նրանց ներկայացուցիչների, ինչպես նաև այն ֆիզիկական անձի կամ իրավաբանական անձի ներկայացուցչի կողմից, որոնց հայտարարության հիման վրա հարուցվել է քրեական գործը, կարող է բողոքարկվել վերադաս դատախազին»: Այսինքն՝ վերադաս դատախազը կոչված է երաշխավորելու քրեական դատավարության բոլոր մասնակիցների (ինչպես մեղադրանքի, այնպես էլ պաշտպանության կողմերի) իրավունքներն ու ազատությունները, եթե քրեական հետապնդումը դադարեցնելու դեպքում նրանց իրավունքներն ու ազատությունները խախտվեն:

ՀՀ քր. դատ. օր.-ի 267-րդ հոդվածի 3-րդ մասում նշված է. «Այն գործով հարուցված միջնորդությունը բավարարելուց քննիչի հրաժարվելը, որը քննիչը մտադրված է մեղադրական եզրակացության մղարկել դատախազին, կարող է միջնորդությունը բավարարելուց հրաժարվելու մասին որոշման պատճենը դիմողին հանձնելու պահից 2 օրվա ընթացքում բողոքարկվել դատախազին: Մինչև բո-

դոքի լուծումը գործը չի ուղարկվում դատարան»։ Ինչպես տեսնում ենք, այս դրույթը ևս կոչված է երաշխավորելու մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը քրեական դատավարության նախնական քննության փուլում:

Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրությունում նշվում է, որ առավել կարևոր դատավարական գործողություններ կատարելիս այդ մասին իրազեկում են դատախազին: Համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի 192 հոդվածի 3-րդ մասի՝ «եթե քրեական գործ հարուցել է քննիչը կամ հետաքննության մարմինը, և նրանց կողմից ընդունվել է իրենց վարույթ, ապա քրեական գործ հարուցելու և այն իրենց վարույթն ընդունելու մասին կազմվում է միասնական որոշում: Այս դատավարական փաստաթղթի պատճենն անմիջապես, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում, ուղարկվում է դատախազին»: Միանգամայն ակնհայտ է, որ դատախազին պատճեններ ուղարկելու նպատակը նաև նրան կոնկրետ դատավարական գործողության մասին իրազեկելն է: Անձին որպես մեղադրյալ ներգրավելիս, համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի 202-րդ հոդվածի 5-րդ մասի, «որոշման պատճենը 24 ժամվա ընթացքում ուղարկվում է դատախազին»: Կամ ձերբակալման արձանագրությունը կազմելուց հետո՝ 12 ժամվա ընթացքում, հետաքննության մարմինը կամ քննիչը գրավոր իրազեկում է դատախազին: Դրանով իսկ ստեղծվում են բարենպաստ պայմաններ մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանության նկատմամբ դատախազական հսկողությունն իրականացնելու համար:

ՀՀ քր. դատ. օր.-ի 197-րդ հոդվածի 5-րդ մասում նախատեսված է. «Նախաքննության ժամկետը կարող է երկարացնել դատախազը՝ քննիչի պատճառաբանված որոշման հիման վրա»: Միանգամայն ակնհայտ է, որ իրավունք տալով դատախազին լուծելու նախաքննության ժամկետը երկարացնելու հարցը, նշանակում է օրենսդրությամբ նրան օժտել նախնական քննության ընթացքում մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության նկատմամբ հսկողություն իրականացնելու լիազորությամբ: Չէ՞ որ նշյալ հարցը լուծելիս նա առաջին հերթին պիտի պարզի՝ չէ՞ն խախտվել արդյոք քրեական դատավարությանը մասնակից ան-

ձանց իրավունքները, և նշյալ անձանց իրավունքների ու ազատությունների չհիմնավորված խախտումում չէ արդյոք նախաքննության ժամկետի երկարացումը: Այդ առումով դատախազին նախաքննության ժամկետը երկարացնելու իրավասությամբ օժտելը հարկ է դիտել որպես մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության երաշխիքներից մեկը: Այսպես՝ վերոնշյալ հոդվածի 6-րդ կետում նշված է. «Նախաքննության ժամկետը երկարացնելու մասին պատճառաբանված որոշումը քննիչը պարտավոր է ներկայացնել դատախազին՝ քննության ժամկետը լրանալու օրվանից առնվազն 3 օր առաջ»: Այսինքն՝ որոշման մեջ, որը քննիչը ներկայացնում է դատախազին՝ նախաքննության ժամկետը երկարացնելու նպատակով, նա պետք է հիմնավորի իր որոշումը: Ընդ որում՝ դատախազը գնահատում է հիշյալ հիմնավորումը և դրա հիման վրա որոշում նախաքննության ժամկետը երկարացնելու հարցը:

Որպես մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների և ս մեկ երաշխիք պետք է դիտել ՀՀ քր. դատ. օր.-ի 203-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված դրույթը. «Որոշման մեջ կամ արձանագրությունում ստորագրելուց մեղադրյալի կամ այլ անձի հրաժարվելու դեպքում քննիչը դրա վրա նշում է կատարում ստորագրելուց հրաժարվելու մասին և 24 ժամվա ընթացքում հայտնում է դատախազին»: Դատախազին ստորագրումից հրաժարվելու փաստի մասին հայտնելով ենթադրվում է, որ դատախազը պետք է հնարավորություն ունենա ստուգելու որպես մեղադրյալ ներգրավելու որոշման կայացման օրինականությունն ու հիմնավորվածությունը կամ համապատասխան քննչական գործողությունն իրականացնելիս օրինականության պահպանումը: Դատախազը պետք է հնարավորություն ունենա պարզելու, թե ինչով է պայմանավորված համապատասխան փաստաթղթի տակ ստորագրելուց հրաժարվելը և արդյոք հրաժարվելը բողոքի ձև չէ՞ քննիչի և իրավապահպան մարմինների այլ անձանց կիրառած ապօրինի մեթոդների դեմ: Տվյալ դեպքում դատախազին իրազեկելը հնարավորություն է ընձեռում դատախազական հսկողության միջոցներով բացահայտելու մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների խախտումները:

Մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների

պաշտպանությանն ուղղված դատախազական հսկողություն է իրականացվում նաև քրեական գործը մեղադրական եզրակացությամբ դատախազին հանձնելիս: Դա երևում է այն հարցերի թվարկումից, որոնք այդ դեպքում որոշում է դատախազը: Այսպես՝ նման դեպքում դատախազի ստուգելիք հարցերի շարքում ՀՀ քր. դատ. օր.-ի 273-րդ հոդվածում նշված են հետևյալները՝ կոնկրետ անձի մեղավորությունը, մեղադրյալին մեղսագրվող արարքի ապացուցվածությունը, քրեական գործով վարույթը կարճելու հանգամանքների առկայությունը, խափանման միջոցի ճիշտ ընտրությունը, ձեռնարկված են արդյոք միջոցներ՝ ապահովելու քաղաքացիական հայցը, գույքի հնարավոր բռնագրավումը և դատական ծախսերը և այլն: Այս բոլոր հարցերի լուծումն ուղղված է քրեական դատավարությանը մասնակցող անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանությանը: Այսինքն՝ մեղադրական եզրակացությամբ քրեական գործը ուղարկելիս դատախազը դիտվում է որպես նախնական քննության փուլում մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների երաշխավոր: Մեղադրական եզրակացությամբ քրեական գործը դատախազին ուղարկելն ինքնին ենթադրում է դատախազական հսկողության իրականացման ակտիվ ձև մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության հարցում:

Մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների ապահովման նկատմամբ հսկողությունն առկա է նաև հանցագործությունների քննությունը ղեկավարելու դատախազի գործունեության մեջ: Այսպես՝ դատախազը, համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի 53-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, լիազորված է «հանցագործության դեպքով հետաքննության մարմնին և քննիչին հանձնարարել նախապատրաստել նյութեր քրեական գործ հարուցելու համար»: Իսկ նույն հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ լիազորված է «հետաքննության մարմնին, քննիչին, ստորադաս դատախազին գրավոր ցուցումներ տալ քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու, որոշումներ ընդունելու վերաբերյալ»: ՀՀ քր. դատ. օր.-ի 53-րդ հոդվածի 3-րդ մասում նախատեսված են մի շարք միջոցներ, որոնք կարող է կիրառել դատախազը նախաքննության և հետաքննության նկատմամբ դատավարական ղեկավարումն իրա-



կանացնելիս:

Թեպետ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում սկնհայտ է մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության նկատմամբ դատախազական հսկողության առկայությունը, սակայն հարկ է նշել, որ գործող օրենքում այն անմիջականորեն ամրագրված չէ: Կրկնենք, որ վերոնշյալ դրույթներում, անկասկած, այդ մասին նշվում է: Հսկողության այդ տեսակը նախաքննության ընթացքում դատախազի գործունեության մեծ ծավալի բնութագրիչն է: Ընդ որում՝ հարկ է նշել, որ նախնական քննության փուլում դատախազի հսկողական գործունեությունն իրականացվում է երկու ուղղությամբ.

1) մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության,

2) պետության շահերի պաշտպանության:

Դատախազական հսկողության առաջին ուղղությունը վերևում քննարկեցինք: Երկրորդ ուղղությունը կարգավորող իրավունքի նորմերից է ՀՀ քր. դատ. օր.-ի 226-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրվածը, որի համաձայն՝ «այն փաստաթղթերի առգրավումը, որոնք պարունակում են պետական գաղտնիք, կատարվում է միայն դատախազի թույլտվությամբ՝ համապատասխան հիմնարկի ղեկավարի հետ համաձայնեցված կարգով»: Ակնհայտ է, որ դատախազի թույլտվությունը տվյալ դեպքում անհրաժեշտ է ոչ թե մարդու և քաղաքացու, այլ պետության իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար: Դատախազի գործունեության նշյալ ուղղությունը նախատեսված է նաև ՀՀ քր. դատ. օր.-ի 156-րդ հոդվածում, որտեղ սահմանված է. «Դատախազը հարուցում և պաշտպանում է հարուցված քաղաքացիական հայցը, եթե խախտվել են պետության գույքային շահերը»: Այսինքն՝ հիշյալ նորմում ուղղակիորեն նշված է, որ դատախազը այդ գործողություններն իրականացնում է ի շահ պետության:

Քրեական դատավարությունում դատախազի գործունեության մեջ վերոնշյալ երկու ուղղության առկայությունը երաշխավորում է մի կողմից՝ մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների, մյուս կողմից՝ պետության շահերի պաշտպանության հարցում հա-

վասարակշռությունը: Հենց այդ հաշվեկշիռը պահպանելով էլ դատախազը կարող է երաշխավորել օրինականության սկզբունքը:

Սակայն քրեական դատավարությունում դատախազական հսկողությունը մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության միակ երաշխիքը չէ: Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրությունը սահմանում է, որ այն իր ունեցած ուժով զիջում է դատական վերահսկողությանը: Այսպես՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 263-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված է. «Գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հետ կապված բողոքը բավարարելուց դատախազի հրաժարվելը կարող է բողոքարկվել դատարան»: ՀՀ քր. դատ. օր.-ում առկա այս և համանման այլ նորմերից երևում է, որ ցանկացած անձ կարող է դիմել դատախազին իր իրավունքներն ու շահերը պաշտպանելու խնդրանքով: Եթե բողոքը չբավարարվի, տվյալ անձը կարող է դիմել դատարան: Այսինքն՝ դատախազական հսկողությունը տվյալ դեպքում կարելի է դիտել որպես մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության լրացուցիչ երաշխիք քրեական դատավարությունում: Դա լիովին համապատասխանում է դատական բարեփոխման հայեցակարգին, որն իրականացվել է և շարունակվում է իրականացվել Հայաստանի Հանրապետությունում, համաձայն որի՝ մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության հարցում առաջնայնությունը պատկանում է դատարանին: Ըստ այդմ, դատախազական հսկողությունը կորցրել է իր գերակայությունը: Այսպես՝ Վ. Ի. Ռոխլինը Ռուսաստանի Դաշնության վերաբերյալ գրում է. «Օրենքից հանվեց այն դրույթը, ըստ որի դատախազությունն իրականացնում է բարձրագույն հսկողություն օրինականության ապահովման նկատմամբ... Դա, մեր կարծիքով, որևէ կերպ չի նսեմացնում դատախազական հսկողությունն ու դրա դերը պետությունում»<sup>1</sup>: Այս բնորոշումը կիրառելի է նաև Հայաստանի Հանրապետությունում իրականացվող դատախազական հսկողության առնչությամբ: Իրոք, դա-

---

<sup>1</sup> **Рохлин В.И.** Прокурорский надзор и государственный контроль: история, развитие, понятие, соотношение. СПб.: Издательство «Юридический центр Пресс», 2003, էջ 142-143:

տախազական հսկողությունը չի կարող լինել բարձրագույնը, քանի որ դա կարող է խաթարել իշխանությունների տարանջատման սկզբունքը և դրանից բխող՝ դատական իշխանության անկախության սկզբունքը: Մակայն դրա հետ մեկտեղ, հարկ է նշել, որ ճիշտ չէ հրաժարվել քրեական դատավարությունում մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության նկատմամբ դատախազական հսկողությունից: Ռատախազի գործունեության այդ տեսակն անհրաժեշտ է, քանի որ (ինչպես և դատական վերահսկողությունը) քրեական դատավարությանը մասնակցող անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության լրացուցիչ երաշխիք է: Ընդ որում՝ պետք է նկատել, որ նշյալ երաշխիքը բավականին արդյունավետ ու գործուն է:

Մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության նկատմամբ դատախազական հսկողության արդյունավետությունն ու գործունեությունը բացատրվում է նրանով, որ դատախազության գործունեությունը կազմակերպվում ու կառուցվում է միանձնյա ղեկավարման սկզբունքի համաձայն: Այս սկզբունքն ապահովում է, որ դատախազական հսկողությունն իրականացվում է բավականին արագ ու առանց շեղումների: Այստեղ չկան բարդ և հոգնեցուցիչ ընթացակարգեր, որոնք պիտի կատարի այն անձը, ում իրավունքներն ու ազատությունները խախտվել են, դրանք վերականգնելու կամ պաշտպանելու համար: Ընդ որում՝ դատախազի արձագանքը իրավունքների ու ազատությունների խախտման փաստին ժամանակի կտրվածքով հասցված է նվազագույնի, ինչը դատախազական հսկողությունը դարձնում է շատ արդյունավետ: Այդ իսկ պատճառով կարծում ենք, որ հարկ չկա հրաժարվելու քրեական դատավարությունում մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության նկատմամբ դատախազական հսկողությունից, քանի որ այն միանգամայն ներդաշնակորեն կարող է համակցվել դատական վերահսկողության հետ:

Հաշվի առնելով դատախազական հսկողության՝ որպես մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության երաշխիքի արդյունավետությունը կարծում ենք՝ հրաժարվել դրանից քրեական դատավարության բարեփոխումների լույսի ներքո վաղաժամ է: Ըստ այդմ՝ դատախազի գործունեությունը միայն

քրեական հետապնդման և մեղադրանքի գործառույթներին հանգեցնելը քրեական դատավարությանը գրկում է մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների կարևոր երաշխիքից: Կարծում ենք՝ ճիշտ կլիներ ոչ թե հրաժարվել իրավունքների ու ազատությունների պաշտպանության նկատմամբ դատախազական հսկողության գործառույթից, այլ կատարելագործել և արդիականացնել այն: Այդ նպատակով պետք է նախ և առաջ ավելացնել նորմ այն մասին, որ դատախազական հսկողության գործառույթներից մեկը մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության նկատմամբ հսկողությունն է: Երկրորդ՝ հարկավոր է սահմանել դատախազական հսկողության այդ տեսակի ուղղվածությունը քրեական դատավարությունում: Սակայն այդ ամենի հիմքը պիտի դառնա մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանությանն ուղղված դատախազական հսկողության միասնական հայեցակարգը, որը, ցավոք, ներկայումս գոյություն չունի: Այդ հայեցակարգի առանցքը պիտի դառնա դատախազական հսկողության միասնականության գաղափարը՝ մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության հիման վրա:

Այդ նպատակով հարկավոր է լրացնել ՀՀ քր. դատ. օր.-ի 52-րդ հոդվածը առանձին կետով և շարադրել այն հետևյալ կերպ. «Դատախազը իրականացնում է հսկողություն մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության նկատմամբ հետաքննության և նախաքննության ընթացքում»: Նշյալ դրույթն անհրաժեշտ է, թեկուզ և ՀՀ քր. դատ. օր.-ի 52-րդ հոդվածի 1-ին կետում նախատեսված է. «Դատախազն օրենքով սահմանված կարգով նշանակված պետական պաշտոնատար անձ է, որն իր իրավասության սահմաններում իրականացնում է քրեական հետապնդում, հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ, դատարանում պաշտպանում է մեղադրանքը, մասնակցում է դատարանի կողմից դատական որոշումների ի կատար ածելու հետ կապված հարցերի քննարկմանը, բողոքարկում է դատարանի դատավճիռները և այլ վերջնական որոշումները: Դատարանում մեղադրանքը պաշտպանող դատախազը կոչվում է մեղադրող»: Այսինքն՝ տվյալ կետում արդեն խոսվում է դատախազական հսկողության մասին, իսկ դա ենթադրում է դատա-

խազական հսկողություն նաև մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության նկատմամբ: Սակայն չնայած դրան, մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության նկատմամբ դատախազական հսկողություն իրականացնելու մասին առանձին նորմի ամրագրումը հետաքննության ու նախաքննության ընթացքում անհրաժեշտ է, քանի որ դա հնարավորություն կտար շեշտելու այն, որ իրավապահական գործունեությունը դատախազի ամբողջ գործունեության մի մասն է քրեական դատավարությունում:

Ըստ ՀՀ օրենսդրի՝ դատախազական հսկողության հնարավորությունները մինչև վերջ սպառված չեն մեղադրյալների, կասկածյալների, տուժողների և դատավարության այլ մասնակիցների իրավունքների ու ազատությունների ապահովման ոլորտում: Կարծում ենք՝ դեռ վաղ է հրաժարվել դատախազական հսկողության առավելություններից Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում անձի իրավունքների ու ազատությունների ապահովումն իրականացնելիս: Միանգամայն ակնհայտ է դրա արդյունավետությունը այն դեպքերում, երբ անհրաժեշտ է անհապաղ արձագանքել անձի իրավունքների ու ազատությունների կոպիտ խախտումներին: Ըստ այդմ, թերևս նպատակահարմար է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում ավելի լայնորեն օգտագործել դատախազական հսկողության հնարավորությունները անձի իրավունքների ու ազատությունների պաշտպանության բնագավառում: Մասնավորապես ճիշտ կլիներ դատախազական հսկողությունը կիրառել նաև առանձին դատավարական գործողությունների նկատմամբ, որոնք կարող են էականորեն խախտել մարդու և քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները: Պետք է նշել նաև, որ համաձայն 53-րդ հոդվածի 3-րդ մասի 10-րդ կետի՝ դատախազն իրավասու է կալանքից ազատելու կոնկրետ անձին: Դրանով իսկ դատախազը հնարավորություն ունի արագ և արդյունավետ արձագանքելու կոնկրետ անձի չիմնավորված կլանավորմանը:

Այսպիսով՝ վերոնշյալից հետևում է, որ դատախազական հսկողությունը չի խոչընդոտում դատական բարեփոխումների ընթացքին, որոնք ուղղված են անձի իրավունքների ու ազատությունների երաշխիքների լիարժեք համակարգի ստեղծմանը: Ընդհակառակը, այդ մեխանիզմն է գորու է դառնալու այդ համակարգի մասը, որը կնպաս-

տի արագ և արդյունավետ արձագանքելու նշյալ իրավունքների և ազատությունների բոլոր տեսակի խախտումներին: Դատախազական հսկողության պատմությունն ու իրավապահական մարմինների գործունեության պրակտիկան հաստատում են այդ: Ուստի, կարծում ենք, ճիշտ կլինի դատախազական հսկողությունը դարձնել անձի իրավունքների և ազատությունների երաշխիքներից մեկը Հաստատանի Հանրապետության քրեական դատավարությունում:

**§ 5. Մինչդատական վարույթում կիրառվող  
պաշտպանության միջոցները որպես արդարադատության  
իրականացմանն օժանդակող անձանց իրավունքների  
ապահովման երաշխիք**

Քրեական դատավարությանը մասնակցող անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության հիմնախնդիրներին նվիրված իրավաբանական գրականության և այլ հրապարակումների ծավալից կարելի է եզրակացնել, որ ամենաշատը տուժում են մեղադրյալների և կասկածյալների իրավունքներն ու օրինական շահերը: Ուստի այդ անձինք զգում են պետության առանձնահատուկ պաշտպանության կարիքը: Սակայն իրականում այդպես չէ: Իրոք, քրեական դատավարությանը մասնակցող նշյալ անձինք իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության կարիք են զգում, որպեսզի հավասար հնարավորություններ ունենան այլ մասնակիցների հետ մրցակցելու: Դա կարևոր երաշխիք է, որպեսզի անձն ապօրինաբար չենթարկվի քրեական պատասխանատվության և հետագայում չդատապարտվի: Դրանով ապահովվում են արդարադատության շահերը:

Արդարադատության շահերը պետք է ապահովվեն նաև այլ անձանց պաշտպանությամբ, որոնք կասկածյալ կամ մեղադրյալ չեն: Չէ՞ որ կոնկրետ հանցագործությունների ականատեսների ցուցմունքները հաճախ առանձնապես արժեքավոր են արդարադատության նպատակներին հասնելու՝ արդարացի դատավճիռ կայացնելու համար: Սակայն քրեական դատավարությանը մասնակցող ոչ բոլոր անձինք են ուզում, որ այդ ականատեսները ճիշտ ցուցմունքներ տան: Չէ՞ որ հանցագործը երբեք չի ուզենա, որ ճշմարտությունը հասու դառնա արդարադատությանը, քանզի դրանով ինքը կմեր-

կացվի: Հետևաբար, հանցագործը միշտ ձգտում է, որ ականատեսներ առհասարակ չլինեն հանցագործություն կատարելիս, կա՛մ տան իր համար նպաստավոր ցուցմունքներ: Արդարադատության շահերից է բխում ինչպես այդ ականատեսների, այնպես էլ նրանց ցուցմունքների անվտանգությունն ապահովելը, որն արդարացի դատական որոշում կայացնելու երաշխիք է:

Անհրաժեշտ է նշել, որ վերն ասվածը բնորոշ է բազմաթիվ երկրների օրենսդիրների: Այդ ըմբռնումը հիմնված է հանցավորության դեմ արդյունավետ պայքարի անհրաժեշտության վրա, ինչը ենթադրում է արդարության վրա հիմնված արդյունավետ արդարադատություն: Ընդ որում՝ հանցավորության առանձին տեսակների դեմ պայքարի առանձնահատկություններն հատկապես հրատապ են դարձնում նման անձանց պաշտպանությունը: Այսպես՝ վկաների պաշտպանությունը խիստ կարևոր է կազմակերպված հանցավորության շրջանակներում իրականացվող հանցագործությունները քննելիս<sup>1</sup>: Ինչպես նշում է Ե. Ե. Կուլիկովը. «Հետքեական ազդեցությունը կազմակերպված հանցավոր խմբերի գործունեության անբաժանելի բաղադրատարրն է, իսկ կազմակերպված հանցավորության դեմ բարեհաջող պայքարի պայմաններից մեկը հանցագործությունների զոհերի ու վկաների անվտանգությունն ապահովելն է»<sup>2</sup>: Համաձայն Եվրոպայի խորհրդի՝ 1997թ. ընդունած «Վկաներին վախեցնելու և պաշտպանության իրավունքները ապահովելու հարցով» № R (97) 13 Հանձնարարականի պարզաբանիչ հուշագրի՝ «վկաներին վախեցնելը պայմանավորված է հենց կազմակերպված հանցավորության բնույթով»<sup>3</sup>: Տվյալ դեպքում հենց հանցավոր գործունեության առանձնահատկություններն են ծնում արդարադատու-

---

<sup>1</sup> Подольный Н.А. Расследование преступлений, составляющих молодёжную организованную преступность. М.: Издательство «Юрлитинформ», 2007, էջ 140:

<sup>2</sup> Куликов Е.Е. Проблемы обеспечения безопасности свидетелей в Российской Федерации. // Проблемы раскрытия преступлений в свете современного уголовного процессуального законодательства: Материалы Всерос. науч.-практ. конф., посвящённой памяти проф., д-ра юрид. наук, заслуж. юриста РФ И.Ф. Герасимова, Екатеринбург, 6-7 февр. 2003 г. Екатеринбург: Изд-во «Чароид», 2003, էջ 262:

<sup>3</sup> Зарубежный опыт правового регулирования и практика его применения по вопросам защиты участников уголовного судопроизводства. Сборник правовых актов, организационных документов и информационно-аналитических материалов / Под общ. ред. В.В. Черникова. М., 2000, էջ 56:

յան առանձնահատկությունները, որոնց էությունը կատարված հանցագործության ակնատես անձանց իրավունքներն ու օրինական շահերն առանձնահատուկ կերպով երաշխավորելն է: Այդ երաշխիքներն ապահովելն արդյունք է այն բանի գիտակցման, որ առանց այդ անձանց ցուցմունքների անհնար է կոնկրետ գործով արդարացի որոշումներ կայացնել: Դա երևում է մասնավորապես ՀՀ քր. դատ. օր.-ի 98-րդ հոդվածի 1-ին մասից, որտեղ սահմանված է. «Քրեական դատավարությանը մասնակցող յուրաքանչյուր անձ, ով կարող է հաղորդել տվյալներ, որոնք նշանակություն ունեն հանցագործությունը բացահայտելու և դրա կատարողին հայտնաբերելու համար, ինչի հետևանքով կարող են վտանգվել նրա, նրա ընտանիքի անդամի, մերձավոր ազգականի կամ մերձավորի կյանքը, առողջությունը, գույքը, իրավունքներն ու օրինական շահերը, ունի պաշտպանության իրավունք»: Միանգամայն ակնհայտ է, որ մեջբերված դրույթում նշված կատեգորիայի անձանց թվին են դասվում առաջին հերթին վկաները, որոնք կոնկրետ հանցագործության ակնատեսն են եղել: Նրանց ցուցմունքները էական նշանակություն ունեն յուրաքանչյուր կոնկրետ գործով որոշում կայացնելիս: Վկաների պաշտպանության հիմնախնդրին նվիրվել են բազմաթիվ հրապարակումներ<sup>1</sup>:

---

<sup>1</sup> Տե՛ս **Никифорова Е.В.** Защита свидетелей в России: реальность и перспективы развития: Май 2004 г. // Место и роль органов внутренних дел в системе уголовной юстиции: Май 2004 г.. Материалы научной конференции слушателей, курсантов и студентов. Омск: Изд-во Ом. акад. МВД России, 2005, Вып. 9, էջ 41-43; **Бубнов И.А.** Пути решения проблемы защиты свидетеля в уголовном судопроизводстве Российской Федерации // Правовые проблемы укрепления российской государственности. Материалы нижеволжской научной конференции студентов, аспирантов и соискателей юридических вузов, 2 декабря 2006 г.. Астрахань: Изд. Дом "Астраханский университет", 2006, էջ 23-26; **Никитин С.Ю., Новикова М.В., Сергеев А.Б.** Защита прав свидетелей в уголовном судопроизводстве. Монография - Челябинск: Изд-во Челяб. юрид. ин-та МВД России, 2006. 142 էջ; **Ободова М.В.** Защита прав свидетелей в уголовном судопроизводстве // Уголовно-правовые, уголовно-процессуальные и криминалистические проблемы в деятельности следственных подразделений правоохранительных органов. Материалы Всероссийской конференции курсантов, слушателей, студентов, адъюнктов и аспирантов (11 апреля 2007 г.). Челябинск: Изд-во Челяб. юрид. ин-та МВД России, 2007, Ч. 2, էջ 140-143; **Ширитов А.Б.** Возможности интеграции зарубежного опыта в законодательство РФ в сфере защиты свидетелей // Уголовно-правовые и криминологические проблемы борьбы с легализацией преступных доходов. Автореф. дис. ... канд. юрид. наук. М., 2008, էջ 251-269 և նրիշներ:



Ընդ որում՝ նշված անձինք, ի թիվս քրեական դատավարության բոլոր մասնակիցներին տրվող ընդհանուր երաշխիքների, կարիք են զգում լրացուցիչ երաշխիքների, որոնք պիտի տրվեն միայն իրենց: Դրանք երաշխավորում են առաջին հերթին նշյալ անձանց անվտանգությունը և երկրորդ՝ ցուցմունքների անկողմնակալությունը, որոնք կարող են տալ այդ անձինք: Ընդ որում՝ հարկ է նշել, որ արդարադատությանն օժանդակող անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության երաշխիքները չեն հանգում միայն նրանց անվտանգության ապահովմանը, թեպետ և այդ անձանց անվտանգությունը կարևոր բաղադրատարր է վերոնշյալ երաշխիքների համակարգում: Արդարադատությանն օժանդակող անձանց իրավունքների ու շահերի երաշխիքները, նրանց անվտանգությունն ապահովելուց զատ ներառում են նաև այլ միջոցների համակարգ, որն ապահովում է այդ անձանց մասնակցությունը քրեական դատավարությանը: Մասնավորապես, արդարադատություն իրականացնելիս նշյալ անձանց մասնակցությունը երաշխավորող այդպիսի միջոցներից են առանձին դատական ծախսերը: Այսպես՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 168-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված են դատական ծախսերը, որոնք բաղկացած են «տուժողին, մասնագետին, փորձագետին, վկային ներկայանալու և օրապահիկի ծախսերի հատուցման» գումարներից: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Դատական ծախսերը վճարվում են պետական բյուջեից, եթե սույն օրենսգրքով այլ կարգ սահմանված չէ»: Միանգամայն ակնհայտ է, որ այս միջոցը կոչված է ապահովելու նշյալ անձանց մասնակցությունը քրեական դատավարությունում: Այդպիսի միջոցներից է նաև քրեական դատավարությանը մասնակցող բոլոր անձանց՝ որակյալ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, որը երաշխավորված է ՀՀ քր. դատ. օր.-ի 10-րդ հոդվածի 1-ին մասով, որում սահմանված է. «Յուրաքանչյուր ոք սույն օրենսգրքով նախատեսված կարգով իրավունք ունի ստանալու իրավաբանական օգնություն»: Դիշտ է, ՀՀ քր. դատ. օր.-ում որոշակիացված չէ, թե ինչպես կարող են օգտվել այդ իրավունքից այն անձինք, որոնք կասկածյալ կամ մեղադրյալ չեն: Դիշտ կլինեք, վերացնել այդ բացը՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 10-րդ հոդվածում ավելացնելով մաս, որը ներառեր դրույթ այն մասին, որ բոլոր մյուս անձինք, և ոչ միայն կասկածյալն ու մեղադրյալը, իրավունք ունեն օգտվելու փաստաբանի ծառայություններից՝ որպես

նրանց դատավարական իրավունքների ու օրինական շահերի լրացուցիչ երաշխիք:

Ինչպես իրավացիորեն նկատում է Ն. Ռ. Մուխտադինովան, «Ռուսաստանի Դաշնության քրեադատավարական օրենսգիրքը նախատեսել է քրեական դատավարության հետևյալ մասնակիցներին, որոնք ապահովում են վկայի իրավունքներն ու օրինական շահերը քրեական գործի վարույթի ընթացքում. վկայի փաստաբանը, անչափահաս վկայի օրինական ներկայացուցիչը»<sup>1</sup>: Սակայն հարկ է նշել, որ ՌԴ քր.դատ.օր.-ը վկայի փաստաբանին չի առանձնացնում որպես քրեական դատավարությանը մասնակցող անձի: Այդպիսի բաց առկա է նաև ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքում, որը պետք է վերացնել, քանի որ անորոշ է մնում նշյալ անձի հստակ կարգավիճակը: Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրությունում այդ բացը պետք է լրացնել համապատասխան նորմի նախատեսմամբ, որ առանձին կասեմանի վկայի փաստաբանի դատավարական վիճակը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում տեղ գտած կարգավորումը բավարար չէ վկայի փաստաբանի ակտիվ գործունեության համար: Օրենսդրական նման կարգավորումից հետևում է, որ վկայի փաստաբանը մասնակցելով հարցաքննությանը՝ ավելի շատ ստատիստի գործառույթ է իրականացնում, քան թե ցույց է տալիս իրավաբանական օգնություն:

Ինչպես տեսնում ենք, արդարադատությանն օժանդակող անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը և այդ անձանց անվտանգության ապահովումը միանման հասկացություններ չեն: Թեև պետք է նշել, որ հենց այդ անձանց անվտանգությանն է նվիրված հրապարակումների և մենագրությունների մեծ մասը<sup>2</sup>: Նշված հիմնախնդիրը, անշուշտ, շատ կարևոր է, սակայն,

---

<sup>1</sup> **Мухутдинова Н.Р.** Адвокат свидетеля, законный представитель несовершеннолетнего свидетеля в Российском уголовном судопроизводстве. //Научные труды. Российская академия юридических наук. Выпуск 9. В 3 томах. Том 3. М.: Издательская группа «Юрит», 2009, էջ 991:

<sup>2</sup> Տե՛ս **Авдеев М.А.** Проблемы обеспечения безопасности лиц, содействующих осуществлению правосудия, на стадии возбуждения уголовного дела // Российское правосудие. Научно-практический журнал. М.: Ось-89, 2007, № 8 (16), էջ 46-51; **Брусницын Л.В.** Правовое обеспечение безопасности лиц, содействующих уголовному правосудию: временной и субъективный аспекты // Государство и право. М.: Наука, 1996, № 9, էջ 76-83; **Брусницын Л.В.** Междуна-

դրանով հանդերձ, այն պետք է դիտարկել արդարադատությանն օժանդակող անձանց իրավունքների ու օրինական շահերի երաշխավորմանը կոչված այլ միջոցների կիրառման հիմնախնդրի հետ մեկտեղ: Այդ նպատակով անհրաժեշտ է սահմանել արդարադատությանն օժանդակող անձանց կարգավիճակը և նրանց շրջանակը, ինչը թույլ կտա երաշխավորել նրանց իրավունքներն ու օրինական շահերը: Ակնհայտ է, որ դրանով ապահովվում է կոնկրետ քրեական գործով որոշումների արդարացիությունը: Այսինքն՝ սահմանելով արդարադատությանն օժանդակող անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը, օժտելով նրանց իրավունքների ուրուշակի շրջանակով և երաշխավորելով այդ իրավունքների իրացումը, պետությունը ստեղծում է արդարադատության խնդիրները լուծելու համար անհրաժեշտ պայմաններ, որոնք սահմանված են ՀՀ քր. դատ. օր.-ի 2-րդ հոդվածում: Եվ դա միանգամայն ակնհայտ է: Այսպես՝ օրենսդիրը, սահմանելով վկայի իրավունքները, ստեղծում է հավաստի ցուցմունքներ ստանալու բարենպաստ պայմաններ, ինչն անհրաժեշտ է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն կատարելու համար: Նույնը կարելի է ասել և արդարադատության իրականացմանն օժանդակող այլ անձանց վերաբերյալ:

Այսպիսով՝ նշելով արդարադատության իրականացմանն օժանդակող անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության անհրաժեշտությունը՝ առաջին հերթին պետք է սահմանել նրանց շրջանակը: Ընդունված է նրանց շարքին դասել տուժողները

---

родно-правовые и конституционные основы обеспечения безопасности лиц, содействующих уголовному правосудию // Государство и право. М.: Наука, 1996, № 3, էջ 100-109; **Никитина А.С.** Некоторые аспекты правового обеспечения безопасности лиц, содействующих уголовному судопроизводству // Современность в творчестве вузовской молодежи. Сборник научных трудов молодых ученых. Иркутск: ВСИ МВД России, 2003, Вып. 5, էջ 42-47; **Кожевников В.В.** Проблемы безопасности лиц, содействующих уголовному судопроизводству, в контексте теории естественного права // Онтология и аксиология права. Материалы международной научной конференции, 27 - 28 сентября 2003 г.. Омск: Изд-во Ом. акад. МВД России, 2003, էջ 167-169; **Янин С.А.** Обеспечение безопасности лиц, содействующих уголовному судопроизводству, при производстве некоторых следственных действий // Тактика производства следственных действий в соответствии с новым Уголовно-процессуальным кодексом Российской Федерации. Материалы Всероссийской научной конференции, 23 апреля 2003 г.. Волгоград: ВА МВД России, 2004, էջ 107-111 և նրիշներ:

րին, վկաներին, ինչպես նաև փորձագետներին, քրեական դատավարությանը ներգրավվող մասնագետներին, այսինքն՝ բոլոր այն անձանց, որոնք իրենց գործողություններով կարող են նպաստել գործով արդարացի որոշման կայացմանը: Ընդ որում՝ մեղադրյալն ու կասկածյալը, չնայած այն բանին, որ նրանց ցուցմունքները եւ էական նշանակություն ունեն կոնկրետ քրեական գործերի քննության համար, անձանց այդ շրջանակին չեն դասվում, քանի որ նրանց առնչությամբ նախատեսված է երաշխիքների ուրիշ համակարգ, որը հաշվի է առնում նրանց դատավարական վիճակի առանձնահատկությունները: Կարծում ենք՝ արդարադատության իրականացմանն օժանդակող անձանց շրջանակը չի սպառվում վերոթվարկյալներով: Այսպես՝ միանգամայն ակներև է, որ այդ անձանց թվին պետք է դասել հանցագործության բոլոր ականատեսներին՝ անկախ այն բանից՝ նրանք կոնկրետ քրեական գործով վկաներ են, թե դեռևս չունեն այդպիսի կարգավիճակ: Դա կնպաստի կատարվող քննության արդյունավետության բարձրացմանը, քանի որ կատեղծի լրացուցիչ երաշխիքներ այն անձանց համար, որոնք կատարված հանցագործության ականատեսն են դարձել, սակայն, որոշակի հանգամանքներից ելնելով, զգուշանում են հայտնել իրենց հայտնի տեղեկությունների մասին, քանի որ կարծում են, որ դա կարող է սպառնալ իրենց կամ իրենց մերձավորների կյանքին ու առողջությանը: Ընդ որում՝ սահմանելով նշյալ շրջանակը, պետք չէ հիմք ընդունել այն, թե այդ անձինք իրականում ինչ չափով են նպաստել արդարադատության իրականացմանը: Գործի լուծման համար նրանց տված օգուտի գնահատականը չպետք է լինի չափանիշ նրանց դատավարական վիճակը սահմանելիս: Այդ անձանց շրջանակին պետք է դասել նաև հանցագործության զոհերին<sup>1</sup>, այսինքն՝ այն անձանց, որոնք դեռևս դատավարական կարգով չեն ճանաչվել տուժողներ: Այդ անձանց իրավունքները պետք է պաշտպանվեն նախքան օրենքով սահմանված կարգով նրանց տուժող ճանաչվելը:

Այդ առումով, արդարադատության շահերից ելնելով, հարկավոր է քրեական դատավարության մասնակիցների շարքում առանձնացնել այնպիսի անձանց, ինչպիսիք են կատարված հանցագոր-

---

<sup>1</sup> Ст'ю Горелик В. Обеспечение безопасности военнослужащих - жертв преступлений, свидетелей и других лиц // Законность. М., 1999, № 10, էջ 27-28:

ծության ականատեսները կամ հանցագործության զոհերը: Այդ անձանց դատավարության մասնակից ճանաչելը կնպաստի քրեական դատավարության խնդիրների լուծմանը, որոնց մասին նշված է ՀՀ քր. դատ. օր.-ի 2-րդ հոդվածում, ինչպես նաև կապահովի մրցակցության սկզբունքի ավելի լիարժեք կիրառումը քրեական դատավարության բոլոր փուլերում: Հանցագործության զոհերին որպես քրեական դատավարության ինքնուրույն մասնակիցներ ճանաչելը կհամապատասխանի նաև ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 29 նոյեմբերի 1985թ. 40/34 բանաձևով ընդունված «Հանցագործությունների և իշխանության չարաշահումների զոհերի համար արդարադատության հիմնական սկզբունքների» հռչակագրի պահանջներին:

Ըստ վերոնշյալ հռչակագրի՝ հանցագործության զոհին տրվում են մի ամբողջ շարք իրավունքներ, և երաշխավորվում է նրա օրինական շահերի իրականացումը: Այդ իրավունքներից առավել էականը դատական քննության ժամանակ զոհերին նրանց դերի, այդ դատավարության ընթացքի, ծավալի, ժամկետների և գործի քննության արդյունքների մասին տեղեկացնելն է, հատկապես ծանր հանցագործությունների դեպքերում և այն դեպքերում, երբ իրենք են դիմում այդպիսի տեղեկություն ստանալու համար (Հռչակագրի 6-րդ կետ, Ա ենթակետ): Ցավոք, վերոնշյալ հռչակագրի պահանջները ոչ ամբողջովին են իրացված ՀՀ քր. դատ. օր.-ում: Տուժողին մի շարք իրավունքներով օժտելը կարելի դիտել միայն որպես նշյալ հռչակագրի հիմնադրությունների մասնակի իրագործում հայրենական օրենսդրությունում, քանի որ տուժող հասկացությունը, ինչպես երևում է հռչակագրի մեջբերված նորմից, զգալիորեն ընդգրկում է տուժողի այն հասկացությունից, երբ նկատի ենք ունենում այն անձին, որի նկատմամբ, ՀՀ քր. դատ. օր.-ի 58-րդ հոդվածի 2-րդ մասի համապատասխան, կայացվել է որոշում: Համաձայն դրա՝ «տուժող ճանաչելու մասին որոշումն ընդունում է հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը կամ դատարանը»: Այս որոշումը դատավարական հիմք է անձին տուժող ճանաչելու համար: Այդ պատճառով նպատակահարմար է տուժողի հետ մեկտեղ ճանաչել համապատասխան հանցագործության զոհին և սահմանել նրա իրավունքները քրեական դատավարությունում: Այդ հիմնախնդիրն հատուկ ուշադրության է

արժանացել իրավաբանական գրականության մեջ, որտեղ սահմանազատված են տուժող և հանցագործության գոհ հասկացությունները<sup>1</sup>: Անհրաժեշտ է նշել, որ իրավաբանական գրականության մեջ ընդունված է նաև սահմանազատել տուժող հասկացությունը քրեադատավարական և քրեաիրավական իմաստներով<sup>2</sup>:

Ս. Վ. Անոշենկովան գրում է. «Քրեական իրավունքում տուժողի անձը ի հայտ է գալիս օբյեկտիվորեն՝ հանցագործության կատարման հետևանքով և իրապես գոյություն ունեցող իրականության տարր է: Քրեական իրավունքում տուժողի հայտնվելը պայմանավորված չէ այն բանով, թե հաստատվե՞լ է արդյոք նրան վնաս հասցնելու փաստը, ընդունվե՞լ է որոշում նրան տուժող ճանաչելու մասին,

---

<sup>1</sup> Տե՛ս **Шаговой В.Н.** Потерпевший и жертва преступления в уголовном процессе: защита прав и их уголовно-процессуальные правонарушения. Автореф. дис. ... канд. юрид. наук - Тюмень, 2006. 25 էջ; **Шаговой В.Н.** Потерпевший и жертва преступления в уголовном процессе: защита прав и их уголовно-процессуальные правонарушения. Дис. ... канд. юрид. наук: 12.00.09 - Тюмень, 2006. 218 էջ; **Шаров Д.В.** Международно-правовые акты организации объединенных наций, определяющие правовое положение потерпевшего в уголовном судопроизводстве до принятия "Декларации основных принципов правосудия для жертв преступления и злоупотребления властью" // Юридические науки. М.: Компания Спутник+, 2003, № 3, էջ 47-49; **Мамичева С.В.** Права жертв преступлений и злоупотреблений властью // Журнал российского права. М.: Норма, 2001, № 7, էջ 96-106; **Парий А.** Защита прав жертвы преступления в российском уголовном процессе // Правозащитник. М., 1997, № 1, էջ 43-49; **Сильчев К.Р.** Права и законные интересы жертвы преступления: Субъективные права и законные интересы: теоретические основы и проблемы юридической защиты // Трибуна молодых ученых.: Субъективные права и законные интересы: теоретические основы и проблемы юридической защиты. Сборник научных трудов. Воронеж: Изд-во Воронеж. ун-та, 2002, Вып. 3: Ч. 2, էջ 179-191; **Исаев Н.В.** К вопросу о роли жертвы преступления в российском праве // Актуальные проблемы правового регулирования деятельности органов Министерства юстиции и Министерства внутренних дел Российской Федерации. Межвузовский сборник научных трудов. Владимир: ВЮИ Минюста России, 2002, էջ 77-85, **Գիլբանդյան Ս.Ա.** Տուժողի իրավունքների և օրինական շահերի ապահովումը քրեական դատավարությունում. Եր., Տիգրան Մեծ, 1998թ., 148 էջ, **Գիլբանդյան Ս.Ա.** Տուժողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովման հիմնահարցերը նախնական քննության փուլում, Բանբեր Երևանի համալսարանի, Իրավագիտություն, 2010, 131.3, էջ 24-37 և ուրիշներ:

<sup>2</sup> Տե՛ս **Анощенко С.В.** Уголовно-правовое учение о потерпевшем. М.: Волтерс Клувер, 2006, էջ 12-33:

արձանագրվե՞լ է այդ մասին պատշաճ դատավարական կարգով»<sup>1</sup>: Ինչպես տեսնում ենք, տուժողը այս ընկալմամբ նմանվում է զոհին, որի մասին հիշատակվում է «Հանցագործությունների և իշխանության չարաշահումների զոհերի համար արդարադատության հիմնական սկզբունքների մասին» հռչակագրում: Ջոհ և տուժող հասկացությունների այդպիսի նմանությունը թույլ է տալիս առաջարկել հանցագործության զոհին տալու նույնպիսի իրավունքներ, որոնցով օժտված է տուժողը: Մասնավորապես, ճիշտ կլիներ, հանցագործության զոհին օժտել քրեական հետապնդման իրավունքով:

Թեև վերոնշյալ հռչակագրում զոհը նման իրավունքով օժտված չէ, սակայն, կարծում ենք, այն բխում է 4-րդ կետի նորմից, որում նախատեսված է. «Ջոհերին պետք է վերաբերվել կարեկցանքով և հարգել նրանց արժանապատվությունը: Նրանք ունեն արդարադատության մեխանիզմներից օգտվելու և իրենց հասցված վնասի դիմաց հնարավորինս շուտ հատուցում ստանալու իրավունք՝ ազգային օրենսդրության համապատասխան»: Ակներև է, որ արդարադատության մեխանիզմներից օգտվելու հնարավորությանը հղում անելու և հասցված վնասի դիմաց հնարավորինս շուտ հատուցում ստանալու իրավունքները զոհի՝ քրեական հետապնդման իրավունքի անմիջական դրսևորումն են: Նշյալ իրավունքը հարկավոր է ուղղակիորեն ճանաչել Հայաստանի Հանրապետության գործող քրեադատավարական օրենսդրությունում՝ ամրագրելով այն համապատասխան նորմով, որը ճիշտ կլիներ գետեղել ՀՀ քր. դատ. օր.-ի 7-րդ գլխում: Ընդ որում՝ զոհի դատավարական վիճակը պետք է հավասարեցվի տուժողի դատավարական վիճակին: Դա թույլ կտա կանխել հանցագործության զոհերի վրա ապօրինի ներգործության հնարավորությունը և պայմաններ կստեղծի մրցակցության սկզբունքի առավել լիարժեք իրացման համար:

Ոչ պակաս կարևոր է հանցագործության ականատեսի դատա-

---

<sup>1</sup> Տե՛ս **Анощенко С.В.** նույն տեղը էջ 19:

<sup>2</sup> Տե՛ս **Холоденко В.Д.** Обеспечение прав жертвы преступления на участие в уголовном преследовании // Актуальные вопросы обеспечения прав личности в уголовном судопроизводстве. Межвузовский сборник научных статей. Саратов: Изд-во ГОУ ВПО "Саратовская государственная академия права", 2005, էջ 34-45.

վարական վիճակի ճանաչմանը և ամրագրմանը վերաբերող հարցը<sup>1</sup>: Ներկայումս, ցավոք, օրենսդրորեն այդ հարցը որևէ կերպ լուծված չէ: Ականատեսը դիտվում է լոկ որպես պոտենցիալ վկա, ուստի և ենթադրվում է, որ անձը, որը դեռ ցուցմունքներ չի տվել և դրանով իսկ դեռ չի դարձել վկա, քրեական դատավարությանը մասնակցող անձին անհրաժեշտ որևէ իրավունքի կարիք չունի: Հետևաբար ականատեսը քրեական դատավարության մասնակից չի համարվում: Այդ պատճառով նրա վիճակը քրեական դատավարությունում չի սահմանվում: Թերևս, դա պայմանավորված է այն բանով, որ անձին վկա ճանաչելու համար չեն պահանջվում դատավարական հատուկ որոշումներ: ՀՀ քր. դատ. օր.-ի 86-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է. «Վկան ցուցմունքներ տալու նպատակով կողմի կամ քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից կանչված այն անձն է, ում կարող է հայտնի լինել տվյալ գործով պարզելու ենթակա որևէ հանգամանք»: Այսինքն, որպեսզի ականատեսը ձեռք բերի վկայի կարգավիճակ, հարկավոր է միայն դրա համար լիազորված պաշտոնատար անձը հրավիրի ցուցմունքներ տալու: Դրանով իսկ ականատեսը մշտապես առանց բյուրոկրատական քաշքշուկների, միայն այն բանի շնորհիվ, որ տեսել է, լսել կամ որևէ այլ կերպ ընկալել հանցագործության դեպքը կամ դրա հետ կապված հանգամանքները, ինչպես նաև քննիչի կամ դատարանի հրավիրելու դեպքում դառնում է վկա: Վկայի կարգավիճակ ստանալիս որևէ խոչընդոտի կամ բարդության բացակայությունն էլ թերևս պատճառ է դարձել, որ օրենսդ-

---

<sup>1</sup> Տե՛ս **Алексеев А.М.** Понятие свидетеля-очевидца, значение и особенности его показаний // Вопросы борьбы с преступностью. М.: Юрид. лит., 1969, Вып. 10, էջ 53-64; **Воробьева Е.В.** Очевидец преступления: понятие и виды // Акме. Сборник трудов молодых ученых. Саратов: СЮИ МВД России, 2008, Вып. 4, էջ 172-178; **Воробьева Е.В.** Очевидец как источник информации о преступлении // Научные труды РАЮН. В 3-х томах. М.: Юрист, 2009, Вып. 9, Т. 3, էջ 428-432; **Воробьева Е.В.** Общественный долг очевидца преступления // Современные проблемы юридической науки. Материалы V Международной научно-практической конференции молодых исследователей (Южно-Уральский государственный университет, 6-7 мая 2009 г.). Челябинск: ООО "Полиграф-Мастер", 2009, Ч. II. էջ 217-220; **Воробьева Е.В.** Свидетельский иммунитет очевидца преступления // Вестник Саратовской государственной академии права. Саратов: Изд-во СГАП, 2009, № 4 (68), էջ 103-107 և ուրիշներ:



րությունում որևէ կերպ չսահմանվի ականատեսի կարգավիճակը: Ըստ երևույթին, հենց դրանով է բացատրվում, որ երբեմն նույնիսկ իրավաբանական գրականության մեջ տարբերություն չի դրվում ականատեսի և վկայի միջև<sup>1</sup>: Այդուհանդերձ, այդպիսի տարբերություններ առկա են, քանի որ ականատեսը բնավ էլ ոչ միշտ կարող է դառնալ վկա (նա միանգամայն գիտակցաբար կարող է խուսափել դրանից, թաքցնելով, որ ականատես է եղել հանցագործությանը): Ցանկացած քրեական գործ քննելիս խնդիրներից մեկն այն է, որ նախ բացահայտվեն բոլոր անձինք, ովքեր քննվող դեպքի ականատեսն են եղել և երկրորդ, ցուցմունքներ տան, այսինքն՝ դառնան վկաներ: Սակայն որպեսզի հանցագործության յուրաքանչյուր ականատես շխուսափի ցուցմունքներ տալուց այն մասին, թե ինչ է իրեն հայտնի, անհրաժեշտ է այդ անձանց օժտել որոշակի կարգավիճակով, որը կերաշխավորի նրանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը քրեական դատավարությունում: Չէ՞ որ ականատեսների՝ ցուցմունքներ տալուց խուսափելու պատճառը հաճախ այն է, որ նրանց մեջ վախ կա իրենց և իրենց հարազատների համար, որի հիմքը օրենքի, հետևաբար և պետության կողմից պաշտպանված չլինելը գիտակցելն է: Առավել ևս, որ ականատեսների վրա հանցագործների կողմից ճնշում գործադրելու փաստերը

---

<sup>1</sup> Տե՛ս **Беджешев В.И., Селиванов Н.А.** Допрос потерпевших и свидетелей - очевидцев происшествия по делам о взрывах в промышленности, связанных с нарушением правил техники безопасности // Повышение эффективности деятельности органов прокуратуры, суда и юстиции в свете Конституции СССР 1977 года. Сборник научных трудов аспирантов и соискателей. М.: Изд-во Всесоюзного ин-та по изучению причин и разработке мер предупреждения преступности, 1980, էջ 128-132; **Степанец Б.С.** К вопросу о величине ошибок в показаниях участников и свидетелей-очевидцев дорожно-транспортного происшествия // Криминалистика и судебная экспертиза. Республиканский межведомственный сборник научных и научно-методических работ. Киев: Вища шк., 1970, Вып. 7, էջ 322-327; **Кавалиерис А., Маканс Л.** О возможностях использования гипноза при опросе потерпевших и свидетелей-очевидцев // Вестник криминалистики. М.: Спарк, 2009, № 1 (29), էջ 60-62; **Кондрусов Э.В.** Особенности допроса потерпевших и свидетелей-очевидцев при расследовании разбойных нападений на жилище, совершаемых организованными группами // Право и образование. М., 2007, № 12, էջ 168-174 և նրիշներ:

բավականին տարածված երևույթ են<sup>1</sup>: Ականատեսին դատավարական վիճակ շնորհելը հիմք կատեղծեր, որ պետությունը պաշտպաներ նրան կոնկրետ քրեական գործի ելքով շահագրգռված անձանց կողմից նրա վրա անօրինական ներգործությունից: Բացի այդ, կատեղծվեր հիմք նախ՝ հանցագործությունների քննությունը օպտիմալացնելու և երկրորդ՝ կոնկրետ քրեական գործերով արդարացի որոշումներ կայացնելու համար: Ուստի անհրաժեշտ է ականատեսին ճանաչել որպես քրեական դատավարության մասնակից և ամրագրել նրա դատավարական վիճակը ՀՀ քր. դատ. օր.-ի 10-րդ գլխում: Ընդ որում՝ ականատեսը պետք է օժտված լինի նույն իրավունքներով, ինչ վկան: Դա հնարավորություն կտա կանխելու հանցագործությունների ականատեսների վրա ներգործությունը և կապահովի ցուցմունքների ճշմարտացիությունը, որոնք անհրաժեշտ են քրեական գործը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննելու համար: Դա նաև թույլ կտա իրավական նախադրյալներ ստեղծել, որ պետությունը կարողանա պաշտպանել այդ անձանց նրանց վրա ոչ իրավաչափ ներգործություններից:

Տուժողների, զոհերի, վկաների և ականատեսների հետ մեկտեղ արդարադատությանն օժանդակող անձանց թվին պետք է դասել փորձագետներին և մասնագետներին: Կասկածից վեր է, որ այդ անձինք իրենց գործողություններով օժանդակում են արդարադատության իրականացմանը: Չէ՞ որ առանձին գործեր քննելիս առանց

---

<sup>1</sup> Տե՛ս **Бобраков И.А.** Воздействие преступников на свидетелей и потерпевших и криминалистические методы его преодоления. Автореф. дис. ... канд. юрид. наук - М., 1997. 22 із; **Макеева Н.В.** Нейтрализация противоправного воздействия, оказываемого на потерпевшего, свидетеля и иных участников уголовного судопроизводства в ходе предварительного расследования // Вестник Калининградского юридического института МВД России. Калининград: Изд-во Калинингр. ЮИ МВД России, 2007, № 1 (13), էջ 44-48; **Чернова Е.А.** Актуальные вопросы преодоления воздействия преступников на свидетелей и других участников уголовного процесса // Международные юридические чтения. Материалы ежегодной международной научно-практической конференции (14 апреля 2005 г.). Омск: Изд-во Омск. юрид. ин-та, 2005, Ч. 5, էջ 166-169; **Замылин Е.И.** Тактико-психологические особенности допроса потерпевших (свидетелей), подвергшихся неправомерному воздействию заинтересованных лиц // Адвокатская практика. М.: Юрист, 2007, № 2, էջ 22-25 և նրիշներ:

փորձագետի եզրակացության անհնար կլիներ արդարացի որոշում կայացնել: Համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի 85-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Փորձագետը քրեական գործով չշահագրգռված այն անձն է, որին քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ կամ փորձաքննություն նշանակելու մասին որոշման համապատասխան՝ նշանակում է փորձագիտական հաստատության ղեկավարը՝ գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի որևէ բնագավառում իր հատուկ գիտելիքներն օգտագործելով գործի նյութերը հետազոտելու և դրա հիման վրա եզրակացություն տալու համար»: Փորձագետի նշանակությունը քրեական դատավարության համար որոշվում է այն բանով, որ նրա տված եզրակացությունները, համաձայն 104-րդ հոդվածի, 2-րդ մասի, 6-րդ կետի, քրեական գործով սպացույց են: Արդարադատության համար հենց փորձագետի եզրակացության կարևորությունն էլ դրդում է, որ հանցագործները ցանկանան ներգործել նրանց վրա իրենց ձեռնտու փորձագիտական եզրակացություն տալու համար: Միանգամայն պարզ է, որ նմանօրինակ ներգործությունը կանխելու համար փորձագետը պետք է պաշտպանված լինի: Այսինքն՝ նա պետք է ընդգրկվի այն անձանց շրջանակի մեջ, որոնք պետության հատուկ պաշտպանության կարիքն ունեն իրենց նկատմամբ հնարավոր անօրինական ազդեցությունից: Չնայած այն բանին, որ փորձագետի իրավունքներն օրենսդրությամբ բավականին հստակ սահմանված են, սակայն քրեական դատավարությանը մասնակցող հիշյալ անձը պաշտպանության հատուկ միջոցների կարիք ունի, որոնք կիրառվում են արդարադատությանն օժանդակող անձանց նկատմամբ: Դա անհրաժեշտ է, որ ապահովվի կոնկրետ քրեական գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության կատարումը:

Արդարադատությանն օժանդակող անձանց շրջանակին պետք է դասել նաև մասնագետին: Նրա կարգավիճակը բավականաչափ ամբողջական սահմանված է Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրությունում: Ըստ ՀՀ քր. դատ. օր.-ի 84-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Մասնագետը քրեական գործով չշահագրգռված այն անձն է, որին քրեական վարույթն իրականացնող մարմինը նշանակում է իր նախաձեռնությամբ կամ կողմի միջնոր-

դությամբ՝ գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի բնագավառներում իր մասնագիտական հմտությունները և գիտելիքներն օգտագործելով աջակցելու քննչական կամ այլ դատավարական գործողություններ կատարելիս»։ Մասնագետի կարգավիճակը բավականին հստակ է սահմանված Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրությունում. սահմանված են մասնագետի իրավունքներն ու պարտականությունները։ Սակայն մասնագետի կարևորությունը քրեական դատավարությունում նրան և նրա դատավարական գործողությունները, այնպես, ինչպես փորձագետին, որոշ դեպքերում նրան դարձնում են անօրինական ներգործության օբյեկտ։ Դրանից խուսափելու համար անհրաժեշտ է պետության մակարդակով ապահովել մասնագետի պաշտպանությունը նմանատիպ անօրինական ներգործություններից։ Այսինքն՝ անհրաժեշտ է տալ մասնագետին լրացուցիչ երաշխիքներ դատավարական գործողություններն օբյեկտիվ ու անկախ իրականացնելու համար, որի կատարման պարտականությունը նրա վրա դրված է քրեադատավարական օրենսդրությամբ։

Արդարադատությանն օժանդակող անձանց շրջանակը բավականին լայն է։ Դա բացատրվում է նրանով, որ հիմնական չափանիշը, որով անձանց դասում են այդ շրջանակին, նրանց կողմից դատավարական գործողությունների իրականացումն է՝ ուղղված արդարադատության իրականացմանն օժանդակելուն։ Ըստ այդմ, լիովին հասկանալի է, որ դիտարկվող անձանց կատեգորիային կարելի է դասել անսահմանորեն մեծ թվով անձանց։ Ուստի և որոշ հեղինակներ արդարադատությանն օժանդակող անձանց թվում նշում են նաև պաշտոնատար անձանց, որոնք քրեական դատավարության մասնակիցներ են (օրինակ՝ դատախազը)<sup>1</sup>։ Այդպիսի դիրքորոշումը պայմանավորված է քրեական դատավարությանը մասնակցող բոլոր անձանց համար պետական պաշտպանություն ապահովելու ձգտումով<sup>2</sup>։ Բայց կարելի<sup>3</sup> է ասել, որ դատախազը, քննիչը, դատա-

---

<sup>1</sup> Տե՛ս **Арсений Л.** Прокурор содействует осуществлению правосудия // Закон и жизнь. Кишинев, 1999, № 1, էջ 9-10.

<sup>2</sup> Տե՛ս **Зайцев О.А.** Государственная защита участников уголовного процесса - М.: Экзамен, 2002, էջ 43-72.

վորն իրենց գործողություններով օժանդակում են արդարադատությանը, և օրինաչափ է այդպիսի պնդումը: Չէ՞ որ իրենց գործողություններով նշյալ պաշտոնատար անձինք արդարադատություն են իրականացնում: Այսինքն՝ նրանց գործողություններն ավելին են, քան օժանդակություն արդարադատությանը, նրանց գործողությունները հենց արդարադատություն են: Ուստի, կարծում ենք, չի կարելի դատախազին, քննիչին և դատավորին դասել արդարադատության իրականացմանն օժանդակողների թվին: Թեև դա բնավ էլ չի նշանակում, որ նշյալ անձինք չեն օգտվում պետական պաշտպանության միջոցներից, նրանց կամ նրանց մերձավորների նկատմամբ անիրավաչափ գործողությունների դեպքում: Սակայն հաշվի առնելով նշյալ անձանց դատավարական վիճակը, տվյալ միջոցները պետք է տարբերվեն տուժողների և վկաների նկատմամբ կիրառվողներից: Անհրաժեշտ է նշել, որ ոչ իրավաչափ ազդեցությունից նշյալ անձանց պաշտպանելու այդ միջոցները նախատեսված են օրենսդրությամբ, որը սահմանում է նրանց իրավական և դատավարական վիճակը:

ՀՀ դատական օրենսգրքի 84-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Դատավորը և նրա ընտանիքի անդամները գտնվում են պետության հատուկ պաշտպանության ներքո: Դատավորի, նրա ընտանիքի անդամների կամ նրա զբաղեցրած բնակելի և ծառայողական տարածքների անձեռնմխելիության նկատմամբ ոչ իրավաչափ ներգործության սպառնալիքի դեպքում դատավորի կամ դատարանի պահանջով իրավասու պետական մարմինները պարտավոր են անհապաղ ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դատավորի, նրա ընտանիքի անդամների և նրա զբաղեցրած բնակելի և ծառայողական շինությունների անվտանգությունն ապահովելու ուղղությամբ»:

Նման կարգավորում նախատեսված է նաև դատախազների համար: Ըստ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 38 հոդվածի 1-ին մասի. «Դատախազները, քննիչները, ինչպես նաև գլխավոր դատախազի որոշմամբ դատախազության մյուս աշխատողներն ունեն ծառայողական հրազեն և հատուկ միջոցներ ունենալու, կրելու, պահելու և կիրառելու իրավունք»:

Ինչպես տեսնում ենք, հիշյալ միջոցները նշյալ անձանց օրենքով սահմանված կարգավիճակի հետևանք են: Ընդ որում՝ այդ մի-

ջոցները, ունենալով արդարադատությանն օժանդակող անձանց պաշտպանությանն ուղղված համանման նպատակներ, այնուամենայնիվ տարբերվում են նրանցից այն բանով, որ չեն սահմանափակվում միայն մեկ քրեական գործի քննության շրջանակներով, և նման պաշտպանության անհրաժեշտությունը պայմանավորված է ոչ միայն այդպիսի մեկ գործի քննության առանձնահատկություններով: Դատավորը, դատախազը, քննիչը իրենց պարտականություններն իրականացնում են մշտապես՝ պայմանավորված բազմաթիվ քրեական գործերի վարույթով և դրանց վերաբերյալ մեծ թվով որոշումների կայացմամբ, ուստի նրանց նկատմամբ պետական պաշտպանության անհրաժեշտությունը պայմանավորված է իրենց աշխատանքային գործունեության առանձնահատկություններով, որը միայն մեկ քրեական գործով արդարադատության իրականացմամբ չի սահմանափակվում: Այդ ամենը հաշվի առնելով՝ չի կարելի դատավորին, քննիչին և դատախազին դասել արդարադատությանն օժանդակող անձանց թվին:

Ինչպես արդեն նշել ենք, մեղադրյալը, կասկածյալը նույնպես կարող են իրենց գործողություններով նպաստել արդարադատության իրականացմանը: Առանձին դեպքերում վերոնշյալ անձինք անկասկած կարող են ընտրել իրավապահական մարմինների հետ համագործակցության ռազմավարություն, ինչը կնպաստի արդարադատության առջև ծառայած խնդիրների լուծմանը: Հենց այդ փաստն է ստիպում քրեական դատավարության նշյալ մասնակիցներին դասել արդարադատությանն օժանդակողների շարքին: Այդ հանգամանքին երբեմն անդրադառնում են նաև իրավաբանական գրականության մեջ<sup>1</sup>: Չժխտելով մեղադրյալի, կասկածյալի ցուցմունքների արժեքավոր լինելու փաստը, ինչպես նաև ընդհանուր առմամբ իրավապահական մարմինների հետ համագործակցությանն ուղղված դիրքորոշման կարևորությունը կոնկրետ քրեական գործերով արդար որոշում կայացնելու հարցում, այնուամենայնիվ անհրաժեշտ է նշել, որ այդպիսի դիրքորոշում ընտրելը բնավ էլ նշյալ

---

<sup>1</sup> Տե՛ս **Левченко О.В.** Уголовно-процессуальные меры безопасности участников уголовного судопроизводства со стороны защиты, содействующих правосудию. Автореф. дис. ... канд. юрид. наук - М., 2008. 25 էջ:

անձանց պարտականությունը կամ քաղաքացիական պարտքը չէ: Մեղադրյալը, կասկածյալը կարող են ընտրել պաշտպանության համանման ռազմավարություն և մարտավարություն՝ առաջնորդվելով ամենատարբեր պատկերացումներով, որոնք կբխեն կոնկրետ քրեական գործի քննության ընթացքում ստեղծված իրավիճակի վերլուծությունից: Կասկածից վեր է, որ եթե նշյալ անձինք ընտրեն այդպիսի ռազմավարություն, անհրաժեշտ կլինի, որ նրանք պաշտպանվեն այլ անձանց (օրինակ՝ կատարված հանցագործության այլ մասնակիցների) կողմից իրենց վրա հնարավոր անցանկալի ազդեցությունից և ներգործությունից: Սակայն այդ դեպքում պաշտպանությունը ոչ թե նշյալ անձանց հատուկ կարգավիճակի հետևանք է, այլ իրավապահական մարմինների հետ համագործակցության հարցում նրանց որդեգրած դիրքորոշման արդյունք: Ընդ որում՝ իհարկե, մեղադրյալի, կասկածյալի այդպիսի դիրքորոշումը պետք է խրախուսվի իրավապահական մարմինների կողմից, և այդ անձինք պետք է ապահովված լինեն պետության պաշտպանությամբ: Այսինքն՝ նման անձանց պետական պաշտպանությունը պետք է դիտվի որպես իրավապահական մարմինների օրինաչափ, համարժեք արձագանք, որոնք պետք է շահագրգիռ լինեն կոնկրետ քրեական գործերի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության հարցում: Ընդ որում՝ նշյալ անձանց դատավարական վիճակը չի պարտավորեցնում նրանց համագործակցել իրավապահական մարմինների հետ: Նրանք իրավունք ունեն պաշտպանել իրենց շահերը այլ ձևերով ևս՝ օգտագործելով այլ միջոցներ, որոնք արգելված չեն օրենքով: Մասնավորապես, պաշտպանելով իրենց շահերը, նրանք կարող են տալ կեղծ ցուցմունքներ, քանի որ դրա համար քրեական պատասխանատվություն նրանց նկատմամբ նախատեսված չէ:

Մրցակցության սկզբունքը, որը ժողովրդավարական քրեական դատավարության հիմքն է, ենթադրում է, որ մեղադրանքի և պաշտպանության կողմերի շահերը չեն համընկնում, ինչը չի բացառում պաշտպանության կողմին այնպիսի փաստարկների օգտագործումը, որոնք ուղղված կլինեն կոնկրետ հանցագործությունը կատարելու մեջ իրականում մեղավոր անձանց քրեական պատասխանատվությունից ազատելու: Ակնհայտ է, որ դա նաև մեղադրյալի և կասկած-

յալի կարգավիճակի առանձնահատկությունների հետևանք է, ինչը ենթադրում է նրանց կողմից օրենքով տրված բոլոր իրավունքների կիրառում սեփական շահերը պաշտպանելու նպատակով: Ընդ որում՝ կասկածից վեր է մեղադրյալի, կասկածյալի նշյալ իրավունքները պաշտպանելու անհրաժեշտությունը: Սակայն այդ պաշտպանությունը էականորեն տարբերվում է արդարադատությանն օժանդակող անձանց պաշտպանությունից: Մեղադրյալը, կասկածյալը ևս կարող են օժանդակել արդարադատությանը, սակայն դա ոչ թե նրանց դատավարական վիճակի, այլ դիրքորոշման հետևանք կարող է լինել: Ընդհանուր առմամբ, անշուշտ մեղադրյալները, կասկածյալները, որոնք որոշել են մերկացնել իրենց հանցակիցներին կամ որևէ այլ կերպ օգնում են կատարված հանցագործությունների հանգամանքները պարզելուն, նույնպես պետք է դիտվեն որպես արդարադատությանն օժանդակող անձինք:

Չնայած այն բանին, որ օրենսդրությամբ բավականաչափ երաշխավորված են մեղադրյալների, կասկածյալների իրավունքներն ու օրինական շահերը, ինչպես նաև այն, որ բոլոր այդ անձանց (միայն նրանց դատավարական վիճակից ելնելով) հարկ չկա դասել արդարադատությանն օժանդակող անձանց շարքին, այնուամենայնիվ անհրաժեշտ է այդ կանոնից բացառություն անել: Այդ շարքին պետք է դասել այն մեղադրյալներին, կասկածյալներին, ովքեր համագործակցում են իրավապահական մարմինների հետ և, նշանակում է, օժանդակում են արդարադատությանը: Ալնիայտ է, որ նման անձինք կարող են դառնալ ներգործության առարկա նրանց կողմից, որոնց ձեռնտու չէ արդարացի դատավճռի կայացումը: Այդպիսի իրավիճակներ կարող են ստեղծվել այն հանցագործությունների քննության և դատական քննության ժամանակ, որոնք կատարվել են անձանց խմբի, ինչպես նաև կազմակերպված հանցավոր խմբավորման կողմից: Նմանօրինակ ցուցմունքների արժեքավոր լինելը կասկածից վեր է, ուստի և դրանք հաճախ դառնում են առավել նշանակալի տարր կոնկրետ քրեական գործով ապացույցների համակարգում: Ընդ որում՝ այս պարագայում խոսքը ոչ այնքան մեղադրյալի, կասկածյալի կողմից իր մեղքն ընդունելու մասին է, ինչի վերա-



բերյալ իրավաբանական գրականությունում շատ է գրվել<sup>1</sup>, որքան մեղադրյալի կողմից այնպիսի ցուցմունքներ տալու, որոնք լիարժեքորեն կվերարտադրեն այն հանցագործության պատկերը, որը դարձել է հետազոտության առարկա նախաքննության և դատական քննության ընթացքում: Այդպիսի ցուցմունքներին բնորոշ է այն, որ նախաքննության մարմինն ու դատարանը ստանում են տեղեկություններ, որոնք չէին կարող նրանց հայտնի դառնալ գործում առկա այլ ապացույցներից: Այդպիսի կասկածյալներին, մեղադրյալներին անհրաժեշտ է պետական պաշտպանություն<sup>2</sup>: Այսինքն՝ նրանք այնպիսի երաշխիքների համակարգի կարիք ունեն, որը կապահովի նրանց անվտանգությունը հնարավոր հանցավոր ներգործությունից: Երաշխիքների նշյալ համակարգը պետք է տարբերվի այն երաշխիքներից, որոնք նախատեսված են բոլոր կասկածյալների, մեղադրյալների համար: Կասկածյալների, մեղադրյալների համար նախատեսված այդ երաշխիքներն անհրաժեշտ է դիտել որպես լրացուցիչ, քանի որ դրանք լրացնում են այն երաշխիքները, որոնք նախատեսված են օրենքով բոլոր կասկածյալների, մեղադրյալների

---

<sup>1</sup> Տե՛ս **Соловьев А.Д.** Признание обвиняемого (подозреваемого) и его значение для установления истины по уголовному делу // Труды Киевской высшей школы МВД СССР. Киев: НИиРИО КВШ МВД СССР, 1969, Вып. 2, էջ 98-121; **Строгович М.С.** Признание обвиняемым своей вины в качестве судебного доказательства // Советское государство и право. М.: Наука, 1982, № 4, էջ 68-74; **Рахунов Р.Д.** Доказательственное значение признания обвиняемого по советскому уголовному процессу // Советское государство и право. М.: Наука, 1956, № 8, էջ 34-43; **Строгович М.С.** Признание обвиняемым своей вины как судебное доказательство // Суд и применение закона. М.: Изд-во ИГиП АН СССР, 1982, էջ 16-26; **Халиулин А.Г.** Признание обвиняемым своей вины: проблема компромисса: Компромисс как эффективное средство в борьбе с преступностью. Проблемы совершенствования квалификации прокурорско-следственных работников // Актуальные проблемы прокурорского надзора: Компромисс как эффективное средство в борьбе с преступностью. Проблемы совершенствования квалификации прокурорско-следственных работников. Сборник статей. М.: Изд-во ИПК РК Генеральной прокуратуры РФ, 2000, Вып. 4, էջ 49-56 և նրիշներ:

<sup>2</sup> Տե՛ս **Гуськова А.П., Неретин Н.Н.** Спорные моменты вопроса обеспечения личной безопасности обвиняемого, содействующего предварительному следствию по уголовному делу // Российский судья. М.: Юрист, 2008, № 7, էջ 31-33; **Левченко О.В.** Обеспечение личной безопасности обвиняемого, содействующего уголовному судопроизводству // Российский следователь. М.: Юрист, 2007, № 15, էջ 6-8.

համար՝ որպես քրեական դատավարության մասնակիցների: Այդ մեղադրյալների (կասկածյալների) համար պետք է ստեղծվի նաև նրանց անվտանգությունն ապահովող միջոցների համակարգ: Սակայն դա պետք է տարբերվի այն միջոցներից, որոնք պետք է երաշխավորեն տուժողների ու վկաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Այդ միջոցների առանձնահատկությունը պետք է լինի մեղադրյալի (կասկածյալի) դատավարական վիճակը հաշվի առնելը:

Վերը թվարկված անձանցից բացի արդարադատությանն անկասկած օժանդակում են քրեական դատավարության այլ մասնակիցներ ևս: Մասնավորապես, այդ անձանց թվին կարելի է դասել ընթերականերին և թարգմանիչներին: Ճիշտ է, հարկ է նշել, որ նրանց վրա գործի ելքով շահագրգռված անձանց կողմից անիրավաչափ ներգործության դեպքերն այնքան էլ հաճախադեպ չեն կարող լինել, ինչպես, օրինակ, վկաների և տուժողների վրա անօրինական ներգործության դեպքերը: Սակայն հաշվի առնելով, որ քրեական դատավարության այդ մասնակիցները ևս պակաս դեր չունեն ապացուցողական բազան ձևավորելու հարցում, կարելի է ենթադրել այնպիսի իրավիճակի ստեղծման հավանականությունը, երբ գործի ելքով շահագրգռված անձինք կարող են ներգործել նրանց վրա: Այդպիսի իրավիճակ առաջանալու հնարավորությունը կանխելու համար անհրաժեշտ է օրենսդրական մակարդակով ձեռնարկել այդ անձանց պետական մակարդակով պաշտպանելու միջոցներ: Ներկայումս Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսգրքում այդ անձանց կարգավիճակը սահմանված է բավականին հստակ: Այսպես՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 81-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է. «Ընթերական քրեական գործով չշահագրգռված՝ Հայաստանի Հանրապետության չափահաս քաղաքացին է, որին քրեական հետապնդման մարմինը հրավիրում է մասնակցելու քննչական գործողության կատարմանը՝ հաստատելու համար դրա կատարման փաստը, բովանդակությունը, ընթացքը և արդյունքները»: Իսկ ՀՀ քր. դատ. օր.-ի 83-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված է. «Թարգմանիչը քրեական գործով չշահագրգռված այն անձն է, որին քրեական վարույթն իրականացնող մարմինը հրավիրում է թարգմանություն իրականացնելու համար»: Այդ ան-

ձանց իրավունքներն ու պարտականությունները բավականաչափ ամբողջական ու մանրամասն սահմանված են Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսգրքի վերոնշյալ նորմերում, ինչպես նաև այլ երկրների քրեադատավարական օրենսգրքերում: Այդ առումով կարելի է հաստատել, որ նշյալ անձանց դատավարական վիճակը բավականին հստակ սահմանված է քրեադատավարական օրենսդրությամբ: Նրանք դասվել են քրեական դատավարությանը մասնակցող այլ անձանց շարքին: Սակայն օրենսդրությունը ոչ ամբողջովին է հաշվի առել այսօրվա իրողությունները, մասնավորապես գործի ելքով շահագրգռված առանձին անձանց ձգտումը՝ ներգործելու քրեական դատավարության բոլոր մասնակիցների վրա՝ հանուն որոշակի արդյունքի, որը բխում է իրենց շահերից: Առավել հաճախ նմանօրինակ ներգործություն լինում է կազմակերպված հանցավոր խմբավորումների կողմից: Դրանից կարելի է եզրակացնել, որ անհրաժեշտ են քրեական դատավարության վերոնշյալ մասնակիցների իրավունքների լրացուցիչ երաշխիքներ:

Ընթերակայի լրացուցիչ երաշխիքների օրենսդրական կարգավորման բարդությունները պայմանավորված են այն բանով, որ իրավաբանական գրականության մեջ պարբերաբար արծարծվում է քրեական դատավարության այդ մասնակցի անհրաժեշտության մասին հարցը<sup>1</sup>: Քանի որ նա դատավարության պրոֆեսիոնալ մասնակից չէ, չունի իր շահը, ինչպես, օրինակ, տուժողը կամ մեղադրյալը,

---

<sup>1</sup> Տե՛ս **Антипенко А.А.** Понятой - дань времени или необходимость // Актуальные проблемы криминалистической науки и практики: Сборник материалов Всероссийской научно-практической конференции. 21 декабря 2009 г. Калининград: Изд-во Калинингр. ЮИ МВД России, 2010, էջ 161-165; **Михайлов А.** Институт понятых - архаизм российского уголовного судопроизводства // Законность. М., 2003, № 4, էջ 29-31; **Харисов И.Ф.** Ликвидация института понятых как элемент антикоррупционной политики // Проблемы современного российского общества: содержание и пути решения. Материалы региональной научно-практической конференции, 3 мая 2007 г.. Казань: Таглитат, 2007, էջ 178-179; **Магизов Р.Р., Харисов И.Ф.** Роль понятого в лоббировании коррупционных интересов должностных лиц, осуществляющих предварительное расследование // Противодействие коррупции: проблемы и перспективы реализации региональной антикоррупционной политики. Материалы межвузовского научно-практического семинара 7 декабря 2007 года. Казань: ЗАО "Новое знание", 2008, էջ 90-97; **Селезнев М.** Понятой или свидетель? // Законность. М., 1998, № 1, էջ 35-38:

ուստի իրավակիրառ պրակտիկայում նա կրավորական դեր ունի: Ավելին, իրավապահական մարմինները մշտապես դժվարությունների են հանդիպում քրեական դատավարությունում քաղաքացուն որպես ընթերակա ներգրավելիս<sup>1</sup>: Ընթերականերն անտարբեր են քննչական գործողությունների նկատմամբ, որոնց մասնակցում են, ինչը խանգարում է, որ նրանք իրենք հավաստիանան համապատասխան արձանագրություններում իրենց ճիշտ գրանցման հարցում: Գ-ա որոշ դեպքերում հիմք է դառնում իրավապահական մարմինների առանձին պաշտոնատար անձանց կամայականությունների համար, երբ համապատասխան քննչական գործողության ընթացքը արձանագրությունում միտումնավոր խեղաթյուրվում է: Այդ ամենը անշուշտ ստիպում է մտորել այն մասին, թե ինչպես կատարելագործել ընթերակայի ինստիտուտը քրեական դատավարությունում, ինչպիսի իրավունքներով պետք է օժտել ընթերակային, ինչպիսի լրացուցիչ երաշխիքներ տրամադրել նրան, որպեսզի նա ձևական կարգավիճակ չունենա, որն անհրաժեշտ է միայն արձանագրության վերջում իր ստորագրությունը դնելու համար՝ խորամուխ չլինելով, թե ինչի համար է ստորագրում: Ընթերակայի համար անհրաժեշտ է ստեղծել այնպիսի պայմաններ, ապահովել այնպիսի կարգավիճակ, որոնց առկայությամբ նա կարողանա ոչ ձևականորեն լուծել քրեադատավարական օրենսդրությամբ իր վրա դրված խնդիրները: Այսինքն՝ լիովին պարզ է, որ տվյալ ինստիտուտը կատարելագործման կարիք ունի<sup>2</sup>: Նա ինչ-որ չափով նմանվում է վկային, և դա նույնպես որոշ

---

<sup>1</sup> Տե՛ս **Арабули Д.Т.** Некоторые проблемы привлечения лица в качестве понятого в уголовном процессе // Вестник Челябинского государственного университета. Челябинск: Изд-во ЧелГУ, 2005, № 1, էջ 139-143; **Шевчук И.В.** К вопросу о подборе понятых при предъявлении для опознания живых лиц // Теоретические и практические проблемы экспертно-криминалистической деятельности. Материалы Всероссийской научно-практической конференции, г. Тюмень, 7-8 апреля 2004 г. Тюмень: Изд-во Тюмен. юрид. ин-та МВД РФ, 2004, էջ 77-78; **Ванюшина К.Л.** Проблема поиска понятых // Проблемы современного российского права. Материалы международной научно-практической конференции студентов и молодых ученых, посвященной памяти Ивана Яковлевича Дюрягина (4-5 мая 2007 г.). Челябинск: Полиграф-Мастер, 2007, Ч. 1, էջ 347-350.

<sup>2</sup> Տե՛ս **Лошкарев В.В., Маслаков А.В.** Отдельные аспекты целесообразности реформирования института понятых в российском законодательстве // Проблемы теории и юридической практики в России. Материалы 3-й международной научно-практической конференции молодых ученых, специалистов и студентов,

հարցեր է ծնում. արդյոք ընթերական վկա չէ՞, հետևաբար կարիք չկա՞ նրան օժտելու այնպիսի իրավունքներով ու պարտականություններով, ինչպիսիք ունի վկան<sup>1</sup>: Ընդ որում՝ ակնհայտ է, որ ընթերական անհրաժեշտ է քրեական դատավարությանը, քանի որ նա ի գործ է սահմանափակելու իրավապահպան մարմինների պաշտոնատար անձանց կամայականությունները: Ընթերակայի ինստիտուտը քաղաքացիների իրավունքների և ազատությունների լրացուցիչ երաշխիք է քրեական դատավարությունում, այն անհրաժեշտ պայմաններ է ստեղծում քրեական դատավարության բազմաթիվ սկզբունքների (մրցակցության, հրապարակայնության և այլն) գործողության համար<sup>2</sup>: Ուստի լիովին հասկանալի է պատճառը, թե ինչու են գործի որոշակի ելքով շահագրգռված առանձին անձինք ձգտում ներգործել նրա վրա, այդ թվում՝ գործի դներով անօրինական մեթոդներ և միջոցներ: Ըստ այդմ՝ ընթերակային անհրաժեշտ են անվտանգության լրացուցիչ երաշխիքներ, որպեսզի նա կարողանա իրականացնել այն խնդիրները, որոնք դրված են նրա վրա քրեադատավարական օրենսդրությամբ:

---

2-3 марта 2006 г.. Самара: Изд-во Самар. гос. экон. ун-та, 2006, էջ 92-94; **Пархоменко И.В.** Проблемы института понятых и вопрос об эффективности его существования // Обеспечение законности в российском уголовном судопроизводстве. Материалы Международной научно-практической конференции (Саранск, 7 - 8 декабря 2006 г.). Саранск: Мордов. кн. изд-во, 2006, էջ 311-315; **Белоусов А.В.** О необходимости изменений в институте понятых // Прокурорская и следственная практика. Орган генеральных прокуроров стран СНГ. М., 2000, № 3-4, էջ 101-106; **Чухахин Р.** Институт понятого в уголовном процессе нуждается в совершенствовании // Следователь. Федеральное издание. М., 2003, № 4, էջ 12-13; **Сторожева А.Н.** К вопросу о совершенствовании института понятых в уголовном судопроизводстве // Актуальные проблемы борьбы с преступностью в Сибирском регионе. Сборник материалов международной научно-практической конференции памяти д.ю.н. профессора В.И. Горобцова (10-11 февраля 2005 г.). Красноярск: Изд-во Сиб. юрид. ин-та МВД России, 2005, Ч. 2, էջ 127-131.

<sup>1</sup> Տե՛ս **Селезнев М.** Понятой или свидетель? // Законность. М., 1998, № 1, էջ 35-38.

<sup>2</sup> Տե՛ս **Францифорова С.Ю.** Институт понятых - важная гарантия прав личности при производстве следственных действий дознавателем и следователем // Проблемы предварительного расследования в органах дознания: Материалы научно-практического семинара. М., Саратов: ГОУ ВПО РПА Минюста России, 2009, էջ 74-78; **Ретунская Т.П.** Проблемы собирания и оценки доказательств. Участие в следственных действиях понятых как гарантия надежности фиксации доказательств // Закон и право. М.: ЮНИТИ-ДАНА, 2007, ? 9, էջ 24-28.

Արդարադատության համար քրեական դատավարության ոչ պակաս կարևոր մասնակից է թարգմանիչը: Նրանից է կախված, թե որքանով ճիշտ կկատարվի թարգմանությունը, ինչը կարող է ազդել արդարացի որոշում կայացնելու վրա: Թեև թարգմանչի կարգավիճակը բավականին լավ է սահմանված Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրությունում և այլ երկրների օրենսդրություններում<sup>1</sup>, սակայն պետք է նշել, որ առկա են բազմաթիվ խնդիրներ, որոնք ծագում են քրեական դատավարության պրակտիկայում: Մասնավորապես, դրանցից է թարգմանչի և մասնագետի<sup>2</sup> դատավարական վիճակի հարաբերակցության հարցը: Բացի այդ՝ առկա են նաև այլ խնդիրներ, որոնք վերաբերում են իրավունքների և պարտականությունների այն շրջանակին, որոնցով պետք է օժտված լինի թարգմանիչը: Այդ խնդիրները ծագում են ժամանակակից իրողությունների ու պահանջների համատեքստում, որոնք հասարակությունը առաջադրում է ընդհանրապես քրեական

---

<sup>1</sup> Տե՛ս **Саркисянц Г.П.** Переводчик в советском уголовном процессе / Отв. ред.: Агзамходжаев А.А. Ташкент: Фан, 1974. 90 էջ; **Щерба С.П.** Переводчик в российском уголовном процессе. Научно-практическое пособие - М.: Экзамен, 2005. 416 էջ; **Кузнецов О.Ю.** Переводчик в российском уголовном судопроизводстве. Монография - М.: Изд-во МПИ ФСБ России, 2006. 256 էջ; **Имамугдинова Г.Я.** Переводчик в уголовном процессе // Современные проблемы юридической науки. Материалы III Всероссийской с международным участием научно-практической конференции молодых исследователей, 26-28 апреля 2007 г.. Челябинск: Полиграф-Мастер, 2007, Ч. 2, էջ 174-177; **Головинская Е.П.** Правовое положение переводчика в уголовном судопроизводстве: Правовая защита в России. Обеспечение, эффективность и проблемы // Трибуна молодых ученых: Правовая защита в России. Обеспечение, эффективность и проблемы. Сборник научных трудов. Воронеж: Изд-во Воронеж. гос. ун-та, 2005, Вып. 7, էջ 43-53 և նրիշներ:

<sup>2</sup> Տե՛ս **Шевелев И.А.** К вопросу соотношения процессуальных статусов переводчика и специалиста // Проблемы правопонимания и правоприменения: теория и практика. Материалы межрегиональной научно-практической конференции, г. Волжский, 16-17 мая 2008 г.. Волжский: Изд-во ВолГУ, 2008, Ч. 2, էջ 137-141; **Шевелев И.А.** Общее и особенное в процессуальном положении переводчика и специалиста // Вестник Саратовской государственной академии права. Саратов: Изд-во СГАП, 2007, № 4 (56), էջ 197-199; **Куликов А.В., Новиков А.В.** Соотношение процессуального положения специалиста, психолога, педагога и переводчика в уголовном судопроизводстве России // Российский судья. М.: Юрист, 2007, № 1, էջ 32-34 և նրիշներ:

դատավարությանը<sup>1</sup>: Թարգմանչի գործունեությունը դատավարության «լեզվին» չտիրապետող անձանց իրավունքների ու օրինական շահերի երաշխիք է: Քննության և դատական քննության արդարացիությունը մեծապես կախված է թարգմանության ճշտությունից: Այդ առումով ճիշտ թարգմանությունն արդարացի դատավճիռ կայացնելու բազմաթիվ երաշխիքներից մեկն է, իսկ թարգմանիչը երաշխավորում է քրեական դատավարությանը մասնակցող անձանց իրավունքներն ու օրինական շահերը<sup>2</sup>: Դա լավ են հասկանում այն անձինք, ովքեր շահագրգռված են ոչ արդարացի որոշման համար և ցանկանում են, որ այդ որոշումը լինի հօգուտ իրենց: Ուստի բացառված չէ անօրինական ներգործության հնարավորությունը թարգմանիչների վրա: Ըստ այդմ՝ քրեական դատավարության այդ մասնակիցը լրացուցիչ երաշխիքների կարիք ունի, որոնք սահմանված պիտի լինեն օրենսդրորեն: Մասնավորապես, այդպիսի երաշխիքներից մեկը պետության կողմից նրա անվտանգությունն ապահովելն է<sup>3</sup>:

Քրեական դատավարության մասնակիցների վերը թվարկած ցանկը, որը կարելի է դասել քրեական դատավարությանն օժանդակող անձանց շարքին, չի կարելի սահմանափակել: Դա պայմանավորված է այն բանով, որ հիմնական չափանիշը, որով անձը դասվում է անձանց տվյալ խմբին, օժանդակությունն է, որը ցուցաբերում է

---

<sup>1</sup> St'u **Терехин В.В.** Положение переводчика как участника уголовного судопроизводства требует дополнительной регламентации // Вестник Гуманитарного института. М.: Изд-во Гуманит. ин-та, 2007, № 2 (8), էջ 18-22; **Алексеева Е.С.** Проблемы участия переводчика в уголовном судопроизводстве // "Черные дыры" в Российском Законодательстве. Юридический журнал. М.: "ИК-Пресс", 2007, № 3, էջ 334-335.

<sup>2</sup> St'u **Ширеторова Л.П.** Участие переводчика в уголовном судопроизводстве как уголовно-процессуальная гарантия прав иностранных граждан // Научные труды РАЮН. В 3-х томах. М.: Юрист, 2008, Вып. 8 Т. 3, էջ 862-865; **Хегай Е.И.** Участие переводчика при допросе как обеспечение охраны прав личности // Сибирские криминалистические чтения. Сборник научных трудов. Иркутск: Изд-во БГУЭП, 2002, Вып. 15, էջ 97-103.

<sup>3</sup> St'u **Головинская Е.П.** Проблема гарантий государственной защиты переводчика в уголовном процессе: Административная реформа в России: политико-правовое и управленческое измерение // Правовая наука и реформа юридического образования: Административная реформа в России: политико-правовое и управленческое измерение. Сборник научных трудов. Воронеж: Изд-во Воронеж. ун-та, 2004, Вып. 16, էջ 67-81:

քրեական դատավարության համապատասխան մասնակիցը՝ արդարադատության նպատակներն իրագործելու համար: Գ-ա, մասնավորապես, երևում է ՀՀ քր.դատ. օր.-ի 98-րդ հոդվածից, որի համաձայն՝ «Քրեական դատավարությանը մասնակցող յուրաքանչյուր անձ, ով կարող է հաղորդել տվյալներ, որոնք նշանակություն ունեն հանցագործությունը բացահայտելու և դրա կատարողին հայտնաբերելու համար, ինչի հետևանքով կարող են վտանգվել նրա, նրա ընտանիքի անդամի, մերձավոր ազգականի կամ մերձավորի կյանքը, առողջությունը, գույքը, իրավունքներն ու օրինական շահերը, ունի պաշտպանության իրավունք»: Վերոնշյալ անձանց այդ խմբին դասելը հետապնդում է հետևյալ նպատակները. մախ՝ ստեղծել պայմաններ, որպեսզի այդ անձինք համագործակցեն իրավապահական մարմինների հետ, երկրորդ՝ զերծ պահել նրանց այն անձանց կողմից բացասական ներգործության վտանգից, որոնք շահագրգռված են քրեական գործի միանգամայն որոշակի ելքով: Անձին ներգրավելով այդ խմբի մեջ՝ պետությունը ձգտում է ոչ միայն անվտանգ դարձնելու իրավապահական մարմինների հետ համագործակցությանն ուղղված գործունեությունը, այլև դրա համար ստեղծելու բարենպաստ պայմաններ: Ուստի և չի կարելի նշյալ անձանց իրավունքների ու օրինական շահերի լրացուցիչ երաշխիքները հանգեցնել միայն նրանց անվտանգության ապահովմանը: Լրացուցիչ երաշխիքները պետք է ներառեն նաև նշյալ անձանց լրացուցիչ իրավունքներ տալը, ինչպես նաև այն միջոցները, որոնք լրացուցիչ կերաշխավորեն նշյալ անձանց կողմից այն իրավունքների ու օրինական շահերի իրացումը, որոնցով նրանք օժտված են որպես քրեական դատավարության մասնակիցներ: Յավոք, շատ երկրների օրենսդիրներ արդարադատությանն օժանդակող անձանց հիմնախնդիրը հանգեցնում են լոկ նրանց անձնական և մերձավոր ազգականների անվտանգությանը: Այդպիսի մոտեցումը, կարծում ենք, սխալ է, քանի որ օրենսդրությունը ոչ միայն պետք է պաշտպանի այն անձանց, որոնք ձգտում են համագործակցել իրավապահական մարմինների հետ՝ հանուն արդարադատության հաղթանակի, այլև ստեղծել որոշակի պայմաններ, որպեսզի այդ անձինք կարողանան ազատորեն պաշտպանել իրենց իրավունքները՝ ուղղված յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործով



արդար որոշում կայացնելուն: Ընդ որում՝ կարծում ենք, որ անվտանգության միջոցները, որոնք կարող են ձեռնարկվել պետության կողմից այդ անձանց համար, կարող են լինել պակաս արդյունավետ, քան ակնկալվում է, եթե շաղկապված չլինեն նշյալ անձանց մյուս իրավունքների և օրինական շահերի հետ: Բացի այդ՝ ակնհայտ է, որ նշյալ անձինք պետք է օժտված լինեն և՛ լրացուցիչ իրավունքներով, և՛ միջոցներով, որոնք կերաշխավորեն այդ իրավունքները: Դա անհրաժեշտ է, որ վերոնշյալ անձինք կարողանան պաշտպանել ոչ միայն սեփական իրավունքներն ու շահերը, այլև ճշմարտության շահերը, որը նրանց հայտնի է, և որն անհրաժեշտ է արդարացի որոշումներ կայացնելու համար: Դա անհրաժեշտ է նաև, որ մրցակցության սկզբունքը գործի անշեղորեն:

Բազմաթիվ երկրներում արդարադատությանն օժանդակող անձանց անվտանգությունն ապահովվում է հատուկ ընդունված օրենսդրական ակտերով: Այդ մոտեցումը լիովին արդարացրել է իրեն: Սակայն այդ օրենսդրության զարգացումը չպետք է դուփի տեղում, այն պետք է ժողովրդավարությանն ու մարդասիրությանը զուգեռ նոր որակներ ձեռք բերի: Առավել ևս, որ առկա են շատ լուրջ մեղադրանքներ անվտանգությունն ապահովող միջոցների հասցեին: Դրանց էությունն այն է, որ պետությունը ապահովելով քրեական դատավարության մասնակիցների մի մասի անվտանգությունը, վտանգում է մյուսների իրավունքներն ու օրինական շահերը: Իրականում գոյություն ունեցող այդ հիմնախնդիրը հաղթահարել հնարավոր է միայն արդարադատությանն օժանդակող անձանց լրացուցիչ երաշխիքներով օժտելու համալիր մոտեցման դեպքում: Ըստ այդմ՝ օրենսդրությունը չպետք է սահմանափակվի միայն նշյալ անձանց համար նախատեսված անվտանգության միջոցների կանոնակարգմամբ, այլ նաև պետք է ապահովի նրանց այնպիսի իրավունքներով, որոնք անհրաժեշտ են նրանց՝ որպես քրեական դատավարությանը մասնակցող անձանց, և որոնք ներդաշնակ են այլ անձանց իրավունքներին և օրինական շահերին:

Արդարադատությանն օժանդակող անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությանն ուղղված երաշխիքների ստեղծումը շատ երկրների օրենսդրության զարգացման միտումնե-

րից է, որոնք ձգտում են ստեղծել հավասար պայմաններ քրեական դատավարությանը մասնակցող բոլոր անձանց համար: Ընդ որում՝ լիովին հասկանալի է պետության ձգտումը՝ առավելագույնս պաշտպանելու իր քաղաքացիներին ցանկացած հանցավոր ոսնձգությունից: Դա հնարավոր է միայն հանցավորությանն արդյունավետ դիմակայելու դեպքում, եթե յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործ քննելիս բացահայտվեն կատարված հանցագործության բոլոր հանգամանքները: Հիշյալ միտումն է նկատվում նաև ԱՊՀ երկրների օրենսդրություններում: Սակայն այդ երկրներում օրենսդրությունը զարգանում է տարբեր կերպ: Այսպես՝ կարելի է առանձնացնել արդարադատությանն օժանդակող անձանց իրավունքների ու օրինական շահերի ապահովմանն ուղղված նորմատիվ բազայի ստեղծման երկու ուղի: Առաջինը քրեական դատավարությանը մասնակցող ուրշակի կատեգորիայի անձանց պաշտպանությանն ուղղված առանձին օրենքների ընդունումն է: Երկրորդը՝ գործող քրեադատավարական օրենսգրքերում համապատասխան նորմեր ներառելը: Առաջին ճանապարհով զարգանում է օրինակ, Ռուսաստանի Դաշնության օրենսդրությունը, երկրորդով՝ Հայաստանի Հանրապետության: Այսպես՝ Ռուսաստանի Դաշնությունն ընդունել է «Տուժողների, վկաների և քրեական դատավարության այլ մասնակիցների պետական պաշտպանության մասին» ՌԴ օրենքը: Հայաստանի Հանրապետությունում համապատասխան նորմեր են ներառվել քրեադատավարական օրենսգրքում: Երկու ուղղություններն էլ ունեն առավելություններ և թերություններ: Սակայն կարծում ենք, քրեադատավարական օրենսգրքում արդարադատությանն օժանդակող անձանց անվտանգության մասին նորմեր ներառելն ավելի մասխընտրելի է քրեական դատավարության շահերի տեսանկյունից, քանի որ ապահովում է համալիր մոտեցում համապատասխան խնդիրների լուծմանը: Վերոնշյալ խնդիրները համալիր լուծելու անհրաժեշտությանն ուշադրություն են դարձնում նաև իրավագետներից շատերը: Այսպես՝ Ե. Ա. Կարյակինն ու Օ. Ն. Տիստենը գրում են. «Քրեական դատավարության մասնակիցների արդյունավետ պաշտպանությունը հնարավոր է միայն օրենսդրական նոր-

մերի համալիր կիրառման դեպքում...»<sup>1</sup>: Նորմերի այդպիսի համալիր կիրառումը նպաստում է՝ դրանք քրեական դատավարության օրենսգրքում ներառելով: Այդ դեպքում նշյալ նորմերը դառնում են միասնական օրենքի անբաժանելի մասը, ուստի և ներդաշնակորեն զուգակցվում են օրենքում ներառված մյուս նորմերի հետ: Ընդ որում՝ պայմաններ են ստեղծվում հնարավոր հակասությունները հաղթահարելու համար, որոնք անխուսափելի են, եթե այդ նորմերը ներառվեն տարբեր նորմատիվ-իրավական ակտերի մեջ:

Արդարադատությանն օժանդակող անձանց անվտանգությունն ապահովելու մասին նորմը քրեադատավարական օրենսգրքում ներառելու դրական կողմն այն է, որ այդ դեպքում դա կարելի է դիտարկել այլ նորմերի հետ միասնության մեջ, որոնք ապահովում և երաշխավորում են վերոնշյալ անձանց իրավունքներն ու շահերը: Այսինքն՝ այդպիսի նորմերը արդեն ընկալվում են որպես միասնական համակարգ, որը կոչված է ապահովելու նշյալ անձանց կարգավիճակը և կարող է երաշխավորել նրանց իրավունքներն ու ազատությունները քրեական դատավարությունում: Հենց այդպիսի վերաբերմունքն էլ նպաստում է քրեական դատավարության նշյալ մասնակիցների նկատմամբ հարգանքի արմատավորմանն ու տարածմանը, ինչը կխթանի նաև արդարադատության արդյունավետության բարձրացմանը յուրաքանչյուր քրեական գործի քննության ու դատական քննության ժամանակ: Ցավոք, պետք է նշել, որ ՀՀ քր. դատ. օր.-ում չի խոսվում արդարադատությանն օժանդակող անձանց պետական պաշտպանության մասին: Այստեղ կիրառվում է ավելի ընդհանուր եզրույթ՝ «քրեական դատավարությանը մասնակցող անձինք»: Թեև ՀՀ քր. դատ. օր.-ի 98-րդ հոդվածի 1-ին մասից երևում է, որ խոսքը, այնուամենայնիվ, արդարադատության իրականացմանն օժանդակող անձանց մասին է, քանի որ սահմանված է. «Քրեական դատավարությանը մասնակցող յուրաքանչյուր անձ, ով կարող է հաղորդել տվյալներ, որոնք նշանակություն ունեն հանցագործությունը բացահայտելու և դրա կատարողին հայտնաբերելու

---

<sup>1</sup> Տե՛ս **Карякин Е.А., Тиссен О.Н.** Особенности доказывания в условиях применения мер государственной защиты участников уголовного судопроизводства. М.: Издательство «Юрлитинформ», 2008, էջ 89.

համար, ինչի հետևանքով կարող են վտանգվել նրա, նրա ընտանիքի անդամի, մերձավոր ազգականի կամ մերձավորի կյանքը, առողջությունը, գույքը, իրավունքներն ու օրինական շահերը, ունի պաշտպանության իրավունք»։ Այսինքն՝ խոսքը քրեական դատավարությանը մասնակցող այն անձանց մասին է, որոնք կարող են տեղեկություններ հայտնել, որոնք նշանակություն ունեն հանցագործությունը բացահայտելու և հանցագործին հայտնաբերելու համար։ Հոդվածի ներկա անվանումը (քրեական դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանությունը), կարծում ենք, չի արտացոլում նրա էությունը, քանի որ անվանումից կարելի է հետևություն անել, թե խոսքը քրեական դատավարությանը մասնակցող բոլոր անձանց մասին է։ Իսկ դա այդպես չէ։ Ուստի նշյալ հոդվածը պետք է անվանել հետևյալ կերպ. «Արդարադատությանն օժանդակող անձանց պաշտպանությունը»։ Այդ անվանումը կարտացոլի տվյալ հոդվածի բովանդակությունը, բացի այդ՝ այն հնարավորություն կտա կիրառելու պետական պաշտպանությունը ոչ միայն քրեական դատավարությանը մասնակցող անձանց, այլև նրանց նկատմամբ, ովքեր այդ կարգավիճակում դեռ չեն հայտնվել (ականատեսներ, հանցագործության գոհեր)։

Ռուսաստանի Դաշնության օրենսդրությունում պետական պաշտպանության ենթակա անձանց շրջանակի հարցը լուծվում է փոքր-ինչ այլ ձևով, քան ՀՀ քր. դատ. օր.-ում։ Այսպես՝ համաձայն «Տուժողների, վկաների և քրեական դատավարության այլ մասնակիցների պետական պաշտպանության մասին» Դաշնային օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Սույն Դաշնային օրենքի համաձայն՝ պետական պաշտպանության ենթակա են քրեական դատավարությանը մասնակցող հետևյալ անձինք.

- 1) տուժողը,
- 2) վկան,
- 3) մասնավոր մեղադրողը,

4) կասկածյալը, մեղադրյալը, ամբաստանյալը, նրանց պաշտպաններն ու օրինական ներկայացուցիչները, դատապարտյալը, արդարացվածը, ինչպես նաև այն անձը, որի նկատմամբ քրեական գործը կամ քրեական հետապնդումը դադարեցվել է,

5) փորձագետը, մասնագետը, թարգմանիչը, ընթերակյան, ինչպես նաև քրեական դատավարության մասնակցող մանկավարժն ու հոգեբանը,

6) քաղաքացիական հայցվորը, քաղաքացիական պատասխանողը,

7) տուժողի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի և մասնավոր մեղադրողի ներկայացուցիչները, օրինական ներկայացուցիչները»: Այսինքն՝ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությունը փոքր-ինչ այլ ձևով է լուծում պետական պաշտպանության ենթակա անձանց շրջանակի հարցը, քան Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը: Այստեղ տվյալ անձի այդ շրջանակին պատկանելու հարցը լուծելու համար հիմք է ընդունվում դատավարական վիճակը (վկա, տուժող և այլն): Կարծում ենք՝ այդպիսի չափանիշը հնարավորություն է ընձեռում գործնականում ընդգրկել քրեական դատավարությանը մասնակցող բոլոր անձանց: Այդ կապակցությամբ միանգամայն օրինաչափորեն հարց է ծագում. ինչո՞ւ պետք է ապահովել նշյալ անձանց պետական պաշտպանությունը: Օրենքում այդ հարցի պատասխանը չկա: Ստեղծվում է բավականին ուշագրավ մի իրավիճակ, երբ պետական պաշտպանության ենթակա կարող է լինել ցանկացած անձ, նույնիսկ նա, ով գործում է ոչ ի նպաստ արդարադատության շահերի, միայն թե լինի քրեական դատավարությանը մասնակցող անձ: Իրավապահպան մարմիններին օժանդակելը ևս ուշադրության չի արժանացել: Ըստ այդմ՝ այնքան էլ պարզ չէ պատճառը, որով պետությունը ապահովում է նշյալ անձանց պաշտպանությունը: Այդ օրենքում նշված չեն նպատակները, որոնք նա հետապնդում է, ուստի և ծագում են համանման հարցեր: Տպավորություն է ստեղծվում, որ նշյալ օրենքը քրեական դատավարության մասնակիցների պետական պաշտպանության ոլորտում լոկ օրենսդրության զարգացման որոշակի փուլ է, ուստի դրանում առկա թերություններն ու անճշտությունները այդ զարգացման ընթացքի անխուսափելի շեղումներ են: Այդ հարցին ուշադրություն են դարձրել Ե. Ա. Կարյակինն ու Օ. Ն. Տիսսենը, որոնք գրում են. «Տուժողների, վկաների և քրեական դատավարության այլ մասնակիցների պետական պաշտպանության մասին»

ՌԴ- օրենքի նորմերը շատ գիտնականներ և պրակտիկ աշխատողներ ընդունել են լոկ որպես ժամանակավոր քայլ գործուն, արդյունավետ և միջազգային բոլոր չափանիշներին համապատասխան նորմատիվ ակտ մշակելու ճանապարհին»<sup>1</sup>: Լ. Վ. Բրուսնիցինը այսպես է գնահատել «Տուժողների, վկաների և քրեական դատավարության այլ մասնակիցների պետական պաշտպանության մասին» ՌԴ- օրենքի ընդունումը. «Չի կարելի ասել, որ կատարված աշխատանքի արդյունքները բավարար են, իսկ օրենսդրի առջև դրված խնդիրները՝ պարզ»<sup>2</sup>: Այսինքն՝ արդարադատությանն օժանդակող անձանց պետական պաշտպանության ինստիտուտը հետագա զարգացման կարիք ունի, իսկ արվածը միայն զարգացման առաջին փուլն է:

Ռուսաստանի Դաշնության նշյալ օրենքի համեմատությամբ ՀՀ քր. դատ. օր.-ի նորմերը, որոնք երաշխավորում են քրեական դատավարության մասնակիցների պետական պաշտպանությունը, հակված են, որ պաշտպանեն ոչ միայն քրեական դատավարությանը մասնակցող անձանց, այլև նրանց մերձավորներին, որոնք օժանդակում են արդարադատության իրականացմանը: Միանգամայն հստակ է այդ նորմերի նպատակը՝ պաշտպանել արդարադատությանն օժանդակող անձանց: Ընդ որում՝ կարծում ենք, ճիշտ է, որ ՀՀ քր. դատ. օր.-ի նշյալ նորմերը չեն սահմանափակում պետական պաշտպանության ենթակա անձանց շրջանակը միայն քրեական դատավարության մասնակիցներով, այլ այդ շրջանակի մեջ են ներառում նաև մերձավորներին: Ընդ որում «մերձավորներ» հասկացությունը չի սահմանափակվում միայն ազգականներով կամ յուրախիններով: ՀՀ քր. դատ. օր.-ի 98-րդ հոդվածի 1-ին մասում ասվում է. «Սույն գլխում «մերձավոր» է համարվում այն անձը, որի պաշտպանության նպատակով քրեական դատավարությանը մասնակցող անձը գրավոր դիմում է ներկայացրել քրեական վարույթն իրականաց-

---

<sup>1</sup> Стен **Карякин Е.А., Тиссен О.Н.** Особенности доказывания в условиях применения мер государственной защиты участников уголовного судопроизводства. М.: Издательство «Юрлитинформ», 2008, էջ 89.

<sup>2</sup> Стен **Брусницын Л.В.** Государственная защита лиц, содействующих уголовному правосудию: состояние и развитие законодательства. // Государство и право. 2010. №2, էջ 42.

նող մարմին»։ Այսինքն՝ դա անձանց չորոշակիացված շրջանակ է, որոնք կարող են օժանդակել արդարադատությանը։ Հարցի այդօրինակ լուծումը, կարծում ենք, ճիշտ է, քանի որ այդ կերպ սահմանելով պաշտպանության ենթակա անձանց շրջանակը՝ մեր օրենսդիրն ավելի մեծ չափով է երաշխավորում արդարադատությանն օժանդակող մասնակիցների պաշտպանությունը նրանց նկատմամբ անօրինական ներգործությունից, քան դա անում է Ռուսաստանի Դաշնության օրենսդրությունը։ Սակայն հարկ է նշել, որ անձանց շրջանակը որոշելիս ճիշտ կլինեի որպես չափանիշ ընդունել ոչ թե նրանց կողմից հանցագործությունը բացահայտելու և հանցագործին հայտնաբերելու համար նշանակություն ունեցող տեղեկություններ հայտնելու հնարավորությունը, այլ նրանց օժանդակությունը արդարադատությանը։ Այդ դեպքում անձանց շրջանակը ավելի լայն կլինեի, և դա ավելի մեծ չափով կհամապատասխաներ նշյալ նորմերի էությանը՝ պաշտպանել նրանց, ովքեր համագործակցում են իրավապահայան մարմինների հետ և օժանդակում արդարադատության իրականացմանը։ Այսպես՝ պետական պաշտպանությունը կարող է ներառել այն անձանց, որոնք թեև ոչինչ չեն կարող հայտնել կատարված հանցագործության կամ հանցագործների մասին, սակայն լուրջ օգնություն կարող են ցուցաբերել կատարվող քննությանը։ Օրինակ՝ անձը, որը լավ գիտի տվյալ տեղանքը, սակայն չի եղել կոնկրետ հանցագործության ակնաստեսն ու չգիտի հանցագործին, կարող է օգնել հանցագործության գործիքի կամ հափշտակվածի որոնումներին։ Այդպիսի օգնություն նա կարող է ցուցաբերել շնորհիվ այն բանի, որ գիտի, թե տվյալ տեղանքում որտեղ կարելի է թաքստոցներ ստեղծել, կամ պարզապես ինչպես կարելի է օգտվել տեղանքի առանձնահատկություններից՝ թաքցնելու ինչ-որ առարկաներ, որոնք հետագայում քննության և դատարանի համար կարող են ունենալ ապացուցողական նշանակություն։ Դրանից ելնելով՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 98 հոդվածի 1-ին մասը հարկավոր է շարադրել հետևյալ կերպ. «Քրեական դատավարությանը մասնակցող ցանկացած անձ, ով իր գործողություններով օժանդակում է արդարադատությանը, ինչի հետևանքով կարող են վտանգի ենթարկվել անձամբ նրա, նրա ընտանիքի անդամի, մերձավոր ազգականի կամ մերձավորի կյանքը,

առողջությունը, գույքը, իրավունքներն ու օրինական շահերը, ունի պաշտպանության իրավունք»:

Արդարադատությանն օժանդակող անձանց պետական պաշտպանության մասին նորմերի արժանիքն այն է, որ դրանք ներառված են ՀՀ քր. դատ. օր.-ում, ինչը թույլ է տալիս դրանք ինտեգրել առհասարակ քրեական դատավարությունը կարգավորող նորմերի համակարգին: Դրա շնորհիվ նախադրյալներ են ստեղծվում ավելի լայնորեն քննարկելու արդարադատությանն օժանդակող անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն առնչվող հարցերը՝ չսահմանափակելով դրանք լոկ նշյալ անձանց անվտանգության պետական պաշտպանության համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու խնդիրներով: Դա թույլ է տալիս արդարադատության իրականացմանն օժանդակող անձանց անվտանգության պետական պաշտպանության խնդիրները քննարկել նրանց այլ իրավունքների և պարտականությունների դիտանկյունից, որոնցով նրանք օժտվում են քրեական դատավարությունում: Այս առումով ճիշտ կլիներ խոսել արդարադատությանն օժանդակող անձանց իրավունքների և օրինական շահերի երաշխիքների ինստիտուտի մասին, այլ ոչ թե նշյալ անձանց պետական անվտանգության ինստիտուտի: Այդպիսի մոտեցումը թույլ կտար խուսափել գոյություն ունեցող բարդություններից, այդ թվում և իրենց գործողություններով արդարադատությանն օժանդակող անձանց անվտանգությունն ապահովելիս: Հայաստանի Հանրապետության օրենսդրությունում դրա համար նախադրյալներ կան. դա ՀՀ քր. դատ. օր.-ում նշյալ անձանց պետական պաշտպանության մասին նորմի ներառումն է: ՀՀ քր. դատ. օր.-ում հենց նման նորմի ներառման շնորհիվ ստեղծվել են բարենաստ պայմաններ քննարկելու նշյալ անձանց պետական պաշտպանության հարցը՝ իրենց իրավունքներով ու պարտականություններով, ինչպես նաև երաշխիքներով հանդերձ, որոնցով ապահովվում են նշյալ իրավունքները: Ուստի, գնահատելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը արդարադատությանն օժանդակող անձանց իրավունքների և օրինական շահերի երաշխիքների մասով, պետք է ասել, որ այն իր զարգացման մեջ բավականին առաջ է գնացել բարեփոխումների ուղղությամբ և արդեն հասել է որոշ նպատակների, որոնք



դրված էին այդ բարեփոխումների առջև: Մասնավորապես, ստեղծվել են արդարադատությանն օժանդակող անձանց անվտանգության բավականին լուրջ երաշխիքներ: Դա ձեռք է բերվել նշյալ խնդրի լուծման նկատմամբ համալիր մոտեցման շնորհիվ, երբ պետական պաշտպանությունը դիտվում է որպես քրեական դատավարության մասնակիցներին տրվող երաշխիքների ընդհանուր համակարգի մաս: Այդպիսի մոտեցումը նախադրյալներ է ստեղծում մրցակցության ու հավասարության սկզբունքների գործողության համար քրեական դատավարությունում: Դրա շնորհիվ արդարադատությանն օժանդակող անձինք դառնում են պակաս խոցելի իրենց վրա ցանկացած անօրինական ներգործության դեպքում, ինչը թույլ է տալիս նրանց ամբողջ ծավալով օգտվելու Հայաստանի Հանրապետության գործող քրեադատավարական օրենսդրությամբ իրենց տրված իրավունքներից:

Այդուհանդերձ, կարծում ենք, արդարադատությանն օժանդակող անձանց իրավունքներն ու անվտանգությունն ապահովող վերոնշյալ միջոցները չպետք է սահմանափակվեն միայն քրեադատավարական օրենսդրությամբ: Ի մասնավորի, այդ միջոցները պետք է ներառեն արդարադատությանն օժանդակող անձանց սոցիալական աջակցության միջոցները: Միննույն ժամանակ այդ միջոցները ներառում են անձին աշխատանքի տեղավորելը, եթե նա հարկադրված է փոխել աշխատավայրն իր վրա անօրինական ներգործության և այլ միջոցների հնարավորության պատճառով, որոնք տեղ են գտել իրավունքի այլ ճյուղերում: Այսպես՝ կարծում ենք, ակնհայտորեն բավարար չէ ՀՀ քր. դատ. օր.-ի 98<sup>11</sup> հոդվածի 1-ին մասում հռչակված այն դրույթը, որ «...քրեական վարույթն իրականացնող մարմինն այդ անձի միջնորդությամբ կամ գրավոր համաձայնությամբ օգնում է տեղավորվել նոր աշխատանքի, ծառայության կամ ուսման վայր»: Անհրաժեշտ է, որ նորմատիվ կարգով կանոնակարգվի աշխատանքի տեղավորման մեխանիզմը աշխատանքային օրենսդրության և կրթության մասին օրենսդրության շրջանակներում: Այդպիսի համալիր մոտեցումը, որը ներառում է իրավունքի տարբեր ճյուղեր, կարող է պայմաններ ստեղծել արդարադատությանն օժանդակող անձանց պետական պաշտպանությունն իրապես ապահովելու համար, ինչպես նաև երաշխավորում է նրանց իրավունքներն ու օրինական

շահերը: Առանց այդ խնդիրների լուծման չի կարելի խոսել արդարադատությանն օժանդակող անձանց պետական պաշտպանության և նրանց իրավունքների և օրինական շահերի երաշխիքների մեխանիզմի գործողության մասին:

Արդարադատությանն օժանդակող անձանց պետական պաշտպանության հարցում կարևոր է այն, որ կիրառվող միջոցները չպետք է սահմանափակվեն միայն կոնկրետ քրեական գործի քննության ու դատական քննության փուլերով: Պետական պաշտպանությունը պետք է կիրառվի նաև կոնկրետ քրեական գործով դատական որոշման կայացմանը հաջորդող փուլում: Միայն այդպիսի պաշտպանության դեպքում արդարադատությանն օժանդակած անձն իրեն պաշտպանված կզգա: Դա լավ միջոց է, որն ի գործ է, եթե ոչ խրախուսելու, ապա գոնե չմարելու իրավապահպան մարմինների հետ համագործակցելու ցանկությունը տեղի ունեցած դեպքերի հանգամանքները պարզելու նպատակով: Յավոք, այն մասին, որ պետական պաշտպանությունը կարող է և պետք է իրականացվի նաև կոնկրետ քրեական գործի քննությունից հետո, Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրությունում չի խոսվում: ՀՀ քր. դատ. օր.-ի՝ արդարադատությանն օժանդակող անձանց պաշտպանության մասին նորմերի վերլուծությունը, թույլ է տալիս եզրակացնելու, որ պետական պաշտպանություն նախատեսվում է միայն կոնկրետ քրեական գործի նախաքննության և դատական քննության ընթացքում: Այդ է վկայում, մասնավորապես, ՀՀ քր. դատ. օր.-ի 99<sup>1</sup> հոդվածի 2-րդ մասը. «Պաշտպանության միջոցների իրականացման դադարեցումը կատարվում է քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ, որի պատճենը եռօրյա ժամկետում ուղարկվում է պաշտպանվող անձին, որը կարող է այն բողոքարկել դատական կարգով»:

Արդարադատությանն օժանդակող անձանց պետական պաշտպանությունը չպետք է դադարեցվի նաև կոնկրետ քրեական գործով դատավճռի կայացումից հետո: Առավել ևս, որ վրեժ լուծելու նպատակով այդ անձանց վրա ներգործելը կազմակերպված հանցավոր խմբավորումների պրակտիկայում տարածված է: Բացի այդ՝ ներգործման այդպիսի դեպքեր լինում են նաև դատապարտյալի հետ

մտերիմ անձանց կողմից: Ակներն է, որ աչքի առաջ ունենալով կազմակերպված հանցավոր համագործակցության կամ դատապարտյալի մերձավորների կողմից այդպիսի ներգործության հնարավորությունը դատավճռի կայացումից հետո ոչ բոլոր ականատեսները և անգամ զոհերը կցանկանան հանցագործության մեջ մեղավորներին մերկացնող ցուցմունքներ տալ: Հետևաբար անհրաժեշտ է ՀՀ քր. դատ. օր.-ում ներառել նորմ, որտեղ ուղղակիորեն նշված կլինի, որ պետական պաշտպանությունը չի դադարեցվում և շարունակում է իրականացվել նաև դատավճռի կայացումից կամ քրեական գործը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումից հետո: Նպատակահարմար է ներկայացված նորմը ներառել ՀՀ քր. դատ. օր.-ի 99<sup>1</sup> հոդվածում: Ընդ որում՝ անհրաժեշտ է լուծել այն հարցը, թե ում է վերապահվում արդարադատությանն օժանդակող անձանց պետական պաշտպանության իրականացումը դատավճռի կայացումից հետո:

ՀՀ քր. դատ. օր.-ի 98<sup>1</sup> հոդվածում թվարկված են արդարադատությանն օժանդակող անձանց պետական պաշտպանության միջոցները: Նշյալ միջոցները կոչված են վտանգից պաշտպանելու այդ անձանց՝ անհասանելի դարձնելով նրանց անօրինական ներգործության համար: Նշյալ միջոցների կիրառման տեսությունն ու պրակտիկան բանավեճի առարկա են<sup>1</sup>, որի հիմքում դրանց իրակա-

---

<sup>1</sup> Стѹ **Филимонова И.В.** К вопросу о понятии "меры безопасности" как меры государственной защиты потерпевших, свидетелей и иных участников уголовного судопроизводства // Уголовно-процессуальные и криминалистические чтения на Алтае. Материалы ежегодной региональной научно-практической конференции. Барнаул: Изд-во Алт. ун-та, 2006, вып. 6, էջ 155-159; **Крайнов В.И.** Отдельные вопросы применения мер государственной защиты вне рамок процесса уголовного судопроизводства // Российский следователь. М.: Юрист, 2008, № 23, էջ 7-10; **Клочков А.В., Янин С.А.** О совершенствовании мер государственной защиты иностранцев и лиц без гражданства, содействующих российскому уголовному правосудию // Научные труды РАЮН. В 3-х томах. М.: Юрист, 2008, Вып. 8 Т. 3, էջ 874-879; **Гаврилович А.В.** К вопросу о становлении государственной системы мер защиты участников уголовного судопроизводства // Вопросы права и проблемы становления гражданского общества в России: Сборник научных статей. Хабаровск: Изд-во Дальневост. юрид. ин-та МВД России, 2009, էջ 118-122; **Ширитов А.Б.** Правовое регулирование мер государственной защиты участников уголовного процесса. Автореф. дис. ... канд. юрид. наук - Краснодар, 2010. 23 էջ:

նացման արդյունավետության և կարգի հիմնախնդիրներն են: Այդուհանդերձ, թեև տարբեր երկրներում օրենսդրությունը թվարկում է միջոցների իր ցանկը, սակայն դրանք բոլորը ընդհանուր շատ բան ունեն: Այսպես՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 98<sup>1</sup> հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը նախատեսում է պաշտպանվող անձի տարաբնակեցում այլ վայր, «Տուժողների, վկաների և քրեական դատավարության այլ մասնակիցների պետական պաշտպանության մասին» Ռուսաստանի Դաշնության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ կետով և ս նախատեսված է պետական պաշտպանության այդ միջոցը: Նույնը վերաբերում է պետական պաշտպանության մի շարք այլ միջոցների: Օրինակ՝ այնպիսի միջոցը, ինչպիսին է պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող փաստաթղթերը փոխելը, կամ արտաքինը փոփոխելը նախատեսված է և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ (ՀՀ քր. դատ. օր.-ի 98<sup>1</sup> հոդվածի 1-ին մասի, 9-րդ կետ): Տարբեր երկրների օրենսդրություններում պետական պաշտպանության միջոցների նմանությունը պայմանավորված է նրանց առջև դրված նպատակների միանմանությամբ՝ երաշխավորել արդարադատությանն օժանդակող անձանց անվտանգությունը:

Պետական պաշտպանության միջոցների թվում նպատակահարմար է նշել ժամանակավորապես անվտանգ վայր տեղափոխելը: Այդպիսի միջոցը լիովին արդարացված է այն դեպքերում, երբ արդարադատությանն օժանդակող անձի նկատմամբ առանձնապես սկստիվ ներգործություն է կատարվում նախաքննության և դատական քննության փուլերում: Ընդ որում՝ կարևոր չէ, թե որն է այդպիսի ներգործության նպատակը (կյանքի դեմ մահափորձը, թե միայն մարմնական վնասվածքներ հասցնելու սպառնալիքը): Կարևորը այդպիսի ներգործության իրականացման բուն փաստն է: Այդպիսի միջոց կիրառելու անհրաժեշտությունը պայմանավորված է այն բանով, որ երբեմն ներգործություն իրականացվում է միայն կոնկրետ քրեական գործի նախաքննության ու դատական քննության փուլերում, իսկ հետագայում (դատավճիռ կայացնելուց հետո) այդպիսի ներգործության վտանգ չկա: Բացի այդ՝ նման ներգործության ինտենսիվությունը երբեմն ստիպում է իրավապահական մարմիններին ձեռնարկել առավելագույնս արդյունավետ միջոցներ արդարադատությանն օժանդակող անձանց անվտանգությունն ապահովելու

համար: Այդ միջոցների մշտական իրականացումը նաև դատավճռի կայացումից հետո այդ միջոցների ինտենսիվության պատճառով անհնար է և պետք էլ չէ, քանի որ լրջորեն նվազում է նշյալ անձանց նկատմամբ ներգործության ինտենսիվությունը: Սակայն օրենքում պետք է նշվի պետական պաշտպանության այդ միջոցի ժամանակավոր կիրառման հնարավորությունը նաև դատավճռի կայացումից հետո: Մասնավորապես, այդպիսի միջոցների կիրառման դեպքերին պետք է դասել արդարադատությանն օժանդակող անձի, ինչպես նաև նրա մերձավորների կյանքին ու առողջությանը սպառնացող վտանգի առաջացումը: Ընդ որում՝ նշյալ միջոցը պետք է կիրառվի այդ անձի դիմումի համաձայն: Միևնույն ժամանակ, իրավապահական մարմինների պարտականությունների մեջ պետք է մտնի այդ անձին սպառնացող վտանգի մասին նրան ծանուցելը:

Մյուս միջոցը, որն անհրաժեշտ է ներառել պետական պաշտպանության միջոցների շարքում, պետք է լինի անվտանգության լրացուցիչ միջոցների կիրառումը պաշտպանվող անձի նկատմամբ, որը գտնվում է կալանքի տակ կամ պատիժը կրելու վայրում, այդ թվում և կալանքի տակ գտնվելու կամ պատիժ կրելու մի վայրից մյուսը տեղափոխելը<sup>1</sup>: Դա կապված է այն բանի հետ, որ առանձին դեպքերում, կազմակերպված հանցավոր խմբավորման կամ պարզապես հանցավոր խմբի մեջ մտնող անձինք նախաձեռնություն են հանդես բերում և ցուցմունքներ տալիս, որոնք մերկացնում են կատարված հանցագործության մյուս հանցակիցներին: Միանգամայն պարզ է, որ այդ հանցակիցները անօրինական ներգործության միջոցներ կձեռնարկեն և գործնականում ձեռնարկում են այդ անձի նկատմամբ, որպեսզի ստիպեն նրան դադարեցնել ցանկացած համագործակցություն իրավապահական մարմինների հետ: Ցավոք, այդպիսի անձանց կալանքի տակ գտնվելն էլ երբեմն չի օգնում

---

<sup>1</sup> Տե՛ս **Мальцева Н.В.** Меры обеспечения безопасности потерпевших и свидетелей из числа осужденных к лишению свободы. Теоретическая проблема уголовно-исполнительного права // Закон и право. М.: ЮНИТИ-ДАНА, 2006, № 10, էջ 71-72; **Тимина Н.В.** Меры обеспечения безопасности потерпевших и свидетелей в местах лишения свободы: нововведения в российском законодательстве // Российская пенитенциарная система: актуальные проблемы реформирования. Сборник научных трудов. Владимир: ВЮИ Минюста России, 2005, էջ 219-226.

նրանց անվտանգությանը, քանի որ նրանք կարող են գտնվել հանցավոր խմբավորման դատապարտված այն անդամների միջավայրում, որոնք կատարել են հանցագործությունը, կամ էլ կալանքի տակ են գտնվում այնպիսի հսկիչների մոտ, ովքեր բարյացակամ են տրամադրված այն կալանավորների նկատմամբ, որոնց այդ անձը մերկացնում է: Նման դեպքերում արդարադատության շահերից է բխում իրավապահական մարմինների հետ համագործակցող անձանց համար ստեղծել անվտանգ միջավայր, հոգալ այն մասին, որ նրանց նկատմամբ որևէ մեկի կողմից սպառնալիք չլինի, որը կարող է խոչընդոտել արդարադատության իրականացմանը: Նշյալ միջոցը կարող է և առանձին դեպքերում պետք է կիրառվի ոչ միայն նախնական քննության ու դատական քննության փուլում, այլև դատավճռի կայացումից կամ քրեական գործը կարճելու մասին որոշումից հետո:

Անհրաժեշտ է նշել, որ պետական պաշտպանության արդեն գոյություն ունեցող միջոցը, որը նշված է ՀՀ քր. դատ. օր.-ի 98<sup>1</sup> հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում («կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ այնպիսի խափանման միջոց ընտրելը, որը կբացառի նրանց կողմից պաշտպանվող անձի հանդեպ բռնության կամ այլ հանցանքի կատարման հնարավորությունը»), չի կարող բացառել նաև այստեղ առաջարկվող միջոցի կիրառումը: Դա պայմանավորված է այն բանով, որ ՀՀ քր. դատ. օր.-ի 98<sup>1</sup> հոդվածի 1-ին մասի, 7-րդ կետում նշված միջոցով ենթադրվում է խափանման միջոց ընտրելը, այլ ոչ թե արդեն ընտրված միջոցի կիրառման առանձնահատկությունները (կալանքի տակ պահելը): Բացի այդ՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 98<sup>1</sup> հոդվածի 1-ին մասի, 7-րդ կետում նշված միջոցը չի վերաբերում արդեն դատապարտված և ազատագրված վայրերում պատիժը կրող անձանց: Վերջիններիս պաշտպանության անհրաժեշտությունը պայմանավորված է այն բանով, որ կան դեպքեր, երբ այդպիսի անձինք, վերախմաստավորելով իրենց կենսական դիրքորոշումը, կամ այլ պատճառներով, ցուցմունքներ են տալիս նախկինում կատարած հանցագործությունների հանգամանքների վերաբերյալ: Լիովին հասկանալի է, որ նախկին հանցակիցները նման դեպքերում ձգտում են ամեն կերպ ներգործել իրավապահական մարմինների հետ հա-

մագործակցության հարցում ակտիվություն ցուցաբերող անձանց վրա: Ուստի պետությունը պետք է ձեռնարկի այդպիսի անձանց անվտանգությունն ապահովելու միջոցներ: Առավել ևս, որ այդպիսի միջոցներն ունեն որոշակի կանխարգելիչ նշանակություն, քանի որ ցույց են տալիս, որ իրավապահական մարմինների հետ համագործակցող անձինք անպաշտպան չեն, ուստի և նրանց հետ կարելի է և պետք է համագործակցել: Այդ պատճառով նշյալ միջոցը ներառելն անհրաժեշտ է, որ աջակցություն ցույց տրվի իրավապահական մարմիններին՝ բացահայտելու հանցագործությունը:

Խափանման միջոցի ընտրությունը նույնպես արդարադատությանն օժանդակող անձանց անվտանգությունն ապահովելու միջոցներից է: Այդ մասին ուղղակիորեն նշված է ՀՀ քր. դատ. օր.-ի 98<sup>1</sup> հոդվածի 1-ին մասի, 7-րդ կետում: Ի թիվս մյուսների սահմանելով նաև այս միջոցը՝ օրենսդիրը իրավակիրառ մարմնին զինել է արդարադատությանն օժանդակող անձանց անվտանգությունն ապահովելու բավականին արդյունավետ միջոցով: Ալնհայտ է, որ ճիշտ ընտրված խափանման միջոցն ապահովում է արդարադատությանն օժանդակող քրեական դատավարությանը մասնակցող անձանց անվտանգությունը: Իրավաբանական գրականության մեջ այս հարցը նույնպես արժանացել է ուշադրության<sup>1</sup>: Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրությամբ այս հարցը լուծվել է: Այդուհանդերձ, ճիշտ կլիներ, լրացնել ՀՀ քր. դատ. օր.-ի 135-րդ հոդվածի 1-ին մասը խափանման միջոց ընտրելու ևս մեկ հիմքով՝ եթե անձը վտանգ է ներկայացնում դատավարության մյուս մասնակիցների համար: Ընդ որում՝ պետք է ուղղակիորեն նշել, որ այդ վտանգը կարող է արտահայտվել որպես սպառնալիք նշյալ անձանց կյանքին և առողջությանը:

---

<sup>1</sup> Տե՛ս **Воронов Д.А.** Меры уголовно-процессуального принуждения как среда обеспечения безопасности участников уголовного судопроизводства. Автореф. дис. ... канд. юрид. наук - Омск, 2008. 22 էջ; **Воронов Д.А.** Меры процессуально-принуждения как средства обеспечения безопасности участников уголовного судопроизводства // Актуальные проблемы борьбы с преступностью в Сибирском регионе. Сборник материалов XII международной научно-практической конференции (19-20 февраля 2009 г.). Красноярск: СибЮИ МВД России, 2009, Ч. 2, էջ 188-192.

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ հարկ է նշել, որ արդարադատությանն օժանդակող անձանց երաշխիքներն ապահովելու համար քիչ է խոսել միայն նրանց անվտանգությունն ապահովելու մասին, անհրաժեշտ է ավելի ընդգրկուն ներկայացնել հիմնախնդիրը և քննարկել արդարադատությանն օժանդակող անձանց իրավունքների և օրինական շահերի երաշխիքների մասին հարցը: Դա կնպաստի այդ անձանց իրավունքների և օրինական շահերի ավելի արդյունավետ պաշտպանությանը, ինչպես նաև կատարվող քննության արդյունավետությանը, համապատասխանաբար և հանցագործության բոլոր հանգամանքների լրիվ և բազմակողմանի բացահայտմանը:



**ԳԼՈՒԽ 4.**  
**ԱՆՉԱՓԱՀԱՍ ԱՆՉԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ**  
**ՕՐԻՆԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՄԻՆՉԳԱՏԱԿԱՆ**  
**ՎԱՐՈՒՅԹՈՒՄ**

**§ 1. Անչափահասների իրավունքների և օրինական շահերի**  
**ապահովման հիմնախնդիրները քրեական դատավարության**  
**մինչդատական փուլերում**

«Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագրի» 14-րդ հոդվածի 1-ին կետում (ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1966 թ. դեկտեմբերի 16-ի 2200 A բանաձևով և բաց է ստորագրման, վավերացման և միանալու համար) արձանագրված է. «Բոլոր անձինք հավասար են դատարանների և տրիբունալների առջև»: Տվյալ դրույթը արտացոլված է նաև ժողովրդավարական բոլոր պետությունների օրենսդրություններում: ՀՀ քր. դատ. օր.-ի 8-րդ հոդվածում նախատեսված է. «Բոլորը հավասար են օրենքի առջև և առանց խտրականության հավասարապես պաշտպանվում են օրենքով»: Գրանից հետևում է, որ քրեական դատավարությունում բոլոր անձանց իրավունքների ու երաշխիքների ծավալը պետք է լինի հավասար:

Այդուհանդերձ հարկ է նշել, որ եթե այդպես բառացի ընկալվի վերոհիշյալ պահանջը, ապա որոշ անձինք կանխավ կհայտնվեն ուրիշների հետ անհավասար դրության մեջ: Չէ՞ որ միանգամայն ակնհայտ է, որ բնավ ոչ բոլորը կարող են օգտվել իրենց տրված իրավունքներից զանազան հանգամանքների պատճառով, որոնք առկա են, և որոնք կարող են խոչընդոտ դառնալ նրանց տրված իրավունքների իրացման ճանապարհին: Այդպիսի անձանց թվին, անկասկած, դասվում են անչափահասները: Նրանք բավականին փորձ, գիտելիքներ չունենալու և չձևավորված անձանց բնորոշ այլ առանձնահատկությունների պատճառով ոչ միշտ են կարողանում իրացնել իրենց՝ որպես քրեական դատավարության մասնակիցների տրված իրավունքները: Այդ առումով նրանց անհրաժեշտ են լրացուցիչ երաշխիքներ, որոնք հնարավորություն կընձեռնեին իրացնելու իրենց

տրված իրավունքներն ու պաշտպանելու իրենց շահերը: Այդ կապակցությամբ «Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագրի» 14-րդ հոդվածի 4-րդ կետում նախատեսված է. «Անչափահասների նկատմամբ դատավարությունը պետք է իրականացվի այնպես, որ հաշվի առնվեն նրանց տարիքը և նրանց վերադաստիարակությանը օժանդակելու ցանկալիությունը»:

Քրեական դատավարությունում անչափահասներին լրացուցիչ երաշխիքներով ապահովելու անհրաժեշտության մասին նշված է Միավորված ազգերի կազմակերպության Նվազագույն ստանդարտ կանոններում, որը վերաբերում է անչափահասների նկատմամբ արդարադատության իրականացմանը («Պեկինյան կանոններ», հաստատված է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1985 թ. նոյեմբերի 29-ի 40/33 բանաձևով): Այստեղ թվարկված են անչափահասների հիմնական լրացուցիչ երաշխիքները: Ընդ որում՝ հատուկ ուշադրության են արժանացել դրանց որոշ մասը, ինչպես, օրինակ, կոնֆիդենցիալության՝ անչափահասների իրավունքը (կետ 8.1), միայն բացառիկ դեպքերում կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելը (կետ 13.1), ազատագրվումը որպես պատիժ բացառիկ դեպքերում նշանակելը (կետ 19.1), գործի արագ քննությունը (կետ 20.1): Նույն կերպ առանձնահատուկ ուշադրություն է դարձված այն բանին, որ անչափահասների նկատմամբ արդարադատության իրականացմանը ներգրավված պաշտոնատար անձինք պետք է ունենան հատուկ մասնագիտական պատրաստվածություն: Այդ կապակցությամբ Կանոնների 22.1 կետում սահմանված է. «Անչափահասների գործերով զբաղվող ամբողջ անձնակազմի անհրաժեշտ մասնագիտական կոմպետենտությունն ապահովելու և պահպանելու համար հարկավոր է կիրառել մասնագիտական պատրաստությունը, ուսուցումը աշխատանքի ընթացքում, վերապատրաստման դասընթացներն ու ուսուցման համանման այլ տեսակները»:

Այն մասին, թե ինչպես պետք է երաշխավորել անչափահասների իրավունքների ու օրինական շահերի պահպանումը, ինչ ծավալի իրավունքներով նրանք պետք է օժտված լինեն քրեական դատավա-

րությունում, վիճում են վաղուց<sup>1</sup>: Գրանք չեն դադարել նաև մեր ժամանակներում<sup>2</sup>: Սակայն թե՛ նախկինում, թե՛ հիմա այդ բանավեճում ընդգրկված մարդկանց միավորում է հետևյալը. նրանց համար ելակետային է հետևյալ դրույթը. անչափահասն այն անձն է, որն իր իրավունքների ու օրինական շահերի լրացուցիչ երաշխիքների կարիք ունի: Այսպես՝ դեռ Մ. Ս. Ստրոգովիչը գրել է. «Հանցագործության սուբյեկտի առանձնահատկությամբ՝ քրեական պատասխանատվության ենթարկված անձանց տարիքով է պայմանավորված այդ գործերի քննության և դատական քննության ընթացքում որոշ հատուկ կանոնների կիրառումը, որոնք չփոփոխելով և չփոխելով քրեական գործերով դատավարության կարգի մասին ընդհանուր

---

<sup>1</sup> Տե՛ս **Акинча Н.А.** К вопросу о гарантиях прав несовершеннолетнего обвиняемого в советском уголовном процессе // 50 лет Советской власти и актуальные проблемы правовой науки. Материалы к конференции по итогам научно-исследовательской работы за 1966 г.. Саратов, 1967, էջ 169-170; **Рыбальская В.Я.** Современные проблемы уголовного процесса по делам несовершеннолетних в Европейских странах социализма. Автореф. дис. ... канд. юрид. наук - М., 1968. 16 էջ; **Лазарева В.А.** Охрана прав и законных интересов несовершеннолетних потерпевших в советском уголовном процессе. Дис. ... канд. юрид. наук: 12.00.09 - Куйбышев, 1980. 213 էջ; **Лазарева В.А.** Охрана прав и законных интересов несовершеннолетних потерпевших в советском уголовном процессе. Автореф. дис. ... канд. юрид. наук - М., 1980. 19 էջ; **Лазарева В.** Защита прав и интересов несовершеннолетних потерпевших в уголовном процессе // Социалистическая законность. М.: Известия, 1980, № 3, էջ 49-50 և նրիշնիւր:

<sup>2</sup> Տե՛ս **Лошкарёва Т.В.** Защита прав и законных интересов несовершеннолетних участников в уголовном процессе России // Актуальные проблемы юридической науки и образования. Сборник научных статей. Ижевск, 2007, Вып. 7, էջ 9-13; **Судакова Е.А.** Производство по уголовным делам несовершеннолетних: сравнительно-правовой анализ УПК РФ и стран СНГ // Охрана прав несовершеннолетних и развитие законодательства о семье. Материалы конференции 19 декабря 2008 г.. М.: Изд-во Моск. гуманитар. ун-та, 2009, էջ 73-78; **Капустянский В.** Особенности судебного следствия по делам несовершеннолетних // Мировой судья. М.: Юрист, 2009, № 3, էջ 26-30; **Судакова Е.А.** Производство по уголовным делам несовершеннолетних: сравнительно-правовой анализ УПК РФ и стран СНГ // Охрана прав несовершеннолетних и развитие законодательства о семье. Материалы конференции 19 декабря 2008 г.. М.: Изд-во Моск. гуманитар. ун-та, 2009, էջ 73-78; **Машинская Н.В.** Защита прав и законных интересов несовершеннолетнего, совершившего общественно опасное деяние, в досудебных стадиях уголовного процесса: Специальный выпуск // Вестник Поморского университета: Специальный выпуск. Серия "Гуманитарные и социальные науки". Архангельск: Изд-во Помор. ун-та, 2006, էջ 165-171 և նրիշնիւր:

դրույթները, սահմանում են լրացուցիչ դատավարական երաշխիքներ քրեական պատասխանատվության ենթարկված անձանց համար և որոշակիացնում հստակեցման ու լուծման ենթակա լրացուցիչ հարցերը»<sup>1</sup>: Ներկայումս էլ Ռուսաստանի Գաշնության քրեադատավարական օրենսդրության համաձայն «անչափահասների նկատմամբ վարույթի հատուկ կարգը հիմնվում է, առաջին հերթին, անչափահասների տարիքային, սոցիալ-հոգեբանական և այլ առանձնահատկությունների վրա, որոնք պահանջում են լրացուցիչ երաշխիքներ նրանց իրավունքների իրացման համար»<sup>2</sup>:

ՀՀ գործող քր. դատ. օր.-ի 50-րդ գլուխը սահմանում է անչափահասների գործով վարույթի առանձնահատկությունները: Ընդ որում՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 439-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված է. «Անչափահասների գործերով վարույթի կարգը կարգավորվում է սույն օրենսգրքի ընդհանուր կանոններով, ինչպես նաև սույն գլխի հոդվածներով»:

Այսինքն՝ Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրությունը նույնպես ելակետային է համարում այն դրույթը, որ անչափահասները, տարիքով պայմանավորված, իրենց իրավունքների և օրինական շահերի իրացման օրենսդրական երաշխիքների կարիք ունեն: Ակնհայտ է, որ դա հետևանք է այն բանի, որ օրենսդիրը գիտակցում է անչափահասի տարիքային առանձնահատկությունները և անչափահասների իրավունքների ու ազատությունների լրացուցիչ երաշխիքների անհրաժեշտությունը: Նշյալ լրացուցիչ երաշխիքներն անհրաժեշտ են այն բանի համար, որ անչափահասը չճնշվի քրեական դատավարության ընթացքում և վաղօրոք չհայտնվի իր համար ոչ շահավետ իրավիճակում քրեական դատավարությանը մասնակցող մյուս անձանց համեմատ: Ընդ որում՝ անչափահասների իրավունքների և օրինական շահերի երաշխիքները պետք ապահովվեն քրեական դատավարության բոլոր փուլերում: Գրան հատուկ ուշադրություն է նվիրված Միավորված ազգերի կազմակերպության Նվազագույն ստանդարտ կանոնների 7.1 կետում,

---

<sup>1</sup> **Строгович М.С.** Курс Советского уголовного процесса. Том II: Порядок производства по уголовным делам по Советскому уголовно-процессуальному праву. М.: Издательство «Наука», 1970, էջ 474:

<sup>2</sup> Уголовно-процессуальное право Российской Федерации. / Отв. ред. П.А. Лупинская. М.: Юристъ, 2004, էջ 670:

որը վերաբերում է անչափահասների նկատմամբ արդարադատության իրականացմանը («Պեկինյան կանոններ», հաստատված է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1985 թ. նոյեմբերի 29-ի 40/33 բանաձևով): Այստեղ նշված է. «Հիմնական դատավարական երաշխիքները, ինչպիսիք են անմեղության կանխավարկածը, առաջադրված մեղադրանքի մասին իրազեկված լինելու իրավունքը, ցուցմունք տալուց հրաժարվելու իրավունքը, փաստաբան ունենալու իրավունքը, ծնողների կամ խնամակալի ներկա գտնվելու իրավունքը, վկաների հետ առերեսման և նրանց խաչաձև հարցաքննության իրավունքը և վերադաս առյանին բողոքարկելու իրավունքը, պետք է երաշխավորված լինեն դատական քննության բոլոր փուլերում»:

Քրեական դատավարությունում անչափահասների իրավունքների և օրինական շահերի մասին խոսելիս առավել հաճախ նկատի են ունենում կասկածյալին և մեղադրյալին<sup>1</sup>: Սակայն հարկ է նկատել, որ օրենսդրությամբ ստեղծված են երաշխիքներ նաև անչափահաս տուժողների<sup>2</sup> և անչափահաս վկաների համար: Կարճ ասած, պետք է արձանագրել, որ օրենսդրությամբ ստեղծված են բոլոր անչափա-

---

<sup>1</sup> Տե՛ս **Ермаков А.М.** Об актуальных проблемах охраны прав несовершеннолетних подозреваемых, обвиняемых при расследовании уголовных дел // Охрана прав несовершеннолетних и развитие законодательства о семье. Материалы конференции 19 декабря 2008 г.. М.: Изд-во Моск. гуманитар. ун-та, 2009, էջ 16-21; **Сычев А.А.** О форме предварительного расследования преступлений несовершеннолетних // Российский следователь. М.: Юрист, 2009, № 5, էջ 9-10; **Христолюбский В.Н.** Международно-правовые гарантии несовершеннолетних правонарушителей в уголовном судопроизводстве России // Вестник Южно-Уральского государственного университета. Серия "Право". Челябинск: Изд-во ЮУрГУ, 2009, № 6 (139) Вып. 17, էջ 38-41; **Машинская Н.В.** Защита прав и законных интересов несовершеннолетнего, совершившего общественно опасное деяние, в досудебных стадиях уголовного процесса: Специальный выпуск // Вестник Поморского университета: Специальный выпуск. Серия "Гуманитарные и социальные науки". Архангельск: Изд-во Помор. ун-та, 2006, էջ 165-171; **Попов А.Н.** Проблемы обеспечения защиты прав несовершеннолетних подозреваемых и обвиняемых в уголовном процессе России // Северо-кавказский юридический вестник. Ростов-на-Дону, 2004, № 4. էջ 114-119 և նրիշներ:

<sup>2</sup> Տե՛ս **Лазарева В.А.** Охрана прав и законных интересов несовершеннолетних потерпевших в советском уголовном процессе. Дис. ... канд. юрид. наук: 12.00.09 - Куйбышев, 1980. 213 էջ; **Лазарева В.** Защита прав и интересов несовершеннолетних потерпевших в уголовном процессе // Социалистическая законность. М.: Известия, 1980, № 3, էջ 49-50 և նրիշներ:

հասների իրավունքների և ազատությունների պահպանման երաշխիքներ՝ անկախ նրանց զբաղեցրած դատավարական վիճակից: Այսինքն՝ կարելի է խոսել ընդհանուր առմամբ անչափահասների իրավունքների և ազատությունների իրավական երաշխիքների առանձնահատկությունների մասին: Հենց այս մոտեցումն է ընկած մի շարք հետազոտությունների հիմքում<sup>1</sup>:

Հայաստանի Հանրապետության գործող քրեադատավարական օրենսդրության վերլուծությունը հնարավորություն է ընձեռում եզրակացնելու, որ անչափահասների նկատմամբ առանձին բարդացված ընթացակարգեր կիրառվում են ոչ միայն նրանց իրավունքների և ազատությունների լրացուցիչ երաշխիքներ ստեղծելու համար: Որոշ ընթացակարգեր արդյունավետ կերպով ապացույցներ ձեռք բերելու նպատակ են հետապնդում, որոնց հավաստիությունը հետազայում չի վիճարկվի: Օրինակ, ՀՀ քր. դատ. օր.-ի 341 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Անչափահաս վկայի հարցաքննությունը, եթե դա անհրաժեշտ է գործի հանգամանքների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտման համար, կողմերի միջնորդությամբ կամ դատարանի նախաձեռնությամբ կարող է կատարվել ամբաստանյալի բացակայությամբ»: Միանգամայն պարզ է, որ նախատեսելով վերոնշյալ դատավարական կարգը՝ օրենսդիրը ձգտում է անհրաժեշտ պայմաններ ստեղծել քրեական գործի քննությունը լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ իրականացնելու համար: Այդպիսի դատավա-

---

<sup>1</sup> Տե՛ս **Сероштан В.В.** Тенденции совершенствования законодательства в области обеспечения прав в уголовном процессе несовершеннолетних лиц // Вопросы ювенальной юстиции. М.: Юрист, 2009, № 2 (22), էջ 15-17; **Лощкарева Т.В.** Защита прав и законных интересов несовершеннолетних участников в уголовном процессе России // Актуальные проблемы юридической науки и образования. Сборник научных статей. Ижевск, 2007, Вып. 7, էջ 9-13; Дюльденко И.А. Защита прав несовершеннолетних в уголовном судопроизводстве: Право и юриспруденция // X Региональная конференция молодых исследователей Волгоградской области: Право и юриспруденция. Тезисы докладов: г. Волгоград, 8-11 ноября 2005 г.. Волгоград: Изд-во ВолГУ, 2006, Вып. 2, էջ 378-380; **Савченко С.Ю.** Защита прав несовершеннолетних в уголовном судопроизводстве: Право и юриспруденция // X Региональная конференция молодых исследователей Волгоградской области: Право и юриспруденция. Тезисы докладов: г. Волгоград, 8-11 ноября 2005 г.. Волгоград: Изд-во ВолГУ, 2006, Вып. 2, էջ 414-418 և նրիշներ:

րական կարգի անհրաժեշտությունը պայմանավորված է ոչ թե անչափահասների իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, այլ գործն ըստ էության քննելու համար անհրաժեշտ ապացույցներ ձեռք բերելու ձգտմամբ: Անչափահաս տարիքը որոշակիորեն բարդացնում է այդ ապացույցների ձեռքբերման ընթացքը, ինչը պայմանավորված է տեղեկատվությունն ընկալելու, պահպանելու և վերարտադրելու առանձնահատկություններով: Այս խնդրին հաճախ են ուշադրություն դարձնում կրիմինալիստիկայում: Այսպես՝ նշվում է, որ «անչափահասների հարցաքննության տակտիկան զգալիորեն պայմանավորված է նրանց հոգեկանի առանձնահատկություններով (չափից դուրս շատ ներշնչմամբ և ինքնաներշնչմամբ, երևակայելու հակվածությամբ, բարձր զգայունությամբ, վարքի անկայունությամբ և այլն), ոչ մեծ կենսափորձով, որը հաճախ հանգեցնում է քննվող դեպքին կամ այդ դեպքի առանձին մասերին նրանց կողմից ոչ ճիշտ գնահատական տալուն»<sup>1</sup>:

Սակայն հարկ է խոստովանել, որ անչափահասներին հատուկ կարգավիճակով օժտելն անուամենայնիվ պայմանավորված է քրեական դատավարությունում նրանց իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու անհրաժեշտությամբ: Ընդ որում՝ վերջին տասնամյակներին ամբողջ աշխարհում արդարադատության զարգացման վերլուծությունը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ նշյալ հիմնախնդիրը ժողովրդավարական պետությունների հիմնական խնդիրներից է: Ռ-ա պայմանավորված է այն բանով, որ անչափահասներին բնորոշ վերոնշյալ առանձնահատկությունների պատճառով, նրանց և քրեական դատավարության մյուս մասնակիցների միջև հավասարություն կարելի է ապահովել միայն որոշակի լրացուցիչ երաշխիքների դեպքում: Այդ երաշխիքները պետք է դառնան որոշակի համալիր, որը գերծ կպահի անչափահասներին իրենց իրավունքների ու ազատությունների բոլոր տեսակի խախտումներից, ինչպես նաև կստեղծի բարենպաստ պայմաններ քրեական դատավարությունում նրանց օրինական շահերի իրացման համար: Այդ ա-

---

<sup>1</sup> Տե՛ս **Аверьянова Т.В., Белкин Р.С., Корухов Ю.Г., Россинская Е.Р.** Криминалистика. / под ред Р.С. Белкина. М.: Издательская группа НОРМА\_ИНФРА\_М, 1999, էջ 619:

ռումով անչափահասը պետք է դիտվի որպես քրեական դատավարության հատուկ մասնակից, որն օժտված է հատուկ իրավական վիճակով, թեպետև հաշվի առնելով նրա ով լինելը՝ մեղադրյալ, կասկածյալ, տուժող, քաղաքացիական հայցվոր կամ վկա: Հենց դրա վրա են հիմնված յուվենալ արդարադատության հետ կապված առաջարկները<sup>1</sup>: Ըստ այդմ՝ իրավացի է այն նկատառումը, որ «սկիզբ առնելով քրեական արդարադատության ակունքներից՝ պատմականորեն ձևավորվել է առանձնահատուկ արդարադատություն անչափահասների համար՝ ձևավորելով նաև քրեական դատավարության իր հատուկ նորմերը: Ժամանակակից աշխարհում այն անվանում են յուվենալ արդարադատություն, որը վերջերս է մտել ռուսաստանյան իրավաբանների բառապաշար»<sup>2</sup>: Պատահական չէ, որ յուվենալ արդարադատությունը դիտվում է որպես «անչափահասների իրավունքների ու ազատությունների պաշտպանության համակարգ, յուվենալ դատարանի շուրջ սոցիալական ծառայությունների և հասարակական կազմակերպությունների միավորում»<sup>3</sup>: Ընդ որում՝ յուվենալ արդարադատության էությունը «անչափահասների իրավունք-

---

<sup>1</sup> Տե՛ս **Коваль Е.Н.** Ювенальная юстиция как основное направление совершенствования российского правосудия в отношении несовершеннолетних // Пробелы в российском законодательстве . Юридический журнал. М., 2009, № 1, էջ 215-217; **Кудрякова А.Х.** Ювенальная юстиция: проблемы законодательного закрепления в современной России // Правовая политика государства: теория, история, практика. Сборник научных статей . Пенза: Информационно-издательский центр ПензГУ, 2009, Вып. 5, էջ 206-211; **Горлова Ю.Н.** Ювенальная юстиция - правовая основа социальной политики в отношении несовершеннолетних в РФ // Молодежная политика в условиях формирования гражданского общества и правового государства: материалы мартовской межрегиональной студенческой научной конференции, 21 марта 2008 г.. Волгоград: ПринТерра, 2009, էջ 118-122; **Карнозова Л.М.** Российское уголовное правосудие в отношении несовершеннолетних и ювенальная юстиция // Государство и право. М.: Наука, 2008, № 3, էջ 54-64; **Смеловцев К.И.** Ювенальная юстиция в системе социальной профилактики правонарушений несовершеннолетних. Автореф. дис. ... канд. юрид. наук - М., 2005. 35 էջ և նրիշներ:

<sup>2</sup> **Ларин А.М., Мельникова Э.Б., Савицкий В.М.** Уголовный процесс России. Лекции-очерки / Под ред. проф. В.М. Савицкого. М.: Издательство БЕК, 1997, էջ 197:

<sup>3</sup> **Преденна И.В.** Правовые и теоретические основы развития ювенальной юстиции в России: дисс. ... канд. юрид. наук: 12.00.11. Саратов, 2005, էջ 10:



ներն ու օրինական շահերը պաշտպանելն է, կյանքի ու դաստիարակության անբարենպաստ պայմաններից նրանց պաշտպանելը»<sup>1</sup>: Ինչպես արդարացիորեն նշում է Ն. Վ. Լյաշենկոն. «Յուվենալ արդարադատության նշանակությունը անչափահասների իրավունքներն առավելագույնս պաշտպանելն է»<sup>2</sup>: Այսինքն՝ անչափահասները դիտվում են ոչ թե որպես ռեպրեսիայի, այլ որպես արդարացման (ռեպրիիտացիայի) օբյեկտ, ինչը նշանակում է իրավունքների և ազատությունների լուրջ սահմանափակումներից զերծ միջոցների ավելի լայն կիրառում: Յուվենալ արդարադատության գաղափարը ենթադրում է, որ արդարադատությունն ինքնին կողմնորոշված է, առաջին հերթին, անչափահասների վրա դրականորեն ազդելու, որպեսզի նրանց մեջ ձևավորվեն հատկանիշներ, որոնք կկանխարգելեն հետագայում հանցանքներ գործել: Այս տեսանկյունից արդարացված է այն մոտեցումը, որ յուվենալ արդարադատությունը հիմնականում ուղղված է այն բանին, որ որքան հնարավոր է հրաժարվել պատժի միջոցներից, նշված կատեգորիայի անձանց հետ առնչվելիս նախապատվությունը տալ նրանց ռեպրիիտացմանը և դաստիարակմանը, քանի որ, օգնելով նրանց, մենք կարող ենք նրանց հետ կանգնեցնել նոր հանցագործություններ կատարելուց, փոխել իրականության նկատմամբ նրանց մոտեցումները, օգնել գիտակցելու իրենց սխալները և ուղղելու դրանք<sup>3</sup>:

Անչափահաս մեղադրյալների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն անկասկած քրեական դատավարության

---

<sup>1</sup> **Алексин А.Н.** Ювенальная юстиция как проявление социальной эффективности уголовного процесса в РФ // Система отправления правосудия по уголовным делам в современной России как социальное взаимодействие личности и государства: сборник научных статей: в 2 ч.. Курск: Изд-во Курск. гос. техн. ун-та, 2009, Ч. 1, էջ 185:

<sup>2</sup> **Ляшенко Н.В.** Восстановительный подход к правосудию для несовершеннолетних – основа для создания ювенальной юстиции в Российской Федерации. // Научные труды. Российская академия юридических наук. Выпуск 9. В 3 томах. Том 3. М.: Издательская группа «Юрист», 2009, էջ 967:

<sup>3</sup> Տե՛ս **Видашев И.И.** Специализация судов и судей как средство повышения качества правосудия // Евразийский юридический журнал, М., 2010, № 7 (26), էջ 127:

հիմնական խնդիրներից է<sup>1</sup>: Սակայն հարկ է նշել, որ ոչ պակաս ուշադրության է արժանի նաև դատավարական այլ կարգավիճակում գտնվող (տուժող, վկա) անչափահասների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Ցավոք, նրանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը նվիրված ուսումնասիրությունների թիվն անհամեմատ քիչ է: Թեպետև անչափահասների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հիմնախնդիրը պետք չէ սահմանափակել միայն մեղադրյալների և կասկածյալների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությամբ: Ավելի ճիշտ կլիներ այդ խնդիրները քննարկել համալիր ձևով, այսինքն՝ փոխկապակցված: Այդպիսի մոտեցումը կնպաստեր անչափահասների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության միասնական սկզբունքների ձևավորմանը քրեական դատավարութ-

---

<sup>1</sup> Տե՛ս **Сидоров В.В.** Обжалование действий (бездействия) и решений органов уголовного преследования как средство защиты прав и законных интересов несовершеннолетних подозреваемых (обвиняемых) // Актуальные проблемы производства по уголовным делам в отношении несовершеннолетних. Материалы Всероссийской научно-практической конференции 23 ноября 2007 года. Калининград: Изд-во Калинингр. ЮИ МВД России, 2008, էջ 77-80; **Машинская Н.В.** Защита прав и законных интересов несовершеннолетнего, совершившего общественно опасное деяние, в досудебных стадиях уголовного процесса: Специальный выпуск // Вестник Поморского университета: Специальный выпуск. Серия "Гуманитарные и социальные науки". Архангельск: Изд-во Помор. ун-та, 2006, էջ 165-171; **Стецовский Ю.И.** Защита несовершеннолетних обвиняемых. Пособие для адвокатов - М., 1969. 65 էջ; **Галихманов А.Б.** Проблемы обеспечения прав и интересов несовершеннолетних подозреваемых и обвиняемых на предварительном следствии // Проблемы предупреждения и пресечения преступности и иных правонарушений молодежи, защиты их прав. Материалы республиканской научно-практической конференции 25 октября 2000 года. Уфа: Изд-во БашГУ, 2000, էջ 99-102; **Попов А.** Некоторые проблемы законодательного закрепления гарантий прав несовершеннолетних подозреваемых, обвиняемых в новом УПК РФ от 22 ноября 2001 г. // Правозащитник. Ежеквартальный журнал для неправительственных организаций. М.: Права человека, 2002, № 4, էջ 36-44; **Попов А.Н.** Проблемы обеспечения защиты прав несовершеннолетних подозреваемых и обвиняемых в уголовном процессе России // Северо-кавказский юридический вестник. Ростов-на-Дону, 2004, № 4, էջ 114-119; **Зуев С.В.** Защита прав несовершеннолетних подозреваемых (обвиняемых) по уголовным делам // Защита прав и профилактика правонарушений несовершеннолетних. Материалы международной научно-практической конференции (26-27 августа 2005 г.). М.: ВНИИ МВД России, 2006, էջ 121-125 և նրիշնիր:

յունում:

Նշելով անչափահասների հատուկ կարգավիճակի մասին քրեական դատավարությունում՝ հարկ է նկատել, որ դա բնավ էլ չի նշանակում, թե անչափահասը քրեական դատավարության հատուկ մասնակից է: Կարելի է խոսել միայն անչափահաս մեղադրյալների, կասկածյալների, տուժողների, վկաների կարգավիճակի առանձնահատկությունների մասին: Այդ առանձնահատկություններում կարելի է հայտնաբերել որոշ ընդհանուր գծեր, որոնց հիման վրա կարելի է ձևավորել քրեական դատավարությանը մասնակցող անչափահասների պաշտպանության միասնական հիմքեր:

Այդ ընդհանուր գծերից միքանիսի մասին հիշատակել է Ի. Յա. Ֆոյնիցկին: Նա գրել է. «Բազմաթիվ էական առանձնահատկություններով տարբերվում են այն գործերը, որոնցում որպես մեղադրյալներ ընդգրկված են անչափահաս անձինք: Փորձը ցույց է տվել, որ չհասունացած գիտակցությամբ, դյուրընկալ, չկոփված բնավորությամբ և կողմնակի օրինակներին խսկույն տուրք տվող անձանց համար սովորական դատական վարույթը հղի է բազմաթիվ վտանգներով: Գատավարության հանդիսավորությունը նրանց մղում է մեծարելու հանցագործությունը և հանցագործների շրջանում կեղծ փառքի ձգտում է առաջացնում, քննության հրապարակայնությունը նրանց ծանոթացնում է հանցավոր կյանքի այնպիսի կողմերի հետ, որոնք պետք է քողարկվեն պատանուց հնարավորինս երկար ժամանակ, և դատարանի դահլիճը վերածում է ինչ-որ առումով հանցագործությունների դպրոցի»<sup>1</sup>: Գրանով ուշադրություն է դարձվում ոչ միայն անչափահասներին իրենց իրավունքների ու օրինական շահերի նկատմամբ հնարավոր ոտնձգություններից պաշտպանելուն, այլև քրեական դատավարությանը մասնակցող անձանց և բուն դատական քննության կողմից նրանց հոգեկանի վրա հնարավոր բացասական ազդեցությունից զերծ պահելուն: Այդ դեպքում խոսքը ոչ թե քաղաքացիների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության մասին է, այլ անչափահասների կողմից հանցագործությունների

---

<sup>1</sup> Ст'ю Фойницкий И.Я. Курс уголовного судопроизводства. Т. II. СПб.: Издательство «АЛЪФА», 1996, էջ 504:

կանխարգելման, քանի որ դատական քննություններին ներկա գտնվելը կարող է նպաստել անչափահասների շրջանում կայուն քրեական հակումների ձևավորմանը:

Այդ խնդրին ուշադրություն է դարձրել նաև Մ. Ս. Ստրոգովիչը, որը գրում է. «Անչափահասների կողմից կատարված հանցագործությունների քննության և դատական քննության ժամանակ առաջինն ու հիմնականը դատավարությունն այնպես վարելն ու այնպես գործը լուծելն է, որը հնարավորություն կտա անհրաժեշտ դատախարակչական ներգործություն ունենալու անչափահաս իրավախախտի վրա, վերադարձնելու նրան ուսման ու աշխատանքի ճիշտ ուղի, զերծ պահելու հակահասարակական տարրերի վնասակար ազդեցությունից»<sup>1</sup>: Այսինքն՝ անչափահասների նկատմամբ քրեական դատավարությունը պետք է իրականացնի պաշտպանողական և դատախարակչական գործառույթներ: Նշված գործառույթներից առաջինը դրսևորվում է որպես անչափահասի հոգեկանի պաշտպանություն քրեական դատավարության մյուս մասնակիցների և հենց դատական քննության ընթացքի հնարավոր բացասական ազդեցությունից: Նշյալ գործառույթը մասնավորապես արտացոլված է ՀՀ քր. դատ. օր.-ի 341-րդ հոդվածի 2-րդ մասում. «Տասնվեց տարին չլրացած վկան պետք է հեռացվի դատական նիստի դահլիճից նրա հարցաքննությունն ավարտվելուց հետո, բացի այն դեպքերից, երբ դատարանը՝ կողմի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ, անհրաժեշտ է համարում այդ վկայի հետագա ներկայությունը»:

Ինչպես տեսնում ենք, տվյալ դեպքում անչափահաս վկային պաշտպանում են նրա հոգեկանի վրա դատական նիստի հնարավոր բացասական ազդեցությունից: Ընդ որում՝ հարկ է համաձայնվել, որ «քրեական դատավարությունում առկա է անչափահասների խստացված դատական պահպանություն՝ անկախ անչափահասի իրավական վիճակից (կասկածյալ, մեղադրյալ, ամբաստանյալ, դա-

---

<sup>1</sup> **Строгович М.С.** Курс Советского уголовного процесса. Том II: Порядок производства по уголовным делам по Советскому уголовно-процессуальному праву. М.: Издательство «Наука», 1970, էջ 474:

տապարտյալ, տուժող, վկա) կամ արարքի ծանրությունից»<sup>1</sup>:

Գաստիարակչական գործառույթը պետք է իրականացվի այնպես, որ անչափահասը համարժեք ձևով ընկալի քրեական դատավարությունը, այսինքն՝ ենթարկվի կանխարգելիչ ազդեցության: Միավորված ազգերի կազմակերպության Նվազագույն ստանդարտ կանոնների, որը վերաբերում է անչափահասների նկատմամբ արդարադատության իրականացմանը («Պեկինյան կանոններ») 5.1 կետի համաձայն՝ «Անչափահասների հարցում արդարադատության համակարգն առաջին հերթին ուղղված է անչափահասի բարօրությանն ու այն բանի ապահովմանը, որ անչափահաս իրավախախտների նկատմամբ ներազդման ցանկացած միջոց միշտ լինի համահունչ ինչպես անձի առանձնահատկություններին, այնպես է իրավախախտման առանձնահատկություններին»: Այսինքն՝ արդարադատության համակարգը պետք է անչափահասի վրա դաստիարակչական ազդեցություն ունենա:

Դա ենթադրում է նաև այն, որ անչափահասների մասնակցությամբ դատավարություններում անչափահասների առնչությամբ պետք է կիրառվի առավելագույնս անհատականացված մոտեցում: Այսինքն՝ քրեական դատավարությունը պետք է ընթանա այնպես, որ հաշվի առնվեն անչափահասների անհատական առանձնահատկությունները: Պատահական չէ, որ այդ կապակցությամբ ՀՀ քր. դատ. օր.-ի 440-րդ հոդվածում նախատեսված են այն հանգամանքները, որոնք անչափահասների գործերով պետք է հաստատվեն: Այսպես՝ նշյալ հոդվածում սահմանված է. «Բոլոր գործերով հաստատման ենթակա հանգամանքներից բացի, անչափահասների գործերով անհրաժեշտ է պարզել նաև անչափահասի՝

- 1) տարիքը (ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը).
- 2) կյանքի և դաստիարակության պայմանները.
- 3) առողջության և ընդհանուր զարգացման վիճակը»:

Անհատականացման մասին խոսվում է նաև ՀՀ քր. դատ. օր.-ի 443-րդ հոդվածի պահանջում. «Դատարանը, դատավճիռ կայացնե-

---

<sup>1</sup>Տե՛ս **Ларин А.М., Мельникова Э.Б., Савицкий В.М.** Уголовный процесс России. Лекции-очерки / Под ред. проф. В.М. Савицкого. М.: Издательство БЕК, 1997, էջ 201-202:

լիս, գալով այն եզրակացության, որ անչափահասը կարող է ուղղվել առանց քրեական պատժի միջոցներ կիրառելու, կարող է անչափահասին ազատել պատժից և նրա նկատմամբ կիրառել դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ»: Հիշյալ դրույթն ուղղակիորեն մատնանշում է, որ դատարանը պետք է առավելագույնս անհատականացված մոտեցում ցուցաբերի անչափահասի նկատմամբ պատիժ կիրառելու հարցը լուծելիս: Ընդ որում՝ առանձնահատուկ ուշադրություն է հատկացվում այն բանին, որ դատարանը, եթե հնարավոր համարի դա՝ հաշվի առնելով անչափահասի անձնային առանձնահատկությունները, ապա կարող է նրա նկատմամբ կիրառել դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ: Կարծում ենք՝ ճիշտ կլինեք, որ ՀՀ քր. դատ. օր.-ում անչափահասների նկատմամբ քրեական դատավարության առավելագույնս անհատականացումը ձևակերպվել որպես ինքնուրույն պահանջ: Քրեադատավարական օրենսդրության հետագա զարգացումը Հայաստանի Հանրապետությունում պետք է հանգեցնի նշյալ հիմնախնդրի լուծման անհրաժեշտությանը: Քրեական դատավարության անհատականացումը անչափահասների նկատմամբ արդարադատության մարդասիրական ուղղություններից մեկն է: Այն պետք է դիտել որպես անչափահասների իրավունքների և օրինական շահերի ապահովման մեխանիզմներից մեկը՝ անկախ նրանց դատավարական վիճակից: Չէ՞ որ միանգամայն ակնհայտ է, որ բավական չէ անչափահասին օժտել համալիր իրավունքներով, անհրաժեշտ է նաև ստեղծել պայմաններ, որոնցում նա կկարողանա արդյունավետորեն կիրառել այդ իրավունքները: Միայն այդ դեպքում կարելի է արձանագրել, որ անչափահասը գտնվում է հավասար պայմաններում քրեական դատավարության այլ մասնակիցների հետ:

Անչափահասների նկատմամբ անհատականացումը նպաստում է նրանց իրավունքների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանությանը: Չէ՞ որ դրա շնորհիվ հնարավորություն է ստեղծվում ժամանակին պարզելու յուրաքանչյուր անչափահասի կարողությունն ու պատրաստակամությունը օգտվելու օրենքով իրեն վերապահված իրավունքներից: Հիշյալ սկզբունքի կիրառումը ենթադրում է ոչ ձևական մոտեցում անչափահասների հարցով քրեա-

կան գործեր քննելիս՝ անկախ նրանց դատավարական վիճակից:

Թեև, իհարկե, դատավարական ձևը քրեական դատավարության անչափահաս մասնակիցների իրավունքների ու ազատությունների պաշտպանության երաշխիք է, այդուհանդերձ այդ ձևը, անշուշտ, պետք է լինի առանձնահատուկ նրանց նկատմամբ, հաշվի առնի նրանց տարիքային առանձնահատկությունները և ենթադրի ոչ ձևական մոտեցման հնարավորություն նրանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հարցը լուծելիս: Հետևաբար, անչափահասների առնչությամբ անհատականացման սկզբունքը քրեական դատավարությունում ենթադրում է նրանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության խնդիրների ոչ ձևական եղանակով լուծման հնարավորություն: Դա ենթադրում է, որ անչափահասների գործով դատավարությունը պետք է ունենա որոշակի առանձնահատկություններ, որոնցով այն կտարբերվի չափահասության տարիքի հասած այլ անձանց հարցերով քրեական դատավարությունից:

Քրեական դատավարության անհատականացման սկզբունքն արտացոլված է ժամանակակից ժողովրդավարական պետություններից շատերի քրեադատավարական օրենսդրությունում: Այսպես՝ ՌԴ քր. դատ. օր.-ի 421-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված է. «Անչափահասի կողմից կատարված հանցագործության առնչությամբ քրեական գործի նախնական քննության և դատական քննության վարույթ իրականացնելիս, ի թիվս սույն Օրենսգրքի 73 հոդվածում նշված հանգամանքների ապացուցման, հաստատվում են.

1) անչափահասի տարիքը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը.

2) անչափահասի կյանքի ու դաստիարակության պայմանները, հոգեկան զարգացման մակարդակը և նրա անձնային այլ առանձնահատկություններ.

3) անչափահասի վրա տարիքով ավելի մեծ անձանց ազդեցությունը»:

Համադրելով վերոնշյալ հոդվածը ՀՀ քր. դատ. օր.-ի 433-րդ հոդվածի հետ՝ հարկ է խոստովանել, որ Ռուսաստանի Դաշնության քրեադատավարական օրենսդրությունն ավելի լիարժեք է իրացնում հիշյալ սկզբունքը: Այնտեղ մասնավորապես ուշադրություն է դարձ-

վում այն բանին, որ բացահայտվեն անչափահասի հոգեկան զարգացման մակարդակը և այլ առանձնահատկություններ, տարիքով ավելի մեծ անձանց ազդեցությունը նրանց վրա: Ընդ որում՝ հոգեկան զարգացման մակարդակը «որոշվում է անչափահասի մտավոր զարգացման աստիճանով, համապատասխանում է այն նրա տարիքին, թե ոչ, ինչպես է դրսևորվում հոգեկան զարգացման թերաճը և դրա պատճառները՝ հոգեկան խանգարում, սոցիալական կամ մանկավարժական թերացում»<sup>1</sup>:

Անչափահասների գործերով քրեական դատավարությունը անհատականացնելիս հատկապես կարևոր նշանակություն ունի նրանց վրա տարիքով ավելի մեծ անձանց ազդեցության հարցը պարզելը: Տարիքով մեծ անձանց ազդեցության չեզոքացումը ապահովում է անչափահասի իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը երաշխավորող մեխանիզմի գործառության բնականոն պայմաններ: Իրոք, իրավաբանական գրականության մեջ նշվում է, որ մեծահասակ հանցակիցները հաճախ փորձում են կատարվածի ամբողջ մեղքը բարդել անչափահասների վրա, որոնք ստանձնում են պատասխանատվությունը, որպեսզի մեծահասակ հանցագործները խուսափեն պատասխանատվությունից<sup>2</sup>: Միանգամայն պարզ է, որ դա խոչընդոտում է անչափահասների կողմից իրենց իրավունքների և օրինական շահերի իրացմանը: Այսինքն՝ անչափահասն այդպիսի դեպքերում գործում է ոչ ի շահ իրեն: Ավելին, նա օգտագործվում է այլ անձանց կողմից արդարադատությանը խոչընդոտելու նպատակով: Ակնհայտ է, որ այդ իրավիճակում առաջանում են բարդություններ անչափահասների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հարցում: Ուստի անհատականացումն անչափահասների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության մեխանիզմ է, որը ենթադրում է անչափահասի վրա նրա շահերին հակառակ ներազդելու հնարավորության ուսում-

---

<sup>1</sup> **Николюк В.В., Даниленко И.А.** Расследование и судебное разбирательство уголовных дел о преступлениях несовершеннолетних. Омск: Омская академия МВД России, 2004, էջ 7:

<sup>2</sup> Տե՛ս **Подольный Н.А.** Молодёжная организованная преступность: особенности её воздействия на расследование и способы преодоления этого воздействия. М.:Издательство «Юрлитинформ», 2008, էջ 70-71:



մասիրումն ու հետագոտումը՝ քրեական դատավարության միջոցներով դրան խոչընդոտելու նպատակով: Բացի այդ, հարկ է նշել, որ անհրաժեշտ է ուսումնասիրել ինչպես հանցագործության պահին առկա ազդեցությունը, այնպես էլ նախաքննության, այնուհետև նաև դատական քննության ընթացքում առկա ազդեցությունը: Հանցագործության պահին առկա ազդեցությունը պարզելը կարևոր նշանակություն ունի կատարված հանցագործության մեջ անչափահասի մեղավորության չափը որոշելու համար: Օրինակ՝ «եթե անչափահասի կողմից հանցագործության կատարմանը նախորդել է մեծահասակ անձանց ոչ իրավաչափ կամ սաղորիչ պահվածքը, այդ թվում գործով տուժող ճանաչվածների, դատարանն իրավունք ունի այդ հանգամանքը ճանաչել որպես մեղադրյալի հանցանքը մեղմացնող»<sup>1</sup>: Անչափահասների վրա ազդեցության ուսումնասիրումն անհրաժեշտ է դրանից պաշտպանվելու, մասնավորապես այն դեպքում, երբ այդ պատճառով դժվարացել է օրենքով սահմանված իրավունքների իրացումը:

## **§ 2. Անչափահասների գործերով պաշտպանի և օրինական ներկայացուցչի մասնակցությունը քրեական դատավարությունում**

Քրեական դատավարության անհատականացման վերոնշյալ մեխանիզմից զատ, որի օգնությամբ ապահովվում են անչափահասների իրավունքներն ու օրինական շահերը քրեական դատավարությունում, կան նաև այլ մեխանիզմներ:

Անչափահաս անձի իրավունքներն ու օրինական շահերը երաշխավորում են նրանց պաշտպանը և օրինական ներկայացուցիչը: Քրեական դատավարությունում անչափահասների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության համակարգում կարևոր բաղադրատարր է որակյալ իրավաբանական օգնություն ցուցաբերելու կարգը: ՀՀ քր. դատ. օր.-ի 69-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

---

<sup>1</sup> Смирнов А.В., Калиновский К.Б. Комментарий к Уголовно-процессуальному кодексу Российской Федерации. / под. Общ. ред. проф. А.В. Смирнова. М.: КНОРУС, 2007, էջ 906:

«Քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, երբ...5) հանցանքը կատարելու պահին կասկածյալը կամ մեղադրյալն անչափահաս է...»: Համանման դրույթ առկա է նաև այլ պետությունների օրենսդրությունում: Այսպես՝ ՌԳ- քր. դատ. օր.-ի 51-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է. «Պաշտպանի մասնակցությունը քրեական դատավարությանը պարտադիր է, եթե... 2) կասկածյալը, մեղադրյալը անչափահաս է»:

Հարկ է նշել, որ խորհրդային ժամանակաշրջանում ևս անչափահաս կասկածյալին, մեղադրյալին պարտադիր կարգով պաշտպան տրամադրելու հարցը որոշվում էր նույն կերպ, ինչպես որ հիմա: Այսպես՝ Հայկական ԽՍՀ քր. դատ. օր.-ի 45-րդ հոդվածի 1-ին մասում ասվում էր. «Պաշտպանի ներկայությունը գործի դատական քննության ժամանակ պարտադիր է... 3) անչափահասների հանցագործություններին առնչվող գործերում»: Ըստ այդմ՝ կարող ենք խոսել այդ հարցի կապակցությամբ քրեադատավարական օրենսդրությունում առկա իրավահաջորդության մասին: Հաշվի առնելով այն, որ այդպիսի իրավահաջորդությունը լիովին համապատասխանում է ժողովրդավարական իդեալներին, այն պետք է ընդունելի համարել նաև Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության համար: Անչափահաս կասկածյալին, մեղադրյալին պարտադիր կերպով պաշտպան տրամադրելը երաշխավորում է նրա իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը: Դա երաշխավորում է նաև քննիչի և պաշտոնատար այլ անձանց կողմից անչափահասին բարձր որակավորմամբ պաշտպանի ծառայություններից հրաժարվելուն հարկադրելուց: Չէ՞ որ լիովին ակնհայտ է, որ հոգեպես դեռևս բավականաչափ չզարգացած անչափահասը թույլ է նաև կամքի ուժով, ինչը հնարավորություն է ստեղծում նրա վրա ազդեցություն գործելու, որից երբեմն կարող են օգտվել իրավապահական մարմինների անբարեխիղճ պաշտոնատար անձինք՝ ի վնաս նրա իրավունքների և օրինական շահերի:

Պաշտպանի պարտադիր մասնակցությունը քրեական դատավարությանը կասկածյալների, մեղադրյալների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության կարևոր երաշխիք է քրեական

դատավարությունում: Այս առումով նշյալ խնդրին նվիրվել են բազմաթիվ հրապարակումներ<sup>1</sup>: Ընդ որում՝ առանձնահատուկ ուշադրություն է դարձվել անչափահաս կասկածյալին, մեղադրյալին պարտադիր կերպով պաշտպան հատկացնելուն: Դա պայմանավորված է այն բանով, որ անչափահասները դասվում են այն անձանց խմբին, որոնք ավելի շատ կարիք ունեն որակյալ իրավաբանական օգնության, ինչպիսին պրոֆեսիոնալ փաստաբանի օգնությունն է: Ընդ որում՝ նմանօրինակ օգնություն ցուցաբերելու հարցում կարևոր է այն պահը, որից սկսած անչափահաս կասկածյալը, մեղադրյալը կարող են օգտվել դրանից: Այսպես՝ համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի 69-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է... 2) համապատասխանաբար՝ կասկածյալին ձերբակալման մասին քրեական հետապնդման մարմնի որոշումը, ձերբակալման արձանագրությունը կամ խափանման միջոց ընտրելու մասին որոշումը հայտարարելու կամ մեղադրանք առաջադրելու պահից՝ սույն հոդվածի առաջին մասի 2-րդ, 4-րդ, 5-րդ կետերով նախատեսված դեպքերում»: Համանման դրույթ կա նաև Ռուսաստանի քրեադատավարական օրենսդրությունում: Համաձայն ՌԴ քր. դատ. օր.-ի 48-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «պաշտպանը մասնակցում է քրեական գործին.

1) անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում կայացնելու պահից սկսած՝ բացառությամբ սույն հոդվածի 2-5 կետերով նախատեսված դեպքերի.

2) կոնկրետ անձի նկատմամբ քրեական գործ հարուցելու պա-

---

<sup>1</sup> Տե՛ս **Мотовиловкер Я., Ширшов М.** Психический недостаток обвиняемого как условие обязательного участия защитника в уголовном судопроизводстве // Советская юстиция. М.: Юрид. лит., 1983, № 2, էջ 26; **Шимановский В.** Обязательное участие защитника на предварительном следствии // Социалистическая законность. М.: Известия, 1975, № 7, էջ 43-44; **Стецовский Ю.** Обязательное участие защитника в уголовном деле // Советская юстиция. М.: Юрид. лит., 1975, № 21, էջ 18-19; **Баранов А.М.** О моменте допуска и обязательном участии защитника в досудебном производстве по УПК РФ // Законодательство и практика. Омск: Изд-во Ом. юрид. ин-та МВД России, 2002, № 1, էջ 16-17; **Кондрусов Э.В.** Защитник. Понятие, его процессуальное положение, допуск защитника к участию в деле, обязательное участие защитника // Российский судья. М.: Юрист, 2007, № 3, էջ 30-32 և ուրիշներ:

հից սկսած.

3) հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անձին փաստացի ձերբակալելու պահից սկսած՝

ա) սույն Օրենսգրքի 91-րդ և 92-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում,

բ) նրա նկատմամբ սույն Օրենսգրքի 100-րդ հոդվածի համաձայն որպես խափանման միջոց կալանավորումը կիրառելու դեպքում.

3.1) սույն Օրենսգրքի 223.1-րդ հոդվածով սահմանված կարգով հանցագործության մեջ կասկածվելու մասին ծանուցում հանձնելու պահից սկսած.

4) հանցագործության մեջ կասկածվող անձին դատահոգեբու-ժական փորձաքննություն անցկացնելու որոշման մասին իրազեկելու պահից սկսած.

5) հանցագործության մեջ կասկածվող անձի իրավունքներին ու ազատություններին առնչվող դատավարական հարկադրանքի այլ միջոցների կամ այլ դատավարական գործողությունների կիրառման պահից սկսած»:

Այս նորմերի համադրումը թույլ է տալիս նկատելու, որ, իհարկե, օրենքում ամրագրված այն նորմը, որտեղ ասվում է, որ պաշտպան տրամադրվում է քրեական գործ հարուցելու պահից սկսած, ավելի է համապատասխանում մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության սկզբունքին: Ուստի Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրությունում համանման նորմ ներառելը միանգամայն տեղին կլիներ: Մասնավորապես, ՀՀ քր. դատ. օր.-ում պետք է միանշանակորեն սահմանվի, որ անչափահասին պաշտպան է տրամադրվում նաև նրա նկատմամբ քրեական գործ հարուցելու պահից սկսած կամ նրա նկատմամբ քրեադատավարական հարկադրանք կիրառելու պահից սկսած:

Ի դեմս պրոֆեսիոնալ փաստաբանի՝ պաշտպանի մասնակցությունը անչափահաս կասկածյալների, մեղադրյալների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության կարևոր երաշխիք է: Դրան իրավաբանական գրականությունում առանձնահատուկ ու-

շաղրութիւն են դարձրել<sup>1</sup>: Պաշտպանի պարտադիր մասնակցութիւնը քննութեան վաղ փուլերին կանխում է անչափահասի նկատմամբ իրավապահական մարմինների պաշտոնատար անձանց կողմից կամայականութեամբ հնարավորութիւնը: Փաստաբանի օգնութիւնը անչափահասին հատկապէս արժեքավոր է այն պատճառով, որ որակյալ է, ինչը թույլ է տալիս արդյունավետորեն դիմագրավել մեղադրանքի կողմին, որը մասնավորապէս ներկայացնում է պետական մեղադրողը, որի բարձր որակավորումը կասկածից դուրս է: Դրանով իսկ ստեղծվում են պայմաններ մրցակցային սկզբունքի գործողութեան համար, երբ կողմերն օրենքով օժտված են լինում իրենց դիրքորոշումները պաշտպանելու հավասար միջոցներով: Անչափահասների խոցելիութիւնը՝ պայմանավորված նրանց տարիքով, պատճառ է դարձել, որ օրենսդիրն անհրաժեշտ համարի առավելագոյնս ամրապնդելու

---

<sup>1</sup> Տե՛ս **Макаренко И.А.** Защитник как гарант соблюдения прав и законных интересов несовершеннолетнего обвиняемого // Закон и право. М.: ЮНИТИ-ДАНА, 2006, № 12, էջ 29-30; **Тетюев С.В.** К вопросу о защитнике несовершеннолетнего в уголовном судопроизводстве (анализ части 2 статьи 49 КПК РФ) // Адвокатская практика. М.: Юрист, 2007, № 5, էջ 34-36; **Закирова М.Т.** Об обязательном участии защитника в судебном разбирательстве по делам несовершеннолетних // Актуальные проблемы международного ювенального права. Материалы Всероссийской научно-практической конференции, г. Волгоград, 15 марта 2006 г.. Волгоград: Изд-во ВолГУ, 2006, էջ 69-72; **Мищенко Е.В.** К вопросу об участии защитника в производстве по делам несовершеннолетних // Право и государство: теория и практика. М.: Право и государство, 2006, № 8, էջ 112-115; **Макеев Н.С.** Защитник несовершеннолетних обвиняемых на предварительном следствии и в суде первой инстанции. Автореф. дис. ... канд. юрид. наук - М., 1975. 21 էջ; **Елесин В.И.** Защитник по делам о преступлениях несовершеннолетних в советском уголовном процессе. Автореф. дис. ... канд. юрид. наук / - М., 1966. 19 էջ; **Хомышин И.М.** Некоторые вопросы участия адвоката в уголовном судопроизводстве по делам несовершеннолетних // Актуальные проблемы производства по уголовным делам в отношении несовершеннолетних. Материалы Всероссийской научно-практической конференции 23 ноября 2007 года. Калининград: Изд-во Калинингр. ЮИ МВД России, 2008, էջ 90-93; **Еникеев З.Д., Еникеев Р.З.** Проблемы повышения роли адвоката в защите несовершеннолетних подозреваемых и обвиняемых // Ученые труды Российской академии адвокатуры. М.: Российская Академия адвокатуры, 2003, Вып. 3, էջ 102-112; **Астащенко В.Г.** К вопросу участия адвоката на предварительном следствии по делам несовершеннолетних // Доклады итоговой научной конференции юридических факультетов (декабрь 1970 г.). Томск: Изд-во Том. ун-та, 1971, էջ 170-173 և նրիշնիր:

նրանց դատավարական վիճակը: Դ-ա հնարավոր է դարձել անչափահասներին պարտադիր կերպով պաշտպան-փաստաբաններ տրամադրելու շնորհիվ: Այդպիսով հնարավոր է դարձել ոչ միայն չեզոքացնել անչափահասների անտեղի, բայց և հավանական հուգական բռնկումները, այլև պայմաններ ստեղծել իրավաբանորեն գրագետ պաշտպանություն կառուցելու համար:

Ս. Վ. Տետյուևը իրավագիտորեն նշում է. «Պաշտպանի գործունեությունը կարևոր տեղ է գրավում անչափահասների պաշտպանության իրավունքի դատավարական երաշխիքների համակարգում, քանզի նրանց անձնային հոգեֆիզիկական առանձնահատկությունները հաճախ առաջ են բերում պասիվ դիրքորոշում դատավարության ընթացքում, անտարբեր վերաբերմունք սեփական շահերի պաշտպանության նկատմամբ, դրան հաճախ ավելանում են կեղծ ռոմանտիկան, չափահաս և անկախ երևալու ձգտումը, ինչը երբեմն ապակողմնորոշում է քննիչին և կարող է հանգեցնել դեռահասների օրինական շահերը ռոմանտիկորոշ ոչ ճիշտ որոշումների»<sup>1</sup>:

Անչափահաս կասկածյալի, մեղադրյալի պաշտպանության առանձնահատկությունը քրեական դատավարության մինչդատական փուլերում այն է, որ նա իրավունք ունի իր իրավունքներն ու շահերը ներկայացնելու և օրինական ներկայացուցչի և պաշտպան-փաստաբանի միջոցով: Իրավացի է Ե. Վ. Գորբաչովան, երբ գրում է. «Ընդհանուր առմամբ անչափահասների գործով հանցագործությունների քննության ժամանակակից տարբերակը արտացոլում է «դասական» քննության համընդհանուր առանձնահատկությունը՝ ապահովելու անչափահաս մեղադրյալի պարտադիր պաշտպանությունը և կրկնակի ներկայացվածությունը (պաշտպան և օրինական ներկայացուցիչ)»<sup>2</sup>: Քննության մման տարբերակը, ինչպես

---

<sup>1</sup> **Тетюев С.В.** Защитник - обязательный участник производства по уголовным делам в отношении несовершеннолетних //Научные труды. Российская академия юридических наук. Выпуск 9. В 3 томах. Том 3. М.: Издательская группа «Юрист», 2009, էջ 1074:

<sup>2</sup> **Горбачёва Е.В.** Проблемы регулирования судопроизводства по делам несовершеннолетних в УПК РФ. //Материалы международной научно-практической конференции «Уголовно-процессуальный кодекс Российской Федерации: год правоприменения и преподавания». М., 2004, էջ 307:

երևում է, արդարացրել է իրեն որպես անչափահաս մեղադրյալի, կասկածյալի իրավունքների և օրինական շահերի երաշխիք: Այն կրկնակի երաշխիք է անչափահասի համար իր նկատմամբ իրավապահպան մարմինների պաշտոնատար անձանց հնարավոր չարաշահումներից:

Անչափահաս մեղադրյալների, կասկածյալների իրավունքների և օրինական շահերի նմանօրինակ «կրկնակի» երաշխիքի օգտակարությունն անվիճելի է: Սակայն իրականում ծագում են որոշ դժվարություններ առանձին դատավարական գործողությունների ժամանակ պաշտպանության ընդհանուր տակտիկական ընտրելիս: Չէ՞ որ անչափահասի և նրա օրինական ներկայացուցչի միջև կարող են ծագել որոշ տարաձայնություններ այն հարցում, թե ինչ դիրքորոշում որդեգրել պաշտպանությունն իրականացնելիս: Այդ դեպքում փաստաբան-պաշտպանի համար ստեղծվում է դժվարին իրավիճակ. համաձայնել անչափահաս կասկածյալի, մեղադրյալի կամ նրա օրինական ներկայացուցչի կարծիքի հետ, թե՞ ընտրել և պաշտպանել սեփական տեսակետը, որը նրա կարծիքով, ավելի գերադասելի է անչափահասի համար: Չէ՞ որ ՀՀ քր. դատ. օր.-ի 73-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն «պաշտպանն իրավունք չունի կատարել պաշտպանյալի շահերին հակասող որևէ գործողություն», սակայն կարող է պատահել այնպես, որ ընտրված և պաշտպանին առաջարկված դիրքորոշումը գործի ի վնաս իր պաշտպանյալի: Այդ դեպքում նա կարող է արդյոք պաշտպանության ուրիշ տակտիկա ընտրել, որը տարբերվի այն մեկից, որ նրան առաջարկում են անչափահասի պաշտպանյալը կամ նրա օրինական ներկայացուցիչը: Կարծում ենք՝ այո, փաստաբան-պաշտպանը կարող է այլ դիրքորոշում ունենալ, քան պաշտպանյալն ու նրա օրինական ներկայացուցիչը, եթե կարծում է, որ նրանց դիրքորոշումը սխալ է և տանում է իր պաշտպանյալի վիճակի վատթարացման<sup>1</sup>: Սակայն նա պարտադիր պետք է ձեռնարկի բոլոր միջոցները, որպեսզի դրանում համոզի իր անչափահաս պաշտպանյալին և նրա օրինական ներկայացուցչին: Հա-

---

<sup>1</sup> Ст'я Подольный Н.А. Всегда ли в интересах доверителя, чтобы адвокат действовал в соответствии с его волей? // Адвокатская практика. М.: Юрист, 2004, № 3, էջ 16-18:

յաստանի Հանրապետության քրեադատավարական իրավունքի վերոնշյալ նորմի ձևակերպումը նման հնարավորություն է տալիս փաստաբան-պաշտպանին: Ուստի իրավակիրառ պրակտիկան նորմատիվ հիմք ունի փաստաբանի կողմից անչափահաս պաշտպանյալի իրավունքների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանություն իրականացնելու համար:

Պաշտպանական տակտիկա ընտրելիս որոշակի ազատության առկայությունը չի բացառում, որ փաստաբան-պաշտպանը պետք է համաձայնեցնի իր դիրքորոշումը պաշտպանյալի՝ անչափահաս կասկածյալի, մեղադրյալի և նրա օրինական ներկայացուցչի դիրքորոշման հետ: Դա անհրաժեշտ է, որպեսզի պաշտպանությունը իրականացվի արդյունավետ, և դրա արդյունքում հնարավոր լինի հասնել ցանկալի արդյունքի: Փաստաբանը պարտավոր է տեղեկացնել իր անչափահաս պաշտպանյալին և նրա օրինական ներկայացուցչին նրանց որդեգրած դիրքորոշման բոլոր հնարավոր բացասական հետևանքների մասին և միջոցներ ձեռնարկել, որպեսզի վերանայեն այդ դիրքորոշումը՝ փոխարինելով այն իրենց ավելի ձեռնտու դիրքորոշմամբ: Եթե դա նրան չի հաջողվում, նա իրավունք ունի իրավիճակից ելնելով կամ համաձայնել իր պաշտպանյալի դիրքորոշման հետ՝ ենթարկվելով նրա կամքին և համարելով դա նրա շահերին չհակասող, կամ առաջ տանել սեփական դիրքորոշումը, որը կհամապատասխանի անչափահաս կասկածյալի, մեղադրյալի շահերին՝ թեկուզև հակասելով սեփական շահերին:

Օրինական ներկայացուցչի կարգավիճակն ու նշանակությունը վաղուց արդեն իրավաբանների ուշադրության կենտրոնում են<sup>1</sup>:

---

<sup>1</sup> Տե՛ս **Новобратский Л.** Законный представитель несовершеннолетнего в уголовном процессе // Советская юстиция. М.: Госюриздат РСФСР, 1962, № 24, էջ 10-11; **Ландо А.С.** О процессуальном положении законного представителя несовершеннолетнего обвиняемого: Сборник работ аспирантов и соискателей // Ученые записки: Сборник работ аспирантов и соискателей. Саратов: Изд-во Сарат. юрид. ин-та, 1970, Вып. 19: Ч. 2, էջ 254-261; **Иванов А., Ландо А.** Законный представитель несовершеннолетнего обвиняемого // Социалистическая законность. М., 1970, № 9, էջ 72-73; **Тепляков П.** Законный представитель несовершеннолетнего обвиняемого в советском уголовном процессе // Социалистическая законность. М., 1972, № 10, էջ 40-41; **Тепляков П.П.** Развитие законо-



Ներկայումս անչափահասի օրինական ներկայացուցչի հիմնախնդիրները քրեական դատավարությունում չեն կորցրել իրենց հրատապությունը<sup>1</sup>: Կասկած չկա, որ օրինական ներկայացուցիչը քրեական դատավարության մասնակից է, որը երաշխավորում է անչափահասների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը: Այդ երաշխիքը ապահովվում է շնորհիվ այն բանի, որ օ-

---

дательства о законном представителе несовершеннолетнего обвиняемого в русском и советском уголовном процессе // Государство, право и демократия в условиях развитого социалистического общества. Тезисы докладов 2-ой научно-теоретической конференции аспирантов (2-4 февраля 1973 г.). М.: Изд-во ВЮЗИ, Изд-во МГУ, 1973, т. 244-246; **Иванов А., Ландо А.** Законный представитель несовершеннолетнего подозреваемого // Социалистическая законность. М., 1973, № 3. їз 47; **Ландо А.С.** Представители несовершеннолетних обвиняемых в советском уголовном процессе. Автореф. дис. ... канд. юрид. наук - Саратов, 1973. 20 էջ; **Ландо А.С.** Участие по делам несовершеннолетних их законных представителей // Тезисы докладов и сообщений на Всесоюзной научно-практической конференции "Совершенствование организации и усиление воспитательно-предупредительного воздействия судебных процессов", 23-24 октября 1974 г.. М.: Изд-во МЮ СССР, 1974, էջ 74-76; **Ландо А.С.** Вопросы участия в процессе законных представителей несовершеннолетнего подозреваемого // Вопросы теории и практики прокурорского надзора. Межвузовский научный сборник. Саратов: Изд-во Саратов. ун-та, 1974, էջ 49-55 և ուրիշներ:

<sup>1</sup> Տե՛ս **Дикарев И.** Свидетельский иммунитет законных представителей несовершеннолетних // Уголовное право. М.: АНО "Юридические программы", 2009, № 1, էջ 76-80; **Назарчук А.Г.** Роль и участие законных представителей несовершеннолетних подозреваемых (обвиняемых) в уголовном процессе // Общество и право. Краснодар: Изд-во Краснодар. ун-та МВД России, 2009, № 2 (24), էջ 201-205; **Дорофеева В.Ю.** Процессуально-тактические особенности деятельности профессионального представителя несовершеннолетнего потерпевшего в российском уголовном судопроизводстве. Автореф. дис. ... канд. юрид. наук - Воронеж, 2009. 23 էջ; **Лощкарева Т.В.** К вопросу об участии законных представителей по уголовным делам в отношении несовершеннолетних // Совершенствование деятельности по раскрытию и расследованию преступлений, совершенных несовершеннолетними. Сборник научных статей по материалам научно-практической конференции, 20 июня 2007 г.. Ижевск: ИФ НА МВД России, 2008, էջ 13-17; **Васильева О.М.** Процессуальные проблемы допуска законных представителей несовершеннолетних подозреваемых и обвиняемых к участию в уголовном судопроизводстве // Совершенствование деятельности по раскрытию и расследованию преступлений, совершенных несовершеннолетними. Сборник научных статей по материалам научно-практической конференции, 20 июня 2007 г.. Ижевск: ИФ НА МВД России, 2008, էջ 17-26 և ուրիշներ:

րինական ներկայացուցիչը, անչափահասի մոտ առանձնահատուկ, վստահելի հարաբերություններ ձեռք բերելով, իմանալով նրա յուրահատկությունները, կարող է բավականին արդյունավետորեն նպաստել նրա իրավունքների ու ազատությունների իրացմանը: Ըստ այդմ, օրինական ներկայացուցչին պետք է դիտել անչափահասների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության համակարգի կարևորագույն տարրերից մեկը քրեական դատավարությունում: Նրա շնորհիվ իրական է դառնում անչափահասների պաշտպանության հնարավորությունը քրեական դատավարությունում և ապահովվում է կողմերի հավասարության սկզբունքի գործողությունը:

Ռ-Դ գործող քր. դատ.օր.-ի համաձայն օրինական ներկայացուցիչներ նախատեսված են ոչ միայն կասկածյալի և մեղադրյալի համար, այլև տուժողի և վկայի: Այսպես՝ Ռ-Դ քր. դատ.օր.-ի 48-րդ հոդվածում նախատեսված է. «Անչափահասների կողմից կատարված հանցագործություններին վերաբերող քրեական գործերում, քրեական գործին պարտադիր կերպով մասնակցելու համար ներգրավվում են նրանց օրինական ներկայացուցիչները սույն Օրենսգրքի 426-րդ և 428-րդ հոդվածներով սահմանված կարգով»: Ռ-Դ քր. դատ.օր.-ի 45-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Այն տուժողների, որոնք անչափահաս են կամ իրենց ֆիզիկական կամ հոգեկան վիճակի պատճառով զրկված են իրենց իրավունքներն ու օրինական շահերը ինքնուրույն պաշտպանելու հնարավորությունից, իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու նպատակով պարտադիր կարգով քրեական դատավարությունում ներգրավվում են նրանց օրինական ներկայացուցիչները կամ ներկայացուցիչները»: Իսկ Ռ-Դ քր. դատ.օր.-ի 280 հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «անհրաժեշտության դեպքում անչափահաս տուժողների և վկաների հարցաքննությանը մասնակցելու համար, ինչի մասին նշված է սույն հոդվածի առաջին մասում, կանչվում են նաև նրանց օրինական ներկայացուցիչները, որոնք նախագահողի թույլտվությամբ կարող են հարցեր տալ հարցաքննվողին»: Ընդ որում՝ վկայի օրինական ներկայացուցիչը Ռ-Դ քր. դատ.օր.-ի II բաժնում նշված չէ որպես քրեական դատավարության մասնակից: Թեպետ դա միանգամայն հստակ երևում է վերոնշյալ դրույթից:

Ինչպես տեսնում ենք, օրինական ներկայացուցիչները դիտվում են և՛ որպես քրեական դատավարության մասնակից պաշտպանության կողմից, և՛ որպես քրեական դատավարության մասնակից մեղադրողի կողմից, և՛ նույնիսկ որպես մասնակիցների հատուկ խումբ, որը ներկայացնում է անչափահաս վկաների շահերը: Ընդ որում՝ Ռուսաստանի օրենսդիրը յուրաքանչյուր այդպիսի դեպքում սահմանում է նշյալ օրինական ներկայացուցիչների դատավարական վիճակը: Սակայն եթե համեմատենք նրանց դատավարական վիճակները, ապա կնկատենք, որ նրանք բոլորը օժտված են իրավունքների գրեթե նույն ծավալով, որոնք անհրաժեշտ են իրենց՝ անչափահասների շահերը պաշտպանելու համար, որոնց իրենք ներկայացնում են: Բացի այդ՝ նրանք նույն շրջանակի այն անձինք են, որոնք կարող են հանդես գալ որպես անչափահասների օրինական ներկայացուցիչներ:

Այսպես՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 76-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է. «Տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցիչներ են համարվում նրանց ծնողները, որդեգրողները, խնամակալները կամ հոգաբարձուները, որոնք քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացնում են դատավարության համապատասխան անչափահաս կամ անգործունակ մասնակցի օրինական շահերը: Օրինական ներկայացուցիչ չունենալու դեպքում քրեական վարույթն իրականացնող մարմինը տուժողի, կասկածյալի կամ մեղադրյալի օրինական ներկայացուցիչ է նշանակում խնամակալության և հոգաբարձության մարմինն»:

Ակնհայտ է, որ այդպիսի միանման մոտեցումը ստեղծում է պայմաններ պահանջների միասնական համակարգի համար, որոնք պետք է ներկայացվեն քրեական դատավարությանը մասնակցող անչափահասի օրինական ներկայացուցչի կարգավիճակին: Այսինքն՝ ստեղծվում են բարենպաստ պայմաններ կողմերի հավասարության սկզբունքի կիրառման համար քրեական դատավարությունում, որը չի ենթադրում կողմերից որևէ մեկի առավելություն:

Իրոք, չնայած անչափահաս կասկածյալների, մեղադրյալների<sup>1</sup> օրինական ներկայացուցիչների և անչափահաս տուժողների<sup>2</sup> օրինական ներկայացուցիչների, ինչպես նաև անչափահաս վկաների<sup>3</sup> օրինական ներկայացուցիչների միջև առկա բազում առանձնահատկություններին, նրանք բոլորը նման են: Դա միանման մոտեցման հիմքն է, որի համաձայն դիտարկվում է ընդհանրապես անչափահասի դատավարական վիճակը՝ անկախ այն բանից, թե ում է նա ներկայացնում կասկածյալին, մեղադրյալին, տուժողին, վկային<sup>4</sup>:

---

<sup>1</sup> Տե՛ս **Дикарев И.** Значение и проблемы участия законного представителя несовершеннолетнего подозреваемого, обвиняемого в уголовном судопроизводстве // Уголовное право. М.: АНО "Юридические программы", 2007, № 5, էջ 76-78; **Бычкова К.Г.** Некоторые вопросы участия законных представителей несовершеннолетних подозреваемого и обвиняемого по уголовным делам // Обеспечение законности в российском уголовном судопроизводстве. Материалы Международной научно-практической конференции (Саранск, 7 - 8 декабря 2006 г.). Саранск: Мордов. кн. изд-во, 2006, էջ 100-104; **Галимов О.Х.** Правовое регулирование процессуального статуса законного представителя несовершеннолетнего подозреваемого (обвиняемого) в УПК РФ // Актуальные проблемы борьбы с преступностью в Сибирском регионе. Сборник материалов международной научно-практической конференции (7 - 8 февраля 2003 г.). Красноярск: Изд-во Сиб. юрид. ин-та МВД России, 2003, Ч. 2, էջ 113-117 և նրիչներ:

<sup>2</sup> Տե՛ս **Дорофеева В.Ю.** Процессуально-тактические особенности деятельности профессионального представителя несовершеннолетнего потерпевшего в российском уголовном судопроизводстве. Автореф. дис. ... канд. юрид. наук - Воронеж, 2009, էջ 14:

<sup>3</sup> Տե՛ս **Оплетаев В.С.** Некоторые вопросы о законных представителях несовершеннолетних свидетелей // Проблемы права. Международный правовой журнал. Челябинск, 2007, № 1, էջ 171-173; **Мухудинова Н.Р.** Адвокат свидетеля, законный представитель несовершеннолетнего свидетеля в российском уголовном судопроизводстве // Научные труды РАЮН. В 3-х томах. М.: Юрист, 2009, Вып. 9, Т. 3, էջ 990-992:

<sup>4</sup> Տե՛ս **Габдрахманов Ф.В.** Законный представитель несовершеннолетнего лица в уголовном судопроизводстве // Уголовный процесс. М.: Изд. Дом "Арбитражная практика", 2007, № 10, էջ 42-44; **Белокопытов А.К.** О возможности участия законных представителей несовершеннолетних на стадии возбуждения уголовного дела // Современные проблемы правосознания и правоприменения. Сборник научных трудов. М., Иркутск: ГОУ ВПО РПА Минюста России, 2007, Вып. 4, էջ 139-142; **Переверзев А.В.** Место законного представителя в системе судопроизводства по делам несовершеннолетних // Актуальные вопросы применения уголовно-процессуального законодательства в современных условиях. Материалы практической конференции, проводимой на прокурорско-следст-

Օրինական ներկայացուցչի գլխավոր խնդիրը անչափահասի իրավունքները և օրինական շահերը ներկայացնելն է քրեական դատավարությունում: Այս խնդիրը դրված է օրինական ներկայացուցչի առջև անկախ այն բանից, թե ում է նա ներկայացնում՝ կասկածյալին թե մեղադրյալին, տուժողին, թե վկային: Այս խնդիրը լուծելու անհրաժեշտությունը ենթադրում է, որ բոլոր օրինական ներկայացուցիչները պետք է օժտվեն իրավունքների և պարտականությունների համանման փաթեթով: Դա անհրաժեշտ է, որպեսզի պահպանվի կողմերի հավասարության սկզբունքը քրեական դատավարությունում: Նաև անչափահասների բոլոր օրինական ներկայացուցիչների համար ընդհանուր է այն անձանց շրջանակը, ովքեր կարող են հանդես գալ որպես այդպիսին: ՀՀ քր. դատ. օր.-ի 76-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված են, թե ովքեր կարող են հանդես գալ որպես անչափահասների օրինական ներկայացուցիչներ: Նշյալ դրույթում Հայաստանի Հանրապետության օրենսդիրը հաստատել է իր հավատարմությունը քրեական դատավարությունում օրինական ներկայացուցչի ընտրության միանման մոտեցմանը, որը պետք է համարել ՀՀ քր. դատ. օր.-ի անվիճելի առավելությունը:

Միանման մոտեցման հիման վրա սահմանվել է իրավունքների շրջանակը, որոնցով օժտվում է օրինական ներկայացուցիչը՝ անկախ այն բանից, թե ում է նա ներկայացնում՝ մեղադրյալին, կասկածյալին, տուժողին թե վկային: Դա չի բացառում օրինական ներկայացուցիչների միջև տարբերությունների առկայությունը քրեական դատավարությունում: Այս մասին է վկայում ՀՀ քր. դատ. օր.-ի

---

венном факультете Военного университета). М.: Юркнига, 2006, էջ 100-103; **Орлова Ю.Р.** Участие законных представителей в расследовании уголовных дел, совершаемых несовершеннолетними // Российский следователь. М.: Юрист, 2006, № 8, էջ 10-13; **Матвеев С.В.** УПК РФ об участии законных представителей, близких родственников в расследовании уголовных дел, совершенных несовершеннолетними // Журнал российского права. М.: Норма, 2002, № 5, էջ 104-107; **Галимов О.Х.** Участие законных представителей несовершеннолетних на предварительном следствии // Уголовно-процессуальные и криминалистические проблемы расследования преступлений несовершеннолетних. Тезисы докладов и сообщений к научно-практическому семинару 1992 г.. Омск: Изд-во Ом. ВШМ МВД России, 1992, էջ 65-67 և ուրիշներ:

77-րդ հոդվածի 9-րդ մասը, որտեղ սահմանված է. «Տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցիչն իր իրավունքներից օգտվում և իր վրա դրված պարտականությունները կատարում է անձամբ»: Այսինքն՝ մեղադրյալի օրինական ներկայացուցիչը օգտվում է իր կողմից ներկայացվող մեղադրյալի իրավունքներից, տուժողի օրինական ներկայացուցիչը համապատասխանաբար՝ տուժողի իրավունքներից: Հաշվի առնելով այն, որ բոլոր այդ մասնակիցներն ունեն տարբեր ծավալի իրավունքներ, օրինական ներկայացուցիչները ևս, որոնք ներկայացնում են այդ մասնակիցներին, օգտվում են համապատասխան ծավալի իրավունքներից: Դրանով իսկ տվյալ օրինական ներկայացուցչի դատավարական վիճակը կախված է այն բանից, թե քրեական դատավարության որ մասնակցի շահերն է նա ներկայացնում, և իրավունքների շրջանակից, որոնցով օժտված է քրեական դատավարությունում ներկայացվող համապատասխան մասնակիցը: Օրինական ներկայացուցչի հիմնախնդրի լուծման մասն մոտեցումը, որը տեղ է գտել Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրությունում, պետք է գնահատել հաջողված, որովհետև հաջողվել է օրենսդրորեն մոտենալ յուրեւնալ արդարադատության հիմնախնդրի լուծմանը, որի մասին խոսվել է վերը: Չէ՞ որ ըստ էության դրվել են անչափահասների նկատմամբ արդարադատության իրականացման հարցերում միասնական մոտեցում ցուցաբերելու հիմքերը, այսինքն՝ կանոնակարգվել է քրեական դատավարության մասնակցի վիճակը, որը կարող է ներկայացնել քրեական դատավարությունում ներգրավված ցանկացած անչափահասի իրավունքներն ու շահերը: Բացի այդ, լուծվել է նորմատիվ միջոցների տնտեսման խնդիրը, այսինքն՝ նվազագույն քանակի նորմերով լուծվել է օրինական ներկայացուցչի խնդիրը, որը կարող է ներկայացնել կասկածյալի, մեղադրյալի, տուժողի իրավունքներն ու շահերը: Համեմատության համար նշենք, որ ՌԴ քր. դատ. օր.-ում քրեական դատավարության համապատասխան մասնակիցների օրինական ներկայացուցչին որոշելու համար տրված են առանձին, ինքնուրույն օրենսդրական սահմանումներ, որոնք իրար մասն են: Այսպես՝ անչափահաս տուժողի օրինական ներկայացուցչի մասին նշված է ՌԴ

քր. դատ. օր.-ի 45-րդ հոդվածի 2-րդ մասում, իսկ անչափահաս կասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցչի մասին՝ Ռ-Գ քր. դատ. օր.-ի 48-րդ հոդվածում:

Առանձնահատուկ պետք նշել, որ Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրությունում բավականին հաջող է լուծված մաս անչափահասներին քրեական դատավարությունում ներկայացնելու հետ առնչվող մեկ այլ խնդիր. դա անչափահաս վկաների իրավունքներն ու օրինական շահերը ներկայացնելու խնդիրն է: Ի տարբերություն Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրության՝ Ռուսաստանի Դաշնության քրեադատավարական օրենսդրությունում այդ խնդիրը մինչև վերջ լուծված չէ, թեպետ և Ռ-Գ քր. դատ. օր.-ում վկայի օրինական ներկայացուցչի մասին հիշատակում կա:

Այսպես՝ Ռ-Գ քր. դատ. օր.-ի 191-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված է. «Անչափահաս տուժողի կամ վկայի հարցաքննության ժամանակ իրավունք ունի ներկա գտնվելու նրա օրինական ներկայացուցիչը»: Դրանից հետևում է, որ օրինական ներկայացուցիչ կարող է ունենալ ոչ միայն կասկածյալը, մեղադրյալը, տուժողը, այլև՝ վկան: Ընդ որում՝ ինչպես իրավացիորեն նշում է Ն. Ռ. Մուխտադինովան՝ «անչափահաս վկայի օրինական ներկայացուցիչը իրականացնում է անչափահաս վկայի իրավունքներն ու օրինական շահերը ներկայացնելու գործառույթ»<sup>1</sup>: Սակայն անհրաժեշտ է նշել, որ օրենսդրորեն կարգավորված չէ անչափահաս վկայի օրինական ներկայացուցչի իրավունքների շրջանակը, թեև միանգամայն հստակ է, որ այդ իրավունքները բխում են այն իրավունքներից, որոնցով օժտված է անչափահաս վկան, որին ներկայացնում է օրինական ներկայացուցիչը: Ցավոք, մնան հետևություն կարելի է անել միայն օրինական ներկայացուցչին վերաբերող քրեադատավարական նորմերի վերլուծությունից. օրենքում անմիջական հղում չկա դրան:

ՀՀ քր. դատ. օր.-ում անչափահաս վկայի ներկայացուցչին

---

<sup>1</sup> Стен Мухутдинова Н.Р. Адвокат свидетеля, законный представитель несовершеннолетнего свидетеля в Российском уголовном судопроизводстве. //Научные труды. Российская академия юридических наук. Выпуск 9. В 3 томах. Том 3. М.: Издательская группа «Юрист», 2009, էջ 991:

նվիրված է մի ամբողջ հոդված, որտեղ մասնավորապես նախատեսված է. «14 տարին չլրացած վկայի օրինական ներկայացուցիչը, իսկ քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ՝ նաև առավել բարձր տարիքի անչափահասի օրինական ներկայացուցիչն իրավունք ունի իմանալ ներկայացվող անձին քրեական վարույթն իրականացնող մարմին կանչելու մասին և մասնակցել քննչական կամ այլ դատավարական գործողությանը՝ ուղեկցելով նրան» (ՀՀ քր. դատ. օր-ի հոդված 87):

Նույնիսկ թուցիկ համեմատելով անչափահաս վկայի օրինական ներկայացուցչի մասին Ռուսաստանի Դաշնության քրեադատավարական օրենսդրությունում և Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրությունում տեղ գտած դրույթները, ակնհայտորեն տեսանելի են ՀՀ քր. դատ. օր.-ում անչափահաս վկայի օրինական ներկայացուցչի մասին դրույթի առավելությունները: Դա շնորհիվ այն բանի, որ Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրությունում առաջին հերթին ընդլայնված է դատավարական գործողությունների շրջանակը, որոնց կարող է մասնակցել անչափահաս վկայի օրինական ներկայացուցիչը: Այսպես՝ դրանք ոչ միայն քննչական, այլև այլ դատավարական գործողություններ են, որոնք «քննչական» հասկացության շրջանակներից դուրս են: Այսինքն՝ օրինական ներկայացուցիչը կարող է մասնակցել ոչ միայն անչափահաս վկայի հարցաքննությանը, ինչպես նախատեսված է Ռուսաստանի Դաշնության քրեադատավարական օրենսդրությամբ, այլև ցանկացած այլ տեսակի դատավարական գործողությունների, որոնք կարող են իրականացվել անչափահաս վկայի նկատմամբ:

Կարծում ենք՝ դա ճիշտ մոտեցում է, քանի որ անչափահաս վկայի իրավունքներն ու օրինական շահերը կարող են ոտնահարվել ոչ միայն հարցաքննության ընթացում, այլև ցանկացած այլ դատավարական գործողության ժամանակ, օրինակ, հարկադրաբար բերման ենթարկելիս: Ավելին, ուշագրավ է այն, որ օրինական ներկայացուցիչը օժտված է անչափահաս վկային հրավիրելու մասին տեղեկացված լինելու իրավունքով, ինչը հնարավորություն է ընձեռում ժամանակին միջոցներ ձեռնարկելու իր կողմից ներկայացվող անձի իրավունքները ու



օրինական շահերը ոսնձգություններից կանխելու համար:

Հարկ է նշել նաև, որ Հայաստանի Հանրապետության քրեա-  
դատավարական օրենսդրությունում բավականին մանրակրկիտ ու  
հստակ շարադրված են անչափահաս վկայի օրինական ներկայա-  
ցուցչի իրավունքները: Այսպես՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 87-րդ հոդվածի  
2-րդ մասում սահմանված է. «Մասնակցելով քննչական կամ այլ  
դատավարական գործողությանը՝ վկայի օրինական ներկայացու-  
ցիչն իրավունք ունի՝

1) հարուցել միջնորդություններ.

2) առարկել քրեական գործով վարույթն իրականացնող մար-  
մինների գործողությունների դեմ և պահանջել իր առարկությունները  
մտցնել քննչական կամ այլ դատավարական գործողության արձա-  
նագրության մեջ.

3) առարկել դատական նիստը նախազահողի գործողություն-  
ների դեմ.

4) ծանոթանալ քննչական և այլ դատավարական գործողու-  
թյունների արձանագրություններին, որոնց նա մասնակցել է մինչդա-  
տական վարույթի ընթացքում և դիտողություններ ներկայացնել ար-  
ձանագրությունում գրառումների ճշտության և լրիվության կապակ-  
ցությամբ, քննչական և այլ դատավարական գործողությանը մաս-  
նակցելու, դատարանի նիստին ներկա գտնվելու դեպքում պահանջել  
նշված գործողության կամ դատարանի նիստի արձանագրության  
մեջ գրառումներ կատարել այն հանգամանքների մասին, որոնք, իր  
կարծիքով, պետք է նշվեն»:

Դրա շնորհիվ անչափահաս վկայի օրինական ներկայացուցիչը  
ձեռք է բերում իր կողմից ներկայացվող անձի իրավունքների ու շա-  
հերի պաշտպանության բավականին արդյունավետ միջոցներ: Օրի-  
նական ներկայացուցչի հստակորեն սահմանված կարգավիճակը  
հնարավորություն է տալիս նրան ավելի եռանդուն պաշտպանելու  
անչափահաս վկայի օրինական ներկայացուցչի իրավունքներն ու  
օրինական շահերը: Հայաստանի Հանրապետության քրեադատա-  
վարական օրենսդրությունում տեղ գտած այսպիսի մոտեցումը  
պետք է համարել առաջադիմական, որը առավելագույնս արտացո-  
լում է ժողովրդավարական և մարդասիրական արժեքները: Ըստ

այդմ՝ Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենքը անչափահաս վկայի օրինական ներկայացուցչի կարգավիճակը սահմանելու մասով պետք է համարել անթերի:

### **§ 3. Անչափահասների գործերով մանկավարժի իրավական վիճակի հիմնահարցերը քրեական դատավարությունում**

Քրեական դատավարությունում անչափահաս անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության մեխանիզմները բազմատեսակ են: Դրանցից մեկն էլ անչափահասների նկատմամբ քննչական և դատավարական այլ գործողությունների իրականացմանը մանկավարժին մասնակից դարձնելն է: Այսպես՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 207-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Մինչև տասնվեց տարեկան վկայի կամ տուժողի հարցաքննությունը կատարվում է մանկավարժի մասնակցությամբ: Անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննությանը ներկա գտնվելու իրավունք ունի նրա օրինական ներկայացուցիչը»: Ասենք, որ ՀՀ քրեադատավարական օրենսդրության թերություններից մեկն այն է, որ նման պահանջներ չեն գործում անչափահաս մեղադրյալի, կասկածյալի դեպքում: Ի տարբերություն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, ՌԴ քր. դատ. օր.-ի 425-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «տասնվեց տարեկանը չլրացած կամ լրացած, սակայն հոգեկան խանգարմամբ տառապող կամ հոգեկան թերզարգացմամբ անչափահաս կասկածյալի, մեղադրյալի հարցաքննության ժամանակ մանկավարժի կամ հոգեբանի մասնակցությունը պարտադիր է»:

Քննչական գործողություններ իրականացնելիս մանկավարժի մասնակցության անհրաժեշտության մասին նշված է ԱՊՀ մի շարք երկրների քրեադատավարական օրենսդրությունում: Մասնավորապես, Ուկրաինայի քր. դատ. օր.-ի 168-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է. «Մինչև տասնչորս տարեկան վկայի հարցաքննությունը, իսկ քննիչի հայեցողությամբ մինչև տասնվեց տարեկան վկայի հարցաքննությունը կատարվում է սույն Օրենսգրքի 167-րդ հոդվածի կանոններով, մանկավարժի մասնակցությամբ, իսկ անհրաժեշ-

տության դեպքում՝ բժշկի, ծնողների կամ անչափահասների այլ օրինական ներկայացուցիչների»<sup>1</sup>:

Ղազախստանի Հանրապետության քր. դատ. օր.-ի 215-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մինչև տասնչորս տարեկան վկաների և տուժողների հարցաքննության ժամանակ պարտադիր է մանկավարժի մասնակցությունը<sup>2</sup>: Ղազախստանի Հանրապետության քր. դատ. օր.-ի 488-րդ հոդվածի համաձայն՝ մանկավարժի մասնակցությունը պարտադիր է նաև մինչև տասնվեց տարեկան մեղադրյալի կամ կասկածյալի հարցաքննության ժամանակ<sup>3</sup>:

Մինչև ՀՀ քրեական դատավարության օրենսդրության մեջ տեղ գտած փոփոխությունները (06.07.06թ.) օրենսգրքում անչափահասների գործերով քննչական գործողություններին մանկավարժի մասնակցություն նախատեսված չէր: Այդ առումով հասկանալի է Ա. Ն. Բիչկովի կարծիքը. «Մենք լիովին համաձայն չենք Հայաստանի Հանրապետության օրենսդիրի այն դիրքորոշման հետ, որով հաշվի չեն առնվում անչափահասի հոգեֆիզիոլոգիական զարգացման առանձնահատկությունները, ըստ որի նախատեսված չէ մանկավարժի և հոգեբանի կամ այլ մասնագետի մասնակցության հնարավորությունը անչափահասների գործերով քննչական գործողություններ իրականացնելիս»<sup>4</sup>:

Այդ բացը վերացվեց ՀՀ քրեական դատավարության գործող օրենսդրության մեջ տեղ գտած փոփոխությամբ ու լրացմամբ (06.07.06թ.), որի արդյունքում սահմանվեց. «Մինչև տասնվեց տարեկան վկայի կամ տուժողի հարցաքննությունը կատարվում է մանկավարժի մասնակցությամբ: Անչափահաս վկայի կամ անչա-

---

<sup>1</sup> Уголовно-процессуальный кодекс Украины: научно-практический комментарий. Харьков: ООО «Одиссей», 2005, էջ 423:

<sup>2</sup> Ст'а Уголовно-процессуальный кодекс Республики Казахстан. Алматы, 1998, էջ 157-158.

<sup>3</sup> Ст'а Նույն տեղը էջ 314-315:

<sup>4</sup> Ст'а **Бычков А.Н.** Защита прав несовершеннолетних по уголовно-процессуальному законодательству Республики Беларусь, Республики Армения, Республики Украина и Республики Узбекистан. //Научные труды. Российская академия юридических наук. Выпуск 9. В 3 томах. Том 3. М.: Издательская группа «Юрист», 2009, էջ 814:

փահաս տուժողի հարցաքննությանը ներկա գտնվելու իրավունք ունի նրա օրինական ներկայացուցիչը» (ՀՀ քր. դատ. օր-ի հոդված 207, մաս 2): Իհարկե, Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրության մեջ մանկավարժին ընդգրկելն արդարացված է, քանի որ այն ապահովում է անչափահասների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Կարծում ենք, որ քրեադատավարական գործող օրենսդրության մեջ հարկավոր է նախատեսել մանկավարժի պարտադիր մասնակցություն նաև 16 տարին չլրացած կասկածյալի կամ մեղադրյալի համար: Դա պայմանավորված է այն բանով, որ 16 տարեկանը չլրացած անձի տարիքային առանձնահատկություններով պայմանավորված՝ վերջինս ի վիճակի չէ պաշտպանել իրեն իր իրավունքների և օրինական շահերի նկատմամբ ոտնձգություններից, ինչպես նաև զերծ մնալ իր հոգեկանի վրա բացասական ներգործությունից: Հետևաբար ճիշտ չէր լինի մանկավարժի մասնակցության հարցի որոշումը վերապահել քննիչին, ինչպես դա արված է Ուզբեկստանի Հանրապետության քր. դատ. օր.-ի 554 հոդվածում. «Անչափահաս մեղադրյալի հարցաքննությանը քննիչի կամ դատախազի հայեցողությամբ կարող է մասնակցել մանկավարժ կամ հոգեբան»<sup>1</sup>: Այս կապակցությամբ իրավացի դիտողություն է արել Ս. Վ. Տետյունը, ասելով, որ նշյալ դրույթը պարունակում է վտանգ, քանի որ «գործնականում քննիչները ժամանակ առ ժամանակ անտեսում են այդ դրույթը ավելորդ գլխացավանքի մեջ չընկնելու համար՝ առաջնորդվելով միայն գործնական նպատակահարմարությամբ, և մանկավարժների մասնակցությամբ դեպքերի թիվը մեծ չէ, քանի որ օրենքը չի սահմանում պարտադիր չափորոշիչներ»<sup>2</sup>: Այդպիսի չափորոշիչ պետք է լինի տարիքը՝ տասնվեց տարեկանը:

Անչափահասների նկատմամբ դատավարական գործողություններ իրականացնելիս մանկավարժի մասնակցությունը նաև նրանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության լրացուցիչ երաշխիք է: Մանկավարժը՝ որպես մանկական հոգեբանությ-

<sup>1</sup> Уголовно-процессуальный кодекс Республики Узбекистан. Ташкент, 1994, էջ 329:

<sup>2</sup> **Тетюев С.В.** Досудебное производство по делам несовершеннолетних в России и Узбекистане: сравнительный анализ некоторых особенностей. // Учёные записки: сб. науч. трудов. Вып. 4. Оренбург: РИК ГОУ ОГУ, 2006, էջ 308-309:

յան ոլորտի մասնագետ, կարող է պաշտպանել անչափահասներին հոգեկանին վնասող բոլոր տեսակի գործոններից, որոնք կարող են արտահայտվել քննիչի՝ սխալ ընտրված վարքագծի հետևանքով հնչած ոչ նրբանկատ հարցում, անչափահասի նկատմամբ անթույլատրելի կոպտության ու մեծամտության մեջ: Նշված խանգարիչ գործոնների գործողությունը կարող է անչափահասին հասցնել անհարմարավետ վիճակի, ինչը լուրջ դժվարություն կարող է ստեղծել նրա համար՝ օգտվելու օրենքով սահմանված իրավունքներից: Նրան այդ ամենից պաշտպանելու համար հարկավոր է մանկավարժ՝ որպես մանկական հոգեբանության մասնագետ, որը լավ գիտի, թե ինչը կարող է վնաս հասցնել անչափահասին և ինչպես չեզոքացնել այդ վնասակար գործոնը: Ուստի քրեական դատավարությունում մանկավարժին պետք է դիտել ոչ միայն որպես մասնագետի, որը օգնություն է ցուցաբերում հետաքննությանն ու դատարանին՝ ապացույցներ ձեռք բերելու նպատակով, այլև որպես անձի, որը կոչված է երաշխավորելու անչափահասի իրավունքներն ու օրինական շահերը:

Մանկավարժի դերի նկատմամբ այդպիսի դիրքորոշումը քրեական դատավարությունում ավանդական չէ: Իբրև կանոն՝ նա դիտվել է որպես օգնական, որն օժանդակում է քննիչին և դատարանին՝ վերջնական դատավճիռ կայացնելու համար անհրաժեշտ ապացույցներ ձեռք բերելու գործում<sup>1</sup>: Աքսիոմա է համարվել այն, որ «մանկավարժի մասնակցությունը տասնվեց տարեկանը չլրացած մեղադրյալի հարցաքննությանը, նկատի ունենալով այդ հարցաքննության բարդությունը, պայմանավորված է մանկավարժության և հոգեբանության տվյալների օգտագործման անհրաժեշտությամբ՝ այն նախապատրաստելիս, անցկացնելիս, ցուցմունքները արձա-

---

<sup>1</sup> Стів Пюсса О. Участие педагога в допросе несовершеннолетних // Правоведение. Л.: Изд-во Ленингр. ун-та, 1966, № 4, էջ 163-165; Миньковский Г.М. Участие педагога и иных лиц в допросе несовершеннолетнего обвиняемого // Советское государство и право в период развернутого строительства коммунизма. Тезисы докладов и научных сообщений (6 - 9 марта 1962 г.). Харьков, 1962, էջ 219-221; Захарова А.И. Участие педагога и психолога в предварительном расследовании как гарантия его эффективности // Законодательство России: проблемы теории и практики применения. Сборник научных статей. Саратов: Изд-во Саратов. юрид. ин-та МВД России, 2006, Вып. 3. էջ 143-147 և ուրիշներ:

նագրելիս»<sup>1</sup>:

Ն. Ի. Պորոբովը գրում է, որ մանկավարժը «մասնակցում է հարցաքննությանը որպես մանկավարժության, մանկական և պատանեկան հոգեբանության բնագավառում հատուկ գիտելիքների տիրապետող անձ՝ քննության մարմնին օգնություն ցուցաբերելու համար՝ անչափահասից գործի հանգամանքների մասին նրան հայտնի լիարժեք և հավաստի տեղեկություններ ստանալու նպատակով»<sup>2</sup>: Սակայն կարծում ենք, այդպիսի մոտեցումը չի արտացոլում մանկավարժի նշանակությունը քրեական դատավարությունում: Այն անհրաժեշտ է ոչ թե անցկացվող քննության արդյունավետության բարձրացման կամ քրեական գործով ճշմարտությունը բացահայտելու, այլ անչափահասների իրավունքներն ու օրինական շահերը երաշխավորելու համար: Ուստի ճիշտ կլինի Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում կասկածյալի և մեղադրյալի համար նախատեսել մանկավարժի մասնակցություն:

Մանկավարժի դատավարական վիճակը ՀՀ քրեադատավարական օրենսդրությունում անորոշ է: Նա նախատեսված չէ քրեական դատավարության այլ մասնակիցների թվում<sup>3</sup>: Այդ կապակցությամբ իրավաբանական գրականության մեջ արտահայտվել են տարբեր կարծիքներ: Օրինակ՝ ըստ Ռ-Գ և ՀՀ քրեադատավարական օրենսդրությունների՝ մանկավարժը մի կողմից ունի բազմաթիվ հատկանիշներ, որոնց համաձայն նա կարող է դասվել մասնագետների շարքին, մյուս կողմից՝ առկա են նաև էական տարբերություններ: Այսպես՝ Ռ-Գ քր. դատ. օր.-ի 58-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

---

<sup>1</sup> Научно-практический комментарий к Уголовно-процессуальному кодексу РФСР. М.: Спарк, 2000, էջ 678:

<sup>2</sup> **Порубов Н.И.** Тактика допроса на предварительном следствии. М.: Издательство БЕК, 1998, էջ 148:

<sup>3</sup> Տե՛ս **Матвеев С.В.** Актуальные проблемы правового статуса психолога и педагога в уголовном судопроизводстве по делам несовершеннолетних // Российский судья. М.: Юрист, 2002, № 3, էջ 12-14; **Кузнецова А.А.** Актуальные проблемы правового статуса педагога (психолога) как участника допроса несовершеннолетнего в уголовном судопроизводстве // Современные проблемы юридической науки. Материалы III Всероссийской с международным участием научно-практической конференции молодых исследователей, 26-28 апреля 2007 г.. Челябинск: Полиграф-Мастер, 2007, Ч. 2, էջ 180-183 և ուրիշներ:

«Մասնագետը հատուկ գիտելիքների տիրապետող անձն է, որը ներգրավվում է դատավարական գործողություններում սույն Օրենսգրքով սահմանված կարգով՝ օժանդակելու առարկաների և փաստաթղթերի հայտնաբերմանը, արձանագրմանը և առգրավմանը, քրեական գործի նյութերի հետազոտման ժամանակ տեխնիկական միջոցների կիրառմանը, փորձագետին հարցադրումներ կատարելու համար, ինչպես նաև կողմերին և դատարանին իր մասնագիտական իրավասության շրջանակներում եղած հարցերի պարզաբանման համար»։ Մանկավարժը նաև կոչված է օժանդակելու կատարվող քննությանը և պարզաբանելու կողմերին և դատարանին իր իրավասության շրջանակներում գտնվող հարցերը, այսինքն՝ մանուկների և դեռահասների հոգեբանության ոլորտներին վերաբերող գիտելիքների շրջանակներում։ Սակայն ըստ Ռ-Գ քր. դատ. օր.-ի 425-րդ հոդվածի 5-րդ մասի՝ «մանկավարժը կամ հոգեբանն իրավունք ունեն քննիչի, հետաքննության մարմնի թույլտվությամբ հարցեր տալու անչափահաս կասկածյալին, մեղադրյալին, իսկ հարցաքննությունն ավարտվելուց հետո ծանոթանալու հարցաքննության արձանագրությանը և կատարելու գրավոր դիտողություններ այնտեղ արված գրառումների ճշտության և լրիվության մասին»։ Դա թույլ է տալիս ասելու, որ «մանկավարժի մասնակցությունը թելադրված է քննիչի և անչափահասի միջև հոգեբանական շփում հաստատելու ձգտմամբ՝ միևնույն ժամանակ թույլ չտալով հարցաքննվողների իրավունքների և օրինական շահերի խախտումներ»<sup>1</sup>։ Այդ առումով միանգամայն արդարացի է այն դիտարկումը, որ նշյալ «գործառույթը դուրս է մասնագետի՝ որպես քննիչի գիտատեխնիկական օգնականի գործառույթների շրջանակից՝ ձեռք բերելով իրավապաշտպանական ուղղվածություն»<sup>2</sup>։

Ինչպես իրավագիտորեն նկատում է Օ. Յու. Սկիչկոն. «Ռ-Գ քր. դատ. օր.-ով նախատեսված մասնագետի (մանկավարժի կամ հոգեբանի) մասնակցությունը անչափահասի հարցաքննությանը, քննչական գործողությանը, որի անցկացման ընթացքում հարցաքննվողի

<sup>1</sup> Уголовный процесс Российской Федерации. / Отв. ред. проф. А.П. Кругликов. М.: Проспект, 2009, էջ 415:

<sup>2</sup> Սույն տեղը:

հոգեկանի վրա ոչ իրավաչափ ներգործության վտանգը առավել մեծ է, որոշակի երաշխիք է պաշտպանելու անչափահասի իրավունքները պաշտոնատար անձի՝ դաստիարակչական տեսանկյունից աննրբանկատ վարքագծից»<sup>1</sup>: Այսինքն՝ մանկավարժը քրեական դատավարության այն մասնակիցն է, որը կոչված է կիրառելու մանկավարժության բնագավառի գիտելիքները ոչ միայն դատարանին և քննիչին օգնություն ցուցաբերելու, այլև քրեական դատավարությանը մասնակից անչափահասների իրավունքները և օրինական շահերը պաշտպանելու համար: Ճիշտ է՝ դրանով հանդերձ, ՀՀ քրեադատավարական օրենսդրությունում որոշակիացված չեն անչափահասների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հարցում մանկավարժի գործունեության սահմանները:

Կարծում ենք՝ մանկավարժը քրեական դատավարության ինքնուրույն մասնակից է: Նրա խնդիրները պետք է հստակեցվեն՝ առաջնորդվելով քրեական դատավարությանը մասնակցող բոլոր անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն ուղղված քրեադատավարական օրենսդրության ընդհանուր միտումներով: Այսինքն՝ մանկավարժի հիմնական խնդիրը պետք է լինի քրեական դատավարությանը մասնակցող անչափահասների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Նրա տարբերությունը քրեական դատավարությանը մասնակցող այլ անձանցից, որոնք նույնպես իրականացնում են այլ անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության գործառույթներ, պետք է լինի այն, որ նա վերոնշյալ խնդրի լուծման համար պիտի օգտագործի մանկական և պատանեկան հոգեբանության բնագավառներում ունենցած իր գիտելիքները: Նրան մասնագետ համարելու հարկ չկա, քանզի իր գործունեության մեջ մի կողմից ապացույցներ հայտնաբերելու և հաստատելու հարցում քննությանը օժանդակելը և, մյուս կողմից, իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը համատեղելն անհնար է: Այդ երկու գործառույթների համատեղումը հանգեցնում է դրանց միջև անցանկալի մրցակցության, որի

---

<sup>1</sup> **Скичко О.Ю.** Проблемы охраны прав несовершеннолетних в уголовном процессе. //Научные труды. Российская академия юридических наук. Выпуск 9. В 3 томах. Том 3. М.: Издательская группа «Юрист», 2009, էջ 1052-1053:



հետևանքով դրանցից մեկը կատարվում է ոչ պատշաճ մակարդակով: Դրա հետ մեկտեղ, պատճառների վերը նշված վերլուծությունը, թե ինչու է մանկավարժը ընդգրկվել ԱՊՀ մի շարք երկրների քրեական դատավարությունում, թույլ է տալիս եզրակացնելու, որ նա կոչված է ուժեղացնելու անչափահասների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Ուստի մանկավարժը պետք է իրականացնի միայն անչափահասների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության գործառույթը: Ըստ այդմ՝ ՀՀ քր.դատ.օր-ում հարկավոր է ավելացնել մանկավարժի դատավարական վիճակը սահմանող հոդված: Սակայն խնդիրն այն է, թե մանկավարժին քրեական դատավարությանը մասնակցողների ո՞ր խմբին պետք է դասել: Չէ՞ որ նրա գործունեությունն ուղղված է բոլոր անչափահասների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը՝ անկախ նրանց դատավարական վիճակից, այսինքն՝ և՛ մեղադրյալների, և՛ կասկածյալների, և՛ վկաների, և՛ տուժողների: Այդ պատճառով մանկավարժը կարող է հանդես գալ և՛ պաշտպանության կողմից, և՛ մեղադրողի կողմից, եթե մասնակցում է տուժողի հարցաքննությանը: Միանգամայն տրամաբանական կլիներ մանկավարժին դասել քրեական դատավարության այլ մասնակիցների խմբին: Սակայն «քրեական դատավարության այլ մասնակիցների խմբին դասվում են անձինք, ովքեր ապացուցողական տեղեկատվության աղբյուր են կամ ներգրավված են տեխնիկական և այլ տեսակի օգնություն (օժանդակություն) ցույց տալու և քննչական գործողությունների ընթացքն ու արդյունքները վավերացնելու համար»<sup>1</sup>: Նրանց թվում են մասնագետը, ընթերական, վկան, թարգմանիչը, այսինքն՝ անձինք, ովքեր իրենց գործունեությամբ նպաստում են առանձին քննչական և դատավարական գործողությունների անցկացմանը: Սակայն ինչպես նշեցինք, մանկավարժը պետք է պաշտպանի անչափահասների իրավունքները և օրինական շահերը, այսինքն՝ նրա գործունեությունը չի տեղավորվում ՀՀ քր. դատ. օր.-ի «այլ» անձանց հասկացության մեջ: Գիշտ կլիներ, այս խնդիրը լուծել նույն կերպ, ինչպես լուծվեց ներկայացուցիչների կարգավիճակի հարցը:

<sup>1</sup> Уголовно-процессуальное право Российской Федерации. / Отв. ред. П.А. Лупинская. М.: Юристъ, 2004, էջ 154:

ՀՀ քր. դատ. օր.-ում սահմանվեց քրեական դատավարության մասնակիցների հատուկ խումբ, որն անվանվեց «ներկայացուցիչներ և իրավահաջորդներ»: Քրեական դատավարության մասնակիցների հիշյալ խմբի դատավարական վիճակը ամրագրված է ՀՀ քր. դատ. օր.-ի 9-րդ գլխում: Մանկավարժի կարգավիճակը կարելի էր ամրագրել առանձին հոդվածում, որը հարկ է զետեղել նշյալ գլխում: Առավել ևս, որ մանկավարժի գործառույթները, ինչպես որ ներկայացուցչի գործառույթները քրեական դատավարությանը մասնակից անձանց իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելն է՝ անկախ այն բանից, նրանք քրեական դատավարության մասնակիցներ են պաշտպանության, թե մեղադրող կողմից: Հիմնախնդրի այդօրինակ լուծումը, կարծում ենք, ավելի կհամապատասխաներ քրեական դատավարության ընթացքում մանկավարժի առջև դրվող խնդիրներին լուծմանը՝ նրան որպես մասնակից ներգրավելիս:

Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրությունում կասկածյալի կամ մեղադրյալի հարցաքննությանը մանկավարժի ներգրավումը թույլ կտա ավելի մեծ չափով երաշխավորել անչափահասների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը քրեական դատավարության ընթացքում: Դա կդառնա օրենսդրության զարգացման հերթական քայլը դրա հետագա մարդասիրացման ուղղությամբ, քանի որ կստեղծվեն լրացուցիչ երաշխիքներ քրեական դատավարության անչափահաս կասկածյալների և մեղադրյալների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար: Մանկավարժի մասնակցությունը թույլ կտա և՛ պաշտպանին, և՛ օրինական ներկայացուցչին ավելի արդյունավետ իրականացնել իր գործունեությունը, քանի որ նրանք այդ դեպքում կկարողանան հենվել դեռահասների և պատանիների հոգեբանության բնագավառում մանկավարժի ունեցած գիտելիքների վրա: Դա թույլ կտա նրանց խուսափելու սխալներից և վրիպումներից, ինչը կնվազեցնի քրեական դատավարության մասնակիցների իրավունքները և օրինական շահերը ապօրինի կերպով ոտնահարելու հնարավորության ռիսկը: Բացի այդ, մանկավարժը կարող է կանխել որոշակի գործոնների գործողությանն ի պատասխան անչափահասների մոտ առաջ եկող հուզական բռնկումները, ինչն անհ-

նար կդարձնի անչափահասի կողմից սխալ դիրքորոշման ընտրությունը: Դա հնարավորություն կտա անչափահասին քրեական դատավարության այլ մասնակիցների հետ համահավասար մրցակցելու ի պաշտպանություն իր իրավունքների և օրինական շահերի: Դրանով իսկ երաշխիք կստեղծվի ՀՀ քր. դատ. օր.-ով հռչակված մրցակցության սկզբունքի գործողության համար, որի համաձայն՝ «քրեական դատավարությանը մասնակցող կողմերը քրեական դատավարական օրենսդրությամբ օժտված են իրենց դիրքորոշումը պաշտպանելու հավասար հնարավորություններով» (ՀՀ քր. դատ. օր. 23րդ հոդված մաս 5): Դա կնպաստի նաև ՀՀ քր. դատ. օր.-ի 23-րդ հոդվածի 6-րդ մասում ամրագրված իրավունքի իրացմանը, որի համաձայն. «Քրեական դատավարության ընթացքում կողմերն իրենց դիրքորոշումը, այն պաշտպանելու եղանակները և միջոցներն օրենքի շրջանակներում ընտրում են ինքնուրույն՝ անկախ դատարանից, այլ մարմիններից և անձանցից»: Դրանով քրեական դատավարությանն անչափահաս մասնակիցները մանկավարժի շնորհիվ հնարավորություն ունեն իրապես պաշտպանելու իրենց իրավունքներն ու օրինական շահերը քրեական դատավարության ընթացքում, ինչը համապատասխանաբար նպաստում է քրեական գործերի արդարացի լուծմանը:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում մանկավարժի ընդգրկումը թելադրված էր անչափահասների իրավունքներն ու օրինական շահերը երաշխավորելու անհրաժեշտությամբ: Այդ առումով մանկավարժը դիտվում է որպես անչափահասների իրավունքների ու ազատությունների երաշխիքների համակարգի տարրերից մեկը: Կասկածյալի և մեղադրյալի հարցաքննությանը նրա մասնակցության բացակայությունը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում հարկ է դիտարկել որպես գործոն, որը կարող է որոշ քրեական գործերի քննության ժամանակ հանգեցնել անչափահասների իրավունքների ու օրինական շահերի ոտնահարման: Ընդ որում՝ դա կարող է տեղի ունենալ ոչ թե քննիչի կամ դատարանի ցանկությամբ, այլ այն պատճառով, որ նրանք չունեն համապատասխան գիտելիքներ այն մասին, որ իրենց գործողությունները կարող են հանգեցնել դրան: Իսկ մանկա-

վարժն ի գորու է կանխելու այդօրինակ սխալը՝ հենվելով դեռահասների և պատանիների հոգեբանության բնագավառներում ունեցած իր գիտելիքների վրա: Այսինքն՝ դրանով իսկ մանկավարժը կանխում է քրեական դատավարությանը մասնակցող անչափահասների իրավունքների ու օրինական շահերի խախտման հնարավորությունը:

Սակայն մանկավարժի ներգրավումը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում հնարավոր է միայն նրա դատավարական վիճակի հստակ սահմանման, նրան իրավունքներով օժտելու դեպքում, որոնց առկայությունը հնարավոր է դարձնում անչափահասների իրավունքների ու օրինական շահերի արդյունավետ պաշտպանությունը: Մանկավարժը պետք է ամրագրվի որպես քրեական դատավարության ինքնուրույն մասնակից, որը, այդուհանդերձ, իր գործողություններով կոչված է երաշխավորելու անչափահասին նրա իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը: Ընդ որում՝ մանկավարժի գործունեությունը չի կարելի նույնացնել օրինական ներկայացուցչի կամ պաշտպանի գործունեության հետ: Ի տարբերություն նրանց՝ մանկավարժը անչափահասների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությանն ուղղված գործողություններ իրականացնելիս կաշկանդված չէ այն անձի կամքով, որի շահերից ելնելով կատարում է այդ գործողությունները: Այսպես՝ անհրաժեշտ է, որ նա իրավունք ունենա հարցաքննության ընթացքում առարկել քննիչի ցանկացած հարցի, եթե այն համարի հոգեկանին վնաս հասցնող կամ պարզապես հարցաքննվող անչափահասի հոգեկան առանձնահատկությունները հաշվի չառնող: Ցավոք, ներկայումս ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ մանկավարժն այդ իրավունքով օժտված չէ: Ավելին, Ռուսաստանի Դաշնության քրեադատավարական օրենսդրության մեջ ևս մանկավարժի իրավունքները սահմանված են բավականին անորոշ:

Այսպես՝ ՌԴ քր. դատ. օր.-ի 280-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «նախքան անչափահասին հարցաքննելը նախագահողը բացատրում է մանկավարժին նրա իրավունքները, ինչի մասին դատական նիստի արձանագրության մեջ կատարվում է համապատասխան գրառում»: Սակայն դրանով հանդերձ, քրեադատավարական

օրենսդրության մեջ ուղղակիորեն չի նշվում, թե հատկապես ինչ իրավունքներ և պարտականություններ ունի մանկավարժը: Օրենքում անմիջականորեն նշված են միայն քննիչի թույլտվությամբ հարցաքննվողին հարցեր տալու իրավունքը, ինչպես նաև դիտողություններ անելու իրավունքը, որոնք ենթակա են գրանցվելու հարցաքննության արձանագրության մեջ: Այսպես՝ ՌԳ քր. դատ. օր.-ի 280-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «մանկավարժն իրավունք ունի նախագահողի թույլտվությամբ հարցեր տալու անչափահաս տուժողին, վկային»: ՌԳ քր. դատ. օր.-ի 425-րդ հոդվածի 5-րդ մասում նախատեսված է. «Մանկավարժը կամ հոգեբանն իրավունք ունեն քննիչի, հետաքննության մարմնի թույլտվությամբ հարցեր տալու անչափահաս կասկածյալին, մեղադրյալին, իսկ հարցաքննությունն ավարտվելուց հետո ծանոթանալու հարցաքննության արձանագրությանը և կատարել գրավոր դիտողություններ այնտեղ արված գրառումների ճշտության և լրիվության մասին»:

Միանգամայն ակնհայտ է, որ նշված իրավունքներն անչափահասի իրավունքներն ու օրինական շահերը լիարժեք պաշտպանելու համար բոլորովին բավարար չեն: Գիշտ կլինեն, մանկավարժին օժտել իրավունքների ավելի լայն շրջանակով, որոնց օգնությամբ նա կարողանար պաշտպանել անչափահասին նրա իրավունքների ու օրինական շահերի հնարավոր խախտումներից, ինչպես նաև հոգեկան խեղման հնարավոր դեպքերից: Մանկավարժին օժտելով իրավունքներով՝ օրենսդիրը պետք է հիմք ընդունի այն խնդիրները, որոնք դրվում են մանկավարժի առջև: Այդ խնդիրներից հիմնականը դեռահասների ու պատանիների հոգեբանության բնագավառներում ունեցած գիտելիքների գործածումն է: Հենց դա էլ պետք է որոշի իրավունքների շրջանակը, որոնցով պիտի օժտվի մանկավարժը: Այդ իրավունքների շարքում պետք է լինեն, մասնավորապես, այն հարցերը մերժելը, որոնք կարող են խեղել անչափահասի հոգեկանը: Իհարկե, ճիշտ կլինեն մանկավարժին օժտել այն հարցերի ձևակերպմանը մասնակցելու իրավունքով, որոնք անչափահասին տալիս է քննիչը. դա թույլ կտար խուսափել այնպիսի հարցերից, որոնք կարող են վնաս հասցնել անչափահասի հոգեկանին կամ կարող են գնահատվել իբրև հակամանկավարժական: Ուստի այն հարցերը, որոնք

հարցաքննության ընթացքում պետք է տրվեն անչափահասին, պետք է տրամադրվեն մանկավարժին ծանոթանալու համար, որպեսզի նա կարողանա դրանցում կատարել իր ուղղումներն ու շտկումները: Նշյալ կանոնը անհրաժեշտ է ամրագրել քրեադատավարական օրենսդրությունում:

Չնայած այն բանին, որ մանկավարժը, ինչպես վերը նշվեց, իր գործողություններով նպաստում է անչափահասների իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելուն, սակայն հրավիրվում է մասնակցելու գործի քննությանը քննիչի կամ դատարանի կողմից: Դա պայմանավորված է այն բանով, որ մանկավարժի գործունեության մեջ հիմնականը մանկավարժության բնագավառում իր հատուկ գիտելիքները կիրառելն է՝ քրեական դատավարությանը մասնակցող անչափահասների իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու համար: Մանկավարժի և անչափահասի միջև անձնական հարաբերությունների բնույթը նշանակություն չունի, քանի որ մանկավարժի հիմնական խնդիրը անչափահասի հոգեկանը հնարավոր վնաս հասցնող գործոններից պաշտպանելն է, որոնք կարող են առաջանալ կատարվող հարցաքննության և դատական նիստի ընթացքում: Դրանից ելնելով էլ մանկավարժը պետք է ձգտի պաշտպանելու անչափահասների իրավունքներն ու օրինական շահերը: Միանգամայն պարզ է, որ այն անձին, որը կարող է հրավիրվել մասնակցելու քրեական դատավարությանը որպես մանկավարժ, որոշելու գլխավոր չափանիշը պետք է լինի նրա խոր գիտելիքները մանկավարժության բնագավառում, ինչպես նաև մանկավարժական փորձի առկայությունը: Անչափահասն ի վիճակի չէ դա որոշելու ինքնուրույն: Կարծում ենք, որ անչափահասի օրինական ներկայացուցիչը ևս բնավ էլ ոչ միշտ կարող է դա անել: Ուստի մանկավարժի ինքնուրույն ընտրության հարցում նրանք կարող են սխալվել, քանի որ կարող են կողմնորոշվել ոչ թե տվյալ մանկավարժի գիտելիքներով ու աշխատանքային փորձով, այլ երկրորդական հատկանիշներով, որոնց նշանակությունը մեծ չէ նրա առջև դրված խնդիրները լուծելու տեսանկյունից: Թեև, թվում է, հնարավոր է տվյալ անձին որպես մանկավարժ ընտրելիս հաշվի առնել այն անձանց, ինչպես նաև նրանց օրինական ներկայացուցիչների կարծիքները, որոնց նկատ-

մամբ պետք է կիրառվեն մանկավարժության բնագավառի գիտելիքները: Նման մոտեցումը կարող է ապահովել մանկավարժի առջև դրվող խնդիրների ավելի բարեհաջող լուծումը: Չէ՞ որ անձնական լավ շփումը թույլ է տալիս ավելի լավ կողմնորոշվել տվյալ անչափահասի հոգեկան դրսևորումներում, ինչը նպաստում է նրա անհատական առանձնահատկությունների ավելի լավ բացահայտմանը, որի շնորհիվ հնարավոր է դառնում որոշել, թե ինչը կարող է նրա վրա հոգեխեղող ազդեցություն ունենալ:

Որպես մանկավարժ տվյալ անձին հրավիրելու հարցը որոշելու համար պետք է հստակեցվի նրա իրավասության շրջանակը: ՀՀ քրեադատավարական օրենսդրությունում հիշյալ հարցը մնում է դեռևս չլուծված: Այնուամենայնիվ, դրա լուծումը պայմանավորված է այն բանով, թե որչափ արդյունավետ կապշտպանվեն անչափահասի իրավունքներն ու օրինական շահերը: Ուստի մանկավարժի ներգրավումը քրեական դատավարության մեջ պետք է ուղեկցվի նշված հիմնախնդրի լուծմամբ: Օրենքում պետք է նշվեն հիմնական չափորոշիչները, որոնց շնորհիվ հնարավոր կլինի որոշել տվյալ անձի պիտանելիությունը քրեական դատավարությունում մանկավարժի համար սահմանված գործունեությանը:

Այսպես՝ մանկավարժին ներկայացվող պահանջներից մեկը պետք է լինի մանկավարժական բարձրագույն կրթություն ստացած լինելը, ի հավաստումն որի պետք է առկա լինի մանկավարժական բարձրագույն կրթության մասին դիպլոմ: Մյուս պահանջը պետք է լինի համապատասխան մանկավարժական ստաժի առկայությունը, որը հաստատում է պրակտիկ գործունեության մեջ իր ստացած մանկավարժական գիտելիքները կիրառելու տվյալ անձի ունակությունը: Այդ ստաժը, կարծում ենք, պետք է լինի 3 տարուց ոչ պակաս: Այդպիսի ժամկետը թույլ է տալիս եզրակացնելու, որ տվյալ անձը ոչ միայն հաջողությամբ հարմարվել է մանկավարժական գործունեությանը, այլև սեփական դիտարկումների վրա հիմնված որոշակի փորձ է ձեռք բերել: Ճիշտ կլիներ, լրացուցիչ երաշխիք սահմանել որպես մանկավարժ տվյալ անձին ճիշտ ընտրելու համար: Այդպիսին կարող է լինել կրթական հաստատության երաշխավորությունը, որը կհաստատի տվյալ անձի իրավասու լինելը և, ըստ այդմ, նրան

որպես մանկավարժ ներգրավելու հնարավորությունը: Այդ երաշխավորագիրը պետք է քննարկվի համապատասխան կրթական հաստատության մանկավարժական կոլեկտիվի ժողովում և ստորագրվի նրա ղեկավարի կողմից: Դրանից գատ՝ անհրաժեշտ է, որ երաշխավորագիրը չսահմանափակվի տվյալ անձին որպես մանկավարժ երաշխավորելու մասին լոկ ձևական կարծիքներով: Անհրաժեշտ է, որ այնտեղ նշվի, թե ինչու է մանկավարժական կոլեկտիվը համարում տվյալ անձին պիտանի մանկավարժի գործունեություն իրականացնելու համար քրեական դատավարությունում կոնկրետ քրեական գործի քննության կամ դատական քննության ժամանակ: Նշյալ պահանջները պետք է պարտադիր համարվեն տվյալ անձին որպես մանկավարժ ներգրավելու հարցի լուծման համար: Սակայն այդ պահանջները չպիտի լինեն սպառիչ. քննիչը, դատարանը յուրաքանչյուր մասնակի դեպքում կարող են առաջադրել նաև որոշակի լրացուցիչ պահանջներ՝ պայմանավորված տվյալ քրեական գործի կամ անչափահասի անձնային առանձնահատկությամբ: Այսպես՝ որոշ դեպքերում նպատակահարմար է լինում որպես մանկավարժ ներգրավել մանկավարժի, որը տիրապետում է որոշակի հոգեկան շեղումներ ունեցող անձանց հետ աշխատելու փորձի: Այդ դեպքում մանկավարժից պահանջվում են նաև համապատասխան հատուկ գիտելիքներ և, համապատասխանաբար, այդպիսի անչափահասների հետ աշխատանքային փորձ:

Մանկավարժի դատավարական վիճակի առանձնահատկություններից մեկն այն է, որ նա ներգրավվում է միանգամայն որոշակի քննչական գործողություններ իրականացնելու համար: Նա քրեական դատավարության մասնակից է, որի գործունեության ժամկետը քրեական դատավարությունում սահմանափակվում է համապատասխան քննչական գործողության տևողությամբ: Ըստ այդմ՝ իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն ուղղված նրա գործունեության առանձնահատկությունը դրա կարճաժամկետ լինելն է՝ սեղմ ժամանակում համապատասխան քննչական գործողություններ կատարելու սահմանափակմամբ: Դրանով մանկավարժը նման է քրեական դատավարության այնպիսի մասնակցի, ինչպիսին ընթերական է, որը նույնպես ներգրավվում է միայն որոշակի



քննչական գործողություն կատարելու համար: Այս առանձնահատկությունը, սակայն, չպետք է ազդի մանկավարժի պարտականությունները կատարելու համար անձի մանրակրկիտ ընտրության վրա, քանի որ նրա մասնակցության նշանակությունը պայմանավորված է անչափահասի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության անհրաժեշտությամբ: Ավելին, քննչական գործողությունները, որոնց մասնակցելու համար ներգրավվում է մանկավարժը, որպես կանոն, հատկապես կարևոր են լինում ասպացուցողական բազայի ձևավորման համար:

Հաշվի առնելով այն, որ մանկավարժին համապատասխան քննչական գործողությունների մասնակցելու պետք է հրավիրեն քննիչը կամ դատախազը, համապատասխանաբար նրա աշխատանքի վարձատրությունը պետք է կատարվի պետության միջոցներից: Կապ չունի, որ մանկավարժն իրականացնում է քրեական դատավարությանը մասնակցող անչափահասի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն ուղղված գործունեություն: Մանկավարժի ծառայությունների դիմաց վարձատրության այդպիսի կարգի արդարացիությունը պայմանավորված է այն բանով, որ որոշակի քննչական գործողություններին նրա մասնակցության նախաձեռնողը քննիչը կամ դատարանն է, այլ ոչ թե անչափահասն ինքը կամ նրա օրինական ներկայացուցիչը:

Այսպիսով՝ մանկավարժի մասնակցությունը քրեական դատավարությանը անչափահասների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության երաշխիքներից մեկն է: Նրա մասնակցությունը կոչված է կանխելու քրեական դատավարության անչափահաս մասնակիցների իրավունքների և ազատությունների հնարավոր խախտումները: Ներգրավելով մանկավարժի՝ քննիչը, դատարանը ներգրավում են հատուկ գիտելիքներ, որոնք անհրաժեշտ են այն քանի համար, որպեսզի չվնասեն անչափահասի հոգեկանը, չխախտեն նրա իրավունքներն ու օրինական շահերը: Այդ պատճառով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում պետք է նրա իրավական վիճակը կարգավորել առանձին նորմով: Դա կապահովի մրցակցության սկզբունքի գործողությունը, որը հռչակված է ՀՀ քր. դատ. օր.-ի 23-րդ հոդվածով, քանի որ կերաշխավորի քրեական դատավարության անչափահաս մասնակիցներ-

րին՝ իրացնելու իրենց իրավունքներն ու ազատությունները, որոնցով նրանք օժտված են համաձայն ՀՀ Սահմանադրության և ՀՀ քր. դատ. օր.-ի: Մանկավարժը, տիրապետելով անհրաժեշտ գիտելիքների մանկավարժության բնագավառում, կարող է կանխել անչափահասի հոգեկանի խեղման հնարավորությունը, ինչպես նաև խուսափել նրանց իրավունքների և օրինական շահերի խախտման դեպքերից:

ԱՊՀ մի շարք երկրների օրենսդրություններում մանկավարժի հետ մեկտեղ հիշատակվում է հոգեբանը: Այսպես՝ ՌԳ քր. դատ. օր.-ի 425-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված է. «Տասնվեց տարեկանը չլրացած կամ լրացած, սակայն հոգեկան խանգարմամբ տառապող կամ հոգեկան թերզարգացմամբ անչափահաս կասկածյալի, մեղադրյալի հարցաքննության ժամանակ մանկավարժի կամ հոգեբանի մասնակցությունը պարտադիր է»: Այդ առումով միանգամայն բնական է քրեական դատավարությունում հոգեբանի կարգավիճակի վերաբերյալ հարցը: Հաշվի առնելով այն, որ ՀՀ քր. դատ. օր.-ում հոգեբանը չի հիշատակվում, հարց է ծագում. հոգեբանի կարիք կա՞ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում:

Քրեական դատավարությունում հոգեբանի դատավարական վիճակի հիմնախնդրին իրավաբանական գրականության մեջ նվիրված են բազմաթիվ հրապարակումներ<sup>1</sup>: Ընդ որում՝ հաճախ է արժարժվում քրեական դատավարությունում հոգեբանի և մանկավար-

---

<sup>1</sup> Տե՛ս **Гришина Е.П.** Использование познаний специалиста-психолога в уголовном судопроизводстве // Российский судья. М.: Юрист, 2003, № 7, էջ 27-28; **Гришина Е.П.** Перспективы использования специальных знаний психолога в уголовном судопроизводстве // Российский следователь. М.: Юрист, 2005, № 7, էջ 13-14; **Гуськова А.П.** Значение использования специальных знаний специалистов-психологов в уголовном судопроизводстве России // Вестник Оренбургского государственного университета. Оренбург: Изд-во Оренбург. ун-та, 2007, № 3, էջ 4-7; **Гвоздева И.С.** Правовые и тактические основы участия психолога в уголовном судопроизводстве // Новый век: история глазами молодых: Сборник научных трудов аспирантов и студентов исторического факультета СГУ. Саратов: Изд-во Саратов. ун-та, 2006, Вып. 5, էջ 129-132; **Гришина Е.** Использование специальных познаний психолога на предварительном следствии // Законность. М., 2004, № 5, էջ 25-26; **Коченов М.М., Осипова Н.Р.** Психология показаний малолетних и участие психолога в допросе // Проблемы психологии следственной деятельности. Сборник научных статей. Красноярск: Изд-во Краснояр. ун-та, 1986, էջ 102-111 և նրիշներ:

ժի հասկացությունների հարաբերակցության հարցը<sup>1</sup>: Ուշագրավ է, որ որոշ դեպքերում այդ հասկացությունները նույնացվում են<sup>2</sup>: Միանշանակ է, որ հոգեբանի և մանկավարժի միջև ընդհանուրն այն է, որ նրանք մանկական և պատանեկան հոգեբանության բնագավառներում հատուկ գիտելիքների տիրապետող անձինք են: Ռ-Դ քր. դատ. օր.-ի դրույթների վերլուծությունը ցույց է տալիս, որ մանկավարժի և հոգեբանի առջև դրված խնդիրները նման են: Դա մասնավորապես հետևում է Ռ-Դ քր. դատ. օր.-ի 425-րդ հոդվածի 5-րդ մասում գրվածից. «Մանկավարժը կամ հոգեբանը իրավունք ունեն քննիչի, հետաքննության մարմնի թույլտվությամբ հարցեր տալու անչափահաս կասկածյալին, մեղադրյալին, իսկ հարցաքննությունն ավարտվելուց հետո ծանոթանալու հարցաքննության արձանագրությանը և կատարելու գրավոր դիտողություններ այնտեղ արված գրառումների ճշտության և լրիվության մասին: Այդ իրավունքները քննիչը, հետաքննության մարմինը պարզաբանում են մանկավարժին կամ հոգեբանին նախքան անչափահաս կասկածյալին, մեղադրյալին հարցաքննելը, ինչի մասին նշում է կատարվում արձա-

---

<sup>1</sup> Տե՛ս **Макаренко И.А.** Проблемы участия педагога и психолога в процессе расследования уголовных дел в отношении несовершеннолетних // Российский следователь. М.: Юрист, 2007, № 13, էջ 5-7; **Матвеев С.В.** Актуальные проблемы правового статуса психолога и педагога в уголовном судопроизводстве по делам несовершеннолетних // Российский судья. М.: Юрист, 2002, № 3, էջ 12-14; **Куликов А.В., Новиков А.В.** Соотношение процессуального положения специалиста, психолога, педагога и переводчика в уголовном судопроизводстве России // Российский судья. М.: Юрист, 2007, № 1, էջ 32-34; **Петровская М.С.** К вопросу о процессуальном статусе педагога и психолога в уголовном судопроизводстве // Актуальные проблемы современного уголовного процесса России: межвузовский сборник научных статей. Самара: Изд-во "Самарский университет", 2009, Вып. 4, էջ 193-198:

<sup>2</sup> Տե՛ս **Тетюев С.В.** УПК России и УПК Узбекистана об участии педагога (психолога) в уголовном судопроизводстве // Российский юридический журнал. Екатеринбург: Изд-во УрГЮА, 2008, № 5, էջ 182-186; **Тетюев С.В.** Место педагога (психолога) в системе участников уголовного судопроизводства // Следователь. Федеральное издание. М., 2007, № 1, էջ 18-20; **Кузнецова А.А.** Актуальные проблемы правового статуса педагога (психолога) как участника допроса несовершеннолетнего в уголовном судопроизводстве // Современные проблемы юридической науки. Материалы III Всероссийской с международным участием научно-практической конференции молодых исследователей, 26-28 апреля 2007 г.. Челябинск: Полиграф-Мастер, 2007, Ч. 2, էջ 180-183:

նագրությունում»:

Սակայն կան նաև որոշ տարբերություններ: Այսպես՝ հոգեբանը մասնակցում է միայն անչափահաս կասկածյալի, մեղադրյալի հարցաքննությանը, անչափահաս վկայի և տուժողի հարցաքննությանը նա չի ներգրավվում: Ընդ որում՝ Ռուսաստանի Գաշնության քրեադատավարական օրենսդրությունում չկա որևէ բացատրություն, թե ինչ պատճառով է օրենսդիրը սահմանափակել հոգեբանի մասնակցությունը միայն կասկածյալի և մեղադրյալի հարցաքննությամբ և չի նախատեսել նրա մասնակցությունը վկայի և տուժողի հարցաքննությանը: Մինչդեռ ակնհայտ է, որ «անչափահաս կասկածյալի և մեղադրյալի համար հոգեբանի կամ մանկավարժի մասնակցությունը նրա իրավունքների և օրինական շահերի պաշտպանության լրացուցիչ երաշխիք է»<sup>1</sup>: Այսինքն՝ և՛ մանկավարժի, և՛ հոգեբանի առջև դրված խնդիրներից մեկը անչափահասների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն է, որը հիմնված է մանկական և պատանեկան հոգեբանության բնագավառի գիտելիքների վրա, որոնց տիրապետում են քրեական դատավարության այդ մասնակիցները: Այդ կապակցությամբ հարց է ծագում, թե արդյոք հոգեբանը քրեական դատավարությունում այնպիսի մասնակից չէ՞, որը փոխարինում է մանկավարժին: Հաշվի առնելով այն, որ հոգեբանի մասնակցությունը նախատեսված է միայն կասկածյալի և մեղադրյալի հարցաքննության ժամանակ, կարելի է ենթադրել, որ հոգեբանն անհրաժեշտ է անչափահաս կասկածյալների ու մեղադրյալների երաշխիքները մեծացնելու համար: Ըստ այդմ՝ կարելի է ենթադրել, որ Ռուսաստանի Գաշնության օրենսդիրը հոգեբանի ներգրավումով ցանկացել է լրացուցիչ երաշխավորել անչափահաս կասկածյալների ու մեղադրյալների իրավունքներն ու օրինական շահերը: Այդ պատճառով հոգեբանի դատավարական վիճակը սահմանելիս առնչվում ենք այն նույն դժվարություններին, ինչ մանկավարժի դեպքում: Մի կողմից, նա ներգրավվում է մանկական և պատանեկան հոգեբանության բնագավառներում ունեցած հատուկ գիտելիքների օգտագործման նպատակով, որոնք անհրաժեշտ են քրեական գործի

---

<sup>1</sup> Уголовно-процессуальное право Российской Федерации. / Отв. ред. П.А. Лупинская. М.: Юристъ, 2004, էջ 674:

լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննության համար: Մյուս կողմից, այդ հատուկ գիտելիքներն օգտագործվում են անչափահաս կասկածյալներին ու մեղադրյալներին քրեական դատավարության ընթացքում հոգեխեղիչ ներգործությունից պաշտպանելու համար, ինչպես նաև նրանց իրավունքներն ու օրինական շահերը արդյունավետ պաշտպանելու նպատակով: Հոգեբանի դատավարական այդպիսի վիճակը թույլ չի տալիս դիտելու նրան միայն որպես մասնագետի՝ քրեական դատավարության մասնակցի: Ավելի շուտ նա մանկավարժին նմանվող մասնակից է, այսինքն՝ անձ, որը թեպետև ներգրավվում է հոգեբանության բնագավառում ունեցած հատուկ գիտելիքները օգտագործելու նպատակով, սակայն նրա կողմից այդ գիտելիքները կիրառվում են հենց ի շահ անչափահաս կասկածյալի և մեղադրյալի: Այդ պատճառով հազիվ թե արժե նրանց դասել քրեական դատավարության այն մասնակիցների թվին, որոնց անվանում ենք մասնագետներ:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության համար կարևոր հարց է այն, թե որքանով է անհրաժեշտ նրան այնպիսի մասնակիցը, ինչպիսին հոգեբանն է: Կարծում ենք՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում այդ մասնակցին ներգրավելն ավելորդ է, քանի որ հոգեբանը հիմնականում կրկնում է մանկավարժին: Հազիվ թե կարելի է ենթադրել, որ անչափահաս կասկածյալների և մեղադրյալների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության որակը կբարելավվի, եթե դրանում իրենց ջանքերը ներդնեն մանկական և պատանեկան հոգեբանության բնագավառների երկու մասնագետ: Առավել ևս, որ այդ մասնագետներն օժտված են համանման իրավունքներով, և նրանց վրա դրված են համանման պարտականություններ: Անշուշտ, կարելի է ենթադրել, որ Ռուսաստանի Դաշնության օրենսդիրը քրեական դատավարությունում ներգրավել է հոգեբանի այն հաշվարկով, որ հոգեբանության բնագավառում ունեցած նրա հատուկ գիտելիքները պետք կզանց որոշ առանձնահատուկ բարդ դեպքերում: Հոգեբանը, իհարկե, մանկական և պատանեկան հոգեբանության ոլորտի ավելի խոր մասնագետ է: Ինչպես նշում է Ն. Ա. Կուրմանևան. «Հոգեբանի մասնակցությունը հնարավորություն է ընձեռում ավելի բարձր որա-

կով գնահատելու անչափահասի մտավոր թերզարգացածության մասին տեղեկությունները, որոնք ստացվում են ծնողների ցուցմունքներից, ուսումնական հաստատության մանկավարժներից, որտեղ նա սովորել է, բնութագրերից, բժշկական փաստաթղթերից և այլ նյութերից»<sup>1</sup>: Այս դատողությունն է հիմք ընդունում, մասնավորապես, Ս. Վ. Մատվենը, որը գրում է, թե նպատակահարմար է, որ Ռ-Դ քր. դատ. օր.-ում ամրագրվի քննչական և դատական գործողություններում հոգեբանի մասնակցության առաջնայնությունը, իսկ մանկավարժի մասնակցությունը դիտվի լոկ որպես հարկադրված այլընտրանք<sup>2</sup>: Սակայն հոգեբանի ավելի խոր գիտելիքներ ունենալը մանկական և պատանեկան հոգեբանության բնագավառներում միայն ենթադրություն է, մինչդեռ Ռ-ուսաստանի Գ-աշնության օրենսդրությունում այդ մասին որևէ բացատրություն չկա:

Հաշվի առնելով, որ Ռ-Դ քր. դատ. օր.-ում նշված չէ այն մասին, որ հոգեբանը մասնակցում է մանկավարժի հետ հավասար կարգավիճակով, և ոչ թե միայն որպես այլընտրանք նրան, նշանակում է, որ օրենսդիրը առաջարկում է հարկ եղած դեպքում մանկավարժին փոխարինել հոգեբանով: Ընդ որում՝ չի նշվում, թե որ դեպքերում կարելի է դա անել: Թե ով պիտի ներգրավվի՝ հանձնարարված է որոշելու քննիչին և դատարանին: Այսինքն՝ այստեղ կարևոր է քննիչի և դատարանի հայեցողությունը: Հաշվի առնելով այդ՝ կարելի է ենթադրել, որ հոգեբանի մասնակցությունը օրենքով նախատեսված է այն դեպքում, երբ որոշակի հանգամանքներից ելնելով հնարավոր չէ ապահովել մանկավարժի մասնակցությունը: Ընդ որում՝ բացառված չէ, որ օրենսդիրը նկատի ունի այն դեպքերը, երբ հարցաքննությունը արագ անցկացնելու հրամայականից ելնելով ոչ միշտ է հնարավոր շտապ մանկավարժ գտնել, ուստի քննիչի և դատարանի գործը չբարդացնելու համար օրենսդիրը ընդլայնել է այն անձանց շրջանակը, որոնք կարող են ներգրավվել մասնակցելու կասկածյալի, մեղադր-

<sup>1</sup> Курмаева Н.А. Проблемы использования специальных психологических знаний при рассмотрении и разрешении судом уголовного дела в отношении несовершеннолетнего. //Научные труды. Российская академия юридических наук. Выпуск 9. В 3 томах. Том 3. М.: Издательская группа «Юрист», 2009, էջ 957:

<sup>2</sup> St'u **Матвеев С.В.** Получение информации от несовершеннолетних, её оценка и использование в уголовно-процессуальном доказывании: автореф. дисс. ... канд. юрид. наук. М., 2003, էջ 8:

յալի հարցաքննությանը: Եթե այդպես է, ապա հոգեբանի ներառումը Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարությունում բնավ էլ թելադրված չէր կասկածյալի, մեղադրյալի իրավունքների և ազատությունների պաշտպանության մասին հոգատարությամբ: Այդպիսի բացատրությունը կարող է վկայել միայն դատավարությունը արագացնելու և այն անհարկի ձգձգումից խուսափելու ձգտմամբ: Դա, անշուշտ, նույնպես հոգատարության դրսևորում է, որպեսզի չխախտվեն քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները, սակայն հազիվ թե հնարավոր լինի խոսել այն մասին, որ այն ուղղված է, առաջին հերթին, անչափահաս կասկածյալների, մեղադրյալների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը: Բացի այդ, դրանում նախատեսվում է նաև պետության շահը, որը շահագրգռված է տնտեսելու ժամանակ, հետևաբար նաև միջոցներ, որ ծախսվում են դատավարության համար:

Իհարկե կարելի է նաև այլ ենթադրություն անել, մասնավորապես, որ հոգեբանն անհրաժեշտ է առանձնահատուկ, ավելի բարդ դեպքերի համար, երբ միայն մանկավարժի գիտելիքները բավարար չեն: Սակայն եթե այդպես լիներ, ապա օրենսդրությունում պետք է նշվեին այն դեպքերը, երբ հոգեբանի մասնակցությունը ցանկալի է կամ նույնիսկ պարտադիր է: Այդուհանդերձ, Ռուսաստանի Դաշնության քրեադատավարական օրենսդրությունում այդ հարցի մասին ոչինչ ասված չէ: Այստեղից միանգամայն պարզ է դառնում, որ ներգրավելով հոգեբանի, Ռուսաստանի Դաշնության օրենսդիրը հոգ է տարել ոչ թե կասկածյալների, մեղադրյալների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության մասին, այլ հաշվի է առել դատավարության շահերը՝ առանձին քննչական գործողություններ իրականացնելու ժամանակ անցանկալի ձգձգումներից խուսափելու համար: Ռուսաստանի Դաշնության օրենսդիրը նման մոտեցմամբ անհարկի վերաապահովագրում է իրեն անչափահաս կասկածյալների, մեղադրյալների հարցաքննությունների վարույթների ձգձգումներից: Նշյալ խնդիրը լիովին կարող է լուծվել և առանց քրեական դատավարությունում հոգեբան ներգրավելու:

Չի կարելի բացառել, որ գործնականում կարող են լինել դեպքեր, երբ ընդհանուր գիտելիքները մանկական և պատանեկան հոգեբանության բնագավառներում կարող են չբավարարել, երբ անհրաժեշտ լինեն մանկական և պատանեկան հոգեբանության տարբեր խնդիր-

ների վերաբերյալ խորացված գիտելիքներ: Օրինակ՝ երբ անչափահասի մոտ առկա են շեղումներ, որոնք, սակայն, պաթոլոգիկ չեն: Այդ դեպքում, անշուշտ, անհրաժեշտ է մասնագետ, որը տիրապետում է այդ պաթոլոգիաների վերաբերյալ գիտելիքների, և գիտի ինչպես վարվել այդպիսի պաթոլոգիաներ ունեցող անձանց հետ: Ուստի եթե հոգեբան ասելով նկատի ունենանք այդպիսի մասնագետի, ապա, իհարկե, նրա մասնակցությունն անհրաժեշտ է: Ընդ որում՝ պարտադիր չէ հոգեբանին ներգրավել որպես քրեական դատավարության հատուկ մասնակցի: Միանգամայն բավարար կլիներ նշել, որ մանկավարժ ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն անձի անճանային առանձնահատկությունները, որի նկատմամբ իրականացվում է համապատասխան քննչական գործողությունը:

Հաշվի առնելով այդ՝ պետք է նշել, որ Ռուսաստանի քրեական դատավարությունում հոգեբանը մի մասնակից է, որը ոչնչով չի տարբերվում մանկավարժից: Ուստի նրա կարևորությունն ու նշանակությունը բավականին բարդ է հիմնավորել: Ավելին, նրան կարելի է դիտել որպես մասնակցի, որն առանց որևէ անհրաժեշտության կրկնում է մանկավարժին: Հետևաբար անհրաժեշտ չի համարվում հոգեբանի ներգրավումը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությանում: Նշյալ մասնակիցը չի տալիս կասկածյալի, մեղադրյալի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության լրացուցիչ երաշխիքներ: Սակայն այն երաշխիքները, որոնք տալիս է մանկավարժը, հարկ է ուժեղացնել՝ օրենքում ճշգրտումներ կատարելով այն մասին, որ անհրաժեշտության դեպքում դատարանն ու քննիչը մանկավարժին նշանակելիս պետք է հաշվի առնեն նրա պրակտիկ գործունեության առանձնահատկություններն ու գիտելիքները, որոնք նա այդ գործունեության ընթացքում կիրառում է: Ուստի անվիճելի է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում մանկավարժի ներգրավման անհրաժեշտությունը, սակայն ավելորդ է հոգեբանի ներգրավումը: Անհրաժեշտ է միայն մանկավարժին օժտել լրացուցիչ իրավունքներով, որոնք օգտագործելով նա կկարողանա արդյունավետորեն պաշտպանել կասկածյալի, մեղադրյալի իրավունքներն ու օրինական շահերը: Մասնավորապես, մանկավարժը պետք է իրավունք ստանա առարկելու այն հարցերին, որոնք, նրա կարծիքով, կարող են վնաս հասցնել անչափահաս մեղադրյալի, կասկածյալի հոգեկանին կամ որևէ այլ ձևով



վմասել նրան: Նմանապես անհրաժեշտ է մանկավարժին տալ այլ իրավունքներ, որոնցից օգտվելով նա կարողանա ավելի ակտիվ դիրք գրավել քրեական դատավարությանը մասնակցող անչափահասի իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելիս: Ընդ որում՝ մանկավարժը պետք է դիտվի որպես քրեական դատավարության մասնակից, որը հոգեբանության գիտելիքների հիման վրա պաշտպանում է ցանկացած անչափահաս մասնակցի իրավունքներն ու օրինական շահերը՝ անկախ նրա դատավարական վիճակից (մեղադրյալ, կասկածյալ, տուժող, վկա):

Բնութագրելով անչափահասների իրավունքների օրենսդրորեն կանոնակարգվածության աստիճանը հարկ է նշել, որ ներկայումս այն ընդհանուր առմամբ համապատասխանում է միջազգային հիմնական պահանջներին: Ընդ որում՝ պետք է նշել, որ նրանում նկատելի է նախկինում՝ խորհրդային ժամանակաշրջանում գործող և նորմատիվորեն ամրագրված համակարգի իրավահաջորդությունը: Ժամանակակից համակարգի արժանիքն այն է, որ չի մերժել այն դրույթները, որոնք կարող են բնորոշվել որպես ժողովրդավարական և մարդասիրական: Դրանք ընդունվել են, և ձեռնարկվել են ինչպես օրենսդրական, այնպես էլ իրավակիրառ միջոցներ, որպեսզի դրանք չլինեն դեկլարատիվ, այլ լինեն գործունակ: Թեպետ դրանով հանդերձ, ակներև է անչափահասների հարցերով քրեական դատավարության նոր օրենսգիրքը պետք է լինի էլ ավելի կատարելագործված: Այն թերությունները, որոնք առկա են քրեական դատավարության գործող օրենսգրքում, պետք է վերացվեն: Կատարելագործումը պետք է ուղղված լինի անչափահասների համար լրացուցիչ երաշխիքների ստեղծմանը՝ նրանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ոլորտում: Բացի այդ, հատուկ ուշադրություն պետք է դարձնել, թե ինչ չափով են նորամուծությունները կյանքի կոչվում գործնականում, որպեսզի հարկ եղած դեպքում միջոցներ ձեռնարկվեն քրեադատավարական իրավունքի նորմերը գործուն դարձնելու համար:

## ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Արդարադատությունը ոչ միայն դատական իշխանության իրականացման միջոց է պետությունում, այլև դատավարության վիճակի գնահատականն է, ինչպես նաև այն բանի ցուցիչը, թե որքանով է այն համապատասխանում ժողովրդավարության չափանիշներին: Արդարադատությունը միայն անձի իրավունքների և օրինական շահերի հռչակումը չէ քրեական դատավարությունում, այն ենթադրում է նաև դրանք ապահովելու հնարավորություն, որը Ժողովրդավարական պետության հիմնական պահանջներից մեկն է:

Նման բարձր պահանջների առաջադրումը ենթադրում է համապատասխան մեխանիզմների համակարգի մշակում և դրանց իրավական ամրագրում: Ասվածից պետք է ենթադրել և այն, որ ներկայումս քրեական դատավարությունում գիտական հետազոտությունների առաջնահերթությունը հենց անձի իրավունքների ու օրինական շահերի ապահովումն է: Այդ հիմնախնդիրների բարդությունը պայմանավորված է այն բանով, որ անձի իրավունքներն ու օրինական շահերը նախկինում նույնպես հռչակված էին քրեական դատավարությունում, սակայն միայն դրանով սահմանափակվում էր: Արդյունքում պետությունն ու հասարակությունը ստանում էին միայն կարգախոսներ, որոնք գեղեցիկ էին ու գրավիչ, բայց դրանք իրականացնել ոչ ոք չէր պատրաստվում, որովհետև դրա համար անհրաժեշտ քաղաքական կամք չկար, արդարադատությունն ինքնին լոկ կարգախոս էր: Ուստի ժամանակակից պետության առջև ծառայելու այն հիմնախնդիրը, թե ինչպես ապահովել անձի իրավունքներն ու օրինական շահերը քրեական դատավարությունում: Ինչպիսին պետք է լինի այն համակարգը, որը կկարողանա երաշխավորել դրանց ապահովումը: Այդպիսի խնդիր դրված է քրեադատավարական գործող օրենսդրության բարեփոխման հիմքում:

Քրեական դատավարության միևնույնպես վարույթում անձի իրավունքների ու օրինական շահերի ապահովման հիմնախնդրի վերաբերյալ կատարված ուսումնասիրության արդյունքում արվել են հետևյալ եզրահանգումները.

1. Իրավունքները քրեական դատավարությունում պետք է լինեն մեկ ամբողջություն, քանի որ որոշ իրավունքների սահմանումը

անհրաժեշտ պայմանն է մյուսների ապահովման համար: Չնայած, քրեական դատավարությունում իրավունքները կարելի է պայմանականորեն բաժանել հիմնարարների և այլ իրավունքների, սակայն դրանք բոլորը պետք լինեն միասնության մեջ: Այդ իրավունքների ամբողջությունը դրանց ապահովման նախադրյալն է:

2. Օրինական շահը քրեական դատավարությունում իրավունքներն ապահովելու մեխանիզմի կարևոր տարրն է: Իրավունքներն իրացնելու օրենքով թույլատրվող մեխանիզմների բազմազանությունը ենթադրում է նաև օրինական շահերի նույնպիսի բազմազանություն: Հենց դրանով է բացատրվում այն, որ օրենքում ոչ մի տեղ չեն թվարկվում քրեական դատավարությանը մասնակցող անձանց օրինական շահերը: Ընդ որում, քրեական դատավարությանը մասնակցող անձինք կարող են ունենալ հակառակ շահեր, ինչը մրցակցության հիմքն է:

3. Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրություններում գործածվում են «շահ» և «օրինական շահ» հասկացությունները: Ընդ որում, առաջ են քաշվում պահանջներ՝ պաշտպանելու ինչպես օրինական շահերը, այնպես էլ շահերը: Կարծում ենք՝ ճիշտ կլինի գործածել այդ հասկացություններից միայն մեկը՝ օրինական շահը: Դա պայմանավորված է այն բանով, որ շահի հասկացության գործածումը ենթադրում է իրավունքի նորմի չափից դուրս լայն մեկնաբանության հնարավորություն, ինչը թույլ է տալիս մեկնաբանել վերոնշյալ նորմերը որպես քրեական դատավարությունում ցանկացած շահ պաշտպանելու պահանջ՝ անկախ այն բանից՝ օրինակա՞ն է այն, թե՞ ոչ: Այսպես ՀՀ քր. դատ. օր.-ի 77 հոդվածի 6-րդ մասում ասված է. «Տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցիչը պարտավոր է... 2) իր կողմից ներկայացվող անձի շահերը պաշտպանելու համար ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով: Այս դեպքում «օրինական շահի» փոխարեն «շահ» հասկացությունը գործածելը թույլ է տալիս մեկնաբանել այդ նորմը որպես օրինական ներկայացուցչին առաջադրվող պահանջ՝ պաշտպանելու իր ներկայացրած անձի ցանկացած շահ, նույնիսկ անօրինական:

4. Ժողովրդավարական պետության համար անհրաժեշտ է, դատավարությունում պահպանել հանրային ու մասնավոր հիմքերի

միջև հաշվեկշիռը: Անթույլատրելի է, որ հանրային հիմքը գերակայի մասնավորի նկատմամբ: Դ-ա բնորոշ էր պետության զարգացման խորհրդային շրջանին, այն բնորոշ է ավտորիտար պետություններին: Հանրային (պետական) հիմքը, եթե ոչնչով սահմանափակված չէ, երբեմն չարաշահումների նախադրյալներ է ստեղծում իրավապահպան մարմինների պաշտոնատար անձանց կողմից: Մասնավոր հիմքը պայմաններ է ստեղծում քրեական դատավարության «թափանցիկության» համար, ինչը կանխում է նշյալ պաշտոնատար անձանց կողմից չարաշահումների հնարավորությունը: Բացի այդ, մասնավոր հիմքի վրա է հենվում մրցակցության սկզբունքը, քանի որ ենթադրում է քրեական դատավարությանը մասնակցող անձանց շահերի մրցակցություն:

5. Մասնավոր հիմքի ճանաչումը քրեական դատավարությունում չի նշանակում հրաժարվել հանրային հիմքից, քանի որ դրանում արտահայտվում է պետության, հասարակության շահը: Ժողովրդավարական պետության գաղափարախոսությունը հռչակում է, որ թե՛ պետությունը, թե՛ հասարակությունը գոյավարում են հանուն իրենց քաղաքացիների և այլ անձանց շահերի, որոնք ապրում են իր տարածքում: Այսինքն՝ տվյալ դեպքում հանրային հիմքը հռչակվում է որպես մասնավորին ածանցյալ: Բացի այդ, մասնավոր հիմքը դիտվում է որպես հենարան հանրայինի համար, որովհետև բազմաթիվ մասնավոր շահերից է ձևավորվում հանրայինը, որն էլ, ըստ այդմ, չի կարող հակադրվել մասնավոր հիմքին: Հետևաբար, ժողովրդավարական պետությունում մասնավոր ու հանրային հիմքերը չեն հակադրվում, այլ, կարելի է ասել, որ դրանք իրար հետ անխզելիորեն կապված են:

6. Հանրայնությունը ժողովրդավարական պետության դատավարությունում չի կարելի դիտարկել որպես սկզբունք: Այլապես դա կարող է դառնալ հանրային և մասնավոր հիմքերի միջև անհավասարակշռության պատճառ, ինչը կարող է խաթարել ժողովրդավարության սկզբունքների համակարգը: Ընդ որում, հանրայնության նշանակությունը նվազեցնել չի կարելի, քանի որ պետական, հասարակական շահերը պաշտպանության կարիք ունեն նաև ժողովրդավարական պետությունում:

7. Քրեադատավարական ձևը քրեական դատավարությանը

մասնակցող անձանց իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու երաշխիքների համակարգ է, որի էությունը սահմանված կարգով արդարադատության իրականացումն է: Այդպիսի կարգը ապահովում է կոնկրետ քրեական գործի հանգամանքները հետազոտելու տրամաբանությունը, ինչը կանխում է քրեական դատավարությանը մասնակցող անձանց իրավունքների ու օրինական շահերի խախտման հնարավորությունը: Հայաստանի Հանրապետության գործող քրեական դատավարությունում դատավարական ձևն ունի ծառայողական նշանակություն, որի էությունը դատավարությանը մասնակցող անձանց իրավունքներն ու օրինական շահերն ապահովելն է: Դատավարական կարգն ինքնին ձևի ամենաէական բաղադրիչներից է և անհրաժեշտ է այն բանի համար, որ գործողությունների որոշակի հաջորդականության շնորհիվ պաշտպանվեն քրեական դատավարությանը մասնակցող անձանց իրավունքները:

8. Քրեադատավարական ձևը պահպանելու պահանջը չի կարելի դիտել որպես քրեական դատավարությունում ձևականություն (ֆորմալիզմ) հաստատելու կոչ: Ձևին անշեղորեն հետևելը մարդու իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու երաշխիքներ է ստեղծում: Ուստի դրան հետևելը ընդհանուր ոչինչ չունի անարտության ու անմարդկայնության հետ, ինչը սովորաբար նույնացվում է ձևականության հետ: Ծիշտ հակառակը՝ ձևն անտեսելը կհանգեցնի հապճեպ և անարդարացի դատավարության: Ձևից հրաժարվելը միայն պատրվակ է արդարացնելու կատարվող քննության ու դատական քննության ընթացքում տեղ գտած իրավունքների և ազատությունների խախտումները: Ազատ հասարակությունն ու պետությունը, որ ճանաչում և պաշտպանում է մարդու ազատություններն ու իրավունքները, պետք է երաշխիքներ ստեղծի չիմնավորված մեղադրանքի դեմ, հետևաբար և հետևի դատավարական ձևին:

9. Քրեադատավարական ձևը պահպանելը գործող օրենսդրության պահանջն է, ուստի այն անտեսելը քրեադատավարական օրենքի խախտում է: ՀՀ քր. դատ. օր.-ի 398-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է. «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների եւ այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործիմ մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից

գրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա»: Ռ-Դ քր. դատ. օր.-ում ներկայումս որպես դատավճռի բեկանման կամ փոփոխման վճռաբեկ հիմք նշված են ոչ թե քրեադատավարական օրենքի էական խախտումները, այլ պարզապես քրեադատավարական օրենքի խախտումը: Համեմատության համար նշենք, որ Ռ-Դ քր. դատ. օր.-ի 381 հոդվածի 1-ին մասում նախատեսված է. «Վճռաբեկ դատարանի կողմից դատական որոշումը բեկանելու կամ փոփոխելու համար հիմքեր են քրեադատավարական օրենքի այնպիսի խախտումները, որոնք սույն Օրենսգրքով երաշխավորված իրավունքներից քրեական դատավարությանը մասնակցող անձանց գրկելու կամ դրանք սահմանափակելու եղանակով, դատավարական կարգը չպահպանելու կամ այլ ճանապարհով ազդել են կամ կարող էին ազդել օրինական, հիմնավորված և արդարացի դատավճիռ կայացնելու վրա»: Ըստ այդմ, կարծում ենք, ճիշտ կլիներ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում ևս հրաժարվել «էական խախտումներ» հասկացությունից՝ փոխարինելով այն «խախտումներ» հասկացությամբ և թույլատրել դատավորներին քրեական գործի քննության յուրաքանչյուր կոնկրետ դեպքում որոշել, թե որքանով է կոնկրետ խախտումը ազդել կամ կարող էր ազդել կայացված որոշման վրա, և, դրանից ելնելով, եզրահանգում անել այդ որոշումը փոփոխելու անհրաժեշտության մասին:

10. Քրեադատավարական ձևի միասնությունը չի բացառում նաև նրա տարբերակումը: Դ-ա պայմանավորված է այն բանով, որ առանձին քրեական գործերի քննության համար, ելնելով դրանց առանձնահատկություններից, պահանջվում է բարդացնել, կամ հակառակը, պարզեցնել դատավարական ընթացակարգը: Դ-ա կարող է անհրաժեշտ լինել ինչպես նախնական քննության կամ դատական քննության օպտիմալացման, այնպես էլ այն բանի համար, որ ավելի մեծ չափով երաշխավորվեն քրեական դատավարության մասնակիցների իրավունքները: Դատավարական ձևի տարբերակումը քրեական դատավարությունում տեղի է ունենում երկու ուղղությամբ՝ բարդացման և պարզեցման: Դատավարության ձևերի բարդացումը

պայմանավորված է, որպես կանոն, քրական դատավարության մասնակիցների իրավունքների ու ազատությունների հնարավորինս արդյունավետ երաշխավորելու անհրաժեշտությամբ: Պարզեցումը հիմնականում ուղղված է քրեական դատավարության օպտիմալացմանը՝ ժամանակի ու միջոցների տնտեսման, ավելորդ քաշքշուկից խուսափելու նպատակով: Ընդ որում, հարկ է նկատել, որ դատավարության պարզեցումը բնավ չի ենթադրում, որ պետք է մերժել այն երաշխիքները, որոնք ապահովում են անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Ցավոք, Հայաստանի Հանրապետության քրեադատավարական գործող օրենսդրությունում դատավարության պարզեցված ձև նախատեսված է միայն դատական քննության փուլում, մինչդեռ դրա կիրառման անհրաժեշտությունն առկա է նաև մինչդատական վարույթում: ՀՀ քրեական դատավարության գործող օրենսդրության բարեփոխման նպատակներից մեկը մինչդատական վարույթի օպտիմալացումն է, այսինքն դատավարական կարգի տարբերակման նախատեսումը:

11. Քրեական գործ հարուցելու փուլը բավարար չափով կարգավորված չէ: ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքում հստակ սահմանված չէ հանցագործությունների մասին հաղորդումները ստուգելու կարգը: Այսպես, ՀՀ քր. դատ. օր.-ի 180-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված է. « Նշված ժամկետում կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր, բացատրություններ, այլ նյութեր, ինչպես նաև կարող է կատարվել դեպքի վայրի զննություն և հանցագործություն կատարելու կասկածանքի բավարար հիմքերի առկայության դեպքում կարող են բերման և անձնական խուզարկության ենթարկվել անձինք, հետազոտման համար վերցվել նմուշներ, նշանակվել փորձաքննություն»: Տվյալ դեպքում խոսքը հանցագործությունների մասին հաղորդումները ստուգելու մասին է: Ինչպես տեսնում ենք, օրենսդիրը, թվարկելով հաղորդումները ստուգելու գործողությունները, չի հստակեցնում, թե հատկապես որոնք են դրանք: Օրենքում կարգավորված չէ լրացուցիչ փաստաթղթեր, բացատրություններ, այլ նյութեր պահանջելու կարգը, ավելին՝ չի նշվում, թե այդ ամենն ինչպես պետք է ձևակերպվի: Նաև սահմանված չէ, թե ինչ է նշանակում լրացուցիչ փաստաթղթեր և այլ նյութեր պահանջելը: Այնքան էլ հասկանալի չէ, թե այդ ինչ փաստաթղթեր և նյութեր են:

Օրենքը չի սահմանում դրանց ցանկը կամ գոնե ինչ-որ անվանումներ: Բացի այդ, սահմանված չէ նաև բացատրություններ պահանջելու դատավարական կարգը, ամրագրված չէ այդ բացատրությունների ձևը: Գործնականում դա հանգեցնում է անձի սահմանադրական իրավունքների ու ազատությունների խախտման բազմաթիվ դեպքերի:

ՀՀ քրեական դատավարության գործող օրենսդրության շրջանակներում վերոնշյալ խնդրի լուծումը պահանջում է նշյալ գործողությունների կատարման կարգի հստակ կարգավորում և այլ գործողությունների շարքում դրանց տեղի սահմանում, որոնք լիազորված են իրականացնելու իրավապահական մարմինների պաշտոնատար անձինք քրեական գործով վարույթի ընթացքում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարված փոփոխությունների արդյունքում մինչև քրեական գործի հարուցումը կատարվող քննչական և դատավարական գործողությունների շարքում ավելացվեց հանցագործություն կատարելու կասկածանքով անձին բերման և անձնական խուզարկության ենթարկելը:

Օրենսդրական այս նորույթը որոշակի խնդիրներ առաջացրեց կապված բերման ենթարկելու որպես դատավարական հարկադրանքի միջոցի էության հետ: Հանցագործություն կատարելու կասկածանքով բերման ենթարկելը չի հետապնդում այն նպատակը, որը դրված է բերման ենթարկելու դատավարական հարկադրանքի միջոցի հիմքում:

Քրեական դատավարության օրենսգիրքը չի կարգավորում այդ գործողության իրականացման դատավարական կարգը, իսկ դա նշանակում է, որ իրավակիրառ պրակտիկայում այն կարող է հանգեցնել անձի իրավունքների խախտման: Իհարկե, յուրաքանչյուր դեպքում հանցագործություն կատարելու կասկածանքով անձին բերման և անձնական խուզարկության ենթարկելը պետք է դիտել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի և ՀՀ Սահմանադրության 16-րդ և 19-րդ հոդվածների շրջանակներում, որոնցում սահմանված են մարդուն ազատությունից զրկելու հիմքերը և իրավունքների ապահովման երաշխիքները:

Ճիշտ է, օրենքի միատեսակ կիրառության ապահովման իր սահմանադրաիրավական գործառույթի շրջանակներում քննարկ-



վող խնդրին փորձել է լուծում տալ ՀՀ վճռաբեկ դատարանը Գ-ագիկ Միքայելյանի վերաբերյալ գործով որոշմամբ, բայց կարծում ենք, որ այն քրեական դատավարության օրենսգրքում հստակ կարգավորման խնդիր ունի:

12. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի՝ 1966 թվականի դեկտեմբերի 16-ին ընդունած բանաձևում տեղ գտած Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում նշվում է. «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր նկատմամբ առաջադրված ցանկացած քրեական մեղադրանքի քննության ժամանակ, լիակատար հավասարության հիման վրա, ապահովված լինել առնվազն հետևյալ երաշխիքներով ... 3) առանց չարդարացված հապաղման դատվելու»: Ուստի քրեական գործ հարուցելու փուլի կարճ տևողությունը լիովին համապատասխանում է նշյալ պահանջին: ՀՀ քր. դատ. օր.-ի 180 հոդվածի 1-ին մասում սահմանված հաղորդումները քննելու 10-օրյա ժամկետը, թերևս, ամենաօպտիմալն է, որովհետև այդ ժամանակահատվածում լիովին հնարավոր է ընդունել դիմումը, մանրակրկիտ ուսումնասիրել այն, պահանջել լրացուցիչ փաստաթղթեր, բացատրություններ, այլ նյութեր և որոշում կայացնել քրեական գործ հարուցելու կամ այն մերժելու մասին: Ավելի կարճ ժամանակահատվածում դա անել հնարավոր չէ: Ընդ որում, նշյալ ժամանակահատվածը երկարաձգելը նպատակահարմար չէ, քանի որ կարող է էականորեն խախտվել քաղաքացիների վերոնշյալ իրավունքը: Հանցագործության մասին դիմումը քննության առնելու ժամկետը երկարաձգելու հնարավորության ընձեռումը կհանգեցնի այն բանին, որ երկարաձգումը կդառնա ոչ թե բացառություն, այլ իրավապահպան մարմինների սովորական, ամենօրյա գործելաճ: Այսինքն՝ բացառությունը կարող է դառնալ քաղաքացիների իրավունքները խախտելու ամենօրյա պրակտիկա:

13. Ըստ ՀՀ քր. դատ. օր.-ի 179 հոդվածի 1-ին մասի՝ «Լրատվության միջոցների հաղորդումներ են հանդիսանում կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների մասին հաղորդումները մամուլում, ռադիոյով, հեռուստատեսությամբ, ինչպես նաև լրատվության միջոցներին հասցեագրված և չիրապարակված հաղորդակցություններում»: ՀՀ քր. դատ. օր.-ի 179 հոդվածի 1-ին մասում տրվող լրատվության միջոցների հասկացության սահմաններից

դուրս է մնում ինտերնետը (համացանցը): Միանգամայն ակնհայտ է, որ այն նույնպես լրատվության միջոց է, թեկուզ և տարբերվում է մի շարք առանձնահատկություններով: Այդպիսի առանձնահատկություններից մեկն այն է, որ ինտերնետում զետեղված որոշ հաղորդումներ կարող են լինել անանուն: Այդ պատճառով անհրաժեշտ է, որ որպես առիթ դիտվեն միայն ինտերնետային այն հաղորդումները, որոնք տեղ են գտել պաշտոնապես գրանցված ինտերնետ-պարբերականների էջերում: Դա անհրաժեշտ է տվյալ տեղեկատվության աղբյուրը պարզելու համար, որպեսզի ստուգվի դրա հավաստիությունը:

14. Հանցագործության մասին դիմումը քննության առնելիս վերստուգումներ, գույքագրումներ, այլ ստուգողական գործողություններ կատարելը ենթադրում է անհրաժեշտաբար սահմանել այն անձանց կարգավիճակը, որոնք կատարելու են այդ գործողությունները: Ինչպես նշվեց, նշյալ գործողություններն իրականացնելը քրեական գործ հարուցելու փուլում հատուկ գիտելիքներ ներգրավելու ձևերից մեկն է: Այստեղ միանգամայն տեղին է փորձաքննության հետ զուգադրությունը (անալոգիան), որը կարող է անցկացվել քննության և դատական քննության ընթացքում: Նշյալ անալոգիան միանգամայն տեղին է իրավունքների առնչությամբ, որոնք պետք է տրվեն այն անձանց, որոնք ներգրավվում են վերստուգումներ, գույքագրումներ, այլ ստուգողական գործողություններ կատարելու համար: Այսինքն՝ նշյալ գործողությունները կատարող անձինք պետք է օժտված լինեն նույնպիսի իրավունքներով, ինչպիսին ունեն փորձագետները: Դա անհրաժեշտ է այն բանի համար, որ արված հետևությունների հավաստիությունը կասկածի տեղիք չտա:

15. Այսպիսով՝ հանցագործության բացահայտման համար քրեական գործի հարուցման փուլում իրականացվող գործողությունների շրջանակի ընդարձակումը վերացնում է քրեական գործի հարուցման և նախնական քննության փուլերի միջև եղած սահմանագիծը: Քրեական դատավարության օրենսդրության մեջ տեղ գտած փոփոխությունները խոսում են այն մասին, որ դատավարական այս փուլը կորցրել է իր նշանակությունը: Այս մտտեցումն իր արտացոլումն է ստացել նաև ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգում, որում քրեական գործի հարուցման փուլը վերաց-

ված է: Դրանից հետևում է, որ առանց նյութերի նախապատրաստման անմիջապես քննության իրականացումը մտցնում է նոր գաղափարախոսություն Հայաստանի քրեական դատավարությունում: Իրականում նյութերի նախապատրաստումն ոչ այլ ինչ է, քան քննություն, որն իրականացվում է քրեական դատավարության օրենսդրության և անձի սահմանադրական իրավունքների խախտմամբ: Կարծում ենք, որ նշված մոտեցումն արդարացված է, քանի որ նյութերի նախապատրաստումը գործող օրենսդրությամբ իրականացվում է ոչ դատավարական միջոցներով:

16. Դժվար է համաձայնել այն մոտեցման հետ, որ նախնական քննությունը դատավարության այն փուլն է, որի ընթացքում փաստարկներով զինվում է քրեական դատավարության միայն մի կողմը՝ մեղադրանքի կողմը: Կարծում ենք, որ մյուս կողմը նույնպես զրկված չէ իրավունքներից և կարող է մասնակցել ոչ միայն իր ապացուցողական բազայի ձևավորմանը, այլև հնարավորություն ունի ծանոթանալ հավաքվող ապացույցներին և քննադատել դրանք ինչպես նախնական քննության փուլում, այնպես էլ հետագայում՝ դատական քննության ժամանակ: Բացի այդ, այն օժտված է իրավունքներով, որոնց օգնությամբ կարող է պաշտպանել իր շահերը քրեական դատավարության տվյալ փուլում: Ընդ որում, նախնական քննության կատարման ձևն ինքնին ենթադրում է ոչ միայն տուժողների, այլև պաշտպանվող կողմի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը:

17. Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրությունում հետաքննության ու նախաքննության սահմանումները մանրամասնաբար տրված չեն: Դրանց բացակայությունը դժվարություններ է ստեղծում ոչ միայն նախնական քննության նշյալ ձևերի նշանակությունը պարզելու հարցում, այլև նպաստում է քրեական դատավարությանը մասնակցող անձանց իրավունքները և օրինական շահերը ապահովելու խնդրում դժվարությունների առաջացմանը: Հետաքննության առնչությամբ կարելի է արձանագրել, որ ՀՀ քրեադատավարական օրենսդրությունում հետաքննության հասկացության սահմանման և վարույթի կարգի բացակայությունը նախնական քննության այս ձևը մասամբ դուրս է բողոնում քրեական դատավարության սահմաններից: Ուստի անհրաժեշտ է ավելի ման-

քանսան կարգավորել հետաքննության ինստիտուտը ՀՀ քր. դատ. օր.-ում: Ընդ որում, պետք է հստակորեն սահմանվեն հետաքննության մարմինների խնդիրները, իրավասության շրջանակները, ինչպես նաև նրանց լիազորությունները: Այդպիսով, կսահմանվի հետաքննության իրականացման ձևը, իսկ դա կերաշխավորի նախնական քննության փուլին մասնակցող անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը:

ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգում հետաքննությունը ներկայացվում է նոր մոտեցմամբ, որը նույնպես այս ինստիտուտի վերաբերյալ քրեական դատավարության իրավունքի գիտության մեջ գաղափարախոսական փոփոխություն է ենթադրում:

18. Նախնական քննությանը բնորոշ է քննության արագության սկզբունքը: Այսպես, նախնական քննության արագությունը պայմանավորված է նախնական քննության համար սահմանված բավականին կարճ ժամկետներով: ՀՀ քր. դատ. օր.-ի 197 հոդվածի 1-ին մասում ասված է. «Հետաքննությունն ավարտվում է քրեական գործ հարուցելու պահից 10 օրվա ընթացքում»: ՀՀ քր. դատ. օր.-ի 197 հոդվածի 2-րդ մասում սահմանված են նաև նախաքննության ժամկետները: Այս առնչությամբ նշված նորմում սահմանաված է. «Քրեական գործով նախաքննությունը պետք է ավարտվի ոչ ոչ, քան երկամսյա ժամկետում: Այդ ժամկետը հաշվվում է քրեական գործ հարուցելու մասին որոշում կայացնելու օրվանից և ավարտվում է գործը դատարան ուղարկելու մասին կամ գործով վարույթը կարճելու մասին որոշման կայացման օրը»: Զննության արագության սկզբունքը հարկ է դիտարկել որպես Զադաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 3-րդ կետում ամրագրված սկզբունքի իրականացում, որի համաձայն «Յուրաքանչյուր ոք իր նկատմամբ առաջադրված ցանկացած քրեական մեղադրանքի քննության ժամանակ, լիակատար հավասարության հիման վրա, նվազագույնը հետևյալ երաշխիքների իրավունք ունի... 3) առանց չարդարացված հապաղման դատվելու»: Նշյալ սկզբունքի իրացումը ենթադրում է նաև կոնկրետ քրեական գործի բոլոր հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն:

19. Թեև քննիչը պետք է օժտված լինի անկախությամբ, սակայն այդ անկախությունը ծավալով ավելի փոքր պետք է լինի, քան դատավորինը: Դատավորի և քննիչի լիազորությունների տարբերությունը պահպանելու օգտին հնչող փաստարկներից մեկն այն է, որ նախնական քննության և դատական քննության փուլերում գործում են մարդու իրավունքներն ու ազատությունները երաշխավորող տարբեր մեխանիզմներ: Շնորհիվ այդ մեխանիզմների տարբեր կերպ են իրացվում նաև քրեական դատավարության առանձին սկզբունքներ: Այսպես, մրցակցության սկզբունքը նախնական քննության փուլում ունի ավելի սահմանափակ արտահայտություն, քան դատական քննության փուլում:

20. Համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի 73-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի՝ պաշտպանը, ըստ էության, ապացուցման սուբյեկտներից մեկն է, քանի որ նրան իրավունք է տրված «քրեական գործով ձեռք բերել նյութեր, դրանք ներկայացնել քրեական գործին կցելու և հետազոտելու համար»: Դա էական առաջընթաց է, որի շնորհիվ դեռ նախնական քննության փուլում պաշտպանը հնարավորություն է ստանում մասնակցելու ապացույցների համակարգի ձևավորմանը: Սակայն, ցավոք, օրենսդիրը մանրամասն չի հստակեցնում քրեական գործին պաշտպանի կողմից նյութեր ներկայացնելու դատավարական կարգը: Առավել ևս, որ «քրեական գործին վերաբերող նյութեր» և «ապացույցներ» հասկացությունները նույնական չեն:

21. Չի կարելի թույլ տալ, որ պաշտպանն իրավունք ունենա ինքնուրույնաբար հավաքելու ապացույցներ՝ հաշվի առնելով նրա շահագրգռությունը քրեական գործի ելքի նկատմամբ: Այստեղ միանգամայն ակնհայտ է այն վտանգը, որ ապացույցները կարող են կեղծվել անբարեխիղճ պաշտպանների կողմից: Լիովին հնարավոր են իրավիճակներ, երբ պաշտպանները նշյալ իրավունքը կօգտագործեն կատարվող քննությանը ակտիվորեն հակազդելու նպատակով: Այդ ամենը կարող է անհնար դարձնել յուրաքանչյուր կոնկրետ գործով ճշմարտության բացահայտումը:

22. Նախնական քննության փուլում պաշտպանի իրավունքների ընդլայնումը քննիչի կամայականություններից պաշտպանվելու երաշխիք է: Դա բարենպաստ պայմաններ է ստեղծում՝ խուսափելու մեղադրական ուղղվածությունից: Պաշտպանի ակտիվությունը օ-

րենքով իրեն տրված իրավունքները կիրառելիս թույլ է տալիս ավելի արդյունավետորեն պաշտպանել կասկածյալների, մեղադրյալների իրավունքներն ու օրինական շահերը:

Մեղադրանքի կողմի և պաշտպանության կողմի միջև դատավարական իրավունքները քիչ թե շատ հավասարեցնելու համար թերևս ճիշտ կլինի լրացնել ՀՀ քր. դատ. օր.-ի 124-րդ հոդվածի 3-րդ մասը, որը հարկ է շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Պաշտպանության կողմը մասնակցում է կոնկրետ քրեական գործերով ապացուցման գործընթացին և իրավունք ունի ներկայացնել ապացույցներ, որոնք հիմնավորում են սեփական դիրքորոշումը և հերքում մեղադրանքի կողմի հավաքած ապացույցները»: Այս նորմի ներմուծումը թույլ կտա փաստաբանին դառնալ քրեական դատավարության լիիրավ մասնակից դեռ նախնական քննության փուլում:

23. Որպեսզի քրեական դատավարությունը լինի արդար, պետք պահպանել, մի կողմից, մեղադրյալի և կասկածյալի, մյուս կողմից՝ հանցագործությունից տուժած անձի իրավունքների ու ազատությունների հաշվեկշիռը: Չի կարելի քրեական դատավարությունը գնահատել՝ կիրառելով թվաբանական հաշվարկ, թե քրեական դատավարության մասնակիցներից ով ավելի շատ իրավունքներ ու ազատություններ ունի: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այդ իրավունքների ու ազատությունների որակին, ինչպես նաև դրանց իրացման իրապես գործուն մեխանիզմների առկայությանը:

24. ՀՀ քր. դատ. օր.-ի 59-րդ հոդվածում, արդեն ամրագրված իրավունքներից բացի, հարկավոր է ամրագրել նաև այլ իրավունքներ, որոնք կամրապնդեն տուժողի ակտիվ դիրքը նախնական քննության և առհասարակ ամբողջ քրեական դատավարության ընթացքում: Այդպիսի իրավունքների թվում պետք է լինեն հետևյալները՝ ապացույցներ ներկայացնելու իրավունքը, հանդես գալու այն լեզվով, որին ինքը տիրապետում է, թարգմանչի օգնությունից անվճար օգտվելը, նախնական քննության փուլում կասկածյալի, մեղադրյալի դիմումներին և միջնորդություններին ծանոթանալը, քննիչի թույլտվությամբ քննչական գործողություններին մասնակցելը, որոնք իրականացվում են նրա կամ նրա ներկայացուցչի միջնորդությամբ: Վերոնշյալ բոլոր իրավունքները կհավասարեցնեն տուժողի դատավարական վիճակը մեղադրյալի, կասկածյալի դատավարական վիճա-

կին, ինչը ներկայումս, ցավոք, բացակայում է: Տուժողին և մեղադրյալին, կասկածյալին հավասար իրավունքներով օժտելը հնարավորություն կտա պայմաններ ստեղծելու մրցակցության սկզբունքի առավել լիարժեք իրացման համար դեռ նախնական քննության փուլում:

25. Գատական վերահսկողության վերստուգիչ բնույթը դրսևորվում է այն բանում, որ դատական փուլերում ստուգվում, վերստուգվում են նախորդ փուլերում հավաքված ապացույցները, կատարված գործողությունների, կայացված որոշումների օրինականությունն ու հիմնավորվածությունը: Ընդ որում, վերստուգում իրականացվում է նաև նախնական քննության և քրեական գործի հարուցման փուլերում կատարված դատավարական գործողությունների առնչությամբ: Կատարվող ստուգման, վերստուգման արդյունավետությունը պայմանավորված է այն բանով, որ դա չի կատարվում միանձնյա, երբ հնարավոր է մեկ մարդու կամայականությունը, այլ մրցակցության սկզբունքի հիման վրա, երբ ստուգումը հիմնվում է քրեական դատավարությանը մասնակցող բոլոր անձանց կարծիքների, տեսակետների և դիրքորոշումների վրա: Շնորհիվ այն բանի, որ դատական քննության ընթացքում առավելապես իրացվում է մրցակցության սկզբունքը, վերստուգիչ դատական վերահսկողությունը դառնում է նախնական քննության և քրեական գործ հարուցելու փուլերում նշյալ սկզբունքի ներդրման ձևերից մեկը: Վերստուգիչ դատական վերահսկողությունը հետապնդում է բազմաթիվ նպատակներ: Դա և՛ գործով ճշմարտության բացահայտումն է, և՛ արարքին նախկինում տրված որակման ստուգումը և այլն: Սակայն, այնուամենայնիվ, դրա հիմնական նպատակը պետք է համարել քրեական դատավարությանը մասնակցող անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը:

26. Վերստուգիչ դատական վերահսկողության նպատակներից մեկը արդարության վերականգնումն է քրեական դատավարության դատական փուլերում: Արդարության վերականգնում ասելով հասկացվում է քրեական դատավարությանը մասնակցող անձանց իրավունքների և ազատությունների վերականգնումը, երբ նրանց իրավունքները խախտվել են կա՛մ ապօրինաբար, կա՛մ քննիչի, հետաքննության մարմնի թույլ տված սխալի հետևանքով:

27. Նախնական դատական վերահսկողությունը հիմնված է քրեական դատավարության մասնակիցների իրավունքների և օրինական շահերի խախտումները կանխելու անհրաժեշտության վրա: Դրա էությունն այն է, որ կոչված է կանխելու քրեական դատավարության ընթացքում քաղաքացիների իրավունքների, ազատությունների և օրինական շահերի չհիմնավորված սահմանափակումները: Նախնական դատական վերահսկողությունը դրսևորվում է դատավարական գործողությունների վարույթի համար թույլտվություն ստանալու ընթացակարգում, որով կարող են սահմանափակվել կամ խախտվել քրեական դատավարությանը մասնակցող անձանց իրավունքները: Այսպես, համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի 279 հոդվածի՝ «Դատարանի որոշմամբ կատարվում են բնակարանի խուզարկությունը, ինչպես նաև նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության սահմանափակման հետ կապված քննչական գործողությունները»:

28. Դատական վերահսկողության երրորդ ձևը հետագա դատական վերահսկողությունն է: Դրա էությունն այն է, որ դատարանը քննարկում է այն բողոքները, որոնք ստացվել են արդեն խախտված իրավունքների ու օրինական շահերի կապակցությամբ: Հենց այդ պատճառով էլ դատական վերահսկողության նշյալ ձևը կոչվում է հետագա: Այն, ի տարբերություն դիտարկված մախորդ ձևի, ժամանակի առումով հետևում է քաղաքացիների իրավունքների ու ազատությունների արդեն իրականացված չհիմնավորված սահմանափակումներին: Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրությունը սահմանում է որոշումների և քաղաքացիների իրավունքները և օրինական շահերը սահմանափակող գործողությունների բողոքարկման հաջորդականությունը: Նախ, անհրաժեշտ է վերոնշյալ որոշումներն ու գործողությունները բողոքարկել դատախազին, և միայն դրանից հետո, եթե նրա որոշումը չի բավարարում ինչ-որ պատճառով, բողոքով դիմել դատարան: Այսպիսի կախվածությունը կարծում ենք, որ արդարացված չէ, քանի որ այն չի բխում անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից: Եվ իշտ կլիներ, ՀՀ քրեադատավարական օրենսդրությունում սահմանել բողոքարկման այլընտրանքային կարգ, երբ անձը, որի իրա-



վունքներն ու ազատությունները խախտվել են, ինքն է ընտրում իր համար բողոքարկման առավել արդյունավետ ձևը: Դա թույլ կտար այն անձանց, որոնց իրավունքները խախտվել են, անձամբ որոշելու բողոքարկման եղանակը, որը նրանք կհամարեին ամենաարդյունավետը կոնկրետ դեպքում, կոնկրետ պայմաններում:

29. Գատական վերահսկողության հետագա զարգացումը ենթադրում է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնող դատավորի ինստիտուտի ներդրման անհրաժեշտությունը: Դա կարող է դառնալ դատարանի անկողմնակալ վերաբերմունքի երաշխիքը նաև դատական քննության փուլում, ինչով կապահովվի քրեական դատավարության մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:

30. Գատախազական հսկողության առանձնահատկությունն այն է, որ այն ոչ միայն արձագանքում է ստացվող բողոքներին ու դիմումներին, այլև դատախազների մշտապես իրականացվող գործունեություն է՝ ուղղված հետաքննության ու նախաքննության օրինականության ապահովմանը: Ընդ որում, մնան գործունեության նախաձեռնությունը պատկանում է հենց դատախազին, ինչը բնորոշ է դատական վերահսկողությանը: Այն իրականացվում է միայն առիթի դեպքում, ինչպիսին քրեական դատավարությանը մասնակցող անձանց համապատասխան դիմումներն են:

31. Գատախազական հսկողությանը բնորոշ է համակողմանիությունը (ունիվերսալությունը), համաձայն որի՝ դատախազն արձագանքում է օրենքի ցանկացած խախտման, այլ ոչ թե միայն նրանց, որոնք այս կամ այն կերպ շոշափում են քրեական դատավարությանը մասնակցող անձանց իրավունքներն ու օրինական շահերը: Այդպիսի համակողմանիության շնորհիվ նախնական քննության փուլում դատախազական հսկողությունը դառնում է օրինականության ապահովման երաշխիք: Այն ապահովում է արդարադատության իրականացման օրենքով սահմանված կարգը, ինչը նպաստում է գործի հանգամանքները պարզելուն, որի միջոցով հնարավոր է դառնում պարզել՝ հանցագործություն կատարվե՞լ է, թե՞ ոչ, տվյալ անձը մեղավոր՞ է դրա կատարման մեջ, թե՞ ոչ: Դրա շնորհիվ հնարավորություն է ընձեռվում ժամանակին կասեցնելու քննիչի և հետաքննության մարմնի կամայական դրսևորումները կոնկրետ

քրեական գործեր քննելիս:

32. Գատախազական հսկողությունը թեև ամենակարևոր ու նշանակալից գործառույթն է, որն իրականացվում է դատախազի գործունեության մեջ, սակայն բնավ էլ միակը չէ: Այլ գործառույթներ ևս բնորոշում են դատախազի գործունեությունը և դրա կարևորությունը, այդ թվում և քրեական դատավարության համար: Այսպես, քրեական հետապնդման գործառույթին բնորոշ է այն, որ դատախազը քրեական դատավարությունում հանդես է գալիս որպես մեղադրանքի կողմ: Դա հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ քրեական հետապնդման գործառույթը դատախազի գործունեության համար պակաս կարևոր չէ, քան հսկողության գործառույթը: Դրանից հետևում է, որ և՛ հսկողության գործառույթը, և՛ քրեական հետապնդման գործառույթը դատախազի համար հավասարազոր են, և խոսել այն մասին, որ դրանցից մեկն ավելի կարևոր է, քան մյուսը, ճիշտ չէ:

33. Քրեական հետապնդումը, որն իրականացնում է դատախազը, նույնպես պետք է դիտարկել որպես մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանությանն ուղղված հսկողական գործառույթի իրացում: Չէ՞ որ այդ դեպքում նա գործում է ոչ միայն ի շահ պետության, այլև ի շահ անձանց, ում իրավունքներն ու ազատությունները խախտվել էին հանցագործությամբ:

34. Խափանման միջոց ընտրելիս դատախազական հսկողությունը մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանության լրացուցիչ երաշխիք է իրավապահական մարմինների պաշտոնատար անձանց ցանկացած ապօրինի ոտնձգությունից:

35. Օրենսդիրը որպես մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները խախտումներից պաշտպանելու երաշխիք է դիտում ոչ միայն դատախազին, որն անմիջականորեն իրականացնում է ընթացիկ հսկողությունը հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ, այլև ամբողջ դատախազական ուղղահայաց համակարգը (Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին և նրան ենթակա բոլոր դատախազներին):

36. Թեպետ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում ակներև է դատախազական հսկողության առկա-

յությունը մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանության հարցում, սակայն, պետք է ասել, որ գործող օրենքում այն ուղղակի չի նշվում: Մինչդեռ հսկողության նշյալ ձևը նախատեսում է դատախազի գործունեության զգալի ծավալ նախնական քննության ընթացքում: Ընդ որում, հարկ է նշել, որ դատախազի հսկողական գործունեությունը նախնական քննության փուլում իրականացվում է երկու ուղղությամբ.

1) մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանության,

2) պետության շահերի պաշտպանության:

37. Դատախազական հսկողությունը մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանության միակ երաշխիքը չէ քրեական դատավարությունում: Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրությունը սահմանում է, որ իրեն տրված ուժով այն զիջում է դատական վերահսկողությանը: Դա բխում է նրանից, որ ցանկացած անձ իր իրավունքներն ու շահերը պաշտպանելու համար հնարավորություն ունի դիմելու դատախազին: Այն դեպքում, եթե բողոքը չի բավարարվում, տվյալ անձը կարող է դիմել դատարան: Այսինքն՝ դատախազական հսկողությունը այս առումով կարելի է դիտել որպես մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանության լրացուցիչ երաշխիք քրեական դատավարությունում:

38. Դատախազական հսկողության արդյունավետությունն ու գործնականությունը մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանության հարցում բացատրվում է այն բանով, որ դատախազության կազմակերպումն ու գործունեությունը կառուցվում է միանձնյա ղեկավարման սկզբունքով: Այդ սկզբունքն ապահովում է, որ դատախազական հսկողությունն իրականացվի բավականին արագ՝ առանց որևէ ձգձգումների: Այստեղ չկան բարդ և հոգնեցուցիչ ընթացակարգեր, որոնք պետք է կատարի անձը, որի իրավունքներն ու ազատությունները խախտված են, որպեսզի դրանք պաշտպանի կամ վերականգնի: Ընդ որում, դատախազական արձագանքը իրավունքների ու ազատությունների վերոնշյալ խախտման փաստին ժամանակի առումով նվազագույնի է հասցված, ինչը դատախազական հսկողությունը դարձնում է առավել արդյու-

նավետ: Հենց այս պատճառով էլ, կարծում ենք, չի կարելի հրաժարվել քրեական դատավարությունում մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանության դատախազական հսկողությունից, քանի որ այն միանգամայն ներդաշնակորեն կարող է համատեղվել դատական վերահսկողության հետ:

Հաշվի առնելով դատախազական հսկողության արդյունավետությունը՝ որպես մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանության երաշխիք, կարծում ենք, դեռ վաղաժամ է հրաժարվել դրանից քրեական դատավարության բարեփոխումների համատեքստում: Հաշվի առնելով այդ՝ դատախազի գործունեությունը միայն քրեական հետապնդում իրականացնելու և մեղադրանք առաջադրելու գործառույթներին հանգեցնելը կզրկի քրեական դատավարությանը մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանության կարևոր երաշխիքից: Դիշտ կլինի չհրաժարվել իրավունքների և ազատությունների պաշտպանության դատախազական հսկողությունից, այլ կատարելագործել և արդիականացնել այն: Այդ նպատակով հարկավոր է, նախ՝ ընդունել նորմ, որտեղ կնշվի, որ դատախազական հսկողության գործառույթներից մեկն էլ մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանության հսկողությունն է, երկրորդ՝ հարկավոր է սահմանել դատախազական հսկողության այդ ձևի ուղղվածությունը քրեական դատավարությունում:

Այդպիսի կարգով կրկնակի կերաշխավորվի մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը: Ընդ որում, դրանով կապահովվի նաև զգալի օպերատիվություն, ինչը հատուկ է դատախազական հսկողությանը, քաղաքացիներին նրանց իրավունքների ու ազատությունների նկատմամբ անհիմն ոտնձգություններից պաշտպանելու հարցում: Այդպիսի կարգի շնորհիվ հնարավոր կլինի համատեղել դատախազական հսկողության և դատական վերահսկողության դրական հատկանիշները մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանության գործում:

39. Դատախազական հսկողությունը չի խոչընդոտում դատական բարեփոխումներին, որոնք ուղղված են քաղաքացիների իրավունքների և ազատությունների երաշխիքների լիարժեք համակար-

գի ստեղծմանը: Ընդհակառակը, այս մեխանիզմը կարող է դառնալ այդ համակարգի մի մասը, ինչը կնպաստի վերոնշյալ իրավունքների ու ազատությունների բոլոր տեսակի խախտումներին արագ և արդյունավետորեն արձագանքելուն: Դատախազական հսկողության պատմությունը և իրավապահայան մարմինների գործունեության պրակտիկան հաստատում են այդ: Ըստ այդմ՝ ճիշտ կլինի Հայաստանի Հանրապետության քրեադատավարական դատավարությունում դատախազական հսկողությունը դարձնել քաղաքացիների իրավունքների և ազատությունների ապահովման երաշխիքներից մեկը:

40. Արդարադատությանն օժանդակող անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը և այդ անձանց անվտանգության ապահովումը միանման հասկացություններ չեն: Իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը ավելի լայն հասկացություն է, քան արդարադատությանն օժանդակող անձանց անվտանգության ապահովումը, և, համապատասխանաբար, պահանջում է ավելի մեծ ծավալի միջոցներ ու գործողություններ, հետևաբար և երաշխիքների ավելի բարդ մեխանիզմի կարիք ունի:

41. Արդարադատության իրականացմանն օժանդակող անձանց շրջանակը հարկավոր է էականորեն ընդլայնել՝ ներառելով այնտեղ կատարված հանցագործության ականատեսներին, հանցագործության զոհերին, մասնագետին, ընթերակային և թարգմանչին: Ընդ որում, անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել նշյալ անձանց կարգավիճակը՝ որպես արդարադատության իրականացմանն օժանդակող անձանց, ուստի և օժտելով համապատասխան իրավունքներով, որոնք անհրաժեշտ են նրանց արդարադատությանն օժանդակելու համար:

42. Արդարադատության իրականացմանն օժանդակող անձանց թվին պետք է դասվեն նաև կասկածյալները, մեղադրյալները, որոնք ընտրել են իրավապահայան մարմինների հետ համագործակցության տարբերակը, կատարված հանցագործության բոլոր հանգամանքները պարզելու նպատակով: Վերոնշյալ անձինք լրացուցիչ երաշխիքների կարիք ունեն, այդ թվում և իրենց անվտանգության երաշխիքների:

43. Արդարադատությանն օժանդակող անձանց իրավունքներն

ու անվտանգությունն ապահովող միջոցները չպետք է սահմանափակվեն լոկ քրեադատավարական օրենսդրությամբ: Մասնավորապես, դրանք պետք է ներառեն արդարադատությանն օժանդակող անձանց սոցիալական աջակցությունը:

44. Արդարադատությանն օժանդակող անձանց պետական պաշտպանության հարցում կարևոր է այն, որ կիրառվող միջոցները չպետք է սահմանափակվեն միայն կոնկրետ քրեական գործի մինչդատական վարույթի և դատական քննության ժամանակահատվածով: Պետական պաշտպանությունը պետք է տարածվի նաև կոնկրետ քրեական գործի վերաբերյալ դատական որոշման ընդունմանը հաջորդող ժամանակահատվածի վրա:

45. Հայաստանի Հանրապետության օրենսդրությունում սահմանված են բոլոր անչափահասների իրավունքների և ազատությունների պահպանման երաշխիքներ՝ անկախ նրանց զբաղեցրած կամ դատավարական վիճակից: Ակներև է, որ դա հետևանք է այն բանի, որ օրենսդիրը գիտակցում է անչափահաս տարիքի առանձնահատկությունները և անչափահասների իրավունքների ու ազատությունների լրացուցիչ երաշխիքների անհրաժեշտությունը: Նշյալ լրացուցիչ երաշխիքներն անհրաժեշտ են այն բանի համար, որ անչափահասը չճնշվի քրեական դատավարության ընթացքում և վաղօրոք չհայտնվի իր համար ոչ շահավետ իրավիճակում քրեական դատավարությանը մասնակցող մյուս անձանց համեմատ: Անչափահասներին հատուկ կարգավիճակով օժտելը պայմանավորված է քրեական դատավարությունում նրանց իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու անհրաժեշտությամբ: Անչափահասներին բնորոշ տարիքային առանձնահատկությունները հաշվի առնելով՝ նրանց և քրեական դատավարությանը մասնակցող մյուս անձանց միջև հավասարություն է ապահովվել միայն որոշակի լրացուցիչ երաշխիքների պարագայում: Այդ երաշխիքները պետք է դառնան որոշակի մի համալիր, որը զերծ կպահի անչափահասներին նրանց իրավունքների ու ազատությունների բոլոր տեսակի խախտումներից, ինչպես նաև կստեղծի բարենպաստ պայմաններ քրեական դատավարությունում նրանց օրինական շահերի իրացման համար: Ըստ այդմ՝ անչափահասը պետք է դիտվի որպես քրեական դատավարության հատուկ մասնակից, որն օժտված է հատուկ իրավական

կարգավիճակով, թեպետև հաշվի առնելով նրա ով լինելը՝ մեղադրյալ, կասկածյալ, տուժող, քաղաքացիական հայցվոր, քաղաքացիական պատասխանող կամ վկա:

46. Հայաստանի Հանրապետության գործող քրեադատավարական օրենսդրության վերլուծությունը հնարավորություն է ընձեռում եզրակացնելու, որ անչափահասների նկատմամբ առանձին բարդացված ընթացակարգեր կիրառվում են ոչ միայն նրանց իրավունքների և ազատությունների լրացուցիչ երաշխիքներ ստեղծելու համար: Որոշ ընթացակարգեր արդյունավետ կերպով ապացույցներ ձեռք բերելու նպատակ են հետապնդում, որոնց հավաստիությունը հետագայում չվիճարկվի: Այդ ընթացակարգերի անհրաժեշտությունը պայմանավորված է ոչ թե անչափահասների իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, այլ ըստ էության գործը քննելու համար անհրաժեշտ ապացույցներ ձեռք բերելու ձգտմամբ:

47. Նշելով անչափահասների հատուկ կարգավիճակի մասին քրեական դատավարությունում, հարկ է նկատել, որ դա բնավ էլ չի նշանակում, թե անչափահասը քրեական դատավարության առանձնահատուկ մասնակից է: Կարելի է խոսել միայն անչափահաս մեղադրյալների, կասկածյալների, տուժածների, վկաների կարգավիճակի առանձնահատկությունների մասին: Այդ առանձնահատկություններում կարելի է հայտնաբերել որոշ ընդհանուր գծեր, որոնց հիման վրա կարելի է ձևավորել քրեական դատավարությանը մասնակցող անչափահասների պաշտպանության միասնական հիմքեր: Քրեական դատավարությունը անչափահասների նկատմամբ պետք է իրականացնի պաշտպանողական և դաստիարակչական գործառույթներ: Դաստիարակչական գործառույթը պետք է արտահայտվի նրանով, որ անչափահասը համարժեք ձևով ընկալի քրեական դատավարությունը, այսինքն՝ նա ենթարկվի կանխարգելիչ ներգործության: Անհատականացումը ենթադրում է, որ քրեական դատավարությունը պետք է կառուցվի անչափահասների անհատական առանձնահատկությունները հաշվի առնելու վրա:

48. Պաշտպանի պարտադիր մասնակցությունը քրեական դատավարությանը կասկածյալների, մեղադրյալների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության կարևոր երաշխիք է քրեական

դատավարությունում: Այս առումով նշյալ խնդրին նվիրվել են բազմաթիվ հրապարակումներ: Ընդ որում, առանձնահատուկ ուշադրություն է դարձվել անչափահաս կասկածյալին, մեղադրյալին պարտադիր կերպով պաշտպան հատկացնելուն: Դա պայմանավորված է այն բանով, որ անչափահասները դասվում են այն անձանց խմբին, որոնք առավել կարիք ունեն որակյալ իրավաբանական օգնության, ինչպիսին պրոֆեսիոնալ փաստաբանի օգնությունն է: Որպես պրոֆեսիոնալ փաստաբան՝ պաշտպանի մասնակցությունը անչափահաս կասկածյալների, մեղադրյալների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության կարևոր երաշխիք է: Անչափահաս կասկածյալի, մեղադրյալի պաշտպանության առանձնահատկությունը քրեական դատավարության մինչդատական փուլերում այն է, որ նա իրավունք ունի իր իրավունքներն ու շահերը ներկայացնելու օրինական ներկայացուցչի և պաշտպան-փաստաբանի միջոցով:

49. Օրինական ներկայացուցիչը, անչափահասի հետ նրա առանձնահատուկ, վստահելի հարաբերություններով պայմանավորված, իմանալով նրա առանձնահատկությունները, կարող է բավականին արդյունավետ նպաստել նրա իրավունքների ու ազատությունների իրացմանը: Ըստ էության, օրինական ներկայացուցչին պետք է դիտել որպես անչափահասների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության համակարգի կարևորագույն տարրերից մեկը քրեական դատավարությունում: Նրա շնորհիվ իրական է դառնում անչափահասների պաշտպանության հնարավորությունը քրեական դատավարությունում և ապահովվում է կողմերի հավասարության սկզբունքի գործողությունը: Օրինական ներկայացուցչի գլխավոր խնդիրը անչափահասի իրավունքները և օրինական շահերը ներկայացնելն է քրեական դատավարությունում: Այս խնդիրը դրված է օրինական ներկայացուցչի առջև անկախ այն բանից, թե ում է նա ներկայացնում՝ կասկածյալին, թե մեղադրյալին, տուժողին, թե վկային: Այս խնդիրը լուծելու անհրաժեշտությունը ենթադրում է, որ բոլոր օրինական ներկայացուցիչները պետք է օժտվեն համանման իրավունքներով և պարտականություններով: Դա անհրաժեշտ է, որպեսզի պահպանվի կողմերի հավասարության սկզբունքը քրեական դատավարությունում: Նաև անչափահասների



բոլոր օրինական ներկայացուցիչների համար ընդհանուր է այն անձանց շրջանակը, ովքեր կարող են հանդես գալ որպես այդպիսիք: Հայաստանի Հանրապետության օրենսդիրը հաստատել է իր հավատարմությունը քրեական դատավարությունում օրինական ներկայացուցչի ընտրության միատարր մոտեցմանը, որը պետք է համարել ՀՀ քր. դատ. օր.-ի անվիճելի առավելությունը:

50. Անչափահասների նկատմամբ դատավարական գործողություններ իրականացնելիս մանկավարժի մասնակցությունը նրանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության լրացուցիչ երաշխիք է: Մանկավարժը՝ որպես մանկական հոգեբանության ոլորտի մասնագետ, կարող է պաշտպանել անչափահասներին բոլոր տեսակի հոգեցունց գործոններից, որոնք կարող են արտահայտվել քննիչի՝ սխալ ընտրված վարքագծի հետևանքով հնչած ոչ նրբանկատ հարցում, անչափահասի նկատմամբ անթույլատրելի կոպտության ու մեծամտության մեջ: Նշյալ խանգարիչ գործոնների գործողությունը կարող է հասցնել անչափահասին անհարմարավետ վիճակի, ինչը լուրջ դժվարություն կարող է ստեղծել նրա համար՝ օգտվելու օրենքով սահմանված իրավունքներից: Նրան այդ ամենից պաշտպանելու համար, հարկավոր է մանկավարժ՝ որպես մանկական հոգեբանության մասնագետ, որը լավ գիտի, թե ինչը կարող է վնաս հասցնել անչափահասին և ինչպես չեզոքացնել այդ վնասակար գործոնը: Ուստի քրեական դատավարությունում մանկավարժին պետք է դիտել ոչ միայն որպես մասնագետի, որը օգնություն է ցուցաբերում քննությանն ու դատարանին՝ ապացույցներ ձեռք բերելու, այլև որպես անձի, որը կոչված է երաշխավորելու անչափահասի իրավունքներն ու օրինական շահերը: Ուստի, ճիշտ կլինի, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության մեջ սահմանել մանկավարժի մասնակցությունը կասկածյալի և մեղադրյալի հարցաքննությանը, ինչպես նաև նրանց մասնակցությամբ իրականացվող այլ դատավարական գործողություններին: Այն թույլ կտա ավելի մեծ չափով երաշխավորել անչափահաս կասկածյալների և մեղադրյալների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը քրեական դատավարությունում: Մանկավարժի մասնակցությունը թույլ կտա և՛ պաշտպանին, և՛ օրինական ներկայացուցչին ավելի արդյունավետ իրականացնել իրենց գործունեութ-

յունը, քանի որ այդ դեպքում նրանք կկարողանան հենվել մանկավարժի՝ դեռահասային և պատանեկան շրջանի հոգեբանության վերաբերյալ գիտելիքների վրա:

51. Մանկավարժը քրեական դատավարության ինքնուրույն մասնակից է: Նրա խնդիրները պետք է հստակեցվեն՝ առաջնորդվելով քրեական դատավարությանը մասնակցող բոլոր անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն ուղղված քրեադատավարական օրենսդրության ընդհանուր միտումներով: Այսինքն՝ մանկավարժի հիմնական խնդիրը պետք է լինի քրեական դատավարությանը մասնակցող անչափահասների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Նրա տարբերությունը քրեական դատավարությանը մասնակցող այլ անձանցից, որոնք նույնպես իրականացնում են այլ անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության գործառույթներ, պետք է լինի այն, որ նա վերոնշյալ խնդրի լուծման համար պիտի օգտագործի մանկական և պատանեկան հոգեբանության բնագավառներում ունեցած իր գիտելիքները: Նրան մասնագետ համարելու հարկ չկա, քանզի իր գործունեության մեջ մի կողմից ապացույցներ հայտնաբերելու և հաստատելու հարցում քննությանը օժանդակելը և, մյուս կողմից, իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը համատեղելն անհնար է:

52. Մանկավարժի դատավարական վիճակի առանձնահատկություններից մեկն այն է, որ նա ներգրավվում է միանգամայն որոշակի քննչական գործողություններ իրականացնելու համար: Նա քրեական դատավարությանը մասնակցող անձ է, որի գործունեության ժամկետը քրեական դատավարությունում սահմանափակվում է համապատասխան քննչական գործողության տևողությամբ: Ըստ այդմ՝ իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն ուղղված նրա գործունեության առանձնահատկությունը դրա կարճաժամկետ լինելն է՝ կարճ ժամանակում համապատասխան քննչական գործողություններ կատարելու սահմանափակմամբ: Այս առանձնահատկությունը, սակայն, չպետք է ազդի մանկավարժի պարտականությունները կատարելու համար անձի մանրակրկիտ ընտրության վրա, քանի որ նրա մասնակցության նշանակությունը պայմանավորված է անչափահասի իրավունքների և օրինական

շահերի պաշտպանության անհրաժեշտությամբ:

53. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում կարևոր հարց է այն, թե որքանով է նրան անհրաժեշտ այնպիսի մասնակից անձր, ինչպիսին հոգեբանն է: Կարծում ենք՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում այդ մասնակցին ներգրավելն ավելորդ է, քանի որ հոգեբանը մեծ չափով կրկնօրինակում է մանկավարժին: Հագիվ թե կարելի է ենթադրել, որ անչափահաս կասկածյալների և մեղադրյալների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության որակը կբարելավվի, եթե դրանում իրենց ջանքերը ներդնեն մանկական և պատանեկան հոգեբանության ոլորտի երկու մասնագետներ: Առավել ևս, որ այդ մասնագետներն օժտված են համանման իրավունքներով և նրանց վրա դրված են համանման պարտականություններ:

Ուսումնասիրության արդյունքում արված հետևությունները կարող են հիմք դառնալ քրեադատավարական օրենսդրության հետագա բարեփոխումների համար: Ընդ որում այնպիսի բարեփոխումների, որոնք չեն ժխտում նախկին ձեռքբերումները, ենթադրում են իրավահաջորդություն և կողմնորոշված են դեպի բոլոր այն անձանց իրավունքների և օրինական շահերի երաշխավորված պաշտպանությանը, ովքեր հայտնվել են արդարադատության գործունեության ոլորտում: Արված եզրակացություններն իրենցից ներկայացնում են միասնական հայեցակարգի հիմք, որը, կարծում ենք, կարելի է դնել քրեադատավարական օրենսդրության բարեփոխումների հիմքում: Դրա միասնականությունը պայմանավորված է քրեական արդարադատության ոլորտում հայտնված բոլոր անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ուղղվածությամբ:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

### Նորմատիվ ակտեր

1. ՀՀ Սահմանադրություն, Երևան, 2005թ.:
2. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, Երևան, 2010թ.:
3. ՀՀ քրեական օրենսգիրք, Երևան, 2009թ.:
4. ՀՀ Դատական օրենսգիրք, Երևան, 2009թ.:
5. Դատախազության մասին ՀՀ օրենքը, Երևան, 2007թ.:
6. Փաստաբանության մասին ՀՀ օրենքը, Երևան, 2004թ.:
7. ՀԽՍՀ քրեական դատավարության օրենսգրք, Երևան, 1961 թ.
8. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, 1948թ.:
9. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի, 1966:
10. Հանձնարարական R (85) 11 Քրեական իրավունքի և դատավարության շրջանակներում տուժողի կարգավիճակի մասին:
11. ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1985 թվականի նոյեմբերի 29-ի 40/34 «Հանցագործությունների և իշխանության չարաշահման զոհերի համար արդարադատության հիմնական սկզբունքների հռչակագիրը»:
12. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1985թ. նոյեմբերի 29-ի թիվ 40/33 բանաձևով հաստատված Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ նվազագույն ստանդարտ կանոնները /Պեկինյան կանոններ/:
13. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1990թ. դեկտեմբերի 14-ի թիվ 45/113 բանաձևով հաստատված Ազատությունից զրկված անչափահասների պաշտպանության վերաբերյալ ՄԱԿ-ի կանոնները /Հավայան կանոններ/:
14. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա, 1950,
15. Եվրոպական Խորհրդի 1983 թվականի նոյեմբերի 24-ի «Բռնությանը հանցագործությունների զոհերին վնասի հատուցման մասին կոնվենցիան»:
16. 1985 թվականի հունիսի 28-ի Եվրոպական խորհրդի նախարարների կոմիտեի N R (85) 11 Հանձնարարականը՝ «Քրեական իրավունքի և քրեական դատավարության շրջանակներում տուժողի կարգավիճակի

մասին»:

17. Եվրոպական խորհրդի՝ «Վկաներին վախեցնելու և սպաշտպանության իրավունքները ապահովելու հարցով» № R (97) 13 Հանձնարարականը:

18. ՀՀ Սահմանադրական դատարանի 2007 թվականի հուլիսի 24-ի ՍԳՈ-710 որոշումը:

19. ՀՀ Սահմանադրական դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 7-ի ՍԳՈ-844 որոշումը:

20. ՀՀ Սահմանադրական դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 27-ի ՍԳՈ-836 որոշումը:

21. ՀՀ Սահմանադրական դատարանի 2011թ. փետրվարի 4-ի ՍԳՈ-935 որոշումը:

22. ՀՀ Վճռաբեկ դատարանի 2007թ. օգոստոսի 30-ի թիվ ՎԲ 132/07 որոշումը:

23. ՀՀ Վճռաբեկ դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 26-ին թիվ ԼԳ/0197/06/08 որոշումը:

24. ՀՀ Վճռաբեկ դատարանի 2009թ. դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱԳԳ/0085/06/09 որոշումը:

25. ՀՀ Վճռաբեկ դատարանի 2010 թվականի մարտի 16-ի թիվ ԵՇԳ/0097/01/09 որոշումը:

26. Уголовно-процессуальный кодекс Российской Федерации, Москва, 2001:

27. Уголовно-процессуальный кодекс Республики Казахстан. Алматы, 1998:

28. Уголовно-процессуальный кодекс Украины: научно-практический комментарий. Харьков: ООО „Одиссейс“, 2005:

29. Уголовно-процессуальный кодекс Республики Узбекистан. Ташкент, 1994, էջ 329:

30. Кассационное определение Верховного Суда РФ от 7 июня 2007 года, Дело № 91-о07-9СП;

31. Кассационное определение Верховного Суда РФ от 8 февраля 2008 г. № 4-О08-5//.

32. "Бюллетень Верховного Суда РФ", 2008, № 8:

33. ILIJKOV v. BULGARIA գործը:

34. Ladent v. Poland, 2008թ., ամսագրի թիվ 11036/03:

35. Garabaev v. Russia, 2007թ., բողոք թիվ 38411/02:
36. <http://cmiskp.echr.coe.int/tkp197/view.asp?item=1&portal=hbkm&action=html&highlight=Chahal&sessionid=60538944&skin=hudoc-en>
37. <http://cmiskp.echr.coe.int/tkp197/view.asp?item=1&portal=hbkm&action=html&highlight=Nikolova&sessionid=60538944&skin=hudoc-en>:
38. <http://cmiskp.echr.coe.int/tkp197/view.asp?item=1&portal=hbkm&action=html&highlight=Wloch&sessionid=60538944&skin=hudoc-en>
39. <http://cmiskp.echr.coe.int/tkp197/view.asp?item=2&portal=hbkm&action=html&highlight=greece&sessionid=60538944&skin=hudoc-en>:

### Մեմագրություններ

1. Ալեքսանյան Մ. Նախանական քննություն, Եր., 2002, 770 էջ:
2. Ավետիսյան Գ.Չ. Կալանավորման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում, Երևան համալս. հրատ.: -Եր.: 2006, 416 էջ:
3. Ավետիսյան Հ.Գ. Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության հիմնահարցերը. -- Եր.: ԵՊՀ հրատ., 2010, 216 էջ:
4. Գատավորի ձեռնարկ: Գիտագործնական վերլուծություն. Երևան.: Ասողիկ, 2010, 414 էջ:
5. Դիլբանդյան Ս.Ա. ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 5-րդ մաս, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ /ընդհանուր խմբագրությամբ` Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի. - Եր.: «Իրավունք», 2010, 249-253 էջ:
6. Դիլբանդյան Ս.Ա. Տուժողի իրավունքների և օրինական շահերի ապահովումը քրեական դատավարությունում, Երևան, Տիգրան Մեծ, 1998, 147 էջ:
7. Խաչատրյան Մ. Արդարացի դատական քննության իրավունք: Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոմիտեի 6-րդ հոդված, Եր., 2004, 163 էջ:
8. Հայաստանի Հանրապետության դատախազությունը:- Երևանի պետ. համալս. - Եր.: Երևանի համալս. հրատ., 2004, 352 էջ:
9. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Ընդ-

հանուր մաս. (3-րդ հրատարակություն, լրացումներով և փոփոխություններով) – Երևանի պետ. համալս. – Եր.: Երևանի համալս. հրատ., 2006, 416 էջ:

10. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Հատուկ մաս, (3-րդ հրատարակություն, լրացումներով և փոփոխություններով) - Երևանի պետ. համալս. - Եր.: Երևանի համալս. հրատ., 2010, 624 էջ:

11. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Հատուկ մաս, Երևանի պետ. համալս.-- Եր.: Երևանի համալս. հրատ., 2005, 592 էջ:

12. Հանցավորության դեմ պայքարը և մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության հիմնախնդիրները: Երևանի համալս. հրատ.: Եր., 2004, 159 էջ:

13. Ղազինյան Գ.Ս. Քրեական դատավարության պատմական և արդի հիմնահարցերը Հայաստանում: Եր., Երևանի համալս. հրատ., 2001, 432 էջ:

14. Ղամբարյան Ա. Անմեղության կանխավարկածը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում, «ԿԱԻՍԱ», Եր.:, 2005, 100 էջ:

15. Ղամբարյան Արդարադատության սահմանադրաիրավական հիմունքները Հայաստանի Հանրապետությունում, Եր.: 2006, :

16. Ղուկասյան Հ.Հ. Պաշտպանի դատավարական վիճակը նախնական քննության փուլում., Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2001, 198 էջ:

17. Մելիքյան Ռ. Վերաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում: - Եր.: Երևանի համալս. հրատ., 2007, 200 էջ:

18. Պետրոսյան Կ.Խ. Նախաքննության գիտական կազմակերպման հիմնահարցերը, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2004, 392 էջ:

1. Аверьянова Т.В., Белкин Р.С., Корухов Ю.Г., Россинская Е.Р. Криминалистика. / под ред Р.С. Белкина. М.: Издательская группа НОРМА\_ИНФРА\_М, 1999, 619 էջ:

2. Александров А.С. Диспозитивность в уголовном процессе. Н. Новгород, 1997, 243 էջ ,

3. Алексеев Н.С., Даев В.Г., Кокарев Л.Д. Очерк развития науки со-

- ветского уголовного процесса. Воронеж, 1980, 344 тг:
4. Алексеев П.В., Панин А.В. Философия. М.: ТК Велби, изд-во Проспект, 2003, 568 тг:
  5. Алиев Т.Т., Громов Н.А. Основные начала уголовного судопроизводства. М., 2003, тг 144:
  6. Анощенко С.В. Уголовно-правовое учение о потерпевшем. М.: Волтерс Клувер, 2006, тг 248:
  7. Баршев Я.И. Основания уголовного судопроизводства с применением к российскому уголовному судопроизводству. М., 2001, тг 240:
  8. Басков В.И. Прокурор в суде первой инстанции. М.: «Юрид. лит.», 1968, тг 200;
  9. Басков В.И. Прокурорский надзор за соблюдением законности при рассмотрении судами уголовных дел. Учебно-методическое пособие - М., 1977. 134 тг:
  10. Беккариа Ч. О преступлениях и наказаниях. М., 1995, тг 70–71:
  11. Бернам Уильям Правовая система США. 3-й выпуск. М.: «Новая юстиция», 2006, тг 1216:
  12. Бишарян К.А. Подозреваемый и защита его прав в уголовном процессе Республики Армения. Монография /Под ред. В.П. Божьева, Ереван: Изд. „Воскан Ереванци,, 2007. 152 тг:
  13. Викторский С.И. Уголовный процесс: Учебное пособие. М., 1997, тг 440,
  14. Вышинский А.Я. Вопросы теории государства и права. М.: Государственное издательство юридической литературы, 1949, тг 424:
  15. Вышинский А.Я. Курс уголовного процесса. М., 1934, тг 432:
  16. Вышинский А.Я. Теория судебных доказательств в советском праве. М.: Государственное издательство юридической литературы, 1950, 308 тг:
  17. Громов Н.А. Уголовный процесс России. М.: Юристъ, 1998, 218 тг:
  18. Грошевой Ю.М., Пономаренко Л.Г., Хотенец В.М. Кассационный протест прокурора по уголовным делам. Учебное пособие / Отв. за вып.: Сибилева Н.В. Киев: Изд-во УМК ВО при Минвузе УССР, 1989. 88 тг;
  19. Гуляев А.П. Следователь в уголовном процессе. М.: Юрид. лит.,



1981, 192 էջ:

20. Данышина Л.И. Возбуждение уголовного дела и предварительное расследование в уголовном процессе России. Учебное пособие - М.: Экзамен, 2003, 192 էջ,
21. Добровольская Т.М. Принципы советского уголовного процесса (вопросы теории и практики). М.: «Юридическая литература», 1971, 200 էջ:
22. Духовский М.В. Русский уголовный процесс. М., 1902, 153 էջ:
23. Европейский Суд по правам человека. Избранные решения в 2 т. М., Норма, 2000, Т. 1, 808 էջ:
24. Есина А.С. Дознание - М.: Экзамен, 2005. 224 էջ,
25. Жогин Н.В. Прокурорский надзор за предварительным расследованием уголовных дел / - М.: Юрид. лит., 1968. 264 էջ;
26. Жогин Н.В., Фаткуллин Ф.Н. Предварительное следствие в советском уголовном процессе - М.: Юрид. лит., 1965, 367 էջ,
27. Зайцев О.А. Государственная защита участников уголовного процесса - М.: Экзамен, 2003, 512 էջ.
28. Иванов В.А. Дознание в советском уголовном процессе. Учебное пособие - Л.: Изд-во Ленингр. ун-та, 1966, 37 էջ,
29. Калиновский К.Б. Основные виды уголовного судопроизводства. СПб., 2002, 75 էջ:
30. Кант И. Критика чистого разума. М.: Наука, 1999, 655 էջ:
31. Карницкий Д. Уголовный кодекс РСФСР. Практическое пособие для работников юстиции и юридических курсов / Д. Карницкий, Г. Рогинский, М. Строгович. М., 1932, 167 էջ:
32. Карякин Е.А., Тиссен О.Н. Особенности доказывания в условиях применения мер государственной защиты участников уголовного судопроизводства. М.: Издательство «Юрлитинформ», 2008, 89 էջ.
33. Кожевников М.В. История Советского суда 1917 – 1956 годы. М.: Государственное издательство юридической литературы, 1957, 383 էջ:
34. Кожевников М.В. История Советского суда. М.: Юридическое издательство Министерства Юстиции СССР, 1948, 376 էջ:
35. Колбая Г.Н. Соотношение предварительного следствия и судебного разбирательства. М.: Юрид. лит., 1975, 152 էջ:

36. Колоколов Н.А. Судебный контроль в стадии предварительного расследования. Учебное пособие для студентов вузов, М.: Закон и право, ЮНИТИ-ДАНА, 2004, - 303 їз,
37. Комментарий к Уголовно-процессуальному кодексу Российской Федерации / Отв. ред. Д.Н. Козак, Е.Б. Мизулина. М.: Юристъ, 2003, їз 620-621:
38. Кореневский Ю.В., Темушкин О.П. Протест прокурора на решение суда по уголовному делу / Под ред.: Кудрявцев П.И. М., 1973. 47 їз;
39. Кристи Н. Борьба с преступностью как индустрия. М.: Центр содействия реформе уголовного правосудия, 2001, 224 їз:
40. Крюков В.Ф. Прокурорский надзор. М.: Норма, 2006, їз 342 – 343:
41. Кудрявцев В.Н. Стратегия борьбы с преступностью. М.: Юристъ, 2003, 352 їз;
42. Кузнецов О.Ю. Переводчик в российском уголовном судопроизводстве. Монография - М.: Изд-во МПИ ФСБ России, 2006. 256 їз;
43. Курс советского уголовного процесса: Общая часть. М.: Юрид. лит., 1989, 640 їз:
44. Куцова Э.Ф. Гарантии прав личности в советском уголовном процессе, М.: Юрид. лит., 1973, 114 їз:
45. Куцова Э.Ф. Гарантии прав личности в советском уголовном процессе (предмет, цель, содержание). Предмет, цель, содержание / - М.: Юрид. лит., 1973, їз 200;
46. Лазарева В.А. Судебная власть и её реализация в уголовном процессе. Самара: Изд-во «Самарский университет», 1999, 106 їз:
47. Ларин А.М., Мельникова Э.Б., Савицкий В.М. Уголовный процесс России. Лекции-очерки / Под ред. проф. В.М. Савицкого. М.: Издательство БЕК, 1997, їз 314:
48. Ленин В.И. Полное собрание сочинений, т. 44, 398 їз:
49. Лунеев В.В. Преступность XX века. Мировой криминологический кризисъ; М., 1998, 525 їз:
50. Лупинская П.А. Решения в уголовном судопроизводстве: теория, законодательство и практика. М.: Юристъ, 2006, 174 їз:
51. Магизов Р.Р., Юнусов А.А. Судебный контроль за законностью и

- обоснованностью применения мер процессуального принуждения в уголовном судопроизводстве - Казань: Новое знание, 2005, - 168 тг:
52. Мартинович И.И. Рахунов Р.Д. Возбуждение уголовного дела в советском уголовном процессе. М.: Госюриздат, 1954, 88 тг,
  53. Марченко М.Н. Теория государства и права, М., ТК Велби, Изд-во Проспект, 2008, 585 тг:
  54. Масленникова Л.Н. Методология познания публичного и частного (диспозитивного) начал в уголовном судопроизводстве. М., 2000, 167 тг:
  55. Международные акты о правах человека: Собрание документов М., Изд. НОРМА, 1998, 784 тг:
  56. Михайлов В.А. Меры пресечения в российском уголовном процессе. М., 1996, 304 тг:
  57. Михайловская И.Б. Настольная книга судьи по доказыванию в уголовном процессе. М.: ТК Велби, Изд-во Проспект, 2006, 192 тг:
  58. Михайловская И.Б. Цели, функции и принципы российского уголовного судопроизводства (уголовно-процессуальная форма) - М.: Проспект, ТК Велби, 2003, 144 тг:
  59. Михайловский И.В. Основные принципы организации уголовного суда. Томск, 1905, 342 тг:
  60. Монтескье Ш. Избр. Произв, М., Госполитиздат, 1955., 799 тг:
  61. Мотовиловкер О.Я. Основные уголовно-процессуальные функции. Ярославль, 1976, 155 тг:
  62. Мусин Э.Ф., Шадрин В.В., Шадрин К.В. Ревизия по требованию правоохранительных органов при расследовании уголовных дел - М.: Юрлитинформ, 2004, 136 тг,
  63. Мысловский Е.Н. Ревизия как источник доказательства в уголовном процессе Российской Федерации. Некоторые особенности расследования дел о хозяйственных и имущественных преступлениях в условиях рыночной экономики: Учебно-методическое пособие для следователей - Чебоксары, 1999, 76 тг,
  64. Мутагиров Д.З. Права и свободы человека: теория и практика. Учебное пособие - М.: Логос, 2006, 544 тг;
  65. Научно-практический комментарий к Уголовно-процессуальному

- кодексу Российской Федерации, / Под общ. ред. В.М. Лебедева; Науч. ред. В.П. Божьев, М.: Спарк, 2002, 300 էջ:
66. Научно-практический комментарий к Уголовно-процессуальному кодексу РСФСР. М.: Спарк, 2000, 678 էջ:
67. Никитин С.Ю., Новикова М.В., Сергеев А.Б. Защита прав свидетелей в уголовном судопроизводстве. Монография - Челябинск: Изд-во Челябин. юрид. ин-та МВД России, 2006.էջ 142;
68. Николук В.В., Даниленко И.А. Расследование и судебное разбирательство уголовных дел о преступлениях несовершеннолетних. Омск: Омская академия МВД России, 2004, էջ 36:
69. Общая теория прав человека. М.: Издательство НОРМА, 1996, 520 էջ:
70. Общественные и личные интересы в уголовном судопроизводстве, Воронеж, 1984., 159 էջ:
71. Петрухин И.Л. Теоретические основы реформы уголовного процесса в России. Часть II. М., 2005, 192 էջ;
72. Петрухин И.Л. Личные тайны (человек и власть), – М.: ИГиПр РАН, 1998, – 232 էջ:
73. Полянский Н.Н. Вопросы теории советского уголовного процесса. М., 1956, 271 էջ:
74. Полянский Н.Н. Очерки общей теории уголовного процесса. М., 1927, 127 էջ;
75. Полянский Н.Н. Проблемы судебного права / Под ред. доктора юридических наук, профессора В.М. Савицкого. М., 1983, 224 էջ:
76. Порубов Н.И. Тактика допроса на предварительном следствии. М.: Издательство БЕК, 1998, 208 էջ:
77. Права человека / отв. ред. чл.-корр. РАН, д.ю.н. Е.А. Лукашева. М.: Издательство НОРМА (Издательская группа НОРМА – ИНФРА-М), 2001, 573 էջ:
78. Прокурорский надзор / Под ред. А.Я. Сухарева. М.: Норма, 2005, 480 էջ:
79. Прокурорский надзор /Под общ. ред. Ю.Е. Винокурова. М.: Юрайт-Издат, 2008, էջ 460:
80. Психология. Словарь / Под общ. ред. А.В. Петровского, М.Г. Яро-

- шевского, М., Политиздат, 1990, т. 422:
81. Рахунов Р.Д. Возбуждение уголовного дела в советском уголовном процессе - М.: Госюриздат, 1954, 88 т.;
  82. Рахунов Р.Д. Участники уголовно-процессуальной деятельности. М., 1961, 277 т.;
  83. Розин Н.Н. Уголовное судопроизводство. Томск, 1913, 295 т.;
  84. Рохлин В.И. Прокурорский надзор и государственный контроль: история, развитие, понятие, соотношение. СПб.: Издательство «Юридический центр Пресс», 2003, 305 т.;
  85. Рустамов Х.Ц. Уголовный процесс. Формы. М.: Закон и право, ЮНИТИ, 1998, т. 304;
  86. Рыбаков О.Ю. Личность. Права и свободы. Правовая политика. Монография - М.: РПА МЮ РФ, 2004, 260 т.;
  87. Рыжаков А.П. Возбуждение и отказ в возбуждении уголовного дела - М.: ИИД "Филинь", 1997, 248 т.;
  88. Рябинина Т.К. Нравственные начала уголовного процесса, Курск, 2007, 440 т.;
  89. Саркисянц Г.П. Переводчик в советском уголовном процессе / Отв. ред.: Агзамходжаев А.А. Ташкент: Фан, 1974. 90 т.;
  90. Сборник документов Совета Европы в области защиты прав человека и борьбы с преступностью. М., СПАРК, 1998, 388 т.;
  91. Сергеев Л.А. Ревизия при расследовании преступлений - М.: Юрид. лит., 1969, 104 т.;
  92. Случевский В.К. Учебник русского уголовного процесса. СПб., 1913, т. 670;
  93. Смирнов А.В. Комментарий к Уголовно-процессуальному кодексу Российской Федерации. Постатейный /А.В. Смирнов, К.Б. Калиновский; под общ. ред проф. А.В. Смирнова. 3-е изд., перераб. И доп. М.: КНО-РУС, 2007, 992 т.;
  94. Смолин А.Г. Сделка о признании уголовного иска. Саранск: Изд-во Мордов. ун-та, 2005, 176 т.;
  95. Советский уголовный процесс / Под ред. Чельцова М.А. М., 1969, 463 т.;
  96. Советский энциклопедический словарь / Гл. ред. А.М. Прохоров,

- М., Сов. Энциклопедия, 1986, 1600 тг:
97. Соловьёв А. Б., Токарева М. Е., Халиулин А.Г., Якубович Н.А. Законность в досудебных стадиях уголовного процесса России, – Москва-Кемерово: Кузбасвузиздат, 1997, 162 із,
  98. Стецовский Ю.И. Защита несовершеннолетних обвиняемых. Пособие для адвокатов - М., 1969. 65 тг;
  99. Стрёмовский В.А. Предварительное расследование в советском уголовном процессе / Под ред.: Гродзинский М.М. М.: Госюриздат, 1958, 136 тг,
  100. Строгович М.С. Курс советского уголовного процесса. М., 1958, 703 тг;
  101. Строгович М.С. Курс Советского уголовного процесса в 2-т. Т.1: Основные положения науки Советского уголовного процесса. М.: Издательство «Наука», 1968, 470 тг:
  102. Строгович М.С. Курс советского уголовного процесса. Т. II: Порядок производства по уголовным делам по советскому уголовно-процессуальному праву. М.: Издательство «Наука», 1970, 516 тг:
  103. Строгович М.С. Природа советского уголовного процесса и принцип состязательности. М., 1939, 151 тг:
  104. Строгович М.С. Уголовное преследование в советском уголовном процессе. М., 1951, 191 тг:
  105. Судебная практика в советской правовой системе / Под ред. Бра-туся С.Н. М., Юрид. лит., 1975., 328 тг:
  106. Сырых В.М. Теория государства и права. М.: ЗАО «Юридический дом «Юстицинформ», 2002, 544тг:
  107. Танасевич В.Г. Ревизия и бухгалтерская экспертиза. Методическое пособие / Отв. ред.: Яцковский Н.С. М.: Госюриздат, 1958, 152 тг,
  108. Тарасов-Родионов П.И. Предварительное следствие. Пособие для следователей / Под ред.: Чельцов-Бебутов М.А. М.: Юрид. изд-во МЮ СССР, 1946, 196 тг,
  109. Татоян А.А. Расследование дела в системе уголовно-процессуальных функций (сравнительно-правовой анализ).—Ер.: Изд. Ереванского ун-та, 2007, 208 із:
  110. Теория доказательств в советском уголовном процессе. М., «Юрид.

лит.», 1973,, тۋ 229:

111. Тетерин Б.С., Трошкин Е.З. Возбуждение и расследование уголовных дел. М.: Новый юрист, 1997, 224 тۋ:

112. Трошкин Е.З., Шилов А.В. Судебный контроль на стадии предварительного расследования в уголовном судопроизводстве Российской Федерации, Минск: Тесей, 2004, - 192 їз,

113. Тыричев И.В. Принципы советского уголовного процесса: Учебное пособие. М., 1983, 80 тۋ:

114. Уголовно-процессуальное право / Под общей редакцией П.А. Лупинской. М.: Юристъ, 1997, 591 тۋ:

115. Уголовно-процессуальное право Российской Федерации / Отв. ред. П.А. Лупинская. М.: Юристъ, 2004, 789 тۋ:

116. Уголовный процесс. М.: Зерцало, 1997, 509 тۋ:

117. Устимов М.А. Судебный контроль на стадии предварительного расследования как гарантия права граждан на судебную защиту в российском уголовном процессе. Исторический очерк, Саранск: Изд-во ООО "Вектор-Принт", 2008, - 36 їз,

118. Фарбер И.Е. Свобода и права человека в советском государстве - Саратов: Изд-во Сарат. ун-та, 1974, 190 тۋ;

119. Фаткулин Ф.Н. Обвинение и его изменение в суде. Казань, 1963, 170 тۋ;

120. Фойницкий И.Я. Курс уголовного судопроизводства. Т. II. СПб.: Издательство «АЛЬФА», 1996, 606 тۋ:

121. Халиулин А.Г. Осуществление функции уголовного преследования прокуратурой России, Кемерево, 1997, 224 їз;

122. Цыпкин А.Л. Право на защиту в советском уголовном процессе. Саратов, 1959, 337 тۋ:

123. Цыпкин А.Л. Сущность уголовно-процессуальных функций прокурора // Вопросы теории и практики прокурорского надзора. Саратов: Изд. Сарат. ун-та, 1974, тۋ 14-21:

124. Чельцов М.А. Советский уголовный процесс, М., Государственное издательство юридической литературы, 1951,, тۋ 32-33:

125. Чельцов М.А. Советский уголовный процесс, М., Госюриздат, 1962,, 503 тۋ.

126. Чельцов М.А. Советский уголовный процесс. М.: Государственное издательство юридической литературы, 1951, 511 էջ:
127. Чельцов-Бebutov М.А. Советский уголовный процесс. Харьков, 1929, Вып. 2, 503 էջ;
128. Чельцов-Бebutov М.А. Советский уголовный процесс. М., 1951, 512 էջ,
129. Шадрин В.С. Обеспечение прав личности при расследовании преступлений. М.: ООО Издательство «Юрлитинформ», 2000, 232 էջ:
130. Шейфер С.А. Следственные действия. Система и процессуальная форма, М., Юрид. лит., 1981, 128 էջ:
131. Щерба С.П. Переводчик в российском уголовном процессе. Научно-практическое пособие - М.: Экзамен, 2005, 416 էջ;
132. Эйсман А.А. Логика доказывания, М., «Юридическая литература», 1971., 112 էջ:
133. Экштайн К. Основные права и свободы по российской Конституции и Европейской Конвенции. Учебное пособие для вузов - М.: Nota Bene, 2004, 496 էջ;
134. Якуб М.Л. Демократические основы советского уголовно-процессуального права. М.: Изд-во МГУ, 1960, 217 էջ:
135. Якуб М.Л. Процессуальная форма в советском уголовном судопроизводстве. М., 1981, 144 էջ:

### **Գիտական հոդվածներ**

1. Դիլրանյան Ս. Դատախազական հսկողությունը անձին որպես մեղադրյալ ներգրավելու օրինականության նկատմամբ, Իրավագիտության ֆակուլտետի 75-ամյակին նվիրված գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2004, էջ 191-197:
2. Դիլրանյան Ս. Դատախազական հսկողությունը կասկածյալի և մեղադրյալի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նկատմամբ, /Իրավագիտության հարցեր, 2002, թիվ 4, էջ 38-42:
3. Դիլրանյան Ս.Ա. ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 5-րդ մաս, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ /ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի. - Եր.: «Իրավունք», 2010, էջ 249-253:
4. Դիլրանյան Ս.Ա. Տուժողի իրավունքների և օրինական շահերի



պաշտպանության ապահովման հիմնահարցերը նախնական քննության փուլում, /Բանբեր, Երևանի համալսարանի, հասարակական գիտություններ, իրավագիտություն, Երևան, էջ 24-37:

5. Դազիհյան Գ., Մելիքյան Ռ. Օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անկողմնակալ դատարան. Ստրասբուրգի դատարանի նախադեպային պրակտիկան և Հայաստանի Հանրապետության իրավական համակարգը, //Պետություն և իրավունք, թիվ 1-2 (39-40), Երևան 2008թ. էջ 3-17:

6. Դուկասյան Հ., Մելքոնյան Գ. Տարբերակված ձևերը և դրա առանձնահատկությունները, //Պետություն և իրավունք, Երևան, 2007, N 1, (35), էջ 32-41:

7. Абабков А. Защитить права потерпевшего // Российская юстиция. М.: Юрид. лит., 1997, № 3, էջ 16-17;

8. Абдрашитов В.М. Актуальные проблемы международной безопасности и защита прав и свобод человека в современном мире // "Черные дыры" в Российском Законодательстве. Юридический журнал . М.: ООО "К-Пресс", 2009, № 1, էջ 15-16;

9. Абдуллаев Ф., Зайцев О. Дознание по УПК РФ // Уголовное право . М.: Интел-Синтез, 2002, № 3, էջ 77-79,

10. Александрова А.С. Назначение и производство судебных экспертиз до возбуждения уголовных дел: миф или реальность? // Вестник Самарской гуманитарной академии. Право. Самара: Изд-во Самар. гуманит. акад., 2007, № 1, էջ 152-158;

11. Алексеев А.М. Понятие свидетеля-очевидца, значение и особенности его показаний // Вопросы борьбы с преступностью. М.: Юрид. лит., 1969, Вып. 10, էջ 53-64;

12. Авращенко Н.Ю. Проблемы назначения и производства экспертизы в ходе доследственной проверки до возбуждения уголовного дела // Ученые записки Санкт-Петербургского им. В.Б. Бобкова филиала Российской таможенной академии. 2005, -Пб.: РИО СПб филиала РТА, 2006, № 2 (24), էջ 210-215;

13. Акинча Н.А. К вопросу о гарантиях прав несовершеннолетнего обвиняемого в советском уголовном процессе // 50 лет Советской власти и актуальные проблемы правовой науки. Материалы к конференции по итогам научно-исследовательской работы за 1966 г.. Саратов, 1967, էջ 169-170;

1. Авдеев М.А. Проблемы обеспечения безопасности лиц, содействующих осуществлению правосудия, на стадии возбуждения уголовного дела // Российское правосудие. Научно-практический журнал. М.: Ось-89, 2007, № 8 (16), т. 46-51;
2. Адрианов А., Борисова И., Мельцов П. Существенные нарушения уголовно-процессуального закона // Советская юстиция. М.: Юрид. лит., 1969, № 20, т. 14-15;
3. Алексеева Е.С. Проблемы участия переводчика в уголовном судопроизводстве // "Черные дыры" в Российском Законодательстве. Юридический журнал. М.: "ИК-Пресс", 2007, № 3, т. 334-335.
4. Альперт С.А. Принцип публичности (официальности) и его значение в деятельности советских органов предварительного расследования // Ученые записки. Ученые записки Харьковского Юридического Института. Харьков, 1957, Вып. 9, т. 49-60,
5. Альперт С.А. Принцип публичности (официальности) и его значение в деятельности советских органов предварительного расследования // Научная конференция по работам, выполненным в 1955 году. Тезисы докладов. Харьков, 1956, т. 51-54,
6. Альперт С.А. Судебная защита прав и интересов граждан и ее выражение в советском уголовном процессе // Проблемы социалистической законности на современном этапе коммунистического строительства. Краткие тезисы докладов и научных сообщений республиканской научной конференции 21 - 23 ноября 1978 г.. Харьков: Изд-во Харьк. юрид. ин-та, 1978, т. 230-233;
7. Алехин А.Н. Ювенальная юстиция как проявление социальной эффективности уголовного процесса в РФ // Система отправления правосудия по уголовным делам в современной России как социальное взаимодействие личности и государства: сборник научных статей: в 2 ч.. Курск: Изд-во Курск. гос. техн. ун-та, 2009, Ч. 1, т. 183-185:
8. Анненков С.И., Громов Н.А., Кузнецова Ю.В. Дознание и предварительное следствие: сущность, задачи и значение стадии предварительного расследования // Следователь. М.: Юрист, 2000, № 4, т. 12-18,
9. Арсений Л. Прокурор содействует осуществлению правосудия // Закон и жизнь. Кишинев, 1999, № 1, т. 9-10.

10. Арсеньев Б. Надо ли расширять права потерпевшего в уголовном процессе // Советская юстиция. М.: Юрид. изд-во НКЮ СССР, 1939, № 23 - 24, т. 17-19;
11. Арутюнян Г.Г. Деформации конституционализма в евразийском пространстве. // Евразийский юридический журнал, М., 2010, № 7 (26), т. 5-9;
12. Антипенко А.А. Понятой - дань времени или необходимость // Актуальные проблемы криминалистической науки и практики: Сборник материалов Всероссийской научно-практической конференции. 21 декабря 2009 г.. Калининград: Изд-во Калинингр. ЮИ МВД России, 2010, т. 161-165;
13. Арабули Д.Т. Некоторые проблемы привлечения лица в качестве понятого в уголовном процессе // Вестник Челябинского государственного университета. Челябинск: Изд-во ЧелГУ, 2005, № 1, т. 139-143;
14. Асташенков В.Г. К вопросу участия адвоката на предварительном следствии по делам несовершеннолетних // Доклады итоговой научной конференции юридических факультетов (декабрь 1970 г.). Томск: Изд-во Том. ун-та, 1971, т. 170-173;
15. Атанесян Г.А., Ромашов А.М. Об организации ревизий, назначаемых по требованиям следственных органов // Материалы научно-практических семинаров по судебно-бухгалтерской экспертизе (1970 - 1972 гг.). М., 1973, т. 32-36;
16. Аширбекова М.Т. Реализация судебной защиты в состязательном уголовном процессе // Защита субъективных прав: история и современные проблемы. Материалы II Межвузовской научно-практической конференции, г. Волжский, 11 апреля 2000 года. Волгоград: Изд-во Волгогр. ун-та, 2000, т. 8-14;
17. Баранов А.М. О моменте допускания и обязательном участии защитника в досудебном производстве по УПК РФ // Законодательство и практика. Омск: Изд-во Ом. юрид. ин-та МВД России, 2002, № 1, т. 16-17;
18. Баранов В.М., Першин М.В. Законный интерес как средство выражения и реализации правового интереса // Научные труды РАЮН. В 2-х томах. М.: Юрист, 2002, Вып. 2: Т. 1, т. 181-190;

19. Бажанов М.И. Законность и обоснованность акта возбуждения уголовного дела в советском уголовном процессе // Советское государство и право в период развернутого строительства коммунизма. Тезисы докладов научной конференции. Воронеж: Изд-во Воронеж. ун-та, 1962, т. 2, с. 65-67,
20. Бажанов М., Крупаткин Л., Резник А. Возбуждение уголовного дела в советском уголовном процессе // Социалистическая законность. М., 1951, № 2, с. 32-36,
21. Бандурин С.Г. Некоторые проблемы реализации принципа публичности в стадии возбуждения уголовного дела // Следователь. Федеральное издание. М., 2003, № 11, с. 27-34:
22. Басков В. Кассационный протест прокурора по уголовному делу // Социалистическая законность. М.: Известия, 1976, № 7, с. 50-52:
23. Белозеров Ю., Чувилов А., Чугунов В. Допзнание и его проблемы // Социалистическая законность. М., 1970, № 6, с. 36-39
24. Белоусов А.В. О необходимости изменений в институте понятий // Прокурорская и следственная практика. Орган генеральных прокуроров стран СНГ. М., 2000, № 3-4, с. 101-106;
25. Беджешев В.И., Селиванов Н.А. Допрос потерпевших и свидетелей - очевидцев происшествия по делам о взрывах в промышленности, связанных с нарушением правил техники безопасности // Повышение эффективности деятельности органов прокуратуры, суда и юстиции в свете Конституции СССР 1977 года. Сборник научных трудов аспирантов и соискателей. М.: Изд-во Всесоюзного ин-та по изучению причин и разработке мер предупреждения преступности, 1980, с. 128-132;
26. Блиновская Е. Спорные вопросы применения особого порядка судебного разбирательства. (Особый порядок и несовершеннолетние) // Судья. М.: Юрид. мир, 2006, № 6, с. 44-45;
27. Богданова Н.А. Основные права и свободы человека и гражданина в связи с инновационной политикой РФ // Государственная власть и местное самоуправление. М.: Юрист, 2009, № 2, с. 3-6;
28. Божьев В. Существенные нарушения норм УПК. Законность, 2009, № 1, с. 4:
29. Бобров В.К. Уголовно-процессуальная форма и ее роль в обеспе-

- чении задач советского судопроизводства // Сборник статей адъюнктов и соискателей. М.: Изд-во ВШ МВД СССР, 1971, Вып. 3, т. 126-134;
30. Богословская Л.А. Законный интерес участников кассационного производства // Актуальные проблемы юридической науки на этапе развитого социализма. Краткие тезисы докладов и научных сообщений республиканской научной конференции, 16 - 18 октября 1985 г.. Харьков: Изд-во Харьк. юрид. ин-та, 1985, т. 244-245;
31. Божьев В.П. Предварительное расследование: традиции, новации, псевдоновации // Актуальные проблемы совершенствования организационных и правовых основ деятельности органов внутренних дел. Труды Академии управления (юбилейный выпуск). М.: Изд-во Акад. управления МВД России, 1999, т. 149-158,
32. Бойков А.Д. Проблемы развития рооссийской прокуратуры (в условиях переходного периода) //Законность. 1998. 1 7., 3 7:
33. Бороздина Я.А. Классификация прав и свобод человека // Международное публичное и частное право. М.: Юрист, 2007, № 6 (39), т. 10-12;
34. Белокопытов А.К. О возможности участия законных представителей несовершеннолетних на стадии возбуждения уголовного дела // Современные проблемы правотворчества и правоприменения. Сборник научных трудов. М., Иркутск: ГОУ ВПО РПА Минюста России, 2007, Вып. 4, т. 139-142;
35. Березина Л.В. Предварительное следствие: от теории к практике (актуальные проблемы преподавания дисциплины специализации "Предварительное следствие в органах внутренних дел") // Военно-юридический вестник Приволжского региона. Сборник научных трудов. Самара: ООО "ИПК "Содружество", 2005, Вып. 3: Ч. 1, т. 37-42 :
36. Брусницын Л.В. Государственная защита лиц, содействующих уголовному правосудию: состояние и развитие законодательства. // Государство и право. 2010. №2, т. 42.
37. Брусницын Л.В. Международно-правовые и конституционные основы обеспечения безопасности лиц, содействующих уголовному правосудию // Государство и право. М.: Наука, 1996, № 3, т. 100-109;
38. Брусницын Л.В. Правовое обеспечение безопасности лиц, со-

- действующих уголовному правосудию: временной и субъективный аспекты // Государство и право. М.: Наука, 1996, № 9, т. 76-83;
39. Бубнов И.А. Пути решения проблемы защиты свидетеля в уголовном судопроизводстве Российской Федерации // Правовые проблемы укрепления российской государственности. Материалы нижеволжской научной конференции студентов, аспирантов и соискателей юридических вузов, 2 декабря 2006 г.. Астрахань: Изд. Дом "Астраханский университет", 2006, т. 23-26;
40. Булахтин Н., Захаров К. Возбуждение уголовного дела в советском уголовном процессе // Социалистическая законность. М., 1951, № 3, т. 50-53,
41. Бычков А.Н. Защита прав несовершеннолетних по уголовно-процессуальному законодательству Республики Беларусь, Республики Армения, Республики Украина и Республики Узбекистан. // Научные труды. Российская академия юридических наук. Выпуск 9. В 3 томах. Том 3. М.: Издательская группа «Юрист», 2009, 814 т.;
42. Бычкова К.Г. Некоторые вопросы участия законных представителей несовершеннолетних подозреваемого и обвиняемого по уголовным делам // Обеспечение законности в российском уголовном судопроизводстве. Материалы Международной научно-практической конференции (Саранск, 7 - 8 декабря 2006 г.). Саранск: Мордов. кн. изд-во, 2006, т. 100-104;
43. Варламова Н.В. Права человека как предмет юридической интерпретации. // Государство и право, 2009, № 2, т. 24-29;
44. Варламова Н.В. Права человека: попытки интегративной интерпретации // Сравнительное конституционное обозрение, 2008. № 6, т. 99-100;
45. Васильев А.Н. Дознание в советском уголовном процессе // Советское государство и право. М.: Наука, 1959, № 6, т. 97-105,
46. Витрук Н.В. Акты применения права в механизме реализации прав и свобод личности // Правоведение. Л.: Изд-во Ленингр. ун-та, 1983, № 2, т. 3-10;
47. Витрук Н.В. Народовластие и политические права и свободы граждан СССР // Советское государство и право. М.: Наука, 1979, № 1,

т. 104-112;

48. Витрук Н.В. Фарбер И.Е. Свобода и права человека в Советском государстве. Саратов: Изд-во Саратов. ун-та, 1974, 190 т. // Советское государство и право. М.: Наука, 1976, № 3, т. 145-147;

49. Витрук Н.В. Классификация и основные виды политических прав и свобод советских граждан // Конституционный статус личности в СССР. М.: Юрид. лит., 1980, т. 151-165;

50. Володина Л.М. Уголовное судопроизводство и проблемы развития уголовно-процессуальной формы // Ученые записки. Сборник научных трудов Института государства и права. Тюмень: Изд-во ТюмГУ, 2007, Вып. 8, т. 22-31:

51. Воробьева Е.В. Общественный долг очевидца преступления // Современные проблемы юридической науки. Материалы V Международной научно-практической конференции молодых исследователей (Южно-Уральский государственный университет, 6-7 мая 2009 г.). Челябинск: ООО "Полиграф-Мастер", 2009, Ч. II. т. 217-220:

52. Воробьева Е.В. Очевидец как источник информации о преступлении // Научные труды РАЮН. В 3-х томах. М.: Юрист, 2009, Вып. 9, Т. 3, т. 428-432:

53. Воробьева Е.В. Очевидец преступления: понятие и виды // Акме. Сборник трудов молодых ученых. Саратов: СЮИ МВД России, 2008, Вып. 4, т. 172-178:

54. Воробьева Е.В. Свидетельский иммунитет очевидца преступления // Вестник Саратовской государственной академии права. Саратов: Изд-во СГАП, 2009, № 4 (68), т. 103-107:

55. Воронов Д.А. Меры процессуального принуждения как средства обеспечения безопасности участников уголовного судопроизводства // Актуальные проблемы борьбы с преступностью в Сибирском регионе. Сборник материалов XII международной научно-практической конференции (19-20 февраля 2009 г.). Красноярск: СибЮИ МВД России, 2009, Ч. 2, т. 188-192:

56. Воскобитова Л.А. К вопросу о понятии существенных нарушений уголовно-процессуального закона // Актуальные вопросы развития и совершенствования законодательства о судостроительстве, судопроиз-

водстве и прокурорском надзоре. Сборник научных трудов. М., 1981, т. 2, с. 133-141:

57. Воскобитова Л.А. Существенные нарушения уголовно-процессуального закона как основание к отмене приговоров // Труды ВЮЗИ. М.: РИО ВЮЗИ, 1974, Т. 37: ч. 2, с. 144-174:

58. Всероссийский съезд деятелей советской юстиции. М., 1924, с. 19:

59. Валькова Т.В. Процессуальные права подозреваемого: их классификация и виды // Совершенствование деятельности правоохранительных органов по борьбе с преступностью в современных условиях. Материалы Всероссийской научно-практической конференции (27-28 октября 2005 г.). Тюмень: Изд-во ТГИМЭУП, 2006, Вып. 2, с. 131-133;

60. Ванюшина К.Л. Проблема поиска понятых // Проблемы современного российского права. Материалы международной научно-практической конференции студентов и молодых ученых, посвященной памяти Ивана Яковлевича Дюрягина (4-5 мая 2007 г.). Челябинск: Полиграф-Мастер, 2007, Ч. 1, с. 347-350.

61. Васильева О.М. Процессуальные проблемы допуска законных представителей несовершеннолетних подозреваемых и обвиняемых к участию в уголовном судопроизводстве // Совершенствование деятельности по раскрытию и расследованию преступлений, совершенных несовершеннолетними. Сборник научных статей по материалам научно-практической конференции, 20 июня 2007 г.. Ижевск: ИФ НА МВД России, 2008, с. 17-26:

62. Гаврилович А.В. К вопросу о становлении государственной системы мер защиты участников уголовного судопроизводства // Вопросы права и проблемы становления гражданского общества в России: Сборник научных статей. Хабаровск: Изд-во Дальневост. юрид. ин-та МВД России, 2009, с. 118-122:

63. Галимов О.Х. Правовое регулирование процессуального статуса законного представителя несовершеннолетнего подозреваемого (обвиняемого) в УПК РФ // Актуальные проблемы борьбы с преступностью в Сибирском регионе. Сборник материалов международной научно-практической конференции (7 - 8 февраля 2003 г.). Красноярск: Изд-во Сиб. юрид. ин-та МВД России, 2003, Ч. 2, с. 113-117:



64. Галимов О.Х. Участие законных представителей несовершеннолетних на предварительном следствии // Уголовно-процессуальные и криминалистические проблемы расследования преступлений несовершеннолетних. Тезисы докладов и сообщений к научно-практическому семинару 1992 г.. Омск: Изд-во Ом. ВШМ МВД России, 1992, т. 65-67:
65. Галихманов А.Б. Проблемы обеспечения прав и интересов несовершеннолетних подозреваемых и обвиняемых на предварительном следствии // Проблемы предупреждения и пресечения преступности и иных правонарушений молодежи, защиты их прав. Материалы республиканской научно-практической конференции 25 октября 2000 года. Уфа: Изд-во БашГУ, 2000, т. 99-102:
66. Галушкин В.И. Порядок назначения ревизии в уголовном судопроизводстве // Вестник криминалистики. Вып. 3 (27), Москва, Изд-во Спарк, 2008, т. 103-108:
67. Гасанов С.М. Права подозреваемого // Актуальные проблемы юридической науки нового века. Материалы конференции молодых ученых и аспирантов. М.: Изд-во РУДН, 2001, т. 143-145:
68. Гвоздева И.С. Правовые и тактические основы участия психолога в уголовном судопроизводстве // Новый век: история глазами молодых: Сборник научных трудов аспирантов и студентов исторического факультета СГУ. Саратов: Изд-во Саратов. ун-та, 2006, Вып. 5, т. 129-132;
69. Герасимов С. Функция уголовного преследования в деятельности прокуратуры. В кн: Прокуратура в правовом государстве. М., 1997, 160 ÷,
70. Глебов А.П. Судебная реформа и функции прокурорского надзора // Служенье Истине: Научное наследие Л.Д. Кокорева. Сборник статей. Воронеж: Изд-во Воронеж. ун-та, 1997, т. 194-231;
71. Глотов С.Н. Проблемы стадии предварительного расследования // Всероссийская научно-практическая конференция курсантов, слушателей, студентов и адъюнктов "Преступность в России: состояние и проблемы борьбы с ней". Сборник материалов. Воронеж: Изд-во Воронеж. ин-та МВД России, 2008, т. 55-57,
72. Головинская Е.П. Правовое положение переводчика в уголовном судопроизводстве: Правовая защита в России. Обеспечение, эффектив-

ность и проблемы // Трибуна молодых ученых: Правовая защита в России. Обеспечение, эффективность и проблемы. Сборник научных трудов. Воронеж: Изд-во Воронеж. гос. ун-та, 2005, Вып. 7, т. 43-53:

73. Головинская Е.П. Проблема гарантий государственной защиты переводчика в уголовном процессе: Административная реформа в России: политико-правовое и управленческое измерение // Правовая наука и реформа юридического образования: Административная реформа в России: политико-правовое и управленческое измерение. Сборник научных трудов. Воронеж: Изд-во Воронеж. ун-та, 2004, Вып. 16, т. 67-81:

74. Горбачёва Е.В. Проблемы регулирования судопроизводства по делам несовершеннолетних в УПК РФ. // Материалы международной научно-практической конференции «Уголовно-процессуальный кодекс Российской Федерации: год правоприменения и преподавания». М., 2004, т. 307:

75. Гордон Ричард Судебный контроль и внутригосударственное право. // Судебный контроль и права человека: Материалы российско-британского семинара 12-13 сентября 1994 года, М., 1996, – т. 64-65:

76. Горлова Ю.Н. Ювенальная юстиция - правовая основа социальной политики в отношении несовершеннолетних в РФ // Молодежная политика в условиях формирования гражданского общества и правового государства: материалы мартовской межрегиональной студенческой научной конференции, 21 марта 2008 г.. Волгоград: ПринТерра, 2009, т. 118-122;

77. Горохова С.Н. Предварительное следствие: плюсы и минусы нового Уголовно-процессуального кодекса Российской Федерации: Новое процессуальное законодательство Российской Федерации: Новеллы, достоинства и противоречия // Трибуна молодых ученых: Новое процессуальное законодательство Российской Федерации: Новеллы, достоинства и противоречия. Сборник научных трудов. Воронеж: Изд-во Воронеж. ун-та, 2003, Вып. 4: Ч. 1, т. 40-47,

78. Горшунов Д.Н. Некоторые частноправовые аспекты соотношения категорий "субъективное право" и "законный интерес" // Актуальные проблемы гражданского права и процесса. Сборник материалов Меж-

- дународной научно-практической конференции. М.: Статут, 2006, Вып. 1, т. 17-25;
79. Гречуха В. Формы прокурорского надзора за исполнение законов в деятельности органов предварительного расследования // Государство, право и демократия в условиях развитого социалистического общества. Тезисы докладов 2-ой научно-теоретической конференции аспирантов (2-4 февраля 1973 г.). М.: Изд-во ВЮЗИ, Изд-во МГУ, 1973, т. 225-227;
80. Григорова А.Ф. Судебная защита прав участников уголовного судопроизводства и судебный контроль в уголовном процессе иностранных государств // Lex Russica. Научные труды МГЮА. М.: Изд-во МГЮА, 2004, № 2, т. 574-592;
81. Гришина Е. Использование специальных познаний психолога на предварительном следствии // Законность. М., 2004, № 5, т. 25-26;
82. Газетдинов Н.И. Некоторые вопросы, связанные с принятием решения о возбуждении уголовного дела, // Российский следователь, 2009, № 7, т. 6-8;
83. Гальперин И.М. О принципе публичности (официальности) в советском уголовном процессе // Правоведение. Л.: Изд-во Ленингр. ун-та, 1960, № 2, т. 106-119;
84. Гагауллин З.Ш. Уголовное преследование как функция прокурора в уголовном судопроизводстве // Бизнес в законе. М.: Изд. Дом "Юр-ВАК", 2009, № 1, т. 221-225;
85. Глухов Д.В. Особый порядок судебного разбирательства – дифференцированная форма общего порядка. // Правоведение, 2009, № 1, т. 158-166;
86. Головкин Л.В. Принципы неотвратимости ответственности и публичности в современном российском уголовном праве и процессе // Государство и право, 1999, № 3, т. 61-68;
87. Гришина Е.П. Использование познаний специалиста-психолога в уголовном судопроизводстве // Российский судья. М.: Юрист, 2003, № 7, т. 27-28;
88. Гришина Е.П. Перспективы использования специальных знаний психолога в уголовном судопроизводстве // Российский следователь. М.: Юрист, 2005, № 7, т. 13-14;

89. Горелик В. Обеспечение безопасности военнослужащих - жертв преступлений, свидетелей и других лиц // Законность. М., 1999, № 10, էջ 27-28;
90. Гуськова А.П., Неретин Н.Н. Спорные моменты вопроса обеспечения личной безопасности обвиняемого, содействующего предварительному следствию по уголовному делу // Российский судья. М.: Юрист, 2008, № 7, էջ 31-33;
91. Гушин В.З. Судебная реформа. Вопросы прокурорского надзора // Право и политика. М.: Nota Bene, 2001, № 8, էջ 39-46;
92. Гуськова А.П. Значение использования специальных знаний специалистов-психологов в уголовном судопроизводстве России // Вестник Оренбургского государственного университета. Оренбург: Изд-во Оренбург. ун-та, 2007, № 3, էջ 4-7;
93. Демидов И.Ф. Роль судебной власти в обеспечении законности уголовного преследования // Законность в Российской Федерации, - М.: Спарк, 1998,, էջ 166;
94. Дмитриев И.Р., Федулов А.В. Система поводов для возбуждения уголовного дела в современном уголовном судопроизводстве России // Современные проблемы государства и права. Сборник научных трудов. Нижний Новгород: Изд-во Нижегород. акад. МВД РФ, 2003, Вып. 1, էջ 173-183,
95. Дьяченко В.И. О дальнейшей дифференциации формы досудебного производства // Формы досудебного производства и их совершенствование. Сборник научных трудов. Волгоград: Изд-во ВСШ МВД СССР, 1989, էջ 16-21;
96. Дюльденко И.А. Защита прав несовершеннолетних в уголовном судопроизводстве: Право и юриспруденция // X Региональная конференция молодых исследователей Волгоградской области: Право и юриспруденция. Тезисы докладов: г. Волгоград, 8-11 ноября 2005 г.. Волгоград: Изд-во ВолГУ, 2006, Вып. 2, էջ 378-380;
97. Данилов А.В. Существенное нарушение уголовно-процессуального закона как основание направления дела на доследование // Проблемы борьбы с преступностью. Сборник научных трудов. Омск: Изд-во Ом. ВШМ МВД России, 1977, էջ 131-137;

98. Давлетов А. Право защитника собирать доказательства. // Российская юстиция. 2003. № 7, т. 50-51;
99. Даев В.Г. К понятию обвинения в советском уголовном процессе // Правоведение, 1970. № 1, т. 76-86;
100. Дзгоева Б.О. К вопросу о соотношении понятий право и законный интерес // Право и государство: теория и практика. М.: Право и государство, 2008, № 7, т. 54-57,
101. Дикарев И. Значение и проблемы участия законного представителя несовершеннолетнего подозреваемого, обвиняемого в уголовном судопроизводстве // Уголовное право. М.: АНО "Юридические программы", 2007, № 5, т. 76-78;
102. Дикарев И. Свидетельский иммунитет законных представителей несовершеннолетних // Уголовное право. М.: АНО "Юридические программы", 2009, № 1, т. 76-80;
103. Еникеев З.Д., Еникеев Р.З. Проблемы повышения роли адвоката в защите несовершеннолетних подозреваемых и обвиняемых // Ученые труды российской академии адвокатуры. М.: Российская Академия адвокатуры, 2003, Вып. 3, т. 102-112;
104. Ермаков А.М. Об актуальных проблемах охраны прав несовершеннолетних подозреваемых, обвиняемых при расследовании уголовных дел // Охрана прав несовершеннолетних и развитие законодательства о семье. Материалы конференции 19 декабря 2008 г. М.: Изд-во Моск. гуманит. ун-та, 2009, т. 16-21;
105. Ерофеев Г.А. Существенные нарушения уголовно-процессуального закона как основания пересмотра приговоров // Применение норм процессуального права (процессуальные средства реализации уголовной ответственности). Межвузовский сборник научных трудов: Научные труды Свердловского юридического института. Свердловск: Изд-во Свердл. юрид. ин-та, 1977, Вып. 57, т. 135-142;
106. Дорошков В. Судебный контроль за деятельностью органов предварительного расследования // Российская юстиция. М.: Юрид. лит., 1999, № 7, т. 26-28,
107. Дроздов Г. Дифференциация формы досудебного производства // Социалистическая законность. М.: Известия, 1990, № 4, т. 51-52;

108. Добровольская Т.Н. Гарантии прав личности в советском уголовном процессе // Советское государство и право. М.: Наука, 1958, № 9, т. 92-96;
109. Зайцев Р.В. К вопросу о назначении криминалистических экспертиз до возбуждения уголовного дела // Актуальные проблемы российского права. Сборник статей. М.: Изд-во МГЮА, 2007, № 1 (4), т. 629-636;
110. Зайцев Р.В. К вопросу о назначении криминалистических экспертиз до возбуждения уголовного дела // Актуальные проблемы российского права. Сборник статей. М.: Изд-во МГЮА, 2006, № 1 (3), т. 374-380;
111. Замылин Е.И. Тактико-психологические особенности допроса потерпевших (свидетелей), подвергшихся неправомерному воздействию заинтересованных лиц // Адвокатская практика. М.: Юрист, 2007, № 2, т. 22-25;
112. Замятин В., Яновский Я. Протест прокурора и обеспечение законности судебных решений // Социалистическая законность. М., 1970, № 10, т. 22-27;
113. Зипунников О.А., Каретников А.С. Сообщения о преступлениях – проблемы теории и практики, // Российская юстиция, 2006, № 12, т. 53-54;
114. Ефимычев С.П. Разделение властей и проблемы борьбы с преступностью // Проблемы совершенствования прокурорского надзора (к 275-летию Российской прокуратуры): Материалы научно-практической конференции, – М., 1997, т. 176-183;
115. Ефремова Н.П. Предварительное следствие в системе уголовного судопроизводства по УПК РФ // Проблемы применения нового уголовно-процессуального законодательства в досудебном производстве. Материалы научно-практической конференции. Барнаул: Изд-во БЮИ МВД России, 2002, Ч. 1, т. 90-93,
116. Зажицкий В.И. Какие изменения и дополнения целесообразно внести в правовой институт возбуждения уголовного дела. Материалы международной научно-практической конференции «Уголовно-процессуальный кодекс Российской Федерации: год правоприменения и репо-

давания», М., 2004, т. 219-221:

117. Закирова М.Т. Об обязательном участии защитника в судебном разбирательстве по делам несовершеннолетних // Актуальные проблемы международного ювенального права. Материалы Всероссийской научно-практической конференции, г. Волгоград, 15 марта 2006 г.. Волгоград: Изд-во ВолГУ, 2006, т. 2 69-72;

118. Захарова А.И. Участие педагога и психолога в предварительном расследовании как гарантия его эффективности // Законодательство России: проблемы теории и практики применения. Сборник научных статей. Саратов: Изд-во Сарат. юрид. ин-та МВД России, 2006, Вып. 3. із 143-147:

119. Зеленецкий В.С. Прокурорский надзор за исполнением закона о всестороннем, полном и объективном исследовании обстоятельств уголовного дела в стадии предварительного расследования. Учебное пособие / - Харьков, 1990. 92 т.;

120. Зуев С.В. Защита прав несовершеннолетних подозреваемых (обвиняемых) по уголовным делам // Защита прав и профилактика правонарушений несовершеннолетних. Материалы международной научно-практической конференции (26-27 августа 2005 г.). М.: ВНИИ МВД России, 2006, т. 2 121-125:

121. Ижнина Л.П., Кандалина А.Н. Производство по уголовным делам у мирового судьи как самостоятельная уголовно-процессуальная форма упрощенного типа: Власть и право // Вестник Нижегородского университета им. Н.И. Лобачевского: Власть и право. Серия право. Нижний Новгород: Изд-во ННГУ, 2005, Вып. 1 (8), т. 2 141-151;

122. Имамудинова Г.Я. Переводчик в уголовном процессе // Современные проблемы юридической науки. Материалы III Всероссийской с международным участием научно-практической конференции молодых исследователей, 26-28 апреля 2007 г.. Челябинск: Полиграф-Мастер, 2007, Ч. 2, т. 2 174-177;

123. Исаев Н.В. К вопросу о роли жертвы преступления в российском праве // Актуальные проблемы правового регулирования деятельности органов Министерства юстиции и Министерства внутренних дел Российской Федерации. Межвузовский сборник научных трудов. Владимир:

- ВЮИ Минюста России, 2002, т. 77-85,
124. Иванов А., Ландо А. Законный представитель несовершеннолетнего обвиняемого // Социалистическая законность. М., 1970, № 9, т. 72-73;
125. Иванов А., Ландо А. Законный представитель несовершеннолетнего подозреваемого // Социалистическая законность. М., 1973, № 3. т. 47;
126. Ивановский А.В. Правовая реформа и прокурорский надзор в Беларуси // Прокурорская и следственная практика. М., 1998, № 4., т. 78-81:
127. Измайлов И.В. Судебный контроль при производстве следственных действий без судебного решения: Май // Уголовный процесс: Май, М.: Изд. Дом "Арбитражная практика", 2005, № 5, - т. 33-36,
128. Ильина Л.В., Похмелкин В.А., Симонов В.И. Гарантии прав личности в уголовном процессе Польской Народной Республики. Ярославль, 1976, 91 т. // Правоведение. Л.: Изд-во Ленингр. ун-та, 1979, № 6, т. 91-92;
129. Кавалиерис А., Маканс Л. О возможностях использования гипноза при опросе потерпевших и свидетелей-очевидцев // Вестник криминологии. М.: Спарк, 2009, № 1 (29), т. 60-62;
130. Кан М.П. Функция уголовного преследования и полномочия прокурора // Тезисы докладов на теоретической конференции аспирантов института государства и права АН СССР и юридического факультета МГУ им. М.В. Ломоносова. М.: Изд-во ИГиП АН СССР, 1986, т. 144-145;
131. Кадышева Т., Ширинский С. Расширить права потерпевшего // Российская юстиция. М.: Юрид. лит., 1998, № 1, т. 14;
132. Капустянский В. Особенности судебного следствия по делам несовершеннолетних // Мировой судья. М.: Юрист, 2009, № 3, т. 26-30;
133. Карнозова Л.М. Российское уголовное правосудие в отношении несовершеннолетних и ювенальная юстиция // Государство и право. М.: Наука, 2008, № 3, т. 54-64;
134. Карякин Е.А. К вопросу о гарантиях, обеспечивающих защиту прав личности в состязательном уголовном процессе // Уголовное судопроизводство. М.: Юрист, 2005, № 1, т. 33-36,



135. Карасев В.А. Публичный интерес и законный личный интерес обвиняемого в уголовном процессе // Проблемы борьбы с преступностью. Материалы четвертой научной конференции аспирантов и соискателей. М., 1971, т. 124-128;
136. Кашепов В.П. Институт судебной защиты прав и свобод граждан и средства её реализации // Государство и право, – 1998, - № 2, – т. 66-71:
137. Клоц О. Назначение ревизий и инвентаризаций при расследовании преступлений, связанных с гибелью скота в колхозах и совхозах // Социалистическая законность. М.: Известия, 1983, № 12, т. 35-36,
138. Ковалевская Л. Процессуальные права потерпевшего должны быть расширены // Советская юстиция. М.: Юрид. лит., 1968, № 14, т. 19,
139. Коваль Е.Н. Ювенальная юстиция как основное направление совершенствования российского правосудия в отношении несовершеннолетних // Пробелы в российском законодательстве. Юридический журнал. М., 2009, № 1, т. 215-217;
140. Кожевников О.А., Кожевников А.В. Прокурорский надзор в свете концепции судебной реформы России // Актуальные проблемы борьбы с правонарушениями. Материалы научно-практической конференции (Екатеринбург, 1992, 30 - 31 января). Екатеринбург, 1992, т. 98-102;
141. Козицин Я.М. Бухгалтерская ревизия при расследовании хищений, совершаемых с использованием служебного положения // Вопросы теории советского права. Сборник докладов к конференции по итогам научно-исследовательской работы. Новосибирск, 1966, т. 154-163;
142. Козырский В.П., Корноухов В.Е. Предварительная проверка материалов ревизий и инвентаризаций о хищениях, совершенных должностными лицами // Труды Высшей следственной школы МВД СССР. Волгоград: НИиРИО ВСШ МВД СССР, 1973, Вып. 7, т. 88-98,
143. Кондратов П.Е. Гарантии интересов обвиняемого, как фактор, определяющий формирование и осуществление советской уголовной политики // Гарантии прав личности в социалистическом уголовном процессе. Ярославль, 1981, т. 64-72:
144. Конин В.В., Осипова Е.В. Особый порядок судебного разбирательства - "сделка" о признании вины? // Новое уголовно-процессуальное законодательство РФ: проблемы теории и практики. Материалы

- научно-практической конференции. Калининград: Изд-во Калинингр. ун-та, 2003, т. 100-104;
145. Колоколов Н.А. Судебный контроль в стадии предварительного расследования: реальность, перспективы // Государство и право, 1998, - ? 11, – т. 31-39;
146. Кондрусов Э.В. Защитник. Понятие, его процессуальное положение, допуск защитника к участию в деле, обязательное участие защитника // Российский судья. М.: Юрист, 2007, № 3, т. 30-32:
147. Кондрусов Э.В. Особенности допроса потерпевших и свидетелей-очевидцев при расследовании разбойных нападений на жилище, совершаемых организованными группами // Право и образование. М., 2007, № 12, т. 168-174:
148. Кудрявцев П.И. Прокурорский надзор за рассмотрением уголовных дел в суде // На страже советских законов. М.: Юрид. лит., 1972, т. 278-293;
149. Кудрякова А.Х. Ювенальная юстиция: проблемы законодательного закрепления в современной России // Правовая политика государства: теория, история, практика. Сборник научных статей . Пенза: Информационно-издательский центр ПензГУ, 2009, Вып. 5, т. 206-211;
150. Кузнецов А.А. Классификация прав и свобод человека и гражданина в современной юридической литературе // Защита прав человека: теория и практика, проблемы совершенствования правозащитной системы в регионах. Материалы Всероссийской научно-практической конференции, г. Пермь 10 декабря 2004 г.. Пермь: ИВЭСЭП, 2005, т. 45-49;
151. Крайнов В.И. Отдельные вопросы применения мер государственной защиты вне рамок процесса уголовного судопроизводства // Российский следователь. М.: Юрист, 2008, № 23, т. 7-10;
152. Кузнецов П. Дифференциация процессуальной формы по групповым и многоэпизодным делам // Российская юстиция. М.: Юрид. лит., 1999, № 5, т. 44-45;
153. Куликов А.В., Новиков А.В. Соотношение процессуального положения специалиста, психолога, педагога и переводчика в уголовном судопроизводстве России // Российский судья. М.: Юрист, 2007, № 1, т.

32-34;

154. Киричек Е.В. Особенности классификации конституционных прав и свобод человека и гражданина в субъектах Российской Федерации // Интеллект - 2005. Сборник научных трудов. Тюмень: ТГИМЭУП, 2005, № 211-215,

155. Клочков А.В., Янин С.А. О совершенствовании мер государственной защиты иностранцев и лиц без гражданства, содействующих российскому уголовному правосудию // Научные труды РАЮН. В 3-х томах. М.: Юрист, 2008, Вып. 8 Т. 3, № 874-879;

156. Ковалева М.Г. Поводы и основание для возбуждения уголовного дела в российском уголовном процессе // Труды Санкт-Петербургского юридического института Генеральной прокуратуры Российской Федерации, №-Пб.: Изд-во С.-Петербург. юрид. ин-та Генеральной прокуратуры РФ, 2004, № 6, № 46-51,

157. Кожевников В.В. Проблемы безопасности лиц, содействующих уголовному судопроизводству, в контексте теории естественного права // Онтология и аксиология права. Материалы международной научной конференции, 27 - 28 сентября 2003 г.. Омск: Изд-во Ом. акад. МВД России, 2003, № 167-169;

158. Королев Г.Н. К вопросу о соотношении прокурорского надзора и судебного контроля за предварительным расследованием: Актуальные проблемы российского права и культуры XXI века // Вестник Волжской государственной академии водного транспорта: Актуальные проблемы российского права и культуры XXI века. Нижний Новгород: Изд-во ВГАВТ, 2002, Вып. 2, № 110-115;

159. Королев Г.Н. О реализации прокурором функции уголовного преследования в стадии назначения судебного заседания: Актуальные проблемы российского права, философии, экономики и финансов // Вестник Волжской государственной академии водного транспорта: Актуальные проблемы российского права, философии, экономики и финансов. Нижний Новгород: Изд-во ФГОУ ВПО "ВГАВТ", 2005, Вып. 15, № 11-16:

160. Корсукова К.Н. Гарантии прав личности в уголовном процессе // Сборник научных работ студентов. М.: Изд-во ИНЭП, 2001, Вып. 5, №

118-125;

161. Костенко Л.В. О понятии существенных нарушений уголовно-процессуального закона // Эффективность борьбы с преступностью и совершенствование законодательства в свете Конституции СССР. Межвузовский научный сборник. Уфа: Изд-во Башк. ун-та, 1980, т. 2, с. 89-99;

162. Котов Д.П. Роль нравственных начал в развитии и совершенствовании уголовно-процессуальной формы // Развитие и совершенствование уголовно-процессуальной формы. Воронеж: Изд-во Воронеж. ун-та, 1979, т. 2, с. 52-58;

163. Крюков В.Ф. Уголовное преследование как одно из проявлений уголовно-процессуальной функции обвинения и роль прокурора в ее осуществлении // Проблемы отправления правосудия по уголовным делам в современной России: теория и практика. Сборник научных статей. Курск: Изд-во Курск. гос. техн. ун-та, 2007, Ч. 1, т. 2, с. 101-115;

164. Коченов М.М., Осипова Н.Р. Психология показаний малолетних и участие психолога в допросе // Проблемы психологии следственной деятельности. Сборник научных статей. Красноярск: Изд-во Краснояр. ун-та, 1986, т. 2, с. 102-111;

165. Краснов А.В. Законный интерес: вопросы содержания // Международные юридические чтения. Материалы научно-практической конференции (12 апреля 2006 г.). Омск: Изд-во Омск. юрид. ин-та, 2006, Ч. 1, т. 2, с. 16-19;

166. Купко П. Права потерпевшего в уголовном процессе // Советская юстиция. М.: Юрид. изд-во НКЮ СССР, 1939, № 15 - 16, т. 2, с. 24-25;

167. Кузнецова А.А. Актуальные проблемы правового статуса педагога (психолога) как участника допроса несовершеннолетнего в уголовном судопроизводстве // Современные проблемы юридической науки. Материалы III Всероссийской с международным участием научно-практической конференции молодых исследователей, 26-28 апреля 2007 г.. Челябинск: Полиграф-Мастер, 2007, Ч. 2, т. 2, с. 180-183;

168. Кулешов А.В. Права подозреваемого при проведении экспертизы на предварительном следствии // Правовые проблемы укрепления российской государственности. Сборник статей. Томск: Изд-во Том. ун-та,

- 2001, Вып. 7, т. 48-50,
169. Курмаева Н.А. Проблемы использования специальных психологических знаний при рассмотрении и разрешении судом уголовного дела в отношении несовершеннолетнего. // Научные труды. Российская академия юридических наук. Выпуск 9. В 3 томах. Том 3. М.: Издательская группа «Юрист», 2009, т. 956-960:
170. Левченков А.И. Права и свободы в государствах переходного типа: приоритеты и перспективы // Философия права. Ростов-на-Дону: Изд-во Рост. юрид. ин-та МВД России, 2009, № 1, т. 73-76;
171. Ледаев А.П., Терехин В.А. Развитие института судебной защиты и проблемы обеспечения прав потерпевших в уголовном процессе // Юридический вестник. Межвузовский сборник научных трудов. Пенза, 2004, Вып. 16, т. 142-150:
172. Лазарев Е.В. Особенности правовой регламентации назначения и производства документальных ревизий в процессе предварительной проверки и расследования преступлений. // Следователь. Федеральное издание, 2009, № 4, т. 31-35:
173. Лупинская П.А. Доказательственное право в Уголовно-процессуальном кодексе Российской Федерации. // Материалы международной научно-практической конференции, посвящённой принятию нового Уголовно-процессуального кодекса Российской Федерации. М., 2002, т. 80
174. Ландо А.С. Вопросы участия в процессе законных представителей несовершеннолетнего подозреваемого // Вопросы теории и практики прокурорского надзора. Межвузовский научный сборник. Саратов: Изд-во Саратов. ун-та, 1974, т. 49-55:
175. Ландо А.С. О процессуальном положении законного представителя несовершеннолетнего обвиняемого: Сборник работ аспирантов и соискателей // Ученые записки. Сборник работ аспирантов и соискателей. Саратов: Изд-во Саратов. юрид. ин-та, 1970, Вып. 19: Ч. 2, т. 254-261;
176. Ландо А.С. Участие по делам несовершеннолетних их законных представителей // Тезисы докладов и сообщений на Всесоюзной научно-практической конференции "Совершенствование организации и усиление воспитательно-предупредительного воздействия судебных

- процессов", 23-24 октября 1974 г.. М.: Изд-во МЮ СССР, 1974, т. 74-76;
177. Ларин А.М. Правосудие и закон / А.М. Ларин, А.А. Мельников // Конституционные основы правосудия в СССР / Под ред В.М. Савицкого. М., 1981, т. 360:
178. Лившиц В. Процессуальный гуманизм и инквизиция / В. Лившиц, А. Прошкин // Социалистическая законность, 1990, № 1, т. 36-39:
179. Лодкина А.Е. Дознание: история развития, проблемы, перспективы // Закон и право. М.: ЮНИТИ-ДАНА, 2007, № 6, т. 73-76:
180. Лошкарев В.В., Маслаков А.В. Отдельные аспекты целесообразности реформирования института понятых в российском законодательстве // Проблемы теории и юридической практики в России. Материалы 3-й международной научно-практической конференции молодых ученых, специалистов и студентов, 2-3 марта 2006 г.. Самара: Изд-во Самар. гос. экон. ун-та, 2006, т. 92-94;
181. Лошкарева Т.В. Защита прав и законных интересов несовершеннолетних участников в уголовном процессе России // Актуальные проблемы юридической науки и образования. Сборник научных статей. Ижевск, 2007, Вып. 7, т. 9-13;
182. Лошкарева Т.В. К вопросу об участии законных представителей по уголовным делам в отношении несовершеннолетних // Совершенствование деятельности по раскрытию и расследованию преступлений, совершенных несовершеннолетними. Сборник научных статей по материалам научно-практической конференции, 20 июня 2007 г.. Ижевск: ИФ НА МВД России, 2008, т. 13-17;
183. Лазарева В.А. Психология следственных ошибок. // Проблемы психологии следственной деятельности, – Красноярск, 1986, – т. 33-38:
184. Лазарева В. Защита прав и интересов несовершеннолетних потерпевших в уголовном процессе // Социалистическая законность. М.: Известия, 1980, № 3, т. 49-50:
185. Лапин Е. Ревизия аудитора по уголовным делам // Законность. М., 1998, № 9, т. 8-12;
186. Левченко О.В. Обеспечение личной безопасности обвиняемого, содействующего уголовному судопроизводству // Российский следователь. М.: Юрист, 2007, № 15, т. 6-8.

187. Лубенский А. Дифференциация форм предварительного расследования // Социалистическая законность. М.: Известия, 1977, № 8, т. 77-78,
188. Луковская Д.И. Классификация прав и свобод человека и гражданина // История государства и права. М.: Юрист, 2007, № 15, т. 2-4;
189. Ляхов Ю.А. Предварительное расследование в свете правовой реформы // Правовая реформа и проблемы ее реализации. Тезисы докладов и сообщений региональной научно-практической конференции, 14 - 15 сентября 1989 г.. Краснодар: Изд-во Кубан. ун-та, 1989, 215 т. 2,
190. Ляшенко Н.В. Восстановительный подход к правосудию для несовершеннолетних – основа для создания ювенальной юстиции в Российской Федерации. // Научные труды. Российская академия юридических наук. Выпуск 9. В 3 томах. Том 3. М.: Издательская группа «Юрист», 2009, т. 967:
191. Магизов Р.Р., Харисов И.Ф. Роль понятого в лоббировании коррупционных интересов должностных лиц, осуществляющих предварительное расследование // Противодействие коррупции: проблемы и перспективы реализации региональной антикоррупционной политики. Материалы межвузовского научно-практического семинара 7 декабря 2007 года. Казань: ЗАО "Новое знание", 2008, т. 90-97;
192. Макеева Н.В. Нейтрализация противоправного воздействия, оказываемого на потерпевшего, свидетеля и иных участников уголовного судопроизводства в ходе предварительного расследования // Вестник Калининградского юридического института МВД России. Калининград: Изд-во Калинингр. ЮИ МВД России, 2007, № 1 (13), т. 44-48;
193. Макаренко И.А. Защитник как гарант соблюдения прав и законных интересов несовершеннолетнего обвиняемого // Закон и право. М.: ЮНИТИ-ДАНА, 2006, № 12, т. 29-30;
194. Макаренко И.А. Проблемы участия педагога и психолога в процессе расследования уголовных дел в отношении несовершеннолетних // Российский следователь. М.: Юрист, 2007, № 13, т. 5-7;
195. Макаров Ю.Я. Судебная защита прав личности в уголовном процессе // Российский судья. М.: Юрист, 2008, № 3, т. 28-33;
196. Макухин К. Существенные нарушения уголовно-процессуального

- закона // Советская юстиция. М.: Юрид. лит., 1972, № 9, т. 9-10;
197. Малько А.В. Законный интерес и субъективное право // Вопросы теории охраняемых законом интересов, Ярославль, 1990, т. 6-10;
198. Малько А.В. Субъективное право и законный интерес // Правоведение, т. 9-Пб.: Изд-во С.-Петербург. ун-та, 1998, № 4, т. 58-70;
199. Малько А.В. Субъективное право и законный интерес // Правоведение, т. 9-Пб.: Изд-во С.-Петербург. ун-та, 2000, № 3, т. 30-48;
200. Малько А.В., Субочев В.В. Законный интерес и юридическая обязанность, // Государство и право, 2007, № 2, т. 30-36;
201. Малько А.В., Субочев В.В. Категория "законный интерес" и анализ ее исследования в юриспруденции // Право и образование. М., 2006, № 4, т. 69-82;
202. Мальцева Н.В. Меры обеспечения безопасности потерпевших и свидетелей из числа осужденных к лишению свободы. Теоретическая проблема уголовно-исполнительного права // Закон и право. М.: ЮНИТИ-ДАНА, 2006, № 10, т. 71-72;
203. Мамичева С.В. Права жертв преступлений и злоупотреблений властью // Журнал российского права. М.: Норма, 2001, № 7, т. 96-106;
204. Манова Н.С. Предварительное следствие: идеи и новые законодательные реалии // Государство и право. М.: Наука, 2003, № 2, т. 61-66,
205. Мартынич Е.Г. Субъективные права обвиняемого и их процессуальные гарантии // Советское государство и право. М.: Наука, 1976, № 7, т. 87-93,
206. Масленков С.Л. Дознание как проблема науки уголовного процесса // "Черные дыры" в Российском Законодательстве. Юридический журнал. М.: "1с: Компьютерный Аудит", 2004, № 4, т. 316-327,
207. Масленков С.Л. Современное дознание // "Черные дыры" в Российском Законодательстве. Юридический журнал. М.: "1с: Компьютерный Аудит", 2005, № 1, т. 209-214,
208. Маршунов М.Н. Прокурорский надзор за законностью установления уголовной ответственности в стадии предварительного расследования // Уголовная ответственность: проблемы содержания, установления, реализации. Межвузовский сборник научных трудов. Воронеж: Изд-во Воронеж. ун-та, 1989, т. 99-104;



209. Масленникова Л.Н. Досудебное производство по УПК РФ. // Материалы международной научно-практической конференции, посвящённой принятию нового Уголовно-процессуального кодекса Российской Федерации. М., 2002, т. 139-145:
210. Матузов Н.И. Конституционные права и обязанности граждан - юридическое выражение социальной свободы, ответственности и активности личности // Конституционный статус личности в СССР. М.: Юрид. лит., 1980, т. 59-68;
211. Матузов Н.И. Правовая система и личность. Саратов, 1987, 294 т.:
212. Машинская Н.В. Защита прав и законных интересов несовершеннолетнего, совершившего общественно опасное деяние, в досудебных стадиях уголовного процесса: Специальный выпуск // Вестник Поморского университета: Специальный выпуск. Серия "Гуманитарные и социальные науки". Архангельск: Изд-во Помор. ун-та, 2006, т. 165-171:
213. Медвецкий А. Особый порядок судебного разбирательства требует особого внимания. (О применении главы 40 УПК РФ судами Курской области) // Власть судебная. Курск, 2006, № 1 (13), т. 37-41;
214. Матвеев С.В. Актуальные проблемы правового статуса психолога и педагога в уголовном судопроизводстве по делам несовершеннолетних // Российский судья. М.: Юрист, 2002, № 3, т. 12-14;
215. Матвеев С.В. УПК РФ об участии законных представителей, близких родственников в расследовании уголовных дел, совершенных несовершеннолетними // Журнал российского права. М.: Норма, 2002, № 5, т. 104-107;
216. Морщакова Т.Г. Права обвиняемого в уголовном процессе Германской Демократической Республики // Советское государство и право. М.: Наука, 1966, № 3, т. 109-114;
217. Миньковский Г.М. Участие педагога и иных лиц в допросе несовершеннолетнего обвиняемого // Советское государство и право в период развернутого строительства коммунизма. Тезисы докладов и научных сообщений (6 - 9 марта 1962 г.). Харьков, 1962, т. 219-221;
218. Московитина Т.А. Существенное нарушение уголовно-процессуального закона как основание отмены приговора // Уголовная ответственность и ее реализация. Межвузовский сборник. Куйбышев: Изд-во

- Куйбышев. ун-та, 1985, т. 142-148;
219. Михайлов А.И. Исследование проблем предварительного следствия и прокурорского надзора за законностью расследования преступлений // Вопросы борьбы с преступностью. М.: Юрид. лит., 1988, № 46, т. 79-86;
220. Михайлов А. Институт понятых - архаизм российского уголовного судопроизводства // Законность. М., 2003, № 4, т. 29-31;
221. Михайлов В.А. Практическое воплощение ленинских идей о прокурорском надзоре за предварительным расследованием уголовных дел // Труды высшей школы МВД СССР, 1971. Вып. 28, т. 162-167 л.
222. Мищенко Е.В. К вопросу об участии защитника в производстве по делам несовершеннолетних // Право и государство: теория и практика. М.: Право и государство, 2006, № 8, т. 112-115;
223. Мотовиловкер Я., Ширшов М. Психический недостаток обвиняемого как условие обязательного участия защитника в уголовном судопроизводстве // Советская юстиция. М.: Юрид. лит., 1983, № 2, т. 26;
224. Муравьев К.В., Супрун С.В. Возможно ли назначение и производство экспертизы до возбуждения уголовного дела? // Законодательство и практика. Омск: Изд-во Ом. акад. МВД России, 2006, № 2, т. 72-75;
225. Мухудинова Н.Р. Адвокат свидетеля, законный представитель несовершеннолетнего свидетеля в российском уголовном судопроизводстве // Научные труды РАЮН. В 3-х томах. М.: Юрист, 2009, Вып. 9, Т. 3, т. 990-992;
226. Мухудинова Н.Р. Адвокат свидетеля, законный представитель несовершеннолетнего свидетеля в Российском уголовном судопроизводстве. // Научные труды. Российская академия юридических наук. Выпуск 9. В 3 томах. Том 3. М.: Издательская группа «Юрист», 2009, т. 991;
227. Никитина А.С. Некоторые аспекты правового обеспечения безопасности лиц, содействующих уголовному судопроизводству // Современность в творчестве вузовской молодежи. Сборник научных трудов молодых ученых. Иркутск: ВСИ МВД России, 2003, Вып. 5, т. 42-47;
228. Никифорова Е.В. Защита свидетелей в России: реальность и перспективы развития: Май 2004 г. // Место и роль органов внутренних дел в

системе уголовной юстиции: Май 2004 г.. Материалы научной конференции слушателей, курсантов и студентов. Омск: Изд-во Ом. акад. МВД России, 2005, Вып. 9, т. 9 41-43;

229. Номаконов В.А. Новый УПК для вчерашней преступности. // Реагирование на преступность: концепция, закон, практика. М., 2002, 308 т.:

230. Ободова М.В. Защита прав свидетелей в уголовном судопроизводстве // Уголовно-правовые, уголовно-процессуальные и криминалистические проблемы в деятельности следственных подразделений правоохранительных органов. Материалы Всероссийской конференции курсантов, слушателей, студентов, адъюнктов и аспирантов (11 апреля 2007 г.). Челябинск: Изд-во Челяб. юрид. ин-та МВД России, 2007, Ч. 2, т. 140-143;

231. Нагнойный Я.П. О возможности назначения судебной экспертизы до возбуждения уголовного дела // Криминалистика и судебная экспертиза. Республиканский межведомственный сборник научных и научно-методических работ. Киев: РИО МООП УССР, 1967, Вып. 4, т. 174-178:

232. Нажимов В.П. Прокурорский надзор за исполнением законов судом при отправлении правосудия // Проблемы прокурорского надзора. Научная конференция, 20-21 апреля 1972 г.: Тезисы сообщений. М., 1972, т. 256-257;

233. Нажимов В.П. Об уголовно-процессуальных функциях. // Правоведение. 1973. № 5, т. 75, 78:

234. Назаренко В. Предварительное расследование в современном уголовном процессе // Законность. М., 2002, № 8, т. 41-42,

235. Назарчук А.Г. Роль и участие законных представителей несовершеннолетних подозреваемых (обвиняемых) в уголовном процессе // Общество и право. Краснодар: Изд-во Краснодар. ун-та МВД России, 2009, № 2 (24), т. 201-205;

236. Научно-практическая конференция «Правовая и криминологическая оценка нового УПК РФ» // Государство и право, 2002, № 9,, т. 90:

237. Новобратский Л. Законный представитель несовершеннолетнего в уголовном процессе // Советская юстиция. М.: Госюриздат РСФСР,

- 1962, № 24, т. 2, с. 10-11;
238. Рахунов Р.Д. Дифференциация уголовно-процессуальной формы по делам о малозначительных преступлениях // Советское государство и право. М.: Наука, 1975, № 12, т. 2, с. 60-68;
239. Оплетаев В.С. Некоторые вопросы о законных представителях несовершеннолетних свидетелей // Проблемы права. Международный правовой журнал. Челябинск, 2007, № 1, т. 2, с. 171-173;
240. Орлова Ю.Р. Участие законных представителей в расследовании уголовных дел, совершаемых несовершеннолетними // Российский следователь. М.: Юрист, 2006, № 8, т. 2, с. 10-13;
241. Парий А. Защита прав жертвы преступления в российском уголовном процессе // Правозащитник. М., 1997, № 1, т. 2, с. 43-49;
242. Патюлин В.А. Личность: ее права и свободы в Советском социалистическом государстве // Советское государство и право. М.: Наука, 1966, № 2, т. 2, с. 99-107;
243. Омельченко А.Г. Классификация конституционных прав и свобод личности в ФРГ // Сборник научных трудов ВЮЗИ. Новые аспекты в регулировании важнейших государственно-правовых институтов капиталистических стран. М.: РИО ВЮЗИ, 1986, т. 2, с. 34-50;
244. Осипова Е.В., Конин В.В. Особый порядок судебного разбирательства – «сделка» о признании вины? // Новое уголовно-процессуальное законодательство РФ: проблемы теории и практики. Калининград: Изд-во КГУ, 2003, т. 2, с. 100-104;
245. Остроумов С.С., Фортинский С.П. Ревизия и бухгалтерская экспертиза // Вопросы криминалистики. М.: Юрид. лит., 1963, № 8-9 (23-24), т. 2, с. 342-345;
246. Палатова Т.Е. Повышение профессионального мастерства прокуроров, осуществляющих надзор за законностью рассмотрения уголовных дел областным судом по первой инстанции // Прокурорский надзор за законностью рассмотрения в судах уголовных дел. Материалы учебно-методических семинаров с начальниками отделов по надзору за рассмотрением в судах уголовных дел прокуратур АССР, краев, областей РФ. М., 1973, т. 2, с. 55-56;
247. Пархоменко И.В. Проблемы института понятых и вопрос об эф-

- фektivности его существования // Обеспечение законности в российском уголовном судопроизводстве. Материалы Международной научно-практической конференции (Саранск, 7 - 8 декабря 2006 г.). Саранск: Мордов. кн. изд-во, 2006, тэ 311-315;
248. Пацевич В.В. Инвентаризация товаро-материальных ценностей по требованию следственных органов // 50 лет Советской власти и актуальные проблемы правовой науки. Материалы к конференции по итогам научно-исследовательской работы за 1966 г.. Саратов, 1967, тэ 196-197,
249. Пашкевич П.Ф. О существенных процессуальных нарушениях, влекущих отмену приговора // Проблемы совершенствования советского законодательства. Труды. М.: Изд-во ВНИИСЗ, 1981, Вып. 20, тэ 166-178;
250. Переверзев А.В. Место законного представителя в системе судопроизводства по делам несовершеннолетних // Актуальные вопросы применения уголовно-процессуального законодательства в современных условиях. Материалы практической конференции, проводимой на прокурорско-следственном факультете Военного университета). М.: Юркнига, 2006, тэ 100-103;
251. Петровская М.С. К вопросу о процессуальном статусе педагога и психолога в уголовном судопроизводстве // Актуальные проблемы современного уголовного процесса России: межвузовский сборник научных статей. Самара: Изд-во "Самарский университет", 2009, Вып. 4, тэ 193-198;
252. Петрухин И.Л. Оптимальная уголовно-процессуальная форма // XXV съезд КПСС и дальнейшее укрепление социалистической законности. М., 1977, тэ 104-113;
253. Петрухин И.Л. Предварительное расследование // Судебная реформа: проблемы и перспективы. М.: Ин-т гос. и права РАН, 2001, тэ 131-141,
254. Петрухин И.Л. Судебные гарантии прав личности (в уголовном процессе) /Актуальные вопросы борьбы с преступностью в России и за рубежом, Вып. 8, – М, 1992, – тэ 94:
255. Петрухин И.Л. От инквизиции – к состязательности. // Государство

и право. 2003. № 7, т. 28-36:

256. Петрухин И.Л. Предварительное расследование: каким ему быть? // Законодательство. М., 2000, № 10, т. 71-76,

257. Печников Г.А., Блинков А.П. О гарантиях прав личности в свете приоритета «формы» над «истиной» в состязательном УПК РФ. // Бизнес в законе, 2009, № 6., т. 130-132:

258. Подольный Н. Новый УПК – новая идеология уголовного процесса // Российская юстиция. 2002, № 11, – т. 2-3:

259. Подольный Н.А. Категория справедливости в УПК РФ – изменение системы ценностей в уголовном процессе России. // Материалы международной научно-практической конференции «Уголовно-процессуальный кодекс Российской Федерации: год правоприменения и преподавания». М., 2004, т. 51-54:

260. Подольный Н.А. От принципа публичности к защите публичного интереса – концепция современного уголовного процесса // Проблемы отправления правосудия по уголовным делам в современной России: теория и практика: сборник научных статей: в 2 ч. Ч. 1 – Курск, 2007, т. 155-159:

261. Подольный Н.А. Всегда ли в интересах доверителя, чтобы адвокат действовал в соответствии с его волей? // Адвокатская практика. М.: Юрист, 2004, № 3, т. 16-18:

262. Подольный Н.А., Урявин Д.А. Справедливость и нравственность в уголовном судопроизводстве. // Следователь, 2009, № 3, т. 44-49:

263. Попов А. Некоторые проблемы законодательного закрепления гарантий прав несовершеннолетних подозреваемых, обвиняемых в новом УПК РФ от 22 ноября 2001 г. // Правозащитник. Ежеквартальный журнал для неправительственных организаций. М.: Права человека, 2002, № 4, т. 36-44;

264. Попов А.Н. Проблемы обеспечения защиты прав несовершеннолетних подозреваемых и обвиняемых в уголовном процессе России // Северо-кавказский юридический вестник. Ростов-на-Дону, 2004, № 4, т. 114-119;

265. Прохоров В.Т. Понятие и классификация основных прав и свобод граждан СССР // Материалы конференции по итогам научно-исследо-

- вательской работы за 1969 год. Свердловск, 1970, т. 2, с. 50-56;
266. Пузиков А.И. Особый порядок судебного разбирательства в уголовном судопроизводстве: "за" и "против": Новое процессуальное законодательство Российской Федерации: Новеллы, достоинства и противоречия // Трибуна молодых ученых: Новое процессуальное законодательство Российской Федерации: Новеллы, достоинства и противоречия. Сборник научных трудов. Воронеж: Изд-во Воронеж. ун-та, 2003, Вып. 4: Ч. 1, т. 2, с. 134-143;
267. Пушкин А., Тушев А. Производство ревизий и инвентаризаций при расследовании преступлений в сельском хозяйстве // Социалистическая законность. М.: Известия, 1989, № 1, т. 2, с. 53-54;
268. Пюсса О. Участие педагога в допросе несовершеннолетних // Правоведение. Л.: Изд-во Ленингр. ун-та, 1966, № 4, т. 2, с. 163-165;
269. Рагинский М. Советское предварительное следствие // Социалистическая законность. М.: Госюриздат, 1957, № 10, т. 2, с. 26-33,
270. Рахунов Р.Д. Проблема единства и дифференциации уголовно-процессуальной формы // Вопросы борьбы с преступностью. М.: Юрид. лит., 1978, № 29, т. 2, с. 83-91;
271. Рахунов Р.Д. Проблемы дифференциации уголовно-процессуальной формы по делам о преступлениях, не представляющих большой общественной опасности // Проблемы совершенствования уголовного судопроизводства. Сборник научных трудов. М., 1976, Ч. 2, т. 2, с. 3-51;
272. Рахунов Р.Д. Прокурорский надзор за предварительным расследованием уголовных дел // Совершенствование прокурорского надзора в СССР. Сборник статей. М., 1973, т. 2, с. 244-250,
273. Рахунов Р.Д. Доказательственное значение признания обвиняемого по советскому уголовному процессу // Советское государство и право. М.: Наука, 1956, № 8, т. 2, с. 34-43;
274. Рахунов Р.Д. Уголовно-процессуальная форма и социалистическая законность // Советское государство и право, 1955, № 4, т. 2, с. 63-69;
275. Рахунов Р.Д. Эффективность прокурорского надзора за предварительным расследованием уголовных дел // Проблемы прокурорского надзора. Научная конференция, 20-21 апреля 1972 г.: Тезисы сообщений. М., 1972, т. 2, с. 187-189;

276. Резепов В.П. Полнее обеспечить права обвиняемого при окончании расследования // Вопросы кодификации советского права. Л.: Изд-во Ленингр. ун-та, 1957, Вып. 1, т. 112-116;
277. Рахунов Р.Д. Эффективность прокурорского надзора за предварительным расследованием уголовных дел // Проблемы прокурорского надзора. Научная конференция, 20-21 апреля 1972 г.: Тезисы сообщений. М., 1972, т. 187-189;
278. Резепов В.П. Полнее обеспечить права обвиняемого при окончании расследования // Вопросы кодификации советского права. Л.: Изд-во Ленингр. ун-та, 1957, Вып. 1, т. 112-116;
279. Ретунская Т.П. Проблемы собирания и оценки доказательств. Участие в следственных действиях понятых как гарантия надежности фиксации доказательств // Закон и право. М.: ЮНИТИ-ДАНА, 2007, ? 9, т. 24-28.
280. Ромашов А. Документальная ревизия по заданию следственных органов и судов // Социалистическая законность. М.: Известия, 1976, № 4, т. 59-60:
281. Рудинский Ф.М. Права, свободы и ответственность граждан в условиях развитого социализма // Советское государство и право. М.: Наука, 1977, № 5, т. 21-29:
282. Рушкин А.Н., Эмирсултанов А.А. Что нужно знать следователю об инвентаризации // Военно-юридический вестник Приволжского региона. Сборник научных трудов. Самара: Изд-во Самар. гуманит. акад., 2004, № 2, т. 289-299:
283. Савицкий В.М. Надо ли реформировать стадию возбуждения уголовного дела? Советское государство и право. 1974, № 8.- т. 83-88:
284. Савченко С.Ю. Защита прав несовершеннолетних в уголовном судопроизводстве: Право и юриспруденция // X Региональная конференция молодых исследователей Волгоградской области: Право и юриспруденция. Тезисы докладов: г. Волгоград, 8-11 ноября 2005 г.. Волгоград: Изд-во ВолГУ, 2006, Вып. 2, т. 414-418:
285. Саламов А.Н. Некоторые вопросы обеспечения гарантий прав личности при назначении и производстве судебной экспертизы до возбуждения уголовного дела // Актуальные проблемы российского права.



- Сборник научных трудов. М.: Полиграф ОПТ, 2005, Вып. 1, т. 284-288;
286. Самитова Л.И. Проблема единства и дифференциации уголовно-процессуальной формы в законодательстве, теории и практике Российского уголовного судопроизводства. //»Чёрные дыры» в Российском законодательстве. 2008, № 6, т. 140-142:
287. Селезнев М. Понятой или свидетель? // Законность. М., 1998, № 1, т. 35-38.
288. Сероштан В.В. Тенденции совершенствования законодательства в области обеспечения прав в уголовном процессе несовершеннолетних лиц // Вопросы ювенальной юстиции. М.: Юрист, 2009, № 2 (22), т. 15-17;
289. Склизов А.Н. Взаимодействие сторон уголовного судопроизводства на стадии предварительного расследования. // Адвокатская практика. 2007. № 3, т. 21-26:
290. Соловьев А.Б., Токарева М.Е. Дифференциация форм досудебного производства по уголовным делам // Прокурорская и следственная практика. М., 1998, № 3, т. 144-151;
291. Соловьев А.Б. О функциях прокуратуры в досудебных стадиях уголовного судопроизводства. В кн.: Проблемы совершенствования прокурорского надзора (к 275-летию российской прокуратуры). М., 1997, т. 120-126,
292. Соловьев А.Б. Соотношение уголовного преследования и прокурорского надзора в досудебных стадиях по УПК РФ, /Прокурорская и следственная практика, 2005, №3-4, т. 259-267:
293. Соловьев А.Д. Признание обвиняемого (подозреваемого) и его значение для установления истины по уголовному делу // Труды Киевской высшей школы МВД СССР. Киев: НИИРИО КВШ МВД СССР, 1969, Вып. 2, т. 98-121;
294. Статкус В. Права обвиняемого и сроки расследования // Социалистическая законность. М., 1971, № 10, т. 60-62;
295. Степанец Б.С. К вопросу о величине ошибок в показаниях участников и свидетелей-очевидцев дорожно-транспортного происшествия // Криминалистика и судебная экспертиза. Республиканский межведомственный сборник научных и научно-методических работ. Киев:

- Вища шк., 1970, Вып. 7, тз 322-327;
296. Стецовский Ю. Обязательное участие защитника в уголовном деле // Советская юстиция. М.: Юрид. лит., 1975, № 21, тз 18-19;
297. Сидоров В.В. Обжалование действий (бездействия) и решений органов уголовного преследования как средство защиты прав и законных интересов несовершеннолетних подозреваемых (обвиняемых) // Актуальные проблемы производства по уголовным делам в отношении несовершеннолетних. Материалы Всероссийской научно-практической конференции 23 ноября 2007 года. Калининград: Изд-во Калинингр. ЮИ МВД России, 2008, тз 77-80;
298. Сильчев К.Р. Права и законные интересы жертвы преступления: Субъективные права и законные интересы: теоретические основы и проблемы юридической защиты // Трибуна молодых ученых.: Субъективные права и законные интересы: теоретические основы и проблемы юридической защиты. Сборник научных трудов. Воронеж: Изд-во Воронеж. ун-та, 2002, Вып. 3: Ч. 2, тз 179-191;
299. Скичко О.Ю. Проблемы охраны прав несовершеннолетних в уголовном процессе. // Научные труды. Российская академия юридических наук. Выпуск 9. В 3 томах. Том 3. М.: Издательская группа «Юрист», 2009, тз 1052-1053;
300. Скорик Н.В. Существенное нарушение уголовно-процессуального закона как основание принесения кассационного протеста // Научная конференция профессорско-преподавательского состава Харьковского юридического института (февраль 1968 года). Тезисы докладов. Харьков: Изд-во Харьк. ун-та, 1968, тз 161-163;
301. Сторожева А.Н. К вопросу о совершенствовании института понятий в уголовном судопроизводстве // Актуальные проблемы борьбы с преступностью в Сибирском регионе. Сборник материалов международной научно-практической конференции памяти д.ю.н. профессора В.И. Горобцова (10-11 февраля 2005 г.). Красноярск: Изд-во Сиб. юрид. ин-та МВД России, 2005, Ч. 2, тз 127-131.
302. Строгович М.С. Признание обвиняемым своей вины в качестве судебного доказательства // Советское государство и право. М.: Наука, 1982, № 4, тз 68-74;

303. Строгович М.С. Уголовно-процессуальная форма и обеспечение прав обвиняемого // Развитие и совершенствование уголовно-процессуальной формы. Воронеж: Изд-во Воронеж. ун-та, 1979, т. 2, с. 83-92;
304. Субочев В.В. Законный интерес как особый юридический стимул // Право и государство: теория и практика. М.: Право и государство, 2006, № 9, с. 16-25;
305. Судакова Е.А. Производство по уголовным делам несовершеннолетних: сравнительно-правовой анализ УПК РФ и стран СНГ // Охрана прав несовершеннолетних и развитие законодательства о семье. Материалы конференции 19 декабря 2008 г.. М.: Изд-во Моск. гуманит. ун-та, 2009, с. 73-78;
306. Сычев А.А. О форме предварительного расследования преступлений несовершеннолетних // Российский следователь. М.: Юрист, 2009, № 5, с. 9-10;
307. Татьяна Л. Особый порядок принятия судебного решения // Законность. М., 2003, № 12, с. 30-33;
308. Тейман С.С. Суд присяжных и конституционные права обвиняемого в России // Конституционное право: восточноевропейское обозрение. М.: Изд-во Центра Конституц. исслед. МОНФ, 1995, № 1 (10), с. 38-41;
309. Темушкин О. Существенное нарушение уголовно-процессуального закона - основание отмены приговора // Социалистическая законность. М., 1973, № 5, с. 23-26;
310. Темушкин О.П. Кассационный протест прокурора как средство укрепления законности // Вопросы борьбы с преступностью. М.: Юрид. лит., 1973, № 18, с. 114-131;
311. Тепляков П. Законный представитель несовершеннолетнего обвиняемого в советском уголовном процессе // Социалистическая законность. М., 1972, № 10, с. 40-41;
312. Тепляков П.П. Развитие законодательства о законном представителе несовершеннолетнего обвиняемого в русском и советском уголовном процессе // Государство, право и демократия в условиях развитого социалистического общества. Тезисы докладов 2-ой научно-теоретической конференции аспирантов (2-4 февраля 1973 г.). М.: Изд-во ВЮ-

- ЗИ, Изд-во МГУ, 1973, т. 244-246;
313. Терентьев Д. Возбуждение уголовного дела в советском уголовном процессе // Социалистическая законность. М., 1951, № 6, т. 29-31,
314. Терехин В.В. Положение переводчика как участника уголовного судопроизводства требует дополнительной регламентации // Вестник Гуманитарного института. М.: Изд-во Гуманит. ин-та, 2007, № 2 (8), т. 18-22;
315. Тетюев С.В. Досудебное производство по делам несовершеннолетних в России и Узбекистане: сравнительный анализ некоторых особенностей. // Учёные записки: сб. науч. трудов. Вып. 4. Оренбург: РИК ГОУ ОГУ, 2006, т. 308-309;
316. Тетюев С.В. Защитник - обязательный участник производства по уголовным делам в отношении несовершеннолетних // Научные труды. Российская академия юридических наук. Выпуск 9. В 3 томах. Том 3. М.: Издательская группа «Юрист», 2009, т. 1074;
317. Тетюев С.В. К вопросу о защитнике несовершеннолетнего в уголовном судопроизводстве (анализ части 2 статьи 49 КПК РФ) // Адвокатская практика. М.: Юрист, 2007, № 5, т. 34-36;
318. Тетюев С.В. Место педагога (психолога) в системе участников уголовного судопроизводства // Следователь. Федеральное издание. М., 2007, № 1, т. 18-20;
319. Тетюев С.В. УПК России и УПК Узбекистана об участии педагога (психолога) в уголовном судопроизводстве // Российский юридический журнал. Екатеринбург: Изд-во УрГЮА, 2008, № 5, т. 182-186;
320. Тимина Н.В. Меры обеспечения безопасности потерпевших и свидетелей в местах лишения свободы: нововведения в российском законодательстве // Российская пенитенциарная система: актуальные проблемы реформирования. Сборник научных трудов. Владимир: ВЮИ Минюста России, 2005, т. 219-226.
321. Тихонов Е.Н. Проблемы назначения судебных экспертиз до возбуждения уголовного дела // Актуальные вопросы государства и права на современном этапе. Сборник статей. Томск: Изд-во Том. ун-та, 1984, т. 227-228;
322. Тушев А. Осуществление прокурором функции уголовного прес-

- ледования в стадии назначения судебного заседания // Уголовное право. М.: АНО "Юридические программы", 2006, № 1, т. 127-129;
323. Тушев А.А. Осуществление прокурором функции уголовного преследования в судебном разбирательстве // Российская юстиция. М.: Юрид. мир, 2005, № 12, т. 21-24;
324. Улыбина Т. Понятие и классификация субъективных прав и свобод и способы их ограничения // Право и жизнь. Независимый правовой журнал. М., 2006, № 99, т. 48-69;
325. Филимонова И.В. К вопросу о понятии "меры безопасности" как меры государственной защиты потерпевших, свидетелей и иных участников уголовного судопроизводства // Уголовно-процессуальные и криминалистические чтения на Алтае. Материалы ежегодной региональной научно-практической конференции. Барнаул: Изд-во Алт. ун-та, 2006, вып. 6, т. 155-159;
326. Филин Д.В. Критерии дифференциации уголовно-процессуальной формы // Проблемы социалистической законности. Республиканский межведомственный тематический научный сборник. Харьков: Вища шк. Изд-во при Харьк. ун-те, 1988, Вып. 21, т. 123-126;
327. Филиппов М.Н. Некоторые проблемы прокурорского надзора за всесторонностью, полнотой и объективностью предварительного расследования в свете правовой реформы // Правовая реформа и проблемы ее реализации. Тезисы докладов и сообщений региональной научно-практической конференции, 14 - 15 сентября 1989 г.. Краснодар: Изд-во Кубан. ун-та, 1989, т. 233-235;
328. Фойницкий И. Предварительное следствие и его реформа: Январь // Журнал гражданского и уголовного права: Январь. Издание С.-Петербургского Юридического Общества. -Пб.: Тип. Правительствующего Сената, 1882, Кн. 1, т. 123-200,
329. Франциферов Ю.В. Сочетание гласности и тайности при производстве предварительного расследования и судебного разбирательства. // Адвокатская практика. 2007. № 4, т. 9;
330. Франциферова С.Ю. Институт понятых - важная гарантия прав личности при производстве следственных действий дознавателем и следователем // Проблемы предварительного расследования в органах

- дознания: Материалы научно-практического семинара. М., Саратов: ГОУ ВПО РПА Минюста России, 2009, т. 74-78;
331. Халиулин А.Г. Признание обвиняемым своей вины: проблема компромисса: Компромисс как эффективное средство в борьбе с преступностью. Проблемы совершенствования квалификации прокурорско-следственных работников // Актуальные проблемы прокурорского надзора: Компромисс как эффективное средство в борьбе с преступностью. Проблемы совершенствования квалификации прокурорско-следственных работников. Сборник статей. М.: Изд-во ИПК РК Генеральной прокуратуры РФ, 2000, Вып. 4, т. 49-56;
332. Харисов И.Ф. Ликвидация института понятых как элемент антикоррупционной политики // Проблемы современного российского общества: содержание и пути решения. Материалы региональной научно-практической конференции, 3 мая 2007 г.. Казань: Таглитат, 2007, т. 178-179;
333. Хегай Е.И. Участие переводчика при допросе как обеспечение охраны прав личности // Сибирские криминалистические чтения. Сборник научных трудов. Иркутск: Изд-во БГУЭП, 2002, Вып. 15, т. 97-103.
334. Холоденко В.Д. Обеспечение прав жертвы преступления на участие в уголовном преследовании // Актуальные вопросы обеспечения прав личности в уголовном судопроизводстве. Межвузовский сборник научных статей. Саратов: Изд-во ГОУ ВПО "Саратовская государственная академия права", 2005, т. 34-45.
335. Хомышин И.М. Некоторые вопросы участия адвоката в уголовном судопроизводстве по делам несовершеннолетних // Актуальные проблемы производства по уголовным делам в отношении несовершеннолетних. Материалы Всероссийской научно-практической конференции 23 ноября 2007 года. Калининград: Изд-во Калинингр. ЮИ МВД России, 2008, т. 90-93;
336. Христоролюбский В.Н. Международно-правовые гарантии несовершеннолетних правонарушителей в уголовном судопроизводстве России // Вестник Южно-Уральского государственного университета. Серия "Право". Челябинск: Изд-во ЮУрГУ, 2009, № 6 (139) Вып. 17, т. 38-41;
337. Цапаева Т. Ю., Яблоков В.А. Разграничение судебного контроля и

прокурорского надзора за предварительным расследованием // Государство и право: вопросы методологии, теории и практики функционирования. Сборник научных статей, посвященных 35-летию юридического факультета. Самара: Самарский университет, 2006, Вып. 2., т. 488-498:

338. Чеканов В.Я. Гарантии прав и интересов личности в уголовном процессе // Развитие прав граждан СССР и усиление их охраны на современном этапе коммунистического строительства. Саратов, 1962, т. 320-324;

339. Чепурнов А.А. Понятие, юридическая природа и классификация конституционных прав и свобод личности // Ученые записки ДЮИ. Ростов-на-Дону: Изд-во ДЮИ, 2005, Т. 28, т. 127-145:

340. Чернова Е.А. Актуальные вопросы преодоления воздействия преступников на свидетелей и других участников уголовного процесса // Международные юридические чтения. Материалы ежегодной международной научно-практической конференции (14 апреля 2005 г.). Омск: Изд-во Омск. юрид. ин-та, 2005, Ч. 5, т. 166-169;

341. Чижова М.А. Особый порядок судебного разбирательства // Возможности защиты в рамках нового УПК России. Материалы научно-практической конференции адвокатов, проведенной Адвокатской палатой города Москвы при содействии Коллегии адвокатов "Львова и партнеры" 17 апреля 2003 г.. М.: ЛексЭст, 2003, т. 115-117;

342. Чистякова В.С. Предварительное расследование нуждается в совершенствовании // Советское государство и право. М.: Наука, 1969, № 5, т. 68-74,

343. Чупахин Р. Институт понятого в уголовном процессе нуждается в совершенствовании // Следователь. Федеральное издание. М., 2003, № 4, т. 12-13;

344. Шадукаев Д.А. Классификация основных прав и свобод человека // Право. Сборник научных работ. М.: Изд-во Моск. ун-та, 1999, т. 27-30;

345. Шалумов М. Надзор за законностью и уголовное преследование - самостоятельные функции прокурора // Законность. М., 1999, № 8, т. 4-6;

346. Шаров Д.В. Международно-правовые акты организации объединенных наций, определяющие правовое положение потерпевшего в

уголовном судопроизводстве до принятия "Декларации основных принципов правосудия для жертв преступления и злоупотребления властью" // Юридические науки. М.: Компания Спутник+, 2003, № 3, т. 47-49;

347. Шевелев И.А. К вопросу соотношения процессуальных статусов переводчика и специалиста // Проблемы правопонимания и правоприменения: теория и практика. Материалы межрегиональной научно-практической конференции, г. Волжский, 16-17 мая 2008 г.. Волжский: Изд-во ВолГУ, 2008, Ч. 2, т. 137-141;

348. Шевелев И.А. Общее и особенное в процессуальном положении переводчика и специалиста // Вестник Саратовской государственной академии права. Саратов: Изд-во СГАП, 2007, № 4 (56), т. 197-199;

349. Шевчук А.Н. Реализация военным прокурором функций надзора и уголовного преследования на стадии возбуждения уголовного дела: Проблемы юридической ответственности военнослужащих и военных организаций // Российский военно-правовой сборник № 12: Проблемы юридической ответственности военнослужащих и военных организаций. Серия "Право в Вооруженных Силах - консультант". М.: За права военнослужащих, 2009, Вып. 97, т. 503-506,

350. Шевчук И.В. К вопросу о подборе понятий при предъявлении для опознания живых лиц // Теоретические и практические проблемы экспертно-криминалистической деятельности. Материалы Всероссийской научно-практической конференции, г. Тюмень, 7-8 апреля 2004 г.. Тюмень: Изд-во Тюмен. юрид. ин-та МВД РФ, 2004, т. 77-78;

351. Шимановский В. Обязательное участие защитника на предварительном следствии // Социалистическая законность. М.: Известия, 1975, № 7, т. 43-44;

352. Ширеторова Л.П. Участие переводчика в уголовном судопроизводстве как уголовно-процессуальная гарантия прав иностранных граждан // Научные труды РАЮН. В 3-х томах. М.: Юрист, 2008, Вып. 8 Т. 3, т. 862-865;

353. Шмарёв А.И. Особый порядок судебного разбирательства – сделка о признании вины. // Проблемы совершенствования и применения законодательства о борьбе с преступностью: Материалы Всероссийской



научно-практической конференции, посвящённой 95-летию Башкирского государственного университета. Часть I. Уфа: РИО БашГУ, 2004, էջ 223:

354. Шмелев В.В. Дифференциация уголовно-процессуальной формы на примере производства в мировой юстиции // Место и роль органов внутренних дел в системе уголовной юстиции. Материалы научной конференции курсантов, слушателей и студентов (Май 2003 г.). Омск: Изд-во Омск. акад. МВД России, 2004, Вып. 8, էջ 41-43;

355. Элькин П.С. Категории "содержание" и "форма" в сфере уголовно-процессуального регулирования // Развитие и совершенствование уголовно-процессуальной формы. Воронеж: Изд-во Воронеж. ун-та, 1979, էջ 34-45;

356. Явич Л.С., Фарбер И.Е. Свобода и права человека в Советском государстве. Саратов: Изд-во Саратов. ун-та, 1974, 180 էջ // Правоведение. Л.: Изд-во Ленингр. ун-та, 1975, № 3, էջ 133-134;

357. Якубович Н.А. Укрепление процессуального статуса подозреваемого - важная гарантия реализации конституционных принципов права на защиту и неприкосновенности личности // Охрана прав граждан в уголовном судопроизводстве. Сборник научных трудов. М.: Изд-во ВНИИ пробл. укрепления законности и правопорядка, 1989, էջ 32-40;

358. Янин С.А. Обеспечение безопасности лиц, содействующих уголовному судопроизводству, при производстве некоторых следственных действий // Тактика производства следственных действий в соответствии с новым Уголовно-процессуальным кодексом Российской Федерации. Материалы Всероссийской научной конференции, 23 апреля 2003 г.. Волгоград: ВА МВД России, 2004, էջ 107-111:

359. Ясинский Г. Кассационный протест прокурора // Социалистическая законность. М., 1969, № 7 - էջ 24-26;

### **Ատենախոսություններ, ատենախոսության սեղմագրեր**

1. Бишарян К.А. Подозреваемый и защита его прав в уголовном процессе Республики Армения. Автореф. дисс.... к.ю.н. М., 2007, էջ 24:

2. Воскобитова Л.А. Механизм реализации судебной власти посредством уголовного судопроизводства – Автореферат диссертация на соискание учёной степени доктора юридических наук. М., 2004, т. 2: 55:
3. Евлоев Р.М. Процессуальные гарантии защиты прав и законных интересов лиц, потерпевших от преступлений (стадия предварительного расследования). Дисс. канд. юрид. наук. СПб., 2005, т. 2: 17:
4. Галузо В.Н. Судебный контроль за законностью и обоснованностью содержания под стражей подозреваемых и обвиняемых на стадии предварительного расследования. Автореферат дисс. ... канд. юрид. наук. М., 1995, – т. 2: 23:
5. Ерофеев Г.А. Нарушения уголовно-процессуального закона как основания пересмотра приговоров. Автореф. дисс. ... к.ю.н.. Свердловск, 1977, т. 2: 24:
6. Кукель В.В. Реализация конституционных гарантий права потерпевшего на судебную защиту. Дисс. канд. юрид. наук. М., 2007, 215 т. 2:
7. Предеина И.В. Правовые и теоретические основы развития ювенальной юстиции в России: дисс. ... канд. юрид. наук: 12.00.11. Саратов, 2005, т. 2: 259:
8. Сморгунова М.Е. Теоретические основы и практика проверки досудебных доказательств в уголовном процессе. Дисс. канд. юрид. наук. Нижний Новгород, 2004, т. 2: 250:
9. Фаткуллин Ф.Н. Возбуждение уголовного дела в советском уголовном процессе. Автореф. дис. ... канд. юрид. наук - М., 1959, 16 т. 2,
10. Федулов А.В. Реализация принципа публичности (официальности) в современном уголовном судопроизводстве России – Диссертация на соискание учёной степени кандидата юридических наук. Нижний Новгород, 2002, т. 2: 236:
11. Халиулин А.Г. Уголовное преследование как функция прокуратуры Российской Федерации (проблемы осуществления в условиях правовой реформы). Автореф. дисс. ... док. юп. наук. Москва, 1997, 15-16, 1997, т. 3: 261,
12. Ширванов А.А. Существенные нарушения уголовно-процессуального закона как основание возвращения дел для дополнительного расследования. Дисс. канд. юрид. наук. М., 1999, т. 2: 219:

13. Болтошев Е.Д. Функции прокурора в досудебных стадиях уголовного процесса. Дис. ... канд. юрид. наук: 12.00.09 - М., 2002. 189 ʘ;
14. Арсеньев Б.Я. Гарантии прав личности в советском уголовном процессе. Автореф. дис. ... д-ра юрид. наук - М., 1947, 15 ʘ;
15. Бабин К.А. Уголовное преследование как функция прокурора в уголовном процессе России. Автореф. дис. ... канд. юрид. наук - Нижний Новгород, 2008. 34 ʘ;
16. Бобраков И.А. Воздействие преступников на свидетелей и потерпевших и криминалистические методы его преодоления. Автореф. дис. ... канд. юрид. наук - М., 1997. 22 ʘ;
17. Быкова Е.В. Судебный контроль за предварительным расследованием преступлений во Франции. Автореф. дис. ... канд. юрид. наук, М., 1996, - 21 ʘ,
18. Воронов Д.А. Меры уголовно-процессуального принуждения как среда обеспечения безопасности участников уголовного судопроизводства. Автореф. дис. ... канд. юрид. наук - Омск, 2008. 22 ʘ;
19. Дорофеева В.Ю. Процессуально-тактические особенности деятельности профессионального представителя несовершеннолетнего потерпевшего в российском уголовном судопроизводстве. Автореф. дис. ... канд. юрид. наук - Воронеж, 2009, ʘ 23:
20. Елесин В.И. Защитник по делам о преступлениях несовершеннолетних в советском уголовном процессе. Автореф. дис. ... канд. юрид. наук/ - М., 1966. 19 ʘ;
21. Ефимичев С.П. Предварительное расследование и его роль в реализации уголовной ответственности. Автореф. дис. ... д-ра юрид. наук - Л., 1987, 31 ʘ;
22. Жогин Н.В. Теоретические основы прокурорского надзора за предварительным расследованием. Автореф. дис. ... д-ра юрид. наук - М., 1966. 36 ʘ;
23. Кан М.П. Процессуальные функции прокурора в досудебных стадиях уголовного судопроизводства. Автореф. дис. ... канд. юрид. наук - Ташкент, 1988, ʘ 18:
24. Капинус Н.И. Процессуальные гарантии прав личности при применении мер пресечения в уголовном процессе. Автореф. дис. ... д-ра юрид.

- наук - М., 2001, 55 էջ;
25. Коврига З.Ф. Дознание, проводимое органами милиции, в советском уголовном процессе. Автореф. дис. ... канд. юрид. наук - Воронеж, 1964, 18 էջ,
26. Ковтун А.В. Дознание в российском уголовном процессе и особенности его производства по отдельным категориям уголовных дел. Автореф. дис. ... канд. юрид. наук - Омск, 2006. 22 էջ,
27. Колоколов Н.А. Судебный контроль в стадии предварительного расследования преступлений: важная функция судебной власти (проблемы осуществления в условиях правовой реформы), Автореф. дис. ... канд. юрид. наук - М., 1998, - 23 էջ,
28. Костерина Н.В. Судебный контроль на досудебных стадиях уголовного судопроизводства. Автореф. дис. ... канд. юрид. наук, Волгоград, 2005, - 19 էջ,
29. Крылова И.Б. Прокурорский надзор за соблюдением прав и свобод человека и гражданина при производстве предварительного расследования. Автореф. дис. ... канд. юрид. наук - М., 2003. 22 էջ:
30. Лазарева В.А. Охрана прав и законных интересов несовершеннолетних потерпевших в советском уголовном процессе. Дис. ... канд. юрид. наук: 12.00.09 - Куйбышев, 1980. 213 էջ;
31. Крючатов И.А. Правовая природа возбуждения уголовного дела в советском уголовном процессе. Автореф. дис. ... канд. юрид. наук - Одесса, 1969, 20 էջ,
32. Лазарева В.А. Судебная защита в уголовном процессе РФ: проблемы теории и практики. Дис. ... докт. юрид. наук: 12.00.09 - Самара, 2000, 419 էջ;
33. Ландо А.С. Представители несовершеннолетних обвиняемых в советском уголовном процессе. Автореф. дис. ... канд. юрид. наук - Саратов, 1973. 20 էջ;
34. Любишкин Д.Е. Особый порядок принятия судебного решения при согласии обвиняемого с предъявленным обвинением. Автореф. дис. ... канд. юрид. наук - Владимир, 2006, 21 էջ;
35. Левченко О.В. Уголовно-процессуальные меры безопасности участников уголовного судопроизводства со стороны защиты, содействующую

- щих правосудию. Автореф. дис. ... канд. юрид. наук - М., 2008. 25 тз;
36. Макеев Н.С. Защитник несовершеннолетних обвиняемых на предварительном следствии и в суде первой инстанции. Автореф. дис. ... канд. юрид. наук - М., 1975. 21 тз;
37. Масленков С.Л. Дознание в современном уголовном процессе России: проблемы совершенствования. Дис. ... канд. юрид. наук: 12.00.09 - Нижний Новгород, 2004. 206 тз,
38. Михайленко А.Р. Вопросы теории и практики возбуждения уголовного дела в советском уголовном процессе. Автореф. дис. ... канд. юрид. наук - Саратов, 1971, 17 тз,
39. МониД М.В. Особый порядок принятия судебного решения при согласии обвиняемого с предъявленным ему обвинением. Автореф. дис. ... канд. юрид. наук - Иркутск, 2007, 22 тз,
40. Назарян Н.Ж. Конституционные права и свободы человека и гражданина в России и Армении. Автореф. дис. ... канд. юрид. наук - Коломна, 2006, 31 тз;
41. Напреенко А.А. Гарантии прав подозреваемого в советском уголовном процессе. Автореф. дис. ... канд. юрид. наук - М., 1982, 24 тз;
42. Неви́рко Д.Д. Права и свободы человека и гражданина: проблемы соотношения, взаимодействия и иерархии. Автореф. дис. ... канд. юрид. наук - Екатеринбург, 2004, 27 тз;
43. Павлухин Л.В. Дознание в советском уголовном процессе. Автореф. дис. ... канд. юрид. наук - Саратов, 1966, 16 тз,
44. Пономаренко Л.Г. Кассационный протест прокурора по уголовным делам. Автореф. дис. ... канд. юрид. наук - Харьков, 1987. 23 тз;
45. Похмелкин В.А. Дознание в советском уголовном процессе. Автореф. дис. ... канд. юрид. наук - М., 1959, 16 тз,
46. Рахунов Р.Д. Предварительное расследование в советском уголовном процессе. Автореф. дис. ... д-ра юрид. наук - М., 1953, 23 тз
47. Редькин Н.В. Особый порядок судебного разбирательства в системе уголовного процесса РФ. Автореф. дис. ... канд. юрид. наук - Краснодар, 2007, 34;
48. Рооп Х.А. Возбуждение уголовного дела в советском уголовном процессе. Автореф. дис. ... канд. юрид. наук - Тарту, 1967, 18 тз,

49. Рыбальская В.Я. Современные проблемы уголовного процесса по делам несовершеннолетних в Европейских странах социализма. Автореф. дис. ... канд. юрид. наук - М., 1968. 16 էջ;
50. Смеловцев К.И. Ювенальная юстиция в системе социальной профилактики правонарушений несовершеннолетних. Автореф. дис. ... канд. юрид. наук - М., 2005. 35 էջ;
51. Смолин А.Г. Особый порядок судебного разбирательства, предусмотренный главой 40 УПК РФ: проблемы нормативного регулирования и дальнейшего развития. Автореф. дис. ... канд. юрид. наук - Нижний Новгород, 2005, 28 էջ;
52. Усачев А.А. Возбуждение уголовного дела в российском уголовном судопроизводстве. Автореф. дис. ... канд. юрид. наук - Иркутск, 2003, 22 էջ,
53. Шаговой В.Н. Потерпевший и жертва преступления в уголовном процессе: защита прав и их уголовно-процессуальные правонарушения. Дис. ... канд. юрид. наук: 12.00.09 - Тюмень, 2006. 218 էջ;
54. Ширитов А.Б. Правовое регулирование мер государственной защиты участников уголовного процесса. Автореф. дис. ... канд. юрид. наук - Краснодар, 2010. 23 էջ;
55. Ясинский Г.М. Прокурорский надзор за предварительным расследованием уголовных дел. Автореф. дис. ... канд. юрид. наук - Харьков, 1965. 15 էջ;

*Սամվել Աղվանի Դիլբանդյան*

**ԱՆՉԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ  
ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՄԻՆՉԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ**

*Самвел Агванович Дилбандян*

**ОБЕСПЕЧЕНИЕ ПРАВ И ЗАКОННЫХ ИНТЕРЕСОВ  
ЛИЧНОСТИ В ДОСУДЕБНОМ ПРОИЗВОДСТВЕ УГОЛОВНОГО  
ПРОЦЕССА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**

***Տպագրվել է «Տիգրան Մեծ» հրատարակչյան տպարանում***

ԵՊՀ հրատարակչություն  
Չափսը 60x84<sup>1</sup>/<sub>16</sub>: Ծավալը՝ 30 տպ. մամուլ:  
Քանակը՝ 300 օրինակ: